891.99
च-99

digitised by A.R.A.R.@

XVI 1 d 0

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

891.99 ա՛ր
Ա-99
2827

Ա Ր Զ Ի Կ

12 MAR 2011

ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ

1001
3667

ՀԱՑՄԱՐ ՍՈՒԱՋԻՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/XI- 1922
ԵՐԵՎԱՆ, Мясницкая
Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Электропечатня Груз. Изд. Т-ва, Б.-Ванкская ул.

1904

digitised by A.R.A.R.@

Дозволено Цензурою. Тифлисъ, 13 ноября 1903 г.

digitised by A.R.A.R.@

Ինչ են «մանրանկարները»

Կեանքի և նրա արտայայտութիւնների նկարագրութիւններ։

Ես կանգ եմ առել այն գծերի և երևոյթների վրա, որոնք ունեցել են հատարակական նշանակութիւն։

Նրանց մէջ պատկերացել է մեր հիմնարկութիւնների և դարծողների ընթացիկ կեանքը այն բնորոշ երևոյթներով, որոնք կազմել են օրվայ չարիքը։

Նիւթը առել են ինձ սեփական տպաւորութիւնը, անմիջական դիտողութիւնը, մարդկանց պատմածը, նամակների հաղորդածները, այն ամենը, ինչ որ ցոլացնում է իր մէջ կեանքը և նրա արտայայտութիւնները։

digitised by A.R.A.R.@

Ախի առաջ ունենալով, որ «Մանրանկարներ» նիւթը ըստ մեծի մասին կազմած է եղել ընթացիկ կեանքի հանդամանքների հետ, մենք իրաքանչիւր «Մանրանկարի» վերեւում նշանակել ենք նրա գրած տեղը ժամանակը և «Մշակ» լրագրի այն համարը, որտեղ նա զետեղված է եղել։

Մի քանի «Մանրանկարներից» բաց են թողված կտորներ զանազան պատճառներով։

---

digitised by A.R.A.R.@

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր Ն Ե Ր

I

(1 *ապրիլի* 1900 *թ.*, «*Մշակ*», № 62)

Այսօր վաղ առաւօտից սկսեցին տեղալ բազմաթիւ հեռագիրներ իմ անունով։

Կարդում եմ հեռագիրները և ինքս իմ աչքերին չեմ հաւատում։ Մթթէ, յիրաւի, ճիշդ է այն բոլորը, ինչ հաղորդում են հեռագիրները։

Հազիւ անձնատուր էի եղել մտածմունքներիս, ահա դրանս զանգակը տուին ուժեղ կերպով և մտաւ մեր բարեկամ Թակարդեանը։

—Գիտես նորութիւններ, բղաւեց նա ձեռքս սեղմելով։

—Մթթէ ճիշդ է այդ բոլորը, պատասխանեցի ես, ինչպէս են քո տեղեկութիւնները։

—Լաւ կը Այսօր, վերջացրէս, մեր Թիֆլիսում սկսվել փողոցների աւելայատակումը և մի անգամից գործ է սկսված քսան փողոցում։ Այսօր և երեքշաբթի լուսաւորութեան առաջին փոր-

digitised by A.R.A.R.@

ձը պէտք է լինի վազելի քաղաքային վարչութիւնը և այնտեղ իմայայ, որ վարչութիւնը արդէն վերջացրել է քաղաքի բարդաւաճման ծրագիրների մշակութիւնը. որոշված է առաջիկայ մայիսից բանալ բազմարուեստական թանգարան, հիմնել արհեստաւորների համար պահեստներ արդիւնքների վաճառահանութեան համար, և բանալ նրանց համար էժան կրեդիտ, տոգել քաղաքապատկան դաշտերը և չահագործել նրանց խելացի եղանակով։ Քաղաքային վարչութիւնից դուրս եկայ և հանդիպեցի Հայոց Բարերգական ընկերութեան խորհրդի անդամին։ Նա պատմեց հետևեալ նորութիւնը. խորհուրդը որոշել է չը սահմանափակել բարեգործութիւնը միայն գրասենեակի մէջ եղողների չրջանով, այլ օգնել և գրասենեակից դուրս գտնվող կարօտեալներին։ Ահա և Հրատարակչական ընկերութեան վարչութեան անդամը. նա ուրախ ժպտում էր. նա պատմեց, որ Ընկերութեան անդամների թիւը արդէն հասաւ 3000-ի և Ընկերութեան ծրագրած բոլոր աշխատութիւնները արդէն լոյս տեսան։ Մեր խօսքը կտրեց Ներքինեան դպրոցի տեսուչը, որ հանդիպաւոր կերպով բացականչեց. «կարող է մեզ չնորհաւորել, մենք այսօր վոխվում ենք դպրոցի նոր բնակարանը. ինչ հիանալի բան է. նա չինված է ամենակատարեալ կերպով և առողջապահական բոլոր պահանջների համաձայն»։ Տեսուչը վազեց, իսկ ես վճռեցի ձեզ էօտ գալ և այս բոլորը հաղորդել Ձանասպարհին ինձ յայտնելին, որ այսօր նչանակված է հայ, վրաց և ուրիշ ազգութիւնների երիտասարդների համերաշխական ժողովը՝ քննելու...

digitised by A.R.A.R.@

Ես ընդհատելի Թալարդեանին և առաջարկեցի կարդալ իմ առաջած հետաքրքրութիւնները Նա կարդայ բարձրաձայն և հանդիսաւոր կերպով.

Վաղարշապատ. Հրատարակված է թեմական առաջնորդների անունով մի շրջաբերական՝ ուշ մի դեպքում չը ձեռնադրել տղէտ քահանաների, պահանջել եկեղեցիներից կանոնաւոր հաշուետուութիւն և վերաստուգող յանձնաժողովներ նշանակել պաշտօնեաների գործակատարութիւնը քննելու համար

Սխտալաբերդ. Այսօր մեր գաւառի վաչխաւոնները ներկայացրին մի մեղայագիր, որով խնդրում են իրանց կատարած բոլոր կեղտոտութիւնները և վերադարձնում են իրանց պարտապանների երանգից վերցրած աւելորդ ծօխանները։

Բագրեւ. Այստեղի տեխնիկները, ինժեներները, իրաւաբանները, բժիշկները և միւս ինտելլիգենտ երիտասարդները հաստատեցին պատուի դատարան, որ պէտք է քննէ այն ամօթ, խարդախ և ոտնձ արարքները, որ թոյլ կը տան կրթւածները իրանց գործունէութեան մէջ։ Հաւաքվեց մի պատկառելի դումար կատարելագործված մեքենաների, էժան կրեդիտի և ուրիշ ձեռնարկութիւնների միջոցով օգնելու գաւառներին։

Շուշու. Այստեղ հրաման է ստացված էջմիածնից՝ կատարել հոգեբարձական ընտրութիւն ընդունված կանոնադրութեամբ և նոր հոգաբարձուներին յանձնել տեսչի ընտրութիւնը և գործերի ղեկավարութիւնը։

Երեւանի. Այսօր Բենիկ վարդապետը հրաժարական տուեց և պատրաստում է մի

digitised by A.R.A.R.@

հերքում այն յոթուսածների դէմ, որոնք պէտք է տալէին լուսիրների մէջ վերջին դէպքերի առիթով:

Բալթախտանէից. Այսօր բաժանվեց այն ժողովրդական պատգամաւորութիւնների առաջին հատորը, որ կարդացել էին Ամենայն ընթացքում պատճառի տեղեկութիւնները ժողովրդի համար: Երեք տեղում բացված են ընթերցարաններ. տեղեկութիւնները օգնում են առաջ նպատակներում:

Լօնդօնից. Այսօր Վիկտորիա թագուհին հեռագրեց Կրիւգերին, որ նա պատրաստ է հաշտութիւն կայացնել Տրանսվաալի հետ, ընդունելով հանրապետութիւնների քաղաքական պայմանները:

—

Այս հեռագրից յետոյ Թաղարդեանը այլ ևս չէ կարողացաւ իր ծիծաղը պահել, դէն շպրտեց դեռ չէ կարդացված հեռագրերը և բացականչեց.

—Մնում է հռոմայեցի ևս, որ այսօր պարծենայ մէկն էլ:

digitised by A.R.A.R.@

II

(8 *ապրիլի* 1900 *թ.*, «*Մշակ*», № 67)

Զատկական նուէրներ

Ինչ նուէրներ պէտք է տամ Զատկին ինչո՞վ պէտք է պոհայնեմ ես նուէր ստացողներին

Բայց արդեօք երբ և իցէ կարելի է մարդկանց սրտի ուզածը ճիշդ կերպով գիտենալ

Ի հարկէ, ես պէտք է տամ այն, ինչ որ ինքս եմ հաճարում նպատակայարմար

Այդ մտածմունքներով զբաղված՝ ես քնեցի

Ես ահա փայլուն երազի մէջ մտեցայ ինձ մի ախտակապուտ ծերունի

—«Ես քեզ կօգնեմ, ասաց նա, դնանք նրա մէջ այս կողովի մէջ, որ մեզ կը տանէ աշխարհ ուր նրա մէջ կան բազմաթիւ նուէրներ»

Արշալոյսի առաջին շողերի հետ մեր թեթև օդանաւը սլացաւ—դնաց

Սքանչելի տեսարաններ—մէկը միւսի հետևից բացվում էին մեր առաջ Գարնան առաջին կանաչը, զովարար օդը, հարաւից վերադարձող թռչունների անհանգիստ քրքիջը, յորդացած ջրերի անզուսպ հոսանքը ինձ վրա ազդել էին թարմութիւն և մանկութեան զմայլութիւն

Որքան ցանկանում էի, որ կարողանայի բնութեան այդ թարմութիւնը հաղորդել և մարդ-

digitised by A.R.A.R.@

կանոն Թարմութեան և կենսաւնակութեան պահպանելը ինձ այնքան դրաւել էր, որ ես դիմեցի Ծերունան այս հարցով.

—Մինչ մենք կարող ենք աւելի մի մեծ նուէր տալ մարդկանց քան այն, ինչ մենք ղեմ ենք, այն է ներշնչելով նրանց մէջ պահպանական Թարմութիւն։

Ծերունին ժպտաց։

Մենք առաջ գնացինք։

Մենք աւտոմոտիլ էինք լուսապատճէնների ձիւներից վերև Յանկարծ օդի մէջ լսեց որոտումնք, երկիրը դղրդաց և մենք տեսանք մեզ մի հոյակապ սրահում։

—Ահա այստեղ կարող էք տեսնել ամ որ կատարւում է, ասաց Ծերունին։

—Բարև եկաք, ողջոյն ձեզ, կեցցէք, մենք ամենքս ձեզ ենք սպասում, լսեցին ձայներ ամեն կողմերից։

Մենք նստեցանք առաջին նստին։

Դրանք օրիորդներ էին տօնական զգեստաւորուած ևս չտապեցի իմ պարտաւորութիւններն անել։

—Ձեզ, օրիորդներ, յանկանում եմ պարտական Թարմութիւն, սաքսը զգայմունքների անվերջ մի ալբիւր. ահա ձեզ փունջներ պարտական առաջին ծաղիկներից։

Օրիորդների դէմքերը փայլեցին. նրանք դոհ էին Գոհ էի և ես։

—Շնորհակալ ենք, պարոն, ձեր առաջարկից, առաջին նրանք։ Յետոյ

—Յետոյ ես արդէն վերջացրի։

Դէմքերը սխրեցին Ծերունին վերցրեց կողմից մի ամբողջ կապոց զանազան հրաշքառատաների, լուսանկարների, ալբոմների, մօտա-

digitised by A.R.A.R.@

հանդէսների, փառակալ հատորների և մանր մունր քարեղէնների և ցրվեց օրիորդների մէջ այնպիսի հմտութեամբ, որ իւրաքանչիւրը վերցրեց իրան հասանելիքը։

—Սորամանկներ, որ այս ունէիք, ինչու էիք մեղ խաբում։ Ընտրհակութիւն, չնորհակալութիւն։

—

Ծերունին բռնեց իմ ձեռքից և տարաւ մի ուրիշ խմբի մօտ։

Դա անազգեաններն անթիւ բազմութիւն էր։ Դա հոգևորականների մի մեծ ժողով էր։

—Ողջոյն, սուրբ հայրեր, սկսեցի ես, ձեզ համար բերել եմ գարնան զեփիւռներ, Զատկի նուէրներ. ձեզ ցանկանում եմ գարնան թարմութիւն, սուրբ զգայմունքների անհուն ոգևորութիւն, բարոյական մաքուր սկզբունքների առաքելութիւն, ժողովրդի սրտի յուզմունքների գիտակցութիւն։

Սուրբ հայրերը գունատվեցին, վրդովվեցին, դէմքերը խոժոռեցին և բարկացած նայեցին վրաս։

—Թողէք ձեր կատակները, բղաւեցին երբանք. մենք խնդիրքներ ունենք առաջ, մեզ համար համախոհականներ են ուղարկված, մենք ծախքեր ենք արել, մենք ապահովիչներ ունենք։ Ահա սա սպասում է խաչի, սա կամելաւկայի, սա բարեկարգչի պաշտօնի, սա գրաժակալի, սա ամբողջ թեմի կառավարութեան, սա չքնաս պահակելու իրաւունքի, սա եկեղեցական զառերից օգտվելու արտօնութեան, սա վանահայրութեան։ Այստեղ լուրջ հաշիւներ կան, իսկ դու մեզ ծաղրում ես։ Թարմութիւն, այդ քեզ համար պահիր։

digitised by A.R.A.R.@

—Ինչու էք այդպէս ասում, չընջայ մի տխրացու, թարմ ձուկը ինչ վատ բան էւ

Ծերունին ձեռքը տարաւ դէպի կողովը և հանեց այնտեղից կծղպակներ, հրամաններ և չրջաբերականներ և շպրտեց անապգեաններէ մէջը։ Բարձրացաւ մի այնպիսի չարդ ու ծեծ, որ անկարելի էր մնալ։ Ծերունին բռնեց ձեռքից և տարաւ մի ուրիշ կողմ։

—

Մենք մօտեցանք մի արձանի, որ նման էր չինական կամ հնդկական կուռքի՝ կրակոտ աչքերով և ահագին բազուկներով։

—Սա նաւթի առուծն է. նայիր նրա հրաշալիներին։

Ես սկսեցի դիտել.

Տէր Աստուած, այս ինչ բազմութիւն է։ Եւ ոչ չը կայ այստեղ։ Ամեն հատակի և դասակարգի մարդիկ։

Ինձ վրդովեցրեց այն խռնարհ և տարակոյսի դիրքը, որ բռնել էին այդ բազմաթիւ գլուխները։ Իմ յիշողութիւնից երբէք չեն կարող մոռացվել այն աղերսական, այն հաճոյական հայեացքները, որ գցել էին հպատակները դէպի նաւթի կուռքը։

Ինձ զարմացրեց մի հանգամանք։ Այդ բազմաթիւ հպատակների մէջ հազիւ նշմարելի մի քանի բնական և խելօք դէմքեր, մեծ մասը ապուշների կամ ապուշ կտրածների դէմքեր էին։ Ես յայտնեցի այդ մասին ծերունուն։ Նա կըրկնեց իր նախկին խօսքը—«չարունակիր դիտել»։

Յանկարծ կուռքը շարժվեց։

—«Գլխի վրա կանգնեցէք», աղաղակեց նա։ Բոլորները մի ակնթարթում գլխների վրա կանգնեցին։

digitised by A.R.A.R.@

Կուռքը դարձավ աղաղակեց։
—«Լիզեցէք իմ նաւթեայ գարշապարը»։
Բոլորեքեան հնազանդվեցին։
Կուռքը աղաղակեց՝ «Երանաւոր չրջեցէք դէպի Զատկի հրաւիրակները և նաւէրներ խնդրեցէք»։
Նաւթային թագաւորութեան բնակիչները դէպի մեզ դարձան, բայց անխօս մնացին։ Նրանք մեզնից ոչինչ չէին ցանկանում։
Ես պատրաստ էի իմ նախկին բարեմաղթութիւնները սկսել. բայց ծերունին տուեց ինձ մի թերթ և ասաց։
—Կարդա նրանց համար բարձրաձայն այս մի քանի տողը։
Ես կարդացի հետևեալը.
«Դուք ամեն բան ունէք. բայց չունէք խիղճ, դուք չունէք ա ա ա տ ձեռք։ Ոչ ոք աւելի ժլատ չէ եղել քան դուք ձեր ունեցածի համաձայն։ Վերցրէք, այս է մեր նուէրը։
Ոչ ոք տեղից չը շարժվեց։
Յանկարծ կուռքը շարժեց բարկացած աչքերը և դուռ ձայնով աղաղակեց իր հպատակներին։
—Ձեզ համար Զատիկ չը կայ. դուք Զատկի օրերն էլ կը ծնաք նաւթում թաթախված, համբուրեցէք գարշապարս։

—

Ծերունին տարաւ մի ուրիշ կողմ։
Այդտեղ կանգնած էին ազատ արուեստի ներկայացուցիչներ։ Դերասանները ստացան մի չրջանակ, որի մէջ գրված էր խոշոր տառերով հետևեալը՝ «Երբոր դերասաններ անկարող էք առաջ գնալ, դարձէք սիրողներ, այն ժամանակ ձեր ներկայացումները հասարակութիւն կը գրաւեն», Նկարիչներին տուին երկաթուղու տոմսեր և ճանապարհա-

digitised by A.R.A.R.@

ծախք՝ գնալու երկրի խորքերը և այնտեղից նվեր բերելու իրանց պատկերների համար, երաժիշտներին և երգիչներին տուքնք զատրօլեօրների վկայականներ, որպէս զի հասարակութիւն գրաւեն դէպի թատրօն...

Մենք անցանք այնուհետև չատ տեղեր։ Ես ալ մի տեղ չը կարողացայ ինձ գոհ զգալ։ Սմեն մարդ իր ցաւն ու դարդն ունէր և Չատիկով չատ քիչ էր զբաղված։

—

Վերջապէս ծերունին կանգնեցրեց ինձ մի ընդարձակ ծաղկոցի առաջ։ Այդտեղ լիքն էին մանուկներ։

Նայեցի նրանց երեսներին և մոռացայ իմ բոլոր վշտերը։

Որքան պարզ, պայծառ էին նրանց դէմքերը։

Մաքուր և անկեղծ ժպիտը, վառվռուն աչքերը, անսահման ուրախութեան քրքիջը ցոյց էին տալիս, որ մենք վերջապէս այն չրջանի մէջն ենք, ուր անկեղծ կերպով սպասում են Չատկին։

Ծերունին աչխուժացաւ։ Նրա դէմքը փայլեց։ Նա կռացաւ և ժողովեց ու դուրս թափեց հարատար մանր մունր նուէրներ, բազմաթիւ գոյնզգոյն ձուեր։

Մանուկները հէնց որ տեսան ծերունուն, միաբերան աղաղակեցին.

Ողջոյն պապի՛կ, եկ քեզ գովենք,
Սիրուն Չատի՛կ, եկ համբուրվենք։

Օդը լցվեց աղաղակներով։ Ծերունին մտաւ մանուկների մէջ։

—Ահա սրանք են միայն անկեղծ կերպով Չատկին սպասում։ Գնանք նրանց հետ։

Ծերունին անհետացաւ ես զարթնեցի։

digitised by A.R.A.R.@

III

(13 հոկտ. 1900 թ., «Մշակ» № 193)

Երկաթուղու կայարանում էր։

Գնացել էի ճանապարհ դնելու ծանօթիս, որն ուղևորվում էր Բաքու։ Այնտեղից նրան լաւ պաշտօն էին առաջարկել և նա ընդունել էր մի փոքր տատանումից յետոյ։ Մենք ժամանակ շատ ունէինք մինչև գնացքի ճանապարհ ընկնելը և խօսում էինք Բաքուի և այնտեղ գտնվող ինտելիգենտների մասին։

—Երկու տարուց յետոյ, աւելնալատը երեք տարուց յետոյ ես կը թողնեմ Բաքուն, ասում էր ծանօթս, ամուր թոկ տալով իմ կուռքը։

—Մի երդվիր, բարեկամ։

—Ինչ խօսք ես ասում, հաստատ խօսք, վրդովված վրա բերեց նա։

—Բայց յիշում ես, սիրելիս, քանիսին ենք մենք ճանապարհ դրել այդպիսի տրամադրութեամբ և ոչ ոք չէ վերադարձել։

Իմ խօսքերը վիրաւորեցին ծանօթիս։

Այդպէս վիրաւորվել էին նրա բոլոր նախորդները։

Ջանքը խիստին. ուղևորները չտապեցին դէպի վագոնները տեղեր գրաւելու։ Ծանօթս զբաղվեց իր իրերը տեղաւորելու գործով։

Ես ուզեցի դիտել ուղևորներին։ Յանկարծ աչքս ընկաւ իմ վաղեմի ծանօթ Սահինեանը,

digitised by A.R.A.R.@

որ նոյնպէս բաղուկի էր դարձել վեց տարուց ի վեր։

—Սանիկեան, դու ես, որտեղից որտեղ...

—Ո՞ւմ եմ տեսնում Ա՜հ, որքան ուրախ եմ, բայականից Սանիկեանը փայլուն ժպիտով։

—Ես գալիս եմ ուղիղ Պարիզից, յայտնեց, նաև Օդեսայից չոգենաւ նստելի։ Գիտես թէ ինչ նստեց ինձ վրա իմ ճանապարհորդութիւնը։ Մի բան պակաս երեք հազար րուբլուց շուտով եմ բացում Գնաց Նորից խրվեմ նաւթի մէջ մինչև, մինչև... էհ մինչև նոր ճանապարհորդութիւնս։

Սանիկեանն էլ այն պարոններից մէկն էր, որ խոստացել էր բաղուից շուտով դուրս պրծնելու և հրաստրակչական դործով զբաղուելու։

—Սանիկեան, հաղորդեցի ես, գիտես ոլ է այսօր քեզ հետ բաղու գնում, Դաւթեանը. նա պաշտօն է ստացել այնտեղ։

—Ի՞նչ ես ասում, ուր է նա. այդ լաւ է, միասին կերթանք։

Մենք գնացինք Դաւթեանին տունները։

Ուղևորների թիւը չատ էր։ Ազատ տեղ քիչ կար։ Սանիկեանի հետ տեղ յատկացրինք Դաւթեանի մօտ Մօսկու ժամանակ այլ ևս չը կար։

—Չը մոռանաս, Դաւթեան, ասացի նրան բաժանուելուց առաջ, աշխատիր մի բան աչքի ընկնել։

—Ի՞նչ բանի մասին է ձեր խօսքը, մէջ մտաւ Սանիկեանը։

—Միջատներից աւերուած դիւղերի մասին է, բացատրեցի ես, պէտք է օգնել խեղճ դիւղա-

digitised by A.R.A.R.@

յինեալին. զուգէ կարողանաք Բադուէյ օգնութիւն ուզարկելու։

— Հարիւր թէ, սառն կերպարանքով ներկայացաւ Սանիկեանը, այժմ քնաւոութեան տարի է. ոչ ոք ոչինչ չի տայ։ Փողի մեծ կարօտութիւն կայ։

— Ինչ ես ասում, վրդովված խօսեց Դաւթեանը։ Այդ ինչպե՞ս փող կը գտնվի տաք ջրեր և արտասահման գնալու համար, իսկ խեղճ և կարօտ գիւղացիներին օգնելու համար չի գտնվիր։ Պէտք է գտնել։

— Դուռ նոր ես, գեռ անփորձ ես, հեգնական ժպիտով ներկայացրց Սանիկեանը։

Գնացքը շարժվեց. մենք բաժանվեցինք։

digitised by A.R.A.R.@

IV

(14 հոկտ. 1900 «Մշակ» № 194)

Անցեալ օր, երեկոյան, անցնում էի Ներսիսեան դպրոցի մօտով։ Դպրոցի շէնքում նըկատելի մարդկանց մեծ երթևեկութիւն, հատուկտոր չտապ խօսակցութիւններ, չահադըրգռված դէմքեր։ Յիշեցի, որ այդ երեկոյ նշանակված էր դպրոցի նոր հոգաբարձութեան ընտրութիւնը։

Յանկարծ առաջիս ցցվեց իմ ծանօթ պատգամաւոր—հոգաբարձուներից մէկը, որ շտապով դէպի դպրոցն էր գնում։

—Մինչ ուշացել էք, հարցրի ես։

—Երևի ոչ. բայց շատ են վազ նշանակել նիստը։ Ո՞վ է լսել, որ ժամի 7-ին ժողով սկսվի։ Իսկ այժմ 7-ից արդէն մի քառորդ անց է։

—Անկասկած, մի կէս ժամ ուշ կը սկսվի, նկատեցի ես. իսկ մինչև քուէարկութիւնը ժամանակ շատ կայ։ Ասացէք տեսնենք, ինչպէս են մաքառող կողմերի պատրաստութիւնները։

Հոգաբարձուն դէմքի վրա ցօլացրեց հանդիսաւոր մի հայեացք և հատ-հատ արտասանեց։

—Մեր գործը շատ լաւ է։ Պատգամաւորներից ընդհանուր թուի 63%-ը մշակականներ են, իսկ 37%-ը հակառակորդներ։ Բայց...

—Ի՞նչ բայց։

digitised by A.R.A.R.@

Հոգաբարձուն դէմքը խոժոռեց, աչքերը վայրկեան, շրթունքները կրծոռեց և յուզված ձայնով փսփսաց ականջիս.

—Կօնդակներով մեզ կը սպանեն, գիտես ինչ որ չենք կարողանում աշխատեցնել հոգաբարձական ժողովներում, կաշխատեն աշխատեցնել էջմիածնից եկած հրամաններով։ Քանի քանի այդ տեսակ դէպքեր են եղել։ Մաքառել ենք և պէտք է մաքառենք. բայց յաճախ և զիջել ենք։ Այնտեղից հրամայում են թէ սրան որդիը ընդունեցէք, այս մէկին թոշակ տուէք, այս ինչ ուսուցչին կենսաթոշակ նշանակեցէք և այլն և այլն։

—Շատ լաւ, դիցուք հրամայում են. բայց դուք էլ անկաւակած կարգ ու կանոն ունէք, որոնցով դեկավարվում էք, վրա բերեցի ես։

—Ուզում էք ես ձեզ ցուցադրեմ, սակայն հոգաբարձուն գլուխը թափ տալով ներս մտնը մերժեցինք մի քահանայ ուսուցչին կենսաթոշակ նշանակելու գործը կը գամ, որ վաղը կօնդակ կը ստանանք նրան կենսաթոշակ տալու։

—Էհ։ Դուք չափազանցնում էք։ Այդ անկարելի է։ Շատ չատ միայն կը յանձնարարեն՝ այդ անելու։

Հոգաբարձուն աւելորդ համարեց ինձ համոզել, ձեռքով արաւ և բաժանվեց։

Ես առաջ գնացի։

Պատահեցի Մոզնու նկեղեցու ծխականներից մէկին, որ նոյնպէս դէպի Ներսիսեան դպրոցն էր գնում։

—Այդ ուր ես գնում, հարցրի ես, դու հո արտաքսուած չես։

—Գնում եմ տեսնեմ, թէ հնչանակումի պատ-

digitised by A.R.A.R.@

գամասրնները կը պահեն արդեօք ժողովրդի պատիւը ինչու, ինչու պէտք է մենք վիրաւորանքի ենթարկվենք ինչու չը պէտք է մի անգամ ևս մեզ հրաւիրէին ընտրութեան, մասնակցելու որ ազատ կերպով մէջտեղը ելնի ընտրողների ձայնը

—Ոչ, ոչ և ոչ. ոչ ոք ոչինչ չի ասի. այդ-քան միամիտ չը պէտք է լինել Գնանք կրկին, այնտեղ կը գան յայտնելու ընտրութեան մասնակցութիւնները

Ուղեկից հարևանների

Մենք կրկին գնացինք

---

digitised by A.R.A.R.@

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI. 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

(18 հոկտ. 1900 «Մշակ» № 196)

1001
3996

Կլուբում մենք ունենք մի պարոն, որ յայտնի է Բուզդան Բուզդանիչ անունով։ Նա սիրում է ամեն տեսակ անեկդոտներ և լուրեր պատմել։ Մարդ երբէք չէ կարող հասկանալ, թէ երբ է նա պատմում ուղիղ բան, իսկ երբ հնարած կամ չափազանցրած։

Կլուբ մտանք թէ չէ՝ հէնց ուղիղ Բուզդան Բուզդանիչին պատահեցինք։ Նա հետաքրքրվեց իմանալու, թէ մենք ինչ նորութիւններ ունենք։ Մենք պատմեցինք։

—Այժմ հերթը ձերն է, պիտեցինք նրան։

Բուզդան Բուզդանիչը լուրջ դէմք ընդունեց՝ բանից մեր ձեռքերից։

—Նաօր դուք ասկային չանեցիմէն իք սկսի, իս էլ ասկային խաբարներ կու պատմիմ ձիզ։

—Աաա, տեսանենք ինչ խաբարներ են։

—Աաւամ ին Արիատակէս աուբրատանը մէ ինչոր նաւր գիրք է գրի տէրտէրների վրա։

—Այո, այո, գրել է, հաստատեցինք մենք, բայց դա շատ էլ նոր բան չէ։

—Մէ մուլաին էդ գրքումը, աւաւամ ին, նա դաւիթ է գցի էս մեր տէրտէրների բէհէաթը տուրքերը էդ չնո վունչին նա վուտն աւաչ է աարի ու իր ընկերատիք աուբրատանները ալլիաարնին էլ է քրքրի։ Քրքրիլ ու

digitised by A.R.A.R.@

մէջտեղում լաւ ցօղխաղներ ու պեպաքնաւբներ է պէտք։

—Այո, պետենք, կաշառակերութեամբ ձեռնարկութիւններ, այդ պետենք, չեսո՞ր։

—Լաւ, էդ պիտիք։ Ամա էդ ընընգըրաւթք աւբրատանէրն էլ հօ գօմշի կաշի չին հագիր ներանք էլ փիքր չին արի վուր ջիդրը հանինք։ Ու աւում չին մէ պարապ մարթ չին պէտ, վուր վիդն է աու Արիատակէս աւբրատանի վուխտավայ գործքերը մէ լաւ տնտղի ու թէ կարենայ մէ բան գուս բերի։ Էդ մարթն էլ, Ղարաբաղ, Տաթև, Թիֆլիս, Հաշտարխան էլ թուղթ չէ թողի, ամենը քրքրիլ է։

—Է, գաճլ է արդիօք մի բան։

—Ջիմ պիտի պէտ թէ չէ պէտ։ Ամա մէ բան հաստատ է, վուր գործքերու մէջտեղ մէկել աւբրատանների մասին նուր նուր մասլահաթներ է պէտ։ Էտուրը կօսին ախանդալ։

Բուզդան Բուզդանիչը նկատեց, որ հետաքրքրութիւն չարժեց մեր մէջ, ժպտաց ինքնագոհ կերպով և լռեց՝ մեր աչքերին նայելով։

—

—Մեա լուրերդ ինչ տեսակ բաներ են, հետաքրքրվեցինք մենք։

—Հիմա մէ ուրիչ բան պատմիմ էտի, աւում ին, հայու լիզուով մէ ժուրնալ ին ապում, անունը ինչ վուր ասին, մակեմէս թռաւ, քալվաթին է թէ չաքուչ է, ինչոր էդ թաւլաւր մէ միտկ ունէ դրա անունը։

—Երևի «Մուրճ»։

—Հա, հէնց էդ պտի ըլի։ Դրա տէրը մէ անդամ տալի է, վուր իր ժուրնալը անարատ կոյա է ու ինքը չի թողնի վուր օձին նրան մօտենայ ու ձեռը գցի։ Իմ ժուրնալի կուսութիւ-

digitised by A.R.A.R.@

նը, կոսէ, չը պիտի վուր խախտվիս Գալիս ին էդ պարնի կուշտը չէհէլ տղիրք, ուսում առած աուտզենանիք. աստմ ին՝ գալրուն խմբագիր, տուր էդ ժուրնալը միր ձեռքը. էգէբա մէ բան դրատինքս խմբագիրը խիստ չգրվում է ու էրեանէրուն բդաւում՝ «դուք չինք իմայի գանա, վուր իմ ժուրնալը ուրիշի ձեռքը չիմ գյի, վուր նրա կուատութիւնը չի խախտվի»։ Դրանց էդ նէն գալիս ին բագուցի հարուստնիր ու էդ պարնի հէդ խօշ ու բէչ ին անում, աստմ ին թէ «կու տանք մէ օխտը հազար մանէթ, միզ տու ժուրնալը»։—Չի խախտվի, կրակ է կըտրվում խմբագիրը։ «Տալիս ինք տասը հազար»։—Չի խախտվի «Տալիս ինք տասնում հազար»։—էդ բիչ է։—«Տալիս ինք քսան հազար».—Մէ բան էլ աւելցրէք։ Ասում ին Գիդիք էլի, աուտուրի բան է։ Մէ բան աւելցնում ին ու կոյեին առնում ին, էս օրերը բանը կու վիրչանայ։

Բուզդան Բուզդանիչը լռեց։

Մենք խնդրեցինք, որ պատմէ իր միւս նորութիւնները։ Նա ցանկութիւն ունէր պատմելու։ Բայց այդ ժամանակ մօտեցաւ մեզ կլուբի անդամներից մէկը, մի վրացի, որ փոխեց մեր խօսակցութիւնը։

digitised by A.R.A.R.@

VI

(20 հոկտ. 1900 «Մշակ» № 198)

Մի շաբաթ սրանից առաջ «Մշակին» խմբագրատունն մտաւ Կոպարեանը, մեր վաղեմի մի ծանօթը, որ շատ ուշ-ուշ յաճախող հիւրերից մէկն էր։

—Բարև ձեզ, պարոններ, հիւր չէք ուզում. ասայ նա սենեակ մտնելով։

—Օօ՛, այդ ո՞ր աւետիսն է, ինչ է պատահել, որ մեզ չէք մոռացել։

Այս և այս տեսակ հարցերով դիմելին նրան ամենքը։

—Ելայ ձեզ հետ փոքր ինչ վիճելու, ինչպէս առաջ էլ մէկ մէկ վիճել եմ, ասայ նա կէս-լուրջ կէս-կատակ հայեացքով։

—Ի՞նչ բանի մասին։

—Էլի մեր հին յաւէտ մասին։ Դուք պիտէք, որ լեզուի հարցում ես Մխիթարեանների և Յարոյի ոչ միայն կուսակիցն եմ, այլ մի քանի էլ աւելին ևս հայերէն բառերի կողմն եմ և չեմ մերժում օտարաբոյր բառերը։ Պէտք է բոլոր օտար բառերը թարգմանել։

—Որը կարելի է թարգմանել՝ թարգմանում ենք, իսկ որը չէ կարելի՝ ընդունում ենք։

—Չէ, բոլորը պէտք է թարգմանել, ասայ կոպարեանը ձեռքերին խփելով,—անկարելի ոչինչ չը կայ։

digitised by A.R.A.R.@

Սկավեց աղմկալի վիճաբանութիւն Ամեն մարդ բերում էր դանազան օրինակներ իր առածը ապացուցանելու համար։ Կոպարեանը ոչ մի կիջում չէր ընդունում նա նոյն իսկ դէմ էր այն օտար բառերին, որոնք հին ժամանակներս մտել են մեր լեզուի մէջ և քաղաքացիութիւն են ստացել, օրինակ թատրոն, տօկօս և այլն

—

Վէճին վերջ դնելու նպատակով մենք առաջարկեցինք Կոպարեանին լրագրի համար պատրաստած լուրերը, որոնք պէտք է լոյս տեսնէին հետևեալ օրը, վերակազմել իր ձեռք և դէն դցել բոլոր օտար բառերը։

—Ուրախութեամբ, ուրախութեամբ, բացականչեց Կոպարեանը և վերցրեց լուրերի ծրարը։

Մի կէս ժամ աշխատելուց, մի երկու բառրանններ բրքրելուց յետոյ Կոպարեանը վերջացրեց իր գործը և առաջարկեց կարդալու։ Մենք առաջին հետաքրքրված էինք։ Ահա լուրերն մէջ Կոպարեանը կարդաց իր կազմած առաջին լուրը։

«Երէկ ձերբակալվեց փախստական Ալեանը։ Քաղաքամասնապետ Գ. վերցրած իր հետ ութն քաղաքացիներ՝ շրջապատեց առաջինն և բռնեց»։

Մենք ոչինչ չը հասկացանք։

Դիմեցինք բնագրին։ Նրա մէջ գրված էր հետևեալը՝ «Երէկ ձերբակալվեց պաչախ Ալի-օղլին։ Պրիստաւ Գ. վերցրած իր հետ ութ զօրօղօլոյ, շրջապատեց առաջինն և բռնեց»։

—Կարդացէք միւս օրինակը, դիմեցինք Կոպարեանին։

Եւ կարդաց երկրորդ նամակը։

digitised by A.R.A.R.@

«Արքունական թատրոնում սահմին Դ-ին այնքան կայացավ փաստոտ գործողութեան ներկայացումը։ Տեսարանը կխոսվ չափ դատարկ էր. գրավված էին գնահատարկը և սանդուղքային լանջավայրը»։

—Ո՞նչ, ինչ, զարմացած հարցրինք մենք, ծխաղներս չը կարողանալով զսպել։

Դիմեցինք բնագրին։ Ահա ինչ էր այնտեղ գրված։

«Արքունական թատրոնում ներկայ հոկտեմբերի 13-ին, կայացավ «Ցատուա» օպերայի ներկայացումը։ Թատրոնը կիսով չափ դատարկ էր. բռնված էին պարտերը և ամֆիթեատրոնը»։

Մենք զուարճութիւն զգացինք Կոպարեանի փորձերից։ Նա չարունակեց լրջութեամբ իր ընթերցանութիւնը, տալով մեզ երբորդ նամուշ.

«Երբէք Ղոդիոս, որ մի ժամանակ կատաղի հրճուանք էր յարուցանում իբրև զիլձայն, այժմ զիլձայնութիւնը կորցնելուց յետոյ՝ հանդէս եկաւ իբրև ծանրաձայն եւգենիոս Օնեգեանի դերում»։

Մենք չը կարողացանք այլ ևս զսպել մեր ծխաղը։ Բնագիրը հետևեալն էր՝

«Երբէք Լօդէյ, որ մի ժամանակ ֆուրօր էր անում իբրև տենօր, այժմ տենօրի ձայնը կորցնելուց յետոյ հանդէս եկաւ իբրև բարիտոն եւգենիյ Օնեգինի դերում»։

Կոպարեանը չարունակեց։

«Քարիւղի չահագործութիւնը և չուգաձորայի ճանապարհների չինութիւնը նպաստեցին գրամագլխութեան զարգացմանը Անդրկովկասում։ Դատախօս Դիմիտկօ նուիրել է այդ հարցին յատուկ մի մենագրութիւն»։

Մենք անշուշտ ոչինչ հասկանալ չէինք կա-

digitised by A.R.A.R.@

բաղ. դիմեցինք բնագրին և գտանք այնտեղ հետևեալը՝

«Նաւթատերծութիւնը և բէլային ճանապարհների չինութիւնը նպաստեցին կապիտալիզմի զարգացմանը Անդրկովկասում։ Պրօֆէսօր Լիւսինկօ նշել է այդ հարցին յատուկ մի մօնօգրաֆիա»։

Բաւական էր այդ օրինակների թիւը՝ համոզվելու համար թէ ինչ հայկարատութեան մասին է խօսում Կոպարեանը և մենք աւելի զուարճանալու քան լուրջ քննութիւն անելու նպատակով խնդրեցինք կարդալ գարձեալ մի նմուշ։ Նա կարդայ լուրջ կերպով։

«Տփղիսի (Յերմուկի) գեղարուեստական ընկերութիւնը կառուցել է Գօլօվինեան պողոտայում մի հոյակապ չէնք։ Մակարդակը կազմել են քաղաքիս յայտնի գեղանկարիչները։

Բնագրում պրված էր.

«Թիֆլիսի արտիստական ընկերութիւնը կառուցել է Գօլօվինակի պրօսպեկտի վրա մի հոյակապ չէնք։ Մակարդակը կազմել են քաղաքիս յայտնի ինժեներները»։

Կոպարեանը գոհ էր իր թարգմանութիւնից, ուստի նա այլ ևս չը սպասեց հրաւէրի և կարդայ իր կազմած հետևեալ լուրը.

«Յերեւուկ է նկել գերասան Դալակու գործագուլական խումբը հարուստ ցուցակով, որ բաղկացած է գասական հին և նոր հատուածներից։ Ինքը Դալակի իր կոչումակերի մէջ աչքի է ն բնորոշ, մուանները թէն թոյլ են, բայց հաւաքականին չեն խանգարում»։

Դա վերցրած էր հետևեալ բնագրից.

«Թիֆլիս է եկել արտիստ Դալակու գրամատիկական խումբը հարուստ բեպերտուարով, որ

digitised by A.R.A.R.@

բաղկացած է կլասիկ պիէսներից։ Ինքը Դամլի իր ամպլուայում աջող է և բնորոշ, միւսները թէև թոյլ են, բայց չեն խանգարում անսամբլին»։

—

Վերջապես ընթերցումը։ Կոպարեանը նկատեց, որ մեր մէջ նրա փորձը միայն ձիծաղ է յարուցանում, թէև ոչնչ չինեց և հպարտաբեռամբ արտասանեց։

—Դուք մոլորութեան մէջ էք, բայց այդ բաւական չէ, դուք չէք էլ ուզում ուղղվել. ահա ինչն է յաւակին։

Մենք այլ ևս չը վիճեցինք։

digitised by A.R.A.R.@

VII

(1 նոյեմբ. 1900 թ. «Մշակ», № 206)

Ո՞վ չի ցանկանայ այժմ տեսնել չինացին-ներին։ Ամբողջ աշխարհը նրանցով է հետաքրքրված, պատկերազարդ թերթերը նրանցով են լցված։ Ամեն օր մի նոր գիրք, մի նոր նկարագրություն է լույս տեսնում նրանց մասին։

Կարդալի լրագրներում, որ Բաթումի մէջ մի քանի չինացիներ ներկայ էին այնտեղ բացված ցուցահանդէսին։ Մտածելի՝ դա յարմար դէպք է տեսնելու այդ ժամանակակից հետաքրքրութեան ազգի ներկայացուցիչներին։ Ուրեմն բաւական է դնալ Բաթում։

Մինչ ես պատրաստվում էի Բաթում դնալու՝ պատահաբար ծանօթացայ մի չինացու հետ թիֆլիսում։ Նա նստեց ինձ մօտ ձիաքաշի կառքում։

Ես հետաքրքրութեամբ նայում էի նրան։ Մի քանի րոպէից յետոյ չինացին դիմեց ինձ ֆրանսերէն լեզուով և հարցրեց մի ֆիրմայի հասցէն։ Ես պատասխանեցի և զրոյցի բռնվեցի հետը։ Չինացին նստել էր շատ տեղ և տեսել էր շատ բան։ Մեր խօսակցութիւնը դարձաւ հետաքրքրական։

Ես առաջարկեցի մտնել հիւրանոց և այնտեղ նախաճաշել,

Նա համաձայնվեց։

digitised by A.R.A.R.@

Բանից դուրս եկաւ, որ նա ճանապարհորդել է Անդրկովկասում և բաւական տեղեկութիւն ունի մեր երկրի մասին։

—Ձեր անունը, հարցրի ներանից։

—Զանգ-չունգ, իսկ ձերը։

Ես պատասխանեցի։

—Մոդրեմ ասացէք, հարցրեց նա լինձնից, արդեօք դուք, հայերդ, չինական ծագում չունէք, որովհետև, որքան ես նկատել եմ, ձեր կարգերը շատ նման են մեր չինական կարգերին։

Ես պատմեցի, ինչ որ գիտէի պատմութիւնից։

Ասացի, որ Մամիկոնեան և Օրբելեան տոհմերը ըստ աւանդութեան չինական ծագում ունեն նա սկսեց անդամահատել այդ անունները և չինական արմատները վերածել։

—Ձեր Մամիկոնը երևի Մունկդէն քաղաքից է եղել, ասաց նա։

—Ինչու՞ էք այդպէս կարծում։

Ահա ինչպէս, Մամիկոն կամ Մամգուն կարող են եղած լինել Մա-մունդ-ից բառերից, որ նշանակում է մոնղոլ կամ մունկդէնցի։ Իսկ Օրբել բառը երևի առաջ է եկել Ուռ և պել բառերից։

—Գուցէ, այդպէս է, Օրբէլները գրում են արդարև և Ուռպել, պատասխանեցի ես։

Չինացին ոգևորվեց և սկսեց աւելի հաճարձակ ենթադրութիւններ անել։

—Արդեօք ձեր Էջմիածին, Հազարթին անունները չեն յիշեցնում մեր չինական Տևանձինը։ արդեօք Սևան, Երևան, Նախիջևան անուններն նոյն ձևով չեն կազմված, ինչպէս մեր չինական Տալիենվանը։

Ես սկսեցի կատակածներ յայտնել, որովհետև գիտէի, որ Էջմիածին բառի վերջաւորութիւնը

digitised by A.R.A.R.@

ծնել բառերն է։ Բայց չինացին յանձնարէց։

—Ձեր հոգևոր կարգերը շատ նման են մեր կարգերին։ Բայց ասեցաք, ինչպէս լսել եմ, դուք ուզում էք փոփոխութիւններ մտցնել այդ կարգերի մէջ։

—Ի՞նչ էք ուզում ասել, հարցրի նա։

—Օրինակ, ձեր քահանաների ձեռնադրութիւնն էլ փոդով և վարձատրութեամբ է կատարվում, ինչպէս մեղանում, բայց իզուր դուք ուզում էք փոխել այդ կարգը։

Ես վրդովվեցի Չինացին, որ մինչև այդ ժամանակ կատարեալ մարդ էր երևում, բոլորովին ուրիշ գոյն առացաւ իմ աչքում։

—Ներեցեք, ձեր կարծիքով,—յուզված ասացի ես, պէտք է չպահպանել կաշառակերութեամբ ձեռնադրութիւնը։

—Ինչու էք վրդովվում, ժպտալով պատասխանեց Չինացին։ Ձեր ասելն այն է, որ դուք ցեղայրքում էք անուններն և չէք ուզում յարգել սկզբունքը։

—Ի՞նչ է ասում։

—Երբ որ դուք ձեռնադրութեան ժամանակ տրված փողը նոյնպէս սկզբունք կը ճանաչէք, ինչպէս ձեր դիպլոմները, ինչպէս ձեր աճուրդները, այն ժամանակ այդտեղ էլ կը լինի մրցութեան հանդէս և բոլորը հպատակված կը լինեն մի ուժեղ և անխորտակելի սկզբունքի։

Չինացին սկսեց իր չինական գոյնը ցոյց տալ ես մտածմունքի մէջ ընկայ։

Չինացին չարունակեց,

—Ես նոյնպէս չեմ հասկանում ձեր մէջ մտած գործող «հրապարակական կրիտիկա» կոչված բանը։ Ինձ համար դժվարութիւնը չուս է, բայց պէտք է անել այդ քննադատութիւնը ժամուկ, միմեանց

digitised by A.R.A.R.@

ականջին և երբեք հրապարակ չը հանել։
—Դա անկարելի է, վրդովված ներկաների կող-
—Հէնց դրա մէջն է ձեր բոլոր մոլորութիւնը,
համոզված կերպով յայտնեց Չինացին։ Ինչպէս
որ դուք չար էք հագնում ձեր մերկութիւնը
ծածկելու համար, այնպէս էլ դուք արտաքին
վայելուչ ձևեր պէտք է ընդունէք, բայց ձեր
իսկական միտքը և կարծիքը պէտք է պահէք
հարկաւոր ժամանակի համար։ Մեր Մունկդէ-
նի լամայական յաջորդը, ծրինակ, միշտ խօսքի
մէջ ասում է «ես անաչառ մարդ եմ, ես կեղ-
տոտ բաներ չեմ սիրում, ես աղնիւ գործ որո-
նող եմ, ես նենգ կուսակցական մարդ չեմ, ես
չահասէր չեմ» և այլն և այլն. բայց որ գործե-
րին նայէք, կը համոզվէք, որ նա այդ առաքի-
նութիւններից ոչ մէկին էլ չունի։ Մենք էլ նրա
մօտ գնացած ժամանակ ձևերը համբուրում
ենք, բայց ենք տալիս, որ հասատում ենք նրա
արդարութեան և անկեղծութեան և մի կերպ մեր
գլուխը պահում ենք։ Իսկ եթէ հրապարակա-
կան քննադատութիւն ակսվի, այն ժամանակ
անվերջ կռիւներ, երկպառակութիւններ, աղ-
մուկներ և սկանդալներ պէտք է տեղի ունե-
նան և երկու կողմերս էլ պէտք է վնասվինք։

Չինացին այնուհետև սկսեց ինձ ծանօթաց-
նել իրանց լամայական կարգերի հետ և ես
համոզվեցի, որ մենք չինացիներից հետու չենք
գնացել։ Չինացին գովում էր իրանց կարգերը
և յայտնում էր, որ այդ կարգերը պաշտպանե-
լու համար նրանք պատրաստ են ամեն տեսակ
«բռունցքներ» հանդէս բերելու։

Ես սոսկալի չինականութեան սերտ ականից
և վերջ տուի մեր խօսակցութեան։

---

digitised by A.R.A.R.@

VIII

(3 նոյեմբ. 1900 թ., «Մշակ» № 108)

Մի քանի օր առաջ աւինքը Թիֆլիսում յուզված դրութեան մէջ էին։ Երկնքից ամբողջ երկու օր քուլայ-քուլայ ձիւն էր թափվում, իսկ քաղաքի բոլոր հանրութիւններում, բանկերում և պրասնեականերում բաժանվում էին փայեր՝ նոր կազմվող նաւթային ընկերութիւնների բաժիններ։

Շուրջն մեծ մասը հալվել գնացել էին, իսկ ինչ կը լինեն փայերը։ Այդ էլ կլիմանանք նոյեմբերի 15-ի աճուրդից յետոյ։

Մի ընկերութիւն, ինչպէս պիտէք արդէն, գոյութիւն ունի Թիֆլիսում և նրա բաժինները իյվում են ձեռքէձեռք։ Նորերս Թիֆլիսի այդ անդրանիկ նաւթային ընկերութեան ժողովն էր։

Ես էլ գնացի տեսնելու մեր արդիւնագործներին։ Մեծ յոյսերով մտայ դահլիճը։

Սակայն շուտով նկատեցի, որ ես ներկայ եմ մի օտարոտի ժողովի։ Լսում էի ճառախոսների ասածները և ինքս իմ ականջներին չէի հաւատում։ Մարդիկ կատաղի կերպով վիճում էին միմեանց հետ, բայց վէճի առարկայ չը կար մէջտեղում։

—Այս ինչ տեսակ բան է, հարցրի ես իմ հարևանից, յարձակումներ միմեանց վրա ա-

digitised by A.R.A.R.@

ռանց փաստերի, առանց պատճառաբանութեան։

—Սա մեր ընկերութեան առանձնայատկութիւնն է, պատասխանեց հարևանս։

—Բայց դուք արդեօք գիտէք, թէ բանը ինչումն է և ինչ գաղանիք կայ մէջտեղ։

—Ինչպէս չէ, բոլորն էլ գիտեն։ Բայց ոչ ոք չէ ուզում կծիկը բանալ։ Մէջտեղ մէկ ու կէս միլիոն պուդ նաւթի հարց կայ, մասնաւոր նամակների հարց կայ և այլն։

Ես զարմացած նայեցի խօսակցիս վրայ։ Նա գլուխը թաղի տուեց և արագ-արագ հաղորդեց հետևեալը։

—Մեր ընկերութեան վրայ մի քանորդ մակաբոյծ են ուեղացրել՝ «Չըտես»։ Այդպէս էլ է իսկապէս։ Մեր չըտես ընկերութիւնը, որ իր ծննդեան օրից մի գլուխ թիւրիմացութիւնների մէջ է պտտուած, ձայրի առարկայ է դարձել թէ բազում նաւթատրծների չրջանում և թէ այսօրուայ թիֆլիսում։ Ընկնում են կոպէկների տակից և բուբլիներ կորցնում. խառնվում են մասնագէտների գործերի մէջ և խանգարում։

—Ո՞վ է տակից մեզաւորը, հարցրի ես. եթէ վարչութիւնը վատ է, փոխեցէք նրան, ընտրեցէք նորերին։

—Հէնց չատերի միտքն էլ այդ է, ժպտալով ընդհատեց ուղեկիցս իմ հարևանը։

Ես չարունակեցի լսել խօսակցութիւնները։ Լրքեր, վատ վարուգերած ինտրիգներ և անձնական հաշիւներ իսկոյն աչքի էին ընկնում։ Բնորոշ էին, թէ յաղթողները և թէ յաղթուողները։

Ես զարմանում էի վարչութեան անդամների վրայ։ Ինչ են այնպէս կպել, տասնձվել իրանց

digitised by A.R.A.R.@

տեղերի վրա, թող հրաժարվեն էլ։ Եթէ լաւ են, նորից կընտրվեն անկասկած։

Անմեղ նկատողութիւնից և հարցապնդումներից բարձրացաւ սաստիկ աղմուկ, որ դժուարութեամբ հանդարտվեց նախագահի ուժդին զանգահարութիւնից յետոյ։

Վերջացաւ պատկառելի ժողովը։ Արդիւնաբերութեան ներկայացուցիչները սկսեցին ցրվել։ Նրանց թւում տեսայ մեր կղերականներից մէկին, որ մօտեցաւ մեզ յանդիմանական հայեացքով։

—Ախ, եթէ նաեւ արդիւնաբերական ընկերութիւններն էլ, ասայ նա, կախում ունենային էջմիածնից, որքան բանը կը հեշտանար։ Մի կօնդակ ամեն բան կը վճռէր, կը վերջացնէր։ Այնտեղից կը նշանակէին հոգաբարձուներ, էհ, ինչ ես ասում, վարչութեան անդամներ։ Այն ժամանակ վարչութեան անդամները չէին դողայ ընդհանուր ժողովին մասնակցող ամեն մի թեթեւսոլիկի նկատողութիւնից և գործը կերթար հաստատ քայլերով։

Մենք ժամանակ չունէինք լսելու այդ երեւելի փիլիսոփայութիւնը, որ թեմական գրպարտչական գործերում հանդիպում է շատ խելքի և խորաքննին։

Շտապեցինք աւուն ճաշելու։

digitised by A.R.A.R.@

IX

(4 նոյեմբ. 1900 թ., «Մշակ» № 209)

Վաղեմի գեղեցիկ ժամանակներ Որքան հրապուրիչ էիք դուք Տիրում էին հաստատակ, նահապետական կարգեր Դպրոցի աշակերտները նախնյաց զգայմունքից դրդված սրբում-սանրում էին ուսուցչի սենեակները և գնում էին վաճառանոց՝ այնտեղից ուսուցչի համար մթերք բերելու. դպրոցի հոգաբարձուն, իբրև մեծ և ասպ, հայրաբար բղաւում էր ուսուցչի վրա. թեմական տեսուչը, իբրև նահապետ մեծ ընտանիքում, իր ճերմակեղէնը տալիս էր վարժուհիներին կարկատելու։

Անցան գնացին այդ հիանալի ժամանակները Բայց որքան չնորհակալութեան արժանի է Գևոնդ քահանայ Խարազեանցը, որ մեզ յիշեցրեց այդ հոսուերգական ժամանակները նա նկարագրում է այն յիշատակելի չրջանը, երբ նախանձաւոր դպրոցի դանձարանը նրա գանձապահի հետ միասին չրջագայում էր Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում, բարեքաղդութիւն տարածելով իր չուրջը իր նշանաւոր «Թուղթ առ Աբգարապետան» երկասիրութեան մէջ (տես «Մշակ» № 206). նա այսպէս է նկարագրում մարդպանների այդ չրջանը։

«Դպրանոցի հոգաբարձութիւնը հոգաբարձու պ. Պետոն Գուրգէնբէգեանի ձեռքով նորոգում

digitised by A.R.A.R.@

էր միաժամանակ թէ հին ուսումնարանը, թէ նրա հանդէպի կրպակները և թէ Սայի վրա եղած կալուածքը։ Գուրգէնբէգեանի հաստատակամ կատր կատր Թղթի տոմսակներով ստանում էին ինձանից վատ թէ վարպետները, թէ նիւթերը, վաճառողները։ Եւ որովհետև ես չատ անգամ վտներս հետս վերցրած տեսնում էի լինում վճարել տեղն ու տեղը, այս նպատակով միշտ ինձ մօտ պահում էի կանխիկ դուռարով վտ և բացի այս, ուսուցչական դանձարան չը լինելու պատճառաւ, ծոցանիցս դիմողներին չէի բացատրում, այնպէս որ այդ վերջին տարին պատահում էին և տեղում վտով էի վճարում բանուորներին, վարպետներին և ուսուցիչներին։ Ս.յակոբի չվոթի (կնքահայր ինչ հայկական) դրութեան մէջ, երբ դանձարանը ստուգեցինք՝ ինձ հաշիւ տրուած պակասեց 3000 ռ. դրամ։ Մի հազար բուբլի գտայ չնորհիւ մի հոգաբարձուի. իսկ մնացեալ 2000 ր. գրվնյաւ ինձ վերայ պարտք։ Սակայն այս վերջին գումարի մեծ մասը կարողացայ դտնել և տարվայ վերջը հաստատված էր բոլոր իր գումարը։

Սրբոյն հեշտացրած ձև դրամական գործառնութիւնների համար։ Շարժուն դանձարան։ Անմիջական օգնութիւն ուսուցիչներին։ Պատեհ և անպատեհ ժամանակին վճարումներ։ Չնախատութիւնների բացակայութիւն։

Այո, նախանձելի ժամանակներ էին և նախանձելի կերպեր։

Իսկ այժմ սկսում է ամեն տեղ մտնել կասկածամտութեան ոգին։ Կօպէրի պահանջները, հաշուապահական նեղհայեաց ձևականութիւնները զզուեցնում են մարդկանց և չատով ոչ

digitised by A.R.A.R.@

ոք չի յանկանայ ոչ պանձապահ և ոչ երէցփոխ ընտրվել։

Երէցփոխ ասացի, մխթար եկաւ այն ներ փ ի ւ ա լ ը, որի ամբողջ պատկանում է Թիֆլիսի Քանդեանց եկեղեցու նախկին երէցփոխ Կարապետ Ջալալեանցին։ Այդ ազնիւ և պատկառելի պարոնը դուռ այն ձևը, որով կարելի է ապահով կերպով վարել գրամական գործեր և մնալ անարատ և անմեղ։

Նրան ասում են՝ «պ. երէցփոխ, գրամարկղից պակասում է 8500 րուբլուց աւելի մի գումար»։

—Կարող է պատահել, պատասխանում է երէցփոխ Ջալալեանցը, հաշուեյէք սիրելիներս, որքան պակաս կը լինի, ես կը հատուցանեմ։ Ես անփորձ եմ հաշուապահական նրբութիւնների մէջ. բայց միշտ եղել եմ ազնիւ և անշահասէր։ Եթէ այժմ դուղ չունենամ, հաշուեյէք ինձ վրայ պարտք ես պատասխանատու եմ բոլոր անձով, իմ պատուով։

Ծխականները հիացած են այս գեղեցիկ վերաբերմունքից, որ յիշեցնում է մի փոքր չափով նախկին հովուերգական ժամանակները։

Սակայն ծխականների մէջ կան և չարամիտ մարդիկ, որոնցից մէկին պատահեց երէկ։

—Լաւ, եթէ մենք ձայն չը հանէինք, ասաց նա, ուրևէն երէցփոխը այդ պակասող 8500 գումարը չը պիտի է վերադարձնէր, առարկելով թէ պահանջող չը կայ։

—Գուցէ շատ երիտասարդ մարդ է ձեր նախկին երէցփոխը և իսկապէս անփորձութեան պոհ է դարձել, հարցրի ես ինչու էք չար դիտաւորութիւններ տեսնում նրա մէջ։

—Ինչ էք ասում, վրդովված պատասխանեց

digitised by A.R.A.R.@

ինձ ծխականը, մեր այդ ազնուագոյն և անփորձագոյն նախկին երէցփոխը վաթսուն տարեկան մարդ էր։

Ծխականը պատմեց, որ հաշիւների մէջ կազմվել էր չափազրութիւն, որը պարզելու համար հարկաւոր եղան մեծ ջանք և աշխատանք թէ հաշուապահների և թէ նոր երէցփոխի կողմից։

— Ի հարկէ անշուշտ հոգևոր իշխանութիւնը այժմ ամեն կերպ նպաստում է այդ նոր երէցփոխի գործունէութեան, հետաքրքրվելի եաւ

Ծխականը չը պատասխանեց ինձ, չը կարողանալով դուշակել իմ դէմքից թէ արդեօք լսվել եմ այդ հարցը տալիս նրան, թէ կատակ եմ անում։

Մենք բաժանվեցինք։

—

Ծանօթութիւն։ Անհրաժեշտ եմ համարում անել երկու նկատողութիւն։ Արժանապատիւ հայր Յարութեանցի երկասիրութիւնից բերված հատուածի մէջ չափ բառը բայատրված է փակագծում այսպէս՝ «կերակուր ինչ հայկական»։ Այդ բայատրութիւնը պատկանում է ոչ թէ հեղինակին, այլ ինձ։ Շատ աւելած կերակուրը շատ սիրելի մի ապուր է մեր բոլոր վանքերում և հայկական շրջաններում։ Իմ ուխտագնացութեան ժամանակ ես ամեն տեղ ուտել եմ չափ և թէ նր զանազան ձևով և համեմներով պատրաստված։ Երևելի չափեր կան էջմիածնում, Ղարաբաղում, Երևանում, Պօլսում և ամեն տեղ, ուր աւանդական հայկական խոհանոցը դեռ գործում է իր նախկին փայլուն կերակրից փոխարերատար չափ է կոչվում

digitised by A.R.A.R.@

ամեն մի դրութիւն, որ նոյնպէս պակասիկ և համալ-հատալ է, ինչպէս չիտի կերակուրը։

Իմ երկրորդ նկատողութիւնը սա է։ Ես հարց ու փորձ անելով հասկացայ, որ ծխականը վերադրելով Զալալեանցին վաթսուն տարեկան հասակ, չէր նայել նրա մետրիկային և ասել էր ննջատրաբար, այնպէս որ պ. Զալալեանցը կարող է լինել 55, 56, 57, 58, 59 տարեկան։ Իսկ այդ հանգամանքը դուրս փոքր ինչ թեթևացնելի նրա մեղքը և ցոյց տայ, թէ հակառակորդները նոյն իսկ պատրաստ են նրա տարիքը կեղծել անպատկառ կերպով։

digitised by A.R.A.R.@

X

(8 նոյեմբ. 1900 թ., «Մշակ» № 211)

Բոլորին հետաքրքրում է, թէ ինչ պէտք է լինի մեր աշխարհի մի յիսուն, հարիւր, երկու հարիւր տարուց յետոյ։ Ջանասէր հեղինակներ աշխատել են գուշակելու ապագայի պատկերը և նկարագրել են նրան ներթատրաթար։ Այդպէս, Բելլամի միտքն էր նկարել եւրօպական քաղաքակրթութեան մարդկութեան ապագան մի հետաքրքրաշարժ գրքի մէջ։

Ես ևս մտադիր եմ նուիրել մի ամբողջ աշխատութիւն այն բանին, թէ ինչ պէտք է լինեն հայերը մի քսան, յիսուն և հարիւր տարուց յետոյ։ Անկասկած դա ծանր և մեծ աշխատութիւն պէտք է լինի և կը պահանջէ շատ ժամանակ. բայց մանր փորձեր կարելի է անել և այժմ։ Այսօր ես մտադիր եմ ներկայացնել մի այդպիսի փոքր և թեթև փորձ։ Օգտուելով ներթեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան յարուցած առանձին հետաքրքրութիւնից, ես վճռեցի թափանցել ապագայի խորքը և տալ հոգաբարձական առեանի մերձակայ պատկերը, փորձելով նախագուշակել գալիք անցքերը։

Իմ գործը պատասխանատու գործ չէ, որովհետև իրականութիւն չեմ նկարագրում և հարկաւորութիւն չունեմ լուրջ ուսումնասիրու-

digitised by A.R.A.R.@

Թիւններ անելու իմ գործը շատ հեշտ է, որովհետեւ պէտք է մի պլուս հնարեմ, հետաքրքրութիւնս իրական անձնատուրթիւններ և աչքի առնելով միայն գործող խմբերի ձգտումները և տենդանքները։

Ուրեմն լսեցէք։

—

Տեսել էք արդեօք դուք երբ և իցէ Ներքեւեան դպրոցի հոգաբարձական տեսարանը։ Գիտնալք տեսանելը։

Այսօր նիստի օր է։ Երեկոյ է, ժամի 8¼-ը։

Երեւակայեցէք ձեզ մի համեստ, անշուք, փոքր սենեակ, որի մէջտեղում դրված է մի մեծ սեղան, ծածկված կանաչ մահուդով։ Սեղանը բռնել է ամբողջ սենեակի երկարութիւնը և հազիւ տեղ է թողել անցնելու սենեակի մի կողքից դէպի միւսը։ Սենեակը լուսաւորված է հնաձև լամպերով և մոմերով, որոնք տալիս են աղօտ մի լոյս, որ յիշեցնում է դաւառական քաղաքի պաշտօնեան այն սենեակը, ուր վաղ են ընդունում և ծրարներ են կլնքում։ Մի բան այդ սենեակի մէջ անկասկած խորհրդաւոր է և ազդող, դա դպրոցի կանոնադրութիւնն հաստատող Մատթէոս կաթողիկոսի և դպրոցի բարերարների պատկերներն են, որոնք կախված են պատերից։

Սեղանի ճակատին նստած է հոգաբարձութեան նախագահ թեմակալ առաջնորդը. նրա դէմ, սեղանի միւս ծայրին—քարտուղարը։ Սեղանի կողքերին տեղ են բռնել հոգաբարձուները, որոնց մէջ են և երկու քահանաներ։ Աշխարհական քահանաների դէմքերի վրա երեւում են համառանձութիւն և հարցական արտայայտութիւն։ Քահանաները զրծում են անմիջ

digitised by A.R.A.R.@

գառների և հոդեզմայլ հաւատացողների տարաբաժանութիւնը։

Բոլորը հաւաքւած են, բայց նիստը չէ սկսւում։ Մի քանիսը չգիտեն ինչո՞ւ են միմեանց ականջին քաղաքում պատռտ վերջին «ատէկօէներն» և մեկնաբանութիւններ են տալիս լրագրում երեւցած յօդուածներին։

—Կարծեմ բոլորն էլ այստեղ են, նկատում է աշխարհական հոգաբարձուներից մէկը, նիստը կարելի է բանալ։

—Ի հարկէ, ի հարկէ, կարելի է, համաձայնում է նախագահը։

Նիստը բացւեց։

Քահանաներից մէկը նայում է իր շուրջը, նայում է նախագահին, անհանդիստ շարժուններ է անում և հազիւ չզնչալով արտասանում է։

—«Հայր մեր» կասենք և կը սկսենք նիստը։

—Հարկաւոր չէ, կտրուկ նկատում է նրան նախագահը։

Քահանան չը վիրաւորւեց այդ նկատողութիւնից։ Քարտուղարը զեկուցեց, որ կան ընթացիկ թղթեր։ Հին հերթական հոգաբարձուն, որ մտել է նոր հոգաբարձական կազմի մէջ, կարդաց թղթերը։ Մանր խնդիրներ էին, որոնք վերաբերում էին կալուածների կարկատանին։ Նիստը սրտից զբաղւական դիւանական ոճով հետեւեալը։ «Ներկել զկրիշայ և վարձատրել զկալատուղս յետ առաղելոյ զալատափին»։ Տեսուչը ներկայացրեց թոշակառուների ցուցակը, որը ընդունւեց թեթև նկատողութիւններով։

Քահանայ-հոգաբարձուներից մէկը, որ լաւ-Թիւն էր պահպանել բոլոր ժամանակը, դիմեց

digitised by A.R.A.R.@

Նախագահին և խօսք խնդրեց։ Նախագահը թոյլ տուեց։ Քահանան ոտքի կանգնեց և հանդիսաւոր ոճով խօսեց։

—Ձերդ բարձր սրբազնութիւն, նախագահ հոգաբարձութեան, պաշտօնակից հոգեոր եղբայրք և քրիստոս (դիմելով միւս քահանային) և պատուարժան աշխարհական հոգաբարձու-ընկերակիցք. Թոյլ տուէք ասել մի քանի խօսք այն բանի մասին, թէ ինչ կոչում ունենք մենք և ինչպէս պէտք է մենք գործենք...

—Կարելի է նստած ասել, նկատեցին հոգաբարձուները։

—Նստիր, ի հարկէ, թոյլատրեց նախագահը։ Ծառախօսը մնաց կանգնած և չարունակեց.

—Մենք հոգաբարձուներ ենք մի հոգեոր դպրանոցի, մի հոգեոր սեմինարիայի, որ պէտք է պատրաստէ հոգեորականներ։ Դպրանոցում ուրեմն պէտք է սիրէ հոգեորականութեան ոգի։ Այժմ ես հարց եմ տալիս, արդեօք ուսուցիչները ծառայում են իրրև բարի օրինակ և յաճախում են կանոնաւոր կերպով եկեղեցին։

Տեսուչը ուզեց պատասխան տալ, բայց ծառախօսը չարունակեց.

—Սրդեօք տեսուչը գիտակ է կրօնի վերաբերեալ բոլոր նրբութիւններին և հետևել է թէ զանազան առարկաների դասատուութիւնը որքան համապատասխան է կրօնական հայեցակէտերին։ Օրինակ, բնական պատմութեան, ֆիզիկայի և պատմութեան դասերի մէջ չը կան կէտեր, որոնք թիւրիմացութիւններ առաջ բերէին։

Հին հոգաբարձուներից մէկը ուզեց պատասխան տալ, բայց ծառախօսը չարունակեց.

—Սրդեօք որդեգիրները ճիշդ կերպով պա-

digitised by A.R.A.R.@

հում են չարաթխական և մեծ պատերը։ Սրբեօք երթևեկ աշակերտների վրա հսկողութիւն սահմանված է, թէ որքան նրանց ծնողների կեանքը համապատասխան է հոգևորականներ պատրաստելու համար նրանց զաւակներից։

Նախագահը ուզեց ներողութիւն անել, բայց ճառախօսը չարունակեց.

—Սրբեօք հոգաբարձութիւնը մտադիր է հաստատութիւնը հանդիսանալ դպրոցի շահերի համար և ազդու միջոցներ ձեռք առնել, որ լրագիրները այսուհետև չը յանդգնեն իրանց թոյլ տալ ամենզիեղ բարբաջանքներ դպրանոցի գիտակների դէմ։

Երիտասարդ հոգաբարձուներից մէկը դուխը բարձրացրեց, որ նկատողութիւն անէ, բայց ճառախօսը չարունակեց.

—Ես առաջարկում եմ, համաձայն կանոնադրութեան, գանձապահութիւնը չը թողնել օտար անձի ձեռքը, այլ յանձնել հոգաբարձուներից մէկին։ Եթէ աշխարհական հոգաբարձուները չեն ցանկանում այդ նեղութիւնը յանձն առնել, մենք՝ հոգևորականներս կը վերցնենք։

—Ոչ, ոչ և ոչ, մէջ մտաւ մեր քահանան, ես երբէք գանձապահութիւն չեմ վերցնի ինձ վրա. ինչ պաշտօն, ինչ յանձնարարութիւն կամենում էք ինձ տուէք, բայց գանձապահութիւն Տէր մի արասցէ։

Աշխարհական հոգաբարձուները չը ամաչեցին քահանային յանձն առնել այդ նեղութիւնը։

—Վաղամեայ է և տարաժամ այդ հարցը, յայտնեց նախագահը։ Թողնենք այդ, ասելիքդ վերջացրու (դիմեց նա ճառախօս քահանային)։

digitised by A.R.A.R.@

Ճառախոսը շարունակեց.

—Ես պետք է յայտնեմ միջադեպիս վերաբերմամբ, որ մեր դպրոցում մասնավոր կրօնական են դասերը։

—Մինչ մի և նոյնը չէ, նկատեց մէկը։

—Ի հարկէ, ոչ։ Դպրոցը դպրոցական տեղ է, իսկ դասերը այժմ հանգստեան է շատ մեծ դարձակ մտքով և նոյն իսկ կրօնական դասերը մտնում է դպրոցական մէջ, իսկ դպրոցից ներս չպահանջում է դպրերին տեղ, դպրերին կրճատում։

—Ուշադրե՛ք, օրիորդ, դասարանում՝ դասարանի տեղ, յիմարութիւն՝ յիմարների տեղ, ապուշանոց՝ ապուշների տեղ, կամայական նկատեց մէկը։

Ճառախոսը շարունակեց.

—Ես կարծում եմ, որ տեսուչը պէտք է հոգեբանական լինի, որ տեսուչները պէտք է առաջարկել հոգեբոյժ կոչում ընդունելու, որ աշակերտների համար պէտք է մի ներս հանգստեան ձևով տալ, նոյնն ևս ներկայացուցիչներ դպրոցին, որ տեսուչները պէտք կանոնաւորապէս ներկայ լինեն և տեղը հաղորդութեան վկայական ներկայացնեն, որ նոյն իսկ մեր պատասխանատուները հոգեբարձուները...

—Բաւական է, կարուկ նկատեց հոգեբոյժը։

Հոգեբարձուները մեռելանոց ներս նոյնը վրդովված էին և ամեն էր թեամբ, որ նոյնից իրարանցիկը ազատ է իսկ վերջապէս հին հոգեբարձուներից մէկը դիմեց հոգեբոյժին և ասաք խնդրեց.

—Ես կամենում եմ մի հարց տալ, ախոյեան, մենք՝ հոգեբարձուները...

digitised by A.R.A.R.@

—Ես իմ ասելիքս պետք չեմ վերջացրել, կտրեց նրա խոսքը Ճաուխաօս քահանան։

—Բաւական է, բաւական, Ճնտրը, նկատեց նախագահը։

—Ես պետք չեմ վերջացրել։

—Սատա՛ր եմ Ճնտրը, ուրիշներին էլ հերթ տուր, գնաց էլի կը խօսես։

Քահանան նայեց Հին հոգաբարձուն չարունակեց։

—Մենք՝ հոգաբարձուներս լուրջ գործեր ունենք մեր առջև։ Օրինակ, գպրոցի համար վերջապէս պէտք է կառուցանենք նոր շէնք թէ ոչ։ Դա առաջին հարցերից մէկն է։ Այնուհետև կան վարչական և հերթական խնդիրներ, որոնք սպասում են լուծման։ Երբ այդ բոլորը կը վերջացնենք, այն ժամանակ մեր «հոգևոր պաշտօնեայի» գործերը կը քննենք։

Սկսվեց ոգևկան և երկար վէճ։ Աչխարհական հոգաբարձուները չատ էին։ Քահանայի գործերը չատացան, կամ ասենք ճիշտն առած՝ խառնվեցին։ Այդպէս էր իրագործվելու, այդպէս էր սպասուելու։

Խոսվեց գլխաւոր հոգաբարձուները միմեանց հաղորդելու իրանց սպասուելիքները։

—Քահանայի գործերը չատ անաչխատ էր. այդպիսի ձևերով և խելքի տարիքով ոչ մի արդիւնքի չեն հասնի մեզանում։

Ամենքը համաձայն էին, բայց հոգաբարձուների մէկը, որ յայտնի էր իր կամակատարութեամբ, ասաց։

—Էհ, մի ասէք. ճիշտ է, որ քահանան և ուսուցիչը մի բառասիրաց էր, բայց որ շատ հասարակ տան-

digitised by A.R.A.R.@

Նահան ասոսվիւնն էր Իսկ հոսանքը կը պոնէ իր համար չաւիղներ

—

Անցան ամիսներ։ Հասաւ գարունը, ակռեցին հարցաքննութիւնները։ Հոգարարձութիւնը պատրաստ էր հետեւյալ տարւոյ համար արտրաստութիւններուն։ Այդ ժամանակ առաջին կօնդակ, որով արձակւում էին տեսուչը և չորս ուսուցիչներ, իսկ երանց տեղ նշանակւում էին մի տրեզայ տեսուչ և նոր ուսուցիչներ։ Այդ կօնդակով խոխտւում էր կանօնադրութիւնը։ Հոգարարձութիւնը երեք հետ կտրւում և բոլոր հետերին էլ աշխարհական հոգարարձուներ կարծիքը յայտնող հանդիսացաւ։ Հոգարարձութիւնը որոշից դիմել և խնդրել, որ չը խոխտուի կանօնադրութիւնը։ Ժողովրդի ներկայացուցիչները կատարեցին իրանց որոշումը ճշդօրէն։

Առաջին թեմական առաջնորդի անունով նոր կօնդակ, որի մէջ ասւած էր, որ պարտաւոր բոլոր դպրծերի տէրը, կրելով պատասխանատու ծառայութիւնը, ինքն է կարգադրում անել բան և լիազօրութիւն է տալիս առաջնորդին համապատասխան կերպով դրծելու իր անունից։

Հոգարարձութիւնը նոր նիստեր գումարեց։ Աշխարհական հոգարարձուների կարծիքը դարձեալ յայտնող հանդիսացաւ Որոշից պատգամաւորութիւն ուղարկել Էջմիածին։

Մինչև պատգամաւորութիւնը բանակցութիւններ էր վարում, տեսուչը գնաց, հետացաւ և նոր պաշտօնի մէջ մտաւ, ուսուցիչները զբաղվեցին նաւթով և օրհնեցին իրանց ուսում-

digitised by A.R.A.R.@

ևոր բաղդը, որ վերջապէս ժպտաց և նրանց ևրեսին էլ։

Հոպարարձուներն առաջ նոր խնդիրներ էին առաջ ևկել։ Նրանք պրտղմեցին այդ խնդիրները լուծել և մեծ ուրախութեամբ նկատեցին, որ նրանց կարծիքները յաղթող են հանդիսանում։

Անցան մի քանի տարիներ։

Դպրոցը մնացել էր իր հին չինութեան մէջ։ Այդ հին չինութիւնը համարւում էր մի արժանիք, որ պէտք է անխախտ պահվէր ապագայ սերունդների համար։ Ճիշդ է, նա քայքայվել էր և օրից օր աւելանում էին խարխուլ տնղերը. բայց իւրաքանչիւր տարի դրժ էին ածւում հազարաւոր միևներ չինքը պահելու համար, կարկատւում էին «կրիչայք», խոկ «կատոտը» սուտում էին գալոտային»։

Հինը պահպանվել էր, սակայն հոգեորական անհանգստութիւն էր զգացվում, որ դպրոցի հիմնադիրը և կանոնադրութիւն հաստատողը իրանց պատկերներով մշտապէս չէին ժողովրդական գաղափարների աւանդութիւնը, այլ ևս չը կար աշխարհական հոգեւորական։

Հետզհետէ մարդիկ մէկ-մէկ բայ էին անում Երիցեանի դրած դպրոցի պատմութիւնը կարդալու, թէ ինչ անքներ են կատարվել մի տանական հայոց աշխարհում...

Ամեն բան տեղին էր. դպրոցը հասել էր իր հոգեոր զարգացման վերին գագաթնակէտին։ Հոգեորական ոգին սաւառնել էր դպրոցի վրայ։ Չը կար ոչ մի աշխարհական Դպրոցի նոյն իսկ փոքր ծառայողները ունէին տարին հոգեոր տախճաններ։ Աշակերտները, իրրև մարմնացեալ կատարելութիւններ, հազած իրանց գե-

digitised by A.R.A.R.@

*ղեցիկ ան հատկզնատը, բոնած ձեռքներին սաղ-
մոս և աղօթագիրք՝ ընդացնում էին խարխու-
չինութեան աւանդական սրբազան կամարները
և առիքները իրանց ոգևից վտառանութիւն-
ներով կատարելութիւնը լիովին էր։ Ամենա-
բեք տիրում էր ապշութիւն։ Ինորոշ է և այն,
որ հայոց լեզուի մէջ այդ ժամանակ մի բարե-
վոխութիւն էր առաջ եկել և հնադարեան հո-
գաբարձու բառը՝ ա տատի քնքշացնելու պատ-
ճառով՝ դարձել էր հոգեբարձու։ Դպրոցը գե-
կավարում էին հոգևոր հոգեբարձուներ։*

Դպրոցում ամեն բան կատարեալ էր։

*Միայն երկու բան անհամապատասխան էին միմեա-
նց վարիչների համար։ Առաջինը՝ ինչու աս-
բէցաների պահում էր աշակերտների թիւը
և երկրորդ՝ ինչու հոյոց աշխարհում այլ ևս
ոչ ոք ոչ մի նախրատուութիւն չէր անում դըպ-
րոցին և վերջին աշխարհական հոգաբարձուի
հետ ցանաքել էր ժողովրդական նախրատու-
թիւնների առաջ աղբիւրը։*

digitised by A.R.A.R.@

XI

(11 նոյեմբեր 1900 «Մշակ», № 214)

Ես հրաւիրուած էի մանաւոր ժողովի մի ընտանիքում. ժողովի նպատակը չէր ուրախ ժամանակ անցկացնելը կամ խնջոյքի զուարճութիւնն ես լուրջ նպատակ ունէր։ Այնտեղ պէտք է խօսէին ժողովրդական ընթերցարանների մասին։

—Ինչ միջոցով բաւարարութիւն տալ ընթերցարանների եղած պահանջին և նրան աւելի ևս զարգացնել, ինչ միջոցներով պահպանել ներկայումս գոյութիւն ունեցող էժանագին գրատարակութիւնները և բանալ նորերը—ահա այն հարցերը, որ պէտք է քննենք մեր մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ, յայտնեց ինձ հրաւիրողը։

Ես ընդունեցի հրաւէրը։ Նպատակը հասկրելի էր, գործը անհրաժեշտ, հարցը ժամակակից և հետաքրքրական, Սակայն նշանակված ընկերային ես ուրիշ զբաղմունքներ ունէի, ուստի յայտնեցի, որ անկարող եմ ժողովի սկզբին ներկայ լինել և կուշանամ մօտ մի ժամ։

—Ոչինչ, միայն ինչ ուշ եկէք, հրաւիրված են 25 հոգի, եկածների հետ մենք կը սկսենք, հանգստացրեց ինձ հրաւիրողը։

Դժբաղդաբար այնպէս պատահեց, որ իմ զբաղմունքները ինձանից կախեցին աւելի ժամա-

digitised by A.R.A.R.@

[illegible]

digitised by A.R.A.R.@

Shmeq mpmdmqppmfblmfo dlq' dfbqe ofqdo-
pfbqe qmfbqmmdfq mqfo mfmmqppbpmfblmfo dfpmo,
mq mfpmmdf b mdfbfo mbmq qbmqfe bmmqppmbqmdqmfo
qmpdpe. Dbqmfbqg bpmqmdmqppmpe dfe mq b b
dfbqmg bq mmmdqmpbmmdf bmfbpmo. mqg mfpmmo
bpbmqfbfe qbmo

Dqg dmdfmbmdq qmfbqpe bmfbpfbmfo

Dfe pmdfe pmqbfqg qbmmq bqpmo dmmo dfbq
pbqpmmo d mdfbfo, mfpmmmqppmqg Opmdqbmfbqe, mq
mqg mqe zbq bpmo bpmmfpmbmdo, mqq bqbqf b pq dmm-
bmmqppe dfe qmpdpe mpmmdmmdfe Opmdqbmfbqe mfbq-
fbe mpmmmdf bq pmqpdmmdmqfbq zpdmfbfbpmmdf b
pmqmfbqe bq pqpdq pmpdq mfpmo mfbdqqmq dfe bpfb-
mmmmqppq

Dbfbqe mpmmdbqfbqe bpmfbq, mq dmqmdf bfbqe bq-
pmmfpqbqf b mq pmmfbqfbqg bmqmqg dfmqfe bqfbqdpe
bfbe bdqbqf Opmdqbmfbqe bmbqe, mfpmmfpqe fbmdfe mmdbqq

—Pmmqf zbfbe bmdbmdqpmmdf mqpmmfpmbfe dfe mqp-
dfe, bdqmmbqf bmmo

—Qf b, mpmmmmfpmmdbqfbqe dfbqe, mmmdfbfe-
mmmdfbfbe fbqpmmfpmbfe bqpmdf b bqpmmdf bmm-
mqppmdqmfbqmfbe bqppmbfbqdpe dfmqfbe fpmdbqpmo dm-
dfmbmdq. dfbqm bmfpmmmmdf b, fbf fbqpmo mz mq
dqpmd qf mbmmdf pmqpmfpmo bpmmfpqbqpmo fmqfbqp-
mdqbqpmo fbmdfbe Dbmo dbqf dpmpdf b mbmo bbmdf-
mdqbqpmo Dmo bqpmqpmo dpmpdf b dfe mmqpmfqmg pbe-
fbmqpmmdfe

Opmdqbmfbqe dfe dpmpdf dmmdmqppmfblmfbe dfq
pbqpmmo, bmdqmmpe mqpmdqbqg, dfmqpe bqdmmdqg b
pmbdqmpdq dfbmfbqmdf dmmdqmfbe mzdqpmdf qfe-
dbqg dbqe

—Pmqf mmdpe, qfbmqpmdqbqe b qmpmbfbqbqe, mz-
mmqg bmo, dfe dmpdf bf bmo mbdmdf b bpmmfpqbdmdf bmp
dmqmfe

digitised by A.R.A.R.@

—Ոչինչ չի պատահած պարոն, հետաքրքրվում ոստիկանը
—Նա կը վտանգէ կը հրաժարուի ինձ տալու, պատճառով հարկաւոր է ստիպել ինձ գործել, որ կատարեցնեմ անպատճառ վճիռը գործադրուած մարդը։

Օրսկիանոյը գործակատարը մեզ ոտքի հանեցաւ։ Պարոն էր, որ նա մեզ մոտ էր եկել ինձ Մարդ էր։ Մեր հրամանը կատարելու համար նա չուաս վազեց և ես սենեակս նա մեզ մենք մնացինք

—Ձեր ինչ գործն է, ասաց նա, նա նրան ոչ ոքից աւելի կը հարգեմ ձեզ պատճառ կը հարցնեմ։ Ասացէք պատճառ և ես ամեն բան կանեմ ձեզ համար ինչ որ կարող եմ անել ինձ համար։

Մենք համաձայնեցանք, որ ես նրան հաստատեմ Օրսկիանոյի վարձելու պատճառները, որ նա պատրաստ է հոգին տալ մահվան համար։

Այդպես եղաւ որ

Հաստատ վարձով գնացինք մեզ համար Մեր ճանապարհը կը պատճառ 7½ ժամ։

Նա այն սենեակում մեզ համար պատրաստ էր ճաշ և մի հատ հաստատ Մենք նստեցինք և մի հատ ոչինչ չխոսեցինք Հաստատ պատրաստ էր ամեն բան ինչ որ կարող է ասել ինձ համար։

Մեզ համար սենեակներ էր այն բոլորը Հաստատ նրանք, որ պատճառ էր նա ինձ համար հրաման Օրսկիանոյը մեզ համար, պատրաստ է սպասել մեզ։

—Ձեր 7½-ին պետք է գոռալ ասացի, պատրաստ է մեզ մեզ մեր ոտքը։

—Ոստիկան եմ պատրաստ, մեր պատրաստ

digitised by A.R.A.R.@

ես, ասելիքով ամբողջ կերպով ձեռս ձգեցի, ամաչեցի խնդրելուց, ու ոչինչ չհարցրի։

—Այդ լավ, շշնջաց սկսածիդ վերջը և գնաց ետևից հետևելու։

Շատ չանցած մեզ հետ բռնեց Օրսկիսոնը գնաց սենյակ անհանգիստ քայլերով ման գալով, ձեռքերը իրար շփելով, ինչպես մի բան ուզում է ասել, բայց չի համարձակվում։ Ես նրան նայեցի, նկատեցի, որ նրա աչքերը կարմրել էին, ինչպես լացած լինի։

Ես սկսեցի խոսել։

—Տիկին Ելենա, ներեցեք ինձ, որ ես ամենից առաջ ձեզ եմ ներկայանում, բայց ինձ համար անհրաժեշտ էր ձեզ տեսնել, որովհետև ես ուզում եմ ձեզ հետ խոսել մի շատ կարևոր բանի մասին, որ ձեզ համար շատ հետաքրքրական կլինի։

Նա ինձ նայեց, ինչպես մի բան հարցնելու համար, որ ինձ չհասկացավ։

—Ես ձեզ մի նամակ եմ բերել, ասացի ես, ձեռքս մեկնելով նրան։

—Ինձ համար, շշնջաց նա, ինձ համար նամակ։ Ո՞վ կարող է ինձ գրել։

—Ես ձեզ մի նամակ եմ բերել, ասացի ես նորից, որ ինձ չլսեց։

—Ինձ համար նամակ, կրկնեց նա, ինձ համար նամակ։

Նա ինձ նայեց, ինչպես մի խելագարի, ինչպես մի ուրվական, որ հանկարծ ներս է ընկել։ Ես ոչինչ չասացի, միայն ձեռքս մեկնեցի, որ նամակը վերցնի։ Նա ինձ նայեց, ես նամակը դրի սեղանի վրա, ինչպես մի բան, որ ինձ չի վերաբերում, ու դուրս եկա։ Ես ուզում էի, որ նա մենակ մնա նամակի հետ—ուրիշ ոչինչ, որ սենյակը մութ էր, ես չէի կարող տեսնել, թե նա ինչ է անում, ինչպես է կարդում։

digitised by A.R.A.R.@

—Ինչ ասուրդի, զարմացած հարցրի նա։

—Ինչպես թե ինչ ասուրդի, աս ինչ հարցմունք է, ի հարկէ նաւթային ասուրդի։

—Նաւթային ասուրդի, ինչ էք խօսում, ա՜ղաչկեցի նա։

—Ահա ձեր հրաւիրատոմսը, ասաց ժողովականը և տուաց ինձ մի տպած թուղթ։

Բացեցի տոմսը և կարդացի հետևեալը. «Մի խումբ մարդիկ, ցանկանալով կազմել նաւթարդիւնաբերական մի ընկերակցութիւն և մասնակցել նոյեմբերի 15-ի ասուրդին, խնդրել են ինձ դասախօսել մասնակցել-ցանկացողների ժողով, որին հրաւիրւում էք և դուք, եթէ կը բարեհաճէք։ Կարող էք ձեզ հետ բերել և ուրիշ ցանկացողներ։ Օրակեան»։

Բարձրացայ անմիջապէս մի ամսագիր։ Բոլորս դիմեցինք Օրակեանին, որ նա բացատրէ այս բոլորը։ Օրակեանը զանգահարեց և երբ լսութիւն տիրեց, դիմեց ժողովին հետևեալ խօսքերով։

—Պարոններ, դուք տեղն էք վրդովւում և զարմանում։ Եթէ մեր ինչ համբերատարութիւն ունենայիք, ամէն բան կը պարզվէր։ Այսօր պատահաբար, մի ատանձին զուգադիպութեամբ, ինձ մօտ երկու ժողով է նշանակված, մէկը գրադարձների պահպանութեան մասին, իսկ միւսը նաւթագործական ընկերակցութեան կազմելու մասին։

—Ինչ էք ասում, ինչպէս կարելի էր խաւանել, լսենցին ձայներ այս ու այն կողմից։

—Պարոններ, շարունակեց Օրակեանը, եթէ կամենում էք, այսօր կը խօսենք մի գործի մասին։

—Այո, այո, այո։

digitised by A.R.A.R.@

—Սակայն որի մասին, երևի նախ պրոպագանդների, այսոր նաւթի մասին։

—Ոչ, ոչ, նաւթատրուծականի մասին, գոնայն աման կոպեկից։

—Պարոններ, ես խրատուն չունեմ հերթը փոխելու։ Մենք կը քննենք սկսած հարցը, յետոյ...

—Անկարելի է, անկարելի է։

—Որ այդպէս է, պարոններ, առաջարկում եմ հետևեալ բանաձևը։ Թող մեզնից իւրաքանչիւրը իրրև առաջնակ այդ հինգ րուբլի պրոպագանդների օգտին և մենք նրանց հարցը լսուածգնենք։

—Թող այդպէս լինի, միայն թէ դա մեծ վճար է։

Կարճ խօսակցութիւնից յետոյ, ժողովականները որոշեցին տալ երեքական րուբլի, վերցնել պրոպագանդների հարցը և զբաղվել նաւթային գործով։ Վաճառականից հոգուց առաջվից 195 րուբլի, որի վրա Օրակեանը աւելացրեց 5 րուբլի և այսպիսով կազմվեց 200 րուբլի գումար, որ պէտք է ուղարկվէր Ժանատին պրոպագանդներին իրրև նպաստ։

Այնուհետև սկսվեց նաւթատրուծական ընկերակցութիւն կազմելու առաջարկութեան քննութիւնը։ Շատ նշանաւոր խօսակցութիւններ ունեցան, մեծ ֆինանսական և առևտրական հանճարներ առաջ եկան։ Ընկերակցութիւնը կազմվեց և որոշվեց, որ երեք հոգի գնան Բաքու ուճուրքին մասնակցելու։

Ես հետաքրքրվեցի նաւթային առևտրի տարափոխիկ հիւանդութեան արտայայտութիւններով և որոշեցի ճանապարհ ընկնել Բաքու գիտողութիւններ անելու։

Այսօր ես կը մեկնեմ Թիֆլիսից։

digitised by A.R.A.R.@

XII

(16 Նոյեմբ. 1900 «Մշակ» № 217)

Երևաթուղու գնացքը տանում էր մեզ դէպի Բագու։

Երեկոյեան, երբ ես նստեցի վագօն, իմ դէպ-խաւար հոգան եղաւ քնելու տեղ պատրաստել ինձ համար։ Այդ աշխատեցաւ ես ծածկեցի ինձ պլէդով և անմիջապէս ինձ գցեցի Մօրֆէոսի անուշ թափառութեան մէջ։ Գնացքը օրօրում էր և ես խոր քնի մէջ ընկայ։

Առաւօտեան դէմ ինձ զարթեցրեց իմ չուրջը կատարուող աշխոյժ շրջյլը։ Ծառում էին նաւթահորերի ածուրդի մասին։

—Շատ լաւ է Բիբի-Հէյբաթի № 10-ը, պէտք է աշխատել դրան ձեռք գցել անպատճառ, ասում էր մէկը։

—Թողէք № 10-ը հանգիստ, ասում էր միւսը, որովհետև նրա վրա չատերն են աչք տընկել։ Աւելի լաւ է մտածենք 8, 25, 26, 27 նոմերների վրա։

—Էհ բաղդ, քեզ ինչ ինայել, ասում էր ա-զատութեան երբորդը, տեսանենք, տեսանենք։ Ինչ լաւ բան կը լինի, եթէ էժան կերպով հող գցենք մեր ձեռքը։ Եղբայր, պէտք է վերջապէս մենք էլ մի օր կարգին ապրենք։ Ինչու՞ ես էլ չը պէտք է ամեն տարի արտասահման գնամ, տաք չոր գնամ, ցուցահանդէսներ գնամ, տեսիլքան կատ ունենամ։

digitised by A.R.A.R.@

—Այդ յետոյ, գործիս խօսենք, կանդնեցրին աւագիններըս

—Եթէ իմ կարծիքն էք հարցնում, յայտնեց երրորդը, ես աւելի հաւանում եմ 9 նօմերը։ Նրա վրա կուռք չատ չի լինի, որովհետև նրան լաւ չեն ճանաչում։ Նրա արտաքինը չատ հաճելի է, նա թարմնված է։

—Ինչ ես ասում, նա չատ նաւթ չունի։

—Հէնց դաշտնիքն էլ դրանումն է։ Ձեր ախրած նօմերները 6—7 դեսեատին են, իսկ իմ տասը միայն 3 դեսեատին։ Եթէ դեսեատինի վրա հաշուէք նաւթի բերքը, կը տեսնէք, որ 9 նօմերը լաւերից մէկն է։

Մեռանները համոզվեցին։ Որոշեցին այդ նօմերի նաւթի պաշտօնը տալ 7 կօպէկ։ Նրանք հաւատացած էին, որ ոչ ոք այդ գինը չի տայ, որովհետև ոչ ոքի խելքին չի գայ մէկ դեսեատինի վրա հաշուել։

Սակայն այն, ինչ որ պէտք է դաշտնիքը պահվէր, բարձր ձայնով յայտնված էր և ես լսում էի։ Իմ գլխում միտք ծագեց փորձ ինչ կատակ անելու։ Ես պատված տեղից խօսեցի։

—Իսկ ես կը տամ 7¼ կօպէկ, ասացի ես պէտի տակից։

Նօտարիցները, իբրև խայտառակներ, վեր թռան իրանց տեղերում։

—Սա ով է, բացականչեցին նրանք։

Ես վեր կացայ, ծայրի հարևաններիս։ Մենք միմեանց անծանօթ էինք։ Ես ժպտացի և բարևեցի՝ բարի օր ցանկալով։

—Դուք էլ մտադիր էք մասնակցել աճուրդին, հետաքրքրվեցին նրանք։

—Ոչ, ես միայն հետաքրքրասէր եմ, հանգիստ նէք, ձեր գաղտնիքը կը մնայ գաղտնիք։

digitised by A.R.A.R.@

Հարևաններս հանգստացան և սկսեցին շատ բանակել իրանց խօսակցութիւնը, բայց աւելի զգոյշ կերպով, քան առաջ։

Մի քանի ժամանակից յետոյ, երբ դուրս եկայ կօրիդօր և ապա կայարաններում նայեցի ուղևորներին, ես համոզվեցի, որ մեր դնացքի մի նշանաւոր մասը ադրդախօսներ են, որոնք գնում են Բաքու՝ յանկարծակի հարստանալու փորձեր անելու, նաեւ մի վիճակախաղին մասնակցելու։ Ժողոված էին գնացողները խումբ-խումբ և խօսում էին նաեւ ու ընկերակցութիւնների մասին։ Նրանցից շատերը ոչինչ չը գիտէին, բայց խօսում էին իբրև նշանաւոր փիւնանսիստներ և նաեւ թագրծներ։ Երբ ես մի քանիսին առանձին խօսեցրի, իմացայ շատ բանաքներ և մերկացուցիչներ։

—Ա. ընկերակցութեան ներկայացուցիչը նաեւ մեզ պին կը տայ, որպէս զի ինքը իր համար պաշտօն ստեղծէ, նրան ինչ փոյթ, որ գինը բարձր կը լինի։

—Բ. ընկերութեան հիմնադիրները պայմանաւորվել են, որ պէտք է իսկոյն ժամանն իրանց աճուրդը, որովհետև արդիւնագործութեան համար փող չեն ճարել։

—Գ. ընկերակցութեան ներկայացուցիչները մտադիր են էժան գնով և քիչ փողով վերցնել բինագործ կամ բալախանու չնչին նաեւթատողերը միայն այն նպատակով, որ բանկերում իրանց համար բանան կրեդիտ, որից այժմ զուրկ են եւ այլն և այլն։

Մի բաղուցի պատմում էր, որ նոյեմբերի 15-ին աճրդի առեւտուր կը ժողովվի առնուազն 3—4 միլիոն րուբլի։ Միլիոնների ա-

digitised by A.R.A.R.@

նունը չատ գրաւիչ էր և բոլորը լաւում էին հետաքրքրութեամբ։

Գանի մօտենում էինք Բագուին, այնքան աւելանում էր ապագայ նաւթագործների հետաքրքրութիւնը։ Շատերը երբէք չէին եղել Բագուում և հետաքրքրւում էին ամեն մի չնչին բանով։ Բագուի հետ փոքր ի շատէ ծանօթ անձինք հետզհետէ կերպով խօսում էին այն պիսի բաներից, որոնց մասին իրանք էլ շատ աղօտ գաղափար ունէին։ Երբ անցանք Բալախանիի կայարանը և հետուից սկսեցին երեւալ նաւթահանքերի աշտարակները, յուզմունքը պատեց նաւթի սերտհարևաններին։ Ապագայ միլիոնների ուրուականը հետզ քշից ամեն կասկած։ Ամենքը հաւատում էին, որ նրանք գտնւում են գերբնական այժի ձեռքում, որ նրանց գրաւել է երջանկացնելու համար...

—Չէ, յոյս կայ, որ ամեն բան լաւ կերթայ, ասում էր մէկը։

—Աստուծով, Աստուծով։

—Մենք վեց կտոր հողի համար աճուրդի մէջ ենք մտնելու, մէկն ու մէկը հո դուրս կը պայ.

—Մենք տասը տեղ ենք գրվելու...

Վերջապէս մենք Բագուի կայարանումն ենք։ Կային այնտեղ ապագայ նաւթագործներին բաժանելու հանդիպողներ։ Կային և անգործ մարդիկ, որոնք կուշտ-կուշտ ծիծաղում էին, նայելով երկաթուղու բերած նշանաւոր ներկայացուցիչներին։

—

Հիւրանոցում սենեակ վարձելուց, լուացվելուց, ճաշելուց, և մի փոքր հանգստանալուց յետոյ, սկսեցի մտածել բարեկամներիս մասին։ Տելեֆոնով խօսեցի նրանցից մի քանիսի հետ։

digitised by A.R.A.R.@

Շատ դժուար էր այդ խոսակցությունը, որովհետև տէլէֆօնը զբաղված էր անթիւ խօսակցութիւններուն ինձ սապին, որ հետախուզական գրասենեակում ծառայող երկու օրիորդ այդ օրը ուշադրութիւնս էին լարված աշխատանքից, իսկ մի տղամարդ սառցել էր ջզային սաստիկ կաթուած, վերջապէս տէլէֆօնի մէջտեղ կարողացայ խօսել իմ ծանօթ բժշկի հետ և նա խոստացայ գնալ նրա մօտ երեկոյեան։

Բժիշկը շատ ուրախ էր ինձ տեսնելու։ Նա մտադիր էր ինձ հետ շատ բաների մասին խօսելու։ Երբ ես գնացի նրա մօտ, այնտեղ կային մի քանի տանեակ հիւանդներ։

—Ես կարծում էի, ասաց նա ինձ, որ մինչև ձեր գալը՝ հիւանդները գնացած կը լինեն, բայց այնքան շատ են, որ ակէտք է մի քառորդ ժամ ինձ սպասէք։ Ահա իմ առանձնասենեակը, այնտեղ սպասեցէք։ Ես հրամայել եմ այլ ևս ոչ ոքի չընդունել։

—Երեք թեթև հիւանդութիւններ են, որ ցոյս ունէք այդպէս շուտ վերջացնելու, ասացի ես։

—Բոլորն էլ ն ա ւ թ ա ց ա ւ ո ւ ղ են հիւանդ։ Ես հարցական մի դէմքով դիմեցի բժշկի վրայ։

—Դա ջղային մի առանձին հիւանդութիւն է, որ այսօր միշտ կայ, իսկ այժմ, նամբարների աճուրդի ժամանակը մօտենալու պատճառով, աւատակացել է։ Այսօր արդէն 120 մարդ եմ բժշկել։

—Ոմանք հիւանդներին մանրամասն հետազօտելու պէտք չը կայ, նկատեցի ես։

—Ի հարկէ, ոչ։ Կալի-բրօմատ և դրա նման բաներ գրում եմ և յետ ուղարկում։

Ես գնացի առանձնասենեակ և այնտեղ զբաղվեցի ընթերցանութեամբ։ Տեղական լրագրի

digitised by A.R.A.R.@

մէջ կարդացի մի յօդուած իսլամի քաղաքակրթող ազդեցութեան մասին։

Շուտով բժիշկն եկաւ։

—Այժմ ես ազատ եմ և մենք կարող ենք խօսել։ Գիտես ինչ իմ հիւանդների մէջ, որ այժմ նայեցի, կային նաև թայլատով հիւանդներ եղբ կին, որոնք չղային տկարութիւն էին առել իրանց տղամարդկանց փոխարէն։ Այդ կանայքը հետևում են աճուրդի գործերին և իրանց տղամարդկանց տանն մի քայլին։

—Ուրեմն ֆեմինիզմ նաև թագրծութեան մէջ, բայականչեցի ես։

Այդ ժամանակ սէլֆօնի զանգը տուին։

—Ո՞վ է հարցրեց բժիշկը։

Պատասխանեցին։

—Մլեթ զարկերակը 110 է, ինչ էք ասում, անկարելի է. գործածեցէք իմ տուած դեղը. շուտով կը գամ։

Բժիշկը յայտնեց, որ հիւանդը չատ մօտ է կենում և խոստացաւ մի 20 րօպէից յետոյ վերադառնալ։

—Չէ կարելի չը գնալ, վիճակը երկիւղալի է. եթէ ինձ հարկաւոր կը լինի՝ հարցրէք անունը և հիւանդի վիճակը։

Մի քանի ժամանակից յետոյ զարձեալ լսվեց սէլէֆօնի զանգը։

—Ո՞վ է խօսողը, հարցրի ես։

—Վատակեանի քոյրն եմ, բժիշկ, դուք էք։

—Ա՛յ, բժիշկը տանը չէ, պատուիրել է, որ սեղեկանամ հիւանդի դրութեան մասին։

—Վատ է, տաքութիւնը չատ է, դէլ է տալիս և բոլորը աճուրդի մասին, զարկերակը 102 է, վախենում ենք։

Հազիւ ետեցի տեղս, նորից հնչեց սէլէֆո-

digitised by A.R.A.R.@

նի զանգը։ Այս անգամ խնայեց, որ միւս հիւանդի լեզուն է բռնել։

Մի ուրիշ տեղից յայտնեցին, որ հիւանդը յանկարծամահ է եղել, ըստ երևոյթին, արտապոպիեքսիայից։

Տէլէֆօնի լսափողից կարելի էր խնդալ։

Վերջապէս բժիշկը վերադարձաւ։

Ես յայտնեցի բոլորի մասին և պատրաստվեցի գնալու։

—Օ՛ւր, ընչո՞ւ, բռնեց նա իմ ձեռքից։

—Անկարելի է մնալ։ Մինչ այսօր միշտ այսպէս է։

—Ի հարկէ, ոչ։ Սա մի քանի օր կը տևէ, մինչև նոյեմբերի 16-ը կամ 17-ը։ Ամառրդի հետևանքները պարզվելուց յետոյ, հիւանդների թիւը կը հասնի սովորական չափի։ Միայն ութ օր է, որ սկսվել է ջրային հիւանդութիւնների ուժգին արտայայտութիւնը։ Այսօր արդէն բաւական խիտ է, վաղը և միւս օր աւելի նա կը առատանայ, իսկ 15-ին և 16-ին կարող են տեղի ունենալ մահվան դէպքեր։

Այդ ժամանակ տէլէֆօնի զանգը տուին։

Բժիշկը վազեց։

—Ո՞նչ, ինքնասպանութիւն, բայց կանչեց բժիշկը, այս րոպէիս գալիս եմ։

Բժիշկը պատմեց, որ նաւթագործներից մէկը ինքնասպանութեան փորձ է արել, բայց միայն վէրք է ստացել։

—Ես կը գնամ, ասաց նա, բայց ինչպէս անենք որ տեսնվենք։

—Ինչպէս ևնպատում եմ, ասացի ես, մինք այս անգամ տեսնվել չենք կարողանալու։

Լսվեց զարհուրելի տէլէֆօնի զանգ։

digitised by A.R.A.R.@

Հիւանդացել էր թիֆլիսից ինձ հետ մի վաճառական եկած աճպռտախտաններից մէկը: Ընկերները խնդրում էին բժշկին շուտով գնալու, նրանք ենթադրում էին, որ հիւանդը ուղեղի բորբոքում է ստացել:

Ես այլ ևս անկարող էի մնալ և գնաց վախճայ բժշկի տանից:

---

digitised by A.R.A.R.@

XIII

(25 Նոյեմբ. 1900 թ., «Մշակ» № 224)

Նաեթի թագաւորութեան մէջն եմ։ Երկու օր պրաւված էի այցելելով նաեթահանքերը և գործարանները։

Ես պիտէի, որ Բագուն պրաւել է ամէն տեղից մարդիկ թէ Անդրիվկասից և թէ Ռուսաստանի ներքին նահանգներից։ Ես ուրեմն ես էլ պէտք է երկիւղ կրէի, որ կը պրաւեմ ահեղ զօրութեանից և կը կորչեմ նաեթային ալիքների մէջ։

Մաղնիսը ինձ վրա չազդեց։ Ես ազատ մըտայի նրա թուլչութեանից։ Այդ ես առաւ եմ նախօրօք՝ իմ ընթերցողին հանգստացնելու նպատակով։

Տէր Աստուած, ինչ արտասուք և յուսահատութիւն է թողնում անձանօթի վրա Բագուն իր չրջակայքով։

Ինչներդ գաւեցէք։

Հողը չոր, ամայի և գեղնամոխրագոյն։ Նաեթահանքերը և գործարանները, իրանց չուրջը պահլող աներով և հողով գորչացած ու սևացած նաեթից ու նրա ծխից։ Փողոցները և ճանապարհները կեղտոտ, նեղ, խորտուբորտ ու չատ տեղերում անանցանելի գեխով լիքը։ Յաճախակի սուր քամի, փոչի տեղտեղերում, չոր վրա, ղէմքի վրա... Եվ ինչը մնաց պատ-

digitised by A.R.A.R.@

Բայց պէտք է տեսնէիք, թէ ինչ հրաշալի ժպիտներ էին խաղում նաւթագործների և ճարտար վարպետների դէմքերին։ Այդպիսի ժպիտներ շատ քիչ անգամ կը պատահէք ուրիշ տեղերում։

—Ես բաղդատր եմ, ես երջանիկ եմ, ես հասել եմ իմ նպատակին, ասում էին այդ ժպիտները։

Ես գնացի և պատեցի Բալախանին, Սաբունչին և Ծամանին նաւթահորերի ընդարձակ տարածութիւնը։ Մի նաւթահանքում, ուր առատ նաւթ է ստացվում և սպասում էին նոր փորած նաւթահորից չաղրման, ես ակամայից էի մի այնպիսի ուրախ և զուարթ տրամադրութեան, որ կարծես հարստանիքի հանդէպ առաջ կանգնած լինէի։

Կառավարիչը յայտնեց, որ չաղրի դուրս գալու, ստորերկրեայ ազմուկի և ուրիշ երեւոյթների նշաններից անկասկած է, որ չաղրվան պէտք է բացվի ինձ հրաւիրեցին մասնակից լինելու նրանց նախաճաշիկին։ Ես նախ հրաժարվեցի ինձ ուղեկցող և առաջնորդող ընկերս խորհուրդ տալով ընդունել հրաւէրը։ Ես ընդունեցի։

Նախաճաշիկը պատրաստված էր չաղրվանը շնորհաւորելու նպատակով։ Նաւթահանքի տէրերը եկել էին Բագուից, հաւատացած լինելով, որ չաղրվանը պէտք է բացված լինէր, կամ նրանց ներկայութեամբ բացվէր։ Վերցրել էին իրանց հետ մի քանի տեսակ խմիչքներ և չամպայն։

Նաւթահանքի տէրերը նոր հարստացած մարդիկ էին շատ հասարակ ծագումից։ Նրանք ունեղել էին արհեստաւորներ և գինեվաճառներ։

digitised by A.R.A.R.@

Եւրօպական հագուստ գեռ կարդին չէր նստած նրանց վրա և մէկը չէր հրաժարվել իր մորթէ վոքր գդակից։

Նախաճաշի ժամանակ մեծ աղմուկ էր տիրում, բայց ոչ մի խօսակցութիւն չը կար. ամեն մարդ մի բացականչութիւն էր անում, մի բարեմաղթութիւն ասում և բաժակը դատարկում կառավարիչը մէկ-մէկ յիշեցնում էր, որ նաեւ ամբարելու համար վորած աւազանը շատ վոքր է։

—Չը, հիմի ինչ կասէք մեր արհեստին, դիմից ինձ նաեւ թահոզի տէրերից մէկը։

—Ինձ համար չէ այս տեղը, պատասխանեց նա։

—Ինձ համար չէ պարնան գալը, վրա բերեց մի ուրիշը, երգելով յայտնի ռամանաւորի առաջին տողը։

—Ես մատաղ լինեմ այս հողին, նրա ոսկոր ու ոսկին, նրա քաշած ծննդացաւին. իմաս եմ այն ղօշի կենացը, որ պէտք է ծնվի։

—Կեցցես, կեցցես, դառացին ամէնքը և դատարկեցին բաժակները։

Յանկարծ մշակը նեղս վազեց և կառավարչին կանչեց։ Նա յայտնեց, որ հորը սկսել էր ադմկվել։ Մշակի ասածը ցնցեց բոլորին։

Բոլորը վեր թռան և գիմեցին դէպի հորը։

Ես իմ ուղեկցի հետ չարունակեցի իմ ճանապարհորդութիւնը։ Յետոյ տեղեկացանք, որ ադմուկը զուր տեղն էր, չարվանը գեռ չէր երեացել։

Թողնելով նաեւթահոզների շրջանը և մտնելով երկաթուղու վագօնը՝ ես գգայի, որ շատ ասելիք յօդնած եմ իմ երեւակայութեան մէջ շատ խիտ գծերով գրոշմված մնացին նաեւթից սե-

digitised by A.R.A.R.@

ւայած հողը, անթիւ աշտարակները Օսմանի ահագին ան լիճը և անթիւ անցած դէմքերը։

Տպաւորութիւնը ընդհանրապէս ծանր և ճնշող էր։

Եւ մի բան կարծես ինձ մտատանջում էր։

Ինչ էր այդ բանը, ես չը գիտէի։

Ոսկէ հորթի համար կառուցված չինութիւնները և արած ձախքերը կրում էին ինչ որ յուսահատական մի կէտ իրանց մէջ։

—Ո՛րքան մշակներ տեղ են գտել այս հանքերում, հարցրի ես ընկերից, ցանկանալով աշխատանք գտած մշակների միջոցով հաշտվել նաւթային աշխարհի հետ։

Ընկերս ճիշդ տեղեկութիւններ չունէր։

Ես նայեցի շուրջս։

Վագօնում նստած էր մի խառնիճաղանճ ամբոխ, որի մէջ խառնված էին ազգութիւններ և դասակարգեր և որի վրա սակայն մի բնորոշ կնիք կար, դա այն հիւանդութեան հետքերն էին, որ իմ ծանօթ բժիշկը անուանել էր նաւթացաւ։

Այո, նաւթացաւ։

Ես կարող էի հաշտվել նաւթային արդիւնաբերութեան հետ և կաշխատէի գնահատել նրա տուած օգուտները մշակների և երկրի համար, բայց իմ ամբողջ էութիւնը զարհուրում էր և բողոքում նաւթացաւի այն տիղմային և մահաբեր արտայայտութիւնների դէմ, որոնք խլում են մարդու դէմքից նրա բանականութեան յօլքը և դնում նրա վրա գազանային մի դրօշմ։

Վագօնում խօսում էին առաջիկայ աճուրդի մասին և այնպիսի մի աշխոյժով, որ ասրսակ

digitised by A.R.A.R.@

էին բերում ինձ վրա։ Ինչու մի օր էլ չը տևա-
նեինք մենք մի մեծ յուզում, մի մեծ իրարան-
ցում գաղափարական սուրբ գործի համար, ին-
չու մեզ նոյնպէս չը շարժէ, չը տարուբերէ մեր
ոգէտ և անօգնական մերձաւորի վիճակը։

Հասանք քաղաք։

Ես բաժանվեցի իմ ընկերից և շտապեցի հիւ-
րանոց։

Ինձ հարկաւոր էր հանգստութիւն։

digitised by A.R.A.R.@

XIV

(2 դեկտ. 1900 թ., «Մշակ» № 229)

Բազուի հետ չարունակում էի ծանօթանալ։ Հետևեալ առաւօտ շատ կանուխ վերկացայ և պատեցի քաղաքի զանազան մասերում գտազբը անհետաքրքիր է իր հինաւթիւնների կողմից։ Մի քանի նոր տներ ունեն եւրօպական ձև, իսկ մեծամասնութիւնը դեռ հին ձևի է։ Թուրքերը չեն սիրում պատուհաններ բանալ դէպի փողոց և կանգնեցրել են փողոցի երկարութեամբ պատեր։ Փողոցները նեղ են, առանց մայթերի և վատ սալայատակված։

Բազուի քնութեան մէջ մի բան ինձ գրաւեց։ Դա նրա ծովն է։ Նա հանդստութիւն տուեց իմ աչքերին, որոնք յոգնել էին ամայի հողը, դեղին քարերը և գորշացած նաւթահանքերը դիտելուց։ Ծովի կապուտակը չոյեց, փաղաքշեց իմ ճնշված սիրտը և ես մի րօպէ խորասուզվեցի անհունութեան գաղափարի մէջ։

Փորձեցէք դուք ևս նայել ծովին այն կէտից, որտեղից ես դիտում էի։ Այդ կէտը քաղաքային այգու վերևի մասն է։ Այնտեղից բացվում է մեծ հորիզոն։ Ձեր առաջն են ծովը իր ծածանվող մակերևոյթով, նարդին կղզին հեռանկարում, ծովախորշի ափերը բազմաթիւ նաւերով։

Սակայն ես հիասթափվեցի, երբ իջայ ծովի

digitised by A.R.A.R.@

ահա Այդտեղ բանաձեռնածականը փոխվեց մի ախտի իրականության Ծովակը տգեղ էր, տգետ։

Գեղեցիկ տգետությունը չքացավ։

Ես գնացի դէպի նաւամատույցի ծայրը, որ հեռու լինելի ափից և վերանորոգելի ախտժելի տգետությունը։

Բայց իզուր։

Նաւամատույցը էր անկարգ վիճակով թաթախված ճիւօսներով, կեղևներով, տաշեղներով,— լրացնում էր ախտը տեսարանը։

Ես նստեցի նաւամատույցի մօտ կապված նաւակներից մէկի մէջը և նաւակավարին պատուիրեցի քշել դէպի ծովը։ Նաւակավարը բայց արեց թոկը և վերցրեց իր ձեռքը թիերը։ Մենք առաջ գնացինք։ Երբ մենք չրջապատեցինք անկյանք նաւամատույցը և նրա մօտ կանգնած նաւերը, նաւակավարը բացեց առագաստը։

Փչում էր բարակ քամի, որ սակայն մեծ ոյժով առաջ էր քշում մեր նաւակը։ Հազիւ անցել էր մի քառորդ ժամ, մենք կտրեցինք մեծ տարածութիւն։

Ծովը հրապուրիչ էր. օդը թարմ, կազդուրիչ և զուարթացնող։ Մենք սահում էինք արագ, թեթև ու քնքոյշ շարժումով։

Ես մենակ էի։

Չէր երևում ոչ մի ուրիչ նաւակ հօրիզոնում։ Քաղաքում չատերը զեռ քնել էին, իսկ զարթնածները արդէն խորասուզվել էին իրանց հոգսերի մէջ։

Ամբողջ քաղաքը իմ երևակայութեան առաջ ներկայացաւ իբրև յոգնած ուղեղների և լարված չղերի մի կոյտ։

Սակայն չատ չէր կարելի հեռանալ նաւա-

digitised by A.R.A.R.@

վարը դարձրեց նաւակը և մենք վերադարձանք քաղաք։

Ափ դուրս գալով ես վարձեցի կառք և գնացի Բիբի-Հէյբաթի գաղափար կազմելու նշանաւոր նաւթահորերի և չաղրխանների այդ վայրի մասին։ Ես չայելնոյի ոչ մի նաւթահանք, այլ շրջագայեցի այն բոլոր տեղերում, ուր կարող էր կառք գնալ։

Բիբի-Հէյբաթը նոյն բնութիւնը, նոյն քարն ու հողն ունէր, ինչ որ Բաքուի բոլոր միւս շրջակայքերը, բայց Բիբի-Հէյբաթի առաջ ձգված էր ծովը, որ տալիս էր գեղեցկութիւն տխուր և ամայի տեսարանին։

Սակայն նաւթահանքերում տիրող կարգ ու կանոնը ու ամբողջ կեանքը ինձ տեղափոխեցին դէպի այն տեսարանները, որ նախընթաց օրը դիտեցի Բալախանիի շրջանում։

—

Դեռ շատ վաղ էր։

Վերադարձայ հիւրանոց լուացվելու, նախաճաշելու և սպասելու իմ ուղեկցին, որի հետ միասին պէտք է գնայինք Սև-քաղաքի գործարանները մէկը տեսնելու։

Բաւական լուացվել պէտք է օրը մի քանի անգամ։ Եւ ամեն անգամ դուք կը զարմանաք՝ թէ որտեղից է այդքան կեղտ նստել ձեր ձեռքերի և ձեր երեսի վրա։ Իսկ մի և նոյն ժամանակ չուրը մի հազուագիւտ և թանգ բան է այս քաղաքում։

Մինչ ես սպասում էի ուղեկցիս, ինձ կանչեին տելեֆոնի մօտ ինձ։

—Այսօր երեկոյեան, ասաց նա, մենք կինեալու ենք ընկեր ծանօթներով Լեոնեանի մօտ։ Նա յատուկ քեզ խնդրում է գալ։ Հրաւիրատոմս

digitised by A.R.A.R.@

կուզարկի, բայց կարելի է տանը չը լինեւս Ամեն օր բոլոր կանոնք և ժամանակ կատարելիք նրա տանը մնալ կայ Անպատճառ կը սպասենք։

—Ուրախ եմ, պատասխանեցի ես, ովքեր են լինելու։

—Կը տեսնես քո թիֆլիսի ծանօթներից չատերին։

Եկաւ ուղեկիցս և մենք ճանապարհ ընկանք դէպի Սև-քաղաք։

Ես չեմ նկարագրի իմ տեսածները։ Ինձ համար սակայն այնտեղ կային նորութիւններ թէ տեխնիկան և թէ բանւորների զորձը ինձ հետաքրքրեցին։ Գործարանական կեանքի պրոպագանդիստները երես և վատ կողմերով առաջիկայ գարձան աշխոյժ խօսակցութեան, որ մենք ունեցանք կառավարչի հետ։

—Մենք սաստիկ զբաղված ենք, մի գլուխ դանգատվում էր նա։

—Բայց այն բարեփոխութիւնները, որոնց մասին ես խօսում եմ, կը տան ձեզ մեծ բարոյական մխիթարութիւն և հոգեկան հանգըստութիւն։

—Մեզ կարող է օգնել միայն պաշտօնական կազմակերպութիւնը, ինչպէս է, օրինակ, նաւթագործների ժողովի խորհուրդը։ Նրա աջակցութեամբ կարելի եղաւ հերթական գարձնել հիւանդանոցներ բազմացնելու, բանւորների պաշտպանութեան և ապահովութեան, ճանապարհների շինութեան հարցերը։ Իսկ մենք, առանձնակի, շատ ենք զբաղված, շատ ենք թոյլ։

—Ձեր ասածը ուղիղ է կազմակերպութիւնների մասին, ասացի ես. բայց ոչ պէտք է հոգայ նրանց իրագործման մասին։ Բայց տես-

digitised by A.R.A.R.@

նիկայի պահանջներից կան հասարակական, բարոյական, կենցաղավարական բարձր պահանջներ, որոնք չը պիտի է կու գնան տեխնիկայի մէջ։

—Այդ զգում ենք բոլորս, ժիկամուխեանը պատասխանեց կառավարիչը, բայց մենք ոչ ժամանակ ենք գտնում և ոչ մի հնար էական գործ աջողեցնելու այդ ուղղութեամբ։

Երկար չը մնացինք Սև-քաղաքում։

Մենք բաւականացանք մի գործարան տեսնելով։ Պէտք էր վերադառնալ։ Ուղարկեցինք կառքի ետևից և ինքներս դուրս եկանք փողոց։ Կառք չէր գտնվում։ Ես առաջարկեցի ուղևկցիս քաղաք վերադառնալ ձիաքշով։ Նա հաւանութիւն չը տուեց։

—Լաւ չէ, ասաց նա։

—Ինչու, զարմացայ ես։

—Կառքի սպասենք, աւելի լաւ կը լինի։

Ուղևկիցս բացատրեց, որ ձիաքշով ճանապարհորդում են բացառապէս աւելի հասարակ դիրքի անձինք։

—Դեռ Սև-քաղաքից ներելի է գնալ ձիաքշով։ Այնքան էլ օտարոտի չի համարվի։ Բայց քաղաքի մէջ դա «մօվէ տօն» է։

—Մենք թիֆլիսում, ասացի ես, այդպէս չենք նայում և դիրք ունեցող անձերից շատերը ձիաքշով են պտրհորդում։

—Այդ ճիշտ է, բայց այստեղ ուրիշ կերպ է։

Մինչ մենք խօսում էինք, անցաւ մեր մօտից կառքով մի պարոն, որ տեսնելով մեզ՝ կանգ առաւ։ Դա իմ ուղեկցի մօտաւոր ազգականներից մէկն էր Բաքուում հարստացած և նախկին բարձր գործի մէջ խառնված։ Ուղեկիցս մեզ ծանօթացրեց։

digitised by A.R.A.R.@

—Ի՞նչի է ապատում, հարցրեց նա։

—Կարքիս։

—Համեցէք իմ կառքով, միայն մի պայմանով, որ ուղիղ կը գնանք մեզ մօտ ճաշելու։

Զեմ ու չեմ անելուց և իմ ուղեկցի յորդորները լսելուց յետոյ, ընդունեցի հրաւէրը և գնացինք Ղալըցեանի մօտ ճաշելու։

Ճանապարհին Ղալըցեանը խօսում էր աճուրդի մասին։ Նա սաստիկ յարձակվում էր թիֆլիսում կազմված ընկերակցութիւնների վրա, որոնք խառնվում են իրանց չհմայած գործերի մէջ։

—

Շուտով հասանք տուն։

Ղալըցեանը առաջնորդեց մեզ դէպի գեղեցիկ կահաւորված հիւրասենեակը, որտեղ նստած էին երկու ուրիշ հիւրեր, և նրանց հետ սկսեց քըչփըչալ։ Ես դիտում էի շուրջս։ Իւրաքանչիւր անկիւն այնպէս էր զարդարված, որ կարծես աղաղակում լինէր թէ՝ «նայէր ինձ, տես որքան չքեղ եմ և ճոխ։ Մարդ իրան օտար էր զգում այդ հիւրասենեակում։ Ես կարծես տեղ չէր գտնում կարգին նստելու և հանգստանալու։ Կարծես մարդու խտտղեցնում էին ամեն կողմից։

Հիւրերի հետ սկսեցինք խօսել դէսից դէնից։ Այդ ժամանակ տուն եկան երեխաները, որոնք գնացել էին զբօսանքի։ Նրանք պիտի անցնէին հիւրասենեակով։ Հետուից ես լսեցի մանկական քչքչոց։ Հէնց որ փոքրիկները նկատեցին օտար մարդկանց, իրանց ձայները կտրեցին և արագ անցան հիւրասենեակի միջով։ Հրաշալի չորս երեխաներ, երեքը տղայ և մէկը աղջիկ։ Տպաւորիչ էր փոքրիկ տղան իր համարձակ և խրոխտ դէմքով։

digitised by A.R.A.R.@

Մտաւ տանտիրոջ մայրը Դարթաղի զգեստուն։

—Խնդրեմ ձանօթանաք, ասայ տանտէրը, մեր այանն է, նոր է եկել Շուշուց, դեռ սովոր չէ մեր քաղաքին։

—Ինչ լաւ թոռներ ունէք, ասայի եա։

—Լաւ ըն, չատ գաշանգ ըն, ամա հինչ ասնիմ, որ լալիկ ըն, գլուխը թաւ տալով պատասխանեց տատը։

—Լալիկ, վրդովված հարցրի եա։

—Բա հինչ ա. բա լալիկ չը՞ն։

—Ո՞ր է լալիկը, անհանգիստ հարցրի եա։

—Հէնց լօխ բա մարդ կարայ վէչ իբան թոռներին հետը խօսի։

Տանտէրը, նկատելով իմ զարմանքը, մէջ մտաւ։

—Այանի խօսքերը դուք չը հասկացաք.

—Բանն ինչումն է, հարցրի եա։

—Ահա ինչումը։ Երեխաները իրանց դայեակից և դաստիարակչուհուց ամեն բան սովորել են, բացի այն լեզուից, որով կարող է դրանց տատը խօսել հետները։ Ես էլ չատ ցաւում եմ. բայց ինչ անեմ։

—Բա լալիկ չըն, հինչ ըն, դուք բանեցաք, վրա բերից տատը։

Այդ հանգամանքը առիթ եղաւ շատ տուր խօսակցութեան, որին վերջ դրեց տանտիկինը, հրաւիրելով մեզ ճաշի։

Երեկոյեան ես Լուսնեանի տանն էի։ Մենք հին և լաւ ծանօթներ էինք դեռ մայրաքաղաքից։ Լուսնեանը հաստատվել էր առժիշտ բազումն։

Սկսեցին գալ հիւրերը, որոնցից չատերը իմ

digitised by A.R.A.R.@

վարչամի ծանօթներն էին։ Մենք ողջունում էինք միմեանց, իբրև պատերազմի արհաւիրքից ցերուցան եղած նախկին դիւանագներ, որոնցից իւրաքանչիւրը մի վէրք ունի ստացած, մի աչքեր ունի թաղած, մի թանկագին իր ունի կորցրած։

Մենք մտաբերեցինք հին և նոր անցեալից շատ բաներ, բայց դեռ ընդհանուր առարկայ չէինք գտնում խօսակցութեան համար։ Մատակեանը հաղորդեց նաւթագործարանատէրերի առաջիկայ ժողովի մէջ յարուցվելիք մի քանի հարցերի մասին տեղեկութիւններ։ Ս.Թելեանը պատմեց արտասահմանի իր ատաւորութիւնները։ Աւշարեանը յայտնեց, որ նա զբաղված է գրական աշխատութիւնով։ Ադամեանեանցը ասաց, որ նա շատ նիւթ է ժողովել և պէտք է մշակէ, Տրդատեանը ամաւր անդամից ձերբա և ասաց, որ նա չէ մոռացել Թիֆլիսը, և հետաքրքրվեց վերջին դէպքերով։ Յարութիւնեանը յայտնեց, որ երկու տարուց յետոյ նա կը տեղափոխվի դարձեալ Թիֆլիս։ Վազեան և Ենուքեանը խօսեցին գրքեր տարածելու ծրագիրների մասին։ Դարակեան պատմեց մի քանի բաներ Բագուի թատրօնի մասին։ Յանիկեանը խօսեց եռանդի և գործնական ոգու պակասութեան մասին մեր երիտասարդների մէջ։ Եղիկեանը բանաստեղծօրէն պատմեց իր հին ու նոր տպաւորութիւններից։

—Երբ պատանի էի, ես ոսկի խօսքը կապել էի մի շարք իդէալական և բանաստեղծական հասկացողութիւնների հետ։ Արշալոյսը ոսկեժպիտ էր, Անահիտը ոսկեծոլի էր և ոսկեմայր, Վ դարը ոսկեդար էր, Եղիշէի գիրքը ոսկեղինիկ էր... Անցան ժամանակներ, մեծ յոյսերով գնացի Մխածնի իջման վայրը և այնտեղ տեսայ

digitised by A.R.A.R.@

ռակու մի ուրիշ գործադրութիւն՝ այն է չհաս պատկի, անարժան ձեռնադրութիւնների, կաշառքների և հազար ու մի խարդաւանանքների համար. իսկ այժմ դիտում եմ, թէ ինչպէս այսուղ նաւթն է փոխարկվում ռակու ևս կը ցանկանայի վերադառնալ իմ պատանեկական երազներին։

Աղմկալից էր խօսակցութիւնը։ Ամենքը գուարթ էին և ուրախ ևս մոռացայ հացուկի իմ նախկին ծանր տպաւորութիւնները։

—Դուք էլ էք եկել Մամօնային երկրպագելու և աճուրդին մասնակցելու։

Այս խօսքերով դիմեց ինձ կամկամեանը, որ միքր ինչ ուշ եկաւ։

—Ոչ, եկել եմ միայն դիտողութիւններ անելու։

—Ի՞նչ դիտողութիւններ։ Այստեղ բանը պարզ է։ Այստեղ մեր ինտելիգենտը զբաղված է խլացնելով իր խիղճը։ Կան մարդիկ, որոնք դեռ չեն մոռացել զօրաւոր խօսքեր և երբեմն յուզվում են աստուածային ձայնից. բայց...

—Շարունակեցէք։

—Տուէք զօրաւոր խօսքեր, որ մենք չարժենք ապառաժը։ Թող մամուլը չը բաւականանայ ասածով, խօսէ անդադար։ Դուք պէտք է զանգակներ խփէք անդադար։ Թող «Մշակը» մշտական հոչնակահարի պաշտօն կատարէ։

—«Զիլոնար», ուրեմն, ասայ մէկը։

—Այո, «զիլոնար»։ Կար վերջերս մի չը խլացած խիղճ և ժողովրդական ցաւի ողբակից, որին այս տարի կորցրինք, դա լուսահոգի Զանգեանն էր։ Նրան ոչ ոք չէ փոխարինել։

—Զանգակները մեզ վրա չեն ազդի, ասայ մի պատանի, որ հետաքրքրված էր մեր խօսակ-

digitised by A.R.A.R.@

ցուցիաննով։ Բազուի ինտելիգենտները բարոյական կոչերի համար զարձրել են իրանց անթափանցելի «զրահապատ գնացքներ»։

—Նրանք շատ զբաղված են, բացատրեց մի ուրիշը, այդ դուք մոռանում էք։ Համարեակաց գործը լաւ բան է, բայց որ մարդ ժամանակ չունի։

—Ինչու՞, միթէ երեկոները ազատ չեն։

—Այո, բայց ամբողջ օրը տանջվելուց յետոյ՝ մարդ ուզում է հանգստանալ, մէկը թատրօն է գնում, միւսը կլուբ, երրորդը մի ուրիշ տեղ։

—Բազուն նոյնն է, ինչ որ մահմեդականների Քեալթալայը, չարուն ակով պատանին.—այնտեղ միայն ռակորներ և դիակներ են ժոլովված, իսկ հոգի չը կայ։ Բազում մոռացված են սրբազան երդումները։

—Գայթակղութիւնը մեծ է, ասում էր մէկը, իսկ մարդիկ հերոսներ չեն։ Բազուն փորձաքար է։ Երբ ֆրազեօրները, ուրիշ տուլ աղմուկ հանելուց յետոյ, այստեղ եկան, միայն ապացուցեցին, որ նրանք արդելված պտղի համը չէին տեսել, որ գայթակղիչ օձը մեծ հունձ ունի նրանցից վերցնելու։

—Ով որ չէ կորցրել իր հաւատը, ասում էր մի ուրիշը, նա էլ կը կորցնի, որովհետև միջավայրը յուսահատական է։ Այստեղ ամեն բան նպաստում է խլացնելու ականջները և կարծրացնելու սրտերը։

Յանկարծ ինձ դուրս կանչեցին։

Հիւրանոցի ծառան բերել էր իմ անունով ստացած հեռագիրը։ Թիֆլիսից ինձ հեռագրում էին, որ վախճանվել է Սօրէն Ստեփանէն։

Հեռագիրը սաստիկ տպաւորութիւն գործեց։ Սօրէն Ստեփանէն շատ յայտնի էր բազուցինե-

digitised by A.R.A.R.@

րին։ Բոլորի ականջին հնչում էին դեռ նրա քարոզները Ամենքը վշտացան։

—Ահա մի մարդ, զգայված բայց ականջից Աթենեանը, ահա մի մարդ, որի համար չը կայ յին խլացած ականջներ և քարացած սրտեր նա կարողանում էր թափանցել մարդկանց հոգու մէջը և լսեցնել տալ իր ձայնը։ Նա մի դիւթիչ, մի կախարդող պատգամախօս էր, որ հրաշքներ էր գործում։

—Նա մի քանի չաթաթում, աւելացրեց մի ուրիշը, կարողացաւ երկբհարիւր հազար բուլղար ժողովարարուհին դլուխ բերել։

—Նա արտասուք էր դուրս բերում այնպիսի աչքերից, որոնք նոյն իսկ հարազատների համար լայց չեն լինում։

Պատմեցին զանազան դէպքեր Ստեփանէի կեանքից։ Ուժեղ խօսքի ուրուականը կենդանացաւ բոլորի երեւակայութեան առաջ։

—

Հետևեալ օրը, առաւօտեան ես ճանապարհ ընկայ դէպի Թիֆլիս։

digitised by A.R.A.R.@

XV

(5 դեկտ. 1900 թ., «Մշակ» № 230)

Դէպի Թիֆլիս։

Բաւական նաւթային սթենոլորտի ծանրութիւնը զգալուց յետոյ՝ ես ձգտում էի դէպի Թիֆլիս մի առանձին հաճութեամբ։

Ես շատ լաւ գիտէի, որ Թիֆլիսն էլ մի կատարելութիւն չէ, որ մարդիկ մեծ մասամբ զբաղված են իրանց անձնական գործերով և եսական շահերով, բայց այստեղ այնքան աչկարա կերպով անարգված, արհամարհված և ոտի տակ չեն գցված հասարակական խընդիրները։

Տուն վերադառնալով ես իմ սեղանի վրա գտայ բազմաթիւ նամակներ, տոմսեր, արձանագրութիւններ և հեռագրներ։ Այդ թղթերի մէջ տեղ էին գտել՝ քաղաքային ինքնավարութեան գործեր, գրական աշխարհի ցաւ ու հոգսեր, երկու մոռացված կտակի մասին գանգատներ, մի պատժված քահանայի մասին աւղեկութիւն, Բաքոյենց ու Մոզնու նկուղեցիների յայտնի գործերի նոր շրջան մտնելու լուրերը և այլն։

Կարդալով, թերթեցի բոլորը և երբ հարեւանցի զաղափար կազմեցի այդ ամեն տեսակ ղեղծումների, զանցառութիւնների և խայտառակութիւնների մասին, այլ ևս ուրախ չէի Թիֆլիս վերադառնալուս վրա։

—

digitised by A.R.A.R.@

Դուրս եկայ բնակարանից ծանօթներին տեսնելու և հարց ու փորձ անելու։

Ինձ հետաքրքրում էին իմ բացակայութեան ժամանակ տեղի ունեցած դէպքերը։

Գանձակեանը, որին պատահեցի, բաւարարութիւն տուեց իմ հետաքրքրութեան։

Ես ի միջի այլոց պատմեցի իմ ատոյած նամակների մասին։ Նա սկսեց բացատրութիւններ տալ։

—Այդ լաւ նշան է, որ քահանային սատել են, սատկի եաւ Պէտք է տանձահարել չահամոլութեան և աներեսութեան ներկայացուցիչներին։ Նրանց պատճառով խայտառակվում են միւսները և ամբողջ հաւատքը։

—Բայց դուք գիտէք, թէ ինչ բանի համար են այս անգամ պատժել քահանային, հարցրեց յուզված կերպով Գանձակեանը։

—Կամ փող կը լինի թագցրած, կամ գիտ զարդեր իւրացրած, կամ կաշառքով պահակ կատարած, կամ դրանց նման մի ուրիշ բան։

—Ոչ և ոչ։ Հէնց ցաւն էլ այն է, որ նա պատժված է զեղծումներ մերկացնելու համար։

Գանձակեանի սաւծները ինձ զարմացրին և օտարոտի թուացին։

—Ինչ, տէրտէրը զեղծումներ բացող, տէրտէրը այդքան հասարձակութիւն և արիութիւն ունենայ, բացականչեցի ես։ Երևի այդպէս է հրամայել թեմական իշխանութիւնը և տէրտէրը ցանկացել է հաճոյանալ այդ իշխանութեան։

Գանձակեանը պատմեց հետևեալը։

Թիֆլիսի քահանաներից մէկը յայտնում է կոնսիստորիային, որ նա զեղծումներ է նկատել իրանց երէցփոխի գործունէութեան մէջ։

digitised by A.R.A.R.@

Կօնսիստօրիան համարում է այդ վրպարտութիւն քահանան խնդրում է եկեղեցու հաշւամատեաններըը, որ ապացուցանէ ասածներըը Կօնսիստօրիան ականջ չէ դնում։

Տեսնելով, որ բանաւոր դիմումը նեղսրտութիւն չէ անում, քահանան դիմում է պրաւոր կերպով։

Կօնսիստօրիան չէ պատասխանում այդ խընդիրքին։

Քահանան դիմում է պրաւոր կերպով երկրորդ անգամ...

Դարձեալ լռութիւն։

Դիմում է երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ անգամ։

Գերեզմանային լռութիւն։

—Ի՞նչ էք ասում, այդ անհաւատալի է, բացականչեցի ես։

—Թող անհաւատալի երևայ, բայց դա դուռ իրողութիւն է, չեչտեց Գանձակեանը։

—Ցեսո՛ղ, յետո՛ղ։

—Այն ժամանակ քահանան դիմում է սինօդին, յայտնելով գործի էութիւնը։ Սինօդը հրամայում է տալ մատեաններըը քահանային։

Սակայն կօնսիստօրիան իր կողմից դիմած է լինում սինօդին, խնդրելով պատժել զրպարտող քահանային։ Եւ սինօդը նշանակում է պատիժ՝ ենթարկելով քահանային երկու ամվայ ապաշխարութեան։

—Ուրեմն, ասացի ես, քահանան Գօն-կիխոտի դերի մէջն է եղել։ Նա կարծել է թէ չարագործութեան և զեղծումների հետ գործ ունի, իսկ դուրս է գալիս, որ նա քամու չաղացների դէմ է եղել մաքառում։

—Մի ասէք, վրա բերից Գանձակեանը, քա-

digitised by A.R.A.R.@

հանան նորից դիմել է սինոդ և յոյս ունի, որ իր առաձնները կը հաստատէ։

—Զարմանալի յամառութիւն է։ Հէնց այդ տակուն մաքառման և դժնկիխաստութեան համար այդ քահանային պէտք է հանել իր դասակարգից, ասացի ես։

—Տեսանենք, սինոդի քննութիւնը ինչ է պարզուի։

Անկասկած հետաքրքրական է սկսած գործը։ Այդտեղ խառնված են սինոդ, կօնսիստորիա, կօնսիստորիայի պաշտօնեաներ, ընդհանուր դատարան, մարմնաւոր իշխանութիւն, երէցփոխ, դպրոց, դպրոցական վարչութիւն և զանազան հարցեր՝ հերետութեան, զրպարտութեան, դժնկիխաստութեան, յաղթութեան, մաքառման, աքսորի և ապաշխարութեան։

Ահա ձեզ պղպեղով համեմած ռնային չիրթներից մէկը, որ դրված է ճաշակելու համար մեծ հետաքրքրութեան առաջ։

---

digitised by A.R.A.R.@

XVI

(9 դեկտ. 1900 թ., «Մշակ» № 233)

Ես չատ ցաւում եմ, որ հետաքրքրվեցի երկու կտակի հարցով. Ոչ ոք չը կարողացաւ մի կարգին բան հաղորդել ինձ նրանց մասին, բայց այնքան խառնիխուռն բաներ պատմեցին, որ քիչ էր մնում թէ կասկածէի այդ կտակների գոյութեան մասին։

Ոչ, կասկածը իզուր է։

Կտակները գոյութիւն ունեն։ Այդ հաստատ է։

Կտակներից մէկի մասին, որ աւելի խոշորն է, դեռ շատ չեմ ստանայ ճշգրիտ տեղեկութիւններ, իսկ միւսի մասին, ինչ որ իմացայ, հետևեալն է։

Եղել է չէ եղել Թիֆլիսում...

Ի հարկէ «չէ եղել» խօսքը միայն ոճ է։ Աւելի զգուշութեան համար պէտք է նրան դուրս գցել այս դէպքում։

Ուրեմն, եղել է։

Թիֆլիսում եղել է մի հայ մարդ Ղարղաձևանց ազգանունով, որքան յայտնի է անունը Զաքարիա։

Չանի տարի է Ղարղաձեանցն ապրել աշխարհում՝ այդ ես չը գիտեմ, բայց որքան յայտնի է, 1887 թուին նա դեռ կենդանի է եղել, իսկ 1888-ի սկզբներին նա մեռած է

digitised by A.R.A.R.@

Յայտնի է և այն, որ Դարղաձեանցը իր կառավարչութենից թողել է ոչ պակաս քան մի հազար րուբլի բարեգործական նպատակով։

Բարեգործութիւնը հանգուցեալը այսպէս է հասկացել։ Մի հինգ հարիւր րուբլի թողել է ուսումնարանի համար, մի հինգ հարիւր րուբլի էլ այն նկեղեցու քահանաների համար, որի ծուխն է եղել ինքը։ Նա կարգադրել է, որ փողը դրվի առևտրական բանկի մէջ, իսկ իր նշանակած նպատակների համար գործադրվեն տոկոսները։

Դարղաձեանցը կտակը արել է առողջ դատողութիւնը վրան, հոգեպէս մխիթարվել է իր արած բարի գործից և հանգիստ ուղևորվել է դէպի այն աշխարհը, որտեղից այլ ևս չէ կարող վերադառնալ և հաշիւ պահանջել ոչ ոքից։

Անցել է տաճներկու տարուց աւելի։ Այժմ հարց է ծագել՝ արդեօք կատարված է այդ կտակը, թէ ոչ։ Ասողներ կան, որ կատարված է, կան և հերքողներ։

Փաստերը սրանք են։ Կտակած գումարի մի մասը չէ եղել։ Քահանաները չեն ստացել լումին իրանց հասանելիք տոկոսները։

Լուրեր են պատում, որ քահանաներին հասանելիք գումարը հալվել է և դարձել երեք հարիւր րուբլի։

Յամենայն դէպս մնացել է կէսից աւելի։

Ուրեմն եթէ թիւրիմացութիւն (ես կամաւ չեմ գործածում դևղծում խօսքը) կայ, նա մասնաւոր է և յամենայն դէպս կէսից էլ փոքր մասիճանի։

Եթէ այս բոլորը ճիշդ է և միայն չար լուրեղունների արդիւնք չէ, այն ժամանակ հարց է

digitised by A.R.A.R.@

ծպտում թե ինչպէս պէտք է այդ մտահաւոր թխբխմացութիւնը պարզել ու ցրել։

Շատ հեշտ է։

Կտակակատարը կամ այն անձը, ում ձեռքում գտնվում են տնզ չը հասած դումարները, կարող է յայտարարել հետևեալը. «Հաշուեցէք, քննեցէք, տուգեցէք և որքան պակաս կը լինի, այն գրէք ինձ վրա պարտք, որը ես մատ կը վճարեմ»։

Դա բնտանեկան, բարեկամական, ազգասիրական մի ձև է և եթէ կամենում էք՝ նոյն իսկ բարոյական և մարդասիրական։

Եւ ահա ինչու։

Աղմուկ չի լինի, մարդիկ չեն կորցնի իրանց անդորրութիւնը, չեն ենթարկվի չնչարգելութեան և ուրիշ հրաւանդութիւնների վատնդին, պղպակաները չեն վշտանայ և վերջապէս ոչ ոք չի գրքրի մարդու ներքին աշխարհը, որ սուրբ պէտք է մնայ։

«Ինչ որ պակաս է՝ կը վերադարձնեմ»—ահա նշանաբան, որին վերապահված է մեծ յաղթութիւններ և նուաճումներ անել խաչը գրամատան թխբխմացութիւնների ժամանակ։

Վերադառնանք մեր գործին։

Դարպաձեռանդի կտակի խնդիրը վերջնական ձևով ես չը կարողացայ պարզել և չը գիտեմ թէ արդեօք ում պէտք է դիմեմ, որ գործի հետ ծանօթանամ ճիշդ կերպով։

Ո՞վ գիտէ, գուցէ այստեղ մի չարախօսութիւն կայ, մի զրպարտութիւն կամ մի մեքենայութիւն, որպէս զի կտակակատարների վրա ստուեր գցված լինի անարդար կերպով։

Այդ մտատանջութիւնը ձայն տուեցի և այդ մտատանջութիւնը ձայնս յետոյ պատկերի հան-

digitised by A.R.A.R.@

գտանելու Բայց հազիւ աչքս փակեցի, ահա երազի մէջ իմ աչքի առաջ ցցվեց ինձ բոլորովին անծանօթ Ղարդաճեանցի անորոշ ուրուականը

Նա լուռ էր, բայց աղաչող և բողոքաւոր նրա աչքերը կարծես ասում էին «պաշտպանեցէք ինձ, դուք պիտէք, որ ես ինքս անկարող եմ գալ ձեր աչխարհը»։

Ես զգացվեցի։

—Բայց ինչպէս գանեմ ձեր կտակը և իմանամ նրա գործադրութիւնը ի՞վ, ասացէք, ով կօգնէ ու կը նպաստէ անելու այդ գիւտը, այդ անտէր գիւտը։

—Գիւտը...

Ես յանկարծ պարթևեցի։ Քունը փախաւ իմ աչքերից, իսկ արձագանքը կրկնում էր ականջիս՝

—Գիւտը... *)

Ես վճռեցի կտակներով այլ ևս երբէք չը հետաքրքրվել։

---

*) Տէր Գիւտ Ղազանեան այս առիթով հրատարակեց մի թերթ և փարատեց բոլոր թիւրիմացութիւնները հիմնաւոր թուերով, լուրջ առարկութիւններով և... յիշողներով։

digitised by A.R.A.R.@

XVII

(22 դեկտ. 1900 թ., «Մշակ» № 242)

Պէտք է անպատճառ վստահութիւն տուրս, թէ չէ՝ բանս վատ կը լինի։ Ինձ դէմ սպառնում են դատ բանալ իմ «Մանրանկարներ» մէջ անմահացրած ազգաէր-հերոսները։

Սպառնալիքներ սպառնալիքների ետեւից։ Եւ այն էլ սպառնում են դատի կանչել դիֆֆամացիայի օրէնքով։ Այսինքն՝ պէտք է ինձնից պահանջեն գրաւոր փոխումներ իմ գրածները հաստատելու համար։

Դուք կասէք, որ դիֆֆամացիայի օրէնքին դիմելը արդէն խայտառակութիւն է։ Բայց դուք ումնից ինչ էք պահանջում։

Դատ։ Շատ լաւ։

Համեցէք ասպարէզ։

Ի դէպ՝ չուտով կունենանք մի քանի ուրիշ հետաքրքրական դատեր։ Կաղզուանի յայտնի բարերար Զաքարիա Զանփոլադեանը դատ է անում «Մշակի» Կաղզուանի երկու թղթակիցների՝ Ս. Տէր-Ներսէսեանի և Մ. Ղազարեանի դէմ, իսկ Կարսի յայտնի եղիշէ վարդապետ Մուրադեանը Զանֆոլադեանի դէմ։

Կը պահանջվեն բազմաթիւ վկաներ։

Ո՞նչ էք կարծում՝ որքա՞ն։

Ա՞լ գիտէ՝ գուցէ ամբողջ Կաղզուան քաղաքն ազգաբնակութեան մեծագոյն մասը։

digitised by A.R.A.R.@

Այ կը լինի չքնդ տեսարան
Դատը իր կարգով. բայց լրագրական հերքումն էլ իրանց կարգով
Առաւած մի արասցէ մէկի մասին ասէք երբեք տող մի բան նա ձեզ կը պատասխանէ երբեք հարիւր կամ երեք հազար տողով
—Իմ հերքումը պէտք է տպվի անփոփոխ և լրովին, այլապէս կը դիմեմ օրէնքի ոյժին
Այս բառերով ճանապարհ է գցում հերքումը դէպի խմբագրատունը
Ի հարկէ խելքի գոհարները պէտք է անփոփոխ պահպանել
Անդրադէտ, չատախօս, անվաստ, անկաշկանդ հերքումներ՝ անփոփոխ տպվելու պայմանով
Բնորոշ է։

—

Անէծք, թէ օրհնութիւն
Երևանի թեմական դպրոցը, չար ու բարի տեսնելուց յետոյ, այժմ մի տեսակ նաւահանգստում է հասել նա գոհ է իր ներկայ տեսչից, որի օրով նա յոյս ունի կարգի բերել իր բոլոր գործերը։
Բայց միթէ չէք յանկանայ, որ այնտեղ դարձեալ տեսուչ նշանակվի չժիլկ Շահ-Նազարեան։
—Ինչպէս, վրդովված հարցնում է ընթերցողը, միթէ յայտնի չէ, որ Երևանի թեմական դպրոցի թէ հոգաբարձութիւնը և մանկավարժական ժողովը և թէ աշակերտները փառք են տալիս այն օրին, երբ ազատվեցին Շահ-Նազարեանի նման անշնորհք, անտակտ, իմաստակ տեսչից։
Այդ այդպէս է, պարոն ընթերցող։ Ես ևս ձեզ հետ համաձայն եմ։

digitised by A.R.A.R.@

Բայց Վիէննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը...

—Ի՞նչ գործ ունի նա այս հարցում։

Ոչինչ, ոչ մի գործ։ Նա միայն բարեմտութիւններ է անում։

—Հետաքրքրական է։

Ահա ինչ է ասում Մխիթարեան միաբանութեան բերանը՝

«Երանի թէ մեր միւս ազգային վարժարաններն ալ ունենային մէկմէկ Շահ-Նազարեաններ, որոնց «ջերմական ցանկութիւն» ըլլար դպրատանց մէջ որոշ ծրագիր մ'ու կարգ կանոն խոթել»

Պէտք է խոստովանեմ, որ ես սկզբում կարծեցի թէ «Հանդէս Ամսօրեայի» խմբագրութիւնը կատակ անելու տրամադրութեան մէջ է և ծաղր է անում։

Նորից ու նորից կարդացի։

Ոչ։ Լուրջ է ասում։

Ջնդ եմ հարցնում՝ օրհնութիւն է դա, թէ անէծք։

—

Ծանօթ թռչուններ, ծանօթ ձայներ, ծանօթ դայլայլիկներ։

Արդեօք ուշք դարձրիք դուք այն թղթակցութեան վրա, որ տպված էր «Մշակի» մէջ մի տասն օր առանից առաջ և վերաբերում էր Երուսաղէմի հայոց վանքի գործերին։

Յիշեցնեմ մի քանի կէտեր։

Վանքում կայ մշտապէս գործող մի տնօրէն ժողով, որ պէտք է գանձէ եկամուտները, անէ ծախսեր, բայց որը մի և նոյն ժամանակ ունի պարտականութիւն...

digitised by A.R.A.R.@

—Դարձեալ պարտականութիւն։ Սակայն ինչ է այդ պարտականութիւնը։

—Տարին մի անգամ հաշիւ տալ միաբանութեան ընդհանուր ժողովին վանքի եկեմուտքի և ծախսումնութիւնների մասին։

Անցնում են, անցնում տարիներ։

Բայց չը կան ու չը կան հաշիւներ։

Հին տնօրէն ժողովը, մնալով եօթ տարի իր պաշտօնի մէջ, չէ բարեհաճել տալու իր եօթ տարվայ հաշիւները։

Այժմ գործում է նոր տնօրէն ժողով։

Արդեօք սա պէտք է հաշիւ տայ, թէ ոչ։

—Ի հարկէ, ի հարկէ, միայն թէ պէտք չէ շտապել։

Նոյն վանքում կայ մի ամենազօր մինիստր և այն էլ ֆինանսների մինիստր։

Նրա պաշտօնը վանքի մէջ յայտնի է «եկեմտից տեսուչ» անունով։

Այդ մինիստրը թէ նախորդ և թէ՛ ներկայ տնօրէն ժողովների ատենապետն է։

Նա ներկայանում է իբրև դիւցազներգական մի անձնաւորութիւն, որի մասին ահա ինչ է ասում տարեգրութիւնը։

«Նա բոլոր գործերը իր ձեռքին մէջ ժողոված է։

«Նա ամպերէն վար չիջներ։

«Ոչ ոքի չի ներեր իր գործին խառնվելու։

«Առնել, տալ, գնել—միմիայն իր բացարձակ իրաւունքն է։

«Նա է, որ համարատուութիւնէն խոյս կուտայ։

«Նա ոչ իսկ տնօրէն ժողովը կարող է հարց ու փորձ անել ինքը։

digitised by A.R.A.R.@

«Ո և է դիտողութիւն աստիճ կը գայրայնէ ղինք...

«Ամենքն ալ, պատրաստրծով մէկ տեղ, անոր կամակատար աղուներ են»։ (Տես «Մշակ» № 131)

Ահա ձեզ մի դիւցազն,
Ահա ձեզ մի Գողիաթ,
Ահա ձեզ մի վիշապազուն
Ճահիճի մէջ,

Սակայն վանքի մէջ ակավել է մի մաքառում օլիմպիականների դէմ։ Մեր ժամանակի քայքայիչ ոգին կռիւ է յայտնել դիւցազուններին։

«Վանքը յուզման մէջ է։ Կենսատու հոլ մը ակած է փչել անշարժ ճահիճի մէջ»։

Տաճկաց անձ վարդապետներից և աղիկատներից ներկայացրել են պատրաստրքին մի պրուքեն, որով պահանջում են չուսում դուրս մարել միաբանութեան ընդհանուր ժողով և այդ ժողովին ներկայացնել տնօրէն ժողովք հաշիւները։

Որպիսի յանդգնութիւն։
Որպիսի ըմբռաւութիւն։
Սակայն միթէ ձև չը կայ հետայնել խռովարարներին։
կայ, ի հարկէ։
Լսենք թղթակցին՝

«Վանքերու հին ախտն է ասիկա՝ հետայնել, հետաւոր անկիւններ ձգել այն անձինքները, որոնք յանդգնութիւն կունենան վանական վարչութեան թուլութեան երեսէն տեղի ունեցած անհաւատարմութիւններու ու վնասումներու դէմ խօսել և բողոքել։ Այժմ Էրուսաղէմի մէջ մի և նոյնը տեղի կունե-

digitised by A.R.A.R.@

*Նայ: Բայց բողոքողները կարի՞ թէ չուտով
չը պիտի ընկճուին և արիւնքին պիտի ու-
նենան չը լսելու անիրաւ հրամանները:
Ի՞նչ կասէք
Ծանօթ չի՞ ձեզ այդ բոլորը:
Անկասկած ծանօթ է:
Ծանօթ թուչուններ, ծանօթ ձայներ, ծանօթ
դէմքեր:*

---

digitised by A.R.A.R.@

XVIII

(30 *դեկտ.* 1900 *թ.* «*Մշակ*», № 248)

Կատարված իրողութիւն է։

Այլ ևս չը կայ Սեւանից Արտախանեանցի «Մուրճը» և առաջիկայ յունվարից պէտք է սկսի հրատարակվել նոր շրջանի «Մուրճը»։

Կայ Հին-Բայազէտ և Նոր-Բայազէտ, կայ Հին-Ջուղայ և Նոր-Ջուղայ, կայ Հին-Նախիջևան և Նոր-Նախիջևան, կայ Հին-Շէն և Նոր-Շէն...

Թող տարբերութեան համար ևս էլ այսօր դրծ ածեմ Հին-Մուրճ և Նոր-Մուրճ անուններըս

Թէ ինչ կը լինի Նոր-Մուրճը՝ այդ ապագան ցոյց կը տայ նա յուսալի եղանակով է դրծ սկսում։ Բարեմաղթենք և ապասենք։

Բայց հետաքրքրական է մի փոքր հաշիւ տեսնել Հին-Մուրճի հետ։

Նա կատարելապէս անաչառութեան հանդիպել և անանկ հանդիպացաւ։

Իբրև գրական չաջողված գործի մի դէպք՝ դա մեծ երևոյթ է. բայց իբրև որոշ պատճառների հետևանք՝ նա բնական էր, լոգիկական և անխուսափելի։

Այդպիսի հետևանք սպասվում էր և տեղի ունեցաւ։

Ինչու էր անաչառ։

digitised by A.R.A.R.@

—Մինչ Սրապիոնյանցը չէր սիրում իր «Մուրճը» և գլուխ չէր կոտրում նրա համար, ի՞նչ հարցնէք դուք։

—Ինչպես չէր սիրում։ Սիրում էր, սիրում և իր սեփական խելքով չատ էր սիրում նրան։ Ջանի անգամ, ասում են, նա գրված «Մուրճի» համարները՝ բայլադանչում էր վերին-Ս.-դուլիսի բնության ոճով՝ «Ես կծեծըմ սա «Մուրճը»։

«Ես կծեծըմ սա «Մուրճը»—նշանակում է բան սա բան՝ ես կծել եմ իմ «Մուրճը», այսինքն թէ՝ ես սիրում եմ իմ «Մուրճը»։

Բայց իսկապես չատ սիրելուց կծել էր և կծում էր նա իր «Մուրճը», մինչև որ արիւնաքամ արել նրան.

—Մինչ չեն եղել Հին-Մուրճի» մէջ բաւարար յօդուածներ, ի՞նչ հարցնէք դուք։

Եղել են, կը պատասխանեմ ես։

—Մինչ չեն եղել այնտեղ աշխատակցելու պատրաստ անձինք։

Եղել են.

—Մինչ անկեղծ աշխատողներ չեն փորձել այնտեղ գրելու։

Փորձել են։

Այո, եղել են, փորձել են և հէնց այն պատճառով, որ եղել են, այո, հէնց այդ պատճառով, աւելի յաւալի, աւելի սրտաճմլիկ, աւելի ծանր է այդ գրական անաչողութիւնը։

Այժմ, երբ ախտը փաստը տեղի է ունեցել և անանկութիւնը պիտի է, մնում է... մնում է խրատական դասեր վերցնել եղած փորձից։

Երբ Աւետիք Արապիոնեանցը ձեռնարկում

digitised by A.R.A.R.@

էր ամսագրի հրատարակությանը՝ նա իրան մենակ չէր զգում։

Ես կարող էր մենակ չը զգալ։ Հատարակության մի մասի մեջ լավում էին երկար ու բարակ գրույցներ ամսագրի անհրաժեշտության մասին։ Ամսագիր հարկաւոր էր, ամսագրի պահանջ կար, ամսագրին վերապահված էր մի որոշ դեր։

Այդ ազդեցության տակ Արտախանեանցը գրեց իր ամսագրի առաջին համարում՝

«Որպէս առհասարակ ամսագիր — «Մուրճը» չէ կպչում հայ հասարակության չինքին,— ինքը հասարակությունը իր վրայ է առնում նրան։ Ամեն խօսակցություն, որ եղած է «Մուրճի» հրատարակվելուց և մինչև իսկ հրատարակման թոյլտուությունը ընդունելուց առաջ—մեզ հասնում են այդ բանի մէջ և հազիւ թէ մեր մէջ գտնվեն կասկածողներ այդ նկատմամբ։ Մենք գալիս ենք իր ժամանակին—այդ անկասկած է։ Այդ հանգամանքը ամսագրի հրատարակչի գործը շատ թեթևացնում է և նրա դրությունն իսկ դարձնում է ախորժելի, նախանձելի անգամ, եթէ ի նկատի առնենք, որ շատ հրատարակություններ, նամանաւանդ օգտակար, անգամ, այն, շատ կարևոր մասածող մարդկանց աչքում սիրված են եղած դեռ ևս ճանապարհ հարթել իրանց համար, դեռ ևս տարիներով շարունակվող յաղթանդամների են կարօտ եղած՝ իրանց օգտակարությունը և կարևորությունը ապացուցելու և հասարակությունից ընդունել տալու համար։ Ստատվանում ենք, երեքին խոստովանում ենք մեր դրության

digitised by A.R.A.R.@

աչուղակութիւնը. անկոչ հիւր չենք մենք, այլ կոչված»։

Տեսէք, թէ ինչ նպատակաուղղութիւն է եղել Հին-Մուրճի չուրջը նրա աշխարհ գալու ժամանակ։ Դա ինքը Արտախանեանցի անունն է տուել, բայց՝

Բայց ամսագրի հէնց այդ առաջին համարում երևան եկան և ապագայում գարգացան Արտախանեանցի այն դժբաղդ ու ինքնատիպ յատկութիւնները, որոնք կործանեցին վերջ ի վերջոյ այդ վաղուց սպասված «ըղձացած» հիւրը—«Մուրճը»։

Արտախանեանցը տարօրինակ սիրով էր սիրում իր «Մուրճը»։

«Իս կծեծըմ ամ «Մուրճը»։

Ամսագրի անկեղծ բարեկամների խումբը երկու երեք տարի տիտանական փորձեր արեց մաքառելու այն քայքայող և մաշող յատկութիւնների դէմ, որոնք կապված էին «Մուրճի» խմբագրի անձնաւորութեան հետ։

Մաքառումը արտաքոյ էր։

Ցաճախ տիրում էր վհատութիւն, բայց մաքառումը չարունակվում էր ապագայի յոյսով։

Եւ կար մի րոպէ, որ կարծես հաւատարկութիւնը ուզում էր հաւատ ստանալ դէպի ամսագիրը։ Սակայն բնորոշ է այն, որ այդ հաւատը ուժեղանում էր այն ժամանակ, երբ ամսագրի մէջ թոյլ կերպով էր «արտայայտվում» ինքը Արտախանեանցը, և թուլանում էր, երբ նրա արտայայտումը ուժեղանում էր։ Թէև ամսագիրը կարդի չէր ընկնում և նրա մէջ երբեմնապէս դուրս էին ցցվում ականջները, բայց և այնպէս մի նշոյլ կարծես նկատվում էր։

Սակայն անխորտակելի էր նշանաբանը՝ «իս

digitised by A.R.A.R.@

*կծեծըմ ամ «Մուրճը»։ Եւ այդ սէրը, որ թե-
լադրում է կծռտել և արիւնլուայ անել «Մուր-
ճը»՝ յուսահատեցրեց բոլորին.*

*Վերջապէս մի դեղեցիկ օր տիտանական
փորձերի հեղինակները տեսան, որ փրկել ամ-
սագիրը նրա խմբագրի կծելուց անկարելի է,
թողին ու հեռացան.*

Փորձեր արին և ուրիշները։

Բոլորն անապրող։

*«Հին-Մուրճը իր ծնվելուց յետոյ ներկայա-
ցաւ իրրև հիւանդոտ, անդամալոյծ, բախտից-
մով տկար մի երեխայ։*

*Սկան բժիշկները, շատ ջանք գործ դրեցին
առողջացնելու. բայց իզուր։*

*Հազիւ լաւացնում էին աչքերը, մէկ էլ տես-
նում էին, որ երեխայի ականջներն են խլացել։
Սկսում էին բժշկել լսողութիւնը, մէկ էլ տես-
նում էին, որ խանգարվել է ննջասրութիւնը.
Բժշկում էին ստամոքսը, յանկարծ կծկվում
էին ձեռք ու ոտքերը։ Սկսում էին դրանց
բժշկել՝ դարձեալ կուրանում էին աչքերը։*

Եւ այդպէս անվերջ։

*Այն կաթը, որ Արաքսիանանցն էր տալիս
իր «Մուրճին», թունաւոր էր և վնասա-
կար։ Իսկ նա ոչ միայն չէր ուզում կասկածել
այդ կաթի թունաւոր լինելու մասին, այլ
կրկնում էր՝ թող կամ այդ կաթը լինի, կամ
իսկի չը լինի «Մուրճը».*

*Սակայն, ինչպէս յայտնի է, ներկայ 1900
թւին այդ ձեռակերպութիւնը փոխվեց։*

*Սիրված, ըղձացած, «կծեծըմ» «Մուրճը»
յանձնվեց ուրիշներին փողի դնում։*

Նա ծախվեց։

—

digitised by A.R.A.R.@

«Հին Մուրճ» առաջին թիւնամին Արտախանեանցն էր։ Յետադայ տարիներուն այդ թիւնամութեան պաշտօնը ստանձնեցին նաև մի երկու գրական մանկլաւիկներ, որոնք արժանացել էին Արտախանեանցի գոհատանքներուն «Մուրճի» մէջ։

Եւ «Հին-Մուրճը» շարունակուած էր հրատարակիլել, հարկաւոր չը լինելով ոչ ոքի։

Փայտեայ ձի տեսել էք։

Արտախանեանցը ներկայանում էր իբրև մի այնպիսի ձիաւոր, որ հեծել է փայտեայ ձի և վազում է լուրջ դէմք ընդունած։ Նա աղաղակում է ճանապարհի պատահողներին «խաբար-դա, խաբարդա»։ Սակայն այդ աղաղակը տպաւորութիւն չէր գործում։ Մարդիկ վազում տալիս էին այդ աղաղակին։ Ոչ ոք տեղից չէր շարժվում, լաւ. դիտենալով թէ ինչ է ձին և ով է հեծնողը։

«Հին-Մուրճը» իբրև անկենդան մի բան, սառեց։

Եւ նա սաղարթան էր ամեն մի բնաղնաւոր մտքի և առեղծաղործող ոգու համար։ Թարմ բոլբոջները, երբ ընկնում էին «Հին-Մուրճի» ատամները, թառամում էին և թոչնում։

—

«Մուրճը» դարձաւ մի ձևական հրատարակութիւն, անկատար յօդուածների մի ժողովածու, մի խօսքով հրատարակութիւն, որի գլխաւոր արժանաւորութիւնն այն էր, թէ նա քանի էջ ունի, քանի տող, քանի հատոր։

Արտախանեանցը մի գլուխ թեյատրում էր ընթերցողին գոլտասանք «Մուրճի» վերաբերու-

digitised by A.R.A.R.@

Թևամբ։ Ամեն օր ընթերցողի աչքն էր կոխում «Մուրճի» ամեն մի տողը։

«Մուրճ» տապյորը ստիպված էր կարդալու մերձաւորապէս այսպիսի տողեր.

«Մուրճի» այս համարը ամենաամեծն է մինչև այժմ հրատարակվածներից նա չուրջ այսքան ու այսքան երես է»։

«Մուրճի» ներկայ համարում տպվում է NN-ի վէպը, որ իր համահաւասարը չէ ունեցել մեր գրականութեան մէջ»։

«Մուրճի» այս ինչ յօդուածը մի բոլորովին նոր ուսումնասիրութիւն է, որ առաջինն է ոչ միայն հայերի, այլ և ամբողջ կուլտուրական մարդկութեան մէջ»։

Եւ այլն և այլն։

Հասկանալի է, որ երբ «Հին-Մուրճը» դադարեց, հասարակութիւնը ոչ մի յաւ չը զղաց, ոչ մի կորուստի գաղափար չունեցաւ։

«Հին-Մուրճը» գոհ դարձաւ նրա խմբագրի անշահարհքութեան։

Լինելով անչափ եռանդոտ, փառասէր, ինքնագով, մեծամիտ, Արտախտանեանցը չէր կարողանում իր չուրջը խմբել գործող և մտածող մարդկանց։ Արտաքին լրջութեան և շիտակութեան տակ ծածկված էին դատարկութիւն և փարիսեցութիւն։ Եւ միայն մի յատկութիւն հիացնում էր չատերին. դա նրա յամառութիւնն էր, որ արժանի էր աւելի լաւ չանքերի, մի յամառութիւն, որ տակտից բոլորովին անապահով, անլօգիական վախճան ունեցաւ։

«Մուրճը», երբ պատրաստվում էր աշխարհ տեսնելու, արդարև կոչում ունեցաւ կարևորութեան մէջ էր։ Աշխարհ երևալով նա ստ-

digitised by A.R.A.R.@

Նախկին արեց սպասվող կոչումը Հատարակա-
կան և գրական պահանջները գոհ իրանց հա-
մար արտայայտութիւն էին «Մուրճը» մնաց
հասանելից և կեանքից դուրս

«Մուրճին» մօտենում էին մի քանի գրագէտ-
ներ, իբրև մի հիւրանոցի՝ այնտեղ օթևան
գտնելու, բայց և իբրև հիւրանոցից չուտով
թողնում-փախչում էին, որովհետև չէին գըտ-
նում այնտեղ ոչ լոյս, ոչ ջերմութիւն, ոչ խը-
նամք և ոչ մի հոգատարութիւն:

Ինչ դատապարտելի էր նա ծառայում
Ինչ «մատաղի» տէր էր նա:

---

digitised by A.R.A.R.@

XIX

Նոր տարվայ նուէրներ

(1 յունվ. 1901 թ., «Մշակ» № 1)

Նուէրներ էք ուզում նոր տարվայ առիթով։ Միթէ կարելի է աւելի մեծ, աւելի չքնդ, աւելի նշանաւոր և անմոռաց մի նուէր հնարել, քան այն, որ ինքն ըստ ինքեան մեզ բաժին է ընկել։ Մեր խօսքը քսաներորդ դարի մասին է։

Ընդհանուր նուէր թող նոր դարեմուտը լինի, թող քսաներորդ դարի սկզբնաւորութիւնը լինի։

Բայց, անկասկած, այդ չի գոհացնի ընթերցողին, որ ցանկանում է տեսնել նուէրներ՝ բաժանված իր հին ծանօթներին և այս ու այն հիմնարկութեան։

Փորձենք մի քանի նուէրներ տալու կամ բարեմաղթութիւններ անելու նախկին տարիների օրինակով։

Բարեմաղթենք առաջ սրտից և նուիրենք առաջ ձեռքով։

Սկսենք սուրբ վայրերից։

Էջմիածնին՝ աջահաւատքից, խաչահաւատքից։

Էջմիածնի ճարտարապետներին՝ սրբազեղ շինուածքների համար մրցանակներ։

digitised by A.R.A.R.@

Մեր աստուածաբաններին՝ մի քիչ երկիւղ Աստուծոյ
ճեմարանի աշակերտներին՝ չարաշրջութիւն մախոխի ազգային և առողջապահական նշանակութեան մասին
«Արարատին» ընթերցողներ (ամենաամեծ բանը, որ կարելի է ցանկալ այդ բաժանորդներով ապահովված ամսագրին)։
Բարեգործական ընկերութեան՝ այնպիսի համեստաձև բարեգործութիւն, որ ոչ ոք չը տեսնէ, և ոչ նոյն իսկ բարերարվողը։
Էժանագին գրադարանների՝ թանգագին համակրութիւն։
Սրէյփոխաններին՝ յետադարձ դէպի տասնութերորդ դարը։
Կօնախտաօրիաններին՝ իրաւունք հարկ նրանց վճարելու, երբ հարկը չը վճարեն։
Տէտիներին՝ տակտ կամ դրամական ցենզ՝ ձեռնադրվելու համար։
Մխիթարեաններին՝ Աւետարանի տեղ մի մի տոպրակ ոսկի՝ քարոզելու և հաւատալու համար։
Վաշխառուներին՝ «Որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։
Բազում առևտրական դպրոցին՝ խոստացած գումարները հաւաքված և բանկ դրված։
Նաւթագործներին՝ այնպիսի գուշակողներ, որոնք ասէին, թէ ինչ կայ հողի տակ։

digitised by A.R.A.R.@

Թատրոնի իսկական երկրպագուներին՝
Երիտասարդական քուն մինչև
ՄեծԱպաս, երբ կը գան նշանաւոր
երգիչներ և դերասաններ գաստրոլներու
Անգլիայէն՝ մի նոր Գլադստոնին
Բուրթերին՝ հօլլանդերէն թարգմանած «Ազնիւ ընկեր մեռանում եմ»
«Մուրճին» Նիկոդիմոսի առակը նորից ծընվելու մասին
Ախալքալաքցիներին՝ համբերութիւն
Հարուստներին՝ յիշել Ախալքալաքի համբերողներին
Բարեգործներին՝ նոյնը
Պարսկահայերին՝ Ֆիրմանին՝ հաւասարատեսիան գործունէութիւն
Օրմանեանին՝ հրաժարականների մի ծրարիկ
Տպարաններին՝ կոտրտած տառերի բաժին ցուցահանդէսում.
Մեր աշխատակիցներին՝ յաճախ տեսակցութիւն և պրպտութիւն

---

digitised by A.R.A.R.@

XX

(14 *յունվ.* 1901 *թ.*, «*Մշակ*», № 8)

*Արդեօք դուք ունեցել էք թարթաման*ների *հետ խօսակցութիւն*

Ես այդ բաղդը ունեցայ չնորհիւ մի դէպքի։ Պատմեմ ձեզ եղելութիւնը համառօտ կերպով։

Այդ խօսակցութիւնը, թէև պատահական էր և կարճատև, բայց բնորոշ էր։ Ես յետոյ մի քանի անգամ մտաբերել եմ նրան։

Ուրեմն հանդիպութիւն ունեցէք լսելու։

Նորերս ես վկայ էի կանչված նահանգական դատարան։ Գործը չնչին էր և իմ վկայութիւնը աննշան. բայց բաղդի չար կամքով ես վկաների շարքն էի ընկել և պէտք է դատարան գնայի։

Ծանուցագիրը յայտնում էր, որ պէտք է դատարանում ներկայ լինեմ առաւօտեան 10 *ժամին։*

Ես իբրև դատաստանական գործերի մէջ անփորձ մի մարդ՝ չտապեցի դատարան գնալ նշանակած ժամին։ Մտնում եմ դատավարութեան աւեհանը։ Դատաւորներից ոչ ոք չը կայ։ Միայն մի քանի ինձ նման անփորձներ ներս էին մտնում անվնաս ու դուրս գալիս կօրիդօր։

—Շուտ կը լինի, հարցրի ես։

—Ո՞վ գիտէ. գուցէ կէս ժամից յետոյ, բայց

digitised by A.R.A.R.@

գուցէ և երկու ժամից յետոյ, պատասխանեցին ինձ

Ի՞նչ անել։ Վերադառնալ, թէ մնալ։ Վճռեցի մնալ և սպասել

Նայեցի դէս ու դէն։ Ինձ հետաքրքրեց թուրքերի մի մեծ խումբ, որ կանգնած սպասում էր կօրիդօրի մի անկիւնում։ Բոլոր փախածները դրած՝ թուրքերը միմեանց ականջին ինչ որ քչփչում էին։ Նրանց միջից մեծ ինչ հետս կանգնած էր մի թուրք ծերուկն, որ մեայլ դէմքով նայում էր իր շուրջը։ Ես մօտեցայ նրան։

—Ի՞նչ բանի համար էք եկել, հարցրի ես ծերունուն։

—Էհ, էլ մի հարցնիլ, տղերքը մի չարութիւն են արել և այդ պատճառով մեզ քաշ են տուել այստեղ, պատասխանից նա վշտացած ձայնով։

—Ձեր դիւղումն է եղել, հարցրի ես։

—Հէնց այդ է յաւէրը, որ մեր գիւղիցն է՛ առաջ եկել այս ամբաստութիւնը, այս՛ խայտառակութիւնը, այս անպատուութիւնը։

Ես չէի սպասում այսպիսի անկեղծ վրդովմունք փախստեաների կողմից։

Որքան ուրախացայ, տեսնելով իմ առաջ մի պատկառելի նահապետի, որ այսպէս աստիճ դայրայել էր իրանց գիւղում տեղի ունեցած յանցանքի վրայից։

Սակայն յետոյ որքան մեծ էր իմ հիասթափութիւնը, երբ բանից դուրս եկաւ, որ ծերունին կատարված յանցանքից չէ զայրացել, այլ բոլորովին ուրիշ հանգամանքից։

Ի՞նչ էք կարծում՝ ինչ բանից։

—Գիւղի պատիւը, ասացի ես, պէտք է, իհարկէ, բարձր պահել։

digitised by A.R.A.R.@

—Հէնց այդ է է, գլուխը թաղ տալով վրա բերից ծերունին։ Աշխարհը փչացաւ։ Այլ ևս օր չէ անցնում, որ ազատ լինենք մատնութիւններից և մատնիչներից։

—Ինչպէս, հարցրի ես։

Հանելուկը բացվում էր։

—Ո՞վ էր մեր գլուխը թաղ տալիս։ Չարունակից Թուրք նահապետը, որ մէկը մատնէ մեծ արարքը դատապարտին։ Առաջ ոչ ոք այդպիսի ստորութիւն թոյլ չէր տայ իրան։ Լաւ էր առաջ այդպիսի բան։ Մենք սպանքա էլ դողայել ենք, սպանքա էլ կողոպտել ենք, բայց մեր արարքը, մեր հաշիւները, մեր արը մեր մէջ է մնայել, մեր գլուխից դուրս չէ եկել։ Այժմ մեր տունը խաղաղ քանդելու վրա է, որովհետև չատացել են մատնիչները։ Սա, պարան, ոսկեներտրդ գործն է այս տարի, որ դատարանին է հասել։ Մատնութիւնը մեր հոգին հանելու է և մեզ վերջնականապէս կործանելու է։

—Ի՞նչ սնոտիկի են այդ ոսկէ գործերը, հետաքրքրվեցի ես։

—Գլուխի մատանիներ էլ։

—Օրինակ։

—Մէկի ականներն էին գողացել, մեծ խոտի դէղերն էին կրակ տուել, երբորդի կնոջն էլն փախցրել—մի խօսքով գլուխի մշտական գաւ ու հոգսեր, որոնց հաշիւը երբէք չի վերջանայ։ Բայց այս մատնութիւնը, որ ակալել է, մեզ բոլորովին կը գլորի։

Թուրքերից մէկը մօտեցաւ մեզ և, դիմելով ինձ, կատեկյատար ասաց.

—Քեզ էլ մի դատարկ բանի համար, երևի, նեղութիւն են տուել Ծերունի մարդը գրուա

digitised by A.R.A.R.@

է ասում, որ գիւղի կռիւը պէտք է գիւղում
Տնայ Մատնելը լաւ բան չէր։

Մեր խօսակցութիւնը գրաւեց միւս թուրքերի ուշադրութիւնը։ Նրանք մօտեցան մեզ։ Ծերունին չարունակեց իր գանգատը մատնութիւնների մասին։

Ցանկարծ թուրքերից մէկը կատաղած կտրեց նրա խօսքերը և վրդովված ձայնով բացականչեց՝

—Իակ երբ դու, ծերունի, երեք տարի սրտանից առաջ գանգատվեցիր ինձ վրա ուրեմն կին, այդ մատնութիւն չէր։

Միւս թուրքերը ծիծաղեցին։

—Ես ուամ գանգատվեցի, այ երեխայ, պատասխանեց ծերունին։ Ես գանգատվեցի ուբնադնիկ Սադըղբէգին, որ ինքն էլ մեր հարաբակութիւնից էր։ Ես ձերոնց նման իսօ գաւառան չը վախեցի, օտարներին չը դիմեցի։

Ծերունու խօսքերը ազդեցին ունկընդիրների վրա։ Բայց հակառակորդը չը յուսահատվեց և պատասխանեց՝

—Դէ, ինչ ասեմ, Սադըղբէգի հետ դուք վաղուվայ ընկերակիցներ էք, միասին Արաքսի ափերն էք չափչփել ու լեռները ոտի տակ տուել։ Ես որ Սադըղբէգի կամ նրա նման մէկ ուրիշի մօտ գնայի՝ իմ կաշին էլ կը քերթէին, իմ պակաս տեղն էլ կը լրացնէին։

—Ամօթ է, ամօթ, նախատեց ծերունին, մեզ չի հազի մատնութիւնը. մենք գեաղաններ չենք, մեր պապերը իրանց պատիւը պահպանել են։ Մատնութիւնից ձեռք վերցրէք։

—Ամօթը թող քեզ լինի, որ ծերուն ես դարձել, մէկ ոտքդ գերեզմանումն է ու էլի գրկում ես ու վերաստում խեղճերին։

digitised by A.R.A.R.@

—Մատնիչներ, նամարդներ, բացականչեց ծերունին

—Գայլի համար հովիւը մատնիչ է, պատասխանեց հակառակորդը. դու մէկ ոչխարներիցն էլ հարցրու։

—Մատնիչներ, նամարդներ, կրկնեց կրակոտ աչքերով ծերունին։

Խօսակցութիւնը դարձաւ աղմկալի։ Դատարանի ապաստարններից մէկը մօտեցաւ թուրքերին և պատուիրեց, որ աղմուկ չը հանեն։ Թուրքերը լռեցին ու հեռացան դէպի միւս անկիւնը։

—

—Այդ ինչ աղմուկ էր, հարցրեց ինձ «որսկան» Կորեկեանը, որ այդ ժամանակ անցնում էր մեր մօտով։

Կորեկեանի անունը «որսկան» էին դրել այն պատճառով, որ նա միշտ պտտում էր դատարանի շուրջը, որոնելով և որսալով գործեր այս կամ այն փաստաբանի համար։ Այդ որսորդութիւնը նրան տալիս էր բաւական եկամուտ, որովհետև նա վերցնում էր փաստաբաններից որոշ տոկոս։

Կորեկեանը ինձ հետ ծանօթ չէր։ Բայց նա իրան պահում էր բոլորի հետ իբրև վաղեմի ծանօթ։

—Ի՞նչ աղմուկ էր, կրկնեց նա իր հարցը, յուսալով, ով գիտէ, նորից իր համար մի գործ ստեղծելու։

Ես պատմեցի։

Կորեկեանը քմծիծաղով լսում էր։ Յանկարծ նա խօսքս կտրեց և խորհրդաւոր կերպով հարցրեց.

—Մատնութիւն ասացիք ու միտքս եկաւ։

digitised by A.R.A.R.@

Ո՞րքան ճիշդ են իմ լաւ լուրերը, որ իրր թէ մեր մի երկու երէց-փոխաններին մատնել են։

—Մատնել են. ինչ բանի համար, հարցրի եւ։

—Ասում են այդ երէց-փոխանները եկեղեցական փողեր են տակով արել, պատասխանեց Կորնելեանը։

—Յետոյ։

—Յետոյ, էլ ինչ յետոյ, շատ վատ բան է դուրս եկել։

—Ի հարկէ, վատ բան է, ասացի ես, որ եկեղեցին կողոպտում է այն մարդը, որին յանձնել են նրա պահպանութիւնը։

—Դուք իմ ասածը չը հասկացաք, կտրեց իմ խօսքը Կորնելեանը. եկեղեցի կողոպտելը, ի հարկէ, լաւ չէ. բայց պէտք չէր բանը հրապարակ հանել, «մարաքա գցել»։ Մի՛թէ մենք չենք ճանաչում մեր երէց-փոխաններին, ոմն է նրանցից արդար։

Մեզ մօտեցան մի երկու ուրիշ անձինք և խառնվեցին խօսակցութեան։ Ընդհանուր վիճաբանութեան առարկայ դարձաւ այն, թէ եկեղեցի կողոպտելը պէտք է դատարանի քննութեան առարկայ դառնայ, թէ ոչ։

—Աւելի լաւ է մի փոքր դրամական վնաս ունենալ եկեղեցուց, քան եկեղեցու պաշտօնեային տեսնել դատաստանի տակ, վճռեց Կորնելեանը։

Այդ աղդասիրութիւնը շատ էր աներես և կապիտ Ոչ ոք չը համաձայնվեց Կորնելեանի հետ։

—Ես զարմանում եմ մի բանի վրա, ասայ մի ակնոցաւոր երիտասարդ, որ տեղի թէ անտեղի մեզանում գործ են ածում մատնութիւն բառը։ Մի՛թէ այնտեղ, ուր զեղծումներ գողութիւններ, խարդախութիւններ են մերկաց-

digitised by A.R.A.R.@

վուս, այնտեղ կարելի է մատնուեթիւն բառը գործածել։

—Մի վարմանար, մէջ մտաւ մի ուրիշը. դա կախուած է այն բանից թէ ծրտեղից է քաղին փչում երբ որ, օրինակ, վնասւում են մի Մամբրէ, մի Կիւրեղ, մի Սարգիս եպիսկոպոս և դրանց նմանները, այն ժամանակ յայտնի լամբի մարդիկ աղաղակում են թէ այդտեղ մատնուեթիւն կայ, իսկ երբ որ վնասւում են Յարէն Սահակեան, Լեւոն Յօվհաննէս, Երեմիա եպիսկոպոս և այլն, այդ ժամանակ ձնակերպութիւնը փոխւում է. «հէնց այդպէս էլ հարկաւոր էր»։

—Այդ ինչ է, հէնց մեռածների անուններ էք տալիս. մինէթ չէր կարելի օրինակ վերցնել կենդանի մարդկանց։

—Ոչ ոչ, մի տաք դրանց անուններըս Զգուշութիւնը լաւ բան է։

Ընդհանուր ժպիտ անցաւ բոլորի շրթունքների վրայով։

Մեր խօսակցութիւնը ընդհատուց դատարանի ատեանի մէջ ակսւած իրարանցումը։ Դատավարութեան գործը պէտք է շուտով ակսւէր։

—

Այդ օրվայ իմ տպաւորութիւնները՝ թարգմանների խօսակցութիւնը, կորեկևանի դատողութիւնները և միւսների նկատողութիւնները՝ մի քանի անգամ իմ միտքն եկան ես ատածելի նաև զանազան «նիւանսների» և նրբութիւնների մասին։

Նրբութիւնները իրանց կարգով։

Ինձ համար տակաւին մի բան միշտ պարզ է եղել և դարս կասկածներից։ Այդ այն է, որ գեղծումները պէտք չէ ծածկել և քօղարկել։ Եւ

digitised by A.R.A.R.@

ուժեղ է մի հիմնարկութիւն, մի գաղափար, մի հաւատայնք, մի ազգ այն ժամանակ, երբ նա այնքան բարձր է իր թերութիւններից և պակասութիւններից, որ կարող է դիմանալ մերկացումներին և քննութիւններին։

Իսկ այն անձանց, որոնք կամենում են իրանց գաղափարները, անհատականութիւնը և խարդախութիւնները ապահով կերպով առաջ տանել, յայտնի է թէ նրանք ինչ լուրթ պէտք է տարածեն հասարակութեան մէջ...

Գաւառական երէցփոխներ, արժանապատիւ քահանաներ, չնորհուսակ և բարեչնորհ ազատասէրներ, կօնսիստորիայի անդամներ, գանազան կարգի քարտուղարներ և ուրիշ ազգային պաշտօնեաներ—բայց է ասպարէզը՝ արձակ հասարակ գործելէք և արշաւելէք։ Դուք դիտէք, որ չատ հեշտ է կանգնեցնել մերկացնողների ձեռքը և պատանձնել նրանց լեզուն դիւթական գաւազանի չարժումով, արտասանելով «ամօնութիւն» բառը գանազան հոլովներով։

digitised by A.R.A.R.@

XXI

(21 յունվ. 1901 թ., «Մշակ» № 14)

Ես ստացայ Բագուից մի քանի նամակներ. Չեմ կարող պատմել ներանց բոլոր մանրամասնութիւնները, որովհետև մի քանիսը այնքան անապատելի և օտարոտի են, որ նոյն իսկ անհաւատալի են ինձ թւում, թէև ստացված են հաւատալի աղբիւրներից։

Նամակագիրներից մէկը ինձ հրաւիրում է նորից դնալ Բագու։ Այնտեղ նա խոստանում է ցոյց տալ մի շարք բնորոշ տեսարաններ և ծանօթացնել Բագուի ինտելիգենտ և ոչ ինտելիգենտ մարդկանց սերտագործութիւնների հետ։

Ցաւում եմ, որ այդ հրաւէրը չեմ կարող ընդունել, գոնէ առ այժմ, որովհետև ես պատրաստվում եմ մի ճանապարհորդութիւն կատարելու դէպի Էջմիածին։ Ես կուզենայի մնձ պասին, երբ ամեն տեղ վերջացած կը լինի բանկենդանի աղմուկը։

Այդ ճանապարհորդութիւնը կը լինի կարճատև և հարևանցի, իբրև առաջաբան ապագայ ճանապարհորդութիւնների համար։ Ես փոքր ինչ ընդարձակ պտոյտ կանեմ, որպէս զի այցելեմ չատ տեղեր։ Ճանապարհ կընկնեմ դէպի Ախալցխա, այնտեղից կանցնեմ Ախալքալաք, Ալէքսանդրոպոլ, յետոյ Էջմիածին ու Երևան և

digitised by A.R.A.R.@

կը վերադառնամ Դիլիջանի վրայով դէպի Թիֆլիս։

Դառնանք Բագուէն ստացած մեր նամակներուն։

—

Մի համակրական նամակով պ. Ա. Կամկամճեանը ձեռք է մեկնում այն մերկացուցիչներին, որ կատարում է մեր լրագրերը Բագուի դրամատէրերի վերաբերութեամբ։

—Ի՞նչ եղան մեր լուէալիստները, բացականչում է պ. Կամկամճեանը. նրանք չեն դիմանում կեանքի թեթև փորձանքներին ամբարտաւան Դնեստրին հանգուցեալ Արծրունին, քննելով իր ժամանակակից լուէալիստներին կեանքի յորձանքների մէջ, ասաց իր «հրաժարականը» և դրից իր «ժամանակաւոր լուէալիստներ» յօդուածը։

(Բաց եմ թողնում մի քանի անձնաւորութիւնների անունները)։

—Պէտք է անխնայ աշխարհ հանել, չարունակում է պ. Կամկամճեանը, մեր «դիպլոմատոր դէշեֆտամախներին», որոնք երեսներից պատռուել են համակրանք, բարոյական քաջը և ազնիւ, այն էլ չատ աչքով, մրցում են ազգական ձևով «փուղ դարելուսը» զանազան նաւթային Զիմզիմօլների հետ։

(Բաց եմ թողնում նոյնպէս նաւթ գողանալու յայտնի դարձած պատմութիւնը)։

—Դատարանում յայտնի դարձաւ այն, ինչ որ չը կարողացաւ թաղցնել Բայլ ևկէք և նաեյեէք, թէ ինչ է կատարվում զանազան անկիւններում։ Գուցէ մի ժամանակ այդ խայտառակութիւններն էլ երևան կը գան դատաստանի առաջ և հասարակութիւնը կը տեսնէ, թէ ինչ ցեխի մէջ է նա ապրում։

digitised by A.R.A.R.@

Նահակը վերջանում է հետևևալ խօսքերով.

—Եւ որ ամենից զզուելին է, այդ այն է, որ այդ դիպլօմատօր գեչեզամախէրները մարդասիրութեան, ժողովրգասիրութեան, ազգասիրութեան և անձնուիրութեան մասին են խօսում նոյն իսկ այժմ, երբ արդէն ճանաչել ենք բոլորս, թէ նրանք ինչ պատուիրեր են Մի խնամեցեք այդ վարիանցիներին։ Օրքան չուտ պարզվի իրականութիւնը, այնքան աւելի լաւ։

—

Մի նահակի մէջ նկարված է հետևևալ փոքրիկ պատկերը, որ վերցրած է Բալախանի մէնեղերիից։

Հարուստ ֆիրմաներից մէկում մի քանի տասնեակ տարիներից ի վեր ծառայում էր մի գործակատար։ Ծառայում էր նա ազնուութեամբ, ճշդասիրութեամբ, պաշտպանելով տիրոջ շահերը։

Ֆիրմայի գործերը մեծանում էին և ընդարձակվում։ Ֆիրման հարստանում էր և նոր ձեռնարկութիւններ սկսում։ Միայն մի բան մնում էր անփոփոխ և չէր մեծանում. դա գործակատարի ռոճիկն էր։

—Անկասկած, ինձ կը վարձատրեն, մտածում էր գործակատարը։ Կը գնահատեն իմ բազմամեայ հաւատարիմ ծառայութիւնը։

Սակայն այդ բանի մասին մտածող չը կար։ Իսկ գործակատարի ընտանիքը և նրա տպահովութեան հոգսը օրից օր մեծանում էին։

—Գնամ, յայտնեմ կառավարչին իմ դրութեան մասին. նա լուսաւորված մարդ է, նա կը հասկանայ։ Ինձ պատահաբար մոռացել են։

Եւ գնաց։

digitised by A.R.A.R.@

Ինժեներ կառավարիչը լաց ուշադրութեամբ և յետոյ հարցրեց.

—Ո՞րքան ոճիր ես առանում

—Յիսուն հինգ րուբլի

—Որքան ժամանակ է, որ մեզ մօտ ծառայում ես

—Արդէն քսանեօթ տարի. չուտով կը լրանայ և քսանուեթ տարին

Կառավարիչը փոքր ինչ մտածեց և յետոյ բարկացած հայեացքով դիմեց գործակատարին.

—Քսանուեթ տարի ծառայում ես այսպիսի հարուստ ֆիրմայի մօտ ու անբաւական ես Քեզ ամաչում Ամէնքը հարստացան, իսկ դու ոճիր աւելացնելու մասին ես մտածում Քանի քանիսը հէնց մեր գործակատարներից առաջ են գնացել իրանց ճարպիկութեամբ

—Դա ճարպիկութիւն է կոչւում

—Այո, իրանց ճարպիկութեամբ նրանք հիմնական գործեր են սկսել և այժմ հարիւր հազարների հետ են խաղում, իսկ դու եկել ես ցրվել և քո հաւատարմութեան ու աշխատութեան մասին մտալահաթներ ես ինձ պատմում կատրոզ ես քեզ համար ուրիշ տեղ ճարել Ոճիր աւելացնելու մասին իսօք լինել չէ կարող։

Գործակատարը մնաց առած-քարացած, կարծես իրրև մի մեղադրեալ, որին բռնել էին յանցանք գործելիս։

Գործակատարը մի ուրիշ օրը արձակվեց գործատանից։

Անկասկած՝ նա յիմար էր և անընդունակ։

—

Իմ ծանօթ բժիշկը, որին ես խնդրել էի հաղորդել ինձ պետական դիւղտութիւններ նա ա-

digitised by A.R.A.R.@

Թատրոնը հետաքրքիր մասին, ուզարկել է ինձ մի ընդարձակ հետազոտութիւն։

Ես մտադիր է այդ հետազոտութիւնը, իբրև զեկուցում, կարդալ համակուլկասեան բժշկական ժողովին, որ պէտք է կայանայ առաջիկայ աշնանը Թիֆլիսում, ցուցահանդէսի ժամանակ։

Ես կարդալի զեկուցումը ինձ համար անհամեմատելի էին լաբինական և ուրիշ մանրադիտական տերմիններով։ Բայց բաւական զարմանալի հանգամանք, որ դա ջղային և ուղեղային հիւանդութիւն է, որ տարածուած է մարդու թէ ֆիզիկականի և թէ մանաւանդ բարոյականի վրայ։

Նաեթացաւը մի տեսակ խելագարութիւն է, որ իբրև խելագարութիւն չէ նկատւում, երբ նա թեթև է և կամայ կամաց է առաջ գնում։

Նաեթացաւով հիւանդների վրա նկատուած են հետեւեալ նշանները։

Նրանք երեւակայում են, որ իրանք մի զբաղուած են և տաստիկ զբաղուած։ Թէև ամբողջ երեկոները ազատ են, գիշերները քէֆ են անում և առաւօտեան մի քանի ժամ նոյնպէս ազատ են, բայց ամենքին տարած են, թէ քիթ արնելու ժամանակ չունեն։

Նրանք մտածում են այն բոլորը, ինչ որ համաշխարհական և բարոյական նշանակութիւն ունեն։ Եթէ առաջ կարդում էին գիրք, լրագիր, խակոյն թողնում են, համարելով դրանց դատարկ բաներ։

Խակոյն մտածում են իրանց ընկերներին և նրանց մասին խօսած ժամանակ անուանում են «ջահել-ջհուդներ»։

Շուտով չեն ճանաչում վաղեմի ծանօթներին և չեն լսում ուրիշների ասածները։

digitised by A.R.A.R.@

Սաստիկ ցանկութիւն են առանում անփոխան կառք ունենալու, հանքային ջրեր գնալու (առանց պատճառի), չիմացած լեզուներով կոտրտելու և քաղաքական ամեն տեսակ դատողութիւններ տալու...

Բժիշկը թեւում է մի շարք ուրիշ նշաններ, որոնց համապատասխան կարելի է անսխալ ճանաչել նեւրաստենի գանազան աստիճանները։

Բժշկութեան միջոցներ ես այժմ չեմ գրելու։ Միայն մի բան նկատելած է, որ նեւրաստենի տարփական կամ կրիզիսի ժամանակ՝ հիւանդների չարտերը սխալ են։

Հիւանդութեան վարակիչ լինելը դեռ չէ ապացուցված։ Բայց նկատելած է, որ նեւրաստենիան տարածված է ոչ միայն նեւրոզով պատրաստված մարդիկ, այլ և նրանց շրջապատողների մեծագոյն մասը։

Մտաւոր գարգացումը, հասարակական կրթութիւնը ոչ մի արդիւք չեն հանդիսանում նեւրաստենի տարածման դէմ։

Մի նամակ տասնչոր. Ս. Էջմիածնից։ Այդ նամակը գրված է հեղինակին յատուկ ոճով և ոգևորութեամբ ես նրանից կանում խոշոր քաղուածքներ։

Մեծ նամակների մասին մի ուրիշ անգամ։

Ս. Եզնկեանի նամակից

Վրձին։

Չեզ, իբրև գեղարուեստի գործիք, ուզում եմ ես մերկութեան մէջ պահել, առանց այս-

digitised by A.R.A.R.@

թուխիւնը պարուրում է մինչև իսկ աստուածներին, որոնք սակայն միայն պարզութիւն են սերում։

Դու, վրձին, դրդուեցիր ինձ իմ լռութեան մէջ, ուր աշխարհից և մինչ իսկ մերձաւոր ու պինա'լից ընկերներից մոռացված թաղված եմ մի մշնուռ անկիւնում, և այդ մոռայլի մէջ նաւթի շողն էլ միայն փչում երեսիս։

Հեռու է, կարծես անչափելի ասպարէզներով հեռու, այստեղից մինչև Արարատեան երկիրը, մինչև Մասիսների երկնակապոյտին կից գաւառը, մինչև իջման նուիրված վայրերը։

Մի պտոյտ գործելով այս վիհի մէջ, որի անունը նաւթաշխարհ է, դու պտնում ես նրա ուղիների մէջ ու մի տեղ աւխուխելով հաւքրում ես այն հոգիները, որոնք երբեմն աստառում էին գեղեցիկ իդէաների երկընքում և որոնք այժմ դարահոսված թաւալում են Մթնաշխարհի ալիքների մէջ։ Դեռ լաւ է, որ կարողացար ճանաչել նրանց նոր պատեանի մէջ։ Թւում է թէ նրանք ուրախ պիտի լինեն կամ մխիթարված, որ իրանց յիշատակութիւնն արիր լոյս աշխարհում, թէև անունները ձուակճեպի մէջ թաղրած։ Զգայի, որ ես էլ եմ ընկած թեւահամարի մէջ. այդ մի փոքր տաքացրեց ինձ, սկսեցի խլրտվել և ահա կտրեցի ձուակճեպը՝ արի ճառագայթների տակ իմ գծուծ երևալու համար։

Տեսանենք, վրձին, դու երբեան ճշդութեամբ պատկերահանեցիր հոգիները, որոնց գծերը, սկզբնականները, նաւազում ու կարծես արդէն եղծվում են նոր միջնորտի մէջ։ Ինձ այնպէս երևաւ, թէ դու, գրաւելով համրերձ, թևեթև ինչ հնգնում ես այդ տարտղրված հոգի-

digitised by A.R.A.R.@

ներըը, որոնցից զօրութիւնը վերացել՝ զօրանջն է մնացել, յատկութիւն կարտաներին, որոնք դիլ ու մաքուր են հնչում, երբ անապատ է ներսը խոստումներ, մտադրութիւններ, «պէտք է անել, պէտք է անել», հատուչ դէպի անցեալը—ալացք աւելի նուանդոտների կողմից դէպի մի բաղձալի արշալոյս և յետոյ...

Ասանդում ին, թէ հովիւը Արտագծի բարձունքներում լինն է ձգել իր մականեր փայտը մի պատյտքի միջով կուլ է գնացել անդունդը և մի օր վեր է երևացել Մեծամօր գետի, որ ժողովուրդն այսօր Սև ջուր է կոչում, ակունքներում, ասել է՝ ճանապարհ գործելով լեռան աղիքների միջով՝ ներից լոյս աշխարհ ընկնելու համար փարթամ Մեծամօրի ջրերում, եղեգնուտների գիրկը, զմայլել բեղմնաւորութեան այդ խորհրդաւոր առագաստը։ Ո՜հ, որքան կը ցանկայի, որ հովիւ գաւազանին նման, անցնելով այս դժոխաչխարհի բաւիղների միջով՝ ներից վերին, լուսաւոր աշխարհում երևային այս տարտպիր հոգիները, որոնք վիշապ հողմի թևի վրա կամ գրոյցի Սև աշխարի մէջքի վրա ընկած՝ ածվել թաւիվել են դևերի թագաւորութեան այս ներքին աշխարհը։

Գալիս եմ այն դժերին, որոնցով դու ուրուագրել ես ինձ, կամ թեւում է թէ ինձ։

Օ՜, ես սիրել եմ ասկին, արդարև, այդ անխառն մեծալը ես ներանով զօծել եմ իմ բոլոր սիրելի գաղափարները, իմ պաշտած աստուածութիւնները, իմ ոգեշունչ մատենիկները։ Բայց, տեսար արդէն ինքդ էլ, չեմ կարողացել ներանով գրուատել ես ինձ. այլապէս կը տեսնէիր ինձ ոչ թէ

digitised by A.R.A.R.@

մի խորշում կծկված, աննշմար, անողջույն, այլ հրապարակի վրա ճոխալով ճեմելուն։ Ո՛ւ ինձ տեսնելը մի հրաշք է, վրձին ես չեմ ճանաչում հոգին, որ քեզ չարժուամ է. բարեկամներից կը լինի անշուշտ, որ քեզ յորդորեց յետ տանել աճիւնը, որի տակ թաղված էի ես բնթացքի Ղազարոսի նման։

Երազներին անյանգիստ երկար ես աքանչելիներն եմ տեսել և միշտ պիրտաւոր եմ եղել այդ եթերային տեսիլներին,—խուսափուկ երեւոյթներ։ Տակաւին մանուկ,—երբէք չեմ մոռանում,—գաշտի ամայութեան մէջ, երբ դեղձանիկ հասկը ալեծուփ ճօճվում էր Զեփիւռի հնչի տակ և գալարն ու բիւրատան ծաղիկ իրեն հրաշանկար սիրոյ գեղապարդում էին աչագրաւ կապոյտ վրանն, աստուածային երկնքի յատակը, ես հետամտում էի մի պիրտն թռչնիկի, որին իմ հայրենիքում լաթլաթ անունն են տալիս։ Հետամտում էի նրան։ Նա ինձ հրապուրում էր և թողնում էր մօտ գնամ այնքան, որ՝ էլի մի փոքր՝ ահա կը պարզեմ ձեռս ու կը բռնեմ նրան։ Սրտի թրթռոմով, ուշիկ ոտով, շունչս ներս ամփոփած հասնում և հասած էի գնում։ Արդէն զգում էի ափիս մէջ նրա փափուկ փետրի զոզորիկ շօշափը, բայց յանկարծ սրտի անոյշ ջերմը երկար։ Աչքս հառզիւ թարթած, տեսնում էի նրան ինձնից հեռու սլանալիս նորից էր իջնում, նորից էի մօտենում, նորից նոյն խաղը։

Այդպէս, իմ վրձին, հետամտանքի ես իմ երազներին լեռան այն երեսը, որի այս երեսում ինձ ծնունդ էին տուել ու մանկութիւնս օրօրել երկու երկնաճեմ լեռների միջավայրում,—երկու լեռնահսկաների թևերի մէջ պարփակ-

digitised by A.R.A.R.@

վաճ մնծանխատ դաչտում, ուր ժամանակի յեղափոխոխ արկածների հոլովոմով Արմաւիրը Երուանդաչատին, Երուանդաչատը Վաղարշապատին, Վաղարշապատն Արտաշատին, Արտաշատը Դուինին, Դուինն Անիին փոխանցում էին թագը, այն դաշտի արտում, ուր, երբն կիզակէտում, ամփոփված է անցեալի ատուերը, հետամտելի ես իմ երազին, իմ ոսկուն՝ որի արժէքումը ու շողքով վայելել ենք իմ սրտի խորքում ու մտքի խորշում այն իդէաները, որոնց անունը գծել ես դու, Վրթին։

Ժամանակով աստղ մէկն ես դրեց, թէ ես ելել էի որոնելու այնտեղ — վերջաբերի մայրաքաղաքում — մի այլ մեռած։ Անխաբ կատակ։ Անկարկված մեռածն այնտեղ չէ բովազրծվում։ Ծօգբս այդ մեռածի կնդջ պատկերի վրա չէ։ Ես այնտեղ, Անահտով եմ երջվում, իմ ոսկին էի որոնում։ Միամտութիւն էր։ Օ՛, եթէ միամտութիւն՝ ապա դա այն ժամանակ հաճաճարակ էր։ Ինչ և իցէ։ Մտածեցի թէ հա հիմա կը չօշափեմ իմ ոսկին։ Պարզեցի ձեռս. երեսցը լուծվեց. կակծում է սիրտս և չեմ ուզում մի սրտի բացատրութիւն տալ տեղումը գտածիս։ Ուրեմն, Վրթին, թոյլ տուր մի անգամ էլ յիշատակեմ իմ մանկութեան թռչնիկին.—երբ կարծում էի թէ ահա բռնեցի, թարթեցի աչքս, և տեսայ նրան լինելից հետս սլացած։

Սակայն չը վհատվինք, Վրթին. վերադառնանք մեր աչխոյժ երտւղներին։

Կաչնակահար, պաշտօնքդ։

Ճշմարիտ է ասել մեր հռետորը,—խախտեք զանգակները, որ՝

Քնածներըը չը մնան քնած։

Ա. Մ. Ե. Պ.

digitised by A.R.A.R.@

XXII

(28 յունվ. 1901 թ., «Մշակ» № 20)

Սեղանիս վրա դրված է «Մուրճ» ամսագիրը։ Անունը առաջվանն է, բայց էությունը ուրիշ է։ Федотъ, да не тотъ, ասում է առածը։

Ամսագիրը հագել է նոր շապիկ, փոխել է իր ձևը, ֆորմատը և որպէս զի ոչ մի կողմով չը յիշեցնէ Հին-Մուրճը, մակագրել է շապիկի վրա «Նոր շրջան» բառերը, և այդ նոր շրջանի հաշուով նշանակել է հրատարակութեան համար «I տարի» բառերը։

Ուրեմն մեր առաջ դրված է մի բոլորովին նոր ամսագիր, որ միայն պատահաբար կրում է եղած ամսագրի անունը։

Այդպէս էլ նայենք գործին։

Ամսագրի այդ առաջին համարը կազմված է այնքան լիակատար կերպով, որ կարելի է ուրոշ պաղպաղատ կազմել նոր խմբագրութեան դիտաւորութիւնների մասին։

Իմ և ձեր առաջ անկասկած հարցեր են դնում, թէ ինչ ուղղութեան է պատկանում Նոր-Մուրճը և ինչ ընթերցանութեան նիւթ է նա մատակարարում հասարակութեան։ Տեսնենք։

Ուղղութիւն ճիշդ է, ուղղութեան մասին մանրամասն յօդուած չէ զետեղված ամսագրի մէջ, սակայն նա պարզ է։ Թէրիմացութիւն-

digitised by A.R.A.R.@

նաերի ոչ մի տոհմ չէ մնում ընթերցողի համար, որ թերթել է ամսագրի յօդուածները։

Հասկանալի է, թէ ինչու։

Ամսագիրը անմիջապէս մտնում է այն խըմբերների շրջանի մէջ, որոնք կազմել են մեր առաջադէմ, ազատամիտ մտաւորի մշտական հոգսերի առարկան և յարում է այն պայքարին ու կռւին, որ տարիներ շարունակ այդ մտաւորը մղել է մեր երկրի և մեր ժողովրդի զարգացման արգելք հանդիսացող խոչնդոտների դէմ։

Թերթեցէք նորքին տեսութեան, գաւառական քրօնիկօնի և ուրիշ յօդուածների մէջ յիշատակված երևոյթները և դուք կը գտնէք մեր ծանօթ հարցերը այն լուսաւորութեամբ, որ արտայայտել է մեր առաջադէմ մտաւորի մէջ։

Թերթասիրութիւն չը կայ։

Եւ դա կարևոր է։

Հին-Մուրճը չը կարողացաւ մինչև վերջը պարզել իր դիրքը և ատիթ էր տալիս մշտական թերթասիրութիւններին։ Նա իր ամբողջութեամբ մի թերթասիրութիւն էր։ Նա անկարող էր կապել մարդկանց իր հետ և կազմել գաղափարական մի խումբ։

Թերթասիրութիւնը վերջացաւ։

Մի առաջաբանի մէջ, որ նոր խմբագրութիւնը գեռևղել է ամսագրում, չեչտված է, որ նոր ամսագրի նպատակն է միանալ այն մշտական մաքառման, որ մարդկութեան առաջադիմող մասը յանձն է առել հնացած և վնասակար դարձած հասկացողութիւնների ու կարգերի դէմ։ Այդ մաքառումը շատ անգամ չլսաել է մարդկանց ոյժերը, պահանջել է զոհեր, բայց նա վերջ ի վերջոյ յաղթող է հանդիսացել։ Նա

digitised by A.R.A.R.@

հող է պատրաստել աւելի լաւ հասարակական կեանքի համար։

Անշուշտ կենսական անաչառութիւնները և իրականութեան սարսափելի հարուածները, ասում է ամագիրը, չէին կարող վհատեցնել առաջադէմ գործիչներին, որովհետև հայեացք ունելով դէպի այն երկայն ճանապարհը, որ անթիւ զոհաբերութիւններով հասցրել է մարդկութիւնը ներկայ կացութեան... այդ գործիչները հիմք ունեն հաւատալու, որ ճշմարտութեան և արդարութեան գաղափարները, միացած տոկուն և անձնուէր աշխատանքի հետ, կարող են ամայի անապատներն անգամ դեղեցիկ բուրաստաններ դարձնել։

Ամագիրը չէ ցանկանում նեղ կերպով հասկանալ և բմբռնել մի որ և ազգի պատկանող մարդկանց գործունէութիւնը։ Նա կապում է նրան աւելի լայն և ընդարձակ գործունէութեան հետ, որի մասնակից են և ուրիշ ազգեր։

Մենք չենք մոռանում, ասում է նա, որ տարբեր են կեանքի պայմանները երկրի զանազան մասերում. իրար նման չեն հասարակական կարգերը, պետական կազմակերպութիւնները, կրօնական հայեացքները, ցեղական ընդունակութիւնները, տնտեսական դրութիւնները և մտքի ու ճաշակի առանձնայատկութիւնները. բայց մարդկութիւնը ունի և ընդհանուր կարիքներ, համամարդկային չահեր ու պահանջներ, որոնք ստիպում են ազգերին օրէցօր աւելի և աւելի մօտենալ իրար, եղբայրական օգնութիւն հասցնել միմեանց... Միայն այդպիսի ջանքերով էլ մարդկութիւնը կարող է հասնել արդարութեան

digitised by A.R.A.R.@

իդեալին, այսինքն ընդհանուր բարօրութեան։

Ի հարկէ այդ բոլորը շատ ընդհանուր գծերով է արտայայտված։ Իսկ մանրամասնութիւնների մէջ կարող են լինել տարբեր կարծիքներ։ Այդ պատճառով ես վերցրի ամսագիրը իր բոլոր ամբողջութեամբ, որովհետև ամսագրի բոլոր մասերը որոշվում է ճիշդ կերպով կեանքի երևոյթների քննութեան ժամանակ, երբ պէտք է կոնկրետ կերպով ներկայ ընդունել կամ հերքել, գովել կամ պախարակել։

Այժմ դիմենք մեր երկրորդ հարցին։

Ո՞նչ ընթերցանութեան նիւթ է տալիս ամսագիրը։

Այդ կէտը կարևոր և հիմնական մի կէտ է մանաւանդ մեր հայ գրականութեան համար։

Ոչ մի գրականութեան մէջ այնքան արհամարհանքի չէ մատնված ընթերցողը, որքան հայ գրականութեան մէջ։ Տեսէք, որքան հրատարակութիւններ ունենք հայերս, իսկ ընթերցանութեան համար դիւրամատչելի և ախորժելի—համարեա ոչինչ։

Գրում են անհետաքրքրական, անմշակ և ծանր ոճով։ Լցնում են ամբողջ հրատարակութիւններ այնպիսի դժուարամարս նիւթերով, որոնց կարդացողը յաճախ միայն ինքը հեղինակն է լինում։

Իսկ հասարակ ընթերցողը, ընթերցանութիւն սիրողը։

Նա սպասում է, սպասում և դիմում է վերջապէս ուրիշ գրականութեան, որտեղ աւելի հոգ է տարված ընթերցողի մասին։

Ո՞նչ օգուտ ձեր հրատարակութիւններից, երբ նրանք չեն կարդացվում։

digitised by A.R.A.R.@

Ուրախալի է տեսնել, որ նոր ամսագիրը հոդ-
ված է նվիրում դէպի ընթերցողը և տալիս
է բազմատեսակ նիւթ թէ ընդհանուր յօդուած-
ներ տրոնողների և թէ վիպական գրուածքներ
սիրողների համար։

Վիպական գրուածքներից յիշենք Լէօի՝ «Գիւ-
ղի մարդիկը», Անարոնեանի՝ «Ուշացած աէր»,
Դօդէի՝ «Ցրօմօն կրտսեր», Մօպասանի «Սար-
սափելի դէպք», Սենկեվիչի՝ Պօղնանի ուսուցչի
յիշատակարանից», Տօլստոյի՝ «Յարութիւն»։
կարդալու բան կայ։

Մենք կանգ չենք առնի ամսագրի յօդուած-
ների և նրանց գնահատութեան վրայ։ Աշխա-
տակիցների մեծագոյն մասը այն մարդիկն են,
որոնք գրում են «Մշակի» մէջ։ Մենք անյար-
մար ենք գտնում նրանց առհասարակ բաժա-
նել «Մշակի» էջերում։

Մենք խօսեցինք «Մուրճի» մասին, որքան նա
ներկայանում էր իբրև գրական մի նոր երևոյթ
սկսվող տարվայ մէջ։

Եւ մենք տեսանք, որ ամսագիրը կանգնած
է ուղիղ ճանապարհի վրա։

Ցանկանք աջողութիւն։

Թող ապագան աւելի ու աւելի ապացոյցներ
տայ, որ նրա բռնած այժմեան գիրքը աւելի
կենսունակ և արդիւնաւէտ է, քան այն, ինչ
որ էր «Մուրճը» հին խմբագրութեան ձեռքին։

—

Մի յօդուածի վրա սակայն մենք մտադիր
ենք կանգ առնել։

Դա Ց. Սպենդիարեանի յօդուածն է երէց-
փոխական հարցի մասին։

Հարցը մեր ընթացիկ հարցերից մէկն է։ Նա

digitised by A.R.A.R.@

դեռ չարուեստակուած է վիճաբանութիւնների առարկայ լինելու

Յօդուածը նպատակ ունի պարզել վէճը թէ ընդհանուր սկզբունքներով և թէ օրէնքի թեւլատրութեամբ։

Լուսաբանութեան համար վերցրած է, իբրև օրինակ, Թիֆլիսի Քաւթոլիկ եկեղեցին։

Վերջին տասը տարվայ ընթացքում այդ եկեղեցին ունեցել է չորս նրէպիոխ։

Իսկ զանազան իրաբանցումներ չորս անգամ չորս և աւելի։

Այդ նրէպիոխների վերաբերութեամբ տեղական կօնսիստորիան բռնել է որոշ դիրք՝ համակրական և անհամակրական։

Ո՞նչ հիմունքներով։

Մէկի վերաբերութեամբ կօնսիստորիան հեղինակի տանելով, եղել է ներողամիտ և բարեպաշտութեան մինչև օրինազանցութիւնն, մինչ դէմ ուղղել է վիրաւորական և թշնամական յայտարարութիւններ։

Պատճառը։

Թող չը կարծէ ընթերցողը, թէ հոգևոր տեսանի բռնած դիրքը առաջ է եկել նրէպիոխների լաւ և վատ պաշտօնավարութիւնից։

Բնաւ ոչ։

Կօնսիստորիայի տրամադրութեան բարօրէտը եղել է միմիայն նրէպիոխի անձը։ Եթէ նա յայտնի յատկութիւններով ախորժելի է եղել կօնսիստորիայի անդամներին, նա դարձել է persona grata և այն յատկանակը մի կողմ են չարտալել օրէնքի պարտաւորութիւններ։

Իսկ հետևանքը։

digitised by A.R.A.R.@

Հետևանքը այն է եղել որ տարինների ընթացքում՝ հակառակ օրէնքի դրական պահանջին՝ երէցփոխը չէ տուել ժամին տարեկան հաշիւ, իսկ կօնսիստօրիան չէ ստուգել առաջ ամէն երէցփոխի մատեանները։

Եւ յանկարծ մի օր ծխականները տեղեկացուած են եղել, վատնված են և կորած եկեղեցական գոյքեր։

Իսկ ընդհակառակը, այն երէցփոխները, որոնք օրինապահ են եղել և ապրել, բայց չեն հետևանդրել կօնսիստօրիայի այն պահանջներին, որոնք չեն նախատեսված օրէնքի կողմից, այդպիսի երէցփոխները ենթարկվել են հալածանքի։ Հեղինակը այդ հալածանքը նմանեցնում է «պատերազմական արշաւանքի»։

Այնուհետև յօդուածագիրը առաջ բերելով Պօլօժենիայի յօդուածները, ապացուցանում է, որ՝

Էջմիածնին պատկանում է եկեղեցական կայքի կառավարութեան ընդհանուր հակողութիւնը։

Իսկ երէցփոխին—կայքերի կառավարելը ծխականների որոշման և թելատրութեամբ։

Երէցփոխը պատասխանատու է համայնքի առաջ, որին նա պարտաւոր է ներկայացնել իւրաքանչիւր տարի իր գործունէութեան հաշիւը։

Ուրեմն երէցփոխը կօնսիստօրիայի այնպիսի տարաձրեալ պաշտօնեայ չէ, որ կատարէ նրա ամեն մի հրամանը։ Երէցփոխը ժողովրդի հաւատարմատարն է, նրա ընտրած պաշտօնեան, որ իր գործակատարութեան ընթացքում պարտաւոր է ղեկավարվել ծխական համայնքի հրահանգներով և տալ հաշիւ այդ համայնքին։

Հոգևոր վարչութիւնը մի հակող մարմին է։

digitised by A.R.A.R.@

Նա պէտք է հետևէ, որ օրէնքը գործադրված լինի և զանցառուԹիւնները տուգի չունենան։

Ապա փոգիըը։

Օրէնքը չէ տալիս կօնսիստօրիային իրաւունք կարգադրել եկեղեցական գումարները և ստիպել արէցխոխին կատարելու իր հրամանները այն գործերի վերաբերուԹեամբ, որոնց իրաւասուն ծխական հաւատացեալն է։

Այդ բոլորը ճիշդ է։

Եւ դժուար չէր այդ բոլորը հաւկանալ ու ըմբռնել։

Բայց չեն ուզում։

Ինչու։

«Մի արիւնոտ, սպառած Սարդիս,
Էս աշխարհի տղամէն»։

digitised by A.R.A.R.@

XXIII

(4 փետրվ. 1901 թ., «Մշակ» № 26)

Նորեկս ևս պատի ժամացույց գնեցի։ Ժամադրվեցինք առանց զանգակը ստուգելու, բերել կախել էր ժամացույցը իմ սեղանատան պատից։

Շուտով սկսվեց կատակերգությունը։

Կէսօրին ժամացույցի զանգակը խփեց ութ։ Դա ծիծաղ յարուցեց, բայց մի և նույն ժամանակ բարկություն պատճառեց։

Նոր ժամացույց գնե՞նք և այն էլ սխալ։

Բայց չուտով հանգստացանք։ Մտածեցինք, որ դժուար չէ նրան ուղղել։ Անհրաժեշտ էր սլաքը առաջ տանել մի չորս ժամով և ահա ամեն բան կարգի կընկնէր։

Սակայն դուրս եկաւ, որ ութը խփելուց յետոյ ժամացույցը խփեց ոչ թէ իննը, այլ երեք։ Մեքենան բոլորովին խանգարված էր։

Պէտք էր դիմել ժամագործին։

Երեկոյեան, թատրոն գնալուց առաջ, մտայ ժամագործի խանութը և յայտնեցի եղելութիւնը։

Խանութում հանդիպեցի իմ մի ծանօթին, որ երբ լսեց իմ զանգատը ժամացույցի մասին, բացականչեց՝

—Բա, դա դրուստ մեր ընկերութեան բանն է։ Այնտեղ էլ ամեն բան խառնըշտիված է։

digitised by A.R.A.R.@

Պարոնը Թիֆլիսի նաւթարդիւնաբերական ընկերութեան անդամներից մէկն էր։

—Ձեր բանը հեշտ է, աւելացրեց ծանօթս, ժամագործը կը գայ, կուղղի ժամացոյցը և ամեն բան կարգին կը լինի։ Բայց մենք ինչ անենք։ Ինչպէս ուղղենք մեր ընկերութեան գործերը։

Ժամագործի հետ խօսելուց վերջացրի և դուրս եկայ ծանօթիս հետ։ Մինչև ներկայացման սկսվելը դեռ կէս ժամ ազատ ժամանակ ունէի։ Ծանօթս էլ ցանկութիւն յայտնեց թատրոն գնալու։ Այդ օրը տաքս էին «Տիկնիկ» օպերետը, որ ռուսերէն յայտնի է «Игрушка» անունով, իսկ ֆրանսերէն կոչվում է «La Poupée»։

Այդ օպերետը մեծ աջողութիւն ունի Թիֆլիսում և կարճ միջոցում ներկայացվել է քանի անգամ։ Ծանօթս ուրախ էր ներկայ դէպքին, որ կը տեսնի այս մօդային օպերետը։

Վճռեցինք մինչև ներկայացման սկսվելը մանդալ պրօսպեկտում։

—Այդ ինչ է կատարվում ձեր ընկերութեան մէջ, հարցրի նրա։

—Ցեղափոխութիւն, քաօս. ճիշդ այնպէս, ինչպէս Ֆրանսիայում հարիւր տարի առաջ, քմծիծաղով և հեռուոքական շեշտով վրա բերեց իմ ծանօթը։

Նա պատմեց մի շարք կուրիօզներ ընկերութեան կեանքից։

—Վաղուց, ի հարկէ, աւելացրեց նա, քանդված կը լինէր այս ընկերութիւնը. բայց նրա վերցրած հողը լաւն է և նաւթը դուրս է գալիս առատութեամբ։ Դա է ընկերութեան երեսը պարզ անում։

digitised by A.R.A.R.@

Իսկապես՝ ընկերությունը մի շատ ծիծաղելի և ողբերգական վիճակի մեջ է։ Չէ կարողանում ընդհանուր ժողովներ կազմել և նոր ընտրություններ անել։ Իսկ վարչության անդամների մեջ երկպառակությունը հասել է ծայրահեղության։

—Ձեր ընկերության անդամների մեջ շատ կան բանիմաց և խելացի մարդիկ, ասացի ես, ինչո՞ւ չէք խմբվում և գործում։

—Այդ ճիշտ է, բայց չուառաթաչուառա մարդիկ շատ կան մեջներըս։

—Հետաքրքրական բառ է, նկատեցի ես, չուառաթաչուառա։

Ներկայացումը պէտք է սկսվէր։ Մենք մտանք թատրոն։

—

Ի՞նչ համեմատություն կարող է լինել, ընթերցող, «Տիկնիկ» օպերետի և Թիֆլիսի նաւթարդիւնաբերական ընկերության մեջ։

—Ի հարկէ, ոչ մի համեմատություն, կասէք դուք։ Օպերետում թեթև և զրաւիչ երգեցողություն, զուարթ ծիծաղ, հետաքրքրական տեսարաններ, ուրախ տրամադրություն, գեղեցիկ արդուզարդ, փայլ ու գոյն։ Իսկ նաւթային ընկերության մեջ՝ ամեն տեսակ կրքեր, չարություն, կատաղի բողոքներ, հայհոյանքներ, մազոտ, կուպր, մուխ և մուր։ Ո՛չ մի համեմատություն։

Բայց երևակայեցէք, որ կայ համեմատություն մի խաչոր գիծ։

—Հետաքրքրական է։

Այդ օպերետի մեջ դուրս է բերված իլտրիտա անունով մի վարպետ, որ չինում է շատ լաւ խաղալիքներ և տիկնիկներ։ Այդ խաղա-

digitised by A.R.A.R.@

Լքյունները և տիկնիկները անում են զանազան շարժումներ, արտասանում են ամբողջ նախադասություններ, երգում են զանազան եղանակներ... Ամեն մի գործողության համար խաղալիքներն ունեն յուրաքանչյուր կոճակներ կամ կնօպկաններ: Մատներդ դրեցիք մի որոշ կոճակի վրա և ահա տիկնիկը երգեց: Սեղմեցիք մի ուրիշ կոճակ՝ տիկնիկը կը պարի: Երրորդ կոճակը խօսեցնում է, և այլն և այլն:

Օպերետի մէջ կայ մի տեսարան, ուր մարդիկ սխալ են վերցնում և խառնում են կոճակները: Դրանից առաջանում է խառնաշփոթություն:

Օրինակ.

—Ինչպէս է իմ անունը, տիկնիկ, հարցնում է վարպետ Իլարիոնը, սեղմելով կոճակը:

—Ապուշ, պատասխանում է տիկնիկը:

Վարպետը վրդովված է: Նա սեղմում է ուրիշ կոճակ և նորից հարցնում:

—Իլարիոս, պատասխանում է տիկնիկը, ուղղելով իր սխալը:

Այնուհետև ամբողջ օպերետի ընթացքում շարունակվում է թիւրիմացութիւնների մի ամբողջ չարք, որոնց վրա և հիմնված է օպերետի հետաքրքրութեան մեծագոյն մասը:

Ահա այստեղից սկսվում է և իմ ակնարկած հանգամանութիւնը:

Կոճակները, կնօպկանները խառնվել են թիֆլիսի նաւթային ընկերութեան մէջ:

Ոչ ոք ոչ ոքի չէ հասկանում: Առաջ է եկել բաբելոնեան մի խառնակութիւն, որից ոչ ոք դուրս չէ գալիս:

Միջարարին ես նորից տեսանելիքի իմ ծանօթի և մի քանի ուրիշ անձանց հետ

digitised by A.R.A.R.@

Խօսք բացվեց այն նամակի մասին, որ տըպված էր «Մշակի» մէջ հաշւապահ Յ. Յակոբեանցի և վարչութեան անդամ Ս. Սրգուհանեանցի մասին։

—Այդ բոլորը ճիշդ է, բացականչեց մէկը։ Յակոբեանը ունի իր ձեռքին փաստեր, որոնք ցոյց են տալիս թէ կեղծիքներ են կատարվել վարչութեան մէջ։

—Ճիշդ է, ճիշդ չէ, դա երկրորդական հարց է, նկատեց մեւսը։ Ընդհարումը տեղի է ունեցել ոչ այդ փաստի պատճառով, այլ այն պատճառով, որ հաշւապահին մեղադրել են «դաղտնիքներ» դուրս տանելու մէջ։ Հաշւապահը զայրացել է այդ մեղադրանքից։

—Ոչ, այդպէս չէ, դա միայն վերջին կաթիլն է եղել՝ լցված բաժակի համար։ Փայտրի վերաբերութեամբ մի շարք զեղծումներ են տեղի ունեցել։

—Ոչ, սխալ էք։

—Դուք էք սխալ։

Ինչ ևնայց, որ թատրոնի փոյթում կրկնվի նոյն երևելի ընկերութեան նշանաւոր ժողովներից մէկի տեսարանը։

—Ներողութիւն, պարոնայք, մէջ մտայ նայստեղ թողէք ձեր վիճաբանութիւնը։ Դա ամենևին հետաքրքրական չէ։ Հաւատացէք, որ հետաքրքրական չէ։

—Ինչո՞ւ, պատասխանեց մէկը՝ խորամանկ կերպով խուսափ ու բաց անելով մի աչքը, այնտեղ գաղտնարական մարդիկ կան, այնտեղ կան զանազան գրական կուսակցութիւններ, կան և մշակականներ։

—Ի՞նչ, բարկացած բացականչեց նա։ Այդ էր պակաս Ով ինչ անուն ու դրօշակ ուզում

digitised by A.R.A.R.@

է այնտեղ խօթէ, բայց մշակական խօսքը այնտեղ երբէք չէ եղել և չի լինելու Այդ լաւ հասկացէք և սուտ միշտ միտներդ պահեցէք։

Զանգը խփեցին։ Մենք մտանք թատրօնի դահլիճը։

—

Ես յետոյ լսեցի, որ արդարն գտնվել են անբարեխիղճ անձինք, որոնք յանդգնել են այդ ընկերութեան խաղն գործերում մշակական անունով վարագուրել իրանց բռնած դիրքը այս կամ այն անձի դէմ։

Այդ աւիթով լսեցէք և մեր ասելիքը։

Ով դուք այժմեան հայասաւակորդներ, ընկերութեան գործերի համար միմեանց մէջ ատելութիւններ, դուք մոռացաք երէկվայ օրը, երբ դուք ձեզ շատ լաւ բարեկամներ էիք զգում միմեանց հետ և կուռ կռան գցած տոր տակ էիք տալիս ամեն բան։

Այդ ինչ բարեկամութիւն էր և այժմ ինչ թշնամութիւն է։

Ի՞նչ է փոխվել աշխարհում։

Ի՞նչ բարի գործ էք կատարել դուք, որով պարծենայիք և գաղափարական դրօշակի պէս ունենայիք։

Արդեօք ձեր փայերի մի քանիսը նուիրել էք բարեգործական որ և է հաստատութեան։

Արդեօք ձեր աշակերների համար ծրագրել էք մի որ և է արուեստական յարմարութիւն։

Արդեօք պաշտպան էք հանդիսացել ձեր խեղճ բաժնետէրերի խնայած կօպէկներին։

Արդեօք ձեր արդիւնաբերների մի մասը արուշել էք յաւակացնել որ և է բարի նպատակի։

Արդեօք անվճիտ կերպով էք տարել ձեր գործերը, որ օրինակելի լինէք ուրիշների համար։

digitised by A.R.A.R.@

Ոչ, ոչ և ոչ։

Ուրեմն, ինչու՞ համար է հարկաւոր եղել ձեզ դրօշակը։

Ձեզ հետաքրքրել է այն, թէ ով ամենից շատ վայելը ձեռքը կը գցի, թէ երբ նաւթի գինը լաւ կը բարձրանայ, որ անձնական չահը աւելացնի, թէ ով ամենից չատ պատառը իր կողմը կը գրաւի։

Միայն և միմիայն։

Այդ ընկերութեան մէջ դուք եղել էք ամեն բան, բայց ոչ մշակական։ Դուք եղել էք նաւթաչատական, «մուխ-գործ»-ական, աֆերիստական, միջամտական, գող-կիխոտական, գայլաբանական, ոչխարական...

Թերթմացութիւնը կատարեալ է։ Գայլերը հանդէս են եկել ոչխարներին պաչտպանելու։ Ոչխարները գլուխ են կոտրում գայլերին պաչտպանելու...

Կոճակները խառնվել են։

Բաբելոնեան կատարեալ խառնակութիւն է։

Մարդիկ գլուխները կորցրել են և միմեանց չեն հասկանում։

digitised by A.R.A.R.@

XXIV

(11 փետրվ. 1901 թ., «Մշակ» № 31)

Թիֆլիսում այս օրերս տեղի ունեցաւ մի յիշատակութեան արժանի ճաշկերոյթ։ Մամուլի և հասարակութեան ներկայացուցիչները, ժողովուելով «Լօնդօն» հիւրանոցում, հրաժեշտի մի ճաշկերոյթ տուին Ի. Միլիուտինին։

Ճաշկերոյթը հէնց առաջին րոպէներից առաջ մտերմական և արտայայտիչ բնաւորութիւն։

Այդ բնաւորութիւնը պահպանվեց մինչև վերջը առանց չեզոքանալու։

Ճաշկերոյթին մասնակցում էին առաններ, հայեր, վրացիներ և մի թուրք, որոնք այդ օրը խօսում էին ազգութիւնների համերաշխ և ազնիւ գործունէութեան մասին։

Գուցէ այդ ճաշկերոյթի ժամանակ արտասանած ճառերի մէջ ոչ մի նոր բան, ոչ մի նոր միտք չէր արտայայտված։ Բայց անկասկած է, որ այնտեղ յայտնված բոլոր հին ճշմարտութիւնները կրում էին ժամանակակից պահանջի կնիքը իրանց վրա։

Դրանք մոռացված ճշմարտութիւններ էին։

Մեզ համար ասացէք, ո՞ւմ կարող ենք զարմացնել «համերաշխ և ազնիւ գործունէութեան» մասին։

Ոչ ոքի։

digitised by A.R.A.R.@

Մի թե հազար անգամ չեն լրկնվել այդ բառերը։

Անկասկած։

Սակայն այդ բառերը արտասանվում էին առանձին շեշտով, սուր և բնորոշ մեկնաբանություններով։ Ութաքանչիւրը պիտէր, որ գործնական կեանքի մէջ խախտված են շատ էական պահանջներ, և զգում էր, որ նրանց իրագործութիւնը մի կենսական անհրաժեշտութիւն է։

Դուք, ինարկէ, պիտէք թէ ո՞վ էր Միլուտինը։

Նա «Кавказъ» լրագրի նախկին խմբագիրն էր։

Նա ազնիւ և փայլուն գործունէութեան ետևից չէր ընկել։ Նրա գործունէութիւնը այս համեստ և, եթէ կամենում էք, նոյն իսկ ժպտուն կերպով, պարունակելով իր մէջ երբեմն անհոգութեան նշաններ։

Բայց...

Բայց այսօր այդ գործունէութեան համար Միլուտինը համակրական անկեղծ ղգայմունքների արտայայտութեան արժանացաւ։

Ինչո՞ւ։

Որովհետև Միլուտինի յաջորդի օրով պարզվեց, թէ որ ատենաց կարող է գրական լուսքը այլակերպվել և այլանդակվել, երբ նա գրանվում է այնպիսի անձանց ձեռքում, որոնք Միլուտինի հակապատկերն են իրանց հասկացողութիւններով, հայեացքներով և գործելու եղանակով։

—Մարդկանց պէտք է միացնել,—ասաց Միլուտինը իր ճառի մէջ,—սիրով, փոխադարձ յարգանքով և համերաշխ գործունէութեան գաղափարով։ Ես հաւատում եմ այդ ուղղութեան

digitised by A.R.A.R.@

բարեբար արդիւնքներին։ Եւ իմ մի քանի տարւայ փորձը աւելի ևս ինձ համոզեց, որ ես սխալված չեմ եղել։

—Սգացութիւնները, ասացի ևս իմ հերթին, չեն խանգարում առաջադիմութեան գործին։ Արևգակի լոյսն էլ բաղկացած է ծիածանի գոյներից, ունի իր այսպէս կոչված դունաւոր ապեկտրները։ Բայց ոչ ոք չէ կարծում թէ ապեկտրների գոյութիւնը վնասում է արևգակի «սպիտակ» լոյսին սպիտակ լոյս լինելու։ Այդ բոլոր գոյները, խմբվելով միասին, առաջացնում են զօրաւոր և փրկարար լոյս։

—Մենք եղբայրներ ենք, ասաց մի ուրիշ ճառախօս։ Մենք կոչված ենք գործելու մի երկրի մէջ, ուստի և կարող ենք առաջ գնալ միայն գործակցութեամբ և փոխադարձ աջակցութեամբ։ Եւ մենք անկարող ենք մի արդիւնաբար գործ կատարել, երբ միմեանց կը խանգարենք, միմեանց արածը կոչնչացնենք, միմեանց կը հալածենք, միմեանց կը վնասենք։

Ես չեմ կարող մէջ բերել ուրիշ շատ հետաքրքրական ձևակերպութիւններ մի և նոյն հիմնական հարցի մասին։ Ձայնակցութիւն մասնակցողները տեսանում էին Միլիւտինի մէջ մի անձնաւորութիւն, որ լայն հայեացքներ ունի մասամբ ի և հասարակական գործունէութեան մասին, և բուռն ցանկութիւն էին յայտնում, որ այդպիսի գործունէութիւնը չը մարի, չանհետանայ, այլ վերականգնուանայ աւելի ևս մեծ ոյժով և եռանդով։

Ցանկերորդ անգամն է յայտնվում այդ ցանկութիւնը։

Սպասենք մինչև նա իրագործվի։

Եւ յիշենք այն գործողներին, որոնք, իրանց

digitised by A.R.A.R.@

ոյժը նեղածին չափ, նպաստել են նրա իրագործմանը։

—

Հայուհիները նոյնպէս ունեն ներկայացուցիչներ մեր գրականութեան մէջ։

Նրանք դեռ մեծ խումբ չեն կազմում, և նրանց անունները դժուար չէր մի առ մի թուել։

Հայ կին հեղինակների փոքրիկ խմբից պակասց մի նշանաւոր անուն։

Դա տիկին Սրբուհի Դիւսաբն էր, «Մայսա», «Սիրանոյշ» և «Արտաքսիս» երկասիրութիւնների հեղինակը։

Պօլսահայ գրականութեան մէջ տիկին Դիւսաբ յայտնի անձնաւորութիւն է և նրա գրուածքները պատկառելի տեղ են բռնում։

Մեր կովկասեան հայերի մէջ նա ընդարձակ ժողովրդականութիւն չէ վայելում։ Բայց այն անձանց համար, որոնք հետևում են հայ գրականութեան մէջ երևացող փոքր ի շատէ աչքի ընկնող գործերին, նա անծանօթ հեղինակ չէ, իսկ մի քանի շրջաններում նա բաւական յայտնի անուն է։

Եթէ ուշադրութեան առնէք այն հանգամանքը, որ առհասարակ թիւրքահայ հեղինակներից շատ քիչ գրական անուններ են յայտնի մեր կովկասում, ձեզ համար պարզ կը լինի, որ տիկին Դիւսաբ այդ կողմից համեմատաբար մեծ տեղ է գրաւել մեր մէջ։

Եւ արժանի է։

Արժանի է, ոչ այն պատճառով, որ նրա գրուածքները անպայման աչքի են ընկնում, իբրև հեղինակութիւններ, իբրև գրական գործեր։ Դա առանձին հարց է և մեծ վիճելի կողմեր ու։ Այլ այն պատճառով, որ նրանք շօշափում էին

digitised by A.R.A.R.@

կ ևնա ա ա լ ան հարց, որ նրանք պարտադրում էին իրանց մէջ մի որոշ չափով և դիրքով նոր մտքեր և նոր ձևակերպութիւններ։

Տիկին Դիւսաբ պօլսահայ գրականութեան մէջ դրեց կանանց հարցը։ Իր գրուածքների մէջ նա քննում էր կին մարդու, իբրև ա-ռանձին անհատի, իբրև ամուսնու, իբրև մօր, իբրև հասարակութեան անդամի կոչումը և կատարելիք գերը։

Ճիշդ է, տիկին Դիւսաբի գծագրած կանանց հարցը, թէև կրում է խիստ բողոքի և յանդուգն մաքառման կնիք իր վրա, ամենևին ծայրահեղ և համարձակ ձրագիրների ա-ւիւռում չէ։ Բայց նա առաջին քայլն էր, առաջին տրտունջն էր կանանց ստրկութեան կատաղութեան վիճակի դէմ։

Բողոք հարևմտեան հասկացողութիւնների դէմ։

Բողոք նահապետական հայեացքների դէմ կանանց կրթութեան և գործունէութեան վերաբերութեամբ։

Կինը, ասում է Դիւսաբ, իբրև առանձին անհատ, գոյութիւն չունէր։ Նա իր ամուսնու արձագանքն էր, նրա զարդ ու պաճուճանքը, նրա կողակիցը, նրա համար զաւակ ծնողը, իսկ իբրև ինքնուրոյն մարդ—նա զրօ էր։ Կինը նոյնպէս իրաւունք ունի մտածելու և անհրաժեշտ կարծիքներ ունենալու։ Կինը նոյնպէս կարող է հասարակական գործող լինել և բողոքել հասարակական զեղծումների դէմ։ Կինը իրաւունք ունի, կարող է և պարտաւոր է խորտակել այն չղթաները, որոնք կաշկանդել են կանանց սեռի անհատականութիւնը և գործունէութիւնը։

digitised by A.R.A.R.@

Տիկին Դիւսաբի ձայնը առաջին ուժեղ և ոգևորված բողոքող ձայներից մէկն էր պօլսահայ գրականութեան մէջ կանանց խնդրի վերաբերութեամբ։ Նա այն ժամանակ, երբ երեւաց հեղինակի անդրանիկ աշխատութիւնը, այն է «Մայտան», 1883 թուականին, թարմ էր և կռվկատում, ուր թէև շատ կային կրթված հայուհիներ, բայց հայ գրականութեան էջերում դեռ սակաւաթիւ էին կանանց խնդրի մասին ջատագովութիւնները։

Տիկին Դիւսաբ պտնվում էր եւրօպական գրուածքների ազդեցութեան տակ։ Նրա վէպերի մէջ դուք կրկնված էք տեսնում ծանօթ ձեւակերպութիւններ և հայեացքներ։ Բայց հէնց այդ հանգամանքը տալիս էր նրա գրուածքներին մի որոշ բովանդակութիւն և թարմութիւն։

Այդ դերը լաւ դեր էր և մեզնք նրան կը յիշենք։

---

digitised by A.R.A.R.@

XXV

(18 փետրվ. 1900 «Մշակ» № 37)

Հետս, հետս մնզանից, Տիրխան հոխոսմ, Տիրանակերտ քաղաքում անցնում 1900 թուականին տեղի ունեցր մի երևարատես կռիւ...

Կռիւը տեղական որբանոցի շուրջն էր։

Կռւում էին որբանոցի հոգաբարձութիւնը և առաջնորդական տեղապահ Եղեկիել վարդապետը։

Որբանոցի համար ընտրված հոգաբարձութիւնը ամեն կերպ աշխատում էր կարգ ու կանոնութիւն մտցնել որբանոցի բոլոր գործառնութիւնների մէջ։ Նա խստապահանջ էր դէպի ուսուցիչները և պաշտօնեաները։

—Ես ձեզնից աւելի լաւ եմ հասկանում ամեն բան, ասում էր Եղեկիել վարդապետը, և աւելի շատ եմ մտածում բարեկարգութեան մասին, ուստի դուք, հոգաբարձուներդ պէտք է համաձայնուիլք իմ կարգադրութիւններին։

Հոգաբարձութիւնը պնդում էր իր պահանջների վրայ։ Եղեկիէլը յամառում էր աւելի ու աւելի։

Տիրոջ «գրասենեակ» նրանց մէջ։

Ամբ լարված դրութիւն։

Ամբ դանդաղներ դէպի պատերազմ։

Հոգաբարձութիւնը դանդաղեց տեղապահ Եղեկիել վարդապետի վրա և բացատրեց հո-

digitised by A.R.A.R.@

պատրաստելու պահանջների իրագործելը

—Դուք գանգատվել էք վիճակից, ապառնայ ընկերը Տեառնից, թէ ինչ կը չահէք դուք պատրաստքատրանից

Եւ իսկապէս հոգաբարձուները ոչինչ չը չահեցին

Պատրաստքատրանը հարցը չը քննեց, գանգատը չը պարզվեց, այլ իրաւունք և յորդորեց ուղարկել երկու կամ կողմերին՝ միմեանց վիճելու և համերաշխ պտրաստելու

—Ինչը վիճենք, հարց տուին իրանց հոգաբարձուները Մինչ աչքներս փակենք տեղի ունեցող վնասումների վրայ Մինչ համերաշխութիւն հաստատենք՝ չետ կենալով մեր պատրաստքատրանից Մինչ բարեկարգված և բարգաւաճող որբանոցը մատնենք պատահականութեան հաճոյքներին

Նորից գանգատներ գնացին պատրաստքատրան

Նորից իրաւունք և յորդորներ եկան փոխադարձ վիճելու և համերաշխութեան մասին

Դպրոցական հոգաբարձութիւնը արձակեց որբանոցի մի անարժան դաստատ Եղեկիէլը նրան ուրիշ պաշտօն տալ խոստացաւ Այդ դաստատն յանդգնել էր որբերից մէկին դէպի անպատշաճութեան չափը մղելու Որբը պրաւոր կերպով ամբաստանել էր դաստատին

Քննութիւն բացվեց

Դաստատն արձակվեց

Իսկ Եղեկիէլը ամբաստան դաստատի տեղան առնելու և յանձնեց նրան Կիրակոս մայր եկեղեցու դպրապետութեան պաշտօնը

Նոյն Եղեկիէլը նշանակեց որբերի վրա մէկ

digitised by A.R.A.R.@

հակիչ պաշտօնակաց, որ ինչ առակ իրան անբարոյական գործեր և պատճառ եղաւ մի քանի սրբերի վռնտուելուն։

Հոգատարձուհինը մտքանց, մտքանց և յոգնեց նա ուզարկեց իր հրաժարականը պատրաստելու, բայց առնորից պատուիրեց համակերպել և գործը շարունակել։

Վերջապէս հոգատարձուհինը դիմեց իր հրաժարականով իրան—Եզեկիէլին։

Սա հէնց այդ բանին էր սպասում։ Խակոյն ընդունեց հրաժարականը։

Այդպիսով սրբանոցի համար սրդիւնաւէտ կերպով աշխատած հոգատարձուհինը քաշվեց սպասարէգից, անկարող լինելով տանել Եզեկիէլի վայրագութիւնը և պատրաստրարանի անիմաստ և ծիծաղելի իրաւունքները։

Այդպէս ընկան պատերազմի դաշտում նահատակ հոգատարձուհիները։ Հոգմները հանդարտվեցին և նրանց վերջին մրմունջների վրա հընչում է Եզեկիէլի յաղթական գոռում-գոչիւնը։

—

—Շատ ուրախալի է, որ մենք կոլկատացիներս առաջ ենք գնացել և մեր մէջ անկարող են գոյութիւն ունենալ նոյնանման դէպքեր, ասաց ինձ իմ բաւական մի ծանօթը, երբ ես նրան պատմեցի Տիգրանակերտի անցքերը։

Ես կամաց յայտնեցի։

—Օրինակ, մեր Ներսիսեան դպրոցում, շրջունակից ծանօթս, չէ կարող լինել այնպիսի խայտառակ դաստիարակ, ինչպիսին եղել է Տիգրանակերտում։ Ես եթէ այդպիսին երևան գար, նրան հետացնելը մի քանի ժամվայ գործ կը լինէր։ Այսօր, կոլկատում անկարելի է ա-

digitised by A.R.A.R.@

Ձախից մարմնի և նրա նախապահի մէջ, ինչպիսիները տեղի են ունեցել Միջագէտքի խոռոչ անկիւնաքարում Տարբերութիւնը շատ մեծ է։

Այստեղ ես դնում եմ կէտեր...

Ես ամենևին այնպէս լուսատես չեմ, ինչպէս իմ ծանօթը Գուդէ ևս լոռ չեմ ծանօթ մեր մէջ կատարվող գործերին և սխալվում եմ։

Գուդէ։

—

Մի թիւրքահայ դրողի յօդուածում ինձ հետաքրքրեցին Նոր-Տարվայ առիթով արած բնեռագրութիւնները։ Հեղինակը ժողովել է իր մի բարեկամի արած բարի գուշակութիւնները և հետաքրքրվելով նրանցով, յանկարծ նրանց մէջ տեսնել՝ պօլսահայերի առօրեայ մի քանի կարիքների մասին ակնարկներ։ Ներկայիս ևս չեմ ուզում մեր քանիսը։

Այդ բարի գուշակութիւնների համաձայն՝ ներկայ 1901 թուականին պէտք է տեղի ունենան հետևեալ միխիթարական երևոյթները։

Գաւառային առաջնորդները և առաջնորդական տեղապահները պիտի դադարին առաջին 12 ամիս փորի ցաւ, սրբի ցաւ, գլխի ցաւ... և ծոլութեան ցաւ ունենալէն։

Պատրիարքարանը պիտի սկսի ուշադրութիւն դարձնել ազգային թերթերու կողմէ եղած հանրօգուտ առաջարկներուն։

Լրագիրներու բաժանորդները իրր իրենց «սուրբ պարտականութիւն» չը պիտի նկատեն՝ իրենց կատարելու հանդարտութեամբ՝ բաժնեվճարները կուլ տալու սովորութիւնը։

Մեր հետևողական քահանաները օրինակելի վարք մը պիտի ունենան և հաւատարիմ իրենց կոչումին՝ առօրեական փոքրոտիութեան-

digitised by A.R.A.R.@

Նաեւ հետաւ պիտի մնան կին մը խոստովանացած միջոցին իրենց երէցկինը մըտքերնին չը պիտի բերեն Դրամ չը պիտի շրթեն եւ վերջապէս վաշխառութիւնը նախրական զգայուճներու կարգը չը պիտի դառնան

Մեր պաշտօնական մարմիններու կողմէ հաղորդուած ոեւէ գրութիւն կոկիկ ու դիւրահասկնալի աշխարհաբարով մը գրուած պիտի ընդայ (այն ժամանակ ուր կը մնայ մեր կօնսիստօրիաներն ու Ներսիսեան դպրոցի գրութիւնները երեսի գրաբարը)։

Գրականութիւնը պիտի մեր մէջ արուեստ մը դառնայ ու կարող արուեստագէտներ պիտի կրնան իրենց գրչին արդիւնքովը ապրիլ։

Չրի թերթ կարդալու մշակութիւնը պիտի վերնայ մեր մէջէն։

«Ձմրան խոհեր», «Աշնան մտածումներ», «Գարնան ցոլքեր» ու «Ամառուան չեմ գիտեր ինչեր» վերնագրով յօդուածներ պիտի վերնան լրագրութեան մէջէն՝ զամբիւղի մը ունուչիկ ծոյը քնանալու համար։

Այս բարեմաղթութիւնները ես վերցրի Աբրամ Անտոնեանի յօդուածէն («Արեւելք») մի քանի տողումներուն Դրանք ինձ հարկաւոր էին իբրեւ նմուշներ։ Յօդուածի հեղինակը չէ հաւատում, թէ այդ բարեմաղթութիւնները կարող են որեւէ դրական նշանակութիւն ունենալ մերձակայ ապագայում։

Եւ իրաւունք ունի։

Բարեմաղթութիւններ մեր մէջ շատ են անվում, թէ հաւատքով ու իդէալական և թէ պզոյշ ու հաշուեան բարեմաղթութիւններ։ Սա-

digitised by A.R.A.R.@

Ոչ ոք անպատասխան են շատախոսները, ամբիոնները և ասպարեզները միանգամայն նոսրանում են. բայց շատ քիչ միանձնատուկան երևույթներ են հանդիպում պատմության մեջ, որ մենք լուռ դարերի ընդհանուր ոգուն հանդիպած. իսկ դուք ապրում էք ասպետ դարերում, այն էլ մի ասպետական գործողի պահանջները։

Մեծ դուք հաւատում էք, որ հասարակական գործողները պէտք է յանկարծակի դառնան ահեղ պատուհասներ քան են իրապէս

Մեծ քահանաները պէտք է ջանեցած կերպարանքը և պաշտամունքը հրաշքով ասուածներից։

Մեծ վաչխատուները պէտք է խղճահարելին և իրանց գոհերին չիշեն։

Մեծ Եզեկիէլները, որոնց անունը լեզուն է, պէտք է յանկարծ ընտելանան յարգելու պինդ գործողների պահանջները։

Բարեհաղթութիւնները կը մնան իբրև զարհուրելի ընթերցանութեան կտորներ, իբրև... կատակներ։

Սակայն մինչև երբ։

Գուշակեցէք։

---

digitised by A.R.A.R.@

XXVI

(25 փետրվ. 1901 թ., «Մշակ» № 43)

Այս տարի Թիֆլիսում մի տարօրինակ ձմեռ ունեցանք։

Կարծես տեղափոխվել էինք Ն ի ց ց ա։

Ամբողջ ձմեռվայ ընթացքում եղանակը պարզ էր, բառացի տաք և աւելի նմանուում էր գարնան առաջին ամիսների մեղմ եղանակին։

Այս շատ լաւ էր։

Բայց արդեօք վերջացաւ ձմեռը, թէ ոչ—սա հա ինչ մենք չը գիտենք։ Մի գուցէ յանկարծ ձմեռը յետ-յետ մտածէ և յանկարծ վերադառնայ մարտ կամ ապրիլ ամսին։

Սհա այդ յանկալի չէ։

Ո՞վ գիտէ ինչ կարող է պատահել։ Օրինակ, Թիֆլիսի արքունական թատրօնում ներկայացման ժամանակ դուք տեսնում էք, որ մի տեղ լուսինը մայր մտաւ, մթնեց և յանկարծ նոյն տեղից դարս եկաւ արեգակը։

Այդպիսով երկնքի մի և նոյն կողմը ներկայանում է թէ իբրև արևմուտք և թէ իբրև արևելք։

—Ասում են, որ հիւսիսում, բևեռների մօտ, այնպիսի տեղեր էլ կան, ուր արևը հազիւ մայր է մտնում ու այնտեղից էլ ծագում է, կամ թէ ամբողջովին մայր չէ մտնում։

Հիւսիսում, բայց ոչ Թիֆլիսում։

digitised by A.R.A.R.@

Սակայն դժուար չէ արևելքին վերադարձնել իր տեղը։ Պէտք է միայն թատրօնի վարչութիւնը այդ ցանկանայ։

Ուրեմն դա՞ ուղղելի բան է։

Բայց երևակայեցէք, եթէ Ամուրը նորից վերադառնայ, բերելով իր հետ բուք, ձիւն և վնասի ծառերին, բանջարանոցներին։

Դա դժուար ուղղելի է։

Նոյն Թիֆլիսում կարծես վերադարձել է Ամուրի թատրոնական սեզօնը։ Արքունական թատրօնը իր դաստրօններով այժմ աւելի է հաստատութիւն դրաւել, քան Ամուրի ամիսներում։ Արտիստական ընկերութեան նոր բացված դահլիճներում ամեն օր տեղի ունեն զանազան երեկոյթներ՝ հայոց մշտական խմբի ներկայացումներ, ուսաց սիրողների ներկայացումներ, կօնցերտներ, պարահանդէսներ։ Վրաց թատրօնում ֆօկուսներ։ Եւ այլն։

—Կատարեալ Պարիզ է դարձել մեր Թիֆլիսը, երէկ ասաց ինձ իմ խօսակիցներից մէկը։

—Ես իմ սովորութիւնները պէտք է փոխեմ, ասում էր ինձ իմ խօսակիցներից մի ուրիշը, այսուհետև ես Ամուրի ամիսների ընթացքում պէտք է զուարճութիւնների վերաբերութեամբ պաս պահեմ մինչև բարեկենդանի վերջանալը և յետոյ միայն պատի երկրորդ շաբաթից սկսեմ զուարճանալ։

—Էհ, ինչ վնաս ունէք, հանգստացրեց ուրիշ խօսակիցը։ Տարվայ բոլոր եղանակներում էլ ունէք ամեն տեսակ զուարճութիւններ կարգադրեցէք ձեր ժամանակը, ինչպէս կուզէք և կամենում էք։ Այդպէս է և Պարիզում։

—Այո, լաւ էք ասում, միջամտեցի ես, բայց

digitised by A.R.A.R.@

ցանկալի է, որ տարվա բոլոր եղանակներում գոյություն ունենան և ուսանելի, մատչած ամեն տեսակ զբաղմունքներ, որպէս զի ընտրողը կարողանայ և այս և այն ընտրել։

—Էդ էլ իժուամ, կամայ կամայ, ինչ ես չասպուամ, հէր օխնած, վրա բերիմ իմ երրորդ խօսակիցը։

—

—Աշնիւ եղէք, չահամոլ մի լինէք, բարի գործեր կատարեցէք։

Այսպէս քարոզում էր աէրտէրը մեր եկեղեցիներից մէկում։

—Լաւ է ասում, քրիստնէայ իմ ականջին հարևանս, բայց ախտս որ ինքը բոլորովին հակառակն է անում։

—Պաշտպանեցէք եկեղեցու չահերը, հարբատացրէք նրան, բարեկարգեցէք, չարունակում էր աէրտէրը։

—Լաւ է ասում, նկատեց իմ հարևանը, բայց եկեղեցու առաջին թշնամին ինքն է, կողոպտում է անխիղճ կերպով։

—Մենք ժողովրդի ընտրածներն ենք։ ժողովրդով ենք ապրում, ժողովրդով ենք ուժեղ։ Արժան անարժանը դուք էք որոշում, դուռում էր քարոզիչը։

—Լաւ է ասում, մրնջաց իմ հարևանը, բայց տեսէք այդ անմեղ գառը ինչ կախարներ է կտրում ժողովրդի գլխին։

Տէրտէրը քարոզում էր, իմ հարևանը իր նկատողութիւններն էր անում։ Ես միաժամանակ լսում էի երկու զուգընթաց ճառախոսութիւններ։

Քահանան այդ օրը մտքումը դրել էր քարո-

digitised by A.R.A.R.@

ղի մէջ վատաբանել այն, ինչ որ նա ոտի տակ էր տալիս իր գործնական կեանքում

Արդեօք կարծել էր նրա քարոզը ապրուստ ունենալի լինել

Ահա այդ հարցը զբաղեցրել էր մեզ, երբ մենք դուրս էինք եկել եկեղեցուց և իսկի բան չէինք խոսում

—

Շատերը միջամտեցին ասվածը վէճին և շատ երկար էլ խօսեցին

—կեղծաւոր և խարդախ մարդու քարոզած մաքրութիւնը և ազնուութիւնը չէ կարող ազդել ժողովրդի վրա, նկատում էր խոշորների մի մասը

—Թող քարոզը իսկ ազնուութեան և բարեխղճութեան մասին, պնդում էր միւս կարծիքը, նա դատապարտութիւն է անարժան քարոզչի վատ գործերի համար և յանձնային դէպս մխիթարութիւն և խրախոյս է ժողովրդի համար

Այո, ոչ, այո, ոչ

վերջապէս յաղթող հանդիսացաւ երկրորդ կարծիքը, որ քարոզը պարզեալ հարկաւոր է, թէկուզ նա բղխէր անարժան շրթունքներից

Վիճողների մէկը, վէյդենեան, որ դժգոհ էր վէճի ստացած վախճանից, դուրս թափ տուեց և ասաց.

—Պարոններ, թոյլ տուէք մի փոքր պատմութիւն անեմ իմ կեանքի դէպքերից

Ծօսակիցները ցոյց տուին անհանգստութեան նշաններ, նրանք վախենում էին, որ պատմութիւնը երկարանայ, իսկ արդէն տուն գնալու ժամանակ էր

—Կարճ կը լինի ասելիքս, հանգստացրեց վէյդենեանը։

digitised by A.R.A.R.@

—Լաւա՛մ ենք։

—Եօթանասնական թուականների սկիզբն էր։ Ես պաշտօնով գնացել էի Շամախի։ Ես հետաքրքրւում էի քաղաքի հնութիւններով, բնակիչների նիստ ու կացով։ Մի կիրակի առաւօտ ես իջել էի թուրքերի թաղը և նայում էի մեչիլին վերադարձին ինձ կանգնեցրեց իմ նոր ծանօթներից մէկը և հարցրեց թէ արդեօք չեմ ցանկանալ մտնել լութերականների աղօթատունը, ուր պէտք է տեղի ունենար քարոզ։ Ես համաձայնվեցի։ Գնացինք աղօթատուն։ Հաւաքվել էին ունկնդիրներ։ Շուտով սեղեակի ձակատին երևաց պաստօրը, որ և սկսեց իր քարոզը։ Նա խօսում էր հայերէն, հասկանալի ոճով։ Նա քարոզում էր ինքնավստահութեան, անվեհերութեան և հաստատակամութեան մասին։ Քարոզի գլխաւոր չարժառիթը Շամախում կրկնվող երկրաշարժներն էին։ «Չեղ մի կորցնէք, հաւատում էր պաստօրը, վոչքրոզի մի լինէք, մի վախենաք հողի սոնն մի թևթև ուրուսից. դուք կորցնելով ձեր վստահութիւնը՝ վախեցնում էք ձեր չրջապատողներին, ձեր պաւակներին, ձեր հարևաններին։ Դրանից աւելի ոճով է գալիս ընդհանուր սարսափ, յուսահատութիւն, հոգու լքումն։ Իսկ դա դէմ է Աստուծուն։ Մի վախենաք։ Երկրաշարժը չատ անգամ անցնում է առանց մեծ հետևանքների...» Բոլորը լուռ էին մեծ ուշադրութեամբ։ Ինձ դրաւել էր քարոզչի հանգարձակ և անվհատ հայեացքը։ Նա մի անվախ հերոս էր աստուծի թուլութեան ապիրանում։ Նրա ձայնը իսկապէս հանգստացնում էր և տալիս էր վստահութիւն։ Յանկարծ սենեակը երերվեց թեթև երկրաշարժից։ Ես սկզբում չը հասկացայ

digitised by A.R.A.R.@

թէ բանը ինչումն է։ Սկսվեց երաբանյուամ։ Տեղացիները ծանօթ էին երկրաչարժի խաղերին։ Հարևանս չդնջաց իմ ականջին, որ տեղի ունի երկրաչարժի ցնցուամ։ «Անցաւ, աղաղակեց մէկը, հանգստացէք, ոչինչ չի լինի»։ Եւ իսկապէս երերումը չը շարունակվեց։ Մենք դիմեցինք կաթեդրային լսելու քարոզի վերջը։ Բայց ոչ զարմանք և խայտառակութիւն։ Պատօրը չը կար, նա անհետացել էր։ Բանից դուրս եկաւ, որ մենք՝ ուսկնդիրներս մնացել էինք մենավոր մեր տեղերուամ, իսկ մեզ վատահութիւն և անվհատութիւն քարոզող պատօրը առաջինն էր եղել, որ փախել էր փորձութեան դաշտից։

—Ես վերջացրի իմ պատմութիւնը, յայտնեց ծաղրական հայեացքով վէյդենեանը։ Ինքներդ դատեցէք,—քանի գրօշ արժեն այդպիսի քարոզները։

—Էթէնց էլ կու պատահի, նկատեց մի ծերուկն։ Աշխարք է։

Մենք ցրվեցինք դէպի մեր տները։

digitised by A.R.A.R.@

XXVII

(4 մարտի 1901 թ., «Մշակ» № 49)

Մի տանջանք է մեր փողոցներում մանգալը: Այնտեղ, ուր տալայատակ չը կայ, քիչ է մնում տաքերդ կոտրտես: Իսկ այնտեղ, ուր տալայատակված է և լաւ մայթեր կան, այնտեղ էլ կանանց զգեստներն են փուչի բարձրացնում: Այն էլ մանրամասն ամպի նման, խեղդող փոշի:

Կարծես կարելի էր այնպէս բարեփոխել կանացի զգեստը, որ փոշու քուլաներից մենք ազատ լինէինք:

Եւ այդտեղ հարկաւոր չէ մեծ յեղաշրջումներ և խոշոր փոփոխութիւններ կատարել:

Մենք այժմ այնպիսի արմատական յեղափոխութեան մասին չենք խօսում, ինչ որ ցանկանում են, իրագործել, օրինակ, Անգլիայի միսխում կանայք:

Դա դեռ շատ ջուր կը քաշի:

Մենք այն բանի մասին ենք խօսում, որ կարելի է հնչտութեամբ իրագործել:

Ի դէպ, Անգլիայի այդ կանանց մասին:

Լօնդօնում գոյութիւն ունի կանանց մի ընկերութիւն, որի գլխաւոր նպատակն է բարեփոխել կանացի զգեստը:

Այդ ընկերութեան անունն է Rational Dress League», այսինքն «խելացի զգեստի միութիւն»:

Մի քանի ամիս սրանից առաջ այդ ընկերու-

digitised by A.R.A.R.@

թևան անդամուհիները մեծ հետաքրքրութիւն և զուարճութիւն պատճառեցին Լօնդօնի բէյսուօթեր թաղի բնակիչներին։

Ընկերութեան բազմաթիւ անդամուհիները՝ հագած տղամարդու անդրավարտիկներ՝ անցնում էին փողոցներով։ Գնացքը կատարվում էր հանդիսաւոր կերպով։ Կանայք ունէին լուրջ և յաղթական հայեացք։ Ներանց մէջ կային բարձր դիրքի ընտանիքներից շատ անձեր, որոնցից մի քանիսը ճար խօսեցին այդ օրվայ ժողովում։

Վիկօնտուհի Հարբերտօն իր գեղեցիկ կապած ճաոի մէջ ցոյց էր տալիս, որ կանայի զգեստը, բարձրացնելով փոչի, ջնաւում է մարդկանց առողջութեան, որնա փողոցից դէպի տուն է տեղափոխում կեղտ և հիւանդութիւն, որ նա զրկում է կին մարդուն ազատ շարժուններից և որ նոյն իսկ նա պատճառ է կանանց աւելի սուր վիճակին՝ տղամարդու հետ համեմատած։

Խօսում էին և ուրիշները։

Մանաւանդ խիստ կերպով խօսվից կօրանալի դէմ։

Ընդհանուր ժողովը միաձայն որոշեց դէն դնել դերիան և ընդունել տղամարդու անդրավարտիկը։

«Կեցցէ անդրավարտիկը — կեցցէ bloomers» աղաղակում էր և ծափահարում կանանց ընկերութիւնը։

Ի միխիթարութիւն մեր կովկասցիների կարող եմ յայտնել, որ կովկասում կան տեղեր, ուր փոքր ի շատէ իրագործված է անգլիական կանանց ընկերութեան տենչանքը։

Ես աչքի առաջ ունեմ Դաղստանը։ Այնտեղ կանայք պարտաւոր են կատարել իրանց գաշ-

digitised by A.R.A.R.@

տային բոլոր գործերը և վաղուց յարմարեցրել են այդ բանի համար իրանց զգեստը՝ աշխատանքի ժամանակ հագնելած են այնպէս, որ ազատ կարող են շարժվել։

Դաշտանքի այդ կանոյքը կարող կը լինէին անգլիական National Dress League ընկերութեան պատուաւոր անդամուհիներ ճանաչվել առաջին։

—

Ես հետս գնացի և Թիֆլիսի փոշին մոտայայ։

Քաղաքային վարչութիւնը պարտք է համարում փողոցները չրել, որպէս զի փոշին պակաս լինի։

Բայց չրողները այնպէս անչնորհք են չրում, որ մարդ այլ ևս չէ կարողանում փողոցով անցնել։

Ինչ է ինում, որ մարդ առևնաչոր եղանակին էլ կրկնակօշիկներ հագնէ յատկապէս քաղաքի չրած փողոցներով անցնելու համար։

Շատ հասկանալի է, որ որչ կէտերում փողոցը պէտք է ցամաք պահվի անցորդների համար։

Այդ կէտերը կան և յայտնի են. բայց ոչ ոք չէ ուզում նրանց վրա ուշադրութիւն դարձնել։

Ասենք օր զբօսանողները վէճի են բռնվում այդ առիթով չրողների հետ։

Այնպէս է թուում, թէ դուք համոզեցիք չրողներին և նրանք ձեզ հասկացան։ Բայց նոյնը կրկնվում է և հետևեալ օրերը։

Այդպէս անվերջ։

—

Փողոցի ցեխից և մայթերի փոշուց ազատ-

digitised by A.R.A.R.@

վեր։ Նպատակով երէկ ես նստեցի ձիաքաշի կառքը։

Բայց այդտեղ էլ ինձ հանգիստ չը թողնեց ձիաքաշի ծառայողների վերահսկողը, կօնտրօլեօրը։

—Ցոյց տուէք ձեր տոմսակը, դիմաց նա ինձ։ Ես որոնեցի, գտայ և ցոյց տուի։

—Տուէք ինձ, ասաց նա։

—Մէթ բաւական չէ, որ տոմսակ ունեմ, նկատեցի ես։

—Օչ, ես պէտք է ինքս տեսնեմ, մրթմրթաց նա։

—Համեցէք։

Վերահսկողը վերցրեց տոմսակը, մոդրեց և յետոյ մի փոքր պատուց ու վերադարձրեց ինձ

—Ինչու պատուեցիք, հետաքրքրվեցի ես։

—Ստուգութեան համար, ասաց նա ու դիմեց հարևանին։

Զարմանալի է։

Զարմանալի է այն պատճառով, որ այդ կօնտրօլեօրները, ինչպէս երևում է, ձիաքաշի ծառայողներին ստուգելու համար չեն նշանակված, այլ հասարակութիւնը ստուգելու և նրան վերահսկելու։

Զարմանալի է (եթէ դորձ չածենք աւելի արժանաւոր ածականը)։

Սակայն մէթ այդպիսի հսկողութիւն դորձադրվում է և այն երկրներում, որտեղից ձիաքաշը եկել է մեր կողմերը։

Ի հարկէ, ոչ։

Ի հարկէ, երբէք։

Այստեղ յաճախ տոմսակներ էլ գոյութիւն չունեն. իսկ կան դէպքեր, երբ վճար պահանջող էլ չը կայ։

digitised by A.R.A.R.@

—Ինչպե՞ս, կը հարցնէք դուք։

—Ահա ինչպէս, կը բայատրեմ ես։ Կառքի մի ծայրում դրված է մի արկղ, որի մէջ իւրաքանչիւր մարդ ինքը գիտէ սահմանված վճարը։

Այնտեղ հաւատ կայ դէպի հասարակութիւնը, հաւատ դէպի մարդկանց չիտակութիւնը։

Թողնենք այդ դեռ մեզ համար գուցէ անյայտ մարմար ձևը։ Բայց գոնէ մի զգուշացրէք մեզ ձեր անվերջ կօնտրօլներով։

Ստուգեցէք ձեր պաչտօնեաներին, բայց ոչ մեզ։

Կարծեմ պարզ է։

Սակայն ինչպէս կարելի է։ Կօնտրօլիօրն էլ մի իշխանութիւն է։ Ինչո՞ւ նա իր ոյժը չը փորձէ սմանն մի քաղաքացու վրա, որին վճարակվել է ձիաքաշի կառքը նստել։

—Ահա, ես ինչ ոյժ ունեմ, սուտ են ձեզ նրա դէմքը և աչքերը. ես իրաւունքներ ունեմ. կարող եմ նոյն իսկ վայր իջեցնել կառքից, եթէ պատուէրս չը կատարէք և տոմսակը չը տաք։

—

Ձիաքաշի հարևանս, որի հետ խօսեցինք ձևականութիւնների և չիմար ձգձգումների մասին, պատմեց ինձ հետևեալ եղած կամ դուցէ հնարած դէպքը։

Մի բարեգործական ընկերութեան խնամքին ուղարկված էին երեք քոյր որբեր յանձնարարական նամակով։ Ընկերութեան գործակալները կարդայ յանձնարարականը, նայեց թշուառ աղջիկներին, դարձեալ կարդայ յանձնարարականը, ճակատը տրորեց, նայեց խեղճերին, մըտածմունքի մէջ ընկաւ, նորից կարդաց յան-

digitised by A.R.A.R.@

Նարեկականը և յետոյ դարձաւ ապատով աղջիկներին.

—Դուք հարուստ քոյրեր էք, հարցրեց Նա։

—Այո, պատասխանեցին նրանք։

—Ի՞նչ անուն՞։

—Զմրուխտ։

—Ի՞նչ՞։

—Գոհար։

—Ի՞նչ՞։

—Ալմաստ։

—Երեք թանգագին քարեր՝—զմրուխտ, գոհար և ալմաստ։ Այդպէս սասյիք չէ՞, հարցրեց դարձաւալրը։

—Այո՛։

—Մի քիչ երեքդ էլ որբ էք, շուարած և կարծես վրդովված հարցրեց դարձաւալրը։

—Այո։

—Երեքդ էլ։

—Այո։

—Որքան ցաւալի է, մրմնջաց դարձաւալրը։ Երեքդ էլ որբ, երեքդ էլ որբ, երեքդ էլ որբ...

—Ինչպէս կը հրամայէք մեզ ընդունելու մասին, հարցրեց մեծ քոյրը։

—կարող ենք օգնել միայն ձեզնից մէկին։ Այո՛։ Սակայն անկարելի է։

—Ի՞նչ է ասում, ճչացին խեղճերը։

—Շատ-շատ, կարելի է երկուսին, ասաց դարձաւալրը ահռելի ձայնով։

—Իսկ երրորդին։

—Անկարելի է. երրորդին անկարելի է։

—Ապա նա ուր գնայ, ինչ անէ, հարցրեցին աղջիկները։

—Նա ուր գնայ, նա ուր գնայ։ Ճիշդ հարց է։

digitised by A.R.A.R.@

Այն ժամանակ նրան կը վերցնենք, իսկ ձեզնից մէկին կը մերժենք։

—Մթէ այդ մի և նոյնը չը դուրս եկաւ, բացականչեցին աղջիկները։ Ո՞ւր գնայ մերժուածը։

—Այդ էլ ճիշդ է, վրա բերեց գործակարը, բաւական դժուար հարց է և, ըստ երևոյթին, անվերջ։ Այնպէս է դուրս գալիս, որ պէտք է երկքիդ էլ ընդունենք։

—Ինդրում ենք, աղաչում ենք, աղերսեցին որբերը։

—Հը՞։

—Ինդրում ենք, կրկնեցին թշուառները։

—Լաւ, թող այդպէս լինի։

Եւ այդպէս էլ եղաւ։

Ընդունելեցին երկքն էլ։ Ընդունելը դժուար չէր, որովհետև դեռ էլի մի ուրիշ հոգու համար ազատ տեղ կար հիմնարկութեան մէջ։

—

Հարևանս վերջացրեց իր պատմութիւնը։

—Ուրեմն, ինչու էր հարկաւոր գործակարին այդքան խօսք ու զրոյց, հարցրի ես։

—Ինչո՞ւ։ Որպէս զի ցոյց տայ, որ այնքան էլ հեշտ չէր մտնել աքքայութիւն և որ արքայութեան բանալիները իր ձեռքումն են։

digitised by A.R.A.R.@

XXVIII

(7 *մարտի* 1901 *թ.*, «*Մշակ*», № 51)

Նեղ թղթակիցներ։

Որքան դժուար է նրանց համար գրել տեղական զեղծումների դէմ։

—Ինչ անենք, գրում է մեր թղթակիցը, լրագիրը ուզում է, որ մենք ներկայացնենք գաւառական կեանքը իր բոլոր դրական և բացասական կողմերով։ Իսկ գիտէք՝ դա ինչ զոհեր է մեզնից պահանջում։

—Ինչ մնաց ինձ ծեծէին, գրում է մի ուրիշը, իմ այն թղթակցութեան համար, որ գրել էի տեղական ապրուկների և գողերի դէմ։

—Ես ստիպված եմ իմ պաշտօնը թողնել, գրում է երրորդը, կամ լռել այստեղի խայտառակ գործերի մասին։

—Մի գնահատեցէք իմ անունը, խնդրում է չորրորդը։

Ծանր է թղթակցի դրութիւնը։

Շատ ծանր է։

Իսկ եթէ նրանք էլ լռեն, այն ժամանակ ինչպէս պէտք է իմանանք, թէ ինչ է օր օրի վրայ կատարւում գաւառում։

Սակայն միմիայն մեզանում չէ այդպէս։ Ուրիշ տեղերում էլ թղթակիցը անմխիթար վիճակի մէջ է։

Պատմեմ մի Նորպատոյն վտառ Հիւսիսային Կովկասի բարքերից։

digitised by A.R.A.R.@

Մի տարի սրանից առաջ, մարտի 1-ին, վլադիկավկազում հրատարակվող «Казбекъ» լրագրի մէջ տպված էր մի յօդուած մի գիւղի մասին։

Թղթակիցը պատմում էր իր յօդուածում, որ գիւղի մէջ միտք է ծագել դպրոց հիմնել և որ այնտեղ գտնվող մի քանի անձինք, չը համակրելով այդ մտքին, հանդիսացել են իբրև բարի գործին խանգարողներ։

Յօդուածի մէջ չէին յայտնված ոչ մի անուն և ազգանուն։ Մեղադրանքը ուղղված էր տեղական ինտելիգենտների դէմ։

Գիւղի ինտելիգենտներից մէկը, յատկապէս իր հասցէին ընդունելով գրածը, ուղարկեց լրագրին մի հերքում, որը տպվեց նոյն թուականին։

Կարելի էր կարծել, որ գրանով բանը վերջացաւ և «խնդիրը ապաուեց»։

Սակայն ոչ։

Գիւղական ինտելիգենտը, մի անգամ հանդիպելով յօդուածագրին, նրան կծու նկատողութիւն է անում յայտնելով, որ յօդուածը ուղղված է յատկապէս նրա դէմ։ Յօդուածագիրը պատասխանում է, թէ դա յիշեցնում է «ինչ ինձ բանիր առածը»։

Կարելի էր կարծել, որ այս անգամ հարցը արդէն վերջնականապէս լուծվեց և վերջացաւ։

Ոչ։ Չը վերջացաւ։

Անցնում է մի քանի ժամանակ։ Ծննդեան տօներին յօդուածագիրը վերադառնում է հայրենի գիւղը՝ տօները այնտեղ անցկացնելու։ Եւ ահա Ծննդեան հետևեալ օրը, դեկտեմբերի 26-ին, յօդուածագիրը ձայնակում է հայրենի գիւղի հրապարակները։

digitised by A.R.A.R.@

Ինամքիցնոտ գիւղացու եղբայրը, մի ամրապետ մարդ, նկատելով, որ յօդուածագիրը անյուսանում է վաղուցուվ, իսկոյն դուրս է թռչում իրանց տնից և վրա ընկնելով ոչինչ վատ բանը չը սպասող յօդուածագրի վրա՝ հասցնում է նրան հարուածներ։

—Ի՞նչ ես անում. ինչու՞ ես խփում, ինչ եմ քեզ արել, բացականչում է խնդիրը, աշխատելով ազատվել վիրաւորանքներից։

—Այժմ կը խրատեմ, խրոխտանում է հարուածողը, ես պիտես ով եմ (յայտնում է իր անունը և ազգանունը)։ Ես քեզ կը սպանեմ։

Փողոցում պատահած մարդիկ բռնելին կատաղած յարձակվողին և չեմ տարան։

Աղմուկ ընկաւ գիւղը։ Դուրս եկաւ, որ յօդուածագիրը բոլորովին անտեղի մի զոհ է, որ իր բարի ցանկութիւնների համար վիրաւորանքներ է կրել զուր տեղը։

Բայց և այնպէս գիւղացիները ցանկացան հաշտեցնել յարձակվողին և յօդուածագրին։

—Ինչու՞ զուք յարձակվեցիք, ինչու՞ վիրաւորեցիք, հարցրին անդրապետ պարոնից։

—Որովհետև, պատասխանեց նա, այդ մարդը իր յօդուածով անարգել է իմ եղբօրը, իսկ մեր նախնիների պատկերները ուղարկել է տալու մի լրագրում։

—Ի՞նչ լրագրում։

—Ահա այստեղ, ասաց անդրապետը և ներկայացրեց «Нива» շաբաթաթերթի մի համարը, որտեղ գետեղված էր մի յայտնի նկարչի նկարած պատկեր, որը անկասկած ոչ մի կապ չունէր այդ գիւղի բնակիչների հետ։

—Այս պատկերը ձեզ չէ վիրաբերում, հասկացրին հաշտեցնողները։

digitised by A.R.A.R.@

—Ես ինչ գիտեմ. ինձ այդպէս ասացին իմ եղբայրը գիտէ այդ բոլոր գործը։ Ես իմ եղբօր կողմից վրէժխնդիր եղայ։
Եւ այլն և այլն։

Մեր թղթակիցների հետ պատահած դէպքերի շարքում կան աւելի ևս պերճախօս փաստեր։

Իսկ այն, ինչ կատարվեց մեր Ախալքալաքի թղթակիցների հետ, արդէն չափից դուրս վրդովեցուցիչ, եթէ չասենք սարսուռ և զայրոյթ պատճառող մի երևոյթ էր իր այլանդակութեամբ։

Ամեն օր աւելանում է այդ փաստերի թիւը։
Արդեօք ինչ կունենանք վաղը։

---

digitised by A.R.A.R.@

XXIX

(8 մարտի 1901 թ., «Մշակ» № 52)

«Մշակի» երեկվայ համարում տպվեց Բագրատ Բաղդասարօվիչ Դրամպօվի նամակը«

Զենք կրկնի նրա բովանդակութիւնը *),

ճիշդ չէ արդեօք, որ դա մի բնորոշ նամակ է։

Մի մարդ չէ տեղեկացել թէ ինչ է գրված եղել «Մշակում», իսկ թոյլ է տալիս իրան գրել հերքում, այն էլ անպատկառ և անվայել ոճով գրած մի հերքում։

Բնորոշ է և շատ բնորոշ։

Եւ տեսէք թէ ինչ սպառնալիքներ է նա կարդում «Մշակի» խմբագրին։

—Ամենևալաւ դէպքում, ասում է նա, դուք վտանգի էք ենթարկում ձեր դէմքը և ձեր կողքերը։

Պ. Բագրատ Դրամպօվ ամենափոքր բանը համարում է այն, որ նա կողքեր կը կոտրտէ և երես կը ջարդէ։

Իսկ ինչ պէտք է նա անէր, եթէ գործադրէր ոչ ամենանուազ չափը, այլ դէյտւք միջինը կամ վերջապէս, եթէ բարեհաճէր դիմել ամենամեծ չափին։

Մենք հրաժարւում ենք գուշակութիւններ անելուց։

---

*) Ներքև գետեղում ենք „Մշակի" № 51-ի նկատողութիւնը այդ նամակի մասին։

digitised by A.R.A.R.@

Այդ սպառնալիքներ անողը ստորագրել է «լեռնային ինստիտուտի ուսանող»։

Ուսանող։

Ջէք հաւատում եմ էլ շատ դժուար հաւատալի էր համարում։

Բայց դա փաստ է։

Այդ ուսանողի արածը շատ վրդովեցուցիչ մի բան է և փաստը ինքն ըստ ինքեան այնքան սերճախօս է, որ կարելի էր նրա մասին այլ ևս ոչ մի խօսք չասել։

Բայց դա մի առիթ է խօսելու կարևոր մի կէտի մասին։

Մենք լաւ գիտենք, որ Բագրատ Դրամպօվի նման մի ուսանող—երիտասարդ, կարդալով զրպարտութիւններ, կարող էր սաստիկ յուզվել, զայրանալ և բողոքել։

Դա բնական է և շատ իրաւացի։

Բայց այստեղ հարցը բոլորովին ուրիշ բնաւորութիւն է ստացել։

—Ձեզ նախազգուշացնում եմ. ստում է ուսանող Դրամպօվը, դիմելով խմբագրին, որ այսուհետև լինէք աւելի խելամիտ և կատակներ չանէք այդքան թեթևամիտ կերպով։

Ինչպէս տեսնում էք, ուսանող Դրամպօվ առաջարկում է խելամիտ լինել և թեթևամիտ կերպով կատակներ չանել։

Այդ իրատը կարդացողը սակայն այնքան չը կարողացաւ ինքը խելամիտ լինել, որ չը բաւականանար «Новое Обозрѣніе» լրագրի մ'չ լոյս տեսած արտատպումից, այլ դիմէր բնագրին, կարդար նոյնութեամբ «Մշակ լրագրի գրածը և այնուհետև ուղարկէր իր նամակը։

Վերջապէս երևակայենք, որ «Մշակի» մէջ

digitised by A.R.A.R.@

դրածը հէնց ուղիղ վերաբերում է ուսանող Դրամպօվին և լրագրի մէջ ապրել է հէնց նոյն իսկ անհիմն զրպարտութիւն։

Այդ հանգամանքը կարող էր զայրոյթ պատճառել և մեծ բարկութիւն։

Այդ մենք ընդունում ենք։

Ուսանող-Դրամպօվ կարող էր մեղ գրել մի զայրոյթով լի նամակ, բայց ոչ խմբագրի կամ խմբագրութեան դէմ, այլ լոյս տեսած զրպարտութեան դէմ։

Ինչու այդ մասամբ ինտելիգէնտը չէ կարողանում ըմբռնել մամուլի ստանձնած պաշտօնը։

Ահա ինչն է շատ յատկալի,

Ահա ինչն է շատ բնորոշ։

Ուսանող-Դրամպօվ իր նամակի վերջում ասում է, որ անցեալ տարի «Մշակը» նրան գովել էր նրա արած մի բարեգործութեան համար։

Շատ լաւ։

Դա մի գեղեցիկ փաստ է։

Եթէ «Մշակը» անցեալ տարի գովեց մի բարի գործ, ինչու այսօր նա չէ կարող պախարակել մի վատ գործ։

Մտածեցէք մի րոպէ։

Միթէ խմբագրութեան անդամների համար մի մեծ հաճոյք է թշնամանալ մարդկանց հետ և աւելորդ տոհմեր վաստակել։

Մենք էլ ուրախ կը լինէինք, որ բոլորի հետ հաշտ ու բարեկամ լինէինք։ Բայց...

Բայց մենք ունենք պարտաւորութիւններ և սրբազան պարտաւորութիւններ։

Եթէ գործը ստիպէ մեզ մեր բոլոր ծանօթութիւնները խզել, և ոչ ոքի հետ բարև չը

digitised by A.R.A.R.@

տալ, պէտք է ընդունենք այդ վիճակը։ Դա մեր առանձնաձ գործի պահանջն է։

Մենք գովեցինք բարի գործը ոչ թէ որ և է անձի հաճոյանալու համար, այլ որովհետև բարի գործը պէտք է գնահատելի և խրախուսելի է և եթէ մարդկանց վատ արարքը պախարակելամ է, այդտեղ թշնամութիւնը չէ խօսում, այլ հասարակական բարիքը։

Պ. ուսանողը այդ պէտք է հասկանար և պէտք է կարողանար յարգանքով վերաբերվել մամուլին, եթէ նոյն իսկ սխալմամբ սա զեռաղած լինէր անձիդ նուրբ։

Ուսանող Դրամպօվ չը կարողացաւ հասկնալ իր տուած խրատին «խելամտութեան և թեթևամիտ կատակների մասին»։

Ծաւալի է, չատ ցաւալի։

Բայց և բնորոշ է։

Նա չտասնց՝ իր նամակը գրելու և խմբագրութեան ուղարկելու։ Մի նամակ, որ բարքերի տեսակէտից պատմական փաստի բնաւորութիւն ստացաւ։

Ինչն է մեղաւորը։

Մենք ոչինչ չունենք ասելացնելու։

(«Մշակ»-ի № 51-ի նկատողութիւնը)

«Մշակի» № 36-ի մէջ Ալէքսանդրօպօլից հաղորդված էր, թէ այնտեղի հարուստ քաղաքացի Յ. Դրամբեան մեղադրվում է վաշխառութեան մէջ։ Այդ լուրը «Մշակի» № 41-ի մէջ հերքեց Յովհաննէս Դրամբեանց Ալէքսանդրօպօլից գրած իր նամակով, ասելով թէ լուրուն յիշատակած գործը վաշխառութեան չէ վերաբերվում, այլ մի հասարակ քաղաքացիական պահանջ է, որ ինքը, Յովհաննէս Դրամբեան, ակսել է Երևանի Նահանգական դատարանում մի պարոնի դէմ։

digitised by A.R.A.R.@

Լաւ նկատեցէք այս հանգամանքները և տեսէք, թէ ինչ է հետևում այդ բոլորին։ Անցեալ օրը առաջնում ենք Պետերբուրգից մի նամակ։ Դա այնքան շատ բան ասող մի դոկումենտ է, որ մենք չենք կարող զրկել մեզ՝ նրան ամբողջովին առանց որ և է վերախոսութեան տպագրելու բաւականութիւնից։ Ահա այդ նամակը։

Милостивый Государь! Изъ № 5622 „Новаго Обозрѣнія“ я узналъ, какъ Ваша газета „Мшакъ“ низко оклеветала меня передъ обществомъ, называя ростовщикомъ и распространяя ложный слухъ, будто мое „дѣло“ разбирается въ Александрополѣ.

Не считая даже нужнымъ оправдываться, хотя у меня къ тому масса фактическихъ данныхъ, я приглашаю Васъ, Милостивый Государь, немедленно опровергнуть клевету, возводимую на меня Вашей газетой и предупреждаю, чтобъ Вы впредь были благоразумнѣе и не шутили такъ легкомысленно, ибо въ лучшемъ случаѣ Вы рискуете своей физіономіей и ребрами.

Студентъ Горнаго Института Багратъ Багдасаровичъ Драмповъ. 27 февраля 1901 г.

С.-Петербургъ.

P. S. Не забывайте, Мил. Государь, что годъ тому назадъ Ваша газета ставила меня въ образецъ другимъ молодымъ людямъ, когда я принялъ въ число своихъ стипендіатовъ 30 учениковъ александрополь. городскихъ училищъ, лишенныхъ возможности вносить плату за право ученія.

Тотъ же.

---

digitised by A.R.A.R.@

XXX

(11 մարտի 1901 թ., «Մշակ» № 55)

Ես յայտնել էի, որ մտադիր եմ մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարել։

Այդ մտադրութիւնը դարձաւ ինձ համար մի խոստում։

Ինձ սկսեցին դիմումներ անել և նամակով հարցնել տեղեկանալու՝ թէ ինչ եղաւ իմ ճանապարհորդութիւնը, ինչու նա չէ կատարւում։

Ես չէի կարող շտապել բայց ես հաւատարիմ մնացի իմ նախադծած ծրագրին։

Այդ մտադրութիւնս իրագործեցի։ Եւ եթէ դա խոստում էր, այն էլ կատարեցի։

—

Ինչպէս յիշում են իմ ընթերցողները, ես պէտք է Ախալցխայի և Ախալքալաքի ճանապարհով գնայի դէպի Էջմիածին և յետոյ Երեւանի վրայով վերադառնայի Թիֆլիս։

Այդպէս էլ սկսեցի։

Թիֆլիսի կայարանում, երբ ես մտայ երկաթուղու վագօնը, իսկոյն չը զբաղվեցի ինձ համար տեղ պատրաստելու հոգսով։ Դրանով կարելի էր զբաղվել և յետոյ։ Ես խոստում էի ճանապարհներից յետոյ պէտք է բացատրել։

digitised by A.R.A.R.@

Ջանդը տուին, տուլոցը հնչեց, գնացքը շարժվեց։

Ծանօթներից բաժանվելիցինք և ես գնացի իմ տեղը բռնելու։ Սակայն կուպէում բոլորովին ազատ տեղ չը կար, իսկ իմ գոյքը ապահով մի անկիւն էր պահել օճառքի մօտ։

—Տեղ ցոյց տուէք ինձ համար, դիմեցի ես անցնող կօնդուկտօրին։

—Սա է եղած տեղը, պատասխանեց կօնդուկտօրը։

—Իսկ միւս բոլոր կուպէները, հարցրի ես։

—Բռնված են։

—Ապա, ինչու ոչ ոք չէ երևում այնտեղ, հարցրին միւս ուղևկիցները։

Խօսակցութիւնը դարձաւ ընդհանուր։ Բանից դուրս եկաւ, որ ես վերջին բողոքողն եմ եղել։ Իսկ մինչև իմ գալը արդէն տեղի էին ունեցել սուր խօսակցութիւններ և ամեն տեսակ բացատրութիւններ։

Պարզվեց, որ այդ կուպէները փակված են այն պատճառով, որ նրանցից ամեն մէկը հարկաւոր է երկաթուղիական ինժեներներին և ուրիշ պաշտօնեաներին, որոնք այդ օրը ուր որ գնում էին։

—Ճանապարհորդները տեղ չունեն և սրտմտում են, նկատեց մէկը, իսկ այնտեղ դատարկ կուպէները փակված են։

—Գիտէք, նկատեց մի ուրիշը, նրանք այժմ ժողովվել են մի կուպէում և խօսում զուարճանում են, իսկ այստեղ մենք տեղ չունենք նստելու։

—Այդ ձրի գնացողները ունեն ամեն տեսակ յարմարութիւններ, նկատեց երրորդը, իսկ

digitised by A.R.A.R.@

մենք, որ փող ենք վճարել, ստիպված ենք լանդշաֆտ մնալ վագոնի անցքերում։

—Պէտք է բողոքել։

—Պէտք է գանգատվել։

—Պէտք է յայտնել առաջիկայ կայարանի դէխաւորին։

Ընդհանուր տրամադրութիւնը այնպէս էր, որ պէտք է բողոքէինք և ստիպէինք բանալու մեր կուպէները։

—Անհրաժեշտ է խրատել դրանց և վերջապէս զսպել, նկատեց մի հասակաւոր պարոն։

—Մենք պարտաւոր ենք դրանց տանձահատել։ այդ պէտք է անէ մեզանից իւրաքանչիւրը։

—Պէտք է, պէտք է, համաձայնվեցին բոլորը։

Սակայն, երբ իւրաքանչիւրը բաւականաչափ հայհոյեց և բարկացաւ, կարծես բոլորովին հանգստացաւ, և երբ մօտեցանք կայարանին, այլ ևս ոչ ոք չը ցանկացաւ միանալ ինձ հետ բողոք յայտնելու։

—Էհ չարժէ և միևնոյն մի նոր ցաւի մէջ կընկնենք, նկատեց մէկը։

—Դրանց դրատել անկարելի է, ճանապարհորդները ամեն օր բողոքում են, բայց լսող չը կայ, նկատեց երկրորդը։

—Մի կերպ հօլա գնանք, նկատեց երրորդը. չուտով մեզնից մի երկուսը կիջնեն կայարանները և տեղ կը բացվի միւսների համար։ Ես օրինակ գնում եմ Գրակալի, իսկ դուք ո՞ւր։

—Ես Գօրի։

—Ես Միխայլօվօ։

—Ես Բաթում։

—Տեսնում էք, չարունակեց Գրակալի գնացողը, չուտով ձրքան տեղ կը բացվի։

digitised by A.R.A.R.@

—Բայց կարող են նոր ճանապարհորդներ գալ, նկատեցի ես։

—Էհ, բարեկամ, դուք ուրիշի դարդն էլ մեզ վրա եք վերցնում։ Թող նրանք էլ իրանք հոգան իրանց ցաւերը։

Մենք մօտեցանք կայարանին ես վճռեցի փորձել կայարանի գլխաւորին դիմելու։ Նա ինձ լաւ ցց, աշխատեց ուսումնասիրել ինձ՝ իմ խօսելու ձևից ու դէմքից և խոստացաւ խօսել գլխաւոր կօնդուկտորի հետ։ Ես արդարև նա խօսեց։ Մենք նորից ճանապարհ ընկանք։

Մի քանի ժամանակից յետոյ գլխաւոր կօնդուկտորը եկաւ մեզ մօտ, հարց ու փորձ արեց՝ թէ ով ուր է գնում և խոստացաւ չուտով կարգադրել։

Բայց այնուհետև այլ ևս չը տեսանք այդ կօնդուկտորին և ամեն բան մնաց իր նախկին վիճակում։

—Տեսա՞ք, գլուխը թափ տալով նկատեց մէկը։

—Դուք դեռ անփորձ էք, նկատեց միւսը։

—Եթէ կարող էք, այստեղ ձեռաց մի որ և է աղմուկ սարքեցէք և այդպիսով մի բան ջողեցրէք, եթէ չէ դանգատ—բողոքով ոչինչ չի դուրս գալ, նկատեց երրորդը։

—Կայ և ուրիշ, աւելի զօրաւոր և գործնական միջոց, նկատեց չորրորդը...

Բայց ես չը կարողացայ վերջացնել իր խօսքը, որովհետև մենք մօտեցանք կայարանին և ես չատակց դուրս գալ։

—

Միևայլօրև կայարանում ես իմ վագօնից ու տեղափոխվեցի այն գնացքը, որ պէտք է տանէր մեզ դէպի Բօրժօմ։

digitised by A.R.A.R.@

Գնայքի մէջ մարդ քիչ կար։ Մեր վագօնում նստած էին մի քանի անձինք։ Ես խօսում էի մի բարձրաստիճան պաշտօնեայի հետ, որ զբաղում էր Ախալքալաք պաշտօնական յանձնարարութեամբ՝ այնտեղի վնասված գիւղացիների դրութիւնը ուսումնասիրելու։

—Թշուառութիւն կայ, ասում էր նա, այդ անկասկած է, բայց ինչ աստիճանի է նա։ Ա-հա ինչ պէտք է պարզել։

—Անմիջապէս այցելելով գիւղերը և մի ամիսուայ վիճակագրութիւն կազմելով՝ կարելի է որոշ գաղափար ստանալ, պատասխանեցի ես և սկսեցի բացատրել իմ ասածը։

Յանկարծ մեր խօսքը կտրեց վագօնում նըստած մի պարոն։

—Ես ծանօթ եմ Ախալքալաքի պայմաններին, ասաց նա։

—Դուք, ինչպէս, հարցրեց պաշտօնեան։

—Ես ինքս ախալքալաքցի եմ։

—Այդ շատ լաւ է, նկատեց պաշտօնեան, ասին մի իրական փաստ գնահատելի է։ Քանի օր է, որ դուք դուրս էք եկել Ախալքալաքից։

—Ես, ճիշդն ասած, Ախալքալաքից վաղուց է որ դուրս եմ եկել, պատասխանեց անծանօթը, բայց տեղեկութիւններ ունեմ։

—Հետաքրքրական է։

—Գիտէք, սկսեց անծանօթը, մեր Ախալքալաքի գաւառին վնասին ոչ այնքան միջատները, ոչ այնքան համենատաուտան մլուկը, հայի բզէզը և մկները, որքան լրտրական թղթակիցները և տեղական ուսուցիչները։

—Ինչպէս, սրեմն չափազանցրել են վնասները։

—Ո՛չ, այդ չեմ ասում, շարունակեց անծա-

digitised by A.R.A.R.@

Մանր չէինք հասատում մեր ականջների լսածին։

— Ի՞նչ եք ուզում ասել, բացականչեցինք մենք։

— Ահա թե՛ Մեր գիւղացիները, արդարև, վնասվել են միջատներից, բայց նրանք մի կերպ կը դիմանային, եթէ քաղաքացիները նրանց հետ թշնամացած չը լինէին այդ վնասակար պարոնների շնորհիւ։

— Ձեզ հասկանում, շուարած հարցրեց պաշտօնեան։

— Գիւղացիները այժմ չեն կարողանում պարտք վերցնել, որովհետև քաղաքացին վախենում է վաչխառուական տոկոսով փող տալ, իսկ այլապէս նա չի հաւատացնի փող լսոյ թողնելու։

— Ներեցէք ձեր կարծիքով, հարցրի ես, պէտք է վաչխառութիւնը խրախուսել։

— Մեր գաւառը այդ է պահանջում, կարական կերպով յայտնեց անծանօթը։ Մեր գաւառի համար պէտք է ընդունել իբրև կանոն 20—24 տոկոս։

— Դա դէմ է օրէնքին, յայտնեցինք մենք։

Անծանօթը դիմեց պաշտօնեային և լուրջ հայեացքով յայտնեց։

— Բայց դուք, իբրև պաշտօնեայ, իբրև հեղինակաւոր անձ, կարող էք այդ մասին զեկուցանել ու հարկն է և ինդրատուտոյց լինել։

— Ի՞նչ եք ասում, սարսափած բացականչեց պաշտօնեան։

— Այդ է պահանջում մեր գաւառի շահը։ Այդ

digitised by A.R.A.R.@

է թեմատրում մեր թշուառացած գիւղացիների կարիքը։

Պաշտօնեան տեղից վեր կացաւ և բարկութիւնից սկսեց քայլել վագօնների անցքում։

Ես նայեցի ախալքալաքցի իմաստունը—բարերարին։ Նա հագնված էր եւրօպական տարազով, պահում էր իրան իբրև ընտանի՝ կըրթված հասարակութեան կարգերին։ Ինչպէս իմ Թիֆլիսի մի ծանօթ վաճառական աւում է, այդ ախալքալաքցին «ինտելիգենտ կերպով ուտել-խմել և նստել-վերկենալ ունէր»—ահա ինչն է խարուսիկ առաջին հայեացքից։

Բայց քերեցէք վոքր ինչ, դէն գցեցէք կճեպը և դուք կը տեսնէք մի վայրենի։

Պաշտօնեան, որի հետ ունեցանք յետոյ երկար խօսակցութիւններ զանազան հարցերի մասին, չէր կարողանում մոռանալ այդ անզուգական «գիւղական բարերարին»։

Շուտով հասանք Բօրժօմ։

—

Այն հրաշալի տեսարանները, որ ունի Բօրժօմը, այն հետաքրքրական տեղերը, որոնք գտնվում են Բօրժօմի և Ախալցխայի մէջ,—աննկատելի մնացին, որովհետև ես ես իմ ուղեկիցը անցանք գիշերուվ։

Ահա և Ախալցխան։

digitised by A.R.A.R.@

XXXI

(18 մարտի 1901 «Մշակ» № 61)

Շարունակում եմ ճանապարհորդութեան նկարագրութիւնը։

Ախալցխայում ես մնացի միայն մի քանի ժամ։ Երջապայեցի քաղաքում և ծանօթացայ մի քանի անձանց հետ, որոնցից տեղեկացայ օրվայ խընդիրների մասին։

Ախալցխան նոյնն է, ինչ և միշտ. փոխոխութիւնները կատարվում են դանդաղ կերպով։ Ես մօտեցայ նոր չինվող անշուք կամուրջին և նայում էի նրան։ Կարճ միջոցից յետոյ եկաւ կանգնեց ինձ մօտ մի պատկառելի ծերունի, որ նոյնպէս սկսեց նայել չինութեանս։

—Շո՛ւտ կը վերջացնեն, հայրիկ, հարցրի ես։

—Այո՛, չատ չը պիտի քաշէ, պատասխանեց նա։ Դու երևի օտարական ես։

—Այո՛, անցորդ եմ։

Ծերունին պատմեց թէ քանի անգամ է չինվել և նորոգվել իրանց կամուրջը։

—Ինչպէս է ձեր Ախալցխան այժմ, հետաքրքրվեցի ես, աշտանակ են գործերը։

—Ի՞նչ աշտանակ։ Սահմանը երբ հետացաւ, ամեն բան փչացաւ. Ախալցխան քաղցր տեղ է, բայց նրա համը կորաւ, պատասխանեց ծերունին վրդովված ձայնով։

—Ի՞նչ սահման, հարցրի ես։

digitised by A.R.A.R.@

—Օսմանլուի սահմանը Կուից առաջ Օսմանլուի սահմանը մեզ չատ մօտ էր։ Երբ ռուսը և Թուրքը կռւեցին՝ սահմանը փոխվեց և հիմի չատ հեռու է մեզնից։

—Էհ, ձեզ ինչ վնաս, զարմանքով հարցրի ես։

—Մինչ մեր գործերին դու ամենևին ծանօթ չէիր։ Սահմանը մեզ օգուտներ չատ էր տալիս։ Մեր քաղաքում մեծ առուտուր կար։ Շատ մարդ այն ժամանակ հարստացաւ։

—Չեմ հասկանում, ասացի ես։

—Ինչ չը հասկանալու բան կայ, անհանդիստ ձայնով վրա բերեց ծերունին։ Օսմանլուի սահմանից էժան ապրանք էինք առնում։

—Ուրեմն մաքսանենգութիւն, բացականչեցի ես.

—Ինչպէս ասացիր, հարցրեց նա։

—Ուրեմն կօնտրաբանդ, կրկնեցի ես աչխարհաբար լեզուով։

—Հիմի մէնձ հասկացար, զուարթ և պայծառ դէմքով չեչտեց նա։ Էհ, չատ միամիտն ես եղել Ա՛րտեզացի ես։

Ծերունու հետաքրքրութիւնը բաւարարութիւն տալուց յետոյ՝ առաջ գնացի։

—Այս տարի մեր գաւառի մրգեղէնը վատ բերք տուեց. գործերը դադարած են, դանդատվում մի նոր ծանօթ։

—Քիչ-միչ ռակերիչների գործը դեռ լաւ է. այն էլ սակայն միայն միջակ կերպով լաւ է. իսկ ընդհանրապէս չատ էլ լաւ չէ, ասաց մի արհեստաւոր։

—

Հնակայ երիտասարդների մի խմբի մէջ, որոնց հետ խօսակցութեան բռնվեցի։

digitised by A.R.A.R.@

—Ի՞նչ հարցեր, ինչ գործեր կան ձեզանում, հարցրի ես նոր ծանօթներից

—Երէցփոխական հարց, պատասխանեցին նրանք միաբերան:

—Դարձեալ, բացականչեցի ես յուսահատ ձայնով

—Ինչպէ՞ս թէ «դարձեալ», չուարած նայեցին նրանք միմեանց և ինձ. Ի՞նչն է դարձեալ. մենք դեռ ոչինչ չենք ասել

Իմ բացականչութիւնս բոլորովին զարմացրել էր նոր ծանօթներիս: Ես ակամայ էի մի փոքր բացատրութիւն տայի

—Թիֆլիսում, յայտնեցի ես, մենք չը պատահեցինք որ միանչենք երէցփոխական անվերջ հարցերից: Ուր որ գնում ես Թիֆլիսում՝ երէցփոխների հաշուեառութեան, գնդումների կամ դաշտութիւնների պատմութիւններ ես լսում: Ես կարծում էի, թէ քանի որ Թիֆլիսից բացակայեմ, այլ ևս չեմ լսելու այդպիսի բաներ: Յանկարծ դուք էլ սկսեցիք այդ չարաբաստիկ հարցից: Ինչպէ՞ս չասէի «դարձեալ»

—Մի՛թէ մենք մեղաւոր ենք, որ երէցփոխների մնծամասնութիւնը ամեն տեղ միաառակ է, պատասխանեցին նրանք

Ես սկսեցի իմ առաջին ծանր ապաստրոֆիցից և աւելի համոզուած տրամադրութեամբ դիմեցի նրանց

—Ո՞րքան ուժեղ է ձեր մաքառումը: Արդեօք հասել էք ա՞յդ հետևանքներին

—Էհ, պատասխանեց նրանցից մէկը, մեր բանը ուղիղ հասել է այն դրութեան, որի մասին բանաստեղծը ասել է՝

Ամառուած. արտով որ բարի ես,
Մենք վար, Դուն վեր, շատ հեռի ես.

digitised by A.R.A.R.@

Այժմ ալ խոշոր գործերի ես.
Ասա որին մենք պանդըտինք։
—Ի՞նչ էք ուզում ասել, հետաքրքրվեցի ես։
—Մեզ լսող չը կայ, մեր բողոքներին ականջ դնող չը կայ։
—Ուրեմն, այստեղ էլ նոյնը, բացականչեցի ես։
—Ինչպէս դուք աստւած էք «դարձնալ», վրա բերեց մի երիտասարդ։ Դէ ուրեմն այժմ լսեցէք մեր դլխի եկածները։

Շատերը խառնվեցին խօսակցութեան մէջ, Ո՛ր որքան բնորոշ բաներ ես լսեցի և մանուածոպատ գործերի հետ ծանօթացայ։

Սակայն արժէ արդեօք պատմել ձեզ բոլորը։ Անկասկած ոչ։

Դրանք հին պատմութեան կրկնութիւններն են նոր հանճիններով։

Ընդհանուր գծերով կարող եմ պատմել հետևեալը։

Ախալցխա քաղաքում կայ ս. Փրկիչ անունով եկեղեցի։ Այդ եկեղեցին, ինչպէս և մեր մեծ եկեղեցիները, ունեցել է մի երէցփոխ, որ եղել է շատ ազգասէր, եկեղեցասէր, բարեպաշտ, աստուածվախ... և գործել է, ինչպէս գործում են աստղական երէցփոխները։

Ի՛նչ պատմութեան առաջին, նախադրհանդիսական, դիւցազներգական շրջանն է։

Ցետոյ ինչ է լինում, ինչ չէ լինում, արդ յայտնի չէ։ Միայն թէ երէցփոխի գործերի վրա նշանակվում են մի քանի հոգեառ Գաբրիել հրեշտակապետներ կամ աշխարհաբար լսողով հաշտեւոներ։ Մօտ հինգ տարի այդ հոգեառնեռ գործերը քննելուց, դէս ու դէն քաշքշելուց

digitised by A.R.A.R.@

լուց, չափելուց ու կշռելուց յետոյ վերջացրել են իրանց քննութիւնը։

Դա երկրորդ, խուզարկական ու կատարած չրջանն էր։

Ախալչխայի այդ ժամանակվայ յաջորդը, որ ներկայացու արքունի պահապանի հազուստով տիպարն է. ղպայ, որ հաշուեառնները վերստին կար մարդիկ են արդի հոգևորականների ուղղութեան համար, լաւ միտ դրէք ուղղութեան համար, ասաի աշխատում էր հակակշիռ լինելու հաշուեառներին։

—Հոգևոր իշխանութիւնը իր որոշ ուղղութիւնն ունի, ասում էր յաջորդը բոլոր ժամանակը, թող հաշուեառները դլուխ կոտրեն և հաշիւները քրքրեն, մենք կը գործենք մեր ուղղութեամբ։

Հաշուեառները դիմում են կօնսիստօրիային։

—Թոյլ տուէք, ասում են նրանք, գումարելու ձեռական ժողով, որ լսէ հաշուեառների քննութիւնը։

Եւ սկսում են սպասել պատասխանի և կարգադրութեան։

Այդտեղ սկսվում է երրորդ, չրհնեղէի չըրջանը։ Հնդեղը սոսկ բան ծածկում է։ Ծեղդվում են ձայները։

Անցնում են ամիսներ։ Ախալչխացիները կարդում են լրագրներում, որ վեհափառը եկել է Թիֆլիս։ Որոշում են ուղարկել պատգամաւորութիւն նրա մօտ։

—Գնացէք խաղաղութեամբ, ասում է պատգամաւորներին վեհափառը։ Կօնսիստօրիայի կողմից նշանակված է Մելեան քահանան ձեր գործերը նայելու և քննելու։

Ախալչխացիները վերադառնում են։

digitised by A.R.A.R.@

—Ի՞նչ մարդ է այդ Մելիանը, արդեօք երկդիմի անձնաւորութիւն չէ, հարցնում էին միմեանց երիտասարդները, արդեօք չիտակ պէտք է գործէ, խորամանկութեան խօմ չը պէտք է դիմէ։

—Օչ, ոչ, հազար անգամ ոչ, հաստատ յայտնեցին միւսները։

—Սատուած տայ, մաղթեցին կասկածողները, եթէ չէ, գործը չի վերջանայ, այլ աւելի հա կը բարդանայ։

—

Ախալցխա ես չէի կարող երկար մնալ, ուստի խօսակցութիւնս ընդհատեցի՝ կայարան վերադառնալու համար։

—Մենք ձեզ չը պատմեցինք մեր յաջորդի մասին, ասաց մէկը։

—Ես ձեզ կամենում էի բացատրել, ասաց միւսը, թէ ինչի մէջն էր կայանում հանգուցեալ Յարէն Ստէփանէի ժողովրդականութեան գաղտնիքը Ախալցխայում և թէ ինչու այժմ էլ, երբ տարածվեց նրա մահուան լուրը, այստեղ այդ լուրը մի առանձին արձագանք գտաւ համքեաբնների չրջանում։

—Իսկ ես մտադիր էի ձեզ գաղափար տալ մեր հասարակութեան մէջ երևացող այն թարմ հոսանքի մասին, որ թէև այժմ դեռ շատ թոյլ է և տահտանափակ, բայց ունի զարգանալու ապագայ իր մէջ, ասաց երրորդը։

Ուրիշներն էլ պատմելու բաներ ունէին։

—Պարոններ, գնանք կամաց-կամաց և խօսենք։ Ես չեմ կարող ուշանալ։

Մինչև կայարան հասնելը բաւական խօսակցինք և ես շատ բնորոշ ու հետաքրքրական բա-

digitised by A.R.A.R.@

ներ խմացայ։ Գուցէ մի ժամանակ օգտվեմ յարմար դէպքից և պատմեմ։

Բաժանվելով իմ նոր ծանօթներից՝ ես նատեցի կառք, որ պէտք է տաներ մեզ դէպի Ախալքալաք։

—

Ճանապարհը անցնում էր կուր գետի ուղղութեամբ դէպի վեր։ Գետի ջուրը պղտորվել էր և չատագունել։

—Գիտէք, ինչու է տևաել այս գետը, ասայ ինձ իմ ուղեկիցը։ Այս դեղին գոյնը ինձ յիշեցնում է նրա անցեալից մի դէպք։ Հարիւր քառասուն տարի սրանից առաջ, 1769 թւին, այստեղ վրաց Թագաւորը մեծ կռիւ ունէր Թիւրքերի հետ։ Այնքան մարդիկ էին կոտորվել Ատալինձայի պատերազմում, որ սպանվածների արիւնից կուրի ջուրը կարմրել էր և այդ արիւնոտ ջուրը հասաւ նոյն իսկ մինչև Թիֆլիս։

—Ահա Բուատովը,—մէջ մտաւ մեր կառապանի մօտ նստած պօստային ծառայողը,—որ տեղ ծնվել է Շօթա Բուատովելին։

—Երևակայեցէք, շարունակեց իմ ուղեկիցը, այն խում ժամանակ Ռուսաստանից եկել էր վրաստան Տօտլեբէն զօրավարը իր զօրքերով. սակայն նա մի քանի զօրաշարժներ կատարելուց յետոյ հետացաւ այստեղից։

—Ինչու՞ եկաւ, ինչու գնաց։

—Թիւրքերի աչքին միայն երևալու համար։

—Միայն։

Ահա ներթափիկ բերդը իր հետ կապված ռանդաբեթներով։ Ահա մի շարք պատմական տեղեր...

Հասանք Ախալքալաք։

—

digitised by A.R.A.R.@

Ի՞նչ գրեմ ձեզ Ախալքալաքի մասին։ Դուք գիտեք այն երկպատիկ, երեքպատիկ, տասնապատիկ թշուառութիւնների մասին, որոնց ենթարկվեցին ախալքաղցիները։

Հէնց միայն երկրաշարժը իր սարսափելի արտայայտութիւններով, տեսէք, ինչ արժէ։

Իսկ հօտնատօտեան մլուկը և հայի բզիքը։

Իսկ վաղաժամ ձիւնը, ժանգը, հայի մրիկը։

Իսկ վաչխատութեան ծանր քարը։

Իսկ դատարկութիւնները, մատնութիւնները, սպառնալիքները, զրկանքները։

Իսկ հողերի սխալ գնահատութիւնը, որ սրեցին կալուածատէրերը։

Եւ այլն, և այլն։

Ներկան լաւ չէ, իսկ ապագայի հօրիզօնն էլ դեռ ամպերի մէջ է։

Օրվայ ամենամեծ չարիքը—գիւղերի թշուառութիւնն էր, որ և դարձաւ մեր խօսակցութեան նիւթը այն բոլոր անձանց հետ, որոնց պատահեցինք։

Սրտաճմլիկ տեսարաններ։

Գիւղերում մարդիկ սակաւապէտ են։ Ի՞նչ կը լինի մարդկանց դրութիւնը, եթէ նրանք ստիպված լինեն աւելի ևս տրմփելու, աւելի ևս կրճատելու իրանց ծառերը։

—Հայի բաժիններըը փոքր փոքր են, ասում էին մեզ գիւղացիները, որպէս զի պաշարը շուտ չը հատնի։

—Առաւօտեան անօթի ենք մնում, ասելով, որ մի կերպ կանցկացնենք մեր օրը ու երեկոյեան կուտենք։ Իսկ երեկոյեան էլ ասում են՝ քիչ ուտենք ու աւելի շատ գնենք, որ չը քաղցենք։

digitised by A.R.A.R.@

Շաբաթներով, ամիսներով չարունակվում է պակասաւոր անունդը։

Ժողովուրդը լաւ չէ սննդվում։

Սրանից էլ աւելի մեծ դժբաղդութիւն լաւ է, որ հիւանդութիւններ չը կան գաւառում, մանաւանդ վարակիչ հիւանդութիւններ, որոնց զարգացման համար չատ արդաւանդ հող կայ կարօտ գիւղերում։

Դժբաղդութեան մէջ դա էլ մի մանաւոր բաղդ է։

—Երկու օր է, հաց չունենք, ասում էր Օրջա գիւղից մի ծերունի։ Մէկը խղճաց ու ալիւր տուեց։ Թոռներիս ուրախութիւնը ինձ լացացրեց։ Թարմ հացի հոտը զարձեալ տարածվեց մեր տան մէջ։ Թոռներից մէկը, չը սպասելով մինչ հարսս կը հանէ հացը թոնրից, ինքը չատ պել էր դէպի թոնրի կողքը և յանկարծ ...խեղճ ձագուկս թոնրի մէջ էր գլորվել։ Լաւ է, որ իւլոյն բռնեցին և միայն այրուածքներով պըրծանք։

Տեսանք չատ կարօտների, լսեցինք չատ սըրտակոտոր դէպքերի նկարագրութիւններ։ Նրանց մի մասը ձեզ էլ յայտնի է։

—

Ծանր տպաւորութեան տակ ես պատկերի քնելու։ Երկրաշարժ, աղքատութիւն, վաշխառութիւն, նեղութիւններ՝ բոլորը խառնված միասին՝ կարող էին վախցնել մարդու քունը։

Բայց ճանապարհից ստացած յոգնածութիւնը կատարել էր իր դերը և ես չուտով աչքերս փակեցի։

Եւ ահա մի երազ հոյակապ տեսիլներով իմ առաջ։

Մի չարք հրաբուխներ։

digitised by A.R.A.R.@

Վառնային այն գեղեցիկ չղթան, որ ընկած էր Տաքացխուր, Տալօրօվան և Սաղամօ ալպիական լճերի մէջ, ջախտուրված է։

Հին հրաբուղխները նորից բորբոքվել են։ Սբուլ, Սահաթար, Շալինաթաղ, Կարատաղ, Քեօռլի սարերի կատարները վառվում են ահեղ հրեղէն սիւներով։

Ժողովել են հանդիսատեսներ ամեն կողմից։ Այստեղ են դիտնականներ, նկարիչներ, ճանապարհորդներ և ամեն տեսակ հետաքրքրվողներ։ Եւ յանկարծ սրանց մէջ ես նկատում եմ Բագուի նաւթագործներին։

—Ինչո՞ւ համար են դրանք եկել այստեղ, հարցրի մի պարոնից։

—Ասում են, այստեղ նաւթի աղբատ հանքեր են երևացել և այդ պատճառով ակսվել է մեծ իրարանցում նրանց մէջ։

—Սակայն, որքան ինձ յայտնի է նաւթը այսպիսի հրաբուղխների հետ անմիջական կապ չունի, ասացի ես։

—Բայց ով գիտէ, կարող է և ունենալ. իսկ կարևորութիւնը արդէն բաւական է Բագուի հանկիններին համար։

Այստեղ էին Բագուի բոլոր նշանաւոր ֆիրմաների տէրերը և բազմաթիւ միջնորդներ, Թիֆլիսի նշանաւոր նաւթարդիւնաբերական ընկերութեան նորընտիր օրինական դիրեկտորները և շատ ուրիշները։

Որտեղից որտեղ և չը գիտեմ ինչպէս, յանկարծ, երազիս մէջ միտքս եկան Ախալքալաքի թշուառ դիւղերի կարօտեալները։

—Ո՞նչ լաւ և յարմար դէպք է. դիմեմ այստեղ ժողովված հարուստներին և յայտնեմ քաղ-

digitised by A.R.A.R.@

Նաեթափործնները և միւս կրեատանները հպարտ դէմքով նայում էին իրանց շուրջը։

—Հրաբուղխները և երկրի ներքին ոյժերը մեզ համար են գործում, ասում էին նրանց դէմքերը։

Ես առաջ գնացի և երբ տեսայ նրանց բարի և ժպտացող դէմքերը, քաջալերվեցի։

—Պարոններ, ասացի ես, այդ հրաբուխային ոյժերը ձեզ օգնել են. բայց կան նրանցից և վնասվածներ։ Ամբողջ այս գաւառը, որ հայ էր տալիս ձեզ նմաններին, այժմ հայի կարօտ է, և բոլորովին անապահով։ Չնաք կարկառեցէք...

Ես դեռ չէի վերջացրել իմ խօսքերը, երբ յանկարծ լսվեց մի զոռ ձայն, տեսարանը մթացաւ, հրաբուղխները մարեցին, հարուստները անհետացան։

Ես զարթնեցի։

Առաւօտ էր։ Իմ գուռը բաղխում էին։ Նայեցի։ Կարօտ գիւղացիները կանգնած են աննախկին դռան առաջ եկել էին չարունակելու իրանց գանգատը։

Տխուր իրականութիւնը իր ոյժի մէջ էր։

---

digitised by A.R.A.R.@

XXXII

(25 մարտի 1901 թ. «Արշալույս» № 67)

Ձանապարհորդական տպաւորութիւններս չափազանց շատ են եղել լինելու համար, շուտով չեմ վերջացնի ես իմ նկարագրութիւնները։

Պէտք է կարճ կապեմ։

Բայց կան բաներ, որոնց անտես անել չեմ կարող,

Իմ ընթերցողները, կարծ ունեմ, չեն մոռացել 20—24 տարուայ մասին նշանաւոր և յիշատակելի իրականութիւնը։

—Քաղաքացիները թշնամացել են գիւղացիների հետ և փող չեն տալիս նրանց պարտքով, որովհետև քաղաքային վախենում է վաշխառուական տոկոսով փող տալուց, իսկ այլապէս նա չի համաձայնվի փող բոլոր թողնելու։

Ձիշդ է արդեօք անձանօթ ախալքալաքցու այս յայտարարութիւնը, որ մենք լսեցինք վաղուց։

Պէտք էր սուզել տնին ու տեղը։

—Ձիշդ է արդեօք, հարցրինք մենք Ախալքալաքի քաղաքացիներից և գիւղացիներից։

—Օչ մի նոր թշնամութիւն չէ առաջ եկել, պատահականութիւն բոլորը միմեանց։ Ընդհակառակը, երբէք այնպիսի մտերմական և փոխադարձ բարեկամական յարաբերութիւններ

digitised by A.R.A.R.@

չեն եղել քաղաքի և գաւառի մէջ, ինչպէս այժմ։

—Այս վերջին երկու տարին, բացատրեց մի պետական ծերունի, մենք արժանացել ենք քաղաքացիների առանձին ուշադրութեան և հոգատարութեան։ Մեզ սկսել են մարդու տեղ դնել, եղբայր անուանել, մեր ցաւ ու հոգսերը լսել, մեզ օգնել։ Ես յիշում եմ, որ մէկ էլ այդպէս վարմունք մենք տեսել ենք այն ժամանակ, երբ նոր գաղթած էինք այս երկիրը և հաստատւում էինք այստեղ։

—Թշնամութիւն եթէ կայ, յայտնեց մի հարթակ գիւղացի, դա քաղաքացու ու գիւղացու մէջը չէ, այլ գիւղում գտնվող վաչխատուի և մեւս գիւղացիների մէջ։

—Դա ճշմարիտ է արդեօք ձեզ, հարցրի ես։

—Այդտեղ ճշմարիտ ու օգուտի բան չը կայ, պատասխանեց գիւղացին։ Սմենն բան առաջվայ դրութեան մէջ է, միայն թէ վաչխատուն փոքր ինչ սկսել է քայլել և երկիւղ է կրում գիւղացիներից։

—Ի՞նչ էք կարծում, հարցրի ես, եթէ օրէնքը փոխվի և կարելի լինի 20—24 տոկոսը օրինական համարել, ինչ կը լինէր հետևանքը։

—Տէր մի արասցէ, սարսափած բացականչեցին գիւղացիները։ Այն ժամանակ էլ ոչ կարող է գալել մեր վաչխատուներին։ Հիմի գեռ մի փոքր վախ ունեն, իսկ այն ժամանակ պէտք է մորթվենք...

—Իսկ որ ձեզ փող չը տան պարտքով, ինչ պէտք է անէք։

—Էհ, մինչ դժուար է վաչխատուի համար տալ 80 րուբլի և մուրհակ գրել 100 րուբլուց։ Եթէ վաչխատուի քէֆին նայես, մինչ-

digitised by A.R.A.R.@

մտաց մի ուրիշը, նա 25—30 տակա էլ կուզէ, նա մի դէզ խոտ էլ կը վերցնէ, քեզ էլ մշակ կը չինէ իր համար, ով գիտէ քո եզներն էլ, քո գութանն էլ կը պահանջէ։ Մէթէ կարելի է նրա պահանջին նայել։

—Օրհնեալ լինի նոր օրէնքը, օրհնեալ լինեն նրանք, որոնք մեզ հասկացրին օրէնքը, մերձնջացին գիւղացիներըս։

—

Ախալքալաքից ճանապարհվեցի Ալէքսանդրոպոլ։

Տէր Աստուած, այդ ինչ տանջանք էր, որ ես կրեցի այդ նոր ճանապարհի առաջին մասում։

Մինչև Ալէքսանդրոպոլի դաշտի սահմանը հասնելը խճուղի չը կայ։ Եղանակը այնքան ցուրտ չէր, որ հողը սառչէր, այնքան էլ տաք չէր, որ հողը չորանար։ Կառքը անյնում էր անտանելի մի ցեխի միջով։

Մենք առաջ էինք դնում այնքան դանդաղ, որ տաքով կարելի էր աւելի արագ քայլել։

Երևակայեցէք, այդ ճանապարհը այնքան վատ է, որ Ալէքսանդրոպոլից աւելի յարմար է տանք ուղարկել երկաթուղով Դարաքիլիսա, Թիֆլիս, Բօրժօմ և այնտեղից խճուղիով տանել Ախալքալաք, քան անմիջապէս Ալէքսանդրոպոլից ուղարկել Ախալքալաք։

Յետոյ, երբ մտանք Ջինոսի սարաւանդի և Շիրթախլայի չրջանը, նորից ճանապարհը լաւացաւ և ես ուրախ տրամադրութեամբ հասայ Ալէքսանդրոպոլ։

—

—Փոխոխութիւն քիչ է երևում ձեր քաղաքում, նկատեցի ես իմ հին ծանօթներից մէկին։

digitised by A.R.A.R.@

—Չէ, ինչու, վիրաւորուած պատասխանեց նա։ Մի քանի հոյակապ տներ են աւելացել Ծառերը չատացել են քաղաքի մէջ։ Մի քանի տեղ մայթեր են շինուել

—Ուրեմն դուք գոհ էք ձեր պրոեքտից, հարցրի նա։

—Ծուսախաբութիւն։ Մենք յուսախաբութեան գերի ենք։

—Ի՞նչ էք ուզում ասել, հետաքրքրուեցի նա։

—Երկաթուղու բարիքների յուսով, բացատրեց ծանօթս, մենք սկսեցինք հողեր գնել, տներ չինել, զանազան տեսակ ձեռնարկութիւնների ծրագիրներ կազմել, բայց մինչև այսօր չօշափելի օգուտ չենք տեսել

—Գուցէ շատ էք չտապում

—Եթէ այս տարուայ առաջ հունձը չը լինէր և գաւառը ուժեղացած չը լինէր, մեր քաղաքի առեւտուրը ու արհեստը շատ վատ վիճակի մէջ կը լինէին

—

Տեսնելով ուրիշ մարդկանց հետ նա, որոնցից մի քանիսին ճանաչում էր առաջվանից։

Ալէքսանդրապօլցիներին առաջին յուզել էր քահանաներին առաջին նշանակելու հարցը։

—Առաջին նշանակելը լաւ է, ասում էին ինձ,

digitised by A.R.A.R.@

բայց նախ և առաջ պէտք է բարեփոխել մի քանի պայմաններ։

—Օրինակ, ինչ բան։

—Օրինակ, մեզ բաւական է 10 քահանայ, իսկ մեր քաղաքի համար ձեռնադրել են 27 քահանայ։ Տանը քահանային մենք ուրախութեամբ ոռճիկ կը տայինք և կը պահպանէինք, բայց մենք անկարող ենք հոգալ միւսների մասին։ Ով գիտէ, գուցէ մեր հոգևոր պետերը պէտք է շարունակեն քահանաներ ձեռնադրելը և մի քանի տարուց յետոյ մենք աւելի քահանայ պէտք է ունենանք, քան ծխական ժողովուրդ։

—Եւ ինչ քահանաներ են, վրդովված վրա բերեց մի ուրիշը, մէկը միւսից երևելի իրանց ազիատութեամբ և անբարեկիրթ վարմունքներով։

—Ինչու էք համախոհական տալիս նոր քահանայացուների համար։

—Մինչ ձեզ յայտնի չէ, թէ ինչպէս են կազմվում համախոհականները։

Վիճեցինք յարուցած հարցի մասին։ Երիտասարդների մի մասը կարելի էր համարում ոռճիկ առնողները և դոյց էր տալիս գործնական խելայեղ միջոցներ, բայց ընդհանրապէս դեռ դիմադրութիւնը մեծ է,

—

—Մեզնից լսեցին մինչև ակարգ դպրոցը, դանդաղում էր մի պարոն։

—Ո՞վ։

—Կարս քաղաքը։ Մենք դոյս ունէինք այստեղ մինչև ակարգ դպրոց ունենալ, բայց, այժմ, ինչպէս լսում ենք, պէտք է նա հիմնովի կարուսուն։

digitised by A.R.A.R.@

—Ինչու չը կարողացաք պաշտպանել ձեր խնդիրը, հարցրի ես։

—Մենք համակրանք գտանք ամեն կողմից։ Եւ վարչութիւնը, և հասարակութիւնը պատրաստականութիւն յայտնեցին օգնելու գործին։ Աջողութեան վրա կասկած չունէինք... բայց յետոյ վոխվեց տեսարանը։

Ես հարց ու փորձ արի այն ծրագրների մասին, որոնք մշակվում էին Ալէքսանդրօպոլում գաւառի տնտեսական վիճակը բարւոքելու նպատակով։

—Ի՞նչ եղան այդ ծրագրները, հարցրի ես։

Ոչ ոք չը կարողացաւ բաւարար պատասխան տալ։

—

—Մեր երիտասարդներից մի քանիսը, յայտնեց մի պարոն, ցանկութիւն ունեն գիւղատնտեսութեամբ զբաղվելու և հող են որոնում գաւառում այդ նպատակով։ Մի երկու մարդ փորձել են նոր սերմեր բաժանելու գիւղում։

Յանկարծ խօսակիցներից մէկը վեր թռաւ տեղից և վրդովված ձայնով սկսեց խօսել։

—Ես շատ էլ չեմ համակրում այդ հող որոնելուն, բացականչեց նա, մեր քաղաքի բնակիչներից շատերն են հող վերցրել գիւղերում և կամ տուել գիւղացիներին, բայց դա ամենազզուելի հարստահարութեան նոր եղանակներից մէկն է, որից տառապում է գիւղացին։

—Դա կերպարանափոխված վաշխառութիւն է, ասեցողից մի ուրիշը։

Վաշխառութիւն խօսքը կարծես իրրև մի ռումբ բանկեցրեց երիտասարդներին։ Նրանք պատմեցին այնպիսի դէպքեր քաղաքի և գիւղերի կեանքից, որ ես չէի հաւատում լսածներիս։

digitised by A.R.A.R.@

—Շիրակը՝ դա վաշխառուների ամենամեծ բունն է, յայտնեց մէկը Սխալքալաքի դատարը գրօ է մեր առաջ։

—Բայց Սխալքալաքի դէպքերը ազդեցին և Շիրակի վրա, ասաց մի ուրիշը։ Այստեղ էլ վաշխառուները սկսեցին երկիւղ կրել բողոքներից։

—Կեղեքված և հարստահարված մարդիկ, կարդալով լրագրերները, այնքան համարձակութիւն ստացան, որ նոյն իսկ փորձեցին դատարան դիմել, նկատեց երրորդը։

—

—Ի դէպ, հարցրեց մէկը, այդ ինչ նամակ էր, որ տակաւ մեր ալէքսանդրօպօլցի բարեբաստիկ Դրամիկեանը։

—Այդ ես պէտք է ձեզնից հարցնէի, ասացի ես։ Նա ձեր քաղաքացին է։ Ի՞նչ մարդ է։

—Ճանաչում ենք և պարտաւոր ենք նրա նամակի վրա։ Սակայն որքան դուք մեզ և քաղաքակիրթ էլը դէպի մի անճաշակութիւն, որ թոյլ էր տուել այնպիսի անպատկառ լեզուով գրել իր պատմական նամակը։

—Ի հարկէ, պատասխանեցի ես, շատ հեշտ էր նրան, ինչպէս տուած են, շղարել նա իր նամակով պատրաստ նիւթ էր տուել առաջնորդութեան։ Բայց դա շատ էժան ձև կը լինէր նախատրութեան մէջ ստացվելին այդ նամակի առիթով բազմաթիւ բողոքներ նրա հեղինակի դէմ։

Երեսատարդները պատմեցին առաջիկայ քաղաքային նոր ընտրութիւնների, Հաւտիճի վանքի հին և նոր հաշիւների, նորատաց դրամատրանի, իրանց կլուբի և ուրիշ տեղական գործերի մասին։

—

digitised by A.R.A.R.@

Ալէքսանդրօպօլից իմ նախկին ծրագրով պէտք է գնայի ուղիղ Էջմիածին։
Սակայն ուղեգիծս փոխեցի։
Պատուհասի, ուր ապաստան էին ինձ մի քանի նամակներ, կար և մէկը, որի բովանդակութիւնը հետեւեալն էր։

Պարոն Վրթին.

«Ը պիտեմ ինչից տխրալած, ձեր ճանապարհորդական ցուցակից դուրս էք գցել մեր պատմական կարս քաղաքը։ Ձեր այդ վարմունքը բաւական վիրաւորել է կարսեցիների ինքնասիրութիւնը։ Ինչ. միթէ կարծել էք, որ քիչ հետաքրքիր պատկերներ կան մեր բերդաքաղաքում, որոնք արժանի լինէին Մանրանկարի մէջ մտնելու համար։

Կամ գուցէ ձեր ճանապարհորդութեան միջոցին այնքան ձանձրացրին ձեզ երէցփոխականեկեղեցական անհաշուր հաշիւներով, որ վախեցաք, թէ մենք էլ նոյնը կանենք։ Եւ այդ պատճառով աւելի բարւոք համարեցիք մեր քաղաքը բոլորովին մուտք չը գործել, որպէս զի այդ զզուելի պատմութիւններից ձեր լեռլիքը ազատէք։

Գուցէ իրաւունք ունէք։ Բայց վատահանում եմ հանգստացնել ձեզ, որ մենք երէցփոխական հաշիւներ չունենք։ Բարեպատեհ մարդիկ չատ վաղուց մեր եկեղեցու. հաշիւները բոլորովին մաքրագարդել են։ Մեր եկեղեցին այժմ աղքատ է, հազիւ նրա եկամուտը ծածկում է ծախսը և փառք Աստուծու, փող չը կայ, որ տանուտէր լինի։

Ցաւոնայն դէպս, պ. Վրթին, եթէ կարս գալու լինէք, այդ կողմից ապահով եղէք։ Մենք

digitised by A.R.A.R.@

Ձեզ այդ հաշիւներով չենք զբաղեցնի։ Մենք Ձեզ լաւ լաւ պատկերներ դոյց կը տանք։ Հրաշալի տեսարաններ շատ կան մեզանում, որոնք կարող են ամենաթանգագին զարդեր լինել Մանրանկարի համար»։

Կարգացի նամակը, որը նկարագրում էր Կարսի կեանքն ու բարքերը և մտածմունքի մէջ ընկայ՝ գնալ, թէ չը գնալ։

Իմ ծանօթը, որ տեղեկացաւ նամակի մասին, խորհուրդ տուեց անպատճառ գնալ Կարս, այնտեղից անցնել Կաղզուան և յետոյ Սուրմալուի գաւառի միջով գնալ Էջմիածին։

Այդպէս էլ որոշեցի։

digitised by A.R.A.R.@

XXXIII

(31 մարտի 1901 թ., «Մշակ» № 72)

Զատկական նուէրներ

Հայերը այս անգամ մի նախանձելի վիճակի մէջ պէտք է լինեն։ Ներանք այսօր, մարտի 31-ին, թաթխաման օրը, միմեանց կը շնորհաւորեն, միմեանց կաւեւտեն Մեծ-Տօնի պատրաստը։

Անկասկած է, որ եկել է Զատիկը։

Իսկ միւս քրիստոնեաները այդ մի և նոյնը պէտք է կատարեն այն ժամանակ, երբ կը լինի ապրիլի 1 ը, միմեանց սխալեցնելու, միմեանց խաբելու օրը։

Ո՞վ գիտէ, արդեօք մարդիկ կը հաւատան այն բարեմաղթութիւններին, որ կը չռայլվեն Զատկի օրը։ Անկասկած՝ թիւրիմացութիւններ առաջ կը գան։

Ես ամենևին չէի ցանկանայ այդպիսի վիճակի մէջ լինել և իմ բարեացակամութիւնը տարակուսանքի ենթարկել։ Ուրախ եմ, որ իմ բոլոր ասելիքը տեղի կունենայ ոչ ապրիլի 1-ին։

—

Այդ կարևոր է մանաւանդ այս տարի, երբ մեր շուրջը կատարվում են անհասկանալի, հակասական, խորհրդաւոր և առեղծուածական բաներ։

digitised by A.R.A.R.@

Հէնց վերցրէք եղանակը

Մարմն առաջին չարաքինները այնքան տալ էին, որ չաները անկարող էին նոյն իսկ առաւել վերարկուներով մահ գալ, իսկ վերջին չարաքինքը ընթացքում մնաք միանգամ բերինք մեր վառարանները և նորից հագանք մեր ձմեռվայ վերարկուները

Կարդացէք լրագիրները, լսեցէք ձեր ծանօթների զանազան պատմութիւնները և ասացէք, թէ արդեօք դուք պիտի էք հանուտ հիմիկվայ գործերից: Մենք կարծես մի մշտական ատրճի մէկի մէջ ենք գտնուում

Ես մտադիր չեմ ձեզ հետ, ընթերցողներ, հետս տեղեր գնալ և քննել, արդեօք ներօրեան ուղում է նուաճել չինացիներին, թէ ազատ պահել նրանց. արդեօք ներօրեայինները իրանց մէջ խաղաղութեան գործով են զբաղված, թէ պատերազմի պատրաստութիւններով. արդեօք բօէրները ընկճված են և յաղթված, թէ կարող են դեռ երկար պատերազմել. արդեօք Թիւրքիան ընկել, անանկացել է թէ դեռ կենդանի է և կազդուրում է և այլն

Նայեցէք ձեր շուրջը և, եթէ կարող էք, վերծանեցէք թիւրիմացութիւնները նոյն իսկ ամենամօտը չէ՞ք գտնում

—

Թիֆլիսում, օրինակ, անցեալ կիրակի օր ընտրութիւններ էին կատարվում վոխատարձակների ընկերութեան մէջ: Վարչութիւնը հանդէս եկաւ մի չարք թիւրիմացութիւններով: —Պէտք է համարել իշխան Գ. Թումանեանին վերջացրած իր պաշտօնավարութեան ժամանակամիջոցը և նորից քուէարկել:

Այդպէս էր ասում վարչութիւնը

digitised by A.R.A.R.@

—Ոչ, նա դեռ պէտք է համարվի պաշտօնի մէջ և նրան չէ կարելի քուէի ենթարկել։

Այդպէս էր ասում դարձեալ նոյն վարչութիւնը։

Այդ երկու կարծիքն էլ յայտնում է մի և նոյն վարչութիւնը, մի և նոյն օրը, մի և նոյն ժամին։

Ինչո՞ւ։

Շատերը ասում են, որ այդ թիւրիմացութիւնը պիտակչական է և կատարելապէս կամովի։

Լուծեցէք հանելուկը։

—

Մի տան օր առաջ Թիֆլիսում ժողովվել էին մի երեսուն հոգի հնապիտական ընկերութիւն կազմելու։

—Մենք ուզում ենք ինքնուրոյն ընկերութիւն կազմել, բայց մեզ տուէք ոչ ինքնուրոյնը։

Այդպէս էին ձևակերպում իրանց ասածները ժողովականները։

Ինչո՞ւ։

Գուշակեցէ՛ք։

—

Նոր ընկերութիւն ասացի, միտքս եկաւ մի օտարոտի զուգադիպութիւն։

Լրագիրներում տպված է, որ ապրիլի 5-ին, հինգշաբթի օր, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում պէտք է տեղի ունենայ Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը։

Շատ լաւ։

Շարունակում եմ յայտարարութիւններ կարդալը և տեղեկանում եմ, որ նոյն ապրիլի 5-ին,

digitised by A.R.A.R.@

Նոյն դումայի դահլիճում, պէտք է տեղի ունենայ Արևելագիտական ընկերութեան առաջին նիստը։

Մի և նոյն տեղում, մի և նոյն օրը։

Երէկվայ «Кавказъ» լրագիրը հաղորդում էր, որ դարձեալ ապրիլի 5-ին, հինգշաբթի օր, պէտք է տեղի ունենայ քաղաքային դումայի նիստը։

Դարձեալ մի և նոյն տեղում, մի և նոյն օրը։

Դուք մի քանի արդեօք հասկացաք։

—

Սակայն ես շատ չեղվեցի իմ հիմնական գրոյցից և Զատիկը մոռացայ։

Այդ ներելի պէտք է համարել։

Մեծ-պահի հետ դեռ նոր ենք վերջացրել մեր հաշիւները. իսկ ես դեռ պարտաւոր եմ իմ կատարած ճանապարհորդութեանս նկարագրութիւնը ներկայացնել։

Այդ էլ ուշներից յետոյ։

Այժմ զբաղվենք մեր բարեմաղթութիւններով և զատկական նուէրներով։

—

Ես իմ բարեմաղթութիւնները կը սկսեմ ցուցահանդէսից։ Կովկասեան ցուցահանդէսը, որ պէտք է բացվի աշնանը Թիֆլիսում, մի տեղ կը ժողովէ մեր արդիւնագործութեան և առօրեայ ու հասարակական կեանքի արտայայտութիւնները։

Ինչ կարելի է ցանկալ այդ ցուցահանդէսին։

—Անշուշտ՝ լինել բազմակողմանի և լիակատար, կը պատասխանէք դուք։

Ես էլ հէնց այդ եմ ցանկանում. բայց զբաղեցնում են բաներ, որ չը պէտք է անս-

digitised by A.R.A.R.@

նենք այդ ցուցահանդէսում։ Բայց պէտք էր տեսնել։

—Օրինակ ինչ, կը հարցնէք դուք։

Ցուցահանդէսը հանդէս կը բերէ չքնդ և փայլուն իրեր, գեղեցիկ գործուածքներ և յօրինուածներ, պարզ ու բաղադրեալ մեքենաներ և գործիքներ։

Բայց նա չի ցոյց տայ այն, ինչ որ արգելուած է մեր երկրին առաջ գնալու։ Նա չի ցոյց տայ այն բացասական կողմերը, որ երևան են եկել կեանքի մէջ, նա չի արձանագրի մեր ապրած չետադիմութիւնը։ Որքան ուսանելի կը լինէր, եթէ նա մեզ ցոյց տար մեր երկրի՝

վաշխառուների կարծրացած խղճի նմուշները,

գնչէֆտամախէրների բազմազան որոգայթների մոդէլները,

չքնդ պալատներում բուն դրած կեղտոտութիւնների պատկերները,

մեր հոգևոր հովիւների գայլային ոտնձգութիւնների հատ հատորները,

մեր հազարաւոր վարիանցիների առաձգական հոգին,

և այլն և այլն։

Զարժէ մի առ մի թուել։ Դա չատ երկար մի ցուցակ է, գուցէ նոյն իսկ անվերջ։

—

Շարունակենք մեր միւս բարեմաղթութիւնները։

Թիֆլիսի քաղաքային ընտրողներին—մի այնպիսի ցուցակ, որի մէջ իրարանչիւր ազգ կազմուած լինէր ներկայացուցիչներից։

digitised by A.R.A.R.@

կերուբեանը—սէր դէպի արուեստի ժողովուրդները։

Դևո չը քացվաձ հնադիտաական ընկերութեանը—վէճեր թէ ինչ ազգութեան էին պատկանում հայկանները, օղուզները և տրօղլօդիտները։

Թիֆլիս չրանցքին—տալ չուր փոխանակ ցեխոտ հեղուկի։

Բադուի նաւթատրծներին—մի հատ բիբ անգլիական, ֆրանսիական և բելգիական ընկերութիւններ, որոնք թանգ գներով վերցնելին նրանց հանքերը։

Բադուի երիտասարդներին—փոքր ինչ աղատ ժամանակ... թուղթ խաղալու և գինեվատնծութիւն անելու համար։

Բադուի տիկիններին — պատրաստուելիւններ տալ չերեք տաք չրերը դնալու համար։

Բադուի ծաղիկներին—ինչպէս մարդկանց դլուխները և այնտեղ վտանգաւոր ծաղիկներ չը մոլորել։

Էչմիածնին—չարունակել և չարունակել «իր նիրհը դարերով։

Էչմիածնի թանգարանին—հոյակապ առաջնորդների պատկերասրահը լիճուտրիչներ, և միաս ատրիարքներ։

Ֆառանեանցներին—յիշել, որ հարուստների մէջ չըհաս չը կայ, իսկ աղքատների մէջ մշտական չըհասութիւն է տրուած։

Երևանի երկաթուղուն—ազատ լինել տարբատար գնացքներ չինելու ժամքից։—Այս բարեմասիթութիւնը ա- ւելորդ է, որովհետև երկաթուղին

digitised by A.R.A.R.@

ակեսք է անցնի այնպիսի անատա-
նելով, որ բնակութիւնն չը կայ։

Ա խ ա տ ք ա ղ ա ք ց ի ն ե ր ի ն — տալով առանց
հոգի տարերքու։

Կ ա ղ ղ ա ւ ա ն ց ի ն ե ր ի ն — ազահանրերի մէջ
չտրտնել արեգակի ճառագայթներու
պէս։

Պ ա ր ա կ ա հ ա յ ե ր ի ն — տարերային պարսիկնե-
րից մէկը որ ուխտ է լաւ բանուղ։

Ա ն ա տ ի ա ն թ ե ր թ ի ն — քիչ մը առակ (բուսանդա-
կութիւնը չափազանց է)։

Հ ա ն դ է ս ա ս ա օ ր և ա յ ի ն — նորից ձեռք բե-
րել կորցրածը։

Բ ա զ մ ա վ է պ ի ն — յիշել, որ կեանքը վառք չէ
և ժողովուրդները — վանական միա-
բանութեան կամ հնագիտական ըն-
կերութեան անդամներ չենք։

Ն ո ր - Մ ա ր դ ի ն — ապացուցանել, որ ընթեր-
ցող հասարակութիւնը մեզ չունէր
Հին-Մարդի անաչառութեան հար-
ցում։ Այդ ապացոյցը է մեզի այլոց
աւելորդ չէ Փիգարի հայ ուսանո-
ղութեան համար, որ մի նշանաւոր
և բնորոշ նմանակ տալոց «Տարա-
զում» և այդպիսով լրոն անհա-
հաչրեց։

Մ ե լ ի ա ն ք ա ռ հ ա ն ա յ ի ն — լաւ ճանաչելէք և
ուսումնասիրելէք ախտաբանութե-
լին։

Ա խ ա ւ ց խ ա ց ի ն ե ր ի ն — լաւ ճանաչելէք և ու-
սումնասիրելէք Մելիան քահանա-
յին։

digitised by A.R.A.R.@

Հայ գեղջկացանց—քննել Սերմացա-
նի և Ս. Տէր-Ահարոնեանի վէպը «գա-
ւառահիկուհիները» մասին։
Երէց փոխանց—իրաւունք բանտարկելու
և աքսորելու. հաշուեառնանց մասին։
Մեր օրէնսդրութեան—Հայերեսութիւն. ինչ
արուած է։
Մեր մտաւորականութեան—փոյթուոյ և քարկոծ
ձուերու։
Մեր ընթերցողութեան—Հնարհատուր Զա-
տիկ։

digitised by A.R.A.R.@

XXXIV

(8 ապրիլի 1901 թ., «Մշակ» № 74)

Թէև ճանապարհորդութիւնս վերջացաւ Զատկից առաջ, բայց նրա նկարագրութիւնը եւ կարող եմ ներկայացնել իմ ընթերցողներին միայն այժմ։ Հերթը ինձ չէր հասնում. իսկ ես ինչ իրաւունք ունէի պահանջել, որ ուրիշ յօդուածներ յետաձգվեն իմ ճանապարհորդութիւնների պատճառով։ Ես հպատակվեցի կանօնին։

Ինչպէս յիշում են իմ ընթերցողները, ես պատրաստվում էի Ալէքսանդրօպօլից գնալու Կարս։

Նստած Ալէքսանդրօպօլի վօկզալում իմ հին և նոր ծանօթների հետ՝ ես սպասում էի գնացքի գալուն։ Մենք չարունակում էինք մեր առաջվայ խօսակցութիւնները։

Երիտասարդները զժգոհ էին իրանցից և իրանց գործունէութիւնից։

—Սկսում ենք մի որ և է գործ, մէկ էլ տեսար մեզնից դուրս եկան առաջին հակառակորդները, որոնք և թուլացնում են ընդհանուր գործի աջողութիւնը։

—Այն անձինք, որոնք գրիչ են վերցնում թղթակցելու, չեն կարողանում իրանց կոչման բարձրութեան վրա մնալ և զբաղվում են շողոքորթելով մէկին և անձնական հաշիւներ մեանելով մեզ հետ։

digitised by A.R.A.R.@

Այսպէս զանգատվում էին նրանք։

—Պարոններ, բայականչեց մէկը հանդիսատեր կերպով և վերկենալով տեղից։

—Ի՞նչ է պատահել, զարմացած հարցրին միւսները։

—Ես օգտվում եմ դէպքից, շարունակեց առաջինը, խօսելու այստեղ մեր ընդհանուր գործից մէկի մասին։

—Ո՞ր գործի։

—Համերաշխութիւն Հայոց հազիւ մենք ազատագրօղներս մտայել էինք այն չահատակութիւնները, որ մի ժամանակ կատարում էր «Հառիճի հոգաբարձութիւն» կոչված ան կազմակերպութիւնը...

—Ա՜ա, այդ էր ասելիքդ, շատ ես բարձրից սկսել, նկատեց մի չարացճի խօսակից։

—Մի ընդհատէք, խնդրեմ ես։ Ահա այժմ նորից ուզում են մեզ յիշեցնել հինը։ Լսեցէք ուշ տարի սրանից առաջ մեր քաղաքցի Յարութիւն-աղա Յարութիւնեան անունով մէկը պարտ է լինում հոգաբարձութեան մի խաչը դեմարտ Յարութիւնեանը պարտքի փոխարէն տալիս է իր միակ կալուածքը և ստորագրում է թէ՝ վաճառելով Հառիճին իր կալուածքը, նա լրիւ առացել է իր հաւատնելիքը։ Իսկ յետոյ հոգաբարձութեան անդամները, տեղեկանալով, որ պաշտօնապէս դժուար է հաստատել այդ վաճառքը, վերցնում են Յարութիւնեանից նաև մուրհակը։

—Ուրեմն թէ ստորագրութիւն կալուածք ծախելու մասին և թէ մուրհակ։

—Այո, և մէկը և միւսը։

—Մուրհակը ևս անունով է, այնթէ հոգաբարձութեան անունով։

digitised by A.R.A.R.@

— Ոչ, մանաւանդ Կ. Կոստանեանի առնուած Այժմ խնդիր Յարութիւնեան որբերի վրայ (Յարութիւն ազան մեռաւ) ծանրացել են երկու թղթերն էլ։ Այնպէս է դուրս գալիս բանից, որ որբերը թէ Հառիճին են եղել պարտ, թէ պ. Կոստանեանինս կալուածքը արժէ մօտ 16 հազար, այն է պարտքի կրկնապատիկը։ Եւ ուրեմն, որբերը կարող են մեզ ունենալ կալուածքից. բայց վախենում են բազմել, որովհետեւ թղթերը դրանց դէմ են։

— Ինչ հիմք կայ կարծելու, որ որբերը կը զրկվեն, նկատեց մէկը։

— Եթէ այդպէս է, ինչու մի ատորպրութիւնը չը հանդատացրին որբերին։ Այժմ գուցէ...

Այդ ժամանակ մօտեցաւ կայարանին երկաթուղու գնացքը և մենք ընդհատեցինք մեր խօսակցութիւնը ու վեր կացանք։

Վօկզալ եկան երկաթուղու ճանապարհորդներ։ Սկսվեց աղմուկ ու տեղափոխվելի վազն և հրաժեշտ տուի ծանօթներիս։

—

Կարս հասանք մի հրաշալի գեղեցիկ օր։ Օդի մէջ տիրում էին թարմութիւն և զարնանային տաքութիւն։ Չէր կարելի կարծել թէ մենք գտնվում ենք այնպիսի բարձր տարածութեան, որտեղ նոյն իսկ ամառը հազիւ աւելի տաք է լինում, քան այդ օրը։

Ես իջայ հիւրանոցում և իսկոյն դուրս եկայ պտտելու քաղաքում։

Քաղաքիս նոր մասը կանոնաւոր յատակագծված է և տները եւրոպական ձևով են, իսկ հին մասը կրում է ասիական քաղաքի տիպ։

Հին քաղաքի մեծագոյն մասը դատարկված է ոչնչանալու։ Այստեղ այլ ևս թոյլ չէ

digitised by A.R.A.R.@

տրվում նոր տներ չինելու։ Այնպէս որ հին տները, երբ խարխուլ են դառնում, չեն կարող նորոգվել և կարկատվել։

Կարսի բերդը առաջին անգամից չէ պործում այն տպաւորութիւնը, որ ապատում է մարդ։ Պէտք է պատել շուրջը և ծանօթանալ բոլոր մերձակայ բարձրութիւնների հետ։ Ես կատք վերյրի և դնալի Արդահանի ճանապարհով մինչև Բաանդեանի ապօնի գործարանը։ Նայելի բոլորը և վերադարձայ տուն։

Ծանօթալուց Կարսի բնակիչներից շատերի հետ։ Կարսի հին բնակիչները դեռ շարունակում են իրանց հին սովորութիւններով ապրել։ Նոր բնակիչները, կամ ինչպէս այստեղ ասում են վերաբնակիչները, որոնց մեծ մասը եկել է Ալէքսանդրօպօլից, իրանց ձեռքն են դցել քաղաքի առուտուրը և գինուորական կալանները։

—Վերից վար են նայում մեզ վրա, դանդատում էր մի հին կարսեցի վերաբնակիչների մասին. մեր քաղաքն եկան ու մեզ արհամարհում են։

—Այդ հինները կարծես թէ թիւրքերէն են ապրում, խօսում էր մի վերաբնակիչ։

—Չէ, այժմ հինները ընտելացան նոր պահանջներին և շատ բաներում փոփոխութիւն են անում իրանց կեանքի մէջ, այնպէս որ մի քանի ժամանակից յետոյ տարբերութիւնը կանհետանայ, ասում էր մի հին պաշտօնեայ, որ վաղուց ապրում է Կարսում։

Ես գնալի որոնելու իմ թղթակցին, որ ինձ հրաւիրել էր Կարս։ Նա տուց ինձ շատ տեղեկութիւններ։

—

Նկարագրեմ Կարսը ըստ իմ թղթակցի։

digitised by A.R.A.R.@

Կրակի օր էր։ Մի տաք գարնանային օր։ Մենք Ալեքսանդրեան փողոցում ենք։ Սա կարևոր Պրօսպեկտն է։

Մարդիկ ազատ են այսօր փողոցի նստարանների վրա նստած, կամ խումբ-խումբ տրօտուարների վրա մանր գալով խօսում, վիճում և ջուարճանում են։ Դրանք կարծես, այսպէս ասած beau monde-ը և ինտելիգենտներն են։ Այդտեղ կան զանազան հիմնարկութիւնների պաշտօնեաներ, վաճառականներ, գործակատարներ, ուսուցիչներ և այնպիսի արհեստաւորներ, որոնք իրանց պատուին չեն թոյլ տալիս գնալ արճարան կամ հիւրանոց։

Անա չահէների մի խումբ, առանձին նստած, խօսում է անց ու դարձ անողների մասին. բամբասում, ծաղրում և հրահրում։

Անա մի ուրիշ խումբ զբաղված է ինչ որ «վսատօն» թղթախաղի, կամ «նարդ ու գաղի» պատմութեամբ, կամ Մելիքովների և Տվերդէկի դարեջրի յատկութիւնների քննութեամբ։

Անա վաճառականների մի խումբ, որ կանգնած խօսում է կարսի վրայով Թիւրքիա նաւթ արտահանելու մասին և այն բոլոր դժուարութիւնների մասին, որոնց պէտք է յաղթել Տրապիզոնի վրայից ներմուծվող նաւթի դէմ մրցելու համար։ Դիտեցէք ինչպէս ամեն մէկը աչխատում է իր վաճառականական հմտութեանը ապացոյց տալ։ Անա մի խումբ, որ խօսում է քաղաքական կեցուտ խնդիրների մասին և վըճռում համաչխարհային հարցեր։

Բայց տեսէք, ոչ ոք և ոչ մի խօսք ու ակնարկ չէ անում, օրինակ, Ախալքալաքի խեղճ ժողովրդի անյետաձգելի կարիքների և դառն կարօտութեան մասին։

digitised by A.R.A.R.@

Ինչու՞

Շատ պարզ է։ Այդտեղ իսկոյն առաջ կը գայ նրբաթաղէս օգնելու հարցը, որը ամենևին կարևոր. նախահաշուի մէջ չէ մտնում։

Այժմ գնանք այցելելու Կարսի գրադարան-ընթերցարանը։

Նուռլ անկիւնում ընկած ցածլիկ նեղ ու մութ մի շինութիւն է դա, որի ճակատին խիտ է, հազիւ նշմարելի ցուցանակը։ Գիտէք արդեօք երբան փառաւոր սկիզբ ունէր գրադարանը և տեսէք, ինչպիսի ցաւալի վիճակի մէջ է նա ներկայումս։

Ոչ ոք չը կայ այնտեղ։

Լրագիրները ցիր ու ցան ընկած սեղանի վրա, ապատում են ընթերցողի իսկ գրել-կարդալ պիտոյքները բաւարարելով, կամ պարապ խօսակցութեամբ են զբաղված։

Ընթերցողներ չը կան, անդամներ շատ քիչ են։ Գրադարանը փող չունի, որ գոնէ մի վարձու բնակարան տեղափոխելիս։

Գանձակցին մարդիկ, որոնք երկու ներկայացում տալով՝ հազիւ հազ կարողացան այս տարվայ լրագրերի բաժանորդագինը և տան վարձը ապահովել։ Այժմ ամսական ծուռքը չէ կարողանում նոյն իսկ ընթացիկ ծախսերը ծածկել։ Գրադարանը փակման վտանգի մէջ է նրբաթաղի պատճառով։

Այո, 18 հազար բնակիչ ունեցող կարսը չէ կարողանում մի հաստատ գրադարան-ընթերցարան անգամ պահել իր ամենահամեստ պահանջներով։

Մթէ ամօթ չէ՞։

Կարսի երիտասարդները, որոնք չիքի համար տասնեակ բուլվիններ չեն խնայում, չեն ու-

digitised by A.R.A.R.@

զուտ ամսականն 50 կոպ. վճարել և գրադարանը պահպանել։

Ի հարկէ ամօթ է և հազար ամօթ։

Անյիշենք դէպի սրճարանների կողմը։

Զարմանալի բան։ Այստեղ ասեղ գցելու տեղ չը կայ։ Սրճարանները յաճախորդներով լիքն են։ Ինձ նրանց մի մասն էլ գիտեմլով է գրան առջը գրած անդամների շուրջը և նստած տուրճ է խմում և նարդիլէ քաշում։

Ո՞նչ բնորոշ հակադրատակեր... Գրադարանում բոլորովին մարդ չը կայ, իսկ խայֆախանայում ասեղ գցելու տեղ չը կայ...

Մտանենք գեղուհիների սրճարանը, ուր հաւաքվում են քաղաքի «պաշօտնիքները» և քաղաքային գործերի մասին խորհրդակցում են։ Դա մի քառակուսի, մութ և ոչ մեծ անենակ է։ Ներս չորս պատի տակ տախտակ են կապած, որոնց առաջները գրած են կեղտոտ անդամներ և չարած նատարաններ։ Մի անկիւնում չինած է հնոցը, որտեղ պատրաստում են տուրճը։

Խայֆախանան բոլորովին լիքն է և մեզ համար շատ դժուար է տեղ բանալ։

Այստեղ նստած են հասակն առած, եռանդը կորցրած, կամ ծերացած մարդիկ, որոնք ամբողջ օրեր անց են կացնում այդտեղ՝ «նարդի» են խաղում, «փաստեն» են խաղում, «տուրճը փըռռացնում և նարդիլէն ուռեցնում»։ Կան և պարապ նստածներ, որոնք խօսում են օրվայ դէպքերի մասին։

Սրճարանում օդը սարսափելի ապականված և թանձրացած է։ Եկածին բոլորը տուրճ են առաջարկում։ Ի հարկէ անկարելի է բոլոր հրաւէրները ընդունել, եթէ չէ խնդրեն պէտք է սրճարանից յետոյ բժշկի մօտ վազել։

digitised by A.R.A.R.@

Հնոցի ճակատին կպցրած տախտակի վրա սրճարանի տէրը, կամ «Թաբին» ապիտակ կաւիճով ինչ որ հօրիզոնական գծիկներ է քաշում և չրջաններ նկարում։ Դրանք յաճախորդների ապառիկ խմած սուրճերի հաշիւն են ցոյց տալիս։

Մի բան, որ զարմանալի է, այդ այն է, որ Կարսի հնաւանդ «պաչօնէքները» առաջին տարիները, երբ նօսք էր լինում քաղաքային ինքնավարութիւն ունենալու մասին, չատ զայրանում էին Կարս քաղաքը, ասում էին նրանք, անկարող է այդպիսի մի հիմնարկութեան ծախսերը հոգալ։ Իսկ այժմ, երբ նրանք են ցանկանում, որ որքան կարելի է նա չատ իրագործվի։ Ի՞նչ է պատահել։

Մի ծերունի պատմում էր ակնեղեցում լսած քարոզի մասին։

—Աղբէր, ասում էր նա, տէրտէրը ամբողջ կէս ժամ խօսեց, բարկացաւ, զայրացաւ, բայց ինչ ասել կուզէր՝ չը հասկացայ։ Մենք լսեցինք մի չարք բառեր, բացականչութիւններ, որոնք վերջանում էին հետևեալ խօսքերով «Մարդս, մարդ ըլլալու է», Անցեալ տարիները, ինչպէս ասում են, «փէչը քաշել էին», բայց այս տարի չը գիտեմ ինչ պատահեց, որ կրկին բեմ բարձրացաւ ինչևիցէ։

Խօսքին և ակնեղեցու երգեցողութեան մասին Շնորհիւ տէր Կորիւն քահանայի կազմակել է կանոնաւոր քառաձայն խումբ։ Սակայն երէցփոխը չէ ցանկանում հասկանալ, որ ամսական 20 րուբլի ռոճով անկարելի է պահանջել յաբառութիւն 40—50 հոգուց բաղկացած մի մեծ երգեցիկ խմբից։

digitised by A.R.A.R.@

Մի ուրիշ ծերուկի վայրապատմած խօսում էր եկեղեցու մասին։

—«Աղբէր, ասում էր նա, երբ պիտի պըրծնենք դէպի եկեղեցին տանող նղծված ճանապարհից։ Այսօր եկեղեցուց ցած իջնելիս վայր ընկայ, քիչ մնաց հոգիս փչէի։

Այս է Կարսի արճաղանքի նկարագիրը։

Իսկ ինչ է կատարվում գինետներում, աբլահատների գրասենեակներում։

Դա նոյնպէս հետաքրքրական է. բայց նրանց այցելելը և նկարագրելը ժամանակ է պահանջում։

Կարսից ճանապարհ ընկայ դէպի Կաղզուան։ Սկզբում մի հինգ—եօթ վերստ տարածութիւն ինձ յիշեցրեց այն թշուառ ճանապարհը, որ ակսում է Սխալքալաքից դէպի Ալէքսանդրոպոլ։ Բայց այստեղ չը շինված խճուղու տեղը չատ կարճ է։ Այնուհետև ճանապարհը լաւ է մինչև Կաղզուան։

Ճանապարհին ամբողջ ժամանակը իմ առջևն էին Կաղզուանի ժողովուրդը և Զաքար Զանիթօղլեանը միմեանց դէմ—յանդիման կանգնած։

Լրագրական յօդուածների և թղթակցութիւնների պատճառով Կաղզուանը իմ երևակայութեան առաջ հանդէս էր գալիս միայն այդ պայքարի մշուշի մէջ։

Բայց երբ մօտեցայ Կաղզուանին, անմիջապէս տպաւորութիւնները ինձ գրաւեցին։ Նոր քաղաքը ունի կանոնաւոր լայն փողոցներ, որի կողքերին տնկված են ծառեր, օրինակ բարդիներ, որոնք լաւ պարտպատել են։ Առուների միջով հատած են չրներ։ Տեսքը պրուիշ է։

digitised by A.R.A.R.@

Հին քաղաքը քանդվել է և քանդվում էր։ Բնակիչներին տալիս են նոր հողեր ապրելի ընդարձակ, քան առաջվայ տեղերում։ Առաջ տալիս էին 200—240 քառակուսի սաժէն, իսկ այժմ պրա կէսը։

Այստեղ էլ բնակիչները երկուսի են բաժանված՝ բնիկներ և վերաբնակիչներ։ Բնիկները հասկան, հասարակ հնաոճանդ մի ժողովուրդ են. վերաբնակիչները—ճարպիկ, գործունեայ, համարձակ, եռանդուն։

—Այն կուի մէջ, որ ասել էք, հարցրի ես, ովքեր են մասնակցում՝ բնիկները թէ վերաբնակիչները։

—Երկուսն էլ, բայց զանազան դիպուածներից պատճառված։ Բնիկները վերաբերված են այն արհամարհանքից, որին ենթարկվեցին երբեմն հին ժողովուրդ և եկեղեցու սէր. իսկ վերաբնակիչները գանվում են թէ նոր գաղափարների ազդեցութեան տակ, թէ կրում են իրանց մէջ բողոքող ոգի և թէ, պէտք է խոստովանել, ունեն անձնական դիպուածներ էլ։

Ես ցանկութիւն յայտնեցի ծանօթանալու բնիկների տների հետ։ Տեսայ քաղաքի մէջ մի տուն։ Ցետոյ ինձ առաջարկեցին գնալ այցելելու բնիկներին այգիների մէջ։

Դուրս է գալիս բանից, որ տնտեսականի մի մասը ապրում է մշտապէս այգիներում։ Բնիկների գլխաւոր պարապմունքն էլ հէնց այգեգործութիւնն է։ Նրանք պատրաստում են մաթ (գօշաբ), շաղգամ հաց թթի հիւթից և ալիւրից, ալանի և չոր միրգ, որ տանում են գիւղերը վաճառականներ։ Գիւղերի հետ

Աղահանքերը չեմ նկարագրի։ Այդ էլ մի ուրիշ անգամ կպատմեմ աղահանքերի մասին։

digitised by A.R.A.R.@

հի հետ կապված են մի շարք բնորոշ տպաւորութիւններ, որոնց ներկայացնելու համար անհրաժեշտ է տրամադրութիւն

կը տպաւորէ աւելի յարմար ժամանակին

Կաղզուանում ինձ պատմեցին մի քանի դէպքեր իրանց քաղաքային աւադի, տեղական դրպրոցների, ծննդեան ճրագալոյցի աւետիս մանգուլու վերաբերութեամբ տեղի ունեցած անպատեհութիւնների, ազահանքերի բանւորական ոռճիների, տեղական երկու վաճառականների ընդհարման և այլն դէպքերի մասին

Բայց ես անկարող եմ բոլորը պատմել զանազան պատճառներով

Կաղզուանից ճանապարհ ընկայ դէպի Խիժան

---

digitised by A.R.A.R.@

XXXV

(15 *ապրիլի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 80)

Վերջապէս էջմիածնում եմ։

Իմ ընթերցողը անչուշտ ապասում է ինձնից մի չարք նկարագրութիւններ։ Բայց արդիօք ես կարող կը լինեմ գոհացնել նրա հետաքրքրութիւնը։

Գուցէ և ոչ։

Ես չը պէտք է նկարագրեմ, օրինակ...

Ոչ վեհարանը։

Ոչ ճեմարանը։

Ոչ թանգարանը։

Ոչ տպարանը։

Ոչ պլանը։

Ոչ մխիթարանութիւնը։

Ոչ Ղազարապատը։

Ոչ վանական տնտեսութիւնը։

Ոչ Ս. Գրքատի խմբագրութիւնը։

Ոչ հնագիտական պեղումները...

Ուրեմն մնում է ձեզ բաւականանալ ուղղակի իմ մի քանի տպաւորութիւններով, այն էլ վերաբերեալ ոչ հոգեւորականներին։

Ես իջել էի Վաղարշապատի պրօպեկտի վրա գտնվող պօստի կայարանի անչուք սենեակում։

digitised by A.R.A.R.@

Փոքր նախասճաշ անելուց և թէյ խմելուց յետոյ՝ ես ինձ զգայի կազդուրված։ Մաքրեցի շորերս և ուղղվեցի դէպի վանքը։

Անցայ վաղարշապատի ամայի փողոցը և ծռվեցի դէպի ճեմելիքը, որ տանում է դէպի վանքը։ Ճեմելիքում միայն երկու հոգի տեսայ՝ մանգալիս։ Նրանք նայեցին հարցական աչքերով ինձ վրա, չափեցին ինձ ոտից մինչև գլուխ և շարունակեցին իրանց գրույցը։

Անցայ վանքի սահմանների մէջը։ Այս կողմ, այն կողմ երկար չրջելուց յետոյ՝ կանգ առայ մի տեղ, ուր պատի վրա գրված կային ինչ որ անուններ և նախադասութիւններ։

Այդ ժամանակ մօտեցաւ ինձ մէկը։

—Պարոն, դուք վանքն էք ուզում տեսնել, հարցրեց նա։

—Այո, պատասխանեցի ես։

—Դուք ո՞րտեղից էք գալիս։

—Թիֆլիսից։

Ես չարունակում էի նայել պատին։

—Դուք անցո՞րդ էք, հարցրեց նա փաղաքշական ձայնով։

Այդ ժամանակ ես կարդայի պատի վրա մի անմեղ նախադասութիւն, որի տակ ստորագրած էր Գէորգ Անտունեան։ Ես անգիտակցաբար արտասանեցի բարձր ձայնով անուն ազգանունը՝

—Գէորգ Անտունեան։

—Անտո՞նեան, հարցրեց պարոնը։

—Ո՛չ, Անտունեան, առայի ես, երևի անտուն բառից է առաջ եկել։

—Երևի երևի, չտպտով հաւանեցաւ նա ինձ հետ։ Դուք երկար կը մնա՞ք այստեղ։

—Կը մնամ փոքր ինչ, պատասխանեցի ես։

digitised by A.R.A.R.@

Պարոնը դուրս տուեց և հեռացաւ դէպի վանքի խորքերը։

Ես այդ պարոնին բոլորովին մոռացած կը լինէի, եթէ մի հանդամանք ինձ յետոյ չը յիշեցներ նրա մասին, իմ նրա հետ ունեցած այս չնչին խօսակցութիւնը մի առանձին արդիւնք ունեցաւ, որ մի և նոյն ժամանակ դարձաւ բարքերի լուսաբանութեան համար մի պղպեղիկ նմուշ։

—

Էջմիածնում ես ունէի միայն մի ծանօթ, որի հետ պէտք է տեսնվէի։

Որպէսզի չարունակել դեռ իմ երջանկութիւնը, տեսնել նոր աւելացած շինութիւնները, պլանը և մանաւանդ Ներսիսեան լիճը, որի հետ կապված են ինձ համար ախորժելի յիշողութիւններ... և յետոյ այցելութեամբ զբաղվել։

Ես այդպէս էլ արի։

Վերադարձին ինձ սպասում էին անսպասելի տեսարաններ։

Իմ դէմ-յանդիման գալիս էր մի երիտասարդ։

—Ներեցէք, դիմեց նրան, որտեղ կարող եմ տեսնել N N-ին։

Ես անուանեցի իմ ծանօթին։

—Ես կարող եմ ձեզ առաջնորդել, յայտնեց երիտասարդը մեծ պատրաստակամութեամբ։

—Շնորհակալ եմ։

Մենք առաջ գնացինք։

—Ներեցէք, պարոն, դիմեց նա ինձ, դուք ճանապարհորդում էք։

—Այո։

—Դուք Թիֆլիսից էք գալիս։

—Այո։

digitised by A.R.A.R.@

—Արդեօք ուրիշ ճանապարհորդ չը կար այս կողմերն եկող։

—Չը գիտեմ, ես չը տեսայ։

Առաջնորդս վոչը ինչ լուռթիւնից յետոյ՝ քաշվելով դիմեց ինձ։

—Ներեցէք աղային, եթէ չեմ սխալվում, դուք Գէորգ Անտունեանն էք։

—Ի՞նչ, զարմացած հարցրի ես։

—Գուցէ սխալվում եմ, ինձ այդպէս տուին, դրսից կորցրած պատահականց իմ առաջնորդը։

—Ո՞վ տուց ձեզ։

—Վանքում մէկը ձեզ տեսել էր և հարցրել ես դուք տալ էիք, որ Գէորգ Անտունեանն էք և դեռ կատակ էլ էիք արել «անտուն» խօսքի համար։

Ես չը կարողացայ ծիծաղս պահել և պատմեցի, որ այդ անունը ես կորզացել եմ միայն պատի վրա. իսկ ինձ մօտ եղած խաթաթքը զան պարոնը իմ որոտացած բառերը ընդունել էր իմ անուան տեղ։

Երիտասարդն էլ ծիծաղեց։ Մենք գնացինք ուղիղ իմ ծանօթի մօտ։

—Այդ դուք էք, ա. Վրթին, որքան ուրախ եմ։

Ողջունեցինք և սկսեցինք հարց ու փորձ միմեանցից։

—Այսօր մի ուրիշ հիւր էլ է եկել մեր վանքը, ասաց ինձ ծանօթս։ Անունը ասացին Գէորգ Անտունեան։ Այդ ով է, ես չեմ լսել։ Արդեօք դուք չը գիտէք։

Ես ծիծաղեցի։

—Ի՞նչ կայ, ինչ էք ծիծաղում։

Ես պատմեցի եղելութիւնը։

—

digitised by A.R.A.R.@

Ամրողջ երկու ժամ պրոյց անելուց յետոյ՝ ես ցանկութիւն յայտնեցի շարունակել իմ ընդ-ջատայութիւնը ու կամենում էի արտաքինից յետոյ տեսնել նրբերինը։

Ինձ տուին մի նոր առաջնորդ։

Երկար ժամանակ պտտեցինը, շատ բաներ տեսանք և անտղեցինք, շատ բաներէ մասին վիճաբանութիւններ ունեցանք։

Վերջապէս երբ նայում էինք խուցերը, մի տեղ, մի քանի սենեակ անցնելուց յետոյ, վրաերնիք նստել հանգստանալու և էջմիածնի ազգեայ կարիքների մասին խօսելու։

Մինչ իմ ուղեկիցը խօսում էր, ես դիտում էի սենեակը և ակամայ դնում այն խուլ արձագանքին, որ առաջ էր գալիս նրա ձայնից։

Մի քանի ժամանակից յետոյ ինձ այնպէս թուաց, որ ես լսում եմ մինների չարժուկի խշխշոց։

Հասկանալի էր։

Այնտեղ, ուր մարդիկ մշտական չեն ապրում, մկները համարձակ են դառնում։

Աշխշոցը մեծացաւ։ Հասկանալի էր, որ մեզ թղթերի մի մեծ կոյտի մէջ էր ընկել։ Սակայն թուղթ չէր երևում սենեակի մէջ։ Սենեակը դատարկ էր։

Երևի մեզ հարևան սենեակումն էր պտըտվում։

Ուղեկիցս լուրջ դէմք էր չինել և ուզում էր ցոյց տալ, որ նրանք դրաղված են մեծ հոգսերով։

Մկների խշխշոցը սաստկացաւ և ինչ որ մի բան կարծես ընկաւ։ Ես այլ ևս չը համբերեցի։

—Երևի այստեղ շատ մկներ կան, ասացի ես։

digitised by A.R.A.R.@

—Ինչ պատմական հարցերից առաջնորդա
—Մխներ, պատասխանեցի ես
—Ինչպես թե մխներ
—Չեմ հասկանում, յուսահատ հայեացքով նայեց ինձ առաջնորդս
—Ինչպես չէք հասկանում Դուք մխթե չէիք լսում խշխշոց ինձ այնպես էր թվում, որ մխներ են չարժվում այս կամ հարևան սենեակներում և բան են կրծում
—Ես չը լսեցի, կտրական յայտնեց նա
—Գուցե սխալվում եմ, ինձ միայն այնպես թուաց
Մենք շարունակեցինք մեր խօսակցութիւնը. Յանկարծ նորից լսեցի մխների չարժուձնների ձայնը
—Ահա այժմ լսում էք, հարցրի ես բռնելով կամացուկ առաջնորդիս թևից
Նա կարմրեց
—Դա մուկ չէ, ասաց նա, երևի, մարդ կայ հարևան սենեակում
—Անկարելի է, նկատեցի ես, մենք նոր այնտեղ էինք, մարդ չը կար
—Երևի եկող է եղել
Ես հետաքրքրվեցի: Շտապելով դուրս վազեցի, մտայ հարևան սենեակը, որտեղից խշխշոցի ձայն էր գալիս և ինչ. տեսնում եմ մի մարդ կանգնած է ականջը դրած դռանը և աչխատում է կարծես լսել: Ես վերադարձայ և պատմեցի
—Ահա և տան մուկը, ասացի ես
Առաջնորդս ամաչկի վրդովվեց: Ես վերջերի այս անախորժ դրութիւնից
—Շարունակեցէք Ձեր ասելիքը:

digitised by A.R.A.R.@

Նա խօսեց, բայց չը կարողացաւ հոգու նախանձին անդորրութիւնը վերադարձնել։

Երբ մի ժամից յետոյ ես նորից իմ ծանօթին պատմեցի մինների ներթափանցելու արշաւանքի մասին, նա ինձ բացատրեց շատ բան։

—Այստեղ դռները ակռաներ ունեն։ Դռներ եռանից մարդիկ կանգնում են և լսում։

—Մենք խօսում էինք շատ ցածր ձայնով և մեր խօսածը մի առանձին գաղտնիք չէր, յայտնելու եաւ

—Մի և նոյնն է։ Բայց կարող էր և գաղտնիք լինել։

—

Երեկոյեան դէմ ծօտեցանք մայր տաճարին։ Օդի մէջ տարածված էր ջերմեռանդութեան ներչն ուժ։ Մեծ պատը դրաւել էր աղօթողներից։

Մեր ծօտով անցան դէպի տաճար գանազան դասակարգի մարդիկ, լուրջ դէմքով և մեծ մասամբ լուռ։

Պէտք էր կայսրան վերադառնալ։ Ես մի պատուար ուղղութեամբ։ Այդտեղ ճանապարհին մի բան գրաւեց իմ ուշադրութիւնը։

Ինչպէս բոլորիս յայտնի է, այս կողմերում շատ սիրում են պատերի վրա գրել։ Մէկը մեծ մեծ տառերով իր անունն էր խզբզել, նշանակելով, թէ երբ է նա այս տեղերը այցելել։ Միւսը անմահացրել էր իրան ռամանաւորով։ Երրորդը նկատողութիւններ էր գրել տեսած տեղերի և տիրող կարգերի մասին, չորրորդը իր տեսչանքներն էր յայտնել։

digitised by A.R.A.R.@

XXXVI

(22 մարտի 1901 թ., «Արշալույս» № 86)

Ես պատմեցի էջմիածնում տույժած իմ առաջին ապաւորութիւնները։

Վանքից չտապեցի կայարան հանգստանալու։ Ես յոգնած էի ճանապարհից և իմ այդ օրվայ զբօսանքներից։

Սակայն ինձ վիճակված չէր հանգստութիւն ունենալ։ Հազիւ վերադարձել էի կայարան՝ ինձ մօտ եկաւ երիտասարդների մի խումբ, որ փոխեց իմ ծրագիրը։ Երիտասարդները տեղեկացել էին իմ մասին և եկել էին ինձ հետ ծանօթանալու։

—Ինդրում ենք այս երեկոն միասին մեզ հետ անցկացնէք, ասացին նրանք։

—Աւելի լաւ է՝ թոլորովին տեղափոխվեցէք կայարանից մի մանաւոր բնակարան. ես խնդրում եմ ինձ մօտ, առաջարկեց նրանցից մէկը։

Տեղափոխվելու առաջարկը մերժեցի, իսկ միասին երեկոն անցկացնելը ընդունեցի։ Ձը նայելով սաստիկ յոգնած լինելուս՝ համաձայնվեցի երիտասարդների հրջանում լինելու։ Դա թէ պահանջ էր ինձ համար և թէ իմ ճանապարհորդութեան նպատակներին ծառայող առիթներից մէկը։

Պայմանաւորվելուցինք մի ժամից յետոյ ժողով-

digitised by A.R.A.R.@

վել ես օտարվել այդ ժամից և մի փոքր
հանգստացայ։

Երեկոն անցավ աշխույժ խոսակցությանն մէջ
և ես անհնազանդելի կերպով նայելի սինչև գի-
շերվայ ժամի մէկը։ Երանք պատմեցին վա-
ղարշապատի և էջմիածնի մասին, ես պատմե-
ցի Թիֆլիսի և իմ ճանապարհորդության մա-
սին։

Երիտասարդներից մէկը շատ մանրամասն
ծանօթ էր վանքական գործերին և պատմում
էր մի շարք դէպքեր։

—

Երիտասարդները պատմեցին այն կրօնական-
բարոյական-պատմական ուղղության մասին,
որ ուզում են մշակել նորեկ աստուածաբան-
ները։

Սկսվեցին կատակներ այդ ուղղության ներ-
կայ հերոսների, անաջողակների և վարիքանչի-
նների կեանքից։

—Մեր հին ակնդետներում, ասաց մի երի-
տասարդ, ինչպես յայտնի է, յաճախ պատա-
հում են չղջիկներ։

—Ի՞նչ, հարցրին մեզանները։

—Չղջիկ. դիշերատուկ։

—Հա, հա, դիտենք։

—Ահա ես այդ չղջիկների մասին խոսք բաց
արի մի տրրացուսիտ նախկին սանի հետ և
լուրջ դէմքով ասացի նրան. թէ չղջիկները ի-
րանց ներկայությամբ յիշեցնում են մի ինչ որ
հին, աստանդական, ազգային, արրատյան ժամա-
նակներ, մինչդեռ նրանք անյայտացել են մի
քանի տեղերից և բոլորովին չը կան նոր ակն-
դետներում և թէ պէտք է ակնդետների տա-
նէրները այնպէս յարմարեցնել, որ չղջիկները

digitised by A.R.A.R.@

կարողանայինն ապրել, պարգևնալ և բազմանալ։ Տիրացուն լսեց, մտածմունքի մէջ ընկաւ և ինձ լուրջ պատասխանեց՝ «այդ բանի մասին պէտք է խորհել»։

Երիտասարդները ծիծաղեցին։

—Այժմ նոյն տիրացուն զբաղված է մի բնաբոյծ հարցով։ Նա ուզում է ապացուցանել, որ հոգևոր իշխանութիւնը կարող է ծխականին զրկել իր ընտրողական իրաւունքներից։

—Ինչպէս է ապացուցանում, հարցրինք մենք։

—Նա հաւատացնում է, որ կապացուցի վաւերապէս։ Ծխականը իր հոգևոր իշխանութեան առաջ ստորադրեալ է, ուստի և կախված է նրա կամքից ու կարգադրութիւնից։

—

—Խնդրեմ ասացէք, դիմեց ինձ երիտասարդներից մէկը, ինչպէս են առաջ գնում Թիֆլիսի ազգային գործերը։

—Հրաշալի կերպով, պատասխանեցի եւ։

Ո՞նչպէս եւ չը պաշտպանէի մեր Թիֆլիսի պատիւը օտարաքաղաքացիների, «ուրիշ-օլքցիների» առաջ։ Պակասութիւնները եւ համարեա էլ բացառութիւններ։

Սակայն ստիպված էի խոստովանել, որ բացառութիւնները չափազանց շատ են։

—Պատմեցէք մեզ, ինչ ազդեցութիւն ունեցաւ տէրտէրների մանակցութիւնը ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան մէջ։

Այս հարցով դիմեցին ինձ երիտասարդները։

—Ես չեմ համակրում տէրտէրների մանակցութեանը և նրանց ընտրվելու եղանակին, բայց պէտք է խոստովանեմ...

—Ո՞նչ էք ուզում խոստովանել։

digitised by A.R.A.R.@

—Որ մի որոշ հանգամանքներում նրանց պատժելութիւնը լաւ եղաւ, պատասխանեցի ես։

—Ի՞նչ գործում, օրինակ։

—Օրինակ, անցեալ տարի ուսուցիչ տէրտէրների մէջ կային այնպիսիները, որոնք մեծ թուով դասեր էին թաց թողնում, կամ ուշանում էին դասերին, իսկ այս տարի այդպիսիների թիւը պակասել է։

—Ուրի՞շ։

—Անցեալ տարի դպրոցի մէջ պատահում էին դէպքեր, որ ուսուցիչը դասի ժամանակ տպագրական սրբագրութեամբ էր պարապում, իսկ այս տարի այդպիսի դէպքեր չը կան։

Փաստերը չախչախիչ էին։ Երիտասարդները լրացուցիչ մեկնութիւններ խնդրեցին։ Ես համոզուեցի, որքան պիտէր։

—Մնէթ, սակայն, հարցրին նրանք, նէթ տէրտէր հոգաբարձուները չը լինէին, չէր կարելի այդ զանցառութիւնները վերացնել։

—Ի հարկէ ոչ, պատասխանեցի ես։ Իսկ այժմ աշխոյժ, որովհետև անկարելի է, որ տէրտէրը միաժամանակ և ուսուցիչ լինի և հոգաբարձու։

—Ո՞վքեր են հոգաբարձուները։

Ես թուեցի թէ աշխարհական և թէ տէրտէր հոգաբարձուներին և իւրաքանչիւրի արժանիքը յատկապէս ստորագծեցի։

—

Երիտասարդները պատմեցին ճեմարանի մէջ գործող խմբի սխրագործութիւններից բնորոշ դէպքեր։ Ես այդ բոլորը կամաւ բաց եմ թողնում և առաջ կը բերեմ միայն մէկը, որ վերաբերում է անցած-գնացած օրերին և ինքն ըստ ինքեան մի անմեղ բան է։

digitised by A.R.A.R.@

Մի ժամանակ ճեմարանի բևկտօրն էր հանգուցեալ Սարգիս եպիսկոպոսը։

Բևկտօրները, ինչպէս յայտնի է, լինում են համալսարաններում և բարձրագոյն կրթարաններում։

Բևկտօր էր և Սարգիս եպիսկոպոսը ճեմարան-ակադեմիայում։

Նա բևկտօր էր ոչ թէ իր ուսումնական պատրաստութեան, ոչ թէ դպրոցավարական հմտութեան, ոչ թէ իւր առանձին սիրոյ պատճառով դէպի կրթական գործը... Ոչ։ Հազար անգամ ոչ։ Այլ հէնց այն պատճառով, որ ինչո՞ւ նա չէ կարող բևկտօր լինել, ինչո՞ւ է նա պահաս ուրիշներից։ Եպիսկոպոս մարդ էր. հանաք հօ չէ։ Մի՞թէ այդ աստիճանը բաւական չէր մի բևկտօրի պաշտօնավարութեան համար։

Սբարանը ցնծում էր, տեսնելով բարձրագոյն կրթական գործի գլխին իր հարազատին։

Նրա բևկտօրութիւնը այն լաւութիւնը ունէր սակայն, որ... բևկտօրը սկզբում չէր խանգարում ուրիշներին։

Չնի համար բևկտօրը մէկ մէկ երևում էր ճեմարանում և ներկայ էր լինում դասերին։

Մի անգամ էլ նա ներկայ է լինում դրականութեան դասին։

Աշակերտները պատմում են Եէքսպիրի մասին, քննում են նրա հեղինակութիւնները։

—Եէքսպիրը մեծ հոգեբան է, ասում է մէկը և բերում է ապացոյցներ։

—Եէքսպիրը հանճար է և մինչև այժմ մնում է չը գերազանցված ոչ ոքից, եղրափակում է միւսը։

Օրինակներ և ապացոյցներ առած են բերվում մէկը միւսի հետից։

Բևկտօրը լսում է և հրճվում էր։

digitised by A.R.A.R.@

—Ես էլ լսել եմ Շէքսպիրի մասին—ասում է բեկոտը դիմելով ուսուցչին—այդ մարդը դովաբանված է. բայց խնդրեմ ասացէք ինձ, պարոն ուսուցիչ, այդ Շէքսպիրը արդեօք դուս ուս էր թէ ուսացած գերմանացի։

Զարմացած ուսուցիչը չէր սպասում այդ տեսակ մի անակնկալ հարցի բեկոտոբի կողմից աշակերտների ներկայութեամբ։

—Բուն անգլիացի, շտապով վրա է բերում ուսուցիչը և այդպիսով վերջ տալիս անպատեհ հարցապնդումին։

Բեկոտը մինչև անգամ չէ նկատում իր տգիտութեան չնորհիւ առաջ եկած յուզմունքը։

—Լաւ են պատասխանում աշակերտները, նկատում է նաև Ես գոհ եմ Ապրիք, ապրիք, զաւակներս։

Ինքնաբաւական արտով բեկոտը թողնում է դասարանը և առանձնանում դէպի իր պատշգամբը դիտելու պատուաքը և խաղողի գեղեցիկ ողկոյզները...

—

Թողինք վերջապէս խօսակցութիւնները և զբաղվենք կենացներով։

Երիտասարդները ինձ ճանապարհ դրեցին մինչև կայարան, որտեղ նախօրօք հոգացողութեամբ ինձ համար պատրաստել էին գիշերելու համար մի քանի յարմարութիւններ։

—

Հետևեալ օրը ես նորից գնացի վանք՝ լրացնելու իմ դիտողութիւնները և ծանօթանալու մի քանի ինձ համար հետաքրքրական գործերի հետ։

Էջմիածին թողի շատ խառնիխուռն տպաւորութիւնների տակ։

digitised by A.R.A.R.@

XXXVII

(29 *ապրիլի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 91)

Այսօր ես կը խօսեմ մի հանգրուանի յօբելեանի մասին։

Այդ յօբելեանը վերաբերում է մի թատրոնական գրուածքի, մի պիէսի, բայց մի սրբեալի և հայերիս համար առանձին կարևորութիւն ստացած պիէսի։

Այդ պիէսը Գաբրիել Սունդուկեանցի նշանաւոր «Պէպօ» կոմէդիան է։

—

Տօնւում է այդ պիէսի առաջին ներկայացման երեսնամեայ յօբելեանը, ուրեմն բեմի վրա ունեցած նրա կեանքի երեսնամեայ հասակը։

Այդ օրը լրանում է վաղը, երկուշաբթի, ապրիլի 30-ին։

«Պէպօի» յօբելեանը տօնում են ոչ միայն հայերը, այլ և վրացիները, որոնք մտցրել են այդ պիէսը իրանց բեպէրտուարի մէջ։

Վրացիները տօնում են այդ յօբելեանը այսօր, երեսնամեակի նախընթաց օրը, վրաց թատրօնական դահլիճում. իսկ հայերը՝ վաղը՝ արտիստական ընկերութեան թատրօնում։

—

«Պէպօն»—մեր թատերական գրականութեան գլխաւոր գոհար և պարծանքն է, մեր ժողովրդական բեմի հիմնասիւնը և ուղեցոյցը։

digitised by A.R.A.R.@

Իր հարազատությամբ, իր բնաւորութեամբ, իր բարոյական զանգուածով նա դարձել է մեր ժողովրդի անվիճելի, անկապտելի սեփականութիւնը։

Նա ժողովրդինն է։

Ժողովրդինը—իր ծննդեան օրից։

«Պէպօ» մուտքը յաղթական էր մեր բեմի վրա։

Պիեսի հետ հանդէս էր գալիս և ժողովրդի հարազատ ներկայացուցիչը։

Հասարակ, իր քրտինքով ապրող, աշխատասէր, կեանքի մէջ յաճախ անտես առնված ու անյայտութեան մէջ կորած Պէպօն կանգնեց իր ամբողջ պատկերով մեր հասարակութեան առաջ, թէև նրա համար վակված էին այդ հասարակութեան դռների չէմքերը։

Ո՞վ էր նա.—մի որ և է Պէպօ։

Ինչպէս կը համարձակվէր նա սոր առաջ դնել։

Մինչ մի որ և է ձկնորս, մի որ և է վիշտաբար, մի որ և է աշխատասէր արժանի էր նրա ուշադրութեան։

Պէպօն եկաւ և իր բազկներով ցցվեց դէմյանդիման հասարակութեան առաջ և յայտնեց իր վիշտը։

—

Բանաստեղծը վաղուց ընտրուել էր վիշտբի և քաղքի բոնած տեղը մեր հասարակութեան մէջ։

Ես է հիմիկուայ ազգի՝
Կուզես չիզրիկ տըսաքի,
Թէ քաղքե իա՝ չուրը ՝ընգի։

digitised by A.R.A.R.@

Թէ իսկա իս՝ տուն մոլ
. . . . .
Առ օրինակ,—թէ մնծաւուր
Ասպալէտները ուսին՝
Գայ պըրան մօտ, հարցնէ աղին
«Տանն է»—տանն է կօսին։

Ընրա էդնից մէ փէշաքար
Էլի էն նօքրին հարցնէ՝
«Տանն է աղէն»—կրնձին տալով
Խեղճին իսկոյն դուս կօնէ։

Պէպօն, չնորհիւ տաղանդաւոր հեղինակի գրչին, չնորհիւ հայկական բեմին, առաք-փառաք ամբ կոխեց արգելված չէմքի վրա և եկաւ հասարակութեանը ներկայացնելու ցաւերի և տանջանքների մի ընդարձակ աշխարհ, որի մէջ զոհվում են աշխատող բազուկներ, մտերիմ սրտեր, ազնիւ հոգիներ։

—

Պէպօի վիշտը՝

Պէպօի վիշտը միայն Թիֆլիսեցի ձկնորս Պէպօի վիշտը չէր, այլ և նրա բոլոր դրացիներինը։ Այդ վիշտն ունէին և որմնադիրը, և հիւսնը, և կօշկակարը, և արծաթագործը, և դերձակը—բոլոր այն մարդիկ, որոնք պատկում էին ձկնորս Պէպօի հանգամանքներում։

Վիշտը ընդհանուր էր։

Այդ պատճառով այդ վշտի ձայնը խոր արձագանք գտաւ նրա շրջապատում և դարձաւ ժողովրդական մի ծանր հառաչանք, ժողովրդական մի ցնցող բողոք։

Պէպօի վիշտն ու բողոքը անցան սարեր ու ձորեր և ամեն տեղ գտան ցաւակից բազմութիւն։

digitised by A.R.A.R.@

Պէպօն—հարուստ էր և բազում, և Գանձակում, և Երևանում, և Ալէքսանդրօպօլում, և Ախալցխայում և ամեն տեղ, ուր նա մարմնացած հանդէս էր գալիս հայկական բեմի վրայ։

—Կեանքի մէջ դու շատ զրկանքներ կրեցիր, շատ տանջվեցիր, Պէպօ, բայց քո բողոքի ձայնը, քո զրոյց յուսահատ լացի հեկեկանքները պատն յաւակից սրտեր հայոց աշխարհի բոլոր մասերում. քո բողոքը զարձաւ ընդհանուր, քո վիշտը համատարած։ Ես զրկողները, քեզ հարստահարողները, որոնք առաջ անարգել և անամօթ կերպով գործում էին այն աշխարհում, ինչ ուզում էին, սկսեցին մտածմունքի մէջ ընկնել, սկսեցին դողալ, սկսեցին վախենալ ապատնալիքներից։ Ապագան քոնն է։

—

Պէպօի վիշտը անցաւ և հարևան վրացիների մէջ, որտեղ նոյնպէս շատ գտնվեցին Պէպօներ, նրա վիճակին մասնակից և նրա վշտերին յաւակից։ Վրաց բեմը կապվեց պիեսի հետ անխզելի կապերով։

«Պէպօ» կօմէդիան 1879 թվին թարգմանվեց ռուսերէն և ներկայացվեց բեմի վրա։

«Պէպօն» անցեալ 1900 թվին թարգմանվեց ֆրանսերէն և տպվեց Մուրիէյի «Caucase illustré» հանդէսի մէջ։

—

«Պէպօ» կօմէդիան դարձաւ մեզ համար այն, ինչ որ է մի «Горе отъ ума» կամ «Ревизоръ» ռուսների մէջ։ Նա դարձաւ մեր թատրօնական գրականութեան և բեմական գործի հիմնական զարդը։

Տարբեր են նիւթերը, տարբեր են հեղինակ-

digitised by A.R.A.R.@

ներկի նպատակները, բայց նրանք պարտադրում են իրանց մէջ տաղանդի առաջին աղօղջ փայլերը հատարակական խնդիրների լուսաբանութեան մէջ։ Նրանք հիմնաքարեր են ապագայ ստեղծագործութիւնների ընդարձակ պանթէօնում։

—

Սակայն ինչ ենք արել Պէպօնների և նրանց մատաղ սերնդի համար։

Պէպօն—աշխատանքի ներկայացուցիչն է, մէկը այն բազմաթիւ մշակներից, որոնց աշխատանքով կառուցվում են հոյակապ չէնքեր և կազմակերպվում հարստութիւններ։

Կրթել ենք արդեօք Պէպօնների զաւակներին, բարւոքել ենք նրանց արհեստը, կազմակերպել ենք օդնութեան միջոցներ, ապահովել ենք նրանց առողջապահական յարմարութիւններով, միջոցներ ենք ձեռք առել վերջ դնելու այն հարստահարութիւններին, որոնց չնորհիւ նրանց ուները քանդվում են և կործանվում։

Պէպօն երեսուն տարուց յետոյ այդ հարցը դնում է մեր առաջ։

Ի՞նչ կարող ենք պատասխանել։

digitised by A.R.A.R.@

XXXVIII

(6 *մայիսի* 1901 *թ.*, «*Մշակ*», № 97)

Ես ապահովներ ունեմ իմ ընթերցողների առաջ։

Ես դեռ չեմ վերջացրել իմ ճանապարհորդութեան նկարագիրը։ Իսկ կեանքի ընթացիկ գործերը իրանց պահանջներն են անում ինձանից։

Պէտք է կարճ լռեմ։ Պէտք է իմ ճանապարհորդական յուշատետրից դէն գցեմ չատ բաներ և վերապահում նրանց աւելի ազատ ժամանակի համար։

Ինչպէս յիշում են իմ ընթերցողները՝ ես էջմիածնից պէտք է ուղևորվէի Երևան։

Այդպէս էլ արի։

—

Երևանում կարելի էր հանգստանալ Նաղդութեան և անդորրութեան չունչ էր փչում հիւրանոցից, ուր ես իջայ։ Մտաւորը այնքան հոգ էին տանում կեցողների հանգստութեան մասին, որ նոյն իսկ չէին երևում, աչխատում էին աչքի չընկնել։

Երևան մտայ գեղեցիկ և պայծառ մի օր։ Բայց նախընթաց օրերը երկարատև և տաստիկ անձրևներ էին եկել։ Փողոցներում այնպիսի ցեխ էր կանգնած, որ մի քանի տեղերով անցնել անկարելի էր։

digitised by A.R.A.R.@

Հիւբանոյի իմ զուարճախօս հարևանը, որի հետ ծանօթացայ, խօսելով Երևանի ցեխի մասին, լուրջ կերպով հարցրեց ինձ՝

—Չէք գայ արդեօք ինձ հետ այսօր մի հետաքրքրական ժողովի

—Ի՞նչ ժողովի, հետաքրքրվեցի ես։

—Այսաեղ կազմվում է մի նոր բարեգործական ընկերութիւն, ասաց նա, որ կարող է մեծ օգուտներ տալ Երևանին։

—Ի՞նչ ընկերութիւն է։

—Դա կը լինի այնպիսի մի ընկերութիւն, ինչպես որ է ջրի մէջ խեղդվողներին փրկող ընկերութիւնը։ Երևանում այդ ընկերութիւնը պէտք է կոչվի «ցեխի մէջ խեղդվողներին փրկող ընկերութիւն»։

Մենք ժպտացինք։

—Մթէ երկարատև է լինում այսաեղի ցեխը, հարցրի ես։

—Դա կազմում է մի քանի ամիսներ տարվայ մէջ։ Ամիսներից մի քանիսը շատ երկարատև են լինում։ Կան այս քաղաքում այնպիսի տեղեր, ուր հասակով մարդը խրվում է ցեխի մէջ ծնկներից բարձր, իսկ մանուկները մինչև բերանը։

Ասածիցս պատմեց մի քանի դէպքեր քաղաքի վերջին «ցեխային ամիսներից»։

—Դուք չափազանցնում էք, նկատեցի ես։ Մի քանի վտարոյներ, որ ես տեսայ, բոլորովին ցամաքել էին և մինչև անգամ փոշի էր բարձրանում։

—Ա՛հ, ա՛հ, ա՛հ, լաւ միտքս բերիք։ Մեր ընկերութիւնը պէտք է կոչվի ոչ միայն ցեխի մէջ խեղդվողներին, այլ և փոշու մէջ խեղդվողներին փրկող ընկերութիւն»։ Երևանում կամ

digitised by A.R.A.R.@

ցեխ է կամ փոշի. մարդկանց պէտք է ազատել կամ ցեխից կամ փոշուց։

Խօսակից սիրում էր չափազանցութիւններով խօսել, բայց նկատողութիւնները ուղիղ էին ընդհանուր առմամբ։

—

Մի քանի այցելութիւններ արի—հին ծանօթներիս տեսայ, մի քանի նոր անձնաւորութիւնների հետ ծանօթացայ։

—Ինչու մեզ իմաց չը տուիք ձեր գալու մասին, բարեկամաբար յանդիմանեցին ինձ նրանք։

—Ինչու պէտք է անէի, պատասխանեցի ես։ Ամեն բան ես ուզում եմ տեսնել իր սովորական վիճակի մէջ։

—Մենք յարմարութիւններ կը ստեղծէինք ձեր ճանապարհորդական նպատակները լիովին իրագործելու համար։

—Հոգ չէ, ասացի ես, այնպէս էլ ամեն ինչ կիմանանք։ Բացի այդ՝ էջմիածնում շատ բնութոյ գանգատներ լսեցի ձեր հիւրընկալութեան և դիմաւորութիւնների մասին։

—

—Խօսելիք շատ ունենք ձեզ հետ, յայտնեցին ծանօթներս։

—Խօսենք, ես պատրաստ եմ։ Պայմանաւորվենք, թէ որտեղ պէտք է հանդիպենք և խօսենք։ Ես միայն երկու օր կարող եմ մնալ Երևանում։

Ծանօթներս թուեցին մի շարք հարցեր, որոնցից կը յիշեմ միայն մի քանիսը։

Երևանի համար շուտ և էլէքտրականութիւն բերելու հարցը։

Հարց՝ թէ ինչու Երևանի թեմական պարոցի

digitised by A.R.A.R.@

նախկին մի հոգաբարձու հաշիւները չէ յանձնուած նոր հոգաբարձութեան։

Քահանաների պաղտնի ձեռնադրութեան բարձրագոյն նպատակները և խորհրդաւորութիւնը Երևանի թեմի համար։

Մուրհակի դերը քահանայ ձեռնադրելու գործում։

Ինչու են Երևանում դրամական օժանդակութիւն ժողովում Թիֆլիսի գրագէտ մի քահանայի գրական գործունէութիւնը յաւերժացնելու համար։

Ռուսնցքամարտի նշանակութիւնը փաստաբանական կօրպօրացիայի մէջ։

Ի՞նչ եղանակով գործադրել Հրատարակչական ընկերութեան գրքերը, որոնք անցել են Երևանի թեմական դպրոցի ձեռքը։

Սարդարի այգու մէջ այգեգործական դպրոց հիմնելու հարցը։

Քաղաքի չարչիների բարեգործական ազդեցութիւնը գիւղացիների վրայ։

Այս և ուրիշ բազմաթիւ հարցերի մասին մենք խօսեցինք, բայց ինձնից անկախ պատճառներով ես չեմ կարող խօսել նրանց մեծ մասի մասին։

—

Երևանը գտայ նոյն դրութեան մէջ, ինչպէս է նա միշտ։ Սակայն նրա մէջ ինչ որ նշոյլներ են նկատւում, արթնութեան թեթև նշաններ են երևում։

Առաջ Երևանցի ինտելիգենտ հայը աւելի էջմիածնական էր, քան էջմիածնեցին։ Երևանցու հետ ոչ մի ուրիշ ընդհանուր խնդրի մասին խօսել անպատճառ չէր կարելի Խօսակցութեան ա-

digitised by A.R.A.R.@

ուրիշան էին՝ էջմիածինը, այս կամ ֆարաջաները, կրօնականների արարքները...

Այժմ նկատւում է մի փոքր փոփոխութիւն: Երևանցին այժմ արդէն խօսում է և հասարակական կեանքի, գրական գործողների և հասանքների, տնտեսական խնդիրների, ինքնավարութեան պահանջների, ընդհանուր և մասնագիտական կրթութեան և ուրիշ հարցերի մասին:

Անշուշտ գործնականութեան մէջ շատ քիչ բան է արւած և դեռ ոչ մի լուրջ գործ չէ կատարւած: Սակայն մթնոլորտի մէջ սկսում է թարմութիւն նկատւել:

Անկասկած՝ բոլորովին նոր մարդու վրա է բնականը և այժմ կը գործէ նախկին քնացնող, խեղդող տպաւորութիւնը, բայց ով տարիների ընթացքում ծանօթ է Երևանի հետ, պէտք է խոստովանի, որ փոփոխութեան թեթև նշաններ կան նրա մէջ:

Փոքր, շատ թոյլ ու քնքոյշ են այդ նշանները, բայց նրանք պարունակում են իրանց մէջ կենսական և թարմացնող տարրեր:

—

Խօսակցութեան մէջ երևանցին առաջ միշտ պաղատապաճ էր, խորհրդաւոր, չափազանց զգոյշ և երկչոտ:

Ամենաղատարկ բանի մասին նա զգուշանում էր բարձրաձայն խօսելուց: Ամենաչնչին դէպքում նա քաշւում էր բողոք յայտնելուց:

Այժմ նա կարողանում է տարբերութիւն դնել իրողների մէջ: Փորձում է բողոքել, փորձում է իր պահանջները յայտնել, իր շահերը պաշտպանել:

digitised by A.R.A.R.@

Սակայն այդ բոլորը դեռ շատ աննշան չափով։

Հնի երկիւղը շատ էր մեծ։ Հնի ճնշումը շատ էր ընկճել նրան։

—

—Էլէքտրական լոյս կունենանք Երեւանում, ասում է հրճուանքով երեւանցին։

—Խաւարից յետոյ յանկարծ էլէքտրականութիւն՝ գրաւիչ է անկասկած, նկատեցի ես։

—Ջուր և էլէքտրականութիւն կը ստանանք միասին, որովհետեւ Ղըրխ-Բուլաղի աղբիւրները կը տան ջուր և այնպիսի ոյժ, որ կարելի կը լինի էլէքտրականութիւն առաջացնել և լոյս ունենալ։ Աւելացրէք դրան ձիաքաշը և երկաթուղու գիծը։

Այդ բոլորը լաւ է։

Սակայն այժմ գոյութիւն ունեն միայն ծրագիրներ։ Դեռ ոչ մի բան չէ իրագործված և ով գիտէ, երբ կիրագործվեն։

—

Դուք երեւի զարմացաք, տեղեկանալով, որ մուրհակը դեր է կատարում քահանայ ձեռնադրելու գործում։

Լսեցէք՝ բանը ինչումն է։

Մի տարի առաջ մի նոր-բայազէտցի գալիս է Երեւան քահանայ ձեռնադրվելու։

—Քահանայի որդի եմ, ձեռնադրեցէք ինձ, աղաչում է նա։

—Կարելի է, բայց գիտես, որ պայմաններ կան անհրաժեշտ։

—Ինչ կարող ենք՝ կանենք։

Նոր-բայազէտցին, որ քահանայութիւնը իրրև ժառանգութիւն կամենում էր պահել իրանց օջախում, լաւ գիտէր, որ ձեռնադրութիւնը

digitised by A.R.A.R.@

պէտք է ժամանակ խլէ մարդկանցից և նեղութիւն պատճառէ, նա չէր կարող վարձատրել այդպիսի աշխատանքը, բայց աջահամբոյր նա կարող էր տալ։

—Ահա իմ լուման, ահա ամբողջ երեսուն րուբլի, ասում է նա հօնախատօրիայի անդամին։

—Բայց ուրիշները վաթսունհինգ են տալիս, նկատում է նրան անդամը, վատ օրինակ մի լինէր, չետ մի ճնար ընկերներից։

—Աւելի չունեմ, ինչ անեմ, աղաչում է ընծայատուն։

—Վատ օրինակ կը լինի, լսում ես։

Ընծայատուի դրութիւնը վատ էր։

—Ի՞նչ անեմ, մի խօսքով ասած՝ փող չունեմ։

Անդամը մտածեց, մտածեց և գտաւ Ամերիկան։

—Տուր պարտամուրհակ ճնշած դումարի համար։

—Հաւանձայն եմ։

Անցնում են մի քանի ամիսներ։ Եւ ահա մուրհակը առաջ է գալիս իր պահանջով։ Այն էլ ոչ թէ մի անգամ, այլ կրկնակի։

Ի՞նչ կը լինի սրա վերջը։

—

Ինձ պատմեցին Երևանի «կոնդ» թաղի նոր քահանայատուի մասին։

Այդտեղ էլ ժառանգութեան հարց կայ։ Տէրտէրը ցանկանում է իր տէտ որդուն քահանայ ձեռնադրել։

—Թող օջախի մէջ քահանան միշտական անպակաս լինի, ասում է մէկը։

—Ախար տղէտ է, նկատում է միւսը։

digitised by A.R.A.R.@

—Տղէտ է, բայց մերն է, մեզ աւելի յարմար է. դուննչը վերև չի բռնի և մեզ հետ կը ապրի։ Այնքան է, որ ալէլուիան ժամանակին ասի։

Կօնդի խեղճ բնակիչները, որոնք մեծ մասամբ այգեգործներ են, լսում են այս տեսակ խօսքեր և ստորագրում են մանրավաճառ Ալֆօ-ամիի ձեռքում գտնվող համախոհականը։

Ստորագրութիւնները անթիւ, անհաւատար։

—

Մթէջ պէտք է գրեմ Երևանի միւս խնդիրների և գործերի մասին։

Անվերջ կը լինի։

Իսկ ինչ ճանապարհորդութիւնը մի անակընկալ դէպքի պատճառով բարդացաւ և երկարեց. Դրա մասին հետևեալ անգամ.

---

digitised by A.R.A.R.@

XXXIX

(13 *մայիսի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 102)

Անակընկալ դէպքը, որի մասին, ես ակնարկեցի իմ անցեալ Մանրանկարում, հետևեալն էր։

Երբ իմ երևանեան ծանօթների չրջանից վերադարձայ հիւրանոց, այնտեղ պատահեցի Թիֆլիսից եկած իմ շատ լաւ ծանօթ N. ինժեներին։

—Դուք այստեղ, հարցրինք մենք միմեանց միաժամանակ։

Նա յայտնեց, որ շատ շտապ գործով եկել է Երևան մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ ժողովելու երկաթուղային գծի վերաբերութեամբ։

—Ես այստեղից, ասաց նա, պէտք է գնամ Նախիջևան և Օրդուբաթ, և շուտով վերադառնամ։ Գնանք միասին։

Ես բացատրեցի, թէ ինչու եմ Երևանում և ասացի, որ պատրաստվում եմ Թիֆլիս վերադառնալու։

—Գնանք միասին, կրկնեց նա։

—Բայց ես ժամանակ չունեմ, յայտնեցի իրան, առանց այն էլ ուշացել եմ։

—Ես քեզնից կը խլեմ միայն չորս օր ժամանակ։ Երեք օր գնալ-գալը, մի օր էլ կը մնանք Օրդուբաթում ճանապարհորդութեան համար ես ունեմ բոլոր յարմարութիւնները՝

digitised by A.R.A.R.@

թեթև ու լաւ կարգ և բացատիկ արտօնութիւններ։

Ինձ համար շատ հաճելի էր ճանապարհորդութիւնը, ես միայն չէի ցանկանում շատ ուշանալ։

Փոքր տատանումից յետոյ վերջապէս համաձայնվեցի։

Պէտք է ճանապարհ ընկնէինք դիշերուվ։ Այդ կարեւոր էր ապահով կերպով, որովհետեւ լուսինը ուշ էր դուրս գալիս և մեզ կօգնէր իր լոյսով։

—

Ես պատրաստվեցի նոր ճանապարհորդութեան համար։ Վերջացրի հաշիւները հիւրանոցի հետ և օգտվելով ազատ ժամից՝ սկսեցի պրպտվել իմ յուշատետրով և գրել այնտեղ իմ տպաւորութիւնները և տպաւորութիւնները։

Ոչ մի կերպ ես չէի կարողանում մոռանալ մուրհակով քահանայ ձեռնադրելու դէպքը. չէի մարսում այդ բանը, չէի հաւատում լսածներիս։

Յանկարծ դուռը թխկացրին։

—Ո՞վ է, ներս եկէք, հրաւիրեցի ես։

Ներս եկաւ Երևանի իմ նոր ծանօթներից մէկը։ Ես շատ ուրախ էի նրա գալուն։ Նա եկել էր դարձնալ պատմելու մի քանի հետաքրքրական բաներ։

Ես զետեղվեցի յուշատետրիս մէջ այդ տեղեկութիւնները։

Ծանօթս խնդրեց, որ ես նրա անունը գաղտնի պահեմ։

Ես խոստացայ։

Մենք բաժանվեցինք։

—

digitised by A.R.A.R.@

Շուտով մենք ճանապարհ ընկանք։

Ես չեմ նկարագրի իմ անցած ճանապարհները, որովհետև դա ինձանից կը խլէր շատ ժամանակ։ Մենք արագ առաջ էինք գնում գիւղերի և անապատների միջով։ Երբ որ առաւօտեան արեգակը դուրս եկաւ, մենք արդէն մօտեցել էինք Դավալու գիւղին։

Հրաշալի էր առաւօտը Արարատեան դաշտավայրում։ Մաքուր ասկեզօծ գլուխը վաղուց ազդարարել էր մեզ արեգակի ծագելը, և դրանից յետոյ անցաւ մի քանի րոպէ մինչև արևի շողերը դիպան մեր աչքերին։

Անցանք Շարուրի տափարակը և Երևկոյեան հասանք Հին-Նախիջևան քաղաքը։

Այդտեղ ինժեները երկու ժամվայ գործ ուներ։ Այնուհետև պէտք է փոքր ինչ հանգըստանայինք և արևը չը ծագած ճանապարհ ընկնէինք դէպի Օրդուբաթ։

Ես օգտվեցի դէպքից տեսնվելու մի քանի անձանց հետ և շրջագայելու քաղաքում։ «Մըշակի» թղթակիցները, որոնց խակոյն պատայանձն առան առաջնորդելու քաղաքում և պատմելին շատ բնորոշ բաներ։

Հին-Նախիջևանը ինձ վրա ծանր տպաւորութիւն թողեց։

Չը նայելով այն հանգամանքին, որ քաղաքում հաստատվել է ինքնավարութեան նման մի բան, կան դպրոցներ, աւելացել է կանոնաւոր հիմնարկութիւնների թիւը և նոյն իսկ թաղերի մէջ նկատվում է մի փոքր շարժում դէպի կրթական գործը և եւրոպական նիստ ու կացը, այնուամենայնիւ Հին-Նախիջևանի բոյական մթնոլորտը խեղդող է և ճնշող։ Հին ասիական, պարսկական ոգին դրել է իր

digitised by A.R.A.R.@

կնիքը առօրեայ կեանքի վրա և տիրապետող է դեռ հանդիսանում։

Այստեղ կամ հասարակական ամայութիւնն է ընկճում մարդուն կամ վայրենի կրքերի կոպիտ արտայայտութիւնը։

Ծեծ, կռիւ, հայհոյանք, կոպտութիւն,
Կռիւ, ծեծ, կոպտութիւն, հայհոյանք,
Հայհոյանք, ծեծ, կոպտութիւն, կռիւ,
Կոպտութիւն, ծեծ, կռիւ, հայհոյանք։

Կարող էք այդ բառերը զանազան կերպ դասաւորել և նրանց վրա աւելացնել ասիական ուրիշ մի քանի բարեմասնութիւններ։

Ես առաջ կը բերեմ ինձ հաղորդած մի քանի դէպքեր։

—

Իմ գալուց մի քանի օր առաջ կլուբում պատահել էր մի տխուր պատմութիւն։

Տեղական խանների և բէգերի մի խումբ սկսում է քէֆ անել կլուբում։

Ղարաբաղից եկած նուագածու Շիւքարը ուղարկում է քէֆ տողներին։

Մարդկանց բացականչութիւնները, թառի ու դափի ձայնը դղրդեցնում են դահլիճը։ Մարդիկ տաքացել են, կրքերը գրգռվել։

Այդ ժամանակ ներս է մտնում կլուբ անասնաբոյժ Ա.-ակին իր կնոջ հետ։ Տեսնելով այդ պատկառելի քէֆը՝ յայտնում է իր դժգոհութիւնը։

—Այդպէս քէֆ կարող էք դուք ձեր տանը տարքել, ասում է նա, և ոչ կլուբում։ Պէտք է պահպանէք յայտնի կանոններ և ուրիշներին չը խանգարէք։

—Այդ ձեր գործը չէ, պատասխանում են նրա վրա։

—Ես պահանջում եմ։

digitised by A.R.A.R.@

—Շատ էլ պահանջեցիր։ Մի քիչ սառը ջուր խմիր։

Անասնաբույժը բարկանում է։ Քէֆ անողները բերկանում են նրա վրա։ Աղմուկի վրա ներս են թափվում քէֆ անողների ծառաները, որոնք դրսում կանգնած են լինում։ Ծառաները համոզիչ ձևերով օգնում են իրանց տէրերին։

Կառողների գոռոցի վրա ներս են վազում կլուբի ընթերցարանում գտնված անդամները և վերջ դնում կռվին։ Անասնաբույժին խլում են ծառաների ձեռքից և դուրս քաշում սեղանի տակից, ուր նա թագնվել էր։

Այդ դէպքից մի քանի օր առաջ էրթս հայ ենթարկվել էին մի խումբ թուրքերի բարբարոսական ծեծին։

Պատճառը

Հայերը փողոցով անցնելու ժամանակ տեսնում են, որ երկու թուրք վէճի են բռնվել և միմեանց սաստիկ հայհոյում են, արտասանելով անվայել բառեր։

—Վերջ դրէք ձեր վէճին, ամօթ է, առում են նրանց հայերը։

—Ձեզ ինչ, դուք ոնց էք, ինչ իրաւունքով էք միջամտում մեր վէճին, գոռում են թուրքերը հայերի վրա։

Աղաղակի վրա մարդիկ են հաւաքվում այնտեղ կողմից։ Թուրքերը, չը քննելով բանը և տեսնելով, որ հայ ու թուրք ծեծվում են, յարձակվում են հայերի վրա և նրանց մի սարսափելի ծեծ տալիս։

—«Ադա վուրըն», (խփեցէք) լսվում է ամեն կողմից։

digitised by A.R.A.R.@

—«Ադա վուրըն», զոչում է և ասիկանը, որ չտապում է կռվի տեղը։

Մեծվոզներին ուղարկում են բանտ, որտեղ նրանք կը տան բացատրութիւններ։

Եւ նրանք կը ճանաչվին մեղաւոր ի՞նչ գործ ունէին նրանք վիճողների հետ ու՞վ էր նրանց իրաւունք տուել խրատներ կարդալու։

Մեռա անգամ խելօք կը լինեն և չեն միջամտի ուրիշի վէճերի և կռիւների մէջ։

—

Ինձ պատմեցին թէ Նօվրուզ-բայրամի ոճրի գիշերը պատահած սաստիկ կռիւների մասին, թէ Ջահուկ գիւղում չկրակեն ընտրութեան ժամանակ տեղի ունեցած մեծ անկարգութիւնների մասին, որոնց համար հարկաւոր եղաւ զաւառապետի այնտեղ գնալը և մի քանի մարդկանց բանտ նստեցնելը. թէ ուրիշ կողմից ընդհարումների մասին...

—Բաւական է, ի սէր Աստուծոյ, ընդհատեց եաւ վերջ չը կայ ձեր ծեծերի պատմութեանը։

—Ի՞նչ արած, ասացին նրանք, այդպէս է մեր իրականութիւնը։

Մօտքը փոխեցինք և կենտրօնացրինք նրանց հասարակական կեանքի վրայ։ Զրոյցը սակայն շատ չուտ ապաուեց, որովհետև նիւթը նախ-չնանի համար շատ փոքր էր և անբաւականացնող։

Նախիջևանի հայերի իւօսակցութեան առարկաներից մէկն էլ Սիօն վարդապետն էր։

—

digitised by A.R.A.R.@

Սիօն վարդապետ

Շատ բաներ իմացայ նրա մասին, շատ կատակներ լսեցի նրա գործունէութեան վերաբերութեամբ։

Սակայն, ինչպէս երևում է, նրան չեն հասկանում։

Նա բարեկարգութեան մարտիրոս է։

Սիօնը թոյլ չէ տալիս, որ մի օրում մի և նոյն աւազանում երկու երեխայ մկրտվի։

Այդ անկարելի է նրա կարծիքով։

Պէտք է բարեկարգութիւն մտցնել։

—Իսկ եթէ, հարցրեց մէկը, երեխաներ շատ ծնվեն, այն ժամանակ ինչ պէտք է անել։ Մի քանիսը կարող են անկնունք մնալ։

—Դարդ մի անէք, պատասխանեց միւսը, հայերը բարեբախտաբար շատ էլ չեն բազմանում։ Իսկ եթէ երեխաներ շատանան, այն ժամանակ նոր եկեղեցիներ կը կառուցվեն և նոր աւազաններ կը չինվեն։ Այդպիսով կաւելանայ եկեղեցիների թիւը։ Իսկ դա շատ կարևոր է։ Ամի քաղաքը հազար ու մի եկեղեցի է ունեցել երևի մկրտվողների և մկրտողների թվի համեմատ։

Սիօնը հիմք է բռնում եկեղեցու հին աւանդութիւնները։

Իսկ ժողովուրդը նրան չէ հասկանում և դնահատում։

Ինչպիսի ապերախտութիւն։

—Եթէ աւելի հին բաների ետևից ընկնենք, ասաց խօսակիցներից մէկը, այն ժամանակ պէտք է պահանջենք, որ երեխան մկրտվի գետում, ինչպէս կատարվել է Քրիստի մկրտութիւնը։

digitised by A.R.A.R.@

—Այդ էլ կարող է Սիծնը պահանջել, նկատեց քմծիծաղով մի ուրիշը։

—Շատ սիրում է մեր յայլորդը առաջարկներ անել։

—Ինչպէս թէ առաջարկներ, հարցրի ես։

—Մի գլուխ խօսում, խրատում է։

—Էհ, ինչ վնաս, նկատեց մէկը։

—Լսեցէք. երկու շաբաթ առաջ ժողովվել էինք երէցփոխական հաշիւները քննելու և նոր երէցփոխ ընտրելու։ Սիծնը մի այնպիսի երկար առաջարան արաւ, որ քիչ մնաց վեր կենայինք և փախչէինք ժողովից։

—Ի՞նչ էր ասում, հարցրի ես։

—Նա երկար խօսում էր այն բանի դէմ, որ ժամկոչն է մեզ ածում էջմիածնապատկան տուփը։ Այդ տուփը չը պէտք է գանվի ժողովրդի մէջ, այլ երէցփոխը ինքն է պարտաւոր գանձանակ պտտեցնել։

—Արժէր այդ մասին երկար խօսել։

—Բայց նա այդ բանի մասին երկար խօսում էր և այն էլ մեծ ախորժակով։ Վերջապէս դժգոհութիւն յայտնեցինք։ Նա վերջ տուեց իր խրատներին և ասին։ Ընտրութիւնը կատարեցինք և ամենքս դուրս թափվեցինք դահլիճից, որտեղ մնաց միայն ինքը Սիծնը, որը կարող էր աղատ ճառախօսել դատարկ պատերի համար։

—Դուք անարդար էք, նկատեց խօսակիցներից մէկը, մեր հոգևորականներից մենք շատ քիչ ենք լսել ճառ և քարոզ։ Սա էլ մի նորութիւն է մեզ համար։

digitised by A.R.A.R.@

Ինձ չատ հետաքրքրեցին Թուրքերի մէջ արթնացած գիտակցութեան մի քանի արտայայտութիւնները։

—Դժբաղդաբար մասսան դեռ չատ է անտարբեր և դեռ չատ է խանգարում կուլտուրական գործերին, նկատեց մէկը։

—Շահի ճանապարհորդութիւնը, ասելացրեց միւսը, և Պարսկաստանի բարի տրամադրութիւնը դէպի եւրօպական կարգերը, բարերար ազդեցութիւն ունեն այստեղի Թուրքերի վրայ։

—Հայերը նախիջևանում թէև աւելի կըրթված և կուլտուրական տարր են կազմում, սակայն չեն կարողացել հեղինակաւոր դիրք ստեղծել և զգալի կերպով ազդել խաչոր գործերի վրայ։

—

Ես չէի կարող երկար չարունակել իմ շրջագայութիւնը, պէտք է վերադառնայի կայարան։ Երկար խօսակցութիւնը, որ ունեցայ ծանօթներիս հետ, պարզեց Նախիջևանի կեանքի չատ կողմերը։

Նախիջևանի նման տեղում մեծ դեր են կատարում տեղական վարչութիւնը և ատիկանութիւնը։ Երբ որ նա զանցառու է գտնվում և թուլանում է, իսկոյն գլուխ է բարձրացնում վայրենութիւնը.

Ես մտադիր չեմ օրինակներ բերել։ Դա հնուս կը տանէր մեզ։ Մինչդեռ ուրիշ գործ ունենք. դեռ չարունակվում է իմ ճանապարհորդութիւնը։

—

digitised by A.R.A.R.@

Մի վտքր հանգստանալուց յետոյ՝ մենք դեռ լոյսը չը բացված ճանապարհ ընկանք նախիջևանից։

Կէսօրին հասանք Օրդուբաթ։

Այստեղ իմ ուղեկից ինժեները մի ամբողջ օրվայ գործ ունէր։ Նա պէտք է պատէր չրջակայքում, ժողովէր տեղեկութիւններ։

Ես օգտվեցի դէպքից և ուղևորվեցի դէպի Սգուլիս, Չոլաստանի այդ հռչակաւոր մայրաքաղաքը։

—Միայն չուշանաք, գիւղացիների ինժեները, վաղը այս ժամին պէտք է վերադարձած լինէք։

Ես խոստացայ։

Կառքը շարժվեց դէպի Սգուլիս։

---

digitised by A.R.A.R.@

XL

(20 *մայիսի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 107)

Ահա և Ազուլիսը։

Պատի կատքը կանգնեց կայարանում, որ գանվում է Ազուլիսի բազարի մոտ։

Ես իջայ կայարանում։

Ազուլիսում պէտք է մնայի միայն մի օր և յետոյ գնայի Օրդուբաթ՝ իմ ուղեկից ինժեներ-ի հետ միասին Թիֆլիս վերադառնալու։

Փոքր ինչ կարդի բերելուց յետոյ իմ հագուստը, ես դուրս եկայ դէպի բազար և ինձ պատահած մի երկու անձերից հարցրի դէպի beau monde*-ի մասին։*

—Այստր, այստեղ չատ քիչ անձն կը գտնէք ձեր ուզած մարդկանցից, ասաց մի խանութպան։

—Ինչու, ինչ է եղել, զարմացած հարցրի ես։

—Գնացել են Ատուաձաձին և ուշ կը վերադառնան, պատասխանեց նա։

—Ինչպէս թէ Ատուաձաձին։

—Մենք մի ուխտատեղ ունենք Ատուաձաձին անունով, որ գանվում է գիւղից դուրս մի լեռնալանջի վրա, բացատրեց նա։

—Այդ ես հասկանում եմ. բայց ձեր տղամարդիկը, որքան ես նրանց ճանաչում եմ, այնքան էլ գլուխ չեն կոտրում ուխտատեղերի համար։

digitised by A.R.A.R.@

—Ներանք ուխտի չենն դնայինք, քմծիծաղով մրմնջայ նաւ

—Արմո

—Գնացել են թուղթ խաղալու և քէֆ անելու Ազնաւեղ հիւրեր էլ ունեն

—Մեծ պատ և ուխտաւորութիւն քէֆ.. այդ ինչ է նշանակում

—Առանց պատճառի չէ, անորոշ պատասխանեցին ինձ։

Դա Ագուլիսի հանելուկներից մէկն էր։

—Այ եթէ դուք էլ այնտեղ գնայիք՝ շատ ուրախ ժամանակ կանցկացնէիք, առաջարկեցին ինձ։

—Չէ, լաւն այն է, ես փոքր ինչ կը շրջադայեմ ձեր գիւղում, նկատեցի ես. այդ աւելի օգտաւէտ կը լինի։

Ես խնդրեցի, որ ինձ տան մի մարդ ուղեկցելու։ Այդպիսին գտնվեց։ Դա մի երիտասարդ էր, բաւական ձանձրի գիւղի դրծերին։

—

Մենք առաջ շարժվեցինք։

Ուղեկիցս ինձ ցոյց տուեց Ագուլիսի նախկին գրատարանի տեղը և պատմեց, որ 800 րուբլուց աւելի գումար կայ ձնացած գրատարանի փողերից։

—Որտեղ է պահվում այդ գումարը, հետաքրքրվեցի ես։

—Գանձարանում։

—Առանց տոկոսի։

—Այո։

Ինչու չէք պետական արժէթղթեր գնում, որոնք կը տային մօտ 4%։ Այդ յաւելուածը, ինչպէս ասում են, փոր չէր ձակիր։

Անցանք գիւղական վարչութեան տան մո-

digitised by A.R.A.R.@

տալ Իմ ուղևկիցը պատմեց իրանց գիւղական գործերի մասին։ Նա ընդհանրապէս աշխատում էր ծանկել պակասութիւնները։ Մեր խօսակցութեանը խառնվեց մի պատահական մարդ, որ կանգնած էր գիւղական վարչութեան տան մօտ։

—Ներեցէք, պարոն, ասաց նա, այս գովված ու փառաբանված Ագուլիսում, որտեղ այնքան գրագէտ ու բան հասկացող մարդիկ կան, տխրում են նոյն կարգերը, ինչ որ կան մեզ նման գիւղերում։

—Օրինակ, հարցրի ես։

—Օրինակ, այստեղ անցակութղթի, պատկոշտի համար վերցնում են 20 կոպէկ. մինչդեռ նոր օրէնքը հրամայում է ոչ մի վճար չը վերցնել։

—Մէթէ այդ ճիշդ է։

—Ի հարկէ, ճիշդ է, չարունակեց պարոնը։ Մեր գիւղում չեն նեղում, չեն անհանգստացնում ունևորներին, երբ նրանց վրա տպատուկներ են բարդվում, իսկ աղքատներին՝ նրանց հոգին են հանում, այնպէս որ Ագուլիսի աղքատը միշտ աւելի պարտաճանաչ է դուրս գալու տուրքերի վերաբերմամբ, քան հարուստները, կամ ինչպէս ասում են «իշխան» մարդիկ։

—Մէթէ բողոքող չը կայ, հարցրի ես։

—Ո՞վ է նրանց լսում։ Մեր գիւղի վարչութեան տան վրա հաշւել են 300 րուբլի գումար լուսաւորութեան և վառելիքի համար։ Ուրեմն էլ, պարոն, անծանօթ լինէք մեր տանական պայմաններին, դարձեալ կը համաձայնվէք, որ 300 րուբլի մի այնպիսի գումար է, որով երկու, եթէ ոչ աւելի, այսպիսի տներ կարելի կը լինէր լուսաւորել և տաքացնել։

digitised by A.R.A.R.@

—Ասում են, միջամտեցի ես, ձեզանում փայտը թանգ է։

—Այո, էժան չէ, պատասխանեց նա, բայց այնքան էլ թանգ չէ, որ ներթալ լինէին այդպիսի նախահաշիւներ։ Այս տարի ձերանի փայտը ծախւում էր պուդը 17 կոպէկով։ Մեզանում փայտը կշռում են և պուդով են ծախում։ Ես չը գիտեմ սաժէնով ո՞րքան կը գայ։

Մենք հաշւեցինք և, սխալ էր թէ ուղիղ, դուրս բերինք սաժէնը 35—40 րուբլի։ Աստւածայնւում էր, որ 100—120 րուբլով կարելի է կառավարւել։ Ես փոքր ինչ ուեւելի էլ հաշւում։

—

Աստւածից չնորհւած եղիտարկելով վարչութեան դիւանական ծախքերը, գոյց տուեց նըրանց չափազանց մեծութիւնը։ Յետոյ նա խընդրեց, որ փոքր ինչ պատմ անենք գէպի բազարի ճանըր։

—Ահա, տեսէք, թէ այստեղ ես ինչ պէտք է գոյց տամ ձեզ։ Աւազէք, խնդրեմ, արդեօք պատիւ կարո՞ղ է բերել սա աշխարհահռչակ մեր Ագուլիսին։ Սա ինչ կեղտոտութիւն և ապականութիւն է. սա ինչ խայտառակութիւն է։

Մենք մօտեցանք մի աղբանոցի, որից փչում էր մի անտանելի գարշահոտութիւն։ Մենք չը կարողացանք դիմանալ և յետ գնացինք։

—Ահա սրանն տեսակ ցաւերի զարգացման համար պատրաստ բունը։ Մօլերա, ժանտախտ, տիֆ և ուրիշ ինչ հիւանդութիւն, որ մօտենայ մեր գիւղին, իսկոյն կը բռնկվի այստեղ։

Ես մնացել էի զարմացած։ Ճիշդն ասած՝ խօսակցիս վրա ես սկզբում նայում էի իբրև մի յոռետես մարդու վրա, որը վիրաւորւած

digitised by A.R.A.R.@

լինելով որ և է դեպքից, բողոքողի պաշտօն էր առանձնել իր վրաւ բայց այն, ինչ որ տեսայ ես իմ սեփական աչքով, կասկածից դուրս էր և ես չէի կարող չը հաւատալ իմ տեսածին։

—

Պատահական մեր ծանօթը ընկերացաւ մեզ և մենք գնացինք Ագուլիսի զմայլական անկիւնները չրջելու։ Տեսանք մեծ և հոյակապ եկեղեցիներ, գեղեցիկ շինութիւններ, վճիտ աղբիւրներ, ծառեր, փոքրիկ բուրաստաններ...

Սկսել էր գարնան չունչ փչել։ Դուրս էին եկել առաջին բանջարները և մեծ պատի կերպարանափոխութիւններով։

—Այ տղօ, առ մնեչակը հրտեղ բեր (Այ տղայ, այդ մանուշակը այստեղ բեր), ասաց իմ ուղեկիցը մի տղայի, որ անցնում էր՝ մի փոքր ջամբուղ ձեռքին։ Նրա ջամբուղի մէջ կային զանազան բանջարներ և մանուշակ։

Տղան մօտեցաւ Ուղեկից վերցրեց թարմ և նորաբոյս մանուշակի մի մասը և տուեց ինձ։

Հիանալի հոտ ունէր մանուշակը։ Սա առաջին ծաղիկն էր Ագուլիսում։

—

Այցելեցինք թուրքերի թաղը, որ համեմատաբար աւելի անշուք էր, քան հայերի թաղը։ Թուրքերը քիչ են պանդխտում և աշխատում են տեղական միջոցներով ապրել։ Այդ բանին օգնում է նրանց ասկետապէտութիւնը։

—Նորերս, պատմեց ինձ ուղեկիցներիցս մէկը, եկել էր այստեղ մի մօլլա, որ լուսաւոր քրոջներ էր տալիս թուրքերին։

digitised by A.R.A.R.@

—Դա չը լսված, չը տեսնված բան է մեր կողմերում, նկատեց միւսը։

—Ի՞նչ էր քարոզում, հարցրի ես։

—Սէր դէպի քրիստոնեաները, կրթութիւն, միաբան գործունէութիւն, նոր արհեստներ...

—Ճիշդ որ աչքի ընկնելու երևոյթ է, ասացի ես և իսկ թուրքերը ինչպէս վերաբերվեցին։

—Կային համակրողներ, բայց դեռ ոչ մի գործ չեն սկսել։

—

Մանրամասն ծանօթանալով Ադուլիսի հետ, ես տեղեկացայ այն բոլոր կարիքների մասին, որ ունի Զօկատանի մայրաքաղաքը։

—Մեր դպրոցական գործը մեզ շատ էր մըտատանջում և անկեղծ հոգս պատճառում։ Ճիշդ է, մենք այժմ ունենք դպրոց, բայց դեռ սպասում ենք ապրիլի յայտնութեան։

—Ի՞նչ դպրոց էք ցանկանում։

—Արհեստագիտական, գիւղատնտեսական, առևտրական... դպրոցների մասին էլ մտածել ենք. չը գիտենք որը կաչողեցնենք։

—Իսկ ուրճ չէք արել դիմումներ անելու, հետաքրքրվեցի ես։

—Ինչ ոչ։ Մենք կարծում ենք, որ մասնագիտական դպրոցը կը տայ մեզ աւելի ընդհանուր կրթութիւն, քան ինչ որ տալիս է նախկին դպրոցը, իսկ մասնագիտութիւնն էլ իրրև մի օգտակար, գործնական յաւելուած։

Ադուլիսի դէմքը իր աւերված ափերով, անշուք կամուրջը, նեղ փողոցները բացեցին իմ երկրորդ ուղեկցի առաջ մի մեծ ապարէզ՝ մի շարք բողոքներ և մերկացումներ անելու համար։ Մանաւանդ նա շատ վրդովված էր այն

digitised by A.R.A.R.@

աղբակույտերից, որոնք ձգված էին գետի երկարությամբ և որոնց մաքրումը լինում է միայն հեղեղը։ Ես առաջ չեմ բերի իմ ուղեկցի բոլոր դանգատները, որովհետև նրանք կը խոթաոտեին մեզ այնպիսի տեխնիկական հարցերի մէջ, որոնց վերաբերությամբ անհրաժեշտ են յատուկ իմպրեսիոնիստներ։

—

Մենք սկսեցինք վերադառնալ դէպի կայարան, որովհետև արդէն սկսել էր մթնել։ Ճանապարհին չարունակվում էին խօսակցությունները մեր առաջ լսածի մասին։

—Նորերս «Մշակի» մէջ երևաց մի յօդուած, յայտնեց առաջին ուղեկիցս, «Ս.գուլեկին Ագուլիսում» վերնագրով։ Այդ յօդուածը աղմուկ հանեց այստեղ և վիճաբանության առիթ դարձաւ։

—Բայց այն էլ սկսած է ասել, որ ոչ ոք չէր ցանկանում գրածի խմաստով, վրա բերեց երկրորդ ուղեկիցս, այլ աշխատում էին գուշակել՝ թէ ով կարող էր լինել յօդուածի հեղինակը։

—Ի հարկէ, հետաքրքրական է, նկատեց առաջինը, թէ ով է գրել։

—Գիտէք ինչ, ծաղրարար խօսեց երկրորդը, այդ յօդուածի առիթով մօտ ութ անձինք կասկածի էին ենթարկվել և նրանցից իւրաքանչիւրը պարտք էր համարում հաւատացնել բոլորին, որ ինքը չէ նրա հեղինակը։

—Եւ արդեօք դուն, հարցրի նա։

—Ոչ, պատասխանեց նա։ Ենթադրութիւնները ոչ մի արդիւնք չառաջացրին։

—Յօդուածը ճիշդ էր արդեօք նկարագրել իրականութիւնը, հետաքրքրվեցի նա։

—Գոյները շատ էին մուգ վերցրած, նկա-

digitised by A.R.A.R.@

ուեց առաջին ուղևորից, բայց այդ առաջ չէին բերված մեր գիւղի նաև լուսաւոր ու պայծառ գոյները։

—Իմ կարծիքով, ոչ մի գոյն պիտի վերջնական, հակառակ երկրորդ ուղևորից, բայց յօդուածը շատ էր ընդհանուր կերպով գրված ու չէր յիշատակել առօրեայ կեանքի փաստերը, որոնք աւելի համոզեցուցիչ կը լինէին մեզ՝ ընթերցողներիս համար։

—Չէ, յօդուածը չարակամ ոգով էր գրված, նկատեց առաջինը։

—Մեր ինչին է պէտք հնդիկական ոգին քննելը, դա մեր ոյժից վեր է։ Ես կուզէի միայն, որ նա մերկացրած լինէր մեր իրականութիւնը փաստերով. թէ չէ, այնպէս ընդհանուր ձևով, ինչպէս նա է ներկայացրել ազատութեան, կրթելի էր բնորոշել և նախիջևանցուն, և երեւանցուն, և շուշեցուն, և չամախեցուն և այլն։

—

Յանկարծ լսվից հեռուից զուռնի ձայն։

Մեծ-պատ և զուռնա—դա օտարոտի մի բան էր։

Այս ինչ զուռնի ձայն է, զարմացած հարցրի ես։

—Դա հրաւէր է դէպի ներկայացում։

—Ներկայացո՞ւմ։

—Այո, մեր գիւղն է եկել մի ձևոնածու, մի ֆօկուսնիկ և ներկայացումներ է տալիս Յանկամ էք գնալ։

Ես հետաքրքրվեցի, որովհետև այնտեղ կը տեսնէի ազուկներին խմբված։

Բաւական մարդ կար ժողովված։ Ես առաջ գնացի և նստս մտայ։ Սակայն ինձ չաջողվեց իմ տեղը գտնել, որովհետև եկել էին ու-

digitised by A.R.A.R.@

բիչնելը և իմ տեղը լրացրել կամ, ինչպես այնտեղ ասում էին «զաֆտել»։

Զարմանալի բաներ են տիրում այստեղ։ Մեկը գնում է չորրորդ կարգի առարակ և նրան տուն է առաջին կարգում և բայի այդ իր հետ նատեցնում է մի ուրիշին, որի համար փող էլ չէ վճարել։

Սակայն ես չուտով մոռացայ ամեն բան, երբ սկսեցի դիտել իմ շրջապատողներին։ Որքան կատակներ, բայականչութիւններ, պարզամիտ հայհոյքներ և նկատողութիւններ ներկայացման վերաբերութեամբ։

Ջեռնածուն հետաքրքրել էր չատերին, բայց վոչքր ի չատէ բան հասկացողները աշխատում էին լուծել դաղտնիքները և զգուշացնում էին հարևաններին, երբ ֆօկուսը աղոտվում էր՝ հրճուանքին վերջ չը կար։

—Այ խէշկիս է (այ, չորանաս դու), նկատեց մէկը՝ յայտնելով այդ ձևով իր զարմանքը։

—Այ կտրվիս է (այ կտրվես դու), բացականչեց միւսը։

—Պուչ առակ էլին քեօրպարը (առակ դառնան թուրքերը), յուզված արտասանեց երրորդը և ինչ որ փսփսաց հարևանի ականջին։

—Սուս, սուս, սուս, հանդստացնում էին ավելի հասակաւորները։

Աղմուկը և մանր-մունր խօսակցութիւնները վերջ չունէին։

—Ատուած քի իրի, խուբան, նկատեց մէկը իր մօտ նատածին։

Ինձ չը կարողացան բացատրել այդ բացականչութեան նշանակութիւնը, իսկ բառ առ բառ դա նշանակում է՝ «Ատուած քեզ այրի, ցանկատ»։

digitised by A.R.A.R.@

Ես երկար չը նայեցի ներկայացմանը. ինձ չէին հետաքրքրում փօկուսները, իսկ բարքերի ուսումնասիրութեան տեսակէտից ես բաւական տպաւորութիւններ ստացայ։

—

Հասանք կայարան։ Ես չնորհակալ եղայ պարոններին, որոնք այնքան սիրալիր կերպով ողջունեցին ինձ և կարողութիւն տուին ծանօթանալու Ագուլիսի հետ։

—Շատ կը ճնաք մեզանում, հետաքրքրվեցին նրանք։

—Ոչ, պատասխանեցի ես, վաղը ես պէտք է վերադառնամ։ Ես եկել եմ ինժենէրի հետ, որը ճնաց Օրդուբաթում։ Մենք միասին պէտք է վերադառնանք Երևան։

Ուղևկիցներս հրաժեշտ տուին և հեռացան։ Ես թէյ խմեցի, մի թեթև ընթրիք արի և քնեցի։

—

Առաւօտեան ինձ զարթեցրին խօսակցութիւնները, որոնք տեղի ունէին իմ սենեակի մօտ։

Ես վերկացայ, լուացվեցի, թէյ խմեցի և կրկին դուրս եկայ սենեակից՝ շարունակելու իմ ծանօթանալը Ագուլիսի հետ։ Այդ օրը ես ծանօթացայ Ագուլիսի դրական մի քանի կողմերի հետ, որոնք շատ միխիթարական տպաւորութիւն թողին ինձ վրա։

Ագուլիսում շատ մարդիկ պարապում են այժմ շերտամի աերմ պատրաստելու գործով։ Զբաղված են թէ տղամարդիկ և թէ նոյն իսկ կանայք։ Ագուլեցին այդ գործում մի առաջադէմ տարր է հանդիսանում Անդրկովկասում։

digitised by A.R.A.R.@

Մինչև այժմ սերմը բերում էին արտասահմանից, իսկ այժմ իրանք են պատրաստում

—Դժբաղդաբար այս տարի սերմի գինը բնական է, օգուտը շատ չնչին է և մի քանիսը նոյն իսկ իրանց ծախքը չեն հանիլ, գանգատում էին շատերը։

Ագուլեցիների մի մասը զբաղված է այդ երկրագործական պարապմունքով և ապրուստ է ծառերի տեսակները։ Մի քանիսը զբաղված են ընկոյզի միջուկի արտահանութեամբ։ Կան՝ որք զբաղված են տան աշխատանքով և տնտեսութեամբ, այդ պատճառով ծառանները շատ աննշան դեր են կատարում տնային տնտեսութեան մէջ։

—Անշուշտ, տեղի շատ և տեղի լաւ բաներ կարող էիք դուք անել, քան անում էք, ասացի ես, ձեզ պատիւ չեն անում այն պակասութիւնները, որոնց մասին տեղեկացայ...

—

Շուտով հասա Ագուլիսից հեռանալու ժամը և ես տուի թուղթս կայարանի գլխաւորին նշանակելու մասնանի մէջ և ձիեր տալու։

—Դուք պէտք է մեզ մօտ ամառը գաք, այն ժամանակ իսկական վայելչութիւն կը գտաք, ասում էին ինձ շատերը։

Կառքը շարժվեց և ես շուտով թողի Ագուլիսը։

Օրգուբաթում ինձ սպասում էր ինժեները երևան վերադառնալու համար։

digitised by A.R.A.R.@

XLI

(27 *մայիսի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 112)

Ես վերջայրի իմ ճանապարհորդութիւնը Ագուլիսից ուղևորվեցի երեան և այնտեղից հին ճանապարհով, այն է Դիլիջանի և Ազատափայի վրայով, անմիջապէս դէպի Թիֆլիս։

Ես ներկայացրի ընթերցողին իմ ճանապարհորդութեան գլխաւոր կէտերը միայն։ Ինձ վրա ևս նշանակութիւն չատ ապառիկներ են մնացել։ Այդ ապառիկներից ես հանդէս կը բերեմ հետևեալ երկուսը։

Վերադարձին, երկու տեղ ձիերի պակասութեան պատճառով ստիպված էինք ընդհատումներ անել մի-մի ժամով։ Մէկ տեղը Շաւրութի տափարակի բաշ-նորաչէն կայարանն էր, միւսը՝ Ղազախի գաւառի Քարվանսարայ կայարանը։

Ի՞նչ կարող էինք մենք անել բաշ-նորաչէնում։ Դա, թէև գաւառի վարչական-պաշտօնական կենտրօնատեղն է, բայց մի անհետաքրքրական, խուլ, քնած անկիւն է։ Դա անչուք, հասարակ մի գիւղ է, որտեղ հասարակական ընդհանուր կեանքի ոչ մի նշոյլ չէ երևում։

Ուղեկից-ընկերների հետ դուրս եկանք չրջապատելու գիւղաւան։ Մեր ուշադրութիւնը գրաւեցին ուղտի քարվանները։

digitised by A.R.A.R.@

Մենք կանգ առանք դիտելու։

Ուղեկիցս, որ մի պուխ զբաղված էր երկաթուղու հարցերով, դիմեց ինձ ժպտալով.

—Ի՞նչպէս էք հաւանում այս գնացքները։ Եթէ մենք այժմ առանձին վագոններից զբոսնացքներ ենք կազմում, սրանք էլ ուղևորից են գնացքներ կազմել։

—Բայց տեսէք, այս քարվանների տէրերը, կատակով նկատեցի ես, չարքաշ կեանք են վարում և շատ անգամ ստիպված են գնում, իսկ ձեր ինժեներները առաջին կարգով են հանգիստ ու հանդարտ երթևեկում։

Ուղևորների վրին կապած զամպալները և բոժոժները իրանց զօրանջիւնով և ուղտերի յամրաքայլ շարժումը՝ բայում էին մեր առաջ հին կուլտուրայի մի պատկեր։

Բայց գիտէք, որ մի ժամանակ ուղտերի քարվանները առաջադիմութեան դեր են կատարել հին աշխարհի համար։

—Սակայն նրանց օրհասականը մօտեցել է, նկատեց ուղևորից. երկաթուղին դրանց գլխին կը չպրտի շուտով։

Մենք մօտեցանք քարվաններից մէկին, որ կանգ էր առել գիւղում։ Նա պատկանում էր քեարիմբեգլուեցի մի թուրքի։

—Ի՞նչ պէտք է դուք անէք, երբ երկաթուղին, հարցրինք մենք քարվանատիրոջից։

—Ի՞նչ պէտք է անենք—Ասուաձ գիտէ։ Մի բան երևի կը մտածենք։

—Օրինակ՝ ինչ։

—Օրինակ՝ կը տեղափոխենք մեր գործը Սրաքան մէս ափը և ապրանք կը փոխադրենք երկաթուղուց դէպի թավրիզ և այնտեղից դէպի երկաթուղի։

digitised by A.R.A.R.@

—Սակայն կարող է այնտեղ էլ երկաթուղի անցնել յայտնեցինք մենք։

—Դէհ ինչ կարող ենք մենք, խեղճ մարդիկս, անել անոդոք և յամառ թշնամու դէմ, որ մըտքովը դրել է հետևել մեր աչքեն մի քայլին, նկատելու կտրական կերպով ուղտապանը։ կը ձախենք ուղտերին և տանը կը նետենք։

Ուղտապանը յուսահատ չարժուռմով թափ տուեց ձեռքը և մտենալով ուղտերից մէկին, որի բեռան տակից բաց էր ընկել թոկի ծայրը, ամրացրեց հակը։ Քարվանը չարժվեց։ Ուղտապանը մոզ գլուխ տուեց և հեռացաւ։

Մենք զբաղվեցինք հետաքրքրական խօսակցութիւնով այն բանի մասին, թէ որքան անպատրաստ է մեր երկրի ազգաբնակութեան մեծագոյն մասը իր կեանքի մէջ փոփոխութիւններ մտցնելու համար։

— Ո՛ւր գնայ հին արհեստով ապրողը, ինչ անէ նաւ ի՞նչ անէ մեր երկրի հողագործը, արհեստաւորը, սայլապանը, որ պատրաստված չէ յարմարվելու նոր կեանքի պահանջներին։

Մոզ մօտեցել էին մի քանի անձինք և լուռ լսում էին մեր խօսակցութիւնը և վիճաբանութիւնը։ Յանկարծ նրանցից մէկը մէջ մտաւ իր բացականչութիւնով։

—Եթէ ցանկանանք էլ մի նոր բան սովորելու, մի նոր արհեստ ձեռք բերելու, ոմ պէտք է մեզ օգնէ, հարցրեց նա։

Մենք դժուարացանք պատասխանելու։

—Ով որ երկաթուղի է չինում, չարունակեց նա, թող մի քանի տասնեակ արհեստանոցներ ու դպրոցներ բանայ մեր երկրում, որ մենք էլ, հին արհեստը կորցնելով, նորը ձեռք բերենք։

—

digitised by A.R.A.R.@

Մենք ծանօթացանք նոր խօսակցի հետ։ Նա մի հայ էր Քեշիշքեանդ գիւղից, որ եկել էր Բաչ-Նորաչէն առանալու լրագիրների վերջին համարները։

Նա պատմեց մի մխիթարեան փորձի մասին, որ ձեռնարկել են տեղական գիւղական գրագէտ երիտասարդները։ Նրանք կազմել են ընթերցասիրական մի փոքրիկ ընկերութիւն։

—Առանձին-առանձին մենք չէինք կարող շատ լրագիրներ և գրքեր ձեռք բերել, իսկ միացած ոյժերով կարող ենք։ Մենք բերել ենք տալիս երկու օրինակ «Մշակ» երկու օրինակ «Մուրճ», մի-մի օրինակ Ազիւր-Տարագ, «Новое Обозрѣніе» և մտադիր ենք բերել տալ ընթերցանութեան գրքեր։

—Հետաքրքրական է, բացականչեցինք մենք համակրանքով։

—Մեզանից իւրաքանչիւրը պէտք է վճարէ տասը րուբլի։ Նա իրաւունք կունենայ հերթով կարդալու բոլոր հրատարակութիւնները։

—Միայն ձեր գիւղացիները կարող են օգտվել ձեր գրքերից թէ ուրիշներն էլ, հարցրի ես։

—Մեր գործին, պատասխանեց նա, մասնակցում են և շրջակայ գիւղերի գրագէտ անձինք, բայց լրագիրների և գրքերի կենտրօնական պահեստանոցը նշանակված է Քեշիշքեանդ գիւղում։

Մեզ շատ ուրախացրեց Դարալագեազի գիւղական գրագէտների այդ գեղեցիկ փորձը։

Եթէ ուրիշ տեղերում էլ նոյնպիսի փորձեր անէին, որքան լաւ կը լինէր։ Լրագիրը և գրքերը կը զարթեցնէին գիւղական մտածողութիւնը և կամաց-կամաց հանդէս կը բերէին

digitised by A.R.A.R.@

մի չարք կուլտուրական հարցեր գիւղերի համար։

Մենք չէինք ափսոսում, որ ստիպված էինք աւելորդ մի ժամ մնալ Բաշ-Նորաշէնում։ Վերադարձանք կայարան և չարունակեցինք մեր ճանապարհը։

—

Քարվանսարայ կայարանում մեզ զբաղեցրին ոչ քարվանսարայները, այլ հարևան վերին-Աղդան գիւղի մի քանի ներկայացուցիչներ։

Նրանք եկել էին պատատուն նամակներ և խնդիրներ ուղարկելու իրանց հետաքրքրող մի գործի առիթով։

—Ազատեցէք մեզ մեր բարերարներից։

Այս խօսքերով դիմեցին նրանք մեզ, երբ մենք զրոյց սկսեցինք նրանց հետ։

—Մեր ընտրեալները և մեր լիազօրները դուրս եկան մեր թշնամիները, որոնց դէմ այժմ ստիպված ենք բողոքելու ճանապարհ ցոյց տուէք։

—Բանը ինչումն է, հարցրինք մենք։

—Սհա ինչումը։ Մեր գիւղական հողի առնանիներում շատ հանքատեղեր կան, որոնք պատրաստակում են պղինձ և ուրիշ մետաղներ։ Մենք լիազօրութիւն տուինք մի քանի անձանց, որ նրանք գիւղի անունից բանակցութեան մէջ մտնեն պատշաճաւոր հիմնարկութիւնների հետ չահագործութեան իրաւունք ձեռք բերելու։ Սակայն այդ մեր ընտրեալները մեզ խաբեցին։

—Ինչպէս

digitised by A.R.A.R.@

—Նրանք իրաւունք են ձեռք բերել հանքերի վրա իրանց անունով

—Անհասկանալի է, նկատեցինք մենք, որովհետև կարող են պատասխանատուների ենթարկվել

—Մենք էլ փոխադրան ենք վարձել, որ պաշտպանի մեր իրաւունքները: Մենք վճռել էինք հանքերից ստացած օգուտի մի մասը յատկացնել մեր դիւղական դպրոցին, իսկ միւսը մեր ամրողջ հասարակութեանը:

—Յաւնինայն դէպս, վտանգաւոր խաղ են սկսել ձեր լիազօրները, յայտնեցինք մենք:

—Փողը կուրացրել է մարդկանց, պատասխանեց: Նրանք էլ իրանց կողմից ամեն ջանք գործ են դնում իրանց չար դիտաւորութիւնը առաջ դցելու, քանի որ խանգարող չը կայ:

Գիւղացիները մի առ մի թուեցին այն մարդկանց անունները, որոնք յանձն են առել այդ չար գործը և ցոյց տուին 49 հոգուս ստորագրութեամբ կազմած մի բողոքաթուղթ, որի վաւերականութիւնը հաստատել էր տանուտէրը իր ինքնուի:

Անհասկանալի էր թւում իմ աչքերին իմ տեսածը: Լիազօրների ցուցակում ես կարդացի հետևեալ դիւղացիների անունները՝ Թ. Փորքաչեանց, Յ. Դէդեեանց, Դ. Մելիքսեթեան, Ս. Համամեան, Յ. Ստեփանեան, Ս. Բէդինեան, Վ. Խաչատեան, Յ. Յովհէփեան, Ս. Ստեփանեան, Ն. և Ս. Չիլինգարեան, Կ. Ալահվէրդեան, մի քահանայ և երկու ուրիշներ:

Մենք չարունակում էինք կասկածով վերաբերվել, իսկ դիւղացիները իրանց ասածն էին պնդում:

digitised by A.R.A.R.@

Անհաւատալի էր թուում այդպէս օրը յերկուսով ապաստանութիւն անելը։

Արդեօք թիւրիմացութիւն չը կայ այդտեղ։

—Որքան լաւ կը լինէր, որ բարձած մեղաւորանքը անհին դուրս գար և գիւղի ժողովրդի իրաւունքը անխախտ մնացած լինէր։

—

Ես կը պատմէի ձեզ և այն, ինչ որ հաղորդեցին մեզ Աչաջուր գիւղի քահանայի սխրագործութիւնների մասին։ Բայց հաւատաւ խօսք եմ տուել այս անգամ ոչինչ չը գրել հոգևորականների մասին։

Վերջապէս հասանք երկաթուղու կայարանը և ուղևորվեցինք դէպի Թիֆլիս։

digitised by A.R.A.R.@

XLII

(3 յունիսի 1901 թ., «Մշակ» № 118)

Ասասկցուհիները տևզի ունէր Թիֆլիսի ընտանիքներից մէկում ճաշից առաջ։

—Ահա քանի օր է, որ մեր հայրիկը չափազանց ուրախ է, առաջին աղջիկն ու տղան իրանց մօրը։

—Այո, ճշմարիտ է, նա աւելի ուրախ տրամադրութեան մէջ է, քան լինում է սովորաբար, պատասխանեց մայրը։

—Ի՞նչ գեղեցիկ է այն ալբոմը, որ նուիրից ինձ երէկ հայրիկը, ասաց աղջիկը։

—Ես երջանիկ եմ հայրիկի ինձ նուիրած լուսանկարչական գործիքից, վրա բերից տղան ես վաղուց խնդրել էի, իսկ հայրիկը միշտ մերժում էր։ Վերջապէս ես ստացայ իմ ուզածը։

—Լաւ է, լաւ, ժպտալով ասաց մայրը. ես էլ առանց նուէրի չեմ մնացել, ձեր հայրը ինձ նուիրից մի թանկագին քորոց։

—Ո՞ւր է, ուր, մենք չենք տեսել, վեր թողնելով բացականչեցին զաւակները։

—Դեռ չէ բերված, պատասխանեց մայրը։ Ողկերիչի մօտ է։ Երէկ ձեր հօր հետ գնացինք տեսանք։ Ողկերիչը պէտք է նորից մաքրէր քորոցը։ Այսօր հայրիկը կը բերէ։

Շուտով եկաւ և տան գլխաւորը։

Նա ձեռքին բռնած ունէր ծաղիկներ, որ գնել

digitised by A.R.A.R.@

էր վոլոցուժն Ծաղիկները տուեց աղջկան ու որդուն

—Այս էլ քեզ, դիմեց նա իր կնոջը։

Նա հանեց իր գրպանից մի փոքր արկղ և տուեց իր կնոջը ու ինքը դիմեց դէպի սեղանատունը։

Մայրը իր զաւակներով զբաղվեցին քորոցով, որը չատ հաւանեցին։

—Շատ լաւն է. ասացին նրանք իրանց հօրը, որ վերադարձաւ նրանց մօտ։

—Վաղը ճաշից յետոյ մենք կը գնանք քաղաքից դուրս զբօսնելու, ես կատ եմ պատուիրել ինչպէս էք հաւանում իմ արածը։

—Շատ լաւ է, չատ լաւ։

Վաղուց է, որ նրանք զբօսանքի նպատակով կառք չէին նստել։

Ինչ որ մի բարեփոխութիւն էր կատարվել հօր գործերում ինչ որ մի ուրախութիւն դէպք էր տեղի ունեցել։

Ճաշի ժամանակ հայրը յայտնեց, որ նա վըճռել է վարձել առաջիկայ ամառը մի գեղեցիկ ամառանոց։

Ընտանիքի հրճուանքին սահման չը կար։

—

Ճաշից յետոյ մարդ ու կին գնացին հիւրասենեակ։

—Փոքր ինչ հնացել է մեր սան սարք ու կարգը, ասաց մարդը։

կինը ախ քաշեց։

—Բաւական հնացել է, կամաց արտասանեց կինը. ես չատ եմ մտածել. բայց ինչ կարող ենք անել։

—Ես վճռել եմ, ժպտալով ասաց մարդը, մի վերանորոգութիւն անել. պէտք է լաւ վարպետի յանձնել։

digitised by A.R.A.R.@

Ամիանը և տարինը չարունակ կինը հրաւիրում էր իր ամուսնու ուշադրութիւնը տան անչքութեան վրա և միշտ մնրժումների էր հանդիպում. իսկ այժմ մարդը ինքն էր առաջարկութիւններ անում։

—Դու արդեօք հանաք չես անում, հարցրեց նա իր ամուսնուց։

—Ինչու պէտք է հանաք անեմ, պատասխանեց մարդը։ Ջես հաւատում ասածներիս։

—Բայց մինչև այժմ ինչու...

—Ինչու մինչև այժմ չէի անում. որովհետև աւելորդ փող չունէի։

—Իսկ այժմ։

—Այժմ ունեմ, հանդիսաւոր կերպով պատասանեց մարդը։

—Ո՞րտեղից է, ինչ փող է։

—Դէհ լսիր։

—

Ամուսինները հանգիստ նստեցին գահաւորակի վրա։ Տղամարդը նկարագրեց իր գործերի դրութիւնը և իր քաչած նեղութիւնները։

—Դու գիտես, ասաց նա, որ ես փոքրի նեղութիւն ունէի ու ուզում էի ծախել Օրթաճալու այգին եօթ հազար րուբլով ու առնող չէի գտնում։ Իսկ այժմ ուզող կայ, ինչ և կարծում քանիսուն։ Ջես հաւատայ որ ասեմ Տասն ութ հազարուն։

—Ո՞նչ ես ասում, բայականչեց կինը։

—Ճիշդ խօսք է։ Գործը վերջացրինք և փոքր մի մասը արդէն ստացայ։ Այժմ պարտքս էլ կը տամ, տունն էլ կը գրատնեք ու մի բան էլ կը մնայ։

Կնոջ համար պարզվեց հանելուկը։ Սակայն

digitised by A.R.A.R.@

նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչու հողի գինը այնպէս յանկարծ բարձրացաւ։

—Ի՞նչ պատահեց այդ հողի հետ, խօսակցութեան ընթացքում հարցրեց նա։

—Ով գիտէ, պատասխանեց մարդը։ Մէկն ասում է թէ ձիաքարշ պէտք է անցկացնեն մինչև Օրթաճալա, միւսը պատմում է թէ գործարաններ պէտք է շինվեն այնտեղ։ Խօսք ու գրոյց շատ կայ։

Կինն ընկաւ ինչ որ մի զմայլմունքի մէջ։ Նրա առաջ բացվեց յանկուծիւնների մի նոր ընդարձակ աշխարհ։ Նա տարիներով իրան զրկած էր և զրկել վայելքներից։ Այժմ կարելի էր շատ բան իրագործել։

—Այս մեր տունը, չարունակեց տղամարդը, որ չարժէր 40,000 րուբլուց աւելի, այժմ, գինա՛, գնահատում են 70,000 րուբլի։

—Ի՞նչ ես ասում, զարմացած հարցրեց կինը։ Այստեղ ինչ փոփոխութիւն է կատարվել։ Ինչ բան է աւելացել։ գեռ երէկ ուղիղ ասես, տունը հնացել է, վատացել է։

—Պատճառը ես էլ չը գիտեմ. բայց ասածս հաստատ բան է։ Բնակարանների վարձը աճում է ու մի քանիսինը նոյն իսկ պակասել է, բայց տան գինը բարձրացել է։

—Հրաշք է, ինչ որ մի հրաշք է, ասաց կինը և ցնցված վեր կացաւ տեղից։

—Հրաշք է հրաշք չէ, բայց մէջտեղ մենք օգտվում ենք, չեչոտց տղամարդը և նոյնպէս վերկացաւ։

Հրաշքն ընդհանուր էր ամբողջ Թիֆլիսի համար։ Մենք ներկայացրինք հազար օրինակներից միայն մէկը։

digitised by A.R.A.R.@

Սկսվեց իրարանցում քաղաքի մէջ, ոգևորութիւն, յուզմունք, բօրսային խաղ, աժիօտաժ...

Բոլոր տները թանգացան, Հազար րուբլի արժողութեան կայք ունեցողը այլ ևս չէր ուզում երկու երեք հազար րուբլու անունը լսել Հարիւր հազար կայքի տէրը միլիոնների մասին էր երազում

Հրաչքն ունէր իր հետևանքները

Կայքերը մի բանկից տեղափոխւում էին միւս բանկը՝ աւելորդ գնով գրաւ վերցնելու համար Հողերը ձեռքից ձեռք էին անցնում բարձր գներով Իրարանչիւր մարդ չուտպում էր մի կտոր հող ձեռք գցելու, որպէս զի ապագայում ուրիշին ծախէ աւելի թանգ գնով

Մարդկանց ձեռքին աւելորդ փողեր եբևացին

Աւելորդ փողը առաջացրեց աւելորդ ծախքեր Մագազինների առնաուրն աւելացաւ Բացվեցին նոր մագազիններ, ընդարձակվեցին հները

Ճոխութիւն ամեն տեղ

Թատրոն, փողոց, ամարանոցներ, խնջոյքներ, հարսանիքներ, բոլորը ասպարէզներ զարձան չորերով, ագտանդներով փայլելու համար

Եւ Թիֆլիսը փայլեց

Երբէք նա այնքան ճոխ և նուրբ չէր հագնվել ու զարդարվել, ինչպէս վերջին երկու երեք տարիներըՄէկը միւսի հետևելով աւելացրին կեանքի չքեղութիւնը և ամենքը ճիգ են թափում յետ չը մնալու

—

Ստեփան...

—Ինչ ասկայն

digitised by A.R.A.R.@

Սակայն հրաշքի զեպլյանքը սկսում է նահանջել։

Աւելորդ փողի համեմատ ծախքեր անելուց յետոյ պէտք էր վերադառնալ սովորական կեանքին։

Տները եւ հողերը թանգացան քաղաքում, իսկ նրանց համապատասխան չաւելացան արդիւնքները։ Արհեստը, պարապմունքը, գործարանի աշխատանքը, բնակարանի վարձը մնացին նոյնը։

—

Եւ ահա սկսում է տրաքտրաքել արհեստական կերպով ճոխացրած կեանքը։

Բոլորը դանդաղում են նրանց գործերի դրութեան վրայ։

Ծախքերը աւելացել են, պարտքերը բանկերում և մասնաւոր անձանց մօտ աւելացել։

Կրեդիտը ընկնում է և պարտամուրհակները այլ ևս հեշտութեամբ չեն ընդունվում։ Մարդիններն սկսել են նկատել գնողների անզօրութիւնը և կրճատել են իրանց առևտուրը։

Սնանկութիւնների մասին խօսակցութիւնները սկսել են քաղաքացիութիւն ստանալ։

Պարզվում է, որ հրաշքը չատ վտանգաւոր հրաշք էր, որ չը պէտք էր հաւատալ հրաշքին անպայման կերպով։

—

Մնում է մի միխիթարութիւն բոլոր այն մարդկանց համար, որոնք ընկան հրաշքի բացած հոսանքի մէջ և այժմ տախտակած են իրանց առնները մնալու վերմակի համեմատ՝

—Գոնէ մէկ լաւ բէֆ արինք։

Բայց քանի գլուխ արժէ այդ միխիթարութիւնը։

---

digitised by A.R.A.R.@

XLIII

(10 յունիսի 1901 թ., «Մշակ» № 124)

—Միջին ճանապարհ բռնեցէք։

—Հաշտութեամբ վերջացրէք։

Ահա այն խրատները, որ լսում էի ես վերջին չարաթներըը, երբ խօսք էր բացվում մեր ընթացիկ գործերի, մեր օրվայ չարիքների մասին։

Ես չատերը հաւանում էին այդ խրատներըը։

—Ճիշդ է, ճիշդ է, ասում էին նրանք, պէտք է գործին աւելի կերպարանք չը տալ։

—Ծայրահեղութիւնները վնասակար են, կըրկնում էին միւսները, արդարութիւնը միշտ նրանց միջին է նստած լինում։

Ես չատ անգամ եմ լսել այդ խրատները և մի բանի վրա միայն չատ եմ զարմացել, այն է թէ ինչպէս մարդիկ նոյն խրատը կարդում են ամեն օր, ամեն դէպքում, խորութիւն չը դնելով իրերի, երեւոյթների և հանգամանքների մէջ։

—

Ս.րդարն. ինչու երէցփոխը և ծխականները կռուում են, երբ նրանք կարող էին հաշտ ապրել միմեանց հետ։

Ինչու դպրոցական հոգաբարձութիւնները և հոգևոր իշխանութիւնը միմեանց խանգարում են, երբ նրանք պէտք է համերաշխ գործէին։

digitised by A.R.A.R.@

Ինչու՞ յիրաւի դրամատէրը և պարտապանը չը պէտք է միասդարձ զիջումներով առաջ տանէին իրանց գործերը։

Այդ տեսակ հարցեր կարելի էր շարել, որքան ցանկանաք։

Բայց ինչ օգուտ։

Մէթէ այդպիսի հարցեր դնելով մի որ և է խնդիր է լուծվում։

Հաշտութիւնը գրաւիչ է երևում։ Ծայրայեղութիւններ ողորկելը նպատակայարմար է թւում։

Սակայն հասարակական գործեր քննելու և վարելու ժամանակ մէթէ դրանք են գլխաւոր նպատակները։

—

Մի մարդ հասարակական փողեր է վատնել, կաշառքներ է կերել, անիրաւութիւններ է կատարել։

Անկասկած պէտք է քննել նրա արարքները և նրան պատժել։

—Ոչ, ասում են ձեզ, մի քննեցէք, մի կերպ եօլա տարէք։

—Ո՛վ չէ կողոպտել, ո՞վ չէ գողացել, նկատում է մի ուրիշը։

—Հաշուեցէք, հաշուեցէք, խրատում է երրորդը։

Հաշուել, միմեանց հետ չը կռուել—մէթէ դեղեցիկ առաջարկութիւն չէ։

Ինչու՞ չը հաշուել։

Բայց ինչպէս։

Մէթէ դառնալ գողակից, մէթէ թագցնել գողութիւնները, մէթէ վաւերացնել ապօրէնութիւնները։

—Էհ, պարոններ, ինչ էք այդքան ծանր ու

digitised by A.R.A.R.@

թեթև անուշ և հաստատ բարակ ջոկում, համբուրվելէք միմեանց հետ, միմեանց ձեռք սեղմեցէք և միմեանց կենաց խմեցէք—պրծաւ գնաց։

—

կարծես հասարակական գործը առաւտուր լինի։

Վերցնենք մի օրինակ։

—Քանի է այս խաղողի գինը, հարցնում է ծախողից։

—Ցունաը 10 կոպէկ, պատասխանում է նա։

—Ես կը տամ 8 կոպէկ, պատասխանում է գնաք։

Սակարկութիւնը, խօշութէչը վերջանում է նրանով, որ գնաք գնում է խաղողը ոչ տանն և ոչ ուր, այլ ինն կոպէկով։

Ահա ձեզ և երկարար միջինը։

Մի ուրիշ օրինակ։

Գնաք նման չէք ոչ այն ձեր հարևանին, որ սիրում է ցուրտ սեննակ, որտեղ 10—12 աստիճան միայն տաքութիւն կայ, և ոչ միւս հարևանին, որ սիրում է 18—20 աստիճան։

Թէ առաջին և թէ երկրորդը ձեզ համար չափազանցութիւններ են։ Գնաք սիրում էք սեննակ, որ ունի դէպում 15—16 աստիճան։ Տաքութեան այդ աստիճանը ձեզ գոհացնում է լիովին։

Ահա գարձեալ միջինը։ Նա երկարար է։

Բայց ձեր առաջ գրված է, դէպում, մի այս տեսակ հանդամանք։

Գաւառի մի կէտում եղել է առատ հունձ և լցվել են գիւղական շտեմարանները, իսկ միւս կէտում կարկուտ, երաշտ, միջատների չնարհիւ բոլոր բերքը ոչնչացել է։ Գիւղացիների մի կէսը հարուստ է, միւսը աղքատ։

digitised by A.R.A.R.@

Գուցե կարծում էք այդ հարաբերությունը ազգությանն հետ և կը սոսկանաք գաւառի բնակչի մասին մի միջին թիւ։

Միթէ կարող էք ասել, որ գաւառի բնակիչները միջակ կերպով ապահովված են։

Ո՛չ և ոչ։

Աղքատը աղքատ է և նրա մասին պէտք է հոգալ։ Այստեղ միջին թիւը ոչինչ օգուտ չի տայ ձեզ։

Որքան ուզում էք հաշտեցրէք այդ ծայրահեղութիւնները—նրանք կը մնան անջատ և ուրոյն երևոյթներ։

Միջինը որոնեցէք և չափազանցեցէք այն ժամանակ, երբ դա նշանակութիւն ունի և ինքն ըստ ինքեան միայն չափազանցութիւնները մեղմացնելու մի չանք է։

Իսկ երբ մէկը գողացել է, ազնուութեան դէմ մեղանչել է, հարստահարութեամբ է պարապվել, անբարոյական կեանք է վարել, մարդ է սպանել և այդ փաստերին կան հաստատ ապացոյցներ, այն ժամանակ ինչ իսօք կարող է լինել միջին ճանապարհ և հաշտութեան մասին։

Գուցէ կարծում էք թէ կարող է մարդ լինել

կիսագող,
կիսազնիւ,
կիսահարստահարող,
կիսանընդոյական,
կիսամարդասպան.

Բայց այն ժամանակ ձեզ էլ կարող են ասել, որ դուք կիսամարդ էք, կիսախղճով, կիսահոգմտանքով և կիսախելքով։

---

digitised by A.R.A.R.@

XLIV

(17 *յունիսի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 130)

Օրի մէջ զգայլում են թատրոնական հովեր։
Մեր հասարակութիւնը սկսում է հետաքրքրվել լուրջ կերպով հայ թատրոնական ներկայացումների կազմակերպութեան հարցով։
Թիֆլիսում կազմվել է թատրոնական մասնաժողով, որ զբաղված է այդ գործի կանոնակերպութեամբ։
Առաջիկայ աշնանը մենք կունենանք կանոնաւոր հայերէն ներկայացումներ։
Հետաքրքրութիւն դէպի այդ գործը չարժվել է Երևանում, Ալէքսանդրօպօլում, Սարտախանում, Շուշում և ուրիշ տեղերում։
Մի քանի խօսք այդ կարևոր գործի մասին։

Պէտք է երախտապարտ լինել բացառիկներին։
Արդարութիւնը այդ է պահանջում։
Բացառիկների շնորհիւ հայ թատրոնական գործը պահպանվեց և մի որոշ առաջադիմութիւն կատարեց։
Վերջին տարիներում, երբ Թիֆլիսի հայերը կորցրել էին իրանց եռանդը և սէրը դէպի մայրենի բևմը, բացառիկ հայերը հանդէս էին՝ իրրև ընդհանուր հասարակական այդ կարևոր գործի պահպանողներ և դեկավարներ։
Բացում գանվեցին թատրոնի գործը սիրող

digitised by A.R.A.R.@

մարդիկ, որոնք ժողովեցին այս ու այն կողմ ցրված դերասաններին և կազմեցին ներկայացումների համար ամբողջ բնակարաններ, ձեռք բերելով հին պիեսները և թարգմանելով նորերը օտար լեզուներից։ Այդ իր կարգով.

Բայց հարկավոր էր մտածել և ծախքերի մասին։

Այդ էլ նրանք յանձն առին։

Ծախքերը հոգացվեցին և գործը առաջ գնաց։

Ներկայացումները դարձան մի տեսակ պահանջ բազուի հայ հասարակության որոշ մասի համար։

Եւ այժմ կարծես անկարելի մի բան է համարվում երևակայել Բազուն առանց թատրոնի։

Բայց Բազուի հայ թատրոնի գերը միայն տեղական չէր։

Նա աւելի ընդարձակ էր։

Բազուի բեմով պահպանվում էր հայ բեմի դաղափարը։ Բազուի բեմը կոչված էր ապաստան տալու հայ դերասաններին և հարստացնելու թատրոնական բնակարանը ապագայ հայ թատրոնի աւելի ընդարձակ և մնայուն կազմակերպության համար։

Հասկանալի է, թէ ինչու Բազուի հայկական ներկայացումները ստացան առանձին նշանակութիւն և գրաւեցին մամուլի յատուկ ուշադրութիւնը։

«Մշակը» մանրամասն հաշիւներ էր տալիս այդ ներկայացումների մասին և հետևում էր թէ դերասանական խմբի մէջ կատարվող ա-

digitised by A.R.A.R.@

ազգատիպությունները և թէ բեմարուեստի ասպիճանաբար ճոխանալուն: Բազում ներկայացումների մասին եղած նկատողութիւնների մի նշանաւոր մասը այսպէս թէ այնպէս վերաբերում էր ընդհանուր հայ թատրօնական ներկայացումների զարգացման գործին:

—

Հայ թատրօնական գործում նշանաւոր է մի հանգամանք ևս:

Հայ դերասանները, բաժանելով խմբերի, գրվեցին մեր գաւառները և այնտեղ տուին ներկայացումներ:

Այդ խմբերի միջոցով կարճ ժամանակում գաւառի հասարակութիւնը յայտնի դարձաւ այն պիեսները, որոնցով հարստանում էր հայ թատրօնական բեմարուեստը: Այդ խմբերի միջոցով գաւառը ծանօթացաւ այն առաջնակարգ դերակատարների հետ, որ ունի հայ դերասանական խումբը:

Գաւառի ներկայացումների կազմակերպութիւնն յաճախ մասնակից էին լինում և տեղական սրտերը և այդպիսով նպաստում էին դերասանական ընդունակութիւնների հանդէս գալուն:

Գաւառի մէջ թատրօնական գործի ժողովրդականութիւն ստանալը, ինքն իսկ իսկական, անկասկած, առաջադիմութեան մի քայլ է:

Դա ընդհանուր տեսակէտից:

Սակայն գործի զարգացումը գաւառում ունի և մի ուրիշ բարերար կողմ: Այդ այն է, որ նա նպաստում է թատրօնական գործի կազմակերպութեանը նոյն իսկ կենտրօնում:

Ահա թէ ինչպէս:

digitised by A.R.A.R.@

Երբ դաստանները ամենամեծ պահանջ կը ղրան թատրոնական ներկայացումներ ունենալու, այն ժամանակ այն կենտրոնական խմբերը, որոնք կը կազմվեն Թիֆլիսում և Բաքուում, կարող կը լինեն հատուկ յոյս ունենալ, որ նրանք կստոյ լրացուցիչ հատկություններ կունենան դաստական ներկայացումներից։ Այն ժամանակ դուռ կը գտնվի և երկրորդական դրամատների համար նրանք կօգտվեն այն ներկայացումներից, որ նրանք կստեղծեն կենտրոնական թատրոնում և կստոյ կը կրկնեն նրանց այն խումբ տեղերում, ուր անկարող կը լինեն գնալ կենտրոնական խմբի ներկայացումները։

—

Թիֆլիսի թատրոնական մասնաժողովը պետք է չարունակի այն գործը, որ Բաքուում սկսվել է մասնավոր կերպով և արդեն տուել է բարեբար հետևանքներ։

Աչքի կազմակերպված դերասանական խումբ։

Հարուստ և խնայողի դասավորված բեմերտուար։

Ահա այն երկու հիմնական պահանջները, որոնց լրացնելու համար պետք է աչքաթող մասնաժողովը։

Տուէք մի խումբ, որ կարողանայ լուրջ կերպով ուսումնասիրել պիեսների մէջ դրւրս բերված տիպերը, որ սովորի իր դերերը դիտակցական կերպով, հանդէս բերէք մի շարք այնպիսի պիեսներ, որոնք հետաքրքրութիւն չարժեն հասարակութեան մէջ իրանց մէջ չօշափված կենսական հարցերով և դաղափարներով,

digitised by A.R.A.R.@

այն ժամանակ կարող էք ձեր պարտքը կատարած լինել և այն ժամանակ կարող կը լինէք պահանջներ անել հասարակութիւնից։

Իսկ հասարակութիւնը։

Արդեօք նա կը պահպանէ օգտաւէտ հասարակական գործը։

Այդ ապագան ցոյց կը տայ։

Որպէս զի մենք կարողանանք կշտամբել հասարակութիւնը և հարուածել նրա անտարբերութիւնը, անհրաժեշտ է, որ կազմակերպողները նախօրօք անենն այն բոլորը, ինչ որ իրանցից է կախված։

Գուցէ հասարակութիւնը ամենևին տեղիք չի տայ նրան կշտամբելու։

---

digitised by A.R.A.R.@

XLV

(24 յունիսի 1901 թ., «Մշակ» № 136)

Անցեալ օր ես պատահեցի իմ ծանօթներից մէկին, որ շատ հետաքրքրված է Ախալցխայի գործերով և ապաւում է նրանց չուտափոյթ վախճանին։

—Այդ գործերը չուտով չեն վերջանայ, բայց իրանք-իրանց կը մոռացվեն, ասաց նա։

—Ինչո՞ւ էք այդպէս կարծում, հարցրի ես։

Ծանօթս ժպտաց։ Ես գիտէի, որ նա սիրում է կատակներ անել, ուստի սպասում էի, թէ ինչ սրախօսութիւն պէտք է անէ։

—Կայ մէկ նշան, նկատեց նա խորհրդաւոր կերպով։

—Դէհ ասացէք տեսնենք, ինչ էք ուզում ասել։

—Ախալցխայում մի զարմանալի զուգադիպութեամբ խառնված էին այդ գործի մէջ երկու Մուրադեաններ։ Երէցփոխը, որի գործակալութեան առիթով յարուցված է գործը, Մուրադեան է, ուժեղ բողոքողներից մէկը, որ տակաւ յօդուած «Մշակում», Մուրադեան է, տեղական յայտարդը, որ պէտք է վերջացներ այդ գործը, եղիշէ վարդապետ Մուրադեան էր, երեք Մուրադեան։ Այժմ լրագրում կարդացինք, որ նրանցից մէկը, յայտարդը, գնաւմ է Պարսկաստան, երէցփոխը հետացված

digitised by A.R.A.R.@

է պաշտօնից, ճնուած է, որ բողոքող Մուրադեանն էլ Թողնէ Ախալցխան իսկ միւսներն էլ կը յորդնեն ապարդիւն մաքառումից։

—Ճնուծ։

—Ճնուոյ ասպարէզում կը ճնայ լիապօր քընէնիչ Մելեանի, որ կը լուծի բոլոր հարցերը մի շատ գործնական միջոցով։

—Ի՞նչ միջոցով, հետաքրքրուեցի նա։

—Նա կը գրէ մի գիրք «Ախալցխայի գործերի չուրջը» վերնագրով, որտեղ, իր կարծիքով, ամենի հախից կը գայ։

—Իսկ գո՞րծը։

—Գործը երևի կամաց-կամաց կը մոռացվի։

—

Մելեանի ապագայ գրքի մասին խօսակցութիւնը ակամայ մեզ յիշեցրեց նրա այն գիրքը, որ դուրս եկաւ մի քանի չաբաթ առաջ։

—Ողջոյն ձիշդ է, հարցրեց իմ ծանօթը, այն լուրը, որ պատում է բերանից բերան այդ գրքի մասին։

—Ի՞նչ լուր։

—Ասում են, թէ մշակականները, երբ իմացել են, որ Մելեանը գիրք է գրում Սերբականի գրքի դէմ, ոտ ու ձեռք են ընկել ու չեն իմացել՝ թէ ինչ անեն։ Այս կողմ այն կողմ, ժողով, խորհուրդ են կազմել և պատգամաւորութիւն են ուղարկել տէր հօրը՝ «տէրտէր ջան, մեզ խնայիր, ինչ ուզում ես քեզ տանք, ինչ ուզանք յանկանում ես ընծանիկը, միայն թէ այդ սարսափելի բանը մի տպիր»։ Տէր հայրը մնում է անդրդուելի և բարկանալով նրանց ասում է՝ «ես ճշմարտութեան պինդար եմ և ոչ մի հայիւ ինձ չի կանդնեցնի իմ պիտակութենից»։ Միթէ ճիշդ է այս բոլորը։

digitised by A.R.A.R.@

—Հարցրեք գրքի հեղինակից, պատասխանել եմ ես։

—Կը հարցնէի, սակայն ծանօթս, բայց վախենում եմ հետևանքից։ Մելևանը սիրում է ընդարձակ հերքումներ գրել։ գուցէ այդ առիթով էլ նա մի գիրք գրէ «Տարածած լուրերի շուրջը» անունով։

—Ի՞նչ վնաս։ Քահանայութիւնից ազատ ժամանակները ինչո՞ւ չը գործի գրականութեամբ։

—

Ասայի «գրականութեամբ»։

Մի քանի տարի է մեզանում հերքումներ գրելը։ նրանք անվերջ են և անծայր։

Հերքումներ գրողները երբէք չեն ուզում մտածել ոչ լրագրի և ոչ ընթերցողների մասին։ Շատ անգամ ամբողջ հերքումը կարելի էր ամփոփել մի տող, տող հինգ տողում. իսկ նրա հեղինակը ուղարկում է ձեզ մի ամբողջ գիրք, որի երկրորդ երեսը կրկնում է առաջին երեսի բովանդակութիւնը, երրորդը առաջին երկուսի կրկնութիւնն է և այդպէս անվերջ։

Մանաւանդ սիրում են հերքումներ գրել Պարսկաստանից։ Բաւական է մի անմեղ լուր տպվի լրագրում, մի դպրոցական հանդէս նկարագրվի, մի եղեռնագործութեան դէպք արձանագրվի, իսկոյն տասնեակ հերքումներ պատրաստ են։

Ինձ ցոյց տուին «Մշակի» խմբագրութեան մէջ 130 հերքում ստացված Պարսկաստանից, որոնցից իւրաքանչիւրը կարող էր կազմել մի բանաստեղծական

և որ գլխաւորն է, նրանք գրված են այն-

digitised by A.R.A.R.@

պիտի չնչին ախիճներով, որ մարդ չէ հաւատում իր աչքերին:

Բերաքանչիւր հերքում ուղարկող կարծում է, թէ ամբողջ աշխարհը նրանով է զբաղված և որ նրա հերքումին ապասում է ամբողջ ընթերցող հասարակութիւնը:

—

Եթէ մէկը փորձէր հայերի մէջ մի յատուկ լրագիր հրատարակել հերքումների համար, այդ լրագիրը ամենաապահովը կը լինէր նիւթի կողմից:

Անշուշտ այդ լրագիրը, իբրև հայկական հերքումների չտեսարան, կը լինէր շատ ջրալի և անրովանդակ, բայց հերքողները շատ գոհ կը լինէին և նրան ոսկեկազմով կը պահէին ապագայ սերունդների համար:

Գուցէ այնտեղ փառաւոր տեղ բռնէին և Թիւրքաց հիւպատոսների հերքումները, որոնցով հեղեղված են բոլոր եւրոպական խմբագրութիւնները և որոնք յաճախ լոյս չեն տեսնում խմբագրութիւնների տկարամտութեան պատճառով:

Ո՛րքան հոգատարութիւն այդ հերքում գրողների կողմից: Նրանք չեն ուզում, որ խմբագրութիւնները մոլորութեան մէջ լինեն և մոլորեցնեն իրանց ընթերցողներին:

Այդ հոգատարութիւնը այնտեղ է հասնում, որ նրանք հերքումներ են գրում հայոց լրագրների համար նոյն իսկ այն հեռագրների դէմ, որոնք ստացվել են ուսաց հեռագրական գործակալութեան միջոցով և ուրեմն կապ չունեն այս կամ այն խմբագրութեան հետ:

Ո՛րքան հոգատարութիւն հայ մամուլի մասին պէտք է նրախատպէտ լինել:

digitised by A.R.A.R.@

XLVI

(1 յուլիսի 1901 թ., «Մշակ» № 142)

Մի անգամ գնում էի լեռները յաւուկ յանձնարարութեամբ։

Ճանապարհը երկար էր և դժուար։ Յոգնել էինք թէ ես և թէ իմ ձիաւորը։ Պէտք էր մի տեղ հանգիստ առնել։

Մեր ճանապարհի վրա էր Կ. գիւղը։

—Իջնենք գիւղում, առաջարկեց ձիաւորս։ Ես համաձայնեցի։

—Ես ասում եմ Դանիէլի մօտ իջնենք, նա միշտ տանն է, դիմաց ինձ ձիաւորս։

—Ո՞վ է Դանիէլը, հարցրի ես։

—Դա մի պատուաւոր ծերունի է։ Նա այլ ևս դաշտ չէ դուրս գալիս։ Յայտնի մարդ է։ Մի՞թէ լսել չէք։

—Ջեմ լսել, պատասխանեցի ես։ Ինչո՞վ է սակայն նա յայտնի։

—Այս գիւղի աղբիւրը նա է չինել իր հաշուով, բացատրեց ձիաւորը։ Դանիէլը հիւրասէր մարդ է։

—Իջնենք, վրա բերեցի ես։

Հիւրասէր խօսքը փոքր ինչ օտարոտի էր, որովհետև գիւղը չատ լսուլ տեղում էր և հազիւ թէ տարին մէկ երկու հիւր պատահէին այս գիւղում։ Սակայն մտաբերեցի, որ մէկ-

digitised by A.R.A.R.@

երկու դէպքի համար էլ սիրալիր ընդունել եւ պատսպարող է հարկաւոր։

Շուտով հասանք Կ. գիւղը։ Ձիատէրը ցոյց տուեց ինձ աղբիւրը։ Դա մի փոքր աղբիւր էր քարուկրով չինված, գեղեցիկ ծորակով։ Աղբիւրի առաջ դրված էին երեք նաւեր՝ լիքը ջրով։ Գիւղի անասուններին ջուր տալու համար։

Ջուրը պարզ էր, վճիտ, սառն և համեղ։

Ճանապարհի յոգնածութիւնից և շոգից ինձ կրկնակի համեղ թուաց այդ ջուրը։

Դանիէլին գտանք տանը։ Նա մեզ ընդունեց սիրալիր կերպով։ Դանիէլը շատ հասարակ և համեստ մի մարդ էր։

—Տեսանք ձեր չինած աղբիւրը, լաւ ջուր ունի, ասացի ես։

—Աղբիւրը հին է, ես միայն նորից քարեկարգեցի, ասաց նա։ Աղբիւրը ընկած էր մի փոսի մէջ և շատ դժուար էր այնտեղից ջուր վերցնելը, իսկ տաւարը այդ աղբիւրից չէր խմում։ Տաւարը ուղարկում էինք ձորի տակը, որտեղ մեր աղբիւրի բարակ ջուրը խառնվում էր մի ուրիշ ջրի հետ։ Նեղութիւն շատ էինք քաշում։

—Լաւ, մի թէ դժուար էր աղբիւր չինել, հետաքրքրվեցի ես։

—Ի հարկէ, դժուար չէր. բայց ոչ ոք չէր ուզում ձախք անել։

—Կարելի էր ամբողջ գիւղով։

—Ի հարկէ, կարելի էր. բայց չէին անում։ Միշտ խօսում, միշտ զանգատվում էին և յուսոյ էօթ-էգուցվայ գցում։

—Վերջապէս դուք չինեցիք, բայցականչեցի ես ժպտալով։

digitised by A.R.A.R.@

—Այդպէս եղաւ, կամայուկ չընջայ ծերուհին։ Ուխտի բան էր, կատարեցի։

—Ի՞նչ ուխտի, հետաքրքրվեցի ես։

—Մի անգամ, պատմեց ծերուհին, ես մեր հին աղբիւրի մօտ ապրեցի և վայր ընկայ. բոլոր չորեքս ցնխուտեցի ու ինքս էլ փոքր ինչ վնասուեցի։ Այդ ժամանակից իմ մտքումը ուխտեցի, որ մի բան անեմ։ Հարկաւոր էր ընդամենը չիտուն բուբլի։ Այդ էլ գտայ, երբ մեր քուռակը մեծացաւ և նրա մօրը ծախեցի լաւ գնով։

—Տանեցիներդ չարդելեցին, հարցրի ես։

—Արգելում էին. բայց նրանց ասացի, որ ուխտ եմ արել։ Չիտուն բուբլին գիւղում մեծ վոզ է, այն էլ մեր գիւղի նման չատ ընկած տեղում, իսկ հիմի իմ տանեցիներն էլ ուրիշ են։ Օրքան լինի՝ գիւղի օրհնութիւնը մեր տան վրա է։ Չատուկէկ տարի է, որ աղբիւրը չինւած է։

—Իսկ միւս գիւղացիները, մի՞թէ չօգնեցին, հարցրի ես։

—Ոչ աղբիւրը և երկու նաւը ես չինեցի։ Մի քանի տարուց չատոց նրանք աւելացրին մեծ նաւը և նորոգում են, երբ փչանում են նաւերը։

Այդպէս չինւել է գիւղի աղբիւրը։ Այժմ գիւղացիները հերթապահութեամբ ջուր են վերցնում աղբիւրից. իսկ նրանց անասունները խմում են նաւերից և այլ ես ախտված չեն աճպարղ ձի վերստ ձորը իջնել և դժուարութեամբ վերադառնալ։

—

Ի՞նչ բան է մի փոքրիկ աղբիւր։
Ընդհանուր գործերի չընչանում, մի տրուչ

digitised by A.R.A.R.@

տեսակէտից, դա անկասկած մի շատ փոքրիկ բան է. բայց գիւղական կեանքում այդպիսի փոքրիկ բաները դեր են կատարում և չատ կարևոր դեր։

Ծանօթանալով գիւղական կարիքների հետ, դուք կարող էիք համարձակ բացականչել։

—Ափսոս, որ քիչ են կեանքի մէջ այդպիսի մանր բաներ։

Գնացէք մեր գաւառները, պտտեցէք մեր գիւղերը և տեսէք, թէ որքան լաւ երևոյթին մանր մուներ, բայց գիւղերի համար էական գործեր սպասում են օղնողների, աջակցողների և իրագործողների։

Ը՛ր կան դրանք։

Կամ չատ սակաւաթիւ են։

Այդ է պատճառը, որ երբ մէկ-մէկ դուրս են գալիս նախաձեռնողներ, նրանք հազուագիւտ, մատով ցոյց տալու անձնաւորութիւններ են հանդիսանում։ Դրանք էլ մէկ-մէկ դանդիէներ են։

Դուք լաւ գիտէք, որ այս գիւղը վաղուց կարօտութիւն ունի մի լաւ կամուրջի։ Ահա մի ուրիշ գիւղ, որի առաջ ընկած է մի ձոր անտանելի ճանապարհներով։ Ահա մի երկրորդը, որի ակեղեցին քայքայելու վրա է։ Ահա չորրորդը, հինգերորդը՝ ուրիշ էական կարիքներով։

Այդ գիւղերը տարիներով, տանեակ տարիներով տանում են պրկանքներ և անյարմարութիւններ, սպասելով, որ մի օր դուրս կը գայ մի բարերար, կամ մի խելագար և կօգնէ գիւղին։

Տանեակ տարիներ ոչ ոք չէ երևում. բայց բաղդի բերմամբ պատահում է, որ և երևում են։

digitised by A.R.A.R.@

Մի թարմ օրինակ

Մենք գանվում ենք մեր երկրի խոշ անկիւնաներից մէկում, Զանգեզուրի գաւառի Ջաւէնի գիւղում։

Այդ գիւղի եկեղեցին հասել է անտանելի դրութեան։ Գիւղացիները հէնց որ հաւաքվում են միասին, աշտարակի խօսակցութեան առարկաներից մէկը իրանց եկեղեցին է։

—Շատ է քայքայվել, ասում է մէկը։

—Հա, բոլորովին խարխուլ է դարձել, նկատում է միւսը։

—Պէտք է բոլորովին քանդել և նորը կանգնեցնել նրա տեղը, կտրական ձևով յայտնում է երրորդը։

—Պէտք է չտապել, որպէս զի մի օր եկեղեցու վիճակների տակ չը մնանք, յորդորում է չորրորդը։

—Պէտք է ժողովարարութիւն անել։

—Պէտք է, պէտք է։

—Պէտք է, պէտք է։

Այսպէս խօսում են ամեն շաբաթ, ամեն ամիս, չարունակ տարիների ընթացքում։

Եկեղեցին չէ վինվում և օրէցօր աւելի ու աւելի քայքայվում է. իսկ «պէտք է, պէտք է»-ն անդադար կրկնվում է։

Ոչ ոք չէ ուզում գործի ձեռնարկել, նուիրատուութեան առաջին օրինակը դառնալ, ժողովարարութիւն կազմակերպել։

Որ դժուար չէ գործ սկսել և առաջ տանել, այդ երևում է հետևեալից։

Ջաւակի ծօներին հիւր եկաւ Ջաւինի գիւղը հարևան Շիրվենանց գիւղից մի երիտասարդ Ա. Գասպարեանց, որ նոր էր վերադարձել Բալախանիից։ Նա տեսնում է քայքայված եկե-

digitised by A.R.A.R.@

ղեկին և լաւ է դանգատներ նրա վիճակի մասին։

—Ինչու՞ չէք վերանորոգում, հարցնում է նա։

—Մենք էլ ենք մտածում, բայց գործը դյուրաւ չէ գալիս, պատասխանում են չուխնեցիները։

Գանգատը ընդհանուր է. ամէնքն ուզում գործնական կերպով մօտենալ խնդրին։

Երիտասարդը վճռեց մի կարճ քայլ անել նա իր բարեկամի տանը հայկերոյթ պատրաստել տուեց և հրաւիրեց դիւղի ձեռնհաս մարդկանց։

Հայկերոյթի միջոցին Գասպարեանցը դիմեց գիւղացիներին յորդորական մի ճառով և յայտնեց, որ գիւղացիները պէտք է անյապաղ ձեռնարկեն եկեղեցու վերանորոգութեան գործին։

—Լաւ ես ասում, պատասխանեցին նրան։

—Եթէ լաւ եմ ասում, իսկոյն ակիզբ դնենք ժողովարարութեան յորդորիդ Գասպարեանցը։

—Թող ակսող լինի, մենք էլ յետ չենք մնալ հանգատացրին նրան հիւրերը։

—Ահա, ես թէև օտար եմ, ձեր գիւղից չեմ, բայց տալիս եմ իմ կողմից այդ գործի համար 60 րուբլի։

Այդ նուէրը անսպասելի էր և գիւղական տեսակէտից շատ խոշոր։

Նա գործից իր տպաւորութիւնը։

—Ես էլ տալիս եմ 30 րուբլի, ձեր բարձրացաւ հիւրերից մէկը՝ Գ. Դասպարեանցը։

—Ես էլ 25 րուբլի յայտնեց Ա. Տէր-Մարգարեանցը։

Միւսները հետևեցին նրանց օրինակին Հ. Տէր-Մարգարեանց և Յ. Մարտիրոսեանց խոս-

digitised by A.R.A.R.@

տացան 20-ական, Ն. և Մ. Տէր-Մարգարեանցներ 15-ական րուբլի։

—Պարոններ, ես էլ իմ բաժինը կաւելացնեմ, ասաց գիւղի թուրք ամառատապահ Հիւսէյն բէգը։

Գիւղացիները զգայվեցին։

—Ձեր գործը լաւ գործ է, ես էլ իմ կողմից տալիս եմ 5 րուբլի։

Գիւղացիները յայտնեցին իրանց շնորհակալութիւնը։

Գործը սկսվեց և ժողովարարութիւնը շարունակվում էր։

Պէտք է միայն նախաձեռնել, միայն ընթացք տալ։

—

Որքան օգուտներ կարող էինք տալ մենք մեր գիւղերին մեր նախաձեռնութեամբ, աշխատանքի կազմակերպութեամբ։

Բայց դուք չէք ուզում գիւղում տարիներ շարունակ նստել և գործել։ Գոնէ օգնեցէք տեղական կարիքներին բաւարարութիւն տալու։

Մի քանի հարիւր, իսկ յաճախ մի քանի տասնեակ րուբլիներով դուք կարող էք նպաստել շատ գործերի առաջ գնալուն։

Ո՞նչ մի դժուար բան է գիւղերին նուիրել գրքեր, ուղարկել լրագրի մի հաճարը մի քանի տարիների ընթացքում, մինչև որ գիւղը ինքը ընտելանայ ընթերցանութեան և դարձնէ նրան իր համար անհրաժեշտ պահանջ։

Ինչո՞ւ չէք ընծայի գիւղին մի կատարելագործված մեքենայ, մի գութան, մի ցաքան, մի պտիչ մեքենայ, մի յարմար ճախարակ։ Ինչո՞ւ չէք բաժանի գիւղերին ընտիր տեսակի սերմացուներ, ազնիւ տեսակի կենդանիներ։ Ինչո՞ւ

digitised by A.R.A.R.@

չէք անցկացնի գիւղի համար առուներ՝ ջուր բերելու և հողերը ոռոգելու համար։

Գիւղացին պատրաստ է նաև վոխարինարար ընդունելու ձեր արածները և ձեզ վերադարձնելու ձեր ծախքերը, բայց ապացուցէք, որ դուք նրան օգտաւէտ բաներ էք տալիս, որ դուք նրա բարեկամն էք իսկապէս։

—

«Մշակի» խմբագրութեան մէջ տարբեր տեղերից մենք նկատել ենք չնորհակալութեան արտայայտութիւններ շատ մանր-մունր օգնութիւնների համար և շատ անգամ տեղ ենք տուել նրանց գաւառական լուրերի բաժնում։ Այդ արել ենք խրախուսանքի համար։ Վ. Աղդան գիւղը, կամ մի Սևանայ վանք, ստանալով մի քանի կտոր գրքեր, կամ լրագրի օրինակներ, մի ֆարվանատարայ գիւղ, որտեղ աղքատներին օգնել է Զատկի տօներին Ս. Յովակիմեանց 20 րուբլու արժողութեամբ բաժիններ հանելով, մի Մանգլիս, ուր տեղական ունևորները օգնել են իրանց չքաւորներին, և ուրիշ գիւղեր ու աւաններ՝ իրանց պարտքն են համարում յայտնել իրանց երախտապիտութեան զգացմունքները դէպի նուիրատուները և օգնողները։

Սակայն ժամանակն է, որ այդ ոտ այժմ հազուագիւտ և բացառիկ դէպքերը դառնային սովորական և հանդիսանային իբրև մեր կեանքի կանոնաւոր արտայայտութիւն։

Հրատարակել և պարբերական մամուլի մէջ արձանագրել ամեն մի մանր բարեգործութիւն —անկարելի է և աւելորդ է։

Սովորենք նայել բարի գործի վրա, իբրև պարտաւորութեան և սովորութեան վրա։

digitised by A.R.A.R.@

XLVII

(8 յունիսի 1901 թ., «Մշակ» № 148)

—Ախ, եթէ ես 200,000 րուբլի տանէի։

Ո՛րքան մարդիկ արտասանել են այդ նախադասութիւնը։

Ես ականատես եմ եղել, երբ արտասանել են նոյնը այնպիսի անձինք, որոնք խաղարկական տոմսակ դեռ չեն գնել և յոյս էլ չունեն ձեռք բերելու։

Բայց ինչու նրանք էլ չը տեղչան, չըղձան ու չերազեն։ Մօտ տոմսակ ունեցողներից չատերը, որոնք տարիներ շարունակ սպասում են, չեն տանում 200,000 րուբլին.

Իմ ականջները, գուցէ, ընթերցող, և ձեր ականջները, սովորել են 200,000-ի մասին յայտնած զանազան տեղչանքներին։

Սակայն ինձ շատ զարմացրեց, երբ լսեցի նոյնը մի սրբազանից։

—Ախ, եթէ տանէի 200,000, բացականերից նա կատաղի ոգևորութեամբ։

Մենք նստած էինք այգում և ճաշում էինք։ Տանտէրը հիւրասիրեց մեզ պատուական հին գինիով և հրաժարեց ծառային բերել մի շիշ էլ սպանիական գինի։ Սեղանակիցները շատ հաւանեցին գինիները։ Տանտէրը հրաժարեց բերել դարձեալ մի քանի շիշ։ Այդ ժամանակ սրբա-

digitised by A.R.A.R.@

զանի բերանից բառն այժմ դուրս թռաւ այդ նախատաւթիւնը։

Մի վայրկեան մենք դադարեցրինք մեր ուրախ քրքիջը և նայեցինք հոգևոր հօր վրայ։ Նա ձեռքը խփեց սեղանին և բացականչեց.

—Շատ անգամ է այդ բանը մտքիս եկել, բայց բաղդս չէ բերում։

Ինձ հետաքրքրեց այն հարցը, թէ ինչ տնտեսանքներ պէտք է ունենար սրբազանը։ Նա երևում էր այնպէս հասկաստ, հասարակ, առանց յատակնութիւնների մի մարդ։

—Ի՞նչ պէտք է անէք, սրբազան, 200,000 րուբլին, եթէ տանէք, հարցրի ես։

—Ինչպէս թէ ինչ պէտք է անեմ. դա էլ հարցնելու բան է, պատասխանեց նա չուարած։

—Ճիշդ որ ինչ պէտք է անէք, բացականչեցին սեղանակիցները։

Սրբազանը վարանման մէջ ընկաւ։

—Հէնց այն որ հարուստ կը լինեմ,—դա քիչ բան է, պատասխանեց նա փող կասեն էլ։ Այժմ կը չատանայ։

—Սակայն մի նպատակ պէտք է ունենաք թէ ոչ, հարցասիրեցինք մենք։

—Երբ որ հարուստ կը լինեմ, պատասխանեց նա, ինչ որ փափագ կունենամ՝ բոլորն էլ կը կատարեմ։

—Օրինակ, ի՞նչ փափագ։

—Օրինակ. ուտել խմելս կը լաւացնեմ, լաւ խոհարար կը վարձեմ։

—Այդ այժմ էլ կարող էք անել ձեր հատոյթներով։ Ուրիշ բան ասացէք։

—Սենեակիս պատերը կը ծածկեմ գեղեցիկ պատառներով, կահ կարասիներ ձեռք կը բերեմ։

digitised by A.R.A.R.@

—Դա էլ դատարկ բան է, պատասխանեցինք մենք։ Ուրիշ

Սրբազանը միայն չէր կանգ առած նրա ծրարները չատ էր միայն։

—Իմ ընկեր եպիսկոպոսի նման բերել կը տամ օսմանլուի լաւ դինջակներ ու սրբիչներ, հոտաւէտ սապօններ, քահրիթարներ ու քաղցրէններ, կմկմաց սրբազանը։

—Դրանք էլ համեմատաբար չնչին բաներ են։ Առանց 200,000-ի էլ կարող էք այդ բոլորը ձեռք բերել և ձեր երկրային երջանկութեան հասած լինել։ Ուրիշ բան ասացէք։ Գուցէ կը ցանկանայիք կաթողիկոս դառնալ։

—Չէ, չէ, եղբայր, չեմ ուզում այդպիսի բան, գլուխս ինչու ցաւի մէջ դնեմ։

Սրբազանը հրաժարվում էր այդ առաջնից, բայց մի և նոյն ժամանակ նայում էր մեր աչքերին, կարծես ապասում էր, որ մենք իրենք էինք նրան համաձայնել կաթողիկոս դառնալու։

—Գուցէ հօ կաթողիկոս չէ կարելի դառնալ, նկատեց սեղանակիցներից մէկը, պէտք է ընտրուին։

—Գուցէ էլ կարող է տեղը եկած ժամանակը օգնել, եթէ ցանկութիւն լինի, նկատեց սրբազանը. ես ցանկութիւն չունեմ։

—Այդ թողնենք, միջամտեց մի ուրիշ սեղանակից, վերադառնանք մեր գործին։ Սրբազան, 200,000-ը կը բերէ տարեկան մօտ 10,000 րուբլի։ Իսկ այն, ինչ որ դուք ցանկացաք, շատ չնչին բաներ են։ Ուրիշ ինչ կանէիք այդպիսի խոշոր գումարով։

—Էհ, ինչ գիտեմ։ Հիմի չեմ մտաբերում, պատասխանեց չուսարած դէմքով սրբազանը։

digitised by A.R.A.R.@

Մեր անդանակիցները զուարճանում էին այդ խօսակցութիւնից, բայց նրանցից մէկը յանկարծ լուրջ դէմք ընդունեց և ակաեց ցոյց տալ վրդովմունքի նշաններ։

—Ես ձեզ կօդնեմ, դիմեց նա սրբազանին։ Ես ցոյց կը տամ նպատակներ։

—Հա, հա, օրհնեալ լինիս, ասա տեսանենք, վրա բերից սրբազանը ուրախացած։

—Այդ խոշոր գումարով կը բանայիք մի քանի գիւղերում դպրոցներ, կը հիմնէիք գրադարաններ, կը հրատարակէիք գրքեր, կը չինէիք ապաստարան զրկեալների համար, կը պահէիք մի քանի թոշակաւոր ուսանողներ...

—Էհ, ուր գնացիր, բաւական է, բաւական, ազազակեց յուսահատ ձայնով սրբազանը։ Ինչու՞ պէտք է ես այդ բոլորն անեմ։ Ո՞նց պարտական եմ։ Ինձ ինչ օգուտ։ Այն ժամանակ՝ էլ ինչ նշանակութիւն ունի 200,000 տանելը։ Ես 200,000-ը ինձ համար եմ ուզում և ոչ թէ ուրիշների համար։ Թող ուրիշները իրանք իրանց գործը քաշեն։

Վրդովմունքը վարակեց և միւս անդանակիցներին։

—Սրբազան, դուք արդար չէք, յայտնեցինք մենք։ Ձեզ հարց տուին, թէ ինչպէս պէտք է գումարը ծախսէք՝ լուծիւն տալու ձեր լղձերին։ Դուք չը կարողացաք մեծ ծրագիր ցոյց տալ։ Ասեցրէք գումարները ինչ պէտք է անէք.

—Ձեզ ինչ, բարկացած պատասխանեց սրբազանը։ Ես իմ փողի տէրն եմ։ Ինչ կուզեմ, այն էլ կանեմ։ Բաժանելու ցանկութիւն չունեմ։

—Իրօք չէք տարել։ Այդ բոլորը միայն ճենթադրութիւն է, ձեր ձեռքում գումարը չը կայ։ Նա պէտք է ձեզ վրա իջնի իբրև արկնքի

digitised by A.R.A.R.@

մանանայ։ Մինչ նրա մի մասը չէք հանի ուրիշների համար։

—Ինչու, ինչու պէտք է հանեմ ինչու ուրիշի հոգսը ես պէտք է քաշեմ ես ինչ պարտավան եմ ես չեմ ուզում խաբել. այսօր խոստանալ, իսկ վաղը հրաժարվել ես փարիսեցի չեմ։

—Բայց դուք լաւ օրինակ կը լինէիք, նախաձեռնող կը լինէիք, քաջալերողի և խրախուսողի դեր կը կատարէիք։

—Ես մարդ չեմ, բացականչեց սրբազանը, ես մինչ ապրել չեմ ուզում։ Ինչու հէնց ուրիշների վրա մտածեմ ու նրանց ցաւերը լամ։

Վէճը աստիճացաւ, բայց ոչ մի հետևանքի չը հասցրեց։ Սրբազանը վիրաւորվեց այն պահանջներից, որ անում էին սեղանակիցները, և այն ոճերից, որ նրանք գործ էին ածում իրանց խօսակցութեան միջոցին։

Ուրախ ճաշը փչացաւ։

—

Նա այդ տեսակի մարդ էր։

Սակայն կեանքի մէջ յաճախ մենք պատահում ենք ուրիշ տիպի սրբազանների։

Նրանք ցոյց են տալիս իրանց մարդասէր, ազգասէր, պատրաստ ամեն բան անելու հասարակութեան համար, եթէ միայն...

Եթէ 200,000 րուբլի տանէին...

Կամ նաւթի հանքեր ունենային...

—Տուէք ինձ կարողութիւն և յետոյ տեսէք, թէ ինչ արդիւնք եմ ցոյց տալիս։ Գլխումս շատ լայն և ընդարձակ ծրագրներ ունեմ, բայց ինչ արած։

Նիհիլ գործունէութիւն։

—Ինչու չէք սկսում փոքր դիրքով, հարցնում էք դուք։

digitised by A.R.A.R.@

—Զարժէ, պատասխանում է նա։

—Ինչու գլուխ չէք կանգնում գործի և դատաստաններ ժողովում, հարցնում էք դուք։

—Ոչինչ չի դուրս գայ, կը խոստանան և ոչինչ չունն անի, պատասխանում է նա։

—Ինչու չէք չրջապատում ձեզ նոյն գործողներով և միացած ոյժերով գործ ակսում, հարցնում էք դուք։

—Ո՞վ կը գայ առանց փողի սմխանեթով աշխատելու, պատասխանում է նա։

—Ուրեմն անգործութիւն, բացականչում էք դուք։

—Ինչ արած, ժամանակը այդպէս է։ Պէտք է սպասել, գուցէ ոսկիներ էլ կը գան, աջակցողներ էլ կը գտնվեն։

—

Բարեբաղդաբար, ոսկին չէ ամեն բանի կարգադրողը։

Նախաձեռնող, քաջալերող, խրախուսող լինելու համար անհրաժեշտ չէ անպատճառ հարուստ լինել։

Անհրաժեշտ է ուրիշ բան։

Անկեղծ սէր դէպի հասարակական գործը և անձնուէր վերաբերմունք։

Ապացոյցներ՝ օրըստ կամենաք։

Բայց այսօր մենք հոգևորականների աշխարհն ընկանք, ուստի կանգ առնենք հոսհոսպատասխան օրինակի վրա։

Ը՛ր պիտանի, դուք, ընթերցող, ուշք էք դարձրել մի հանդամանքի վրա։ Այս տարի, ինչպէս ձեզ յայտնի է, «Մշակ» լրագիրը նուէրներ է ժողովում անբերրիութիւնից վնասվածների օգտին։

Նոյնով նուէրներ ժողովողներն ցուցակին,

digitised by A.R.A.R.@

իմ ուշադրութիւնը գրաւեց մի հանգամանք։ Այն, որ այդ ցուցակի մէջ շատ կային քահանաներ մի որոշ շրջանից։

Դա ինձ հետաքրքրեց։

Ոչ այն պատճառով, որ ես հակառակ լինէի քահանաներին անընդունակ այդպիսի գործերի համար, այլ որովհետև իրապէս նրանք շատ քիչ են գործում այդ ուղղութեամբ։

Այդ ցուցակի մէջ գտնում ենք հետևեալ քահանաներին՝

Մայկոպի Վ. Ասկարեանին։
Եկատերինօդարի Ս. Վարդանեանին։
Աստրախանի Ս. Աղբալեանին։
Գէօրգիևսկի Ն. Վարդանեանին։
Գրօզնիի Պ. Մօսխասլեանին։
Ս. Խաչի Գ. Աղայեանին։
Կրասնօվոդսկի Ա. Վարդանեանին։
Սամարկանդի Ռ. Բէկպուլեանին։

Արդեօք ձեզ չէ զարմացնում, ընթերցող, որ այդ քահանաները բոլորն էլ միայն մի թեմից են՝ Աստրախանի թեմից։ Նայեցէք քաղաքների ցուցակին։ Դրանք Հիւսիսային Կովկասումն են և Անդրկասպեան երկրում։

Ինչու՞ չը կան ցուցակի մէջ քահանաներ նաև Թիֆլիսի, Երևանի, Շուշու, Շամախու թեմերից։

Որովհետև այնտեղի հոգևոր իշխանութիւնները չը ցանկացան օրինակ կամ նախաձեռնող հանդիսանալ այս գործում։

Այսօր, ինչպէս տեսնում էք, գործի համար հարստութիւն ու ամեն պարկեր չեն հարկաւոր, այլ ցանկութեան զգացմունք և օրինակ։

Մենք ամենևին մտադիր չենք չափազանցնել և խոչորացնել իրողութիւնը։

Բայց արձանագրելուց՝ ամենևին աւելորդ չէ։

---

digitised by A.R.A.R.@

XLVIII

(15 *յուլիսի* 1901 *թ.*, № «*Մշակ*» 153)

Թիֆլիսում մեռելութիւն է տիրում փողոց ներսում ոչ ոք չը կայ։

Մագազինները ժամերով սպասում են յաճախորդների, իսկ եթէ պատահում են մագազին մտնողներ՝ նրանք էլ ասելի հովանալու համար են այնտեղ գնում, քան թէ իր դնելու։

Զանազան առեւտուրներում ծառայող պաշտօնեաների դէմքերը յուսահատեցնել կարող են մարդու։ Նրանք ձմեռն էլ, ինչպէս գիտէք, արտայայտում են թմրութիւն և անտարբերութիւն, իսկ այժմ—բոլորովին անտանելի են դարձել։ Այդ պաշտօնեաները, յօրանջելով, երերվելով, տնքալով գնում են իրանց պաշտօնատեղը, չարունակում են այնտեղ յօրանջել և մի քանի ժամից յետոյ դուրս են գալիս այնտեղից մաշված, ջարդված և ջախջախված։

Լաւ է, եթէ մէկը պատահի և մի նոր, թարմ անեկդօտ պատմի։

Համով-պղպեղով անեկդօտը դեռ կարող է փոքր ինչ կենդանութիւն տալ պաշտօնեայի դէմքին։

Եթէ այդ էլ չը կայ՝ մեռելութիւնը կատարեալ է։

Միայն մի տեղ ես տեսայ թիֆլիսում, ուր այժմ երևում է գործունէութիւն. նկատում

digitised by A.R.A.R.@

ան կենդանության և թաղմության նշաններ։ Դա կովկասեան ցուցահանդէսի տեղումն է և ցուցահանդէսի կօմիտեարի գրասենեակում։ Արագութեամբ կանդնեցնում են շինութիւններ, ընդունում են յայտագիրներ և իրեր, ուղարկում են զանազան տեղեր ծանուցումներ, ծրագիրներ և բացատրութիւններ։

Անկասկած, ցուցահանդէսում կը լինեն գեղեցիկ կազմված և լիակատար բաժիններ։ Անկասկած նա կունենայ ուսանելի և հետաքրքրական կողմեր։

Բայց գաւառական մասը, պէտք է ենթադրել, կը լինի անկատար և թերի։

Գաւառի մարդիկ բաւականաչափ չեն ըմբռնել ցուցահանդէսի նշանակութիւնը և հոգ չեն տանում նրա լիակատարութեան մասին։

Գաւառի վարչական անձերից չատերը վերաբերվում են գործին ձևական կերպով, իսկ մանաւոր գործողները այժ և եռանդ չունեն ներգործական դեր կատարելու։

—

Մի քանի ամիս առաջ ցուցահանդէսի տեղեկութիւն կայցյաւ կովկասեան պիւդջետնոտեսական ընկերութեան արտակարգ մի նիստ։

—Իմ կարծիքով, ասաց երիտասարդ անդամներից մէկը, պէտք է ցուցահանդէսում ներկայացնել ոչ միայն այն, ինչ որ արված է կովկասում հարիւր տարվայ ընթացքում, այլ և այն, ինչ որ չէ արված։

Այդ բարեմիտ առաջարկութիւնը, որը մեծ խրոխտանքով արտասանեց երիտասարդ հռետորը, չատ զուարճացրեց հանդիսականներին։

—Ինչպէս ներկայացնել այն, ինչ որ չէ արված, հարցրեց մէկը։

digitised by A.R.A.R.@

Երիտասարդը չը չուարեցաւ նա ատորված էր դերազոյն զգուշութիւններուն

—Մենք կարող էինք, ասաց նա, ունենալ կովկասում բազմաթիւ դպրոցներ, համալսարան, պօլիտեխնիկում, երկաթուղիների իսիտցանց, բազմատեսակ հասարակական հիմնարկութիւններ, բայց ոչինչ չունենք...

—Շատ լաւ, բայց ինչպէս կարող ենք այդ չեզածը ներկայացնել ցուցահանդէսում

Նախագահը որոշում չը կայացրեց և առաջարկեց անցնել հերթական հարցերին

Իսկ իմ չարաճճի հարևանը, ընկերութեան հին անդամներից մէկը, փախաց իմ ականջին հետևեալը.

—Ես մի միջոց պտել եմ երիտասարդ հանօթի ցանկութիւնը կատարելու Նրա ճառը կը վերցնենք մի քանի ֆօնօգրաֆների վրա և այդ ֆօնօգրաֆները կը վաճառենք ցուցահանդէսի դանազան տեղերում Ֆօնօգրաֆների մօտ կանգնած յատուկ անձինք կը պատճէնեն անիւը և այդպիսով ճառի բովանդակութիւնը կը դառնայ բոլորի սեփականութիւն

—Այո, պատասխանեց նրան միւս հարևանս, բայց դրանով մենք կը ներկայացնենք տեղի ունեցած մի ճառ, իսկ դարձեալ անկարող կը լինենք ներկայացնել չեզածը

Նախագահը հրաւիրեց մեր ուշադրութիւնը քննվող հարցերի վրաւ Հարևաններս լռեցին

Երիտասարդ հանօթի ցանկութիւնը անկատարած բարի էր, որ սակայն արտայայտվեց օտարոտի և անտեղի ձևով: Ես դա առաջին անգամը չէր

Բայց որքան լաւ կը լինէր, եթէ նա հոգ տաներ կերպով ներկայացնելու

digitised by A.R.A.R.@

այն, ինչ որ կայ և եղել է։ Այն ժամանակ՝ երբ ցանկությունը իրագործված կը լինէր ուրիշ ձևով։

Մեր իրականության ճշգրիտ պատկերը—անմենալաւ ապացոյցն է ոչ միայն մեր սրտին, այլ և այն բոլորին, ինչ որ պէտք է անէինք, բայց չենք արել։

—

Ներկայացնել մեր իրականութիւնը միակատար կերպով—ահա դժուար հարցը։

Ով պէտք է մեր երկրի գանազան անկիւնները մտնի դրա մասին հոգ տանէ։

Ու ինչպէս են հոգ տանում։

Ահա ձեզ մի բնորոշ դէպք, որ արձանագրվել է թաղթութեան մէջ։

Յուդայհանդէսի կոմիսարը դիմել էր մեր երկրի գաւառապետներին, խնդրելով նպաստել, որ գաւառի աղգաբնակութիւնը ուղարկէ իր արձիւնքները ցուցահանդէս։

Դրանցից մէկը, այն է Ջիբրայելի գաւառապետը ստանում է թուղթը և ընդունված ձևով ուղարկում է նրան չրջաբերական կարգով գաւառամասերի պրիստաւներին։

Ինչպէս տեսնում էք նա իր պարտաւորութիւնը կատարեց։

«Ինձ յանձնված գաւառի պրիստաւներին առաջարկում եմ անյապաղ կատար ածել և ինձ զեկուցանել»։

Այդպէս է հրամայում գաւառապետը։

Պրիստաւները մէկը միւսին են ուղարկում կոմիսարի թուղթը։

Հրամանը կատարվում է։

Ու ահա արդիւնքը։

«Իմ գաւառամասում չը կան անձեր, որոնց

digitised by A.R.A.R.@

մասնակցությունը ցուցահանդէսում օգտաւէտ լինէր»։

Այդպէս մակագրում է պրիսաւնների խրաքանչիւրը և թուղթը վերադարձնում գաւառապետին։

Չնը հրաշալի կերպով պահպանված էր խրաքանչիւրը իր դասը պատասխանել էր։

Գաւառապետը, հաճարելով իր պարտաւորութիւնը կատարած, վերադարձնում է կոմիսարին նրա ուղարկած թուղթը իր և պրիսաւների բոլոր մակագրութիւններով։

Պրծաւ գնաց։

Խնդճ գաւառ։

—

Այն, ինչ դեռ ներելի կարող է համարվել ոստիկանական պաշտօնեաների համար, բոլորովին աններելի է այնպիսի անձի համար, ինչպէս է հարկային տեսուչը, որ կոչված է անդադար ուսումնասիրել ազգաբնակութեան տնտեսական կեանքը։

Իսկ Արդահանում գտնվող մի հարկային տեսուչ իրան արած դիմումին պատասխանից հետևեալ կերպով.

«Գաւառում առհասարակ կուլտուրայի բացակայութեան պատճառով՝ չը կան գիւղատնտեսութիւններ, արհեստագործներ և տնայնագործներ, որոնք կարողանային մասնակցել առաջիկայ ցուցահանդէսին, նոյնպէս չը կան առանձին անհատներ, ֆիրմաներ և հիմնարկութիւններ, որոնց մասնակցութիւնը կարելի լինէր համարել օգտակար»։

Հարկային տեսչի այս նշանաւոր պատասխանը լոյս տեսաւ «Тифлисскій Листокъ» լրագրի էջերում։

digitised by A.R.A.R.@

Այս անգամ այդ տողերից վրդովվեց տեղական գաւառապետը, որ, կարդալով հարկային տեսչի կարծիքը, ուղղեց լրագրի խմբագրութեանը մի լուրջ այդ կարծիքի դէմ։

«Արդահանի գաւառում, ասում է գաւառապետը, կան 6801 ծուխ, որոնք վարում են ինքնուրոյն տնտեսութիւն. ցանում են հացահատիկ, պահում են անասուններ, պատրաստում են գորգեր, կարպետներ, ոտնամաններ և առհասարակ ապրում են այնպիսի կեանքով, ինչպէս Անդրկովկասի միւս մասերում»։

Այնուհետև գաւառապետը յայտնում է, որ Արդահանի գաւառից պէտք է ուղարկվեն ցուցահանդէս բալմատեսակ իրեր, օրինակ, փեթակ, հասիր, թել և թուչի պանիրներ, կարպետներ, խուրջիններ, զանազան կերպասներ, գուլպաներ, ձեռնոցներ, լուսադեղ, օթօրոյ, իւղոտեալ գործեր և այլն։

Ի՞նչ կասէ հարկային տեսուչը։

Նա երևի ապաստում է, որ Կովկասը զատնայ մի Անգլիա, մի Ֆրանսիա, մի Գերմանիա, որպէս զի այնուհետև արժանի լինի իր արդիւնքները ցուցահանդէս տանելու։

Բայց այն էլ կայ, որ, երբ Կովկասը այդ զարգացման կը հասնէ, այն ժամանակ ազգաբնակութիւնը ինքը կը հոգայ ցուցահանդէսի մասին և այլ ևս հարկային տեսչի խնամատարութեան և օգնութեան պահանջ չի զգայ։

—

Իսկ այժմ մեր գաւառները դեռ կարօտ են զեկավարների, խրախուսողների և գործ կազմակերպողների։

Ներքանչիւր մարդ գաւառում, երբ տեղեկացաւ լրագիրներից ցուցահանդէսի մասին,

digitised by A.R.A.R.@

իր պարտքը պէտք է համարէր բացատրել իր ընկերներին, թէ ինչ նպատակներով է ծառայում ցուցահանդէսը և պէտք է աշխատէր կազմակերպել իրերի առաքումը դէպի ցուցահանդէս։

Մեր գաւառական և գիւղական կեանքը անմխիթար վիճակի մէջ է։ Նա չատ տեղ վնասվել է և առաջվանից վատացել։ Բայց նա ունի և առաջադիմութեան ու կատարելագործութեան փաստեր։

Դուք, ժողովրդի մօտ գտնվող մարդիկ, ներկայացրէք գաւառը համակուլկասեան հասարակութեան առաջ նրա իրական պատկերով և նրա արած առաջադիմութեան փորձերով, ցոյց տուէք նրա կարիքները և ցաւերը։

Թող հասարակութիւնը, մանաւանդ և վարչական անձերը տեսնեն այդ բոլորը, քննեն ժողովներում ձեր յարուցած գաւառական հարցերը և միջոցներ որոնեն օգնելու ժողովրդին։

Եթէ ցուցահանդէսը և նրա ժամանակ գումարված ժողովները չեն տայ մեր սպասած արդիւնքները, սեղաւոր կը լինենք մենք բոլորս։

Ջաղաքի և գաւառի գործողներ, մանաւանդ և վարչական պաշտօնեաներ, տեղական ինտելիգենցիային պատկանողներ, նպաստեցէք մեր կարիքների լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութեան։

Դա մեր պարտականութիւնն է։

Այդ է պահանջում մեզնից մեր բազմաչարչար երկիրը։

Օգնութեան է կարօտ մեր բազմաչարչար ժողովուրդը։

---

digitised by A.R.A.R.@

XLIX

(22 յուլիսի 1901 թ., «Մշակ» № 159)

Ս.Զդաեէր ծանօթներից մէկը, խօսելով ցուցահանդէսի մասին, այն կարծիքը յայտնեց, որ պէտք է այնտեղ ներկայացնել և հայկական հիմնարկութիւնները։

Ես մեծ համակրութիւն յայտնեցի այդ միտքին։

—Պէտք է, որքան կարելի է, չօշափելի և բացայայտ կերպով ներկայացնել բոլորը, ոգևորված աստմ էր նա, որպէս զի ցուցահանդէսը նկած հաստատութիւնը պարզ գաղափար կազմէ մեր հիմնարկութիւնների մասին։

Ես սեղմեցի ծանօթիս ձեռքը։

—Եթէ ցուցահանդէսում, չարունակեց ծանօթս, պէտք է լինեն կովկասեան ցեղերի տիպեր կենդանի ներկայացուցիչներով, ինչո՞ւ հանդէս չը բերենք և մենք մեր դպրոցները, վանքերը, կօնսիստօրիանները, բարեգործական հաստատութիւնները իրանց գործողների հետ միասին։ Թող ամենքն էլ տեսնեն մեր գործողնեբին, մեզ համար աշխատանք և ներողութիւն կրողներին։

Ծանօթս շատ ոգևորված էր իր մտքով։ Մի քանի խօսում էր ու ճառում և չէր թոյլ տալիս, որ ես էլ իմ նկատողութիւնները անեմ։

digitised by A.R.A.R.@

Վերջապէս, սկսեցինք մշակել ծրագիրը, որպէս զի առաջարկենք «ուր հարկն է»։

Սակայն...

Սակայն ծանօթ, երբ խորասուզվեց խնդրի մանրամասնութիւնների մէջ, բոլորովին վոխեց իր կարծիքը։

—Ես այժմ բոլորովին դէմ եմ, բոլորովին, ասաց նա։ Ես ամեն կերպ պէտք է արգելքներ յարուցանեմ ոչ միայն այդ, այլ և բոլոր նոյնատեսակ առաջարկների դէմ։

—Ինչո՞ւ, կը հարցնէք դուք, ընթերցո՛ղ։

Ի՞նչպէս ասեմ։ Աւելի լաւ է խօսենք օրինակներով։

—

Դիցուք՝ դուք վճռել էք ներկայացնել Շուշու դպրոցը։ Հրաւիրել էք հոգաբարձուներին, տեսչին, աշակերտներին, մի խումբ չուշեցիների դաղափար տալու համար դպրոցի մասին։

Ի՞նչ է մեզ սպասում։ Ծրագրենք։

Ձեր առաջ նստած են «վերոյիշեալները» զգոյշ և սպասողական դիրքով։

Վեր է կենում տեսուչը և խօսում։

Ի՞նչ անուշ և գեղեցիկ լեզու, որքան հրապոյր նրա խօսքերի և դարձուածքների մէջ։

Նրա չրթունքներից մեղր է ծորում։

Նախանձել կարելի է նրա հռետորութեանը։

Հոգաբարձուներից երկուսը հրճվում են և հրճուանքից իրանց աոանձները ցոյց տալիս։

—Ափսոսում տեսուչ, հինչ լաւ խօսում ա, բայականներին նրանք։

Լուռ են աշակերտները։ Սառն են նրանց դէմքերը։ Կարծես, նրանք մի ինչ որ տանջանքի մէջ են։

Անշուշտ երկար նստելուց յոգնել են։

digitised by A.R.A.R.@

Տեսուչը ընդհատեց իր ճառը, մի քանի դըպրոցական օրինակելի կարգադրութիւններ արեց, խօսեց հոգաբարձուների հետ, խօսեց աշակերտների հետ, նկատողութիւն արեց մի յօրանչող աշակերտի...

Ամէն բան լաւ է գնում։

Օրինակելի է և նախանձելի։

Տեսուչը չարունակեց իր ճառը յաղթական ձայնով։ Նա ակնարկներ արեց զանազան հանգամանքների վրայ։ Նրա հայեացքը թափանցիկ է և նուաճող։

Ցանկարծ, ինչ եղաւ, ինչ չեղաւ, լսվեց մի խուլ մռնչիւն։ Ամէնքը իրարով եղան։ Սկավկիւտուր ու դպրոց։ Կատաղութեամբ արտասանվեցին սպառնալիքներ, հայհոյանքներ, վիրաւորական բացականչութիւններ։

Մի խօսքով, լուսանկարչական ճշդութեամբ կրկնվեցին յուցահանդէսում՝ Շուչու դպրոցի յայտնի դէպքերը։

Տեսարանը տպաւորիչ է։

Այդ տեսարանից սարսափած՝ յուցահանդէսի այցելուն վազում է ոստիկանութեան եռնից։

—Որքա՜ն հարազատութիւն, որքան նմանութիւն իրականին, բացականչեց մի շուչեցի։

—Այո, բայց այդ իրական պատկերից ստացվում է միայն աղգային խայտառակութիւն, աղաղակեց իմ ծանօթը։

—

Վերջնենք մի ուրիշ օրինակ։

Դիցուք ցանկանում էք ներկայացնել քահանաների տիպեր։ Հանդէս էք բերել ամեն տեսակ նմուշներ, սկսած բոլորովին անգրագէտներից մինչև «պրոֆէսօրները»։

Նրանք լուռ են։ Եւ քանի լուռ են, որքան

digitised by A.R.A.R.@

գեղեցիկ են։ Նրանց դէմքերի վրա փայլում են հեզութեան և բարութեան նշաններ։

Բայց հէնց որ սկսում են խօսել, առաջանում է մի բարեհօնեան խառնակութիւն, որ յիշեցնում է մեր քահանաների ժողովները, օրինակ, ապահովութեան դրամարկղի գործերի քննութեան ժամանակ։

Մեզ հետաքրքրում է Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսի քահանայական խումբը։ Նայում ենք, նայում և չենք կշտանում։

Ցանկութիւն ենք զգում, որ նրանցից մէկը, դիցուք X քահանան նմուշի համար մի աղօթք ասէ։

Նա վեր է կենում և արտասանում է «Մեղայ»-ից յետոյ ասվող «Ողորմեացին»։

Դուք լսում էք ուշադրաւ։

«Եւ ես կարգաւս աւագ քահանայական իշխանութեան և հրամանաւն»...

Ինչպէս թէ աւագ քահանայական։

Ժամագրքի մէջ աւագ խօսքը չը կայ և դա անմիտ յաւելուած է։

—Ինչո՞ւ է քահանան աւելացրել։

Ինձ բացատրում են.

—Որովհետև նա աւագ քահանայութիւն է ստացել և ուզում է սրանով դէպքում ցոյց տալ իր ստացած այդ չնորհքը։

Ահա Թիֆլիսի մի ուրիշ քահանայ մի պարզանալի ուրախ տրամադրութեան մէջ։ Նրա վրա շատ խոժոռ դէմքով նայում է իշխանութիւնը, որ աչքերը յառել է նրա գլխարկի վրա։

—Ինչ իրաւունքով ես ծածկել կամիլաւկա, լսում է մի սպառնալի ձայն։

—Իրաւունք ունեմ, պատասխանում է քահանան։

digitised by A.R.A.R.@

—Ես իրաւունք չեմ տուել։

—Ուրիշ տեղից եմ իրաւունք ձեռք բերել, աւելի բարձր տեղից,—պատասխանում է քահանան։

—Սա ինչ բան է, հարցնում էք դուք։

Ձեզ պատմում են, որ առանց թեմական իշխանաւորի գիտութեան՝ քահանաներին ներկայացնում են պարգեւների և այտեղից առաջանում են զանազան ընդհարումներ թէ տէրտէր և թէ զաւեշտական։

Ը՛ը չարաճճիները օրինակները։

—

—Յուշահանդէսի համար, անկասկած, շատ կարեւոր է, որ ներկայացրած իրերը և տեսարանները լինեն հարազատ և ճշգրիտ, ասացի ես ազգասէր ծանօթիս։ Ի՞նչ անենք թէ մեր կեանքը անմխիթար երեւոյթներ ունի, բայց կան և մխիթարականները։

—Ոչ, ոչ, հարկաւոր չէ, կտրեց նա։

Ջրբերինք մեր կեանքը՝ գտնելու մխիթարական երեւոյթներ։

Վերցրինք Ախալցխան—աննպատակ փաստեր։ Վերցրինք Ալէքսանդրօպօլը իր հասիճային և ոչ հասիճային հաշիւներով—հարցական նշաններ։ Վերցրինք Կաղզուանը իր եկեղեցու չինութեան ազմուկներով—յուսահատեցնող դէրթութիւն։ Վերցրինք Երեւանը իր նորընծայ քահանաներով—մի աւե էջ, և այլն, և այլն։

—Ոչ, ոչ, հարկաւոր չէ, կրկնեց ծանօթս։ Մէկ մխիթարական բան ցոյց տալու համար պէտք է տասը խայտառակութիւն հանդէս բերեր։ Հարկաւոր չէ։

Մեր ծրագիրը այդպիսով մնաց թերի և անկատար։

digitised by A.R.A.R.@

Բայց գուցէ գանվեն ուրիշները, որոնք նրան մշակեն և առաջարկեն մեր աղգայիններին։

Դեռ ուշ չէ։ Ցուցահանդէսի վարչութիւնը ընդունում է յայտարարութիւններ մինչև օգոստոսի 5-ը։

Վերջապէս կարող են իբրև բացառութիւն ասելի ուշ ընդունել մերայիններին։ Մինչէ մենք միշտ և հանապազ մեր յոյսը բացառութիւնների վրա չենք դրել։

—

Ցուցահանդէսի ոչ մի բաժնի մասին այնքան չէ խօսվել ու գրվել, որքան մասնաւոր բաժնի մասին։

Ծողովվելու են, ժողովվում են, ժողովվեցին։ Առաջարկելու են, առաջարկում են, առաջարկեցին։ Կազմակերպելու են, կազմակերպում են, կազմակերպեցին...

Բայերի ամեն տեսակ խոնարհում։

Վերջ ի վերջոյ, երկար որոնումներից, ծրագիրներից յետոյ, գրական գործողները գտան մի փոքր անկիւն, ուր պէտք է պատսպարվեն։

Շատ ափսոս, որ չաջողվեց առանձին շինութիւն կառուցանել և մասնաւոր ու տպագրական գործը արժանաւորապէս ներկայացնել։

Մենք քսաներորդ դարի սկզբումն ենք, իսկ այդ դարի ամենանշանաւոր և ուժեղ գործօններից մէկը լինելու են մասնաւորը և տպագրական խօսքը։

Մի բան միայն հաշտեցնում է մեզ մասնաւոր բաժնի այդ վիճակի հետ, այդ այն է, որ և կեանքի մէջ, մեր ներկայ օրերում, մասնաւորին հազիւ հազ տեղ են տալիս ընդհանուր գործերի մէջ։ Նրան մի կերպ տանում են, մի կերպ համբերում են։

digitised by A.R.A.R.@

Մամուլի բաժնում կը լինի և կոլկասեան մամուլի պատմութիւնը։

Դուք, ընթերցող, երևակայում էք անշուշտ, թէ այդ պատմութեան միջոցով կը ծանօթանաք մամուլի կեանքի հետ, նրա չօշափած խնդիրների հետ, նրա առաջ բերած հոսանքների հետ։

Ճուր յոյսեր։

—Գրեցէք այնպէս, որ այդ պատմութեան մէջ ոչ մի կեանք չերևայ, ոչ մի համակրութիւն և հակակրութիւն չը նկատվի։

Այդպէս է կարգադրել մամուլի գործողների ժողովը։

—Բայց դա պատմութիւն չի լինի, առարկում են այս ու այն կողմից։ Դա կը լինի միայն հրատարակութիւնների ցուցակ։

—Այդ է թելադրում անաչառութեան պահանջը, պատասխանում են նրանց։

Ո՞վ է անաչառութեան դէմ։ Մի՞թէ անաչառութիւնը պահանջում է ջնջել կեանքը իր արտայայտութիւններով։

Եղէք անաչառ, բայց տուէք մեզ պրակտիկ կեանքի պատմութիւնը։

Գուցէ մանաւանդ մարդիկ ականջ դնեն բողոքին, դիմադիր հանդիսանան և փորձ անեն տալու մամուլի կեանքը արժանաւոր մշակութեամբ և լուսաբանութեամբ։

---

digitised by A.R.A.R.@

L

(29 *յունիսի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 165)

Թիֆլիսի չոդերից պէտք էր ազատվել։

Ո՞ւր գնալ։

Այնտեղ, ուր գնում են բոլոր Թիֆլիսեցիները՝ Բօրժօմ, Աբաստուման, Կօջօր, Մանգլիս։

Այդպէս էլ արի։

Արդարև հով և գեղեցիկ տեղեր կան այդ ամառանոցներում, ուր օդից տանջված մարմինը հանգստութիւն է առնում։ Իսկ երևոյեան պէտք է զգայվում նոյն իսկ վերարկուի, որի գործածութեան մասին դուք մոռացել էիք Թիֆլիսում։

Սակայն, Տէր մի տրտայէ, մի երեք-չորս օրից աւելի մնաք ամառանոցներում։ Հովը և զովը լաւ են, բայց կենցաղավարական միջնորտը անտանելի է։ Այնտեղ տիրում է մի այնպիսի տաղտկութիւն, որ յուսահատեցնել կարող է մարդու։

Ոչ մի կնանք, ոչ մի չարժուամ։

Ձերեկով անելանելում, երեկոյեան անելանելում։ Ձերեկով կերուխումի հոգսերի ու զբաղմունքի մէջ, երեկոյեան նոյնը կամ, ինչ էք կարծում, նոյն իսկ Թղթախաղ, որից ձեռք չեն վերցնում և ամառանոցներում։

Մանաւանդ ճնշող է այդ կողմից հայի կենցաղավարութիւնը։ Սմեն մի ընտանիք, փակ-

digitised by A.R.A.R.@

վաճ ամարանոցի վանդակի մէջ, ոչ մի զբօսանք չէ կատարում, ոչ մի մարմնամարզութիւն չէ անում, ոչ մի դրական ընդհանուր խաղ չէ կազմակերպում։

Կարծես, գնացել են ամարանոց չաղանալու կամ թուխս նստելու համար։

Մինչդեռ չատերը, ընդհակառակը, գնացել են ամարանոց լղարելու և բարակելու համար։ Բժիշկները պատուիրել են նրանց քաղաքի նստած կեանքի առաջացրած ել ու ճարպի մի մասը հալել ամարանոցներում, զբօսանքներ և ֆիզիքական առատ չարժումներ կատարելով։

Եթէ կայ մի տեղ կեանք, այդ ես տեսայ մանուկների և պատանիների չրջանում։ Նրանց էլ տեսնէք վազվզելիս և խաղերի մէջ։ Այդ կողմից հրաչալի է Մանգլիսը, ուր եռում է մանկական կեանքը։

Իսկ տեղը ինչ հասակ առածները, պատանիները և օրիորդները արդէն աչխատում են նմանել աւելի մեծերին և եթէ երբեմնապէս պարում են երեկոյթներում, այն էլ երկար խնդրելուց և յորդորելուց յետոյ։

Ամարանոցի բնակիչները պատմում են ձեզ, իբրև բացառիկ և կարծես հերոսական դէպքերի մասին, որ նրանք գնացել են Ալգեսի ափը, բարձրացել են մի որ և է բլուր, այցելել են Քեօօղլին կամ Ուձօի ուխտատեղը։

Այն էլ չատ անգամ ձիով կամ կառքով։

Ի հարկէ, եթէ կարելի է միայն կառք տանել այնտեղ։

—Ինչու տոքոմ չը գնացիք, հարցնում էք դուք։ Մեծ խմբով դա չատ զուարճալի կը լինէր։

—Կը յոգնէինք, պատասխանում են ձեզ։

digitised by A.R.A.R.@

Միայն թե չը յոգնեն։

—Գործներդ ինչ է, որ այդքան վախենում էք յոգնելուց, հարցնում էք դուք։

Ժպտում են։

Հանգստանում են, հանգստանում և հանգըստութիւնը կատարեալ անելու համար ոչընչով չեն պարապում, իսկ երբ անգործութիւնից յոգնում են, նորից մտածում են հանգստութեան մասին։

—

Նստած հանրակառքի մէջ՝ մենք խօսում էինք ամարանոցի կեանքի մասին։ Մենք յաւում էինք, տեսնելով, որ մեր մէջ մարդիկ գուարճանալ, խելացի եղանակով ուրախ և գուարթ ժամանակ անցկացնել չը գիտեն։

Այդ չը գիտեն՝ լօա չը գիտեն։ Իսկ մի ամբողջ դասակարգ էլ ոտքով գրօսանքներ չէ կատարում, յաճախ փողոց չէ դուրս գալիս՝ այն պատճառով, որ իրան չէ ուզում էժանացնել, որ իրան հասարում է բարձր դիրքի տէր, որին վայել չէ երկիր իջնել, այլ որը պէտք է մշտապէս բազմէ կիօսկներում։

—Ինչ հասկացողութիւն դիրք պահպանելու դաղափարի մասին, բայականչեց հանրակառքի մէջ նստած մի երիտասարդ։

—Այդ բարձր դիրքի նշաններից մէկն էլ այն է, որ նրան պատկանողները վռնդել են գործածութիւնից այն լեզուն, որով խօսում է դէմօսը, նկատեց մի դաւառացի պարոն։

—Արիստօկրատ ին, չի ըլի, էդենց է լայկլ նրանցը, վունց կուլի, նկատեց ինձ մօտ նստած հարևանս։

Դա Թիֆլիսի հին բնակիչներից մէկն էր, որ շատ բաներ էր տեսել իր կեանքում։

digitised by A.R.A.R.@

—Ահա էն էլ կայ, վուր դրանք «Ֆրաժէ» արիստոկրատներ լին, չարունակեց նա։ Ա դրանց լաւ կու ճանչնամ, ամեն մէկի աֆտոլթը լաւ գիդիմ։ Ֆրաժէ լին։

—Ի՞նչպէս թէ Ֆրաժէ, հարցրի ես։

—Գանա ֆրաժէ չի՞ս գիդի, Ֆրաժէ գդալ, Ֆրաժէ սերվիզ։

—Գիտեմ։

—Էտանք էլ իսկականը չին, բայատրեց ուղեկիցս։ Դալը լին, կլեկած լին, Ֆրաժէի հաշումն լին։ Լաւ կու ճանչնամ։ Թուղ մէ լինամէն էլ հարցնին է։

—

Ճիշտի մեր գիւղերը։

Գնացէք այնտեղ և տեսէք, լինչ է անում գիւղացու ընտանիքը։

Ամենքը գործի մէջ են։ Ամենքը ֆիզիքական աշխատանք ունեն։ Տղամարդը երկրագործական պարապմունքի, կինը տան, այգու, պարտէզի գործերի մէջ։ Մանուկները օգնում են ծնողներին։

Ֆիզիքական պարզացման համար գիւղացին ունի բաւականաչափ աշխատանք, դեռ գուցէ աւելի, քան հարկաւոր է։

Իսկ երբ գիւղացին ստանում է և լաւ սընունդ, այն ժամանակ նա իսկապէս շատ լաւ զարգանում է, հասակ է բռնում, առողջ ժառանգներ է ծնում, ուժեղ և ջղապինդ սերունդ է տալիս։

Եւ միևնոյն մօտ դրէք այս հակապատկերը։

Այն ժամանակ, երբ քաղաքային ֆիզիքական աշխատանքի բացակայութիւնից չափազանց չաղանում է և անհրաժեշտութիւն է զգում լղարելու և բարակելու, որպէս զի ձանր սկա-

digitised by A.R.A.R.@

թուխիւններէն չենթարկուի, այդ ժամանակ գիւղացին կարօտ է մնում լաւ անունդի, որ նա էլ փոքր ինչ չաղանայ և լծուի։

Գալաքի մեր ազգաբնակութիւնը, մանաւանդ որը նա ապահովված դասակարգիցն է, զրկված է ֆիզիքական աշխատանքից։

Մանուկները փոքր հասակից զարդ են ուրկուում, ուր տասնեակ տարի չարունակ մատաղ կազմուածքը ստիպված է ճնշվել, նեղվել, սեղմվել և թուլանալ, տալով հասարակութեան փուխր և քնքոյշ արարածներ, որոնք անկարող են դիմանալ ամենաթեթև պատահարներին, օդի ծայրայեղ արտայայտութիւններին, կերակրի փոփոխութիւններին։

Թէ զարգացում, թէ տանը՝ չը կան մարմնամարզական պարապմունքներ, չեն կազմակերպուում զբօսանքներ, խաղեր, մարմնի մասերի կանոնաւոր վարժութիւններ։

Մանաւանդ այդ կողմից անբաւարար է կանայի սեռի ֆիզիքական զարգացումը։ Եւ ահա ձեր առաջն են թուլակազմ օրիորդներ և հազար ու մի տկարութիւններով տիկիններ։

Ֆիզիքական թուլութեան և տկարութեան հետ զուգընթաց հանդէս են գալիս և մտաւոր թմրութիւն, բարոյական տարտամութիւն, կեանքի գործերում անտարբերութիւն։

Այդ տխուր երևոյթի դէմ կռւել գիտեն ուրիշ երկիրներում։ Ինչո՞ւ մենք էլ չը հետևենք։

Ի դէպ՝ զուք ամենքդ մի քանի օր չարունակ կարդում էիք լրագիրների հետաքրքրական բաժնում տեղեկութիւններ բազէների մասին։

Բազէների հանդէս, բազէների ժողովներ, բազէների խմբական ուղևորութիւններ,

digitised by A.R.A.R.@

բազէների ներկայացուցիչների ճառեր, կենացներ և այլն։

Ովքեր են բազէները։

Այդ անունով յայտնի են չեխերի և առհասարակ Աւստրիայի սլաւօնական ազգերի մէջ բոլոր այն անձերը, որոնք զբաղված են կանոնաւոր մարմնամարզական վարժութիւններով և պատկանում են այդ նպատակով կազմակերպված ընկերութիւններին։

Բազէների թիւը Աւստրիայում հասնում է 16,000-ի, որոնցից 1000-ը պատկանում են քնքոյշ սեռի ներկայացուցիչներին։

Այդ կազմակերպութիւնների նպատակն է տարածել ֆիզիքական վարժութիւնների գաղափարը և նպաստել զարգացնելու ֆիզիքական ոյժը ազգաբնակութեան մէջ։

Այս տարի բազէների ժողովը առանձին ուշադրութեան արժանացաւ և նոյն իսկ քաղաքական նշանակութիւն ստացաւ։

Բայց դա բոլորովին ուրիշ խնդիր է։

Ես չեմ պաշտպանում բազէական խմբերի կազմակերպութեան մանրամասնութիւնները և վէճերի մէջ չեմ կամենում մտնել նրանց կողմնակից դիտաւորութիւնների վերաբերութեամբ։

Ես խօսումեմ ֆիզիքական զարգացման գործի թէ անհատական և թէ հասարակական մեծ կարևորութեան մասին։ Ես այդ տեսակէտից յիշատակում եմ այդ ձգտման խոշոր արտայայտութիւններից մէկը։

digitised by A.R.A.R.@

LI

(12 օգոստ. 1901 թ., «Մշակ» № 177)

Ես գնացի գաւառ կարճ ժամանակով։

Պատեցի շատ գիւղեր, չրջեցի լայնատարած դաշտեր ամեգոյն հասկերով, կապած խուրձերուվ։ Տեսայ գիւղացիներին իրանց աշխատանքի ամենաեռուն չրջանում,—հնձում էին, կալսում էին, քամում էին և նոր հերկ էին սկսում։

Անցայ գիւղեր հայի, թուրքի, քիւրդի, այսօրու, յոյնի։

Համեմատութիւնը բնական պահանջ էր և մի քանի գծեր աչքի էին ընկնում։

—Ի՞նչ տեղ է բռնում հայը այդ համեմատութեան մէջ, կը հարցնէք դուք։

Ես կանգ կառնեմ այսօր միայն մի գծի վրա։

Հայը գործում է՝ աշխատանք սիրող, բուն երկրագործ և կուլտուրական տարրի տպաւորութիւն նա, համեմատած իրան չրջապատողների հետ, աւելի տոկուն, աւելի ժիր, աւելի գործունեայ է։

Նա սիրում է երկրագործական աշխատանք մի առանձին անձնուիրութեամբ։

—Հոդ տուէք, հող, կանչում է նա ամեն մի քայլափոխում։

—Աշխատանքից և զրկանքից չենք վախենում, միայն թէ աշակերտ հող լինի, աւելացնում են նրանք։

digitised by A.R.A.R.@

Եւ ճիշդ է՝ նրանք հողը սիրում են։

—Մեր տղերքի սիրտը չէ բացվում, ասայ ինձ մի պառաւ կին, ցոյց տալով գիւղացիների վրայ։ Հողը պակասել է, մեր տղերքը տըխրել են։ Հող է հարկաւոր, որ հետը խաղան ու սիրտները ուրախանան։

—

Մի քանի գիւղերում և ազատ հողերում ես պատահեցի թիւրքահայ գաղթականներին։ Նրանք հող էին վերցրել կապալով կամ որոշ պայմանով և մշակում էին։

Դուք էլ շատ էք տեսել թիւրքահայ գաղթականներ մեր երկրի զանազան անկիւններում։

Ես մի քանի տարի է տեսնում եմ նրանց թիֆլիսում։

Սակայն ինչպիսի տարբերութիւն քաղաքում տեսած գաղթականների դէմքերի և այն գաղթականների դէմքերի մէջ, որոնց տեսայ ես գիւղանի մօտ։

Քաղաքում խղճուկ, չուարած, շշկլված, ընկճված, կարծես ապուշացած մի դէմք, այստեղ՝ գիւղերի, առողջ, վատահ, անմեղ մի դէմք։

Այնտեղ նա մուրում է, ձեր բարեսրտութեան և գթասրտութեան է դիմում, այստեղ նա իր աշխատանքի վարձն է ուզում և ոչ ոքի վրա չէ ծանրանում։

Խեղճ գաղթական։

Նա սպասում է և սպասում՝ մինչև մի օր կը հաստատուի իր սիրած հողի վրա և իր գութանով, իր քրտինքով կը վաստակէ իր հացը։

Սակայն օրերը անցնում են և ոչինչ չէ փոխվում։

Գաղթականներից շատերը յամենայն դէպս

digitised by A.R.A.R.@

հողի շուրջն են, հողովել են ապրում, իրանց աշխատանքովել են իրանց ապահովում։

—

Գիւղացի հայը աւելի լաւ է ճչակում հողը, քան միւսները։ Նա աւելի մաքրասէր է, աւելի ճշդապահ, աւելի օրինապահ։

Եւ պէտք էր միայն հիանալ։

Սակայն, կայ մեղքի և միւս երեսը։

Պէտք է նկատել, որ հայի կուլտուրան հին ժամանակի, անցեալ օրերի արդասիք է։ Այդ կուլտուրան սառել է և անշարժացել է։ Նա քիչ է բարեփոխւում։

Անցնում են տարիներ, այն էլ տասնեակ տարիներ և երկրագործական կեանքը իր հինեանական գծերով մնում է մի և նոյնը։ Շատ քիչ փոփոխութիւն։

Որքան և վիրաւորական լինէր հայ գիւղացու պատուասիրութեան համար, բայց պէտք է ասել, որ երեմն նրա հարևան ազգերը համեմատաբար աւելի առաջադէմ են եղել, քան նա։

Չէք հաւատում։ Բայց լսեցէք։

Որքան էլ, օրինակ, քիւրդը ստոր է հայից, բայց նա վերջին տասնեակ տարիներում շատ փոխեց իր կեանքը։ Նա կիսաւայրենի թափառական կեանքը կամաց-կամաց փոխում է նըստակեաց կեանքի։

Եւ շատ տեղերում քիւրդը համեմատած մեզ առաջադիմութիւն է արել։ Նա, որ չը գիտէր՝ թէ ինչ է երկրագործութիւնը, այժմ ունի մեզ տարածութեամբ վարելահողեր և օրէցօր աւելացնում է իր յանքսները։

Շատ տեղերում քիւրդը զարգացրել է այգեգործութիւնը, բանջարաբուծութիւնը և իր ձեռքն է գցել մրգի վաճառականութիւնը։

digitised by A.R.A.R.@

Ճիշդ է՝ հայը այժմ էլ ընդհանրապէս աւելի բարձր է իր երկրագործութեան մէջ, քան նրա հարևանները, բայց նա այնքան առաջադիմութիւն չէ արել իր արհեստի մէջ վերջին տարիները, որքան նրա շրջապատողները։

Վերցնենք մի ուրիշ համեմատութիւն։ Կոլկատում հաստատված գերմանացին և մատաղքուսը մտցրել են իրանց անտեսութեան մէջ մի շարք կատարելագործված մեքենաներ, իսկ հայը, որ ապրում է նրանց կողքին, օրինակ չէ վերցնում։

Ֆիւբրը դաս է վերցնում հայից և կամաց-կամաց ծաոեննում է նրան, իսկ հայը նոյնը չէ անում իրանից աւելի բարձր կանգնած տարրերից։

Կամ յամենայն դէպս, շատ դանդաղ է գործում։

Կուլտուրան պէտք է կենդանի լինի և ճկուն։ Նա անդադար պէտք է շարժվի դէպի կատարելութիւնը, պէտք է յառաջադիմի։ Այլապէս նա կը սառչի, կը մնայ, իսկ շրջապատողները առաջ կանցնեն և նրան կընկճեն։

---

digitised by A.R.A.R.@

LII

(19 *օգոստոսի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 182)

Երկաթուղու վագոնում նստած մինչ խոսակցում էինք։

—Ոչ մի հատ չը տեսայ գիւղում, զանգատվում էր մի պարոն, որ վերադառնում էր Շիրակից։

—Ինչու՞, հարցրի ես։

—Մեր Շիրակի գիւղը բոլորովին պրաւիչ չէ։ Գիւղացին չափազանց հասարակ, վերին աստիճանի զրկված է ապրում։

—Ի՞նչ էք ասում, բացականչեց մի ասիճանաւոր, Շիրակը զրկված է ապրում։ Այդ մինչ կարելի է։ Եթէ հարուստ Շիրակը զրկված է ապրում, այլ ես մեր երկրի ո՛ր մասն է լաւ ապրում։

—Հարուստ է Շիրակը թէ աղքատ՝ այդ ես չը գիտեմ, չարունակեց ասացինը, բայց ձեզ ասում եմ, որ կեանքը գիւղում չատ է խըղճուկ։

—Գուցէ դուք մեծ պահանջներ էիք անում, հարցրեց աստիճանաւորը։

—Ոչ ի՞նչ մեծ պահանջ։ Սամենաանհրաժեշտ յարմարութիւններն էլ բացակայ են թէ կենցաղավարութեան և թէ ուսուցչէնի վերաբերութեամբ։

Ճաւերը ձանձր էին մեր գիւղերի հանգա-

digitised by A.R.A.R.@

մանքներին: Իւրաքանչիւրը մտաբերում էր որ և է փաստ իր դիտողութիւններից:

—Ամենահասարակ գիւղական արդիւնքներ չը կան գիւղում, շարունակեց լսօսել Շերակի գիւղից վերադարձող պարոնը: Կանապէ, հասարակ կանապէ, գինձ, սամիթ, թարխուն, կտաւեմ, անանուխ ուզեցի գիւղում—չը կար: Չեն ցանում, չեն աճեցնում: Նոյնպէս չը կան վարունգ, կաղամբ, գետնախնձոր, սխտոր, ճակընդեղ, գազար, կանապէ սոխ... ոչինչ բացի հացից: Շատ գիւղացիներ նոյն իսկ չը գիտեն այդ գիւղական հասարակ իրերի համը, չեն տեսել, չեն կերել...

Շատերը իսկապէս զարմացան:

—Գուցէ որ և է հիմնական արգելք կայ նրանց բուսացնելու համար, հետաքրքրվեց ատրճանաւորը:

—Ի՞նչ արգելք. իմ տեսած գիւղերում հարեան ոչ մի արգելք չը կայ: Բոլոր գիւղերն էլ հաւասարապէս կարող են փոքր քանակութեամբ բուսացնել այդ արմտիքը. իսկ մեծ քանակութեամբ գուցէ ջրի պակասութիւն զգացվի: Բայց գլխաւորն այն է, որ չեն ուզում, ցանկութիւն չը կայ:

—Ինչո՞ւ:

—Սովորութիւն չէ. մարդկանց պահանջները սահմանափակ են, այդ բոլորը աւելորդ բան է համարվում:

—Մեծ սխալ է գիւղացիների կողմից, բացականչեց մի պարոն: Այդպիսի բոյսերով կարելի էր գիւղական սեղանը կարգին ճոխացնել առանց ծանր ջոհերի և ծախքերի, կարելի էր աւելացնել կերակրվելու նիւթերի քանակը և տեսակը, փոխարինել մսամթ հացը, մանա-

digitised by A.R.A.R.@

ետևից այն տարիներում, երբ հայը պակաս է սասյանից։

—

—Ձեր տաճկերը ուղիղ են, մէջ մտաւ մի պարոն, որ նստած էր մեզանից հետու և ինչպէս երևայ, ուշի ուշով ականջ էր դնում մեր խօսակցութեանն։ Ձեր տաճկերը ուղիղ են առհասարակ, բայց չափազանցրած են։ Ես ինքս էլ ծանօթ եմ մեր գիւղերին և շատ անգամ առևտրական գործերով լինում եմ այնտեղ։ Պէտք է արդար լինել։

—Ի՞նչ էք ուզում ասել, հարցրեց մէկը։

—Այն, որ կան բացառութիւններ։ Ես գիտեմ շատ գիւղեր, ուր ապրել են բանջարանոցներ չինել և կամաց-կամաց նրանց ընդարձակում են։

Նա տուեց մի շարք գիւղերի անուններ։ Ուրիշներն էլ մտաբերեցին մի երկու փաստ։

—Ի հարկէ, արուեստը շատ բիչ է և պէտք է ընդարձակել։ Բայց օգնում էլ չը կայ պիտոյտւն։ Ճիշտ է, ինքը գիւղացին չէ սիրում նորութիւններ մտցնել իր կեանքի մէջ. բայց ապացէք խնդրեմ, որ մեզանից դնաց գիւղը և մէկ լաւ օրինակ ցոյց տուեց նրան։

Սկաւեց վէճ։

Մէկը մեղադրում էր գիւղացուն և նրա պահպանողականութիւնը ու նահապետականութիւնը. միւսը մեղադրում էր ժողովրդի գլխին կանգնած պաշտօնեաներին և ինտելիգենտներին։

—Ինչու՞ գերմանացիները և մօլոկանները կարող են հնձող մեքենաներ ձեռք բերել, իսկ հայ գիւղացին, որ նրանց մօտ ապրում է, չը պէտք է օրինակ վերցնի. ինչու՞ ասացիները

digitised by A.R.A.R.@

կարող են կատարելագործված կոմբնատրանները, պանրոցները չինել, իսկ հայ գիւղացին չը պէտք է նոյնն անէ։ Մօմ կենդանւոյ օրինակը նրանց առաջն է։

Այդպէս առարկում էր խօսակիցների մի մասը և բերում էր մի շարք օրինակներ։

—Ձեկավարողներ և առաջնորդներ չը կան, պնդում էր խօսակիցների միւս մասը, բայց գիւղացին դարձեալ բարեփոխութիւններ է արել։ Տեսէք Գանձակի գաւառի շատ գիւղերում այժմ գործադրւում է եւրօպական գութան և գիւղերում կան սեփական վարպետներ։ Շատ գիւղերում սովորութիւն է դառնում տանիքները ծածկել կղմինտրով...

Երկար վիճաբանութիւնից յետոյ եկան այն եզրակացութեան, որ իրականութեան մէջ կայ կատարելագործութիւններ մտցնելու հատ-հատ շարժուններ, բայց դրանք դեռ շատ թոյլ են և անընչան և որ ցանկալի է այդ գործի մէջ հեղինակաւոր ղեկավարութիւն։

—

—Գիւղի բաները չես հասկանալ, սկսեց մեր խօսակիցներից մէկը։ Մի անգամ գնացել էի Ղազախի գաւառի գիւղերից մէկը. իմ ուշքը գրաւեց առանձնակի կանգնած մի տուն՝ բաւական վայելուչ և կղմինտրով ծածկած։ Ես իջայ այդ տան առաջ։ Շուտով յայտնվեց և տէրը։ Ես զովեցի նրա տունը։ Բայց տէրը լուռ էր և մի գլուխ իր ուսերն էր թափ տալիս։ Ես նրան հարցրի, թէ ինչու չեն միւս գիւղացիները էլ հետևում նրա զեղեցիկ օրինակին։ Տանտէրը ժպտաց և գոռնութեամբ ասաց՝ քիչ է մնում, որ ես էլ իմ տունը քանդեմ ու հին ձևի չինեմ։ Ինչու, հարցրի նրան։ Որովհետև,

digitised by A.R.A.R.@

պատասխանեց նա, ինչ որ ժբաղդություն է պատահում գիւղում, իսկոյն պատասնները մեղքը իմ տան վրա են գցում. կայծակ խփեց գիւղում՝ իմ տունն է մեղաւոր, տաւարի ցաւ պատահեց՝ իմ տունն է պատճառ, երեխաների վրա հազ երևաց՝ նաեւ իմ տնից՝ նաեւ ես ամէն ինչի՝ ես եմ մեղաւոր. ինչու եմ աշխարհում ղէմ գնացել և Աստծուն բարկացրել։

—Ճիշդ է գիւղում չեն սիրում նորամուծութիւնները և ամեն մի նոր բանի վրա նայում են իբրև մեղքի վրա. իբրև նոյն իսկ հաւատի ղէմ մի երևոյթի վրա, բայց այդ չրջանը անցնում է։

—Շատ ծանր ու դանդաղ է յառնինայն ղէպս անցնում, նկատեց Շիրակից վերադարձող պարոնը. ժամանակով գուցէ մեր գիւղը մի դրախտ կը լինի. բայց այժմ հաւ չունի։

—Գիւղի համար հոգս անող չը կայ. ինչ էք խեղճ գիւղացուց պահանջում։

—Ես ոչինչ չեմ պահանջում, պատասխանեց նա, միայն ասում եմ, որ հաճոյք չեմ զգում այնտեղ ապրելու։

—Ինչու դուք ինքներդ չէք փորձում գիւղում մնալու և ձեր ցանկացածի մի մասը իրագործելու, հարցրեց աստիճանաւորը։

—Այդ իմ գործը չէ. ես նրանց հետ գլուխ չունեմ։ Առանց այն էլ ամեն օր կռիւների մէջ էինք։

Գիւղի բարւոքման մասին խօսակցութիւնը շարունակվեց։ Լավեցին մի քանի կցկտուր նկատողութիւններ։

—Գիւղը ինքն իրան է թողնված, իր սեփական բաղդին՝ «ինչ կը մնի—կը լինի»։

---

digitised by A.R.A.R.@

LIII

(26 *օգոստոսի* 1901 *թ.*, «*Մշակ*» № 188)

Այսօր յօբելեանական օր է։

Այսօր, օգոստոսի 26-ին, ոտնակոխ է Մխիթարեան միաբանութեան յոբելեան։

Այդ ոտնը արձագանք կը գտնէ հայ մարդու սրտում աշխարհիս զանազան մասերում։

Ինչո՞ւ, հարցնում եմ ես, ինչո՞ւ մի կրօնական միաբանութեան յօբելեան պէտք է այդքան ընդարձակ հետաքրքրութիւն առաջ բերէ, մանաւանդ երբ համակրողների և յարգողների մեծամասնութիւնը նոյն իսկ չէ պատկանում այն կրօնին, որ դաւանում է միաբանութիւնը։

Ահա հէնց այդտեղ է Մխիթարեան միաբանութեան գրաւած յատուկ դիրքի խորհրդաւորութիւնը և նրա պատմական նշանակութիւնը։

Հէնց բանն էլ այն է, որ կրօնը չէ եղել այդտեղ գրական դեր կատարողը։

Ընդհակառակը՝ այն, ինչ եղել է դաւանաբանական, կրօնական, նա ատելի է տուել թիւրիմացութիւնների և սառնութեան։

Մանաւանդ որ նրա գոյութեան առաջին դարում, երբ միաբանութիւնը նոր էր ակսել իր գործունէութիւնը և մասամբ երկրորդ դա-

digitised by A.R.A.R.@

բուած, կրօնական խտրութեան հարցերը առանձին սուր կերպարանք ունէին հայերի մէջ։

Չը նայելով սակայն կրօնական հակաճառութիւններից և մեկնաբանութիւններից առաջ եկած թիւրիմացութիւններին՝ Մխիթարեանները դրաւեցին հայ մարդու սիրտը և այսօր վայելում են նրա անկեղծ յարգանքը և համակրութիւնը։

Գրական մեր կառավորները եղել են այն ուսուցմնական ոգին, այն բանաստեղծականի չահագրգռութիւնը, այն ակադեմիական լուրջ աշխատանքը, որոնցով հանդէս է եկել բազմավաստակ միաբանութիւնը հայ գրականութեան մշակութեան առաջադէմ։

Մխիթարեանները յաղթող հանդիսացան շրջապրհին այն աշխարհական տարրի, որ եղել է նրանց երկարամեայ գործունէութեան մէջ։

Նրանք ոգով աշխարհական են եղել, երբ տուել են մեզ մեր երկրի նկարագրութիւնը և հնագիտական ու կենցաղավարական հետազօտութիւնները։

Նրանք աշխարհական են եղել, երբ արտատպել են մեր մատենագրիններին։

Նրանք աշխարհական են եղել, երբ տուել են մեզ յունական և հռոմէական կլասիքների և եւրօպական հեղինակների թարգմանութիւնները։

Նրանք աշխարհական են եղել, երբ կազմել են քերականութիւններ, բառարաններ և քարտէզներ։

Նրանք աշխարհական են եղել, երբ հիմնադրել են մեր առաջ հայագիտութեան նորագոյն արդիւնքները։

Նրանք աշխարհական են եղել, երբ ու-

digitised by A.R.A.R.@

թագավորների առաջ հանդէս են հանել հայ տարբի պատմութեան և նրա մտաւոր ստեղծագործութեան արդիւնքները։

Երկու հարիւր տարի շարունակվող անձնուէր գործունէութեան, անսպառ և անհուն ոգևորութեան դէպի գաղափարական գործը, անխոնջ և տևական աշխատանք—ահա ինչ յատկանիշներով պատկառելի հիմնարկութիւնը գործեց հայ մտաւորականութեան բեմի վրա։ Ահա ինչ տևական յօբելեանի առաջ ենք մենք կանգնած այսօր։

—

Ինչ սարսափելի ժամանակներ էին, երբ Մխիթարեան միաբանութիւնը սկսեց իր գործունէութիւնը։

Երկու հարիւր տարի առաջ։

Յիշեցէք։

Ազգի չարչը բարբարոսութիւն և բռնութիւն։ Իսկ ազգի մէջ ոյժերի թուլութիւն, տգիտութիւն և երկպառակութիւն։

Մայր երկրի մէջ Մխիթարեան միաբանութիւնը չէր կարող գոյութիւն ունենալ այն ժամանակ՝ թէ արտաքին և թէ ներքին պատճառներով։

Այդպիսի մի հիմնարկութեան գոյութեան և բարգաւաճման համար անհրաժեշտ էին Թուրքիան և Պարսկաստանը, որոնց հպատակութեան տակ ապրում էին այն ժամանակ հայերը, անհրաժեշտ էր և ինքը հայութիւնը։

Այն, ինչ որ պակաս էր թողնում արտաքին կեանքին, լրացնում էր ներքին, ընտանեկան, հայրենի տգիտութիւնը։

*Կարող էր արդեօք այն ժամանակվայ էջմիածինը մարմնել մի գիտնական միաբանութ-

digitised by A.R.A.R.@

թևան գործունէութիւն Սրդեօք նա կը նպաստէր, կօժանդակէր, կաջակցէր այդ գործունէութեանը։

Պատահանը դուք գիտէք։

Տխուր է այդ պատահանը։

Ցաւ է խոստովանել, որ նոյն իսկ այժմ, երկու հարիւր տարի, երկու ամբողջ դար անցնելուց յետոյ, մենք վատահութիւն չունենք էջմիածնականների վրայ։

Մի րօպէ դիմենք ենթադրութիւններու։

Եթէ մեզնից կախված լինէր տեղափոխելու Մխիթարեան միաբանութիւնը Վաղարշապատ կամ Սևան, կամ հաստատել այդ տեղերում մի նոր նոյնատեսակ հիմնարկութիւն, ինչ կը չահէինք մենք։

Միթէ մենք չենք զգում, որ այդ հիմնարկութիւնների գործունէութիւնը վտանգի ենթարկած կը լինէինք։

Միթէ մենք չենք տեսանում, թէ ինչպէս մեր օրով մեր ոչ միայն հնաւանդ, այլ և մեր նորագոյն սերունդները—միայն մի ձևով գործել գիտեն՝ միմեանց խանգարել, միմեանց դէմ ոտգայթներ լարել, արածը ջանդել-փշացնել և անձնական հարցեր առաջ տանել։

Մեր աչքերը չուր կտրվեցին, ինչպէս ժողովուրդը ասում է, սպասելով որ վաղարշապատն էլ մի օր յիշեցնէ մեզ Մխիթարեաններին իր գործունէութեամբ։

Իսկ երկու հարիւր տարի առանից առաջ Մխիթար Սեբաստացին իր համախոհներով և աշակերտներով ինչպէս կարող էր մայր երկրի սահմաններում գործել։

Անկարելի էր։

Եւ նա երկար փորձերից, չարչարանքներից,

digitised by A.R.A.R.@

հալածանքներից և զրկանքներից յետոյ ապաստան գտաւ օտար երկրում։

—

Այս անգամ վաւաշած ճրագը չը հանգաւ և ազատվեց իր նախորդների ապաբաղդ վիճակից։

Երկար դարեր հայ երկրի վրա բռնացել էր վայրենութիւնը։ Ահեղ չաուշիւնով անցնում էին վայրենի հրոսակների արշաւանքները, խորտակելով և կոթնանելով ամեն բան, ինչ որ կրում էր քինաբարութեան կնիք, լոյսի նշոյլ և մտաւոր կեանքի չունչ։

Բայց լոյսի կարօտը և մտաւոր կեանքի տենչը խապար չէին անհետանում հայ ժողովրդի հոգու խորքերից։

Այդ կարօտը և տենչը ապրում էին։ Ապրում էր ժողովրդական լուսաւորութեան կայծը, ապրում էր ծարաւը դէպի մտաւոր զարգացումը։

Երբ վայրենի արշաւանքներից և բռնակալական արհաւիրքներից երկիրը հանգստանում էր և ժողովուրդը չունչ էր առնում, նորից խոստում էին և գործում կարօտը դէպի լոյսը և տենչը դէպի միտքը։

Նորից սկսվում էր ստեղծագործական աշխատանք, մինչև նոր աւերած։

Եւ այդպէս դարեր շարունակ։

Ծանր էր մտաւոր կեանքի ճիճնոլորտը։

Ուսուցանողները օրից օր պակասում էին և անհետանում։

Գրքերը ցրված էին և թափթրած, իսկ շատ տեղ ոչնչացրած, սւսարի, աւերի և կրակի մատնված։

Ո՞ւր գնալ, ո՞ւր որոնել։

Շատ տեղ մնացել էին միայն վերջին եզա-

digitised by A.R.A.R.@

կի օրինակները, որոնց անհետանալուց յետոյ կորչում էր ամբողջ հեղինակութեան հետքը առ միշտ

Մենք մեր օրերում, երբ գիրքը հարիւրաւոր և հազարաւոր օրինակներով է լոյս տեսնում, չենք կարողանում շատ անգամ պահպանել նրան վերջնական կորստից։ Եւ միթէ մեր տպագրական երկասիրութիւններից շատերը այժմ չեն դարձել հազուագիւտ իրեր, որոնք նմուշի համար անգամ չեն ճարւում։

Այն ժամանակ դրութիւնը բոլորովին վատ էր։

Մխիթարեան միաբանութիւնը, որ հոգեկան կարօտի և տենչի արտայայտութիւններից մէկն էր, եկաւ ժողովելու եղածը և նրան ապատեւու կորուստից։

Նա սկսեց մի չարք տպագրութիւններ։

Մի օրինակը դարձրեց հարիւրաւոր և հազարաւոր Աւետումների և քայքայումների դէմ նա հանդէս բերեց տպագրական մամուլը։

Մխիթարեան միաբանութեան ամենամեծ ապրանքը, ամենաառաջնակարգ բանը տպագրական մամուլն էր։

Առանց մամուլի այդ միաբանութիւնը կը լինէր ինքն ըստ ինքեան մի օգտաւէտ հիմնարկութիւն, որ կունենար շատ մանուկ աշակերտութիւն։

Տպագրական մամուլով նա դարձաւ հսկայ։ Մամուլի միջոցով նա մօտեցաւ հայ ժողովրդին։

Այնուհետև Ս. Ղազարի վանքը իր գրքերով այլ ևս հետևորդների մի անկիւն չէր, Ազգային ծովի ծոցում մեկուսացած մի մենաստան չէր նա ապրում էր հայ ազգակենսաբանութեան մէջ, նա մօտեցել էր հայ քաղաքացու և

digitised by A.R.A.R.@

հայ գրագէտի սեռնահանդիսին նա ինքն էր եկել մնալ մօտ և այլ ևս հարկաւոր չէր, որ մենք նրա մօտ գնայինք։

Փոխվեցին ժամանակները և այժմ հայ ժողովուրդն ինքը բազմաթիւ միջոցներ է գտել իր մտաւոր զարգացման համար։ Նա սկսել է մասամբ գործունէութիւն և ինքն է մշակում իր կենսական հարցերը։ Մխիթարեան միաբանութիւնը ներկայումս նրա մասնաւոր գործակատարութեան արտայայտութիւններից միայն մէկն է։

Բայց հայ մարդը երբէք չի մոռանայ իր նախկին ուսուցիչներին, իր համար ճանապարհ հարթողներին, իր գրական առաջադիմութեան կարապետներին, իր անխոնջ վաստակաւորներին, իր անձնուէր եղբայրակիցներին։

Հայ ազգը պարծեցել է և կարող է պարծենալ Մխիթարեաններով։

Արժանի են։

---

digitised by A.R.A.R.@

LIV

(2 *սեպտ.* 1901 *թ.*, «*Մշակ*» № 194)

Դէպի ցուցահանդէս

Այսօր բացվում է կովկասեան ցուցահանդէսը։

Ինչ կը ցոյց տայ նա մեզ։ Արդեօք մեր առաջադիմութեան խրախուսիչ քայլերը թէ մեր վերին աստիճանի ցեռամնացութիւնը։

Արդեօք մենք դեռ անչարժ հնադարեան մի ժողովուրդ ենք իր աւանդական տնտեսութեամբ և աշխարհահայեացքով, թէ ութ ենք կոխել նոր ճանապարհի վրայ։

Թէ գուցէ կանգնած ենք հնի և նորի մէջ անորոշ կեցուածքով, ինչպէս ժողովուրդը առած է, «երկուսից էլ աւարայ»։

Մենք լաւ գիտենք, որ մեր արած քայլերը առաջադիմութեան տալարէզում չատ փոքր են և աննշան. մենք լաւ հասկանում ենք, որ մեր ներկայ դրութեամբ մենք անկարող ենք նոյն իսկ ամենահեռաւոր համեմատութիւնների մէջ մտնել կուլտուրական երկիրների հետ. բայց հաւատում ենք, որ մեր երկիրը ունի ապագայ, որ նա ունի զարգանալու և բարգաւաճելու տարրեր իր մէջ։

Ինչ էլ ցոյց տալու լինի մեզ կովկասեան ցուցահանդէսը, մի բան կը մնայ անկասկածելի, դա այն է, որ մենք սկսում ենք մի ըն-

digitised by A.R.A.R.@

դարձակ և հարուստ երկրում, ճոխ բնութեամբ և՝ անբաւ գանձերով, որոնք կարող են մշակվել, շահագործվել և արդիւնաբերել բազմատեսակ մթերքներ։

Սակայն մի անհրաժեշտ պայմանով,— գործ դնելով այդ առաջադիմութեան համար անձնուէր աշխատանք և անխոտոր կերպով տասնեակ տարիների ընթացքում։

Ծուցահանդէսը թող օգնէ մեզ պարզելու, թէ ինչ ճանապարհներով, ինչ միջոցներով մենք պէտք է առաջ գնանք, որպէս զի ննթադրեալ նպատակին հասնենք։

Եւ աշխատենք օգտվել այդ ցուցմունքներից մեր առաջադիմութեան համար։

—

Մեր երկիրը կրում է իր մէջ հին քաղաքակրթութեան, հին կուլտուրայի հետքեր։

Գնացէք և տեղնիտեղը տեսէք հին քաղաքների, տաճարների, կամուրջների աւերակները, հին ջրանցքների և առուների հետքերը, հին գրականութեան մատենաթեայ և ուրիշ ձեռագրերները։

Եղել է կեանք։ Եղել են մարդու ուղեղի և ձեռքերի գործունէութեան գեղեցիկ չրջաններ։ Բայց վաղուց է, որ նրանք անհետացել են Մերձին Ասիայի խորքերից փչած մահաշունչ փոթորիկներից։

Հին քաղաքակրթութիւնը և կուլտուրան կանգ առան իրանց զարգացման ճանապարհին և շատ տեղերում յետ մղվեցին խաւարի և վայրենութեան սարսափներից։

Անցնում էին ժամանակները։ Քաղաքակրթութիւնը ուրիշ տեղերում հակայական քայլերով առաջ էր գնում և այդպիսով աւելի ու

digitised by A.R.A.R.@

աւելի սաստկացնում էր այն տարբերութիւնը, որ կայ մեր երկրի և առաջադիմող երկիրների մէջ։

Փոխւում էին կեանքի պայմանները, փոխւում էին հայեացքները, փոխւում էին կարգերը։

Իսկ մեր երկրում կեանքը կաշկանդւած էր եւ փոխւեց միայն վերջին XIX դարում։

Ինչ էինք մենք մի դար առաջ և ինչ ենք ներկայումս։

Կեանքի պատկերը հիմնովին փոխւել է։

Այն ժամանակ չը կար հասարակական կեանք։ Անկարելի էր խօսել հասարակական հարցերի և խնդիրների մասին։

Հասարակական կեանքը այն մարդուն, ինչպէս մենք ենք հասկանում, չը կար, այսինքն մի կեանք, որը զարգանում լինէր, որի մէջ ծագում լինէին նորանոր փոփոխութիւններ, որը առիթ լինէր համախմբումների՝ նոր հայեացքներ մտցնելու ընթացիկ երեւոյթների վերաբերութեամբ։

Մի դար առաջ նոր հարցեր չը կային։

Բոլոր հարցերը հին էին, մի անգամ, մի ժամանակ որոշւած և ձեւակերպւած։

Այն, ինչ որ չէր գրւած մաշտոցի և եկեղեցական կանոնագրքի մէջ, նա արգելւած էր աւանդութիւններով, ձեւով, սովորութիւնով։

Կենդանի հարցեր, անյուզելի խնդիրներ չէին կարող լինել այն ժամանակ։

Ընտանիքի կազմութիւնը, ամուսինների յարաբերութիւնները, անհատի դիրքը և պարտաւորութիւնները—աւ միշտ նախատեսւած էին։

digitised by A.R.A.R.@

Քաղաքային այն ժամանակ միայն ծխական էր Աւելի ոչինչ։

Մարդկային հասկացողը մի միութիւն էր, ուր մեղաւորների իրաւահաւասար դասը իր որոշ գործունէութիւնը և պարտաւորութիւնները ունի։

Իսկ այժմ ասին բան խնդիրը է դարձել։ Կարծես մարդիկ առաջվայ հին ծանօթները և մտերիմները չեն, այլ եկել ժողովվել և հաւաքվել են օտար հեռաւոր տեղերից։

Ինչ յարաբերութիւններ պէտք է լինեն ընտանիքի անդամների մէջ։

Ինչ տեղ է բռնում անհատը հասկացողի, հասարակութեան մէջ։

Ինչ պարտաւորութիւններ և իրաւունքներ ունեն իւրաքանչիւր քաղաքացի, իւրաքանչիւր պաշտօնեայ, իւրաքանչիւր վարչական անձ։

Ինչ եղանակով պէտք է կրթել և դաստիարակել մանուկ սերունդը։

Ինչ հաստատութիւններ պէտք է հիմնարկել անպաշտպաններին, թոյլերին, հիւանդներին, խնամելու և օգնելու համար։

Ինչ միջոցներով պէտք է ապահովել այդ հաստատութիւնների գոյութիւնը։

Անվերջ ծանրակշիռ և լուրջ հարցեր, որոնց քննադատութիւնը և ուսումնասիրութիւնը զբաղեցրել է հարիւրաւոր և հազարաւոր ուղեղներ։

Իսկ առաջ ուր էին այդ հարցերը։

—

Մի դար առաջ մեր աշխարհահայեացքը նեղ էր։

Հասարակական հարցեր, ինչպէս ասացինք, չը կային։ Իսկ պաշտպարական և բարոյական

digitised by A.R.A.R.@

իղձերի և տենչանքների մեծագոյն մասը կապված էր եկեղեցու և կրօնի հետ, գոնևուամ էր վերջինի ազդեցութեան տակ և կրում էր նրա հեղինակութեան հովանաւորութիւնը իր վրա:

Ներկայումս եկեղեցուց դուրս ստեղծվել է բարոյական մի ընդարձակ աշխարհ, ներկայ ժամանակի հարցերի կեանքի փարոսը դիտութիւնն է և քաղաքակրթութիւնը:

Մի դար առաջ մեծ պատիւ էր մի հայ մարդու համար, եթէ ասէին—նա օրը երկու, իսկ տօներին՝ երեք անգամ ժամ է գնում, նա բոլոր Մեծ պասից և ուրիշ պասերից, կամաւոր պասեր է պահում. նա օրը քառասուն անգամ ծունր է գնում, նա ծոմապահութեան զարմանալի փորձեր է անում:

Ներկայումս փոխվել են հանգամանքները և նոյն իսկ մեր օրվայ հոգևորականը պատրաստ է ասել.

—հարկաւոր չէ տարիներով պաս պահել,

—հարկաւոր չէ ծոմապահութիւն,

—հարկաւոր չէ ուսաբերիկ ուխտագնացութիւն:

—հարկաւոր չէ ծնրադրութիւն,

—հարկաւոր չէ ճգնութիւն,

—հարկաւոր չէ քուրձ հագնել և մարմինը տանջել...

Այդ բոլորը հարկաւոր չէ, ապարդիւն է:

Բայց այն, ինչ որ հարկաւոր է, այժմ գտնվում է ոչ կղերականի մօտ, այլ ուրիշ տեղ: Կղերականը չէ կարողանում ներկայ կեանքի բարոյական պահանջներին բաւարարութիւն տալ, ուստի նա յետ է մղվում ճակատագրականի ոյժով:

digitised by A.R.A.R.@

Եթէ նա կամենում է ապարէզի վրա ծնալ և կեանքի վրա ազդեցութիւն ունենալ, թող նա լուրջ ուսումնասիրէ կեանքի ժամանակակից բարոյական պահանջները։

Իսկ հասարակութիւնը սպասելու ժամանակ չունի, նա առաջ է գնում։

Ու պէտք է աշխատել անընդհատ առաջ գնալ, առանց տատանումների։

Առանց այն էլ շատ ենք ուշացել։

---

digitised by A.R.A.R.@

LV

(16 *մայիս.* 1901 *թ.*, «*Մշակ*» № 205)

Անցեալ կիրակի չը հրատարակվեց «Մշակը» և լույս չը տեսաւ իմ «Մանրանկարը»։

Իմ ընթերցողների մի մասը ապաւում էր, որ ես այդ օրը պէտք է խօսէի այդ օրվայ ճաշկերոյթի առիթով, այն ճաշկերոյթի, որ այդ օրը պէտք է տրվէր մի խումբ յարգողների կողմից Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանին՝ թիֆլիսի թեմից նրա հեռանալու պատճառով։

Ես պէտք է հիասթափեցնեմ իմ այդ ընթերցողներին ճաշկերոյթի մասին ես ոչինչ չը պէտք է՞ խօսէի։

Այդպէս էլ յայտնեցի կլուբի իմ ծանօթներին, երբ խօսք բացվեց այդ բանի մասին։

—Իզուր, իզուր, յայտնեց այդ ծանօթներից մէկը, որը նախօրօք հաղորդել էր ինձ մի քանի շատ բնորոշ տեղեկութիւններ ճաշկերոյթի նախապատրաստութիւնների մասին։

—Սակայն լաւ կուէր, որ մէ՛ ճանչնայինք, թէ ովքեր էին մօտ էլի էդ ճաշին, նկատեց Բուղդանիչը։

—Հա, ճիշդ է, մէջ մտաւ մեր ծանօթ ճաշասարան փաստաբանը, պէտք է նկարագրէիք անտուբաժը, հետաքրքրական է և բնորոշ է անտուբաժը։

—Անտուբաժս վատն է, էդ էլ ինչ նստ խք-

digitised by A.R.A.R.@

մին է, խոժոռեց դէմքը Բուզդան Բուզդանիչը։

Փաստաբանը բացատրեց, որ նա հարցնում է արբազանի շրջապատողների մասին։ Այդ է նրան հետաքրքրող անտուբաժը։

—Աբա իմ ասածն ինչ էր։ Էդ էր էլի, շուարած նկատեց Բուզդան Բուզդանիչը։

—Դա դժուար բան չէ, մէջ մտաւ մի չորրորդ անձնաւորութիւն, ես լսեցի, որ ճաշկերոյթի տաք ժամանակը ուղարկել են լուսանկարչի եանիից և նա անմահացրել է բոլորին։

—Ի միտս ապագայի, բացականչեց փաստաբանը։

—Չէ, ես ուրիշ միքը ունեմ, գլուխը թափ տալով նկատեց Բուզդան Բուզդանիչը։ Ես էդ պատկերը կու առնեմ ու մէ լաւ կը տնդրեմ։ Ախպէր, էդ մարթիկը հաւատարիմ օմքներ ին էրեսուն, նրանք մէբաշ էրեանները չուռ չը տուին ու մէբաշ չը փախան ուրիշների նման։ Դրանք ումուդներ ունին, ումուդով մարդիկ ին։

—Պատուի բան է, խօսեց մի ուրիշը։ Հէր օրհնածներ, մարդը իշխանաւոր է, մի քանի տարի գործել է, այժմ էլ թողնում գնում է։ Մէկ հրաժեշտի ճաշ էլ չը տան։ Դրա մասին կարելի է միթէ խօսել։

—

Ճաշկերոյթի մասին չեմ խօսի։ Բայց մի քանի խօսք ճաշկերոյթի հերոսի մասին ասելու էի։

Սուբէնեանցը դեռ ծեր չէ և իր գործունէութիւնը չէ փակում առ միշտ։ Նրա հետ դեռ պէտք է, երևի, ապագայում չհանդիպեր ունենանք հասարակական ասպարէզում։

Ուրիշն կորձևնք։

digitised by A.R.A.R.@

Սուբէնեանցը առաջին անգամից կուլտուրական անձի տպաւորութիւն է թողնում։

Դա անկասկած էր։

Ինչպէս որ կան ռակէջրած, արծաթէջրած, նիկելաջրած իրեր, այնպէս էլ կարող են լինել կուլտուրաջրած, կուլտուրաթաթախ անձնաւորութիւններ։

Սուբէնեանցը անցել է գիմնազիական դասընթացք և եթէ դէպք պատահի՝ կարող է խօսել մեր հրապարակական հարցերի մասին։

Դպրոցական, բարեգործական, արդիւնաբերական խնդիրները խորթ չեն նրա համար։

Նա սիրում է մտցնել պաշտօնավարութեան մէջ որոշ ձևեր, որոնք ընդունված են դիւանատներում։

—Գրութիւն եմ ստանում, պատմում է սրբազանը իր ծանօթներին, իսկոյն նշանակում եմ օրը, թիւը։ Մինչև չեմ պատասխանում՝ չեմ հանգստանում։ Իմ թղթերը ժամանակին պըրվում են և տեղ հասցնվում։ Իմ գործավարութիւնը իր ճշդութեան կողմից ապտէկ է, ապտէկ։

Մի անգամ նրան ասացին, որ վատ չի լինի թիֆլիսում, եկեղեցիներին կից, թաղական խորհուրդներ հիմնել, որոնք խնամէին թաղի կարօտեալներին։

Լաւ միտք էր։

Սուբէնեանցը հրաւիրեց առաջնորդարան իր ճանաչած ձեռնհաս անձանց և մի քանի ժողովներ կազմելով՝ մշակեց ծրագիրը։

Մի ուրիշ անգամ նրան առաջարկվեց Մարցի կալուածքների բարւոքման մասին ծրագիր մշակել։

Լաւ առաջարկ էր։

digitised by A.R.A.R.@

Սուբէնեանցը հրաւիրեց մասնագէտներին, որոնք ուսումնասիրեցին գործը և կազմեցին բարեփոխումների նախագիծ։

Մի երրորդ անգամ, ընտրութիւնների առիթով, նա ձեռնարկեց ընտրողական կանոնադրութիւն կազմելու։

—Լաւ, հէնց դրա համար մինչ չարժէր մի ճաշկերոյթ տալ։

—Ի հարկէ, արժէր, ինչ խօսք։

—Աբա էլ ինչ են այնքան խօսում։

—Եւ սակայն...

—Էլ ինչ սակայն։

Սակայն ոչ մի բարեփոխում տեղի չունեցաւ կեանքի մէջ։ Ծրագիրները մնացին միայն ծրագիրներ։ Գործադարձութիւնը դրական հետևանքներ չունեցաւ։

Եւ դրութիւնը դարձաւ յուսահատական։

Անբաւականութիւն ամեն տեղ, թէ բարեկամների և թէ հակառակորդների շրջանում։

Ահա համապատկերի մի քանի կէտերը։

Շարունակվեցին անարժանների քահանայական ձեռնադրութիւնները։

Սանձարձակ դարձան այն երէցփոխները, որոնք խաղեր էին խաղում հաչեստութեան հետ։

Չը քննվեցին բազմաթիւ բողոքներ զեղծումների մասին։

Կազմվեց սիրելիների խումբ և չազախվեց ֆավորիզմի խմոր։

Քահանաները, ժողովրդի կամքի հակառակ, պարտաւորեցուցիչ կերպով մտցրվեցին թեմական դպրոցի հոգաբարձութեան մէջ։

Կրճատվեցին թեմական դպրոցի հոգաբար-

digitised by A.R.A.R.@

ձուխեան, տեսչի և մանկավարժական ժողովի իրաւունքները յօգուտ առաջնորդի։

Այս և այն անձի պաշտպանութիւնը, մի որ և է ուսուցչի պաշտօնի մէջ պահելը կամ քահանային այս և այն եկեղեցում պաշտօն տալը դարձան դործակարութեան զեկավար սկզբունքներ։

Բոլոր դործերը պատում էին մանաւոր ազդեցութիւնների և անձնական նկատումների չուրջը։

Դաւանանք, համոզմունք, հիմնական սկըզբունք և որոշ տեսակէտ ասած բաները մեզ էին օտար, խորթ և անպատուաստելի.

—Կարելի է, ինքը ուզել է լաւ բաներ անել, բայց նրան խանգարել են։

—Ապացուցէք։

Ինչպէս ոսկեջրած և արծաթեջրած իրը, երբ ազատւում է իր ապնիւ թաղանթից, մնում է իր նախկին էութեան մէջ, այսպէս էլ կուռ տուրացրած անձնաւորութիւնը հանդիսացաւ մեր առաջ իր բնական խոյութեան մէջ։

Սուբչենանցը չափազանց զգոյշ, չափազանց երկչոտ, չափազանց անձնասէր լինելով՝ ընկաւ կեղծ խորհրդատուների և վտանգաւոր բարեկամների գերկը, որոնք և կործանեցին նրան։

Իսկ նա, ով պէտք է նրան փոխարինէ, ուշ որ նշանակում են նրա տեղ, մինչ է ասելի լաւ է, հարցնում է ընթերցողը։

—Հէնց դարձն էլ այդ է։

digitised by A.R.A.R.@

LVI

(23 մայ. 1901 թ., «Մշակ» № 210)

Այսօր բացվում է արձանը
Կանգնած Գամառ-Քաթիպայի պերեզմանի
վրա՝ այդ արձանը այսօր դէպի ինքն է գրա-
ւում մեր հոգիները և զգայմունքները
Թանկագին մահարձան
Ի՛ս առաջ՝ մենք զուրկ ենք խոնարհեցնում
այն մտերիմ հոգու անջնջելի յիշատակին, որի
երգերում մեր ժողովրդի հառաչները և արտի
պեղումները հնչվեցին այնպիսի հարազատու-
թեամբ և խորութեամբ
Թող բազմաթիւ պատկերին և արտայայ-
տութիւններին միանան և այսօրվայ մեր մի
քանի տողերը

—

Ռաֆայէլ Պատկանեանը ունեցել է և նա-
խորդներ և ժամանակակիցներ և յետնորդներ
Դրանց մէջ եղել են անձինք բանաստեղծա-
կան մեծ ասիւնով, խոր զգայմունքներով և ա-
ջողված ստանաւորներով։ Եւ սակայն նրանք
չեն կարողացել որոշ սահմանից, որոշ չրջանից
դուրս ազդեցութիւն գործել և արտեր գրաւել
Գամառ-Քաթիպային էր վերապահված մըտ-
նել ժողովրդական մտածողների խորքերը. նը-
րան էր վիճակված հարազատ բանաստեղծ լի-
նելը բոլոր հայերի համար, որոնք գոնվում են

digitised by A.R.A.R.@

թէ մայր հողի վրա և թէ հայրենիքից դուրս գաղթականութիւններում

Նա մեր ժողովրդի հոգու հատորն է, նրա սրտի կտորը։

Նրա երգերում արտայայտված են ժողովրդի հոգեկան տրամադրութիւնը, նրա տենչանքները, բողոքները և հառաչները։

Ոչ ոք մեր բանաստեղծներից չը կարողացաւ այնպիսի բնական, անարուեստ, մատչելի լեզուով խօսել ժողովրդի հետ, ինչպէս Գամառ-Քաթիպան։ Նա ընտանի էր, նա մտերիմ էր իր հայրենի ժողովրդի մէջ։

Նա հարազատ է իր հայրենի Նոր-Նախիջևանում, նա հարազատ է Մչի դաշտում, նա հարազատ է մայր-Արաքսի ափերում, նա հարազատ է Թիֆլիսի հայութեան մէջ, նա հարազատ է Ամերիկայի հայ պանդուխտների մօտ, նա հարազատ է ամեն տեղ, ուր հառաչում են հայրենի ժողովրդի հառաչների արձագանքները։

Մինչ Նոր-Նախիջևանի ամբոխը չէ զգում, որ նրա հետ խօսեցողը այդ ժողովրդի ձայնն է։

Մինչ Մշու ժողովուրդը ինքը չէ երգում ամեն օր՝

Մեզի մոռցաւ հայոց ազգը...
Ասպա որին մենք գանգըտինք։

Մինչ Թիֆլիսեցին ամեն անգամ չէ զարմանում, թէ որքան մեծ տաղանդով Պատկանեանը դրել է նրա բերանում՝

Թէ սիրում իս թաւուշա
Պախա տէհնի քաղքումը.

Մինչ գիւղացին չէ զգում, որ նրա եղբայրն էր նա, ով «հայի գութեան, հայի գութեան» եր-

digitised by A.R.A.R.@

դելով պահանջում էր այդ գումթանի իրաւունքները։

Գառնատ-Քաթխպան սիրեց իր ժողովրդին, երգեց նրա համար և ժողովուրդն էլ նրան սիրեց և պատկեց նրան իր առաջին բանաստեղծ անուանով։

Հետո հայութեան մեծամասնութիւնից՝ Նորնախիջևանի ս. Խաչ վանքում թաղված Պատկանեանը անմահ ապրում է իր երգերով հայրենի ժողովրդի մէջ։ Եւ նա կապրի, որովհետև նա այդ ժողովրդի հոգու թարգմանն էր և հառաչների արտայայտողը, որոնց մասին, ինչպէս մի ուրիշ բանաստեղծ ասաց՝

Նորա հառաչք են հայրենեաց,
Նորա չերթան արտէս ի բաց

digitised by A.R.A.R.@

LVII

(30 *մայիս.* 1901 *թ.*, «*Մշակ*» № 216)

Յօբելեաններ յօբելեանների ետևից։
Այսօր էլ յօբելեանական օր է։
Նա տեղի ունի գեղեցիկ և փառաւոր տօնակատարութիւններից յետոյ, որտեղ շքեղութիւնը, փայլը, զարդարանքները պրաւել էին մեր քաղաքացիների ընդհանուր ուշադրութիւնը։
Իսկ այսօրվայ յօբելեանը բոլորովին ուրիշ բնաւորութիւն ունի։
Այստեղ մենք կը մոռանանք պճրանքները և ճաճանչները։
Այստեղ չենք յիշի այն մարդկանց, որոնք փայլուն են իրանց շքեղ զգեստներով, իրանց հարուստ ակնեղէններով, իրանց բարձր դիրքով և իրանց նուրբ վարվեցողութեամբ։
Բայց կը յիշենք և պոռնէ պէտք է յիշենք այն մարդկանց, որոնք տրեխ են հագնում, հասարակ են, գուցէ և կոպիտ, աչք չեն բացում աւօրեայ մանր-մունր հոգսերից և մըշտական ան աշխատանքի մէջ կորած են։
Դրանք մեր գիւղացիներն են, մեր երկրագործներն են, մեր ժողովրդական մասսան։
Այսօր տօնում է մեր այն ընկերութեան տասնամեայ յօբելեանը, որը յիսուն տարի շատ բանակ զբաղված է մեր երկրագործութեան,

digitised by A.R.A.R.@

մեր պետականության բարեփոխման հարցերում

Տօնվում է Կալիֆոռնիայի Գիշերատուների ընկերության գոյության յիսնամեակը

—

Այդ ընկերության պատմությունը մեզ, քաղաքացիներիս շատ անգամ չէր հետաքրքրում

—Նստած են ամբողջ երեկոն և ինչ որ մի միջատի քննությամբ են զբաղված, սրախոսելով նկատում է մի քաղաքացի, որ շտապում է դեպի կլուբ

Մի միջատ

Որքան հեգնություն, որքան ծաղր, որքան ինքնագոհություն

Իսկ միջատը ամբողջ գիշեր է կործռնում, ամբողջ գաւառներ է աւերում

Այդ միջատը, իբրև Փիլօքսերա, ոչընչացրեց Քուբայիի նահանգի խաղողի այգինները

Այդ միջատը, իբրև հոռետոսեան մըլուկ, իբրև հացի բզէզ աւերեց Ախալքալաքի գաւառի դաշտային ցանքերը

Այդ միջատը, իբրև թրթուր յարձակվում էր մեր մրգատու ծառերի վրա և զրկում նրանց պտուղներից

Այդ միջատը վնասում է բամբակին, առտոտին, կաղամբին և մեր բոլոր բանջարներին ու տունկերին

Բայց քաղաքի մի ինֆեռատի համար, որ իր ներշնչման գործ ունի ոչինչ չէ տեսնել կամ չէ ուզում տեսնել, ինչ նշանակություն ունի այդ միջատով հետաքրքրվելը

digitised by A.R.A.R.@

—Տաղտկալի է, ձանձրալի է մի միջատով զբաղվել, ասում է նա։

Բայց հարկաւոր է, անհրաժեշտ է, պարտաւորեցուցիչ է։

Ժողովուրդը վնասակար է այդ միջատից և պէտք է միջոցներ գտնել այդ միջատին ոչնչացնելու։

—Հէր օրհնած, էլ ինչ ասես, վուր չը մօտ-նեցին էս մեր վուխտի փիլիսօփաները,—բացականչում է մի հասակն առած և, իր կարծիքով անսխալական մի քաղքցի—ինչ վուր բակտերիաների ու միկրօբների էտնիցն ին ընդի։ Տօ խելքը գլխին աշխատորթին էտէնց տուտուց բանների կու ասայ ու Աստծու պատիժը դուբլինի մասխարայ կու չինի։ Դրանցը մէ լաւ դնքտելու չէ, ձիղ իմ հարցնում։

Սակայն այդ «դուբլինը», կամ խոշոր-յոյցը իրանց յոյց տուած բակտերիաներով ու միկրօբներով միջոց տուին՝

օգնելու մեր շերամապահին, որ վնասվում էր շերամի որդի հիւանդութիւնից։

օգնելու մեր այգեգործին, որ զրկվում էր իր այգու բերքերից չնորհիւ օիդիումի, միլդիւի, անտրակնօզի և բազմաթիւ ուրիշ հիւանդութիւնների։

օգնելու մեր գիւղատնտեսին կատարելագործել գինեգործութիւնը, կաթնատնտեսութիւնը, անասնապահութիւնը և այլն։

—

—Ո՛ւմ յայտնեմ ես մեր գիւղի ցաւի մասին, ումից սատանամ ես խրատ ու հրահանգ կուզե լու իմ գաշտի ու այգու անպտուղ թշնամիների դէմ, ծրտեղ ես պատմեմ իմ ցաւերը և նրա

digitised by A.R.A.R.@

զարմանալու մասին խորհրդակցեմ ինձնից ա-
ւելի փորձվածների հետ։

Ահա հարցեր, որոնք միշտ լավել են և առնեն
օր լավում են մեր շուրջը։

Կարելի է դիմել ալաշտօնական վարչական
մարմիններին։ Բայց դա շատ անգամ անհատա-
կակայարմար և ապարդիւն է եղել, որովհետև
այնտեղ զբաղված են ուրիշ գործերով։ Նրանք
մանրադէտներ չունեն, նրանք և ժամանակ ու
կարողութիւն չունեն ցանկալի օգնութիւնը
հասցնելու։

Պէտք էր ուրիշ տեղ և հիմնարկութեան
դիմել։

Այդ հիմնարկութիւնը գիւղատնտեսական ըն-
կերութիւնն էր։

Եթէ պատահել է ձեր ցանքսերի և տունկե-
րի հետ մի դժբաղդութիւն, հիւանդացել են
ձեր անասին կենդանիները, հարկաւոր են ձեզ
սերմացու հատիկներ և հունդեր, կամ զանա-
զան տեսակ կատարելագործված գործիքներ,
դուք ունէք դիմելու տեղ, դուք կարող էք
դնալ Գիւղատնտեսական ընկերութիւն և այն-
տեղից ստանալ բաւարարութիւն։

Այդ հիմնարկութեան ամենաթանգագին ա-
ռանձնայատկութիւններից մէկն այն է, որ նա
հասարակական, ընկերակցական, հաւաքական
ոյժով կազմված մի հիմնարկութիւն է, որը
կարող ենք բարեփոխել և մեր պահանջներին
համապատասխան դարձնել։

Եթէ մեր մէջ առանձ կայ գործելու, եթէ
մեր փորձառութիւնը մեզ կարողութիւն է տա-
լիս օգտակար խորհուրդներ տալու, եթէ մենք
ուսումնասիրել ենք մեր երկրի համար անհրա-

digitised by A.R.A.R.@

ժեչտ մասնագիտութիւններ, միանանք այդ ընկերութեան միջոցով և գործենք։

Աստարէզը չատ ընդարձակ է և գործելու ասպարէզները չատ բազմազան են։

Ընկերութիւնը իր անցեալ գործունէութեամբ ապացուցել է, որ երբ հմուտ և եռանդուն անձնաւորութիւններ իրանց ձեռքն են առնում գործերը և անկեղծ ու անձնուէր կերպով աշխատում են, յիրաւի, նրանք մեծ օգուտներ են տալիս մեր գիւղական ազգաբնակութեան։

Ընկերութիւնը ազատ հիմնարկութիւն է։ Մեզնից իւրաքանչիւրը կարող է նրա անդամը դառնալ և ազդել նրա գործունէութեան վրայ եւ եթէ երբեմնապէս նա լաւ չէ գործում, այդ այն պատճառով է, որ մենք անփոյթ ենք վերաբերվում մեր գիւղական ցաւերին և չենք հոգում նրանց դարմանելու մասին։

Այսօր, ընկերութեան յիսնամեայ յոբելեանի որը, մենք, մտաբերելով այդ հիմնարկութեան մատուցած ծառայութիւնները մեր գիւղատնտեսութեան, կարող ենք բուռն ցանկութիւն յայտնել, որ այդ հիմնարկութիւնը կարողանայ իր երկրորդ յիսնամեակում աւելի սերտ կերպով կապել մեր գիւղատնտեսներին և ուժեղացնել մեր ազգաբնակութեան մէջ ինքնագործունէութեան և ինքնօգնութեան ընդունակութիւնը աներեսային ծաւալով։

---

digitised by A.R.A.R.@

LVIII

(7 հոկտ. 1901 թ., «Մշակ», № 222)

Անձրևները ձեռք չեն վերցնում մեզանից։ Ահա երեք շաբաթ է, որ երկինքը ծածկվել է մեզանից և չենք տեսնում ոչ արեգակ ցերեկով և ոչ աստղեր գիշերով։

Բացի այն, որ մենք Թիֆլիսում ապրողներս նեղանում էինք այդ վատ եղանակից՝ մենք կըրկնակի դժգոհ էինք, որ չէինք կարողանում մեզ մօտ եկած հիւրերին ցոյց տալ Թիֆլիսը էր հրաշալի աշնանային օրով և արեւով։

Արդարև Թիֆլիսի աշունը միշտ գրաւիչ է եղել և դուրեկան։ Շատ անգամ հիւսիսից հիւրեր են եկել մեզ մօտ դիտմամբ, միայն մեր աշունը վայելելու համար։

Իսկ հիւրեր այս տարի ունեցել ենք և այժմ էլ ունենք այնպիսի քանակութեամբ, ինչպիսին երբէք չենք տեսել մեր երկրում։ Այդ հիւրերի մէջ կային և Օգոստիատ հիւրեր, և զանազան նահանգների ազնուականութեան պարագլուխներ, և մայրաքաղաքից եկած պաշտօնեաներ ու գրական գործողներ, և Կովկասի զանազան տեղերից եկած պատգամաւորներ և առհասարակ այցելուներ, որոնց հետաքրքրում էին մեր ուշնախմբութիւնները և մեր կովկասեան ցուցահանդէսը։

—Թիֆլիսը դարձել է մի Պետերբուրգ կամ

digitised by A.R.A.R.@

մի լօնդօն իր մատախլապատ հորիզօններով, առայ ինձ ցուցահանդէսի այցելուներից մէկը

—Ճիշդ է, դրանով մենք նման ենք Պետերբուրգին և լօնդօնին. բայց դա քիչ մխիթարական է, որովհետև մատախուղը Պետերբուրգի և լօնդօնի արժանաւորութիւնը չէ, այլ պակասութիւնը. իսկ մենք արդեօք չունե՞նք բաներ, որպէս զի մատնենք մանր պակասութիւնները և անյարմարութիւնները։

Աւելի լաւ է այդ հարցով չը զբաղվենք։

—

Ցուցահանդէսի այցելուի դրութիւնը շատ անմխիթարական է։

Նա չէ գնում այնտեղ ցնծութիւն տեսնելու Ճեխը արդէն առանց այն էլ նա լաւ ուսումնասիրել է իր բնակած տեղում։ Նա ուրիշ բան է որոնում։ Բայց մինչև կարողանայ ցուցահանդէսի շինութեան մէջ մտնել և մի շինութիւնից միւսը անցնել՝ ստիպված է և կրկնակօշիկի և հովանոցի օգնութեան դիմել, և մեծ ոտնաւոր կատարել, և վտանգաւոր սահուններից զգուշանալ և կրկնակօշիկները ցնծութեան մէջ կորցնելու երկիւղը միշտ աչքի առաջ ունենալ։

Անձրևի հնարքից ազատ չէ և ցուցահանդէսի շինութեան ներքո։ Գեղարուեստական բաժինը աւելի նման է ձկնորսական բաժնին, քան նկարչական հանդէսի։ Ջուրը թափցրել է ամբողջ յատակը։

—Եթէ ջուրը միայն էլ աւելանայ, նկատեց ցուցահանդէսի այցելուն, կարելի կը լինի ձկներ բաց թողնել այդ բաժնում ու խնամել. դա էլ մի տեսակ զուարճութիւն կը լինի։

digitised by A.R.A.R.@

Այո, միտում է այդպիսի կատակներ լսել, քանի որ ցուցահանդէսի ճարտարապետները և վարպետները չը կարողացան մի այնպիսի կլոտուր չինելու, որ անձրևը ներս չը վազէր անարգել կերպով:

Դա էլ վարպետների համառութեան ցուցահանդէսի դէմ է, որի համար գնահատող յանձնաժողովը երևի պարգևներ և մեդալներ կը տայ դերապանցներին:

—

Ցաճախ չըլսելով ցուցահանդէսի բաժիններում՝ ես տեսնում էի զանազան տիպի և հասկացողութեան այցելուների, որոնց մէջ ես չը գտայ սակայն լուրջ ուսումնասիրողներին: Շատերը նայում են իրրև մի ներկայացման, իրրև մի տեսարանի, իրրև մի թատրոնի վրա և կանգ են առնում՝ երբ մի որ և է օտարոտի առարկայ գրաւում է նրանց ուշադրութիւնը իր աչքի ընկնող առանձին յատկութիւններով:

—Չը կան բացատրողներ, որոնց մենք այցելուներս դիմենք, զանգատւում էին շատերը:

Չը կան բացատրողներ:

Չը կան և կատալօգներ:

Արդարև, ինչ անէ այն անձը, որ ցանկանում է ծանօթանալ ցուցահանդէսի հետ ոչ իրրև թատրոնի հետ:

Մենք լաւ գիտէինք, որ կան այցելուներ, որոնց չէ կարող ոչ մի բացատրող ստիպել, որ նրանք լուրջ վերաբերվեն ցուցահանդէսի պատիւին:

Դրանց մասին չէ մեր խօսքը:

Այլ նրանց մասին, որոնք հետաքրքրվում են իսկապէս և կարող էին հետաքրքրվել, եթէ ունէին նրանց հետաքրքրութեանը բաւարար-

digitised by A.R.A.R.@

Թիեն տուող անձինք, նմուտ բայատրողներ նոյն ցուցահանդէսում բոլոր այն դէպքերում, երբ կարգադրիչները փորձ են անում երբեմն նապէս խօսել իրանց բաժնի առարկաների մասին, դուք նկատում էք, ինչպէս խակոյն խռնվում են նրանց շուրջը հետաքրքրվողներ և ուշադրութեամբ լսում են։

Պէտք էր միայն այն, ինչ որ այժմ տեղի ունի երբեմնապէս, լինէր մշտապէս։

—

Մեծ զարմանքով նկատեցինք, որ ցուցահանդէսում շատ քիչ են երևում բոլոր այն հետաօրնները, որոնք այնքան խրոխտութեամբ, այնքան մեծ ապօսմբով ճառում և պատգամախօսում են Գիւղատնտեսական ընկերութեան նիստերում։

Ո՞ւր են նրանք։ Ինչու չեն եկել բայատրելու յաճախորդներին, թէ ինչ առարկայ ինչ նշանակութիւն ունի երկրի տնտեսութեան մէջ։ Ինչու նրանք դասախօսութիւններ չեն կարդում։ Ինչու նրանք փորձեր չեն անում զանազան գործիքների վրայ վերջապէս ինչու նրանք չեն ուսումնասիրում հանդէս բերած իրերը։

—Ես դեռ կարգին չեմ տեսել ցուցահանդէսը, ասում էր այդ ընկերութեան անդամներից մէկը։

—Ինչու, զբաղված էք, հարցրի ես։

—Ո՛չ, այնքան զբաղված լինելս չէ, որքան... ինչպէս ասեմ, ինքս էլ չը գիտեմ...

—

Իսկ շատ ցանկալի էր, որ Գիւղատնտեսական ընկերութեան անդամները յուրջ կերպով

digitised by A.R.A.R.@

ուսումնասիրելին այդ ընկերության նախաձեռնության կազմակերպված ցուցահանդեսը։

Ճիշտ է, ցուցահանդեսը այնքան լիակատար չէ, որքան կարելի էր ցանկալ, բայց նա առավել է քան պարզ գաղափար մեր նկարչության մասին։

Թող, օրինակ, այդ ընկերության անդամները մեկ լաւ տնտղեն երկրագործական բաժինը, որտեղ նրանք կը տեսնեն, որ մեր գիւղացին շատ քիչ է առաջադիմել և մնացել է նոյն դրության մէջ, ինչ որ էր հարիւր տարի առաջ։

Նոյն ցորենը, նոյն գարին և մեւս հատիկները։ Նրանց տեսակները չեն բարելաւուել. իսկ շատ տեղերում նոյն իսկ աւելի վատացել են առաջվանից։

Ո՞ւր են կարգին սերմացու հացահատիկներ, ո՞ւր են մեր հայի յայտնի տեսակի նմուշները։ Ո՞րտեղ են նրանց վրա տանձին ուշադրութիւն դարձրել. որտեղ են նրանց յատկապէս խնամում և զարգացնում։

Գոնէ հարիւր տարուց յետոյ պէտք դրծել այդ ժողովրդի համար, այդ ժողովրդի հետ միասին։

Մենք մեզ դրել պիտինք, մեր հին կուլտուրան, մեր խելքը, մեր աշխատասիրութիւնը։ Բայց ցուցահանդէսի գիւղական բաժինը ցոյց է տալիս, որ գիւղացին դեռ շատ քիչ է շարժվել իր նախկին դրութիւնից։

—

Մենք ևս ուրախ կը լինենք, եթե մեր ակարատեսիները, նոր նկարչի տեսքը դրդեն, տարուեն նրա Տեխնիկայով ու Տեխնիկայում ուժեղ հաջողութիւնով։

digitised by A.R.A.R.@

Իսկ մեզանում միայն մի քանի հատ։

Բնական է և այն, որ այդ գործիքները նոր են յայտնի դարձել Եւրոպայում, 15—20 տարի սրանից առաջ։ Կովկասումն էլ նրանք յայտնի դարձան 12 տարի սրանից առաջ՝ անցեալ կովկասեան ցուցահանդէսին, 1889 թուին։

Սակայն արտասահմանում այդ օգտաւէտ և կարևոր գործիքը տասնեակ հազարներով տարածվեց, իսկ մեզանում.—ես արդէն յայտնեցի։

Ի՞նչ է պատճառը։

Ինչո՞ւ մենք, որ խելօք, աշքաբաց, հին կուլտուրայի մարդիկ ենք, նոյնը չարինք, ինչ որ արաւ մի փոքրիկ Դանիան։

Այս հարցը ես ուղարկում եմ գիւղատնտեսական ընկերութեան անդամներին քննելու և վճռելու։

—

Ինձ շատ հետաքրքրեց ցուցահանդէսում այն բաժինը, ուր կայրերի դպրոցը հանդէս է բերել իր գործունէութիւնը։

Կայր տղաներ ձեր առաջ պատրաստում են դանազան իրեր, օրինակ խոզանակներ, կարդում են, գրում են, թուաբանական հաշիւներ են անում...

Հետաքրքրական է և արտառուչ։

Կայր մանուկին հնար է տրված իր աշխատանքով ապրելու, իր ուղեղը զարգացնելու, իր ցանկութիւնները գրաւոր կերպով յայտնելու...

Մեծ բարեգործութիւն է։

Սակայն դպրոցը շատ նեղ դրութեան մէջ է. նա չէ կարող ընդարձակվել, չէ կարող ցանկացողներին ընդունել և ստիպված է դպրոց դիմողներին մերժել։

digitised by A.R.A.R.@

—Ինչու, կը հարցնէք դուք
Որովհետեւ լուրջ օգնողներ չը կան պարտիզին, չեն տալիս նրան բաւականաչափ դրամական նպաստ:
—Ո՞ւր էք դուք, բարեպարծներ:

—

Գործերը, որ հանդէս են գալիս ցուցահանդէսում, գրաւելին իմ ուշադրութիւնը, որովհետեւ նրանց մասին խօսում են, գործագործութեան պարտէզների ծրագիրներ են մշակում:
—Որքան ինձ յայտնի է, ասացի ես, մեր գործերը յարգված են արտասահմանում, ուրեմն դժուար չէ կազմակերպել մեր հին արհեստի զարդացման գործը:
—Անշուշտ, դժուար չէ, պատասխանեց ինձ ղեկավարներից մէկը. բայց գործողներ, կապակցողներ չը կան. իսկ գործ չիմացողները վտանգաւոր առաջադիմելու յետադիմում են. նրանք խառնել են նկարների տիպերը, փչացրել են ներկերը և այդ պատճառով վնասել են այդ արդիւնագործութեան:
—Մի՞թէ չէ կարելի ուղղել գրատել բանը, հարցրի ես:
—Կարելի է, նիթէ լուրջ կերպով ցանկանանք, պատասխանեց նա:
Ինչու չենք ցանկանում լուրջ կերպով:

—

Ցուցահանդէսի ազգագրական բաժնի մասին շատ խօսելին, բայց քիչ բան իրագործելու:
Գրում էին լրագիրներում և միմեանց պատմում էին, որ ցուցահանդէսում պէտք է հանդէս բերված լինէին կովկասի բոլոր ցեղերը իրանց ազգային հագուստներով և ցոյց պրվէին բնորոշ պարապմունքները:
Մեզ էլ գրգռական վրան գրգռական ընտա-

digitised by A.R.A.R.@

Ներքոյ և հիւանդային կոմկոմից ուղարկված մի փոքր խումբ տալիս էին դաշափար այն ծրագրի մասին, որը պէտք էր իրագործել

Լուրերի ազդեցութեան տակ շատերը որոնում էին ազգապրական բաժինը և չէին գտնում։

Մի օտարական, որ պատկանում էր որոնողների թուին, կանգ առաւ Թիֆլիսի կինոօճառրից մէկի մօտ։ Կինոօճառը անշարժ բնակած իր տեղում՝ նայում էր Սարալեվի պաշտպանին։ Օտարականը կարծեց, թէ նա էլ հինված է, ինչպէս այն քարէ այծը, որ ցցված է արհեստական ժայռի գլխին։ Օտարականը զարմացած էր արհեստի կատարելութեան վրա. նրա առաջ կանգնած խրտուիլակը շատ նման էր իսկական մարդու։ Նա մօտեցաւ կինոօին, նայեց աչքերին և քաշեց շորից։

—Վա, բացատրանչից կինոօճ։

Օտարականը սարսափից ու կծիկը գրեց։

—Տօ էդ մունդուէկը մարդ չէ տեհի։ Գիժ էր էօհ, հարբած կուլէր։

Կինոօճն չարունակից հրճուել իր առաջ դրված տեսարաններով։

—

—Ինչ է պատճառը, որ այդքան դուշմանդէսում առաւօտեան քիչ են լինում, հարցրեց լրագրական բնագօտեօրներից մէկը։

—Երեխ, պատահմանեցի ես, առաւօտեան մարդիկ զբաղված են լրանց գործերով, իսկ ճաշից յետոյ, երբ աւելի ազատ են, գալիս են թէ նայելու և թէ ժամանակ անց կացնելու։

Մօտակից հաստաձայնեց, բայց ոչ բոլորովին։

—Ես կարծում եմ, որ շատերը վախչում են և՛ մեր հիւանդոցից ու բնակելիքներ ծախողներից, նկատեց նա։

Ամենքն է, որ դա բամբասանք էր։

digitised by A.R.A.R.@

LIX

(14 հոկտ. 1901 թ., «Մշակ» № 228)

—Դեռ կարող է ապաւինել, դեռ յոյս կայ փրկութեան։

Այս խօսքերով դիմաց ինձ Թիֆլիսի վերջին շրջանի եկեղեցական պատգամաւորներից մէկը։

—Ո՞նը կարող է ապաւինել, ուժ հաւատ էք ապաւում փրկութիւն, հարցրի ես։

—Մինչ չը գիտէք, մինչ չէք լսել, զարմացած նայեց ինձ վրա խօսակիցս։

—Ո՞նչ բանի մասին, նորից կրկնեցի ես իմ հարցը։

—Առհասն չէք լսել, վրա բերեց նա. բայց զարմանալի է, թէ ինչպէս չէք լսել Մինչ Ներսիսեան դպրոցի տեսչի մասին կայացած ևար վճիռը չէք լսել։

Եկեղեցական պատգամաւորը այնքան վրդովված էր հոգևորական տեսուչների հարցերից, որ նա չէր կարող երևակայել, թէ ես կարող էի ուրիշ հարցերով լուրջ կերպով զբաղվել և իմ կեանքում մի քանի րոպէ անպատճառ մոռանալ իրան յուզող հարցը։

—Լսել եմ, պատասխանեցի ևս։

—Որ լսել էք, ուրեմն կը հասկանաք, որ իմ

digitised by A.R.A.R.@

խօսքը Ներսիսեան դպրոցի մասին էր։ Ես դըպրոցի, նրա սանների, նրա ամբողջութեան մասին էի ասում, թէ նրանք ինչ կարող են ստացաւել, թէ նրանց համար ինչութեան յոյս կայ։

—Սրտիօք յուսահատութեամբ չէք գրաւված դուք, հարցրի ես։

—Այդ չը պիտեմ, նկատեց նա, բայց յամենայն դէպս, վնասակար կաթողիկոսի վճիռը շատ մխիթարիչ և սիրուիչ տպաւորութիւն թողեց մեզ պատգամաւորներիս վրայ։ Նա չը ցանկացաւ խանդարել դպրոցական կեանքի կանոնաւոր ընթացքը և թոյլ տուեց հոգաբարձութեանը շարունակել առաջուայ պէս իր գործունէութիւնը։

—Բայց մոռանում էք, ասացի ես, որ թոյլ է տրված այդպէս շարունակելու մինչև գարունը, իսկ այնուհետև պարտաւորական կերպով պէտք է տեսուչները լինեն հոգևորականներից։ Ուզում ես թէ չես ուզում, հաւանում ես թէ չես հաւանում՝ բայց պէտք է անպատճառ հոգևորականներից ընտրես տեսչութիւն։

Խօսակիցս համաձայնեց, որ հոգևորական տեսուչ նշանակելու հարցը միայն յետաձգված է և ոչ վերացված. բայց և այնպէս յոյս ունէր, որ հոգևոր իշխանութիւնը կը գերադասի դըպրոցի կրթական շահերը ուրիշ նկատումներից և թոյլ կը տայ դպրոցին շարունակելու իր խաղաղ գործունէութիւնը։

—Եղբայր սիրելի, ասացի ես, դուք բոլորովին մխամիտ մարդ էք և չափազանց լաւատես կան մարդիկ, որոնց համար անհնարին դպրոցի շահերը նշանակութիւն չունեն, որոնք ունեն

digitised by A.R.A.R.@

Լրանց նկատումները կը չինվի պարոյը թէ կը քայքայվի՝ դա երկրորդական հարց էր։

—Չէ, համաձայն չեմ, ես յոյս ունեմ, կարան կերպով չնշտեց խօսակիցս։

—Ես կը տեսնէք, որ սխալվել էք։

—Ի՞նչ էք կարծում, ուրեմն, դիմաց ինձ խօսակից, ինչո՞վ կը վերջանայ այս բոլորը։

—Շատ պարզ է թէ ինչով, պատասխանեցի ես, տէրտէր հոգաբարձուներից մէկին կը նշանակեն տեսուչ և դրանով կը լմնայ ամեն բան։

—Ի՞նչ էք ասում. բայց դա անկարելի է. և վերջապէս. դա պրպարտութիւն էր։ Ինձ շատ լաւ յայտնի է, որ հոգաբարձուներին մանաւանդ հետաքրքրում են արել համալսարանական հրթուքիւն ստացած մի երիտասարդ վարդապետի վրա, իբրև ապագայ տեսչացուի վրա։

—Ուրեմն, վրա բերի ես, դուք աւելի միամիտ էք եղել և աւելի լաւատես, քան ես կարծում էի։ Կարող էք արդեօք ինձ ասել, թէ քանի տարի, եթէ ոչ ամիս կամ նոյն իսկ շաբաթ, պէտք է անէր այդ տեսչութիւնը իսկ այնուհետև էլի կը կատարվէր իմ ասածը։

—Անհաւատալի է։ Ոչ ոք տէրտէր հոգաբարձուներից տեսուչ դառնալու յարմարութիւն չունի, և վերջապէս հոգևոր բարձր իշխանութիւնը չի ցանկանայ դպրոցը խայտառակել և նրանից անվերջ ինտրիգների մի բուն չինել։

Խօսակիցս աշխատում էր ինձ համոզել, որ իրերի դրութիւնը այնքան անմխիթար չէ, որքան ես ենթադրում էի։

digitised by A.R.A.R.@

—Նա գանում էր, որ իմ ներքաղրությունները հատանականություն ունեն. սակայն կարծում էր, որ գործը մինչև այդ տեղը չի հասնի։

Ո՛րքան ես ուրախ կը լինէի, եթէ կարողանայի նոյն յոյսը ունենալ այն բոլոր դէպքերից յետոյ, որ ունեցանք վերջին տարիներում։

—Արդեօք չը գիտէք ինչ տպաւորութիւն թողեց կովկասեան ցուցահանդէսը մեր հոգեւորականների վրա, հարցրեց ինձ ցուցահանդէսի հայ այցելուներից մէկը։

—Չը գիտեմ, ասացի ես։ Ո՞վ կարող է թափանցել վեղարաւորների դաղտնիքների մէջ։ Նրանք յաճախ շատ լուրջ դէմք են շինում և այնպէս են ցոյց տալիս, որ բոլոր տեսածները վաղուց տեսել են և հասկացել են։

—Այդ յիշեցրեց ինձ այն առակը, որտեղ պարծենկոտին մէկը ամեն բանի մասին ասում էր «տեսնելա ինչ է. ես կերեր եմ», և բանից դուրս եկաւ, որ նա ոչ միայն տեսել է նաւը, այլ և նրան կերել է։

—Անեկդոտները թողնենք. բայց ճիշտ է այն, որ հոգևորականները շատ քիչ են հետաքրքրվում մեր ժողովրդի կեանքով և նրա տնտեսութեան բարւոքման վերաբերեալ հարցերով։ Այդ առիթով նրանց մի նկատողութիւն արեց վեհափառը այն օրը, երբ գնացել էր ցուցահանդէսը տեսնելու։ Երբ նրան ցոյց տուին Երևանում գտնվող Տէր Զաքարեանի գործարանի պատրաստած կալսող մեքենան, վեհափառը զարմացաւ, որ իրեն ոչինչ չէին յայտնել ոչ այդ գործարանի և ոչ կալսող մեքենայի մասին։ «Մելօքպոյն վարդապետներ, բայպաղանչեց նա,

digitised by A.R.A.R.@

ուր էիք գուք, ինչու միևնույն այժմ ինձ ոչինչ չէիք ասել այդ գործարանի մասին։ Ես անպատճառ կայցելէի»։ Գործարանատէրը յայտնեց, որ նա մի քանի անգամ ցանկացել է երևանում ներկայանալ վեհափառին և յայտնել գործարանի մասին, բայց նրան չեն արժանացրել։

Ծուցահանդէսի այցելուն յայտնեց, որ նա ճանապարհ է և բացատրութիւն կազմող մի հոգեւորականի և պատմեց ինձ իր խօսակցութիւնները, որ նա ունեցել է նրա հետ։ Գուցէ մի ուրիշ անգամ ևս էլ ձեզ պատմեմ. բայց գուցէ և չը պատմեմ։

digitised by A.R.A.R.@

LX

(21 հոկտեմբ. 1901 թ., «Մշակ» № 234)

Ես երբէ մտայ հարևան խոնարհը լուսկի դնելու Յանուարեանը շատ ուրախացաւ ինձ տեսնելով։

—Մէ բան պիտի հարցնեմ, ախպեր նաւ Մինթէ, պարուն, դրուստ է ինչ վուր ասում են թրխատրի մասին։

—Ի՞նչ թատրօնի, հետաքրքրվեցի ես։

—Մեր հասուց թրխատրի մասին։

—Ի՞նչ են ասում, հարցրի ես։

—Ասում են, յայտնեց ես շուարած դէմքով, վուր դերասան Պետրոսեանը պիտի Օթէլիս խաղայ։

—Ի՞նչ, բայցականչեցի ես։

— Օթէլիս, կրկնեց նաւ։

—Ես չը կարողացայ ձիծաղս պահել։

—Ի՞նչէ՞ք ասում, դիմեցի նրան, դուք գիտէք թէ ինչ է Օթէլլոն։

—Գիտեմ. դիտեմ, վուն չէմ դիտէ. Համլէտի պրած աղջկայ մասին իմ ասում։ Դուն իս իմ պարոնը, իս սիրում իմ Համլէտը։ Էրկու չիս Ադամնանին իմ ասէի ու խնայս հաւնեցի, մըտքէմէս չէ դուս գնում Գիտիս Օթէլիէն ով է։

—Էհ, մինթէ դուք էլ հաւատացիք մի այդ տեսակ լուրի, հարցրի ես։

—Ասուլու չէր, չարունակեց նա, ասա ա-

digitised by A.R.A.R.@

աղը հաստատ խօսք ասէր։ Ինա էլ մէբայշ արմըցայ թէ Պետրոսեանը, էնէնց հաստլիկ ու ջանով տղամարդը, վռնդց պիտի Օփէլիի դերը խաղայ։ Ամա վուր ասինա

—Բայց ինչպէս հաւատացիր։

—Ինա էլ չէի ուզում աւտայ, օրթուամ կերան ու էն էլ ասին, վուր գաղեթուամը տպած է։ Վռնդց մալա չը գնայի։

Ես յիշեցի, որ լրագիրներում տպված էր թէ Սիրանույշը պէտք է խաղայ Համլէտի դերը։ Ցայտնեցի այդ մասին իմ խօսակցին։

Պարզվեց թիւրիմացութիւնը։

—Ինձ ծուռն ին խաբար տուի, էտէնց է էրևում, կամկաց նա վրդովված։

—Երևի, հանգստացրի նրան։

Նա վախենում էր, որ մի գուցէ հանաքի ուծաղրի գոհ դարձած լինէր։

—Է լաւ, նորից աշխուժայաւ խանութպանը, Սիրանույշը ինչ բան ունի Համլէտի մօտ։ Գանա դա նրա բանն է։

Ես բացատրեցի, որ ինքս ոչ մի տեղեկութիւն չունեմ այդ բանի մասին և նոյնպէս միայն կարդացել եմ լրագիրներում։ Այն էլ աւելացրի, որ ֆրանսիական նշանաւոր դերասանուհի Սարա Բեռնար փորձել է խաղալու Համլէտի դերը։

Խանութպանը փոքր ինչ մտածմունքի մէջ ընկաւ։

—Լաւ, վուր հիմի Սիրանույշը Համլէտ դառնայ, էն վուխտը ով պիտի Օփէլիի դերը կատարի։

—Մէկը կը խաղայ էլի, պատասխանեցի ես։

—Օրինակ, ով, հետաքրքրվեց նա, կնիկար-մնա, թէ տղամարդ։

digitised by A.R.A.R.@

Նա երևի մտածում էր, թե երբ մի անգամ տղամարդի դերը կին է խաղում, կինոջ դերն էլ տղամարդ պետք է խաղայ։ Գուցե և ուրիշ մտածմունք ունէր։

—Ի հարկէ կին, յայտնեցի ես։

—Ինչու՞ ես ի հարկէ ասում. դուն չես գիտի, մեր առաջվայ վուխտը հէնց տղերքն էին մէ դուխ աղջկայ չուբիր հագնում ու մէջտեղ դուս գալիս։ Հին մօդէն նուր մէկանոյ չէդ է էկի։

Խօսակցութիւնը վերջացրինք։

—Մէ իմանանք ինչ օր ին խաղալու. կու գնանք ու թամաշա կընինք։

Ես դուրս եկայ խանութից։

—

«Կու գնանք ու թամաշա կընինք»։

Այս խօսքերը երկար ժամանակ հնչում էին իմ ականջումս։

Կը գնան ու թամաշա կանեն։

Ինչու՞ օտարոտի ու անասելը բանով չը հետաքրքրվեն։ Ինչու՞ չը տեսնեն դերասանուհուն տղամարդի դերի մէջ դրսևորուած։

Թող տեսնեն։

Մինչ Սերոբեանցը, որ կատարում է կանացի պատասխանատու դերեր, որ դիտէ բեմի վրա տանջվել, յուզվել, հեգնել, կռւել և արտայայտել մարդկային հոգու ամեն տեսակ զեղումներ, մինչ նա ընդունակ չէ կարող լինել արտայայտելու նոյնը տղամարդու դերում։

Ինչու՞ չէ։

Կարող է և այդտեղ ընդունակութիւններ գտնել։

digitised by A.R.A.R.@

Դա մի փորձ է, դա մի թատրոնական ղեւարճութիւն է։

Իբրև բացատութիւն, դա մի հետաքրքրական բան է։ Մի անգամ կը գնանք, կը նայենք և դրանով կը վերջանայ բոլորը։

Դա, կասեն, բացատութիւն է, որից չեստոյ դարձնել կը գայ կանոնաւոր, սովորական նօրմալ դրութիւնը։

Այո, բայց ո՞րն է այդ կանոնաւորը, սովորականն և նօրմալ կոչվածը։

Ո՞րքան ապահով և հաստատ է այն թատրոնական գործը, որ պէտք է կրէ իր վրա կանոնաւոր առաջ գնացող հիմնարկութեան անունը։

Ահա այդ է գլխաւոր հարցը։

Բացատութիւնները անցողական հետաքրքրութիւն կը գրգռեն և կանցնեն։ Բայց կանոնաւոր գործը պահանջում է յարատև զգայմունքներ։

Մինչև այժմ էլ մենք կանոնաւոր կեանքով չենք ապրել և կանոնաւոր գործերով չենք զբաղվել։

Եղած բացատութիւններին կաւելանան նոր բացատութիւններ, գուցէ տաղանդաւոր բացատութիւններ։

Բայց դրանց հետ մարդ հաշտվում է այն ժամանակ, երբ տեսնում է, որ բաւականաչափ ջանքեր են անվում կանոնաւոր և նօրմալ գործ ստեղծելու և ապահովելու։

Բացատութիւնների համար գուցէ միշտ կը գտնվեն մարդիկ, որոնք կը յաճախեն թատրոն, «կու գնան ու թամաշա կօնեին»։

Բայց կարևոր է, որ մեր հասարակութեան,

digitised by A.R.A.R.@

մեր ժողովրդական խաւերին պրաւոդը լինէին կանոնաւոր թատրօնական ներկայացուցիչները, որ իւրացել կազմակերպված տրծը կենտրոնացնէր իր վրա մարդկանց ուշադրութիւնը և համակրութիւնը։

Երբ այդ կայ և հիմնականը ապահովված է. այն ժամանակ բոլոր օտարոտի երևոյթները պատնեշում են դեղեցիկ գաւարճութիւններ և հետաքրքրական նորութիւններ։

digitised by A.R.A.R.@

LXI

(24 հոկտ. 1901 թ., «Մշակ» № 236)

Երկուշաբթի օրը մի չար օր էր լուսացել ինձ համար։

Դեռ տանը առաւօտեան ևկան ինձ մօտ միանգամից մի քանի պարոններ յուզված և վրդովված դրութեան մէջ, որոնք խօսում էին այնպէս անհանգիստ և զրգռված եղանակով, որ ես սկզբում չէի կարողանում ըմբռնել, թէ բանը ինչումն է։

—Սկանդալ, խայտառակութիւն, անպատուութիւն, գոռում էր նրանցից մէկը։

—Մեզ անգամ ես կիմանամ, թէ ինչպէս կը խօսեմ այդպիսի պարոնների հետ, պէտք է դրանց խրատել, ազատակում էր միւսը։

Երրորդը մի դուռ ապտրտւում էր, բայց ինչ էր ապտրտւում՝ ոչ ոք չէր ուզում լսել և իմանալ։

—Պարոններ, դիմեցի ես նրանց, կարդին պատմեցէք, թէ բանն ինչումն է. ես ձեր բայականութիւններից և վէճերից ոչինչ չեմ հասկանում։

Վերջապէս մէկը ինչ հանգամատցան և պատմելին, բայց զարձեալ սկսելին վիճաբանութիւն։

Նրանք պատմելին այն «անախորժ» դէպքի մասին, որ տեղի էր ունեցել նախընթաց երեկոյեան։

digitised by A.R.A.R.@

կոյեան Թիֆլիսի ժողովարանում, երբ հայ դերասանական խումբը ներկայացնում էր «Ճարահատեալ Դերասան» վոդեվիլը։

Այդ վոդեվիլի մէջ հանդէս բերված դերասանը յիշեցրել է հանդիսականներից մի քանիսին Թիֆլիսում գոյութիւն ունեցող մի դերասանի պատկեր։

Կասկած է ծագել, թէ մի գուցէ դերասանական խումբը հնարել է վոդեվիլը անձնական սուր նկատումներով, կամ եղած պիեսի մէջ աւելացրել է նոր խօսքեր և վիրաւորանքներ դերասանի հասցէին։

Վրդովմունքի ազդեցութեան տակ հանդիսականներից մէկը յանկարծ ադաղակում է՝ «իջեցրէք վարագոյրը»։

Վարագոյրը չեն իջեցնում և դործողութիւնը շարունակվում է, բայց հանդիսականները արդէն յուզվել են և հանգիստ տրամադրութիւնը խանգարվել է,

—Պէտք է ապտակել և հարուածել դերասաններին, դրանց ինձ նրանցից մէկը։

—Ընդհակառակը, խօսքը կարող միւսը, պէտք է պատժել ադաղակողին. նա ինչ իրաւունք ունէր ականդատ անելու դործողութեան ժամանակ և պահանջելու իջեցնել վարագոյրը։

—Եւ շատ լաւ արաւ, վրա բերեց առաջինը։ Նա բոլորից դերասանների դէմ, որոնք բեմը ձգտում են չինել հայհոյանոց և բալագան։

—Ոչ դու, ոչ նա, մէջ մտաւ երրորդը, չէք ուզում հասկանալ, որ հաստատութիւնը մեղաւոր չէ, եթէ չէ յաճախում հայոց թատրոնը, որովհետև...

—Տօ թող ը ընդհանուր քարոզները, յարձակվեցին նրա վրա առաջինները։

digitised by A.R.A.R.@

Մի կերպ վերջացրինք խօսակցութիւնը և նա ճանապարհ ընկաւ դէպի «Մշակի» խմբագրատունը։

—

Ես յոյս ունէի խմբագրատանը աւելի ճիշդ տեղեկութիւն ստանալու տեղի ունեցած դէպքի բնաւորութեան մասին։

Խմբագրատանը արդէն նստած էին մի քանի պարոններ և նոյնպէս տաք կերպով վիճաբանում էին—դարձեալ նոյն առարկայի մասին։

Այդտեղ մի քանիսը սաստիկ վրդովված էին դերասանների դէմ, միւսները բողոքող պարոնների դէմ։

—Բնաւի վրա անձնական հայհոյներ տեսնելը, ասում էր մէկը, դա ստորութիւն է, դա անբարոյականութիւն է, դա կեղտոտութիւն է։ Իրանց վարմունքով դերասանները ապացուցին, որ, նրանք դեռ ոչնչով բարձր չեն Շէյթան-Բազարի հայհոյողներից։

—Սխալվում էք, պարոններ, պնդում էր երկրորդը, դերասանները այդտեղ մեղաւոր չեն։ Միւսները պաշտպան էին կամ առաջին, կամ երկրորդ կարծիքին։

—

Լսում էի այդ խօսակցութիւնները, և ցաւում էի տեղի ունեցած ականդալի մասին, բայց մի և նոյն ժամանակ մի ուրախալի և մխիթարական գիծ էի գտնում եղածի մէջ։

—Պարոններ, ասացի ես, մի բան շատ բնական է, որ մեր հասարակութիւնը ակնկալ է պահանջող լինել դէպի բեմի բարոյական կողմը։ վարագոյր իջեցնել պահանջող պարոնը և նրա համակրողները լրանց բողոքով ցանկացել են յայտնել, թէ նրանք թոյլ չեն տայ, որ հայոց

digitised by A.R.A.R.@

բեմի վրա ներկայացնվի մի պատկվիլ, անձնական վրէժխնդրութեան թելադրած և հնարած մի պիես։ Դա առաջադիմութեան նշան էր։ Մանաւանդ դա մխիթարական է այն տեսակէտով, որ մի ժամանակ, երբ «Մշակը» սաստիկ յարձակվում էր Սարդարեանի կազմած «Մօդա է քա», պատկվիլի վրա, այն ժամանակ ազգասէր պարոնը բողոքողների շարքում չէր և երբ «Մշակը» անտարբեր վերաբերվեց դէպի Սարդարեանի յօբելեանը, որ տեղի ունեցաւ «Մօդա է քա» պատկվիլի թարմ և չանհետացած տպաւորութիւնների տակ, այն ժամանակ բողոքողը չէր մարտում «Մշակի» բռնած դիրքը։ Անշուշտ այս տեսակէտով նա առաջադիմութիւն է կատարել։ Անկասկած այստեղ ես չեմ քննում այն հարցը, թէ նա արդեօք իրաւունք ունէր բողոք յայտնելու, քանի որ յայտնի չէր, թէ արդեօք յիրաւի դերասաններըՙ պատկվիլ են հանդէս բերել, թէ նրանք հարազատ կերպով ներկայացրել են այն, ինչ որ կայ պիեսում։ Այդ պէտք է քննել և տեսնել։

—

Այդ ժամանակ խմբագրատան մասնաւ մի դերասան, որ ձեռքին բռնած էր «Ճարահատեալ դերասան» պիեսը։

—Ահա պարոններ, ասայ նա, տեսեցէք, թէ արդեօք կայ այդտեղ հնարած և աւելացրած մի բան։

Մենք կարդացինք պիեսի չատ տեղերը և համոզվեցինք, որ արդարև նրա մէջ կան այն բոլորը բառերը և ածականները, որոնք թւում էին հնարված և աւելացրած։

Դերասանները հարազատութեամբ կրկնել են բեմում այն, ինչ որ կար պիեսում։

digitised by A.R.A.R.@

—Բայց և այնպէս, չեչոտեց մէկը, ես չեմ ներ ներանց այդ պիեսի դնելը, որովհետև ներանք այնքան առաջ են ունեցել յայտնի անձնաւորութիւններ։

—Իսկ ես ուրիշ կարծիքի եմ, ասաց մէլսը, համոզեցէք և ապացուցէք։

—Համոզել չեմ կարող, բայց զգում եմ, ենթադրում եմ, պատասխանեց առաջինը։

—Ենթադրութիւններով և ընազդումներով չէ կարելի մեղադրել, վրա բերեց երկրորդը։

—

Դուք յիշում էք կակազի պատմութիւնը, երկու խօսքով ձեր միտքը բերեմ։

Մի կակազ դանդիպում է փողոցում մի պարոնի՝

—Ինդ-դը-դրեմ ասացէք, ուր-ուր է գե-գեղատունը, հարցնում է նա։

—Ե-ե-եթէ կը գը-նաք այս-այս-պէս, պատասխանում է միւսը, կա-կա-կա-կարող...

Կակազը կարծելով, որ դիմացինը իրան ծաղրում է, աստիճ վրդովվում է։

—Ան-պի-պի-պի-տան, ես քո-քո-քո գլուխը կը ջ-ա-ա-ր-դեմ, բղաւում է նա։

—Ո՞վ, ո՞վ, ո՞վ, ինչ-ինչ-պէս կը հա-հա-համարձակվես, կատաղաբար վրա է բերում երկրորդը։

Բանը հասնում է ջարդի։

Անցնողները կանգ են առնում և հետաքրքրվում են եղածով։

—Ի՞նչ է պատահել, ինչու՞ էք ձեծվում, հարցնում են զանազան կողմերից։

—Այս պապարոնը ինձ ծա-ծաղրում է, բացատրում է կակազը։

Հաւաքված բազմութիւնը վրդովվում է պա-

digitised by A.R.A.R.@

րոնի կնդաոտ վարմունքից։ Զայրույած նա ուզում է յարձակվել ծաղրող պարոնի վրա։ Այդ ժամանակ մի նոր անցորդ, որ նկատում է թիւրիմացութիւնը, վերջ է դնում տխուր դէպքին։

Դուք, անկասկած, կը վրդովվէիք կակազի հետ միասին միւս պարոնի վարմունքից։ Բայց պատմութիւնից իմացաք, որ միւս պարոնն էլ էր կակազ։

Երբ բանը պարզվեց և կակազները համոզվեցին, որ երկուսն էլ արդար էին, այն ժամանակ այլ ևս բարկութեան և ցասման տեղ չը մնաց։ Միմեանցից ներողութիւն խնդրեցին և հեռացան։

Գանք մեր ներկայացման հարցին։

Այժմ, երբ պարզվեց, որ դերասանները չեն հնարել ոչինչ, որ պիէսը հին պիէս է, վարժուել թարգմանված, մի քանի անգամ խաղացված, մինէ մարդ կարող է նախկին ձևով յարձակվել դերասանների վրա։

Պիեսը կակազ է եղել առաջուց։

Ահա ինչ պարզվեց։

Դա շատ կարևոր էր։

—

Մնում է չար դիտաւորութիւնների հարցը։

Անկասկած, անմեղութիւն է, երբ դերասանները զբաղված են անձնական հաշիւներ տեսնելով այս և այն պիէսի միջոցով։

Անկասկած պախարակելի է, եթէ նրանք պիեսների ընտրութեան ժամանակ մասնաւոր նկատումներով են զեկավարուում։

Բայց դժուար է հաստատութեան համար բացարձակ մեղադրել դերասաններին, երբ նը-

digitised by A.R.A.R.@

բանք տալիս են վաղուց յայտնի մի պիէս, որի մէջ կան այնպիսի կտորներ և խօսքեր, որոնք կարող են նկատվել, իբրև ակնարկներ հասարակութեան մէջ գործող անձնաւորութիւնների վրայ։

Այն ժամանակ անկարելի կը լինի առհասարակ որ և է պիէս տալ Մեհմուբիններին և ենթադրութիւններին վերջ չի լինիլ։ Եւ Շէքսպիրի պիէսների մէջ, և Մօլիերի, և Դիւմայի, Օստրօվսկու և ուրիշների հնդինակութիւնների մէջ կան տիպեր, որոնք երբեմն լուսանկարչական նոյնութեամբ գոյութիւն ունեն կեանքի մէջ։

Այդ չը պէտք է մոռանալ։

---

digitised by A.R.A.R.@

LXII

(28 հոկտ. 1901 թ., «Մշակ» № 240)

Այս տարվայ մարտ ամսին մի օր պատահեցի Գիւղատնտեսական ընկերութեան քարտուղարին

—Ինչու՛, հարցրի նրանից, ձեր ընկերութիւնը նիստեր չէ անում

—Նոր զեկուցումներ, նոր հարցեր չը կան, պատասխանեց նա։

—Անկարելի է, որ չը լինեն, զարմացած նկատեցի ես։

—Իրողութիւնը այդ է, կրկնեց նա անվրդով կերպով։

Անցաւ մի քանի ժամանակ։ Մի օր լրագրներում կարդացի, որ նշանակված է այդ ընկերութեան նիստը։

Դժբաղդաբար նոյն օրը ես հրաւիրված էի և մի յանձնաժողովի նիստու։

Ուզում էի անել թէ յանձնաժողովի և թէ Գիւղատնտեսական ընկերութեան նիստերը նշանակված էին մի և նոյն ժամերին. երկուսի սկիզբն էլ 7½ ժամն էր։

Բայց յանձնաժողովում միայն մի կէս ժամ վայ կամ շատ շատ մի ժամվայ գործ կար։ Ուստի ես վճռեցի յանձնաժողովում վերջացնել գործերս և յետոյ գնալ Գիւղատնտեսական ընկերութեան նիստը։

digitised by A.R.A.R.@

Այդպէս էլ արի։

Դուրս գալով յանձնաժողովի նիստից կառք վերցրի և չտապով ուղևորվեցի դէպի ընկերութեան տունը։

Ներս եմ մտնում և ինչ եմ տեսնում։ Շատ քիչ մարդ կայ։

—Նիստը արդեօք վերջացաւ, թէ չէ կայացել ամենևին, հարցրի ես ծառաներից։

—Չէ, հաւաքվում են, գալիս են, շուտով կը սկսվի նիստը։

—Այդքան ուշ, մրմնջացի ես, վերարկուս հանելով։

—Մեզանում միշտ այդպէս է լինում, վրա բերեց ծառան։

—

Ներս մտայ։

Մի քանի մարդ ման էին գալիս դահլիճում և խօսակցում. մէկը ինչ որ նամակներ էր կարդում և ծոցի գրպանը դնում, մի քանիսը ծոյլ ծոյլ թերթում էին ընթերցարանի սեղանի վրա դրած մանուգիտական թերթերը։

—Ինչու չեն սկսում նիստը, հարցրի ես մի բարձրահասակ պարոնից, որ նայում էր պատի վրա կախած մի աղիւսակի։

—Երևի շուտով կը սկսեն, պատասխանեց նա մեծ հանգստութեամբ, նախագահը այստեղ է։

Վերջապէս ժամի 10-ին սկսվեց նիստը։

Մի կէս ժամ կարդում և խօսում էին վարչական մանր մունր հարցերի մասին։

—Փոքր ինչ բարձր, խնդրեց սեղանի ծայրին նստած մի մարդ։

Խօսողները փոքր ինչ ձայները բարձրացրին և յետոյ դարձեալ ցածրացրին։

digitised by A.R.A.R.@

—Խօսք եմ խնդրում, ազատակից մի երիտասարդ։

—Խօսքը ձերն է, պիտեյ նրան նախագահը։

Երիտասարդը սկսեց շատ սաստիկ յուզված և խօսեց այգեգործական դպրոցի մասին։

Մեզանները միջամտեցին և նկատեցին, որ յարուցած հարցը արդէն վաղուց վճռվել պրծել է։

Ժամի 11-ին սկսվեց յայտարարված զեկուցումի ընթերցումը։

Զեկուցումը հետաքրքրական էր և վերաբերում էր կենսական երևոյթների։

Բայց յոգնած էին բոլորը։

Ուստի վճռեցին զեկուցման քննութիւնը յետաձգել միւս նիստին։

Ես մի քանի շաբաթ հետևում էի լրագիրներին, որ իմանամ, թէ երբ է լինելու հետևեալ նիստը և զեկուցման քննութիւնը,

Բայց չը տեսայ այդ մասին յայտարարութիւն։

Եղան թէ չեղան նիստը և քննութիւնը՝ չըպիտաւ. ես այլ ևս չէի հետևում այդ բանին։

—

Կարդայի լրագիրներում, որ յուբյանդէսի առիթով հրաւիրված են ժողովներ։

Կարդայի և մի քանի զեկուցումների մասին հաշիւներ։

Պէտք է գնամ և տեսնեմ, վճռեցի ևս։

Երեկոյեան ժամի 7-ին, երբ անցնում էի Գլուղատնտեսական ընկերութեան շինութեան մօտով, մտածեցի, որ լաւ կը լինի մտնեմ և հարցնեմ, թէ երբ են սկսվում նիստերը։

Ես լաւ գիտէի, որ մի կամ երկու ժամից յետոյ պէտք է ներս սկսվէր, բայց և այնպէս ուզեի լաւ էր ճիշդ կերպով տեղեկանալ։

digitised by A.R.A.R.@

Ներս եմ մտնում և իմ աչքերին չեմ հավատում։

Ձորս կողմը վերարկուներ, ձեռափայտեր, հովանոցներ, կրկնակօշիկներ։

—Սրանք ովքեր են այստեղ, շուարած հարցրի ես ծառայից։

—Ժողովի նիստ է, պատասխանեց ծառան կարուկ կերպով։

—Արդեն հավաքվել են, հարցրի ես։

—Ինչպէս տեսնում էք։

—Իսկ նիստը երբ կը սկսվի։

—Արդեն սկսել են։ Հենց այս րոպէին սկսեցին, համեցէք ներս։

—Այսպէս վաղ, զարմացած բացականչեցի ես։

—Սրանք վաղ են սկսում, գլուխը թափ տալով նկատեց ծառան։

Հանեցի վերարկուս և ներս մտայ։

Դահլիճը լիքն էր բազմութեամբ։ Ազատ աթոռներ շատ քիչ էին մնացել։

Ժողովականների մէջ տիրում էր աշխոյժ տրամադրութիւն։

Երբ ես մտայ, կարդացվում էր մի պարոնի զեկուցում։

Նախագահը իր կողմից արեց մի երկու նկատողութիւն և խօսք տուեց ժողովականներին։

Սկսվեց հետաքրքրական և խելացի վիճաբանութիւն։ Վիճողների մէջ կային պատասխանատու, գործնական կեանքի ներկայացուցիչներ, փորձված և համառ դիւղատնտեսներ։

Ես իմ այդ դիտողութիւնը յայտնեցի հարևանիս։

digitised by A.R.A.R.@

—Այո, ներկայ ժողովները ցույց տուին, որ կան բանիմաց մարդիկ մեր երկրի զանազան տեղերում։

—Իսկ զեկուցումներ արդեօք կան բաւականաչափ, հետաքրքրվեցի ես։

—Այո, շատ են, ոչ պակաս քան չիտուն զեկուցում, պատասխանեց նա։

—Ցիտուն զեկուցո՞ւմ, բացականչեցի ես։

Ես չէի մոռացել ընկերուհիան քարտուղարի խօսքերը, որ նա ինձ ասել էր մարտ ամսին զեկուցումների բացակայութեան մասին։

—Ցիտունից աւելի է. ես ասացի մօտաւորապէս, նկատեց հարևանս։

—Բայց ինչպէս կարող էք այդքան զեկուցումներ կարդալ, հետաքրքրվեցի ես։

—Ստիպված են կրճատել և գլխաւոր կէտերի վրա կանգ առնել, բացատրեց նա։

—

Մարդ էլ շատ կայ, զեկուցում էլ շատ կայ։

Պէտք է ընդունակութիւն ունենալ այդ մարդկանց գրաւելու և զեկուցումներ հանդէս բերելու։

Գիւղատնտեսական ընկերուհիան դահլիճը ստացել էր մի թարմացնող, կեանք ներշնչող տրամադրութիւն։

Ես էլ ցանկանում էի մասնակցել վիճաբանութիւններին և զրոյցներին։ Ես պահանջ էի զգում խօսել իմ գիտցած կարիքների մասին և իմ նկատողութիւններն ու կարծիքները յայտնել քննվող հարցերի մասին։

digitised by A.R.A.R.@

Ճառախօսներէն մէջ կային և ճոռոմաբաններ ու խմաստակներ, որոնք թոյլ էին տալիս աւելորդաբանութիւններ և դատարկաբանութիւններ։

Բայց ընդհանուր ոգին համակրելի էր, ընդհանուր խմաստը խելացի էր, ընդհանուր արտայայտութիւնը քաջալերող էր և խրախուսող։

Պահպանութիւնները նմանում էին դրամական արժանաւորութիւնների առաջ։

Ես ուրախ տրամադրութեամբ դուրս եկայ ժողովից և սկսեցի յաճախել նիստերը։

---

digitised by A.R.A.R.@

LXIII

(4 Նոյեմբ. 1901 թ., «Մշակ» № 246)

Երէկ «Մշակի» խմբագրատունը ինձ մօտ տուին մի նամակ, որ ստացուել էր քաղաքային պատուէր։

Նամակ գրողը, դիմելով հայ դերասանների խմբին, խնդրում է, որ նրանք ներկայացնեն գոնէ մի անգամ «Երկրորդ երիտասարդութիւն» պիէսը։

Ի՞նչ էք կարծում ինչու համար։

«Որպէս զի, ասում է նամակագիրը, գոնէ այդ պիէսը սթափեցնէ իմ հօրը, որի երկրորդ երիտասարդութեան ամօթալից արտայայտութիւններից տառապում է մեր ամբողջ ընտանիքը»։

Նամակագիրը ստորագրել էր իր անուան և ազգանուան գլխատառերը։

Կարդացի նամակը և ինքս ինձ հետևեալ հարցը տուի՝

Եթէ այդ նամակը ստորագրված լինէր լիակատար կերպով և նրա հեղինակը յայտնի լինէր, արդեօք դերասանական խումբը կը լսէր այդ խնդիրքը, թէ ոչ։

Եւ եթէ լսէր, ինչ մեկնաբանութիւններ կատարել էին առաջ գալ։

Արդեօք չէին ասի, թէ այդ պիէսը ներկայացնողները դիտաւորեալ նպատակ են ունեցել

digitised by A.R.A.R.@

և ուրեմն ցանկացել են պատրաստ պիէսի միջոցով այն ստատուրութիւնը գործել, ինչ որ նրանք կանէին նոր շարադրած պատմվիլի միջոցով։

Վճռեցէք այս հարցերը։

—

Մի բան յիշեցի։

Ներկայ տարվայ գարնանը Լիւդվիգովի խումբը Ներկայացրեց Հաուպտմանի «Հիւանդ մարդիկ» պիէսը։

Պիէսը տպաւորութիւն թողեց։

Անտրակտների ժամանակ հանդիսականները հաղորդում էին միմեանց իրանց տպաւորութիւնները։

—Ես շատ կը ցանկայի այդ պիէսը թարգմանված տեսնել հայերէն լեզուով, ասաց մեր խոսակիցներից մէկը։ Ես ճանաչում եմ մի ընտանիք, որի կարծես ընդօրինակված լինէին պիէսի գործող անձերը մի քանի փոփոխութիւններով։

—Հէնց այդ պատճառով ցանկալի չէ պիէսի թարգմանութիւնը, նկատեց մի ուրիշը։ Դա դիտաւորեալ մի գործ կը լինէր, որ պատիւ չէր բերի թարգմանողին։

—Ես ևս դէմ եմ թարգմանելուն։ Վրա բերեց երրորդը։ բայց բոլորովին ուրիշ պատճառով։ Ես համարում եմ պիէսի մէջ դուրս բերած մարդկանց ոչ սովորական անձնաւորութիւններ, այլ բացառութիւններ, որոնք իսկապես հիւանդներ են, ինչպէս անուանել է նրանց պիէսի վերնագիրը։ Եթէ այդ հանգամանքը չը լինէր՝ կարելի էր թարգմանել։ Մեզ ինչ թէ այս կամ այն մտաւոր անձը կարող

digitised by A.R.A.R.@

էր նման լինել պիէսի դուրս բերած տիպերին։

—Ամենևին բայցառութիւն չեն, միջամտեց Հրրորդը։ Հաստատակութեան մէջ շատ կան տարածված այն գծերը, որոնց մենք տեսանում ենք պիէսի հերոսների մէջ։

—Չը կան, պնդում էր երրորդը, չը կան նոյն իսկ իբրև բացառութիւններ։

—Շատ կան, թէ չը կան՝ այդ ես չը գիտեմ, ասաց առաջինը, բայց մէկ այդպէս ընտանիք ես ճանաչում եմ թող միայն թարգմանվի...

Եւ նա փափաց մեր ալևանջին մի ընտանիքի անուն։

Ճիշդ որ ուղիղ էր դիտել։ Մենք էլ յիշեցինք և տեսանք, որ այդ ընտանիքի անդամների և պիէսի գործողների մէջ մեծ նմանութիւն կայ։

—Պէտք է թարգմանել պիէսը, ոգևորված բացագանչեց առաջին մեր խօսակիցը։ Բոլորն էլ կը ճանաչեն, բոլորն էլ գլխի կընկնեն։

—Եթէ գլխի էլ չընկնեն, երևի հասկացնողներ կը լինեն, հնգնելով նկատեց մեր խօսակիցներից մէկը։

—Պարոններ, նկատեց երկրորդ խօսակիցը, մինչ պէտք է ղեկավարվել նրանով, թէ այս կամ այն մանաւոր անձը կարող է իրան ճանաչել պիեսում։ Դա լաւ տեսակէտ չէ և անազնիւ վերաբերմունք է։

—Ներեցէք, բարկացած նկատեց առաջինը։ Միջամտեցին և ուրիշները։

—Անկասկած, յանկալի է այդպիսի թարգմանութիւնը, նկատեց չորրորդը, բայց միայն այն պատճառով, որ նա պարտադրում է կեն-

digitised by A.R.A.R.@

ական կծեր, որոնց պատահում ենք և մեր հասարակութեան մէջ։

—

—Մեր վերջին ներկայացումից մի քանի տարի վերաւորվել են, ինչից ինձ հայ դերասաններից մէկը։

—Ի՞նչ էիք ներկայացնում, հարցրի ես։

—«Մեծապատիւ Մուրացկաններըն, պատասխանեց նա։

—Ինչո՞ւ պէտք է վերաւորվէին, հետաքրքրվեցի ես։

—Նրանք կարծում են, որ մենք ցանկացել էինք նրանց ծաղրել, նկատեց դերասանը։

—Գուցէ դուք ձեր գրիմով, ձեր շարժուձևերով աչքառու էիք այդ մարդկանց նմանվել, հարցրի ես։

—Ինչպե՞ս կարող էի ես նմանվել, հետաքրքրվեցի ես։

—Ես ինձ համար ոչ մի նոր բան չէի ասում, պատասխանեց նա, ինչպես որ միշտ էլ ասում եմ ամեն անգամ, երբ ինձ հարցնում են, թե ինչ եմ ես կատարում։

—Ինչո՞վ վերջացաւ, հարցրի ես։

—Նրանցից մէկը սպառնալիքներ է կարդացել, որ ինձ հետ կը տանէ իր հաշիւները յեղյուծ։

Այդ խօսակցութեան ժամանակ մօտեցաւ մեզ մի հին դրագէտ։ Տեղեկանալով թէ ինչ բանի մասին ենք խօսում, նա ևս միջամտեց։

—Իմ կարծիքով, ասաց նա, չը պէտք է դնել այսպիսի պիեսներ։ Եթէ ոչ ոքի էլ նրանք չը վիրաւորեն, այնու ամենայնիւ նրանք ծաղրում են թէ գրագէտներին և թէ մեր հասարակութիւնը։

—Ուրեմն, ինչ պէտք է ներկայացնել ձեր կարծիքով։

digitised by A.R.A.R.@

—Պատմական և կլասիքական պիեսներ, կըտրուկ պատասխանեց Նաւ

Ոչ ոք չը համաձայնեց Նրա հետ։ Իսկ դերասանը բորբոքված խօսում էր այն բանի մասին, թէ շատ անգամ ծագում են ընդհարումներ այս կամ այն ներկայացման առիթով։

—Եղբայր, մինչէ պիեսներ չտակելու ժամանակ, մենք կարող ենք բոլոր ժամանակը այն հոգսի մէջ լինել, թէ արդեօք սա կամ նա չէն վիրաւորվի, չէն ընդունի ներկայացրածը իրանց վրայ։

Հին գրապէտը բոլոր ժամանակը, քանի խօսում էր դերասանը, գլխով հաւանութեան նշաններ էր անում. բայց երբ վերջացրեց դերասանը, նա մի անգամից ցոյց տուեց իր դժգոհութիւնը։

—Դուք էլ բարի պատմներ չէք, բացատրեց Նաւ

—Մենք։

—Այո, դուք միշտ անմեղ գառներ էք ձևանում։ Ձեր վրայն էլ պիտի նք։

Դերասանը բողոքեց, բայց հին գրապէտը ականջ չը դրեց և հետացաւ։

—Դա էլ մեծապատիւ մուրացկաններից մէկն է, մրմնջաց դերասանը և նոյնպէս հետացաւ։

Ինչ է կատարւում այս բոլորի մասին։

Կատմելէք, պարոններ, լաւ բնավորաւար, աչքի առաջ ունենալով տալ կենսական պիեսներ հասարակութեանը։

Անկասկած ձեր պիեսների մէջ շատերը կը ճանաչեն իրանց ամբողջապէս կամ մասամբ։

Հէնց դրա մէջն են պիեսների կենսունակութիւնը և նրանց ոյժը։

digitised by A.R.A.R.@

Լաւ պիեսը ինքն ըստ ինքեան գրաւիչ է, ինքն ըստ ինքեան հետաքրքրական է։

Մանաւոր հաշիւներ և նկատումներ, զանազան դիտաւորեալ դրդումներ դէն չպրտեցէք։ Դա պատիւ չէ բերում ոչ դերասաններին, ոչ հասարակութեանը։

Դերասանները պէտք է այնպէս լուրջ, ազնիւ և բարեխիղճ կերպով կատարեն թատրօնական գործը և տան ներկայացումներ, որ նրանց վերաբերութեամբ եղած կասկածները փարատվեն, նրանց վարկը վերականգնվի և առաջ գայ վստահութիւն։

Մի երկու սխալ քայլ խանգարում են գործը մի քանի տարիներով և խորտակված վստահութիւնը չուտով ձեռք չէ բերվում։

Այդ չը պէտք է մոռանալ։

---

digitised by A.R.A.R.@

LXIV

(11 Նոյեմբ. 1901 թ., «Մշակ» № 252)

Փայտեայ թրեր
Թղթեայ սաղաւարտներ
Ներկած կտաւից բեհեզներ

—Ինչ են դրանք, ինչու համար էք յիշում դրանց. արդեօք ծաղր էք ուզում անել, կը հարցնէ իմ ընթերցողը։

Ոչ։ Ծաղրի համար չեմ յիշում, այլ մի լուրջ դործի առիթով։ Ես միայն կրկնում եմ մի ճառի խօսքերը։

Ես ներկայ էի այն յօբելեանական տօնախմբութեան, որ կատարեց ուրբաթ օր Թիֆլիսի արքունական թատրօնը Թիֆլիսի օպերային ներկայացուցիչների յիսնամեակի լրանալու առիթով։

Նկարագրել հանդէսը մտադիր չեմ. ես միայն կընդգծեմ երկու կէտ։

Թատրօնի դիրեկտօր պ. Օպօչինին իր ճառի մէջ ասաց, որ այն ժամանակ, երբ դեռ չէր դադարել զէնքի չառաչիւնը Կովկասում. երբ դեռ հոսում էր մարդկանց արիւնը, այն ժամանակ, յիսուն տարի առաջ, հինվեց Թիֆլիսում դեղարուեստի մի տաճար, որտեղ թէև դործում էին փայտեայ թրեր և կտաւէ ծիրանի ներ, սակայն Ներանք աւելի ուժեղ

digitised by A.R.A.R.@

գործ էին տեսնում, քան իսկական թուրը և գինւորական զգեստը։

Թատրոնը մտցնում էր մարդկանց միութեան համար ուրիշ միջոցներ։ Նա տարբացնելով գեղեցիկը և գաղափարականը, գրաւում էր բազմացեղ Կովկասի բնակիչների սրտերը ոչ զէնքի հեղինակութեան ոյժով, այլ կուլտուրական նոր գործով արդաւանդ, բեղմնաւոր հողի վրայ։

Յիսուն տարի առաջ Թիֆլիսը տեսաւ թատրոն և ներկայացումներ, որոնց մասին նա գաղափար չունէր իր հին կեանքում։ Թիֆլիսը սակայն շատ շուտ ընտելացաւ թատրոնին, սիրեց նրան, և այժմ Ռուսաստանի թատրոնասէր և երաժշտասէր քաղաքներից մէկն է համարվում։

Յիսուն տարի անցաւ։

Այժմ մենք ունենք Թիֆլիսում՝

Արքունական թատրոնի օպերային ներկայացումներ,

Արտիստական ընկերութեան ռուսաց դրամատիկական ներկայացումներ,

Հայոց ներկայացումներ,

Վրաց ներկայացումներ,

Ժողովրդական թատրոն՝ երեք լեզուի ներկայացումներով,

Սիմֆոնիական երեկոյթներ

և բազմաթիւ պատահական ներկայացումներ ու կոնցերտներ։

Թատրոնը, ողբերգութիւնը, դրաման, կատակերգութիւնը, երգը, երաժշտութիւնը դարձել են և դառնում են պահանջ մեր հասարակութեան համար։

—Դպրոցի և մամուլի հետ միասին թատրո-

digitised by A.R.A.R.@

նին ևս ներքին դեր է վերապահված հասարակական զարգացման գործում, առայժմ հասախօսներից մէկը, Ա. Խատիսեան, հայոց թատրօնական խմբի կազմից։

Այդպէս էր։

Թատրօնը դեր ունի կատարելու։

Բայց մեր հայ հասարակութիւնը չը կարողացաւ իր թատրօնի համար գտնել այնպիսի անձնուէր, անձնազոհ, գաղափարական գեկավարներ, ինչպիսին նա ունեցաւ իր դպրոցական և մամուլի գործերում։

Դերոյը ունեցաւ ներքին V կաթոլիկոսին, լաւարեաններին, բազմաթիւ բարերարների, որոնք թողնին կտակով գումարներ. բազմաթիւ գործողների մանկավարժական ասպարէզում։

Մամուլը ունեցաւ Ս. Նազարեանին, Գ. Սրմաքաշեանն, որոնք գլուխ կանգնեցին գրական ամբողջ հոսանքների և նրանց գեկավարեցին։

Իսկ թատրօնը՞։

Նա հա՛րուստ բերել մի քանի տաղանդաւոր դերասաններ, բայց մինչև այժմ չը տուել գեկավարող, կազմակերպող, գործով ոգևորված մի ուժեղ անձնաւորութիւն։

Եւ ահա մենք նորից ենք մի ծանրոտի դրութեան՝—և կայ և չը կայ հայոց թատրօն։

Այն բոլոր մասերը, այն բոլոր բաղկացուցիչ կտորները, որոնք անհրաժեշտ են թատրօն ունենալու համար, կան, բայց ինքը, միասին թատրօնը չը կայ։

Սրջարն՝ դերասանական խումբ կարելի է կազմել բաւարար կերպով։

Ներկայացումների համար կարելի է միշտ պէս ունենալ թատրօնական դահլիճներ։

digitised by A.R.A.R.@

Բեպերտուարը այժմ բաւական բարդված է և կարելի է նրան հեշտութեամբ ճոխացնել։
Հաստատութեան մէջ պահանջ կայ դէպի թատրոնական ներկայացումները։
Նոյն իսկ կարելի է դասարաններ ժողովել հայոց թատրոնին նպաստաներ տալու համար, և արդէն այդպիսի փորձեր տեղի են ունեցել։
—Ուրեմն, կը հարցնէք դուք։
Պատասխանը տուէք ինքներդ։

—

Ես ներկայ եղայ Հաուպտմանի «Խորտակված զանգակ» պիեսի ներկայացմանը։
Պիեսը այլաբանութիւնների մի զանգուած է։
Հին և նոր գաղափարներ, միջին դարերի և մեր օրերի ունեչանքներ, անտիասպաշտութեան օրօրներ և նոր կեանքի արշալոյսի ձայներ— այդ բոլորը խառնված են իրար տալու այն խառնուրդը, որ գոյութիւն ունի մեր իրական կեանքի մէջ։
Սակայն շատ է հեռու գնացել այլաբանութիւնը։ Մարդ սովորված է աւելորդ գուշակութիւններ և ենթադրութիւններ անել՝ հասկանալու համար այլաբանութեան իսկական իմաստը։
Նայում էք հետաքրքրութեամբ։
Բայց բան չէք հասկանում։
Դա մի հէքիաթ է առանձուածներով։
«Խորտակված զանգակը» աւելի ուժեղ տպաւորութիւն կը թողնէր, եթէ նա գրված լիներ Օպերա կախարդների, յաւերժահարսների, անտառային ոգիների հմայքը երանգ խաղերի, պարերի և երգերի հետ միասին լիակատար արտայայտութիւն կը տանար նրա տաղանդաւոր երաժշտութիւնը օգնութեան

digitised by A.R.A.R.@

զար նկարագրութեան և խօսքերին, որոնք այնքան առատութեամբ թափված են գործողների շրթունքներից։

Թատրօնից երբ դուրս եկայ, որոշեցի փոքր ինչ զբօսնել փողոցում և ինքս ինձ հաշիւ տալ Հաուպտմանի պիեսի մասին։

Ես կարդացել էի զանազան յօդուածներ և կարծիքներ պիեսի մասին և գիտէի, թէ պիեսի այլաբանութեան վերաբերութեամբ ինչ են ասում։

Սակայն ես ուզում էի իմ սեփական տպաւորութիւնը քննել՝ անկախ կարդացածից։

Երեկոն գեղեցիկ էր, և լուսնի լուսով զբօսանքը մի զուարճութիւն էր։

—

Իմ մտածմունքը խանգարեց ծանօթներից մէկը, որը կտրեց իմ ճանապարհը։

—Այդ ո՞ւր, հարցրեց նա։

—Զբօսնում եմ, գեղեցիկ գիշեր է, պատասխանեցի ես։

—Բայց մտամոլոր էք երևում, նկատեց նա։

—Թատրոնի ազդեցութիւնից կը լինի, յայտնեցի ես. գնացել էի տեսնելու «Մորատուզված զանգակը»։

—Հասանեցինք, հետաքրքրվեց նա. ինչ պիես է։

—Դա այլաբանական մի հէքիաթ է, բայատրեցի ես, մի մեծ հանելուկ, որ...

—Այդտեղ էլ հանելուկ, խօսքս կտրեց ծանօթս ես ձեզ այնպիսի հանելուկ պատմեմ, որ ձեր տեսածից աւելի լաւ լինի։

Եւ նա սկսեց ծիծաղել, առաջուց վայելելով այն, ինչ որ ես, նրա ասելով, պէտք է վայելէի յետոյ։

Ծանօթս կատակերգու էր։

digitised by A.R.A.R.@

—Ուրեմն, ասայի նրան, դուք մտադիր էք դրամագից յետոյ վճռվիլ ներկայացնել ինձ համար։

—Եւ աւելի յաւ կը լինի, վրա բերից նա, չատ էք ձեր մտութը կխտել։

—Դէ պատմեցէք ձեր հանելուկը, դիմեցի ծանօթիս։

—

Նա սկսեց չատ հետաքրքրութեամբ ես կը հաղորդեմ հանդուցեալ կերպով։

Անցեալ կիրակի օր Թիֆլիսի քահանաները հաւաքվում են ս. Նշան եկեղեցու տաճարը՝ հոգեհանգիստ կատարելու այն քարերարձների համար, որոնք նպատակ են տուել քահանաների ապահովութեան գանձարանին։

Հոգեհանգստից յետոյ պէտք էր լսել գանձարանի հաշիւը և...

Եւ?

Եւ ստանալ տոկոսները։

Ահա և հանելուկը սկսվում է։

Քահանաների համար պատրաստված էին ծրարներ փողերով։

—Ի՞նչքան է ձեր ծրարի մէջ, հարցնում էին քահանաները միմեանցից։

—Իմի մէջ տասներեք րուբլի է, յայտնում է մէկը։

—Մլիթէ, զարմանում է միւսը։

—Ինչո՞ւ էք զարմանում, հարցնում է առաջինը։

—Որովհետև իմ ծրարում միայն երեք է, պատասխանում է երկրորդը։

Հարցնում են միւսներից։

Այնտեղ էլ մի և նոյնն է։ Մէկի ծրարում 13, միւսի ծրարում միայն 3 րուբլի։

digitised by A.R.A.R.@

—Հանելուկ է։

—Կատարեալ հանելուկ։

—Ոչ մի հանելուկ չը կայ, բայականչում է ծերունի քահանան։ Տօ դուք չէ՞ք, որ ասացիք ձեր ստանալիքից հանեն։

—Տօ երբ, բղաւեց մէկը։

—Ձեռ չիշում. մոռացել ես երախտապարտութեան հարկը իշխանաւորին. հիմի կ՚ետ ես կայնել։

—Հանելը հանել, բայց այդքան հանել, լուսկեղեն նախատինքներ։

—Չէ, սա հանելուկ է։

Այնպէս էլ հանելուկը մնաց չը լուծված։

—Այժմ, դիմեց ինձ ծանօթս, դուք պէտք է լուծէք հանելուկը։

Ես հրաժարվեցի։

Ծեռս ծանօթս սկսեց պատմել ուրիշ հանելուկներ։

Այդ էլ ուրիշ անգամ։

digitised by A.R.A.R.@

LXV

(18 նոյեմբ. 1901 թ., «Մշակ» № 257)

Ես խոստացել էի իմ ընթերցողներին խօսել մի շարք հանելուկների մասին։

Այդ խոստումը չեմ կարող կատարել լուսին, որովհետև հանելուկների թիւը օրէցօր աւելանում է, և եթէ ես խօսեմ բոլորի մասին՝ ոչ ես ժամանակ կունենամ գրելու և ոչ դուք կարդալու։

Պէտք է ընտրութիւն անել։

Այսօր ես կը խօսեմ մի հանելուկի մասին, որը իսկապէս հանելուկ չէ, այլ ինչ է ինքնաերթ սրտշնցէք։

Ձի գիտեմ, լսել էք դուք գիւղական մի քահանայի ճառի մասին պատող գրոյցը։

Քահանան ցանկանում է եղել մի էրթին օրհնութիւն տալ հարսանիքի ներկայութեան։

«Ժողովուրդ», ակսում է նա։

Բոլորը ակնածութեամբ սպասում են, թէ ինչ պէտք է ասի աէրտէրը։

«Ժողովուրդ, կրկնում է հոգևոր հայրը։ «մի վախենաք թշնամուց, ուրախ եղէք»։

—Ամէն, ամէն, լսվում է ամեն կողմից։

«Ինչպէս որ, շարունակում է ճառախօսը, Դաւիթ մարգարէն գողիաթի գլուխը կտրեց,

digitised by A.R.A.R.@

այնպէս էլ Աստուած նոյ նահապետի օրհնութիւնը ձեր գլխից անպակաս անի»...

Ժողովուրդը լսում է բառեր, անուններ, ոչինչ չէ հասկանում, բայց մտածում է թէ երևի այնպէս էլ հարկաւոր է...

Գոհ է տէրտէրը։

Գոհ է ժողովուրդը։

Շատ պարզ է, որ այստեղ հանելուկ չը կար քահանայի ասածների մէջ. այլ միայն և միայն տգիտութիւն։ Ու եթէ հարցանքաւորներից մէկը վիրաւորվէր նրա ասածներից, այդ բանը կը համարվէր թիւրիմացութիւն։

—Ինչո՞ւ։

Որովհետև ճառախօսը ոչ մի վատ նպատակ չէ ունեցել։ Նա միայն չէ կարողացել ասել այնպէս, ինչպէս հարկաւոր է։

—Այն ժամանակ թող ձեռք վերցնէ չիմացած բաներից և իսկէ հասարակ ու անպատճոյճ, բայց խելացի բառերով։

Ես համաձայն եմ ձեզ հետ։

—

Դա մի զրոյց է։

Դուք կասէք ինձ, երևի չար լեզուներն են հնարել այդ զրոյցը՝ մեր հոգևորականներին ձաղրելու համար։

Գուցէ։

Բայց յաճախ ես յիշել եմ այդ զրոյցը, երբ լսել եմ մեր հոգևոր հայերի ճառերը և քարոզները։

Ինձ այնպէս է թուացել, որ ուրիշ բառերով, ուրիշ ոճերով նոյն ճառն եմ լսում եմ։

Ես ինչ զարմանալու բան կայ այդտեղ։ Տըգէտ, անգրագէտ մարդկանցից ինչ էք պահանջում։

digitised by A.R.A.R.@

Հասկանալի է, թէ ինչու մենք առանձին ուշադրութեամբ չենք էլ լսում այդ ճառերը ու քարոզները և միշտ մի բան ենք մտածում, թէ երբ կը վերջանան այդ ճառը ու քարոզը։

—Երբ որ կունենանք աստուածաբաններ և կրթված կրօնականներ, ասում էր ինձ մի ռուսական, այն ժամանակ մեր հոգևորականների ճառերը և քարոզները կը դառնան իմաստալից, տրամաբանական, խելօք, հետաքրքրական։

Ի՞նչ կարող էի ասել։

Հաւանական է, որ այդպէս էլ պէտք է լինէր։

Թէև մեր նոր աստուածաբանների չնորհքը ոչ մի տեղ չէր երևում, բայց մտածում էի, երևի դեռ առիթներ չեն հանդէս եկել։

Ո՛րքան ուրախացայ, երբ մի այսպիսի առիթ «ներկայացաւ» նորերս։

Զորեքշաբթի օր, նոյեմբերի 14-ին, Թիֆլիսի Թանգօյեան եկեղեցում նշանակված էր հանդուցեալ Յորէն Ստեփանէի հոգեհանգիստը։

Գնացի ես ներկայ լինելու։

Դեռ վաղ էր։ Պատարագը նոր էր սկսվել։ Եկեղեցում ազատ տեղ կար։

Ցետոյ եկան մի քանի աշխարհականներ և մի երկու հոգևորականներ։

Եկաւ և Թիֆլիսի կօնսիստօրիայի նախանդամ Գարեգին վարդապետ Ցուվաէվեան, որը հոգեհանգստից յետոյ փորձեց մի ճառ ասելու։

Ինձ հետաքրքրում էր, թէ ինչ պէտք է ասէ աստուածաբան վարդապետը։

Ոչ շատ, բայց որոշ չափով յոյսեր ունէի։

Մարդը գնացել է Գերմանիա, լսել է դասախոսութիւններ, ծանօթացել է լուսաւոր երկիրների հետ։ Շատից-քչից լաւ բաներ կասէ։

Առաջին նախատաստութիւնը պարունակում

digitised by A.R.A.R.@

էր մի հետաքրքրական հարց, թէ ինչու քիչ մարդ է հաւաքվել հոգեհանգստին։

Եւ յետոյ սկսեց խօսել Տարաւ, բերաւ, քշվեց, գնաց, սար ու ձոր ընկաւ, չեղվեց, մոլորվեց, խառնեց ամեն բան ու կորցրեց թելը...

Ես չէի հաւատում իմ աչքերին և ականջներին։

Վերև յիշած գրույցի ճառը խոշոր տառերով նկարվեց իմ առաջին—

«Ինչպէս որ Դաւիթ Մարգարէն Գողիաթի գլուխը կտրեց, այնպէս էլ Աատուժ Նոյ նահապետի օրհնութիւնը ձեր գլխից անպակաս անէ»...

Տէր Աատուժ, ինչ դուդապիսութիւն։ Խորէն Սահիմանէի նման ճարտասան և հմուտ հռետորի դիտարկի մօտ կանդնած մի թոյլ ճառախօս անկապ մտքերով, խառնաշփոթ դադարներով, բայց մի և նոյն ժամանակ անսահման յաւակնութեամբ, իւսում է այնպիսի ոճով և այնպիսի ոգով, որից միայն կարող էր վրդովվել հանդուգնալի հոգին։

Հիասթափութիւնը կատարեալ էր։

Ո՞րտեղից որտեղ ճառախօսը մէջ բերեց մեր լրագիրները։

Ի՞նչ կապ ունեն, մտածում էի ես, լրագրները ներկայ հոգեհանգստի հետ։

Ճառախօսը սկսեց պախարակել լրագիրները։

—Երեմ լրագիրները հայհոյել են Խորէն Սահիմանէին, կը հարցնէք դուք։

Ոչ։ Կամ յամենայն դէպս ճառախօսը չէր պախարակում այն լրագիրները, որոնք կարող էին հայհոյել Սահիմանէին։

—Ինչ ուզում են թող ասեն լրագիրները,

digitised by A.R.A.R.@

բացատրեցնեմ նաև, մինչ մեր մերը կանենք. մինչ ալէտք է աստուածաբաններ դառնանք...

Լաւ. բայց ինչ գործ ունի այդ բանը Յորէն Սահիրանէի հետ։

—Մեր լրագիրները ոչինչ չեն հասկանում, երբ խօսում են աստուածաբանութեան մասին, սակայ նա միայն ինչ կեայ։

Ասայ, ճղճղայ, բղաւեց, կատրեց, գանգատվեց...

Բոլորս զարմացել էինք։

—Տօ ինչ պատահեց այս մարդուն, ինչու յանկարծ այսպէս բորբոքվեց։

Ինձ համար մի բան բոլորովին պարզ էր, որ ճառը ոչ մի կապ չունէր օրվայ առիթի հետ։

—Արդեօք ճառախօսը չարդում էր այն հանգուցեալին, որի հոգեհանգիստը նա կատարում էր։

Չը գիտեմ ուրիշները ինչ կարծիքի են, բայց ինձ համար պարզ էր, որ նա չէր չարդում։

Սա մի ապաւորութիւն է, որ սակայն ունի իր հիմունքը ճառի ընդհանուր ոգին գոնէ ինչ էր հանգուցեալի գործունէութեան և կեանքի մէջ բոնած դիրքին։

—Փարիսեցի չը պէտք է լինել յանկարծ բղաւեց ճառախօսը։

Ահա ճառի այդ կտորի հետ ես բոլորովին հաւանձայն էի։

—

Վերջապէս խառնաշփոթ, ճակատակապ, անիմաստ ճառը։

Ունկնդիրները չատացած էին. չը գիտէին թէ ինչ մտածեն ճառախօսի մասին։

digitised by A.R.A.R.@

—Այս ինչ հանելուկ էր, հարյրեց ինձնից մի պարոն։

—Ընդհակառակը՝ հանելուկը պարզվեց, պատասխանեցի ես. մենք տեսանք մեր գերմանական աստուածաբաններից մէկին «անդր է տեղւոջն»։

—Գերմանական, հարյրեց պարոնը։

—Այո, յայտնեցի ես։

—Մախլաս, ձեռքով արեց պարոնը և հեռացաւ։

Հանելուկը աւելի ևս պարզվեց, երբ մի օր յետոյ իմացվեց, որ այդ վարդապետը թոյլ չէ տուել կատարել Ալիշանի հոգեհանգիստը, իբրև կաթոլիկի։

Դուք գիտէք, ընթերցող, թէ ինչ մեծ յարգանքով է վերաբերվել հայ ժողովուրդը դէպի այնպիսի հոգևորականները, ինչպիսին է տասն օր սրանից առաջ վախճանված սիրելի նահապետ Ալիշանը, ինչպիսին էին Ներսէս Ե-ը, Այվազովսկին, Ստեփանէն և ուրիշները։

Հարցնում եմ ձեզ՝

Որ և է մարդ տխրում է, դրդում է, որ մենք մատուցանենք յարգանք այդ անձանց։

Ոչ Ոչ ոք չէ տխրում։

Այդ մարդկանց գործն է խօսում ինքը իր մասին։

Բայց ինչու՞ մենք չենք յարգում և պիտում մեր նոր թխված աստուածաբաններին, մեր մէջ «կղերականութեան ոգի» պատուաստողներին, խաւարամիտ դիալեմատորներին։

Մի՞թէ դա էլ մի հանելուկ է։

Թող դրա վրա մտածեն խաւարամիտ ուղեղները։

digitised by A.R.A.R.@

LXVI

(25 Նոյ. 1901 թ., «Մշակ», № 262)

—Շատ աչող ցուցահանդէս է, գեղեցիկ, ամփոփ և գրաւիչ։

Այսպէս ասում էր ինձ մի պարոն, որ ամբողջ երկու օր կովկասեան ցուցահանդէսում պտտել էր և ծանօթացել հանդէս բերած իրերի հետ։

— Դուք արդեօք չէք չափազանցնում, նկատեցի ես։

Ինձ յայտնի էին ցուցահանդէսի ունեցած մի քանի թերութիւնները։

— Ամենևին ոչ, վրա բերեց նա. ես տեսել եմ ցուցահանդէսներ ուրիշ տեղերում և պէտք է խոստովանեմ, որ Թիֆլիսի ցուցահանդէսը լաւերից մէկն է։

— Ախտրժելի է լսել այդ տեսակ կարծիք, յայտնեցի ես. բայց անկասկած կարելի էր մեր ցուցահանդէսը աւելի լիակատար անել։

— Այդ էլ յետոյ, նկատեց նա, մի ուրիշ անգամ. եղածը արդէն լաւ է։ Դա մեր կովկասցիների առանձնաթիւնն է միշտ դժգոհ և բծախնդիր լինել։

Այդ խօսակցութիւնը տեղի ունէր հովանաւորների 1-ին ցուցահանդէսը իր ամենաեռուն չրջանում էր։ Կային շատ այցելուներ։ Երե-

digitised by A.R.A.R.@

կոչեան էլէկտրական լոյսով մարդիկ զբօսնում էին կանաչազարդ ճեմելիքներում։ Ընդհանուր տրամադրութիւնը լաւ էր, ցուցահանդէսի վարչութիւնը մեծ յոյսեր ունէր հասոյթների վերաբերութեամբ...

Անցաւ այդ օրից երկար ժամանակ—մի տարի և քսան օր—վակվեց ցուցահանդէսը։ Փակման օրը գնացել էի ցուցահանդէս մի անգամ էլ նրա վրա նայելու։ Ախտեղ հանդիպեցի իմ մի այլոց նոյն պարոնին, որի խօսակցութիւնը վերև ձեզ հաղորդեցի։

—Շատ անաջող ցուցահանդէս էր, ասաց նա մռայլած դէմքով. շատ պակասութիւններ ունէր և ամենևին գրաւիչ չէր։

Սա ինչ հանելուկ է, մտածեցի ես։

—Արդեօք ձեզնից եմ լսում այդ խօսքերը, հարցրի ես։

—Այո, ինձնից, պատասխանեց նա։

—Զարմանալի է, նկատեցի ես։

—Ինչու՞, բռնկվեց նա, ինչն է զարմանալի. մի՞թէ սպասում էիք, որ ես գովեմ և փառաբանեմ այն, ինչ որ ամենևին փառաբանելու արժանի չէ։

—Բայց համեմատելով ուրիշ ցուցահանդէսների հետ...

—Այդ էր պակաս, խօսքս կտրեց պարոնը, որ համեմատէք ուրիշ ցուցահանդէսների հետ։ Ես ցուցահանդէսներ շատ եմ տեսել. ներեցէք, գիտեմ գնահատել։ Սա ինչ ցուցահանդէս է, որ յանդգնի համեմատութեան մտնել երևելիների հետ։

—Ինչումն է պակասութիւնը, հարցրի ես։

—Ամեն բանում, վրա բերեց նա։ Պէտք է

digitised by A.R.A.R.@

խոստովանել, որ մեր կովկասցիների թուլութիւնն է միշտ գովել իրանց ունեցածը։ Երևի դուք վիրաւորուած էք, որ ես խունկ չեմ ծըխում...

—Դուք ձեզ էք հակասում, նկատեցի ես. ձեզ էք խրատներ կարդում և վիրաւորուում։

Պարոնը լայն բացեց իր աչքերը և նայեց ինձ վրա հարցական հայեացքով։

—Ես ձեզ չեմ հասկանում, յայտնեց նա բարկացած ոճով։

Ես յիշեցրի նրան իր խօսքերը, որ ինձ ասել էր առաջին հանդիպումի ժամանակ։ Նա փոքր ինչ շուարուեց, բայց չուտ սթափուեց։

—Մի՞թէ ես գիտէի այն ժամանակ, պատասխանեց նա, որ ամեն բան ծուռ կը գնայ, և այսօրուան օրը ցուցահանդէսը 25,000 րուբլի վնաս կունենայ։

—Լաւ, դա ինչ կապ ունի հանդէս դրուած իրերի լաւ կամ վատ լինելու հետ, նկատեցի ես, միթէ չէր կարող լաւ ցուցահանդէսը ահագին ծախքեր կլանել, իսկ աւելի վատ ցուհանդէսը ոչ մի ղէֆիցիտ չը տալ։

—Է՜հ, մի բանի լաղաթը կորչում է, երբ վերջումը ախորժելուն է բերում, չնչտեց նա. ինչ կանեմ այն ուրախ րոպէները, որից յետոյ պարտքի մէջ ալէտք է լինեմ երկար ժամանակ...

—Դա ուրիշ բան է, առարկեցի ես, ցուցադէսի նշանակութիւնը ուրիշ բան։ պէտք է չը շփոթել միմեանց հետ։

Պարոնը չը հաւատացեց նա իր լոգիկան ունէր։

—

Անցեալ օրը վազում էի կանգնեցրեց բարեկամս մի պարոն և չափազանց սիրալիր

digitised by A.R.A.R.@

կերպով, քաղաքավարությամբ ու նոյն-իսկ ակնածությամբ սկսաց խօսել ինձ հետ զանազան առարկաների, և որ ինձ համար աւելի զարմանալի էր՝ հասարակական և գրական հարցերի մասին։

—Ի՞նչ զարմանալու բան կայ, կը հարցնէք դուք։

Ինքն ըստ ինքեան, ի հարկէ, ոչինչ զարմանալու բան չը կայ. բայց փոքր ինչ ինձ լաւ ցէք, յետոյ դատեցէք։

Այդ պարոնի հետ ես ծանօթ եմ ուղիղ տասն և մէկ տարի։ Դա մի անձն էր, որ իսկապէս հետաքրքրւում էր հասարակական հարցերով։ Նա երբեմն մասնակցում էր ընտրողական գործերում։ Նա ուժեղ, ներգործական և ազդող անձնաւորութիւն չէր։ Նա հաւետ մի մարդ էր, որ իր պարտքն էր համարում ողջունել հասարակական և գրական հանգրւանի երեւոյթներ։ Ես մի հաճութիւն էի զգում նրան հանդիպելուց։ Նրա մէջ արձագանք էին գտնում օրւայ հարցերը։ Նա լաւ ընթերցող էր, համեստ քաղաքացի և ջերմ կուլտուրական։

Ծօթը տարի սրանից առաջ նա թողեց Թիֆլիսը և գնաց Բաքու պաշտօնուի։ Այնտեղ նա սկսաց պարապիլ և մասնաւոր գործերով,— նաւթային ձեռնարկութիւններով։ Ես նրան այլ ևս չէի հանդիպում։ Մենք բաժանվել էինք միմեանցից լաւ յիշողութիւններով։

Յանկարծ մի օր, երկու տարի սրանից առաջ նրան հանդիպում եմ Գօլօվինսկիյ պրօսպեկտում։

Ես նրան բարևեցի ջերմութեամբ և պատասխանեց չատ զսպված կերպով։

digitised by A.R.A.R.@

—Երևի ինձ չը ճանաչեցիք, հարցրի ես, նայելով նրա սառն դէմքին։

—Ոչ, ինչպէս չէ, ճանաչեցի. մի քիթ կարելի էր մոռանալ, պատասխանեց նա պաշտօնական ոճով։

Ես ենթադրեցի, որ նա սաստիկ մտատանջ է և զբաղված է իր հոգսերով։

—Ի՞նչպէս են ձեր գործերը, հարցրի ես։

—Շատ լաւ են. եկել եմ մի երկու չաբաթ հանգստանալու, թատրօն տեսնելու և զբօսնելու։

Պարոնի պաշտօնական ձևը դուրս եկաւ բոլորովին ուրիշ բան։ Նա մի առանձին վեհութիւն էր ուզում տալ իրան և իր խօսակցութեանը։

—Ես ձեզ յիշել եմ, ասացի նրան, իբրև մի մարդու, որ արձապանք էր լինում օրվայ հարցերին։

—Մանկութիւնը անցաւ, վրա բերեց նա սառն ոգով. այժմ գործով եմ զբաղվել։ Ես, ներեցէք, լրագիրները այժմ շատ ուշ-ուշ եմ կարդում. անհիմն բաներ շատ են գրում. պէտք է փոխէք ձեր գրիչը. մարդ կայ, պատիւ կայ, հանաք բազար չէ...

Ես բարկացայ։ Ինձ համար պարզվել էր, որ մի փոխոխութիւն է կատարվել այդ մարդու մէջ։ Պատասխանեցի նրան մի քանի կծու խօսքերով և հեռացայ։

Այնուհետև հանդիպելուց կամ ամենևին չլուր չէինք տալիս միմեանց, կամ շատ սառն կերպով։

Ցետոյ ես իմացայ, որ պարոնը բաւական հարստացել է, փող է ձեռք գցել, պատել է

digitised by A.R.A.R.@

իրան չքեղութեամբ և համարում է իրան հասած երկնային երջանկութեան։

«Այժմ նա խելօք է, ինքը կարող է իրատուներ տալ ուրիշներին, թէ ինչպէս պէտք է դատել, խօսել և գրել»։

Մուտացայ նրան և հանեցի նրան իմ յիշողութիւնից։

Այդ էր ահա պատճառը, որ ինձ չատ զարմացրեց, երբ նա անցեալ օրը չափազանց սիրալիր կերպով ինձ մօտեցաւ և սկսեց այնպիսի բաներից խօսել, որոնց մասին նա նախորդ հանդիպումի ժամանակ ասել էր, թէ մանկութեան բաներ են։

Ես չատ տառն էի։

—Մի նեղանաք ինձանից, ասայ նա. ես մեղաւոր եմ. ես յիմարացել էի, անցեալ անգամ կարծեմ ձեզ վիրաւորեցի...

Խօսակցութիւնը չը կպաւ, չը տաքացաւ։ Մենք բաժանվեցինք։

—Ի՞նչ է պատահել այս մարդուն, աա ինչ հանելուկ է, հարցրի ես մեր ընդհանուր մի ծանօթից։

—Ահա ինչ, պատասխանեց նա. այժմ դրա բանները բուրդ են. ամեն բան կորցրել է, այժմ նորից փոխվել է, առաջվայ դառն է դարձել։ Այստեղ հանելուկ չը կայ. մչտական երևոյթի նոր կրկնութիւնն է։

digitised by A.R.A.R.@

LXVII

(2 փետր. 1901 թ., «Մշակ» № 268)

Ես մի գրական մրցանակ եմ նշանակում։
Մրցանակը հազար րուբլի է։
Հազար րուբլին առհասարակ քիչ չէ գրական մրցանակի համար, բայց մանաւանդ այժմ, գրամական ճգնաժամերի միջոցին, նա մի չը լսած առատաձեռնութիւն պէտք է համարուի։
Ի՞նչ եմ ասում։ Հազար րուբլու համար ինչ-որ գոնէ անյեղլ տարվայ հարուստները, որոնք հարիւր հազարները բանի տեղ չէին դնում, այժմ պատրաստ են ժամերով ձեր եռանից մանելու։
—Ի՞նչ հազար, չատ անգամ մի հարիւր րուբլին ժամերով են որոնում, կամէ ինձ բազուի ընթերցողը։
Շատ լաւ Ոչինչն իմ նշանակած մրցանակը գրաւիչ է և բաւարար։
Առաջ գնանք։
Մրցանակ ստանալու համար աշխատանքը պատրաստ պէտք է լինի մինչև առաջիկայ 1902 թուի փետրվարի 1-ը, իսկ ևը յայտարարվի վերջ փետրվարի 21-ին։
Գրական աշխատանքի անունը պէտք է լինի «Գօգօլ և հայերը», կամ «Գօգօլ և Կուլիաս»։
Դուք հրատարակված էք։

digitised by A.R.A.R.@

—Ո՞րտեղից ձրտեղ, բացականչում էք դուք, ինչ կապ Գոգոլի և հայերի մէջ։ Գոգոլը գրում էր այն ժամանակ, երբ հայերը նոր էին մտել ռուսաց հպատակութեան տակ և ոմ գիտէ գուցէ Գոգոլը չէր էլ տեսել ոչ մի հայի, կամ եթէ տեսել էր, շատ քիչ էր նրանից ճանաչում։

Գուցէ, գուցէ...

Բայց փոքր ինչ լսեցէք և կտաք իմ մրցանակի վրա լուրջ ուշադրութիւն դարձրէք։

Առաջիկայ փետրվարի 21-ին լրանում է Գոգոլի մահվան յիսնամեակը։ Այդ առիթով այժմ գրվում են յօդուածներ նշանաւոր ռուս գրողի մասին, հրատարակվում են հետաքրքրական յիշողութիւններ, լոյս են ընծայվում նրա հեղինակութիւնները էժան գնով...

—Շատ լաւ, կտրում էք դուք իմ խօսքը, մենք էլ կարող ենք յարգել Գոգոլին, բայց ինչ կապ Գոգոլի և մանաւորապէս հայերի կամ Կովկասի մէջ։

Փոքր ինչ համբերութիւն։

Կարդալով լրագիրներում Գոգոլի յիշատակի համար կազմվող նախապատրաստական ժողովների և երեկոյթների մասին, ես էլ ինձ հարց տուի։

Արդեօք չէ՞ հնացել Գոգոլը, արդեօք նրա տիպերը միջնադարեան աւանդութեան չարքը չեն անցել։

Արդեօք այժմ էլ կան «մեռած հոգիներ», Խլեստակովներ, Պօբչինսկիներ և այլն։

Արդեօք հայի կամ Կովկասի կեանքը որ և է գործ ունեցել է Գոգոլի տիպերի հետ։

Իմ հարցերի պատասխանը եղաւ սարսափեցուցիչ։

Ինչ հիմնական երևոյթ մեր կեանքից, ինչ

digitised by A.R.A.R.@

հիմնարկութիւն վերցնում էի, ամեն տեղ իմ աչքի առաջ մեծ թուով հանդէս էին գալիս գօդոլի տիպերը։

Ահա և վճռեցի մի մրցանակ նշանակել, որ մեր կեանքի տեղեակ անձինք ղեկավարեն նրանով, ստանալով իրանց աշխատանքի համար վայելուչ վարձատրութիւն։

Այժմ կարծեմ հասկանալի էր։

—

Որպէս զի մրցանակի համար աշխատողը լաւ իմանայ, թէ ինչ է իմ ցանկացածը, ահա կը տամ մի երկու նմուշ։

Օրինակ, վերցնենք մի գաւառական քաղաք, դիցուք Գօրին։

Այդտեղ մի քանի տարի է, որ քննութիւնները են կատարւում մի քահանայի գործերի վրա, որի ձեռքին է եղել երէցփոխութիւնը երեք տարի շարունակ։

Ցանկարծ որտեղից որտեղ՝ կասկած է յայտնւում, թէ հաշիւները մաքուր չեն, թէ եկեղեցական դումարները ուրիշ գանձարանում են պահւում։

Գօրու հոգևոր կառավարութիւնը քննութեան հարց է հանդէս բերում։

Քննութիւն։

Թիֆլիսից քննիչ է ուղարկւում 1900 թւին Զաքար քահանայ Զարդեղեան։

Հազիւ սկսում է նա իր քննութիւնը՝ յանկարծ հեռագիր...

Հեռագիր Թիֆլիսից։

Հեռագիրը յետ է կանչում քննիչին։

Կիսատ թողած իր գործը, քննիչը վերադառնում է։

digitised by A.R.A.R.@

—Ո՞վ է տուել այդ հեռագիրը։

Մեծամասնութեանը մինչև այժմ յայտնի չէ, թէ ով։

—Ւ՞նչպէս թէ յայտնի չէ, կը հարցնէք դուք։

Դիւանական թղթերում չէ նշանակված թէ քննիչը պէտք է վերադառնար և ինչ պատճառով։

Քննութիւնը այդպիսով յետաձգվեց։

Նոյն Գօրիում մի վեց տարի առաջ ծխականների մի մասը, ցանկանալով քահանայ ձեռնադրել տեղացի մի տիրացուի, ինդիրք է ուղարկում կօնսիստօրիա հին քահանայի դէմ։

Ինդիրքին տորդրած 42 անձերից 14-ը կեղծ են. նրանցից 8 մեռած, 5-ը անյայտ, 1 աքսորված, 1-ը ուրիշ ծխից։

Գօրեցիները ցանկացել են Գօգօլի «Մեռած հոգիները» մեզ յիշեցնել և բաւական աջողել են։

—

Մի ուրիշ օրինակ։

Մի չաբաթ սրանից առաջ նոյեմբերի 23, 24 և 25-ին, երեք օր շարունակ քննվում էր մի բնորոշ և շատ հետաքրքրական դատաստանական գործ։

Թիֆլիսի դատաստանական պալատը երևանում զբաղված էր այդ երեք օրը Սամսօն Տէր-Պօղոսեանի և վանդերլօի գործով։

Լրագիրները տպեցին տեղեկութիւններ և մենք վերցնում ենք դրանց, առանց մեր կողմից մի բան աւելացնելու։

Ո՞վ է Սամսօնը։

Դա այն Սամսօնն է, որ ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, երբ Բայազէտի բեր-

digitised by A.R.A.R.@

դուռ. գոնվող ռուս զօրքը պաշարված էր թուրքական զօրքերով, դուրս եկաւ և բաղմաթիւ խոչընդոտների հանդիպելուց յետոյ, գնաց հասաւ գնեւրալ Տէր-Ղուկասեանին և յայտնեց բայազէտի բերդում գտնվածների անել և սարսափելի դրութեան մասին. Ինչպէս յայտնի է, Տէր-Ղուկասեանը իսկոյն միջոցներ ձեռք առաւ և ազատեց բայազէտի բերդը։

Պատերազմը վերջանալուց յետոյ Սամսօնը ստացաւ մի քանի պաշտօններ, իսկ յետոյ գտնվում էր Շարուր-Դարալագեազում տեղական պահակախմբի գլխաւորի պաշտօնում։

Ո՞վ էր վանդերլօն.

Շարուր-Դարալագեազի նախկին գաւառապետը, որի իշխանութեան տակ գտնվում էր Սամսօն Տէր-Պօղոսեանը։

Վանդերլօն ամեն ամիս, բաժանելով ծառայողների ռոճիկները, տալիս էր Սամսօնին ոչ թէ այնքան փող, որքանի համար նա պահանջում էր նրանից ստորագրութիւն, այլ աւելի քիչ։ Անուանական կերպով գրվում էր ծառայողների մի յայտնի թիւ, իսկ իրապէս պահվում էին քիչ ծառայողներ։ Մինչդեռ ռոճիկը վերցվում էր լիակատար հաշուով։ Երբ որ Սամսօնը վերջապէս գաւառապետին յայտնեց, որ նա անկարելի է համարում ստորագրել «ստացված» այն գումարը, որ նա չէ ստացել, գաւառապետը նրան հանդգնացրեց ասելով, որ նա անում է այդ բոլորը նահանգապետի գիտութեամբ։

Սակայն այդ բոլորը սուտ դուրս եկաւ։ Նահանգապետը բանից բոլորովին անտեղեակ էր։

Վերջապէս...

Վերջապէս, ինչ երկարացնեմ, բանը հասաւ

digitised by A.R.A.R.@

դատարանի: Սամսոնը ուրիշ ելք չը գտաւ և դանգատվեց:

Դատաստանական պալատը պարզեց, որ վանդերլօն 3,600 րուբլուց աւելի վերցրել է ապօրինի կերպով, իրան թոյլ է տուել մինչև 300 կեղծիքներ գործելու և կատարել է նաև ուրիշ չեղծուածներ:

Մինչև 80 վկայ հաստատեցին կեղծիքները և չեղծուածները:

Սամսօնը արդարացաւ, իսկ վանդերլօն դատապարտվեց երեք տարվայ բանտարկութեան:

Այժմ ես ձեզ հարցնում եմ՝ արդեօք Գօգօլի «մեռած հոգիները» չեն կենդանացել ձեր առաջ: Արդեօք չեղած ծառայողների ոճիրները չեն յիշեցնում այն գրողի անմահացրած տիպերի մասին, որի մահից անցել է ամբողջ կէս դար:

Ինձ կարող են ասել, որ դա բացառութիւն է:

Երանի թէ այդպէս լինէր:

—

Բայց, օրինակ, Խլեստակօվները կան մեր կեանքում:

Նայեցէք ձեր շուրջը:

Ամեն տեղ նրանք կան և մեծ քանակութեամբ:

Ամենքը «զապրանիչկից» ու մայրաքաղաքներից են իսում այնպիսի ոճով ու բառերով, որ Գօգօլի Խլեստակօվը նրանց առաջ բոլորովին կը նահանջեր:

Ես այլ ևս չեմ իսում մեր արտասահմանեան «աստուածաբանների» և աշխարհաւեսների մասին:

Դրանք ինչ ուզում են՝ ասում են: Մեր խնդիրը հասարակութիւնն էլ տեսած էր լսել և հա-

digitised by A.R.A.R.@

ատալ Եւ նա կը չարունակէր այդ մոլորութեան մէջ մնալ, եթէ Խնատակօճլեները չը մերկանային շուտով և չը ներկայանային նրա առաջ իրանց էութեամբ։

Ես չեմ ուզում լինքս անուանել նրանց և թուել նրանց դործերը։

Դրանցով կը զբաղվի մրցանակի հանձար աշխատողը։

Ես իմն օրինակ առաջ բերի վարպետների յետևը գտնվող բազմաթիւ և բաղմատեսակ կնանքի փոքրիկ խորշից մի երկու նմուշ։

Նրանցից հատորներ կարելի է կազմել։

Ես կը սպասեմ ընթացքին աշխատասիրութեան։ Մրցանակի գումարը պատրաստ է և կը տրվի, երբ աշխատասիրութիւնը լիակատար կերպով ներկայացված կը լինի։

Այդ աշխատասիրութիւնը կարող է լինել և պատկերատպարտ։

Գրքի տպագրութեան և պատկերներ պատրաստելու ծախքը ստանձնում եմ ես ինձ վրա։

Շատ աչքի պայմաններ են, այնպէս չէ։

---

digitised by A.R.A.R.@

LXVIII

(9 դեկտ. 1901 թ., «Մշակ» № 273)

Ես նստած էի «Մշակի» խմբագրատանը և կարդում էի մի պատկերազարդ հրատարակութեան վերջին տետրը, երբ ներս մտաւ նամակաբերը։

Խմբագրատանը սպասում էին նոր պօստին։ Այդ օրը նամակաբերը ուշացել էր, ուստի նրա դալը մի առանձին ուրախութիւն պատճառեց։

Նամակաբերը թափեց սեղանի վրա նամակների մի մեծ կոյտ և հեռացաւ։

—Արդեօք ես նամակ չունեմ, հարցրեց լրագրի աշխատակիցներից մէկը։

—Ես էլ եմ սպասում նամակի, յայտնեց մի ուրիշ աշխատակից։

Նամակների հասցէները աչքի անցնելուց յետոյ երևաց, որ նամակների կէսը պատկանում էր խմբագրութեան, իսկ մնացածը զանազան անձերի։

Ես էլ այդ օրը ստացայ երեք նամակ իմ ծանօթներից, որոնցից մէկը շատ հետաքրքրական տեղեկութիւններ էր հաղորդում էջմիածնի նորագոյն «աստուածաբանների» ախորժակութիւնների մասին։

Իմ նամակների մասին, որոնց թիւը աճում օր մեծանում է, կը խօսեմ մի ուրիշ անգամ։

Այսօր պէտք է զբաղեցնեմ իմ ընթերցողին

digitised by A.R.A.R.@

խմբագրութեան ուղղված մի քանի նամակներ մի քանի կ ե ր պ ա ս ն ե ր ի նամուշներ։

Պատռված նամակներից մէկի մէջ կային մի քանի կ ե ր պ ա ս ն ե ր ի նամուշներ։

—Ինչպէս էք, պարոններ, հաւանում այս նամուշները, դիմեց մեզ խմբագիրը՝ ցոյց տալով նամուշները։

—Ո՞նչ նամուշներ են, հարցրինք մենք։

—Սրանք պատրաստվում են մեր գաւառում, այն էլ հասարակ արհեստանոցում։

—Մենք տնտղեցինք նամուշները և նրանց մեծ մասը հաւանեցինք։

—Այդ նամուշները, յայտնեց խմբագիրը, ուղարկվել եմ մեզ, որպէս զի մենք ցոյց տանք հմուտ անձերի և տեղեկանանք, թէ ինչ եղանակով կարելի կը լինի նրանց վաճառահանել։

—Ինչո՞ւ են դիմել խմբագրութեան, հարցրի ես։

—Նրանք չը գիտեն՝ թէ ում դիմեն, պատասխանեց խմբագիրը։ Նրանք նեղութիւն են խնդրում, որ ստիպված են նեղութիւն պատճառել խմբագրութեան։ Տեսնենք դուցէ կարողանանք տեղեկութիւններ ժողովել և հաղորդել։

Մինչ մենք ուսումնասիրում էինք այդ նամուշները, խմբագիրը դրեց մեր առաջ մի թերթիկ, որի վրա նկարված էին գեղեցիկ ծաղկաթերթ և թռչնագրեր։

—Ինչպէս էք հաւանում այս տառերը, հարցրեց նա։

—Սա մի օրիորդից է, որ ուզարկել է խմբագրութեան իր կազմած ամբողջ տառերից մի թերթ իբրև նմուշ և խնդրում է, որ մենք

digitised by A.R.A.R.@

դանվանք նրա աշխատության համար հրատարակիչներ։

Արդարև դեղեցիկ տառեր էին, մանավանդ ձաղկապրերը։

—Մեծ նա ինքը չէր կարող հրատարակել, հարցրեց մեկը։

—Երևի ոչ, պատասխանեց խմբագիրը։ Օրիորդը ներողություն է խնդրում, որ նա ստիպված է նեղություն պատճառել խմբագրությանը։ Ջը գիտէք արդեօք, ոմն կարող է յանձն առնել մի այդ տեսակ գործ։

Մենք առաջարկեցինք մի քանի ծրագրեր, բայց ոչ մի վերջնական եզրակացության չհանք։

Մյուս նամակները վերաբերում էին խմբագրության։ Նրանցից մի քանիսը պարունակում էին լուրեր և անյետաձգելի նիւթեր։ Նամակները ևնթարկվելին խմբագրական գրիչների արագ բովազործության, որպէս զի չուշանով ուղարկվեն տպարան։

—

Ես բռնել էի ձեռքումս կերպասների նմուշները և տառերի նկարները և մտածության մեջ էի ընկել։

—Որքան օգնություն կարելի է հասցնել դաւառի մարդկանց, որոնք յաճախ անպաշտպան վիճակի մեջ են գտնում իրանց ամենահասարակ դէպքերում...

Այդպէս մտածում էի, երբ խմբագիրը լուեցաւ դրից իմ առաջ մի նամակ։ Նա կարծես դուշակել էր իմ մտածմունքները։

Կարդացի նամակը։

Գրողը նախ և առաջ ներողություն էր խնդրում, որ նա ստիպված է նեղություն պատճա-

digitised by A.R.A.R.@

ուել խմբագրութեան և յետոյ յայտնելով, որ նա մի քանի աչող փորձեր է արել կատարեալ, քարեալ ատամներ չինելու, խնդրում էր աջակցութիւն իր ակսած գործը գարգացնելու և ընդարձակելու։

Խմբագրատանը հերթական ամենաշտապողական գործերը վերջացան։ Եւ օգտվելի առաջ բոլէներից և խօսելի ինձ հետաքրքրվող հարցի մասին։

— Ի՞նչ էք մտադիր անել այս նամակների վերաբերութեամբ, հարցրի ես։

— Եթէ մեզ օգնողներ լինեն իրանց խորհուրդներով և գործով, պատասխանենք խմբագիրը, մենք կարող կը լինենք բաւարարութիւն տալ նամակ գրողներին։

— Պէտք է անպատճառ պաշտպանել այդ մարդկանց, ասացի ես։

— Շատ ցանկալի է, համաձայնվեցին բոլորը։ Ինձ համար հետաքրքրական էր, թէ արդեօք չատերն են այդ տեսակ հարցերով դիմում խմբագրութեանը, թէ օրանք բացառութիւններ են։

Խմբագիրը ցոյց տուեց մի արկղ նամակներով լիքը։

— Եթէ հետաքրքրվում էք, առաջարկեց նա, ահա այստեղ չատ կան զանազան տեսակ դիմումներ։

— Ես հաճութեամբ մօտեցայ արկղին և ակսեցի ծանօթանալ նամակների հետ։

—

Նամակներից մէկը գրում էր մի երիտասարդ, որ մտադիր է գործնական գիտութիւններ ձեռք բերել՝ գաւառում ապրելու և գործելու համար։

digitised by A.R.A.R.@

Ներեցէք, ասված էր նամակի մէջ, որ ստիպուած եմ նեղութիւն պատճառել խմբագրութեանը, բայց չը գիտեմ թէ ուր կարող էի դիմել իմ հարցերուն։ Ես խնդրեմ իմ յոյժ տալ թէ ինչու, որ գաղտնի, ինչ կապուածքում եմ կարող էի ստանալ կատարելագործուած դիւղատնտեսութիւն, որպէս զի յետոյ, վերադարձած մեր գաւառը, ես գործեմ հայրենի օջախում։

Նամակը գրուած էր պարզ և անկեղծ ոճով։

Յիրաւի, որքան ցանկալի կը լինէր, որ երիտասարդի ենթադրութիւնները իրագործուէին գործնականապէս։

Մի ուրիշ նամակ ասում էր՝

Ներեցէք, որ ստիպուած եմ նեղութիւն պատճառել խմբագրութեանը, բայց իրրև բացատրութիւն չնորհք արէք իմ խնդիրքը կատարելու։ Ես ուղարկում եմ այս նամակի հետ առանձին արկղով մի քանի հատ երկ և հողե։ խորհրդակցեցէք այդտեղի քիմիկոսների և փորձառների հետ և յայտնեցէք, թէ դրանք ինչ են և ինչ գործածութիւն կարող են ունենալ։

Երրորդ նամակի մէջ ասված էր՝

Ներեցէք, որ ստիպուած եմ ձեր բազմազբաղ ժամանակը խլելու և մի նեղութիւն պատճառելու։ Խնդրում եմ ուղարկէք մեր վաճառականական գրասենեակի հասցէն երկրագործական գործիքների մի ամբողջ ցուցակ և մեզ ուղարկէք, եթէ ձեզ չը դիմնանք, ուր դիմենք։

Չորրորդ նամակ՝

Ներեցէք ձեզ պատճառած նեղութեան համար, և խորհուրդ տուէք, թէ ինչ տեսակ գործ ունեցող բանուոր մեր տեղում, որպէս զի նա

digitised by A.R.A.R.@

Նամատակարարման լինի մեր տեղական պահանջներին

Հինգերորդ նամակ՝

Ներեցեք, որ ամբողջ ինք նեղությունը պատճառել...

Ինչպես տեսնում էք ընթերցող, բոլոր նամակներն էլ ակնարկում են նեղության համար, որ նրանք ապրում են խմբագրության նրանց ինդիրքով, ուստի ես այլ ևս չեմ կրկնելու այդ նախատրտունը, համարելով, որ դա ինքն ըստ ինքեան պէտք է հասկացվի։

Հինգերորդ նամակի հեղինակը ինդրում էր յայտնել, թէ որ ֆիրմաներից նա կարող էր ձեռք բերել ամենաէժան և ամենալաւ գրաթաներ նրանց գործի համար։

Վեցերորդը ինդրում էր վարձել նրանց գրասենեակի համար մի լաւ ուսուցիչ, որին ճանաչում լինէր և որի վրա վստահութիւն ունենար խմբագրութիւնը։

Եօթերորդը յայտնում էր, որ նա հնարել է ներմուծել գործի մէջ և ցանկանում է ստանալ արտօնութեան վկայական, բայց չը գիտէ ուր դիմել։

Ութերորդը հարցնում էր, թէ ինչ ձևով նա կարող է իրան համար որոշեցնել մի ուղղ և խելօք մանուկ, որը կարողանար արժանաւոր ժառանգ լինել։

Իններորդը յայտնելով, որ ինքը ունի մի որոշ գումար, ինդրում էր խորհուրդ տալ կազմելու մի նպատակայարմար կապակ բաղադրանք նպատակի համար։

Տասներորդը մանրամասն պատմում էր իր ամուսնական կեանքի դժոխքը և խորհուրդ էր

digitised by A.R.A.R.@

հարցնում, իմ ինչ ձևով նա կարող է ամուսնանալ ընտանեկան ձևով բնելու

Տատնիկ կնոջը խնդրում էր գանել իր նշանների համար խոհեմ, հաւկատ մի հայուհի— բօննա ձեռնատու վարձատրութեամբ

Տատնիկենց խնդրում էր կազմել նրա համար հայ պործողների լուսանկարների ժողովածու և ուղարկել նրան վերադրի վճարով։

Եւ այն և այլն։

Սրկզի մէջ կար մինչև 200 նամակ։ Եւ թնդթնդոցի չաուրը, բայց այլ ևս չէի կարդում մանրամասնօրէն, այլ միայն պրռնում էի խնդրերի իմաստը։

Նամակները շատ էին բեռ և նրանց ուշադրութեամբ ուսումնասիրելու համար շատ ժամանակ էր հարկաւոր Այդ պէտք էր յատկացնել մի ուրիշ աւելի ազատ ժամանակի կամ այդ նամակների մէջ նոյն ձիծաղելի և պարզամիտ բաներ, իսկ երբեմն և մեծ անհեթեթութիւններ, բայց նամակների մեծամասնութիւնը պրաւում էր իմ ուշադրութիւնը իր պրակտիկ յայտնութիւններով։

—Հետաքրքրական են և շատ հետաքրքրական, բացականչեցի ես Սակայն կարողանում էք դուք արդեօք գոհացնել այդ հարց տուողներին

—Փորձեցինք, պատասխանեցին խմբագրութեան անդամները, բայց այդ գործով կանոնաւոր կերպով զբաղվել մենք անկարող ենք։ Շատ հեշտ է նամակ գրելը և հարց տալը. բայց նրան պատասխանելը միտքդ ցաւ է տանջում ու երբեմն մի քանի օրով դադար ես տալիս նամակներին։

digitised by A.R.A.R.@

—Ճիշտ է, համաձայնելի եմ, որ հարցերից մի քանիսը բարդ են և պահանջում են տեղեկություններ ժողովել զանազան անձերից և հիմնարկություններից։

—Անյեալ տարի, նկատեց խմբագիրը, ես նախրեցի տան երեկոյ յատկապէս այդ նամականիներին և հարկ կարդացայ մի երեսուն նամակի պատասխան տալ այն մանրամասնութեամբ և լրջութեամբ, որոնք կարևոր էին իւրաքանչիւր օգնութիւն հասցնելու համար, սակայն այդ դիմումները անվերջ են և խմբագրութեանը տալիս են այնպիսի մի ծանր յանձնարարութիւն, որ նա անկարող է ներան կատարել, չը վերաբերվ իր անմիջական լրագրական պարտականութիւններին։

—Պէտք է մի առանձին մարդ հրաւիրել այդ նամականերով զբաղվելու համար, նկատեց կատակով խմբագրութեան անդամներից մէկը։

—Այո, նկատեց միւսը, շատ ախորժելի է և նախանձելի, որ գաւառը այդքան մեծ հաւատ է վերաբերվում մեր խմբագրութեան և նրան է դիմում իր ամեն տեսակ ցաւերով, հոգսերով ու հարցերով։ Բայց այդ բոլորը մեր անմիջական գործի համար երկրորդական նշանակութիւն ունի։ Մենք ունենք լրագրական պարտաւորութիւններ, որոնք նախ և առաջ պէտք է մեզ զբաղեցնեն և որոնց վերաբերութեամբ հասարակութիւնը յայտնում է իր պահանջները, մանաւանդ շատ օգտակար էլ գործեր կան, բայց չէ կարող այդ բոլորը կատարել մի խմբագրութիւն։

—Բոլորն էլ ներողութիւն են խնդրում, որ նրանք ստիպված են նեղութիւն պատճառել խմբագրութեան, բայց գոլ չը պիտեն, որ

digitised by A.R.A.R.@

այդպէս գրողները և դիմողները ոչ թէ տաճ-
նեակներով են, այլ հարիւրներով։ Ձեզ կը թա-
նակեմ տալ նրանց
Վիճաբանութիւնը չարունակվեց մի քէս ժամ։
Բոլորն էլ հանգստութեամբ և հոգածութեամբ
էին վերաբերվում դիմում անողներին, բայց
նկատում էին, որ նրանց բաւարարութիւն տա-
լը մեծ դանդաղութիւն է պատճառում խմբագրու-
թեանը։

—Եթէ նման գրողը դիմէին խմբագրու-
թեանը ոչ անմիջապէս, այլ, օրինակ, թղթակ-
ցով գանվող կոդմնակի անձերի միջոցով, այն
ժամանակ կը թեթևանար խմբագրութեան գոր-
ծը։ Խմբագրութիւնը այդ անձերին կարող էր
յանձնարարել, թէ ինչ միջոցներով նրանք կա-
րող են պարզել իրանց թերթակցութիւնները
և որտեղից հաւաքել անհրաժեշտ տեղեկութիւն-
ները։

—Դա մեզ հեշտ կը էր խմբագրութեան հա-
մար, համաձայնեցին միւսները։

—Օհ, եթէ խմբագիրը, տաղ խմբագիրը, որ-
քան ծանր է մեզ համար, երբ մենք անկարող
ենք լինում պատասխանել նման գրողներին
և նրանց բաւարարութիւն տալ։ Անում ենք,
որքան կարող ենք, բայց միևնոյն ժամանակ
պահանջում։

Խմբագրական գրասենեակի փակելու ժամը
վաղուց անցել էր։

Մենք գրվեցինք։

—Որքան դուք կայ կատարելու տալին տեղ,
մտածում էի, որքան մարդիկ կան ապատ-
րել խորհրդներով, բայց և որքան ցանկու-
թիւններ ու պատրաստութիւններ մեզ մոտ են

digitised by A.R.A.R.@

քնած ու թմրած, կարողութիւն չունենալով գործնական արտայայտութիւն առնելու։

Որքան էլ ցանկանայ լրագիրը լայն կերպով ընդունելու իր պարտաւորութիւնները, նա անկարող է գոհացում տալ կեանքի մէջ երևան եկող հազար տեսակ մանուածոր հարցերին։

Թող ինտելիգենտ մարդը մոռի մեր գաւառի շրջանները և ցոյց տայ միայն թէ ուշադրութիւն դէպի տեղական կարիքները և նա ազատ ժամանակ չի ունենայ, որը այժմ նա խնդրում է թղթախաղի և քէֆերի մէջ։

---

digitised by A.R.A.R.@

LXIX

(1 *մայիսի* 1901 *թ.*, «*Մշակ*», № 279)

Անցյալ տարում ես ցրտահարվեցի, որ տասնյակ ևս բազմաթիվ ծառեր ցամաքեցին և չդուրս եկան ձմռան ցրտերից։ Ես ուրախ էի, որ ինձ ևս մի առիթ տրվեց ծառեր տնկելու։

Ես խոստացայ ծրագիր մտածել։

Մտածում եմ անընդհատ ևս ու ինձ մի ծառ հարկավոր է։ Ծառերի մի ցանկություն, որը արձանագրված են իմ «Մտերմանկարներում»։ Ծառեր լրացնում են իմ ձեռագրերի, հարդարում են նոր վեպս, լուսաբանում են իրենք գաղտնագրի մեկնությունները։ Այդպիսի ծառերը ամենքս էլ ունենք։ Ամեն մեկս ունի մի ծառ, որի հետ կապված է մի հիշատակ։ Ես ունեմ մի ծառ և պատմելու եմ նրա մասին։

Բայց ես ունեմ պատճառներ մի ուրիշ ծառի մասին խոսելու, որից մեզ հետ է մնացել միայն հիշատակը, որովհետև կարող էին նրանք էլ ցրտահարվել, եթե իմ ընկերները ուշով, ինչ կոչվում է, պատճառներ չը լինեին...

Ծառը պետք է, որ ուրախ լինի ամեն մի ընթրիքում։

Պետք է ընտրվեր մեծ և տարածվող մի ծառ։ Ընտրությունը մեծ դժվարություն չէր ներկայացնում։ Ես ինձ համար ընտրեցի ընկուզենին։ Ես ինձ համար ընտրեցի ընկուզենին։ Ես ինձ համար ընտրեցի ընկուզենին։

digitised by A.R.A.R.@

ու այդ բանը կը յուսադիր. իսկ այսօր կը պատասխանատուներուն շատերն մէջ դըրուած մի հարց

Իր թղթակիցները հարցնում են ինձնից, արդեօք ես ցանկութիւն և պատրաստակամութիւն չունեմ առաջիկայ 1902 թուականին ձանապարհորդելու

Երանք սխրանքը կերպով հրապուրում են ինձ հետ լինել երանց ապրում քաղաքում և պատրաստ են երանք իսոստանում են ինձ շատ բարոյ բաներ ցոյց տալ և սովորել

Անցեալ տարի ես ճանապարհորդութեան մի՛ քանի անգլերում և իմ տպաւորութիւններն մի մասը հաղորդեցի իմ ընթերցողներին

Այդ ճանապարհորդութիւնը տեղացրեց իմ թշնամիների թիւը, բայց տեղացրեց և բազմաթիւ նոր բարեկամներ մի քանի օրով, որոնց մէջ այժմ տեղ շատ սրտակից անձնաւորութիւններ Այդ ճանապարհորդութիւնը ինձ կոտրեց գրական գործերի հետ

Անհրաժեշտ ճանապարհորդութիւնը ցանկալի է ինձ համար

Բայց ինչպէս կարող եմ երանն իրագործել ես ինչ ծանօթով,—ինձ համար անցեալ է բոլորովին

Սիրէ իմ ցանկութիւնն հասկնալ և մեզ ծրագիրներ տեղեակ անել ես կը ցանկայի գալ մեր երկրի բոլոր կողմերը և նոյն իսկ այցելել մեր երկրից դուրս մի քանի տեղեր, օրինակ, Անգլիայում հրատարակուած երկերը, Պարսկաստանը և Թիֆլիսը

Բայց ո՛ւր գտնել ժամանակ

Այդ բոլորում մեծ դերի կոչ պատասխանում

digitised by A.R.A.R.@

ներ և ուսումնասիրութիւններ անելու համար։ Այդպես կը տեսնէք մեր ուրիշ քաղաքներուն և գաւառներուն վախճած երիտասարդներին գանազան խաչեր և մահու գրութիւններ։ Մի օր տրամը պիտի են, միւս օրը հարուստ, մի օր տրամը խնդրում են, միւս օրը չնորհներ բաժանում, մի օր տրամը հանճար և խոնարհ պաշտօնեաներ են, միւս օրը վհատած, խրոխտ և հպարտ հրամայողներ։ Լսեցէք տրամը խօսքերը, խոստումները և երդումները գանազան ժամանակներում և համեմատեցէք միմեանց հետ։ Բացում կը գտնէք և բոլորը հոգիներն անվերջ տրտունջներ և խեղդվող գաղափարներ անոր մեծագոյն հատկութիւնն են։ Ամեն բան կայ Բազումս. հաւատ, ոգի, հարստութիւն, վայելք, ճգնաժամ, անամօթութիւն, խելք, յիմարութիւն, խղճի բոզք և խղճի թաղում։ Բազմաթիւ ընկերակցութիւններ և բազմաթիւ արդարացումներ ընկերներն և գրպանները։

Բազում չէ կարելի չը գնալ և, է հարկէ, կը գնամ։ Երկաթուղին միջոց է տալու գնալ այնտեղ մի քանի օրուն։ Պէտք է օգտուիլ այդ յարմարութենէն,

Իսկ Գանձակը։

Մինչ է կարելի է մտանել Գանձակ։ Որտեղ կը տեսնէք աւելի լաւ բէֆ, քան Գանձակում։ Որտեղ կը գտնէք այնքան այգիներ, այնքան կարտոֆներ, այնքան տանկուտներ, այնքան չիտորներ, այնքան դաչաներ, այնքան գոյներ և այնքան թեկեր ու խոտաբծեր, քան Գանձակում և նրա շրջակայքում։

Իսկ Բամբուռը

Գրուխչ է Բամբուռը, երբ մտածում ես թէ

digitised by A.R.A.R.@

դա մի դատ է ինչ-որ տրտունջների, մի բամբասանք է ինչ-որ ենթադրությունների համար Աստված կարծում ես, որ պետք է լինի ներքին կապակցություն, մտքի միասնություն մի խոստովանության մեջ, որ Աստված մեծ է և հավատարիմ իր խոստումներին և պատճառ է տալիս ակնկալելու քաղաքականություն Աստծո է, ընդարձակված է, պարզամիտ և դատ է հետաքրքրական մի տող, որ դեր ունի է կատարել մեր երկրի կեանքում, նախ արդյունաբերական, ապա և ուրիշ տարրերների

Իսկ ինչպիսին, որ անվերջ են գաղափարական կռիվները ընդհանուր ընդունված ընթացքին գործում, որ Մարկսը վճռական դեր է կատարում մի ով պետք է տանձնել այս կամ այն պաշտոնը, որ հրեաները ազատություն են վայելում իրանց կրոնքից և ինչքան ուրիշ հարցերից, որ կան անել տնտեսական կյանքներ և անձեռնարկ կյանքներ, բայց չատ քչեր ունեն նախանձելի կյանք և անուն

Թևերիկը դեպի հարմար և չարունակելիքը համառարերը

Անցնում ենք և տրտնջալ այդ համառարհամ գնալ Աֆրիկեա, Ալբարտրոսով, կարա, կապրուան, Էջմիածին, Երևան, Նախիջևան և Ադրբեջան իմ ուժ եմ այժմ խնամում Այդ մի և նոյն տեղերում ապրելով են տրամադրելու պրոյեկտ մի տեսակ ներքին կապ Մերի համառարհամ

digitised by A.R.A.R.@

կան չէ այդ տեղերը նորից այցելել և նորից մանրամասնարիել։

Իսկ Շուշի՞ն։

Դա մի ամբողջ տիեզերք է, ուր աստղերը, մոլորակները, կայծակը, որոտը միմեանց հետ միատեսակ պար ու խաղի մեջ են։ Շուշին իր բաղդատար մետրապոլիտի նման միատեսակ բայլականչում է «էլ էն չըմ, էլ էն չըմ», բայց չէ կարողանում հասկոզել պէտք է գնալ և տեղն ու տեղը տեսնել։ Շուշին նշանաւոր է իր Յիսուսի, Աբդիւլ-բաղի, Բնիկ և այլ երգիչներով։ Շուշին չը գիտե ինչ անել. արդեօք պահպանել հարազատ կերպով Թօխմախի արբազան աւանդութիւնները և հասկացողութիւնները, թէ «էլ էն չըմ, էլ էն չըմ» ասելով ընկնել տուրնիւրների ու Ֆլիրտի աշխարհը։ Նա կանգնած է երկու ծայրայեղութիւնների մէջ։ Ո՞վ կարող է ասել թէ նա ինչ ելք կը գտնի։ Արժէ Շուշին տեսնել. նա վաղուց ցանկութիւն ունէի նրան այցելելու։

Իսկ Շամախին, Գէօկչայը, Նուխին, Լանքորանը, Նոր-Բայազէթը, Արդահանը, Արդուինը, Գօրին, Սղնախը, Թելաւը, Ջաքաթալան և ուրիշ տեսակ տեղեր։ Մէթէ այնտեղ կնանք չը կայ, մէթէ այնտեղի մարդիկը չար ու բարի չունենն։

Ունեն և հետաքրքրական են չատ տեսակետերով։ Հետաքրքրական են և այնպիսի գիւղեր, ինչպէս, օրինակ, Խդըր, Դարաքլիսա, Աչտարակ, Դաւալու և ուրիշ մեծ գիւղեր։

Բայց...

Բայց արդեօք կարելի է այդ բոլոր տեղերը կարճ միջոցում այցելել։

Անհատակ ոչ։

digitised by A.R.A.R.@

Իսկ քան ու պոռթ չինել միայն ճանապարհորդելը, երբ ինձ վրա կան և ուրիշ պարտաւորութիւններ, անկարելի է։

Ուրեմն ինչ պէտք է անել։

Ես կարծում եմ, թէ լաւ կը լինի հատուած խոստում չը տալ, որ ես անպատճառ այդ բոլոր տեղերում կը լինեմ և նայել հանգամանքներին ու յարմարութիւններին։

Ճանապարհորդութիւններ անպատճառ անելու եմ։ Դա կարելի է ասել հատուած կերպով։

Բայց խոստումներ և որոշ խոստումներ չանենք։

Թող իմ թղթակիցները, որոնք ինձ հրաւիրում են գանազան տեղերից, հաւատացած լինեն, որ ես նրանց հաղորդածները ուշադրութեամբ կարդում եմ և երբ նրանց այցելեմ՝ կօգտուեմ նրանց տուած նիւթերից։

Միայն թէ սոգերի աղաղակը կը խանգարէ ամեն բան հրատարակ հանելու...

---

digitised by A.R.A.R.@

LXX

(20 դեկտեմ. 1901 թ., «Մշակ» № 282)

Երէկվայ օրը պարունակում էր մի առանձին խորհրդաւորութիւն։

Յիշողութիւնների, զուգադիպութիւնների, համեմատութիւնների մի օր էր դա։

Նա ծնում էր մի շարք խորհրդածութիւններ։ Նա առաջ էր բերում և մխիթարական ափսոսանք և տխուր արամադրութիւն։

Ես խօսում եմ իմ ապաւորութիւնների մասին։

Սակայն, ընթերցող, մենք ձեզ հետ չատ ենք ունեցել ընդհանուր ապաւորութիւններ։ Միասին ուրախացել ենք, միասին տխրել։

Հաւատացած եմ, որ և ներկայ դէպքում մենք չատ մօտ ենք միմեանց։

Համեցէք լսել։

—

Երէկ, դեկտեմբերի 19-ին, Գրիգոր Արծրունու մահվան տարեդարձի օրն էր։

«Մշակի» խմբագրութիւնը ամեն տարի այդ օրը նրա գերեզմանի վրա կատարում է հոգեհանգիստ։ Ոչինչ նա արեց և այս տարի։ Գնացինք գերեզմանատուն։ Նայեցինք թանգագին հիւրին։ Դարձեալ վերանորոգեցինք մեր յիշողութեան մէջ այն օրը, երբ մենք բաժանվում էինք «Մշակի» անմոռանալի հիմնադրից և

digitised by A.R.A.R.@

վերադարձանք խմբագրատուն շարունակելու գործել նրա սիրած «Մշակի» համար։

Ինձը տարի է, որ Գրիգոր Արծրունին չը կայ մեզանում։ Բայց նրա հիմնած և կազմակերպած «Մշակը» շարունակում է յիշեցնել այն ուժեղ գործի մասին, որին նա նուիրել էր իր երիտասարդական կեանքի բոլոր ոյժերը, իր ամբողջ մտածողութիւնը, իր բարոյական էութիւնը։

Տարիները անցնում են, կեանքի փաստերը և երևոյթները փոխվում են, առաջ են գալիս նոր հարցեր, նոր խնդիրներ։

Բայց սկզբունքը մնացել է անխախտ։ Դիրքը մնացել է նոյնը։

«Մշակը»՝ առաջադիմական մտքերի և գաղափարների քարոզիչ, «Մշակը»՝ ժողովրդական շահերի պաշտպան, «Մշակը» հասարակական երևոյթների քննադատող, «Մշակը» հասարակական առաջադիմութեան դևկավարող։

Այդպէս ենք ընդունում և հասկանում «Մշակը» և ներկայումս։

Այդ է այն զգացմունքը, որով մենք գործում ենք ամեն օր, տարիներ շարունակ։

Այդ է այն նշանաբանը, որ իբրև երգման բանաձև ամեն տարի կերպարանվում է մեր առաջ, երբ Արծրունու մահվան տարեդարձը մրմնջում է մեր ականջին գլորվող տարիների մասին։

—

Այս անգամ Արծրունու մահվան տարեդարձի օրը, նոյն դեկտեմբերի 19-ին, կատարվում էր Վահան Ալիշանի հոգեհանգիստը նրա մահվան քառասունքի օրը։

Վահան Ալիշանի հոգեհանգիստը կարծես և-

digitised by A.R.A.R.@

կել էր այդ օրը յիշեցնելու մեզ, որ Արծրունին նրա ամենամեծ յարգողներից և սիրողներիցն էր։

Այդ հոգևհանգիստը այդ օրը յիշեցնում էր մեզ այն երկարատև և եռանդուն կռիվ մասին, որ մղում էր Արծրունին այն մարդկանց դէմ, որոնք՝ կրօնական խտրութիւն յարուցանելով՝ բաժանել էին հայ-լուսաւորչականին հայ-կաթոլիկից և հայ բողոքականից։

Ալիշանը, Այտընեանը, Պեշիքթաշլեանը, Սդամեանը և ուրիշ այլ տեսակ գործողներ, որոնք դաւանում են կաթոլիկական կրօն, մեր հարազատներն են, մեր եղբայրները, մեր մտերիմները։ Կրօնը մեզ չը պէտք է բաժանէր և խորթացնէր միմեանցից։ Սեղ և Նրանց միւս տեսակ ոգևորում են մեր ժողովրդի յարգացման խնդիրները, մեր երկրի առաջադիմութիւնը, մեր պրականութեան ծաղկումը։

Այդ էր այն մշտական քարոզը, որ տալիս էր Արծրունին և որը պակաս կամաց-կամաց ազդել մտքերի վրա, խորտակել նախապաշարումները և բաժանված սրտերը միացնել։

Փաստերը ցոյց են տալիս, որ այդ քարոզը դրական բարերար հետևանքներ առաջացրեց։

Անուղղելի մնացին մեր նոր թխած «աստուածաբաններըն», որոնք սակայն արդէն ղրում են, որ ժողովրդական միասկզբութեան հետ կատարներ անելը հեշտ բան չէ։

—

Ալիշանը պատկանում էր ուրիշ սերնդի, ուրիշ աշխարհահայեացքի, քան Արծրունին։ Սակայն Ալիշանը մօտ էր մատաղ սերնդին

digitised by A.R.A.R.@

իր աշնիւ և դաղափարական ձգտումներով, իր մաքուր ոգևորութեամբ։

Նա ուսումնասիրում էր մեր երկիրը։ Նա նկարագրում էր Այրարատը, Սիւնիքը, Սիսուանը նրանց մէջ ևղած բնական հարստութիւններով և ազգաբնակութեամբ։

Այդ էր և մատաղ սերնդի ցանկացածը։

Նրանց միացնում էր ընդհանուր ոգևորութիւնը, մայր երկրի բարօրութեան դաղափարը։

Բայց անկասկած ուղինները և տրամադրութիւնները տարբեր էին։

Ալիշանը գործում էր վանքում և մեկուսացած կեանք էր վարում։ Արծրունին գործում էր եռացող կեանքի ալիքների մէջ հրապարակական աստիճանի։

Ալիշանի համար հայրենիքը մի ուխտատեղ էր, անվերջ ոգևորութեան մի սրբավայր։ Արծրունու համար նա մշակութեան, աշխատութեան և մաքառման մի դաշտավայր էր։

Ալիշանը վատաբանում էր, երգում, ողբում, իւնկարկում մայր երկիրը և նրա բնակիչներին։ Արծրունին քննադատում էր իրականութիւնը և դրական գործունէութեան հրաւէրներ կարդում։

Ալիշանը աղօթում էր ժողովրդի համար։ Արծրունին զանգակներ էր ջարդում քնած ժողովրդին արթնացնելու համար։

Ալիշանը ծունկ էր չոքում ամէն մի աւերակի, ամէն մի մամուռի առաջ։ Արծրունին մաքրում էր աւերակները, դէն էր շպրտում մամուռը, քաղհան էր անում վայրենացած անպատանուտ և նոր սերմեր էր թաւում հայրենի հողում։

digitised by A.R.A.R.@

Ալիշանը կանչում էր նախնիների ուրուականները՝ ոգևորելու լքեալ սրտերը։ Արծրունին ժամանակակից լուսաւոր մարդկութեան կատարած քաղաքակրթական հրաշալիքները դնում էր ժողովրդի առաջ, դրդելով նրան ձեռք բերել նոյնը իր կեանքի համար։

Սիրելի Նահապետը օրհնեց մեզ բոլորիս, հաւատ ներշնչելով դէպի մայրենի երկրի բարգաւաճումը։ Արծրունին անխոնջ քննութեան ենթարկեց այն բոլոր խնդիրները, որոնք վերաբերում են երկրի բարգաւաճման և ստեղծելով իր «Մշակը»՝ աւանդեց մշակել ոչ միայն համբենի հողը, բոյսը և նրա հարստութիւնները, այլ և նրա ժողովրդի միտքը և նրա հասարակական խնդիրները։

—

Երէկ, դեկտեմբերի 19-ին, կատարվեց Բագուում և Ամուսնացուաւ կանգառնի թաղումը։

Կանգառնը Գրիգոր Արծրունու մտերիմ ընկերներից, անկեղծ բարեկամներից և աւելնալով յարգողներից մէկն էր։

Կանգառնը մատենագիր չէր, հեղինակ չէր։

Նա դրծում էր կեանքի մէջ, իբրև հասարակութեան մի անդամ։

Եւ ահա իբրև մի այդպիսի անդամ նա հարուստ մի ներուժ էր մեր կեանքում։

Նա չը միջացաւ մեր հասարակական խնդրում միջնորդում, նա մնաց նոյն բիւրեղային ոգին, նոյն գաղափարական մարդը, ինչ որ էր նա իր պատանեկութեան լաւագոյն րոպէներում։

digitised by A.R.A.R.@

Դուք գիտեք այն հին պատմութիւնը, որ վերաբերում է հայ երիտասարդին։ Ուսանող ժամանակ նա իդէալիստ է, անձնազոհ, գաղափարների աշխարհում ապրող։ Վերջացնում ուսանողութեան տարիները և ահա սկսվել նրա անկումը. նա մոռանում է իր պաշտած գաղափարները, իր սրբազան երդումները։

Ուսանողը մնում նրա մէջ և մնաց եսասէր արհեստաւորը։

Կաճկաճեանի գրաւիչ ոյժը հէնց նրա մէջն էր, որ նա մնաց հաւատարիմ իր ուսանողութեան գաղափարներին, որ նա մնաց թարմ, երիտասարդ և պատանի իր ոգևորութեան մէջ, որ նա չը խոնարհեց այն ամենի առաջ, որոնք հարիւրաւոր երիտասարդների գլուխին անդունդը։

Կաճկաճեանը չը վիշտաւ և պահպանելով իր աչխոյժը, կատարում էր մշտական գողգոթի, կշտամբողի՝ պատգամախօսի դեր, անդադար յիշեցնելով մարդկանց իրանց հասարակական պարտաւորութիւնների մասին։

Կաճկաճեանը կեանքի մէջ կատարում էր այն, ինչ որ մամուլի գործողները գրական աչխարհում նա հասարակական խղճի արթնութեան պահապանն էր այն չրջանում, ուր նա ապրում էր։

Եթէ կաճկաճեաններ շատ լինէին մեր կեանքի մէջ, մեր հասարակական մթնոլորտը չէր նեխվի այնպիսի հեչտութեամբ և մատաղ ոյժերը այնքան շուտ չէին խեղդվի կեանքի հոսանքի մէջ։

Կաճկաճեանը ամենամեծ բարեկամն էր «Մշակի» և նրա հիմնադրի։ Նա մի և նոյն ժամանակ ամենամեծ հետևողն էր աւետարանի։

digitised by A.R.A.R.@

Մեր աստուածաբանները տակաւին այդ չեն կարող հասկանալ։

Բայց հասկանում է մեր սերնդի լաւագոյն մասը։

—

Կարճ պատմեցի, կարճ նկարագրեցի։

Ինձ հարկաւոր էր միայն յիշեցնել ընթերցողին մի քանի դէպք։

Այսպէս էր դեկտեմբերի 19-ը 1901 թուականին։

---

digitised by A.R.A.R.@

LXXI

(23 դեկտ. 1901 թ., «Մշակ» № 285)

Աչնանային մի հրաշալի օր էր։ Քաղաքի բնակիչների մեծ մասը բայց օդուն էր։ Հիւանդը ժպտում էր, չքաւորը արեգակի տակ տաքանում էր, տան մէջ մշտական մեխւածը դուրս էր եկել զբօսնելու։ Բոլորի դէմքերը պարզ և զուարթ էին։

Միայն մի տեղ մարդիկ ունքերը կիտած մտազբաղ և մոայլ դէմքերով այս ու այն կողմ էին վազում, միմեանց հետ խօսում, խորհրդակցում, վիճում, աւում-լաւում և դարձեալ դէս ու դէն ընկնում։

Չեմ ասելու, թէ դա ծրտեղ էր։ Գուշակեցէք։

Հաւաքւել էին հոգևորականներ։

—Ոչ ոք եկեղեցի չէ գալիս ժողովրդից, գանգատւում էր քահանաներից մէկը։

—Եւ լաւ է անում, որ ոչ ոք չէ գալիս, նըկատեց միւսը. այն ժամանակ մենք էլ ստիպւած պէտք է եկեղեցի գնայինք։

—Չէ, ես ուզն օրերի մասին եմ խօսում, ուղղեց առաջինը. թէ չէ ես էլ գլուխ չեմ կորցնում ամեն օրւայ ժամի համար։

—Հա, ուզն օրերի բանը ջոկ է, համաձայնեց երրորդը։ Այդտեղ ժողովուրդը իսկ որ նամադուլ է անում, պէտք է գայ թող ուզն օրերը, տնօրհ-

digitised by A.R.A.R.@

նէքը, մկրատ-թիւնը, պատակը և թաղուամը բերին իրանց եկամուտը կարգին, այլ ևս ոչինչ չէ հարկաւոր։

Բոլորն էլ կարծես համաձայն էին։

Բայց գանվեց և բողոքող, որ վրդովեց ախրող անդորրութիւնը և սաստիկ զայրացրեց միւսներին։

—Իսկ ինչ ենք մենք տալիս ժողովրդին. արդեօք մենք, հոգևոր հայրերս, մեր պարտաւորութիւնները կատարում ենք. արդեօք մենք բարի գործերի օրինակ ենք լինում, մենք մի կարգին քարոզ խօսո՞ւմ ենք, մի որ և է հանրօգուտ ձեռնարկութեան գլուխ կանգնում ենք երբ և իցէ...

—Լաւ, լաւ, իմացանք. դու շատ խելօքն ես ու իմաստունը, հնչեցին ձայներ այս ու այն կողմից։

—Մենք մեր կոչման բարձրութիւնը չենք ճանաչում, չարունակեց բողոքողը, չուտով մենք կը դառնանք արհամարհված ու ատված մի դասակարգ...

—Ի՞նչպէս ես համարձակվում, աղաղակեց մի ծերունի քահանայ։

—Դա լրութիւն է, դա յանդգնութիւն է, դա չափազանց անձնապաստան յայտնութիւն է, աղաղակեցին սրբատաւակեր հայրերը։

Քահանաներից մէկը մօտեցաւ բողոքողին և կամացուկ շշնջաց նրա ականջին։

—Տօ, ինչ ես պահանջում, ասայ նա. շատ լաւ է, որ դրանք քարոզ չեն խօսում: Եթէ ժողովուրդը երբեմնապէս ծօներին եկեղեցի է գալիս, նա այդ էլ կը թողնի՝ զղուելով սրանց քարոզներից։

Ճանապարհ դուրը բացվեց և մտաւ մի քահանայ, որ ուշացել էր։

digitised by A.R.A.R.@

—Մի տխուր լուր իմացայ—Ալիշանը մնաց, յայտնեց նա։

—Վահ, բացագանչեցին մի քանի անձինք. ափսոս, ափսոս։

—Ո՞վ է Ալիշանը, հարցրեց արքեպիսկոպոսը մեկը. գանա չէիր ոքմին էր։ Ի՞նչ սանապի մարդ էր։ Ես եաչի մարթ իմ ու մեր քաղքումը էդ թավուր անուն չիմ իմացիր։

—Հա, դրուստ մինք էլ չինք իմացի, յայտնեցին մի քանիսը։

Գիտցողները փորձեցին բացատրել մի քանի խօսքով։

—Սմեն մի աշակերտ գիտէ այժմ, թէ ո՛վ էր Ալիշանը, իսկ դուք հոգևոր հայրեր, այդ չը գիտէք, ասաց բողոքող քահանան։

—Դուն վուր գիդիս, բարձր թախտի վրան իս նստի, այ, բարկացած պատասխանեց մի սրբապատկեր։

Այդ տեսարանի չարունակութիւնը ինձ յայտնի չէ։

—

Ըլ գիտեմ, որքան ճիշտ է իմ լսածը։

Թիֆլիսի առաջնորդարանում, ասում են չատ մեծ հոգս էր դարձել այն բանը, որ հայ լուսաւորչականները չին յաճախում հայ կաթոլիկների եկեղեցին։

Պէտք է ստիպել, պէտք է յորդորել։

—Թող հայ լուսաւորչականները սովորեն դնալ հայ կաթոլիկների եկեղեցին, ասում էին նրանք միմեանց։ Մենք հոգևորականներս էլ կը դնանք այնտեղ հոգևոր և բարոյական սխիթարութիւն ստանալու։

Ի՞նչ անել։

Ի՞նչ միջոցների դիմել։

digitised by A.R.A.R.@

—Ահա մի դեպք, որից կարող ենք օգտվել դեղեցիկ կերպով, առանց ներանցից աւազապօյնը։

—Ի՞նչ դեպք է, այդ ինչ բախտաւոր բեր-մունք է, հարցրին հլուները։

—Ալիշանը մեռաւ, և անկասկած կը ցանկա-նան հոգեհանդիսաններ կատարել...

—Շատ լաւ, բայց դա ինչպէս կարող է օգ-նել ձեր դիտաւորութեանն։

—Սպասեցէք փոքր ինչ։ Մենք կարդալենք մեր եկեղեցիներում հոգեհանդիսաններ կատա-րելը...

—Բայց դա անկարելի է, մրմնջացին հլու-նները։

—Ինչու է անկարելի։ Ալիշանը կաթոլիկ էր կասենք, այդ պատճառով արգելում ենք։

—Բայց...

—Ինդրեմ։ Երբ որ մենք կարդալենք, այն ժամանակ բնական է, որ բոլորը կը վազեն դէպի կաթոլիկների եկեղեցին...

—Դա անկասկած է։

—Մենք կարող ենք այնտեղ ուղարկել մեր տիրայուհիներին, մեր երդիչներին, մեր ուսու-ցիչներին. կր գնանք մենք բոլորս, և եթէ հարկաւոր լինի՝ նոյն-իսկ կատենաբանենք...

Ես կարծում եմ, որ այդ բոլոր խօսակցու-թիւնը հնարված բան է, բայց շատ լաւ սա-ղեցրել են։

Յիրաւի, Ալիշանի հոգեհանգստին ժողովված էր մեր բազմութիւնն։ Այնտեղ ներկայ էին թէ մեր ինտելիգենտ և թէ վաճառական ու ար-հեստաւոր դասակարգերը և թէ հայ-լուսաւոր-չական հոգևորականները։

Արդարև, որքան մխիթարական էր տեսնել Ալիշանի յարգողներին միատեղ հաւաքված։

digitised by A.R.A.R.@

Հայ կաթոլիկների ժամասացությունը, որ համարեա ոչնչով չէր զանազանվում լուսաւորչական եկեղեցու ժամասացությունից, ծանօթ լեզուն, երգերի և տաղերի աղճատութեան տակ տառապ էր բոլորին. «եղբայր ենք մենք».

Առաջնորդարանը հատաւ իր նպատակին։
Ժողովուրդն էլ հատաւ իր նպատակին։

—

Ո՛րքան ապերախտութիւն եւրօպացիների կողմից։

Նրանք իրանց քաղաքական բոլոր մեքենայութիւններով պատել են օսմանների պետութիւնը, ձգում են նրա բոլոր հիւթերը և մի պուխ նրան պախարակում են։

Նա քայքայում է։
Նա ուժասպառ է դառնում։
Նա բարոյապէս այլ ևս զօրութիւն չունի։
Նա անիրաւութեան, ապօրէնութեան, հարստահարութեան երկիր է...

Այս տեսակ են նկարագրում եւրոպական ճանապարհորդները և հետազօտողները այն պետութիւնը, որ ժառանգել է հին Բիւզանդիոնից նրա բոլոր կալուածքները։

Եւ ինչ։

Դուրս է գալիս, որ այդ բոլորը սուտ է, կատարեալ սուտ։

Ո՛րքան ուրախացայ, որ ինձ աջողվեց այդ սուտը իմանալ։

Ես վերցրի Կ. Պօլսի լրագրների վերջին համարները։

Եւ այնտեղ գտայ Սմիրնիայեան
Ես Նոյեմբեռնի կարապետի իմ կարդացածը։

digitised by A.R.A.R.@

«Երկրին ամեն կողմերը, ակռաով մայրաքաղաքէն մինչև գաւառները... ամեն ոք անդորր կեանք մը կանցընէ։

«Երկրին նլնմտական և անտեսական ընդհանուր վարկը միշտ կը բարձրանայ գգալի կերպով։

«Ճարտարարուեստը և վաճառականութիւնը կը զարգանան յարաճուն կերպով։

«Երկաթուղիի գծերը երկրի ամեն կողմերը կերկարին։

«Հանրօգուտ շինութեանց մեծ մղում կը տրուի։

«Դպրոցները կը բացուին ամենահեռաւոր գիւղերու մէջ իսկ։

«Բարեկարգուած հաստատութեանց թիւը կաւելնայ և հիւանդանոցներ, անկեղանոցներ, աղբիւրներ կը կառուցուին։

«Նշանակելի է և այն չարժումը, որ կը տեսնուի երկրագործական ու արհեստական արտադրութեանց մէջ, որոնք հետզհետէ կը կատարելագործուին ու երկրէն դուրս ալ կը փնտռուին ու արտածութեան կարևոր տարրերը կը կազմեն»...

Եւ այլն և այլն։

Այս ուղղութեամբ չարունակեցէք ինքներդ եւևակայել։

Ես կարդացի և իսկոյն հաւատացի։

Բուն աղբիւրին են բղխում տնտեսութիւնները։

Ի՞նչպէս չը հաւատանք։

digitised by A.R.A.R.@

LXXII

(30 *դեկտ.* 1901 *թ.*, «*Մշակ*» № 291)

Երէկ խմբագրատանը մի փոքր ազատ ժամանակ ունէի։ Օգտվելով այդ հանգամանքից աչքի անցկացնելու լրագրների կոյտը և ստացված յայտարարութիւնների ցուցահանդէսը։

Ի՜նչ խոստումներ, ինչ հրապոյրներ։

Մէկը միւսից առատ, մէկը միւսից գրաւիչ և դիւթիչ։

Կարդալով այդ խոստումները՝ իմ մէջ ցանկութիւն էր ներսում առանալ բոլոր լրագրները և ամսագրերները։

Բայց նրանք չատ-չատ էին թւով և ես նոյն իսկ ժամանակ չեմ ունենայ նրանց կարդալու։

Բայց... կայ և մի ուրիշ բայց։ Այդ այն է, որ նոյն տեսակ խոստումներ արված էին և անցեալ տարի, և երկու տարի առաջ, և երեք, չորս, տասը տարի սրանից առաջ։

Ը՛նդ նայելով այդ հանգամանքին, յայտարարութիւնը անում է իր ազատութիւնը, բեկլաման ստանում է լրագիրը։

—Փորձեմ այս անգամ էլ այս լրագիրը բռնելու, առում է խրատչանչիւրը, գուցէ խոստպէս խոստումները իրագործվեն..

Ու փորձում են։

Անկասկած, չէ կարելի ժխտել, որ կան հրատարակութիւններ, որոնք կատարում են իրանց խոստումները։

digitised by A.R.A.R.@

Բայց որքան մարդ էլ մեռած է հիասթափված և խաբված։

—

Կարդալով այդ յայտարարությունները և խոստումները, մտածեցի, որ եթէ ես ցանկանայի խոստումներ անել, ինչ պէտք է ասէի։

Չէի կարող խոստանալ հաճելի, ուրախացնող, չոյող, փայփայող բաներ։

Ես գուցէ պէտք է ասէի տխրեցնէի, դառն ուրախացնէի։

—Ես ձեզ յաճախ պէտք է ներկայացնեմ մեր կեանքի անճոռնի երեսյթները, ասում է իմ յայտարարութիւնը։

Կարող է արդեօք այդպիսի յայտարարութիւնը նոր մարդիկ դրաւել դէպի իմ գործը։

—Ես ցոյց կը տամ, շարունակում է յայտարարութիւնը, թէ ինչպէս վարչական ապարատը պատել է հասարակութեան բոլոր խաւերը, թէ ինչպէս անձնական կրքերը և դրդումները ջլատել են մեր հասարակական ոյժերը, թէ ինչպէս երիտասարդութիւնը հրաժարական է դարձել բուրժուայի թևատրութիւններին, թէ ինչպէս մեր նորագոյն սատուածները կեղծ ու պատիր հաճոյախոսութիւններով և սոփեստութեամբ ոտի տակ է տալիս լուսաւոր ձգտումները և համակրելի հասարակական հոսանքները...

Եւ այսպէս անվերջ։

Ինչպէս եք հասանում այսպիսի յայտարարութիւնը։

Ինչ անեմ։

Մտքէ կարող եմ սուտ խոստումներ տալ։

—Օրինաւոր, օրինաւոր, պահանջում են ընձեռից։

digitised by A.R.A.R.@

Ահա ձեր առաջ այն վայրերը, որոնց հետ կապել էք դուք արյունաղան ապաստիքներ և ա-կընկալութիւններ։

Դուք լաւ գիտէք, որ նրանք կարող էին կարգ ու կանոն մտցնել իրանց վարչութեան մէջ, կարող էին վերացնել անարժան քահանաների ձևռնադրութիւնը, կարող էին զսպել գող և յափշտակիչ արէցվոխաններին, կարող էին վերջ դնել պաշտօնեաների ժամայական գործունէութեան, կարող էին ազատել մեր թեմական դպրոցները առաջնորդական տանձգութիւններից...

Չը կայ, չը կայ ոչինչ։

Ազգը մաշվում է, քամվում է, իսկ ժամանակը գնում է արագ։

Այս է իրականութիւնը։ Ինչմի՞ւ ես ձեզ ուրախացնեմ։

Նայեցէք մեր երիտասարդութեան։ Մենք ունենք զանազան բարձրագոյն դպրոցներում հազարից աւելի ուսանող։ Տարիներ չարունակ այդ բազմաթիւ ուսանողութիւնից չատ քիչ մարդիկ են մտնում ասպարէզ գործելու հասարակական նպատակներով։

Մեր աչքը չուր կտրեց ապասելով։ Անցնում են տարիներ, բայց ոչ ոք, կամ համարեա ոչ ոք չէ աւելանում հասարակական ասպարէզում։

—Ո՞ւր էք դուք, ուսանողներ, մեր սիրելիներ, ո՞ւր էք դուք մեր յոյսեր, մեր գարնան ծաղիկներ, մեր ապագայ գործողներ։ Սպասում ենք ձեզ։

Սյդպէս աղաղակում ենք տարիներ չարունակ։

Չը կայ պատասխան։

Չը կայ եկող։

Ես հաշւի չեմ առնում այն կսկիծը վերջաց-

digitised by A.R.A.R.@

բանձներին, որոնք գալիս են մեզ մօտ առաջարկելու, որ մենք հաճոյանանք, շողոքորթենք, Սօթյալի ճաշակով զեկավարվենք և ուժեղների բարեհաճութիւնը գործնականապէս գնահատենք։

Այս է իրականութիւնը։ Ինչպէս ես նրան վատաբանեմ։

—

Ես չեմ կարող խոստանալ, որ նոյն իսկ չեմ վշտացնի և այն մարդկանց, որոնց հետ մինչև այժմ բարեկամներ ենք հաւատարմել, եթէ այդ բարեկամները այնպիսի բարեկամներ կը լինեն, ինչպէս Մելեան քահանայի նման «մշակականները»։

Դա էլ բնորոշ երեւոյթ է։

Տգիտութիւն գործելու նպատակով նրանք իրանց անուանում են «մշակականներ»։

Յոյս ունեն իրանց հնարագիտութեան ոյժի վրա։

Բայց այդ տեսակ քաղաքականութիւնը կորցրել է իր ոյժը։

—Գուցեկէք դուք իմ խղճուկ հրատարակութիւնը, իմ յօդուածները, իմ պատկերները և իմ գործունէութիւնը, իրօխտանում է մի ուրիշ այդ տեսակ «մշակական»։

—Գուցեկէք դուք իմ արած բարեգործական ձեռնարկութիւնները, թելադրում է երբորդ այդ տեսակ «մշակական»։

—Գուցեկէք իմ ոտանաւորները, իմ արած թարգմանութիւնը, իմ յօրինած ցնծագրութիւնները, փոխում են մեր ականջներին բաղմաթիւ ուրիշ այդ տեսակ «մշակականներ»։

Մենք չենք գուշակում։
Մենք չենք դրուատում։
Չենք ուզում կեղծել։

digitised by A.R.A.R.@

Չենք ուզում խնամիութիւն անել։

Եւ ահա պատրաստ է անմիտ և կնդծ բանաձևը՝ «մենք պակաս մշակականներ չենք, քան դուք, մենք Գ. Արծրունու հետ ծանօթ ենք եղել. նրա հաւանութիւնը վայելել ենք մեր գործերի համար»։

Նոր տեսակ խաչադողութիւն, նոր տեսակ դիմակաւորութիւն։

Կարծես Գ. Արծրունին իր օրով քչերին էր դէն չպրտել այն պարոններից, որոնք իրանց ձևացնում էին իբրև աւելի լաւ առաջադիմականներ։

Ո՞ւր են այդ պարոնները։

Նրանք հին դիմակաւորներ էին, այժմ նրանց միանում են նոր դիմակաւորներ։

Այսպէս է իրականութիւնը։ Կարող եմ արդեօք խոստանալ ներկայացնելու նրան աւելի համակրելի և ախորժելի կերպով։

Դատեցէք ինքներդ։

—

Ինչպէս տեսնում էք, ընթերցող, իմ յայտարարութիւնները, իմ բեկլամները միտուր դուրս եկան։

Ես ձեզ չեմ կարող խոստանալ, որ ձեզ յաճախ չեմ վշտացնի։

Ճիշտ է, երբեմնապէս ես ժպիտ և ծիծաղ կը ցոլացնեմ ձեր շրթունքների վրա, բայց այդ ժպիտը և ծիծաղը առաջ կը գան մեր կեանքի ծաղրական երևոյթներից։

—Մինչ դուք պէտք է թագցնէք ամխիթարտական և ուրախ երևոյթները, կը հարցնէ ընթերցողը։

Ի հարկէ ոչ։

Հապար անգամ ոչ։

digitised by A.R.A.R.@

Ես նրանց որոնում եմ և ես նրանց սիրահարն եմ։ Ես պատրաստ եմ ամեն մի համակրելի փոքր արձանագրելու։ Ես ատելի սիրում եմ դրականը, քան բացասական երևույթները։ Բայց չեմ կարող կանգնել իրականությունը և չափազանցնել դրականը ու լռել բացասականի մասին։

Ո՞վ է մեղավոր, որ բացասական երևույթները ատելի շատ են մեր կեանքի մէջ, քան դրականները։

Ով է, ո՛վ։

Գտանենք այդ մեղավորին և նրան պատժենք։

Եթէ այդ պարծի մէջ դուք ես, ընթերցող, կօգնէք ինձ, գուցէ բարերար հետևանքների հասանենք։

Յամենայն դէպս, նոր-տարվայ առթիվ, ևկոտ անգամ կը խօսեմ մի համակրելի երևույթի մասին։

Ահա և իմ բեկլամը։

digitised by A.R.A.R.@

LXXIII

(1 յունվ. 1902 թ., «Մշակ» № 1)

Ես խոստում էի արել ընթերցողին
Այն է, խօսել մի հասկրելի երևոյթի մասին։

Այդ հասկրելին—մեր առաջադիմական մըտածողութեան երեանոյթն է։

Ներկայ հատորը ինձ թոյլ չէ տալիս, որ ես նուիրեմ բաւականաչափ տեղ իմ «Մանրանկարի» հասարը։

Ուստի միւս անգամ։

Իսկ առ այժմ զբաղվինք նոր-տարվայ նուէրներով։

—

Այս տարի չատերը ախորժակ են ստացել նոր-տարվայ նուէրներ անելու։

Ինձ ուղարկված են նուիրատուութիւնների ցուցակներ Թիֆլիսի երկու թաղից և մի քանի քաղաքներից։

Երևանի նուիրատուչները անուանել է իրան «կարիճ», Էջմիածինը՝ «Գիրառուր», Օրեսայինը՝ «Սրթուն», Բաքուինը՝ «Բաթման-Ղլիչ», Ալեքսանդրօպօլինը՝ «Փահլեվան», Թիֆլիսինը՝ «Դարդիմանդ» և «Կարօն»։

Նուէրների թիւը հասնում է 222-ի։ Դրա վրա պէտք է աւելացնել և այն, որ ես էի պատրաստել նոր-տարվայ համար։

digitised by A.R.A.R.@

ի հարկէ անկարելի է բոլոր նուէրները յաւերժակարգել այստեղ։

Նրանցից մի քանիսը չատ են մատնաւոր և տեղական, միւսները չենք կարող տեղ հատկացնել «ինչ-ինչ յարգելի պատճառներով»։

Ծաղկաքաղ անելով կազմեցի հետևեալ փոքրիկ ցուցակը, որ և ներկայացնում եմ ընթերցողին։

Սնանկացած նաւթատէրերին՝ նաւթարդյունաբերական պաշտօններ՝ գործերը շրջանելու համար։

Գիրքմանական համալսարանին՝ գրեթէն վարդապետի աստիճանաւորուելիք նաւթիւնը հոգևոր անգիտանների մասին իբրև դիսերտացիայ։

Բարեգործական ընկերութեան պատուարկղին՝ նպաստներ չքաւորներից, տնանկներից և մուրացիկներից։

Կարսի երկաթուղուն՝ երկաթեայ ճանապարհորդներ, որոնք չը ջարդվէին խորտակումներից։

Ալէքսանդրօպօլի և Կարսի վաճառականներին՝ մի մեծ երկարատև պատերազմ առևտուրը ոտքի կանգնեցնելու համար։

Կաղզուանին՝ տեսնել երբ և իցէ կռուանձար—եկեղեցին չինված-զարդարված։

Բաղուի և մասամբ Թիֆլիսի վաճառականներին՝ 20,000 թիթեղեայ թերթեր նոր ցուցանակների, նոր

digitised by A.R.A.R.@

«Վրվեականներ» հատոր «бывшій» մակդիրով

Բազում ընթերցողներ յաճախորդներ, թերթերը չը պահած ամսագիրներ

Աշըղ-Ջիվանու երկերի հրատարակիչներին՝ վերջացնել քաոսերդ դարուս հրատարակութիւնը

Իջմիածնի միաբանութեան՝ գուն իսիմ պարունը կախեիս աւ պինի, Ղազարի թարգմի «լաւաչ» ու Սևանայ «գեղաքնար» ձուկը

Հայ կատակարգներին՝ մէկ բուբլի գոյնը բանկը՝ հազար տարուց յետոյ միլիոնների բարեգործութիւններ անելու համար:

Հայ ընթերցողին՝ ձրի լրագիր

Ալիշանի համար հոգևհանդիսատ չը կատարող հոգևորականներին՝ մի մի խաչ և կամիլաւկա

Կատարողներին՝ աքսոր դէպի ս. Ղազարի վանքը

Օգնասէր հայ քահանային՝ սպասելու կարողութիւն, որպէս զի մի օր վերջապէս ստացվի Խուդավերդեան եպիսկոպոսից պատասխան՝ կատարել հոգեհանդիսատ, թէ ոչ

Ազգապրական հանդէսին՝ չնորհաւոր հին տարի

Կատապետներին՝ ամուր մարակներ վաշխառուների և երէցփոխանների կաշիներից կազմված

Պարակահայերին՝ ֆարմանը հանել մահուդի տակից

digitised by A.R.A.R.@

Ախալքալաքցիներին՝ ազատվել եգիպտա-
ցի հօրեն պատիժներից։
Կարօտ դերասաններին՝ հայ դրամա-
տիական կոմիտէի խոստումները
ավանտաւ։
Թիֆլիս եկող դատարօլնօրներին՝
Պրավդինի խմբի դեմքերի հայելու։
Օսմանեան պաշտօնեաներին՝ XIX
դարի ապաւիկ մնացած ոճիկները։
Բազուի գործակատարներին՝ կի-
րակնօրեայ ազատութիւնը իրակա-
նացած։
Հայ օրիորդներին՝ մինչև բարեկենդան
մի մի մասանի։
Երևանի քաղաքացիներին՝ երկա-
թուղու գնացքով ուղարկվող պօստ։
Մեր երիտասարդներին՝ վաթսու-
նական թուերի ծերերի եռանդը
պաղատարի համար գործելու։
Մեր դրացի ազգութիւններին՝ դրա-
ցիութեան զգացմունքներ։
Մեր բաժանորդներին՝ չնորհաւոր նոր
տարի։

---

digitised by A.R.A.R.@

LXXIV

(13 յունվ. 1902 թ., «Մշակ» № 7)

Նստած էի սեղանի առաջ։

Իմ մտածողությունը զբաղված էր «Մշակի» երեսունամյակով։

Երևակայությանս առաջ անցնում էին բազմաթիվ հարցեր, եղելություններ, հին վէճեր, վառաւոր յաղթանակներ։

Սակայն ես մտադիր չէի պատմություն գրել։ Ինձ պրաւել էր գաղափարների այն համատեղությունը, որ կապված էր մեր առաջադիմական մտածողության հետ։

Գաղափարների այն վիրկարար հոսանքը, գաղափարական ձգտումների այն ահռելական արտայայտությունը, որոնք տեղի ունէին «Մշակի» էջերում երեսուն տարվայ ընթացքում, ոչ մի առաջադիմական չարժում էին առաջացրել հայրենի անդաստանում։

Ես ուզում էի խօսել իմ ընթերցողի հետ և մի քանի խոշոր գծերով արտայայտել իմ միտքը։

Ես ընկղմվեցի մտածմունքների մէջ։

—

Ինձ թուաց, որ իմ ընթերցողի հետ ես տեղափոխվել եմ մի ուրիշ աշխարհ։

—Այդ ինչ աշխարհ է։

Մեր առաջ բացվեց մի մեծ հօրիզոն։

digitised by A.R.A.R.@

Այնտեղ մենք տեսանք մեր ծանօթ իրական կեանքը իր ամբողջութեամբ։ Այնտեղ մեր առաջ հանդէս եկան նրա վրա ներգործող պատճառները իրանց յատկանիշներով։

Այո, դա հայրենի երկիրն էր և հայրենի ժողովուրդը իրանց արժանաւորութիւններով և պակասութիւններով։

Բայց այն լինչ ոգիների խմբեր էին, որոնք սաւառնում էին օդային եթերներում և չրջում հայրենի երկրի մէջ։

—

Ահա մօտեցաւ մեզ ոգիներից մէկը և ողջունեց մեզ։

—Եկէք իմ ետևից, ասաց նա, ես ձեզ կը ծանօթացնեմ այս աշխարհի հետ։

Նա բռնեց մեր ձեռքերից և սկսաւ օդի միջով։

—Նայեցէք, ասաց նա։

Անցանք սարեր, ձորեր, տափարակներ, բազմաթիւ պուղեր իրանց արտերով և այգիներով։

Ոգին տալիս էր մեզ ամեն մի անկիւնի մասին մանրամասն տեղեկութիւններ։

Մենք մտանք պուղական տներ, տեսանք նահապետական օջախի անդամներին։

Ոգին պատմեց մեզ, թէ ինչպէս են ապրում մարդիկ, թէ ինչ հասկացողութիւններ ունեն նրանք իրերի մասին, ինչ ցաւ ու դարդ ունեն նրանք առօրեայ իրանց կեանքում։

Մենք մտանք զանազան տեսարաններ, եկեղեցիներ, մենաստաններ, դպրոցներ։ Ծանօթացանք այնտեղ գործող մարդկանց հետ։

—Ո՞վ եք դուք, դիմեցինք մենք նրան, ով եք դուք, որ ամեն տեղ թափառում էք և ամեն բան պարզաբանում։

digitised by A.R.A.R.@

—Ես այն ոչին եմ, պատասխանեց նա, որ վաղուց գործում եմ Ելրօպայում և որ երեսուն տարի է, ինչ որ գործում եմ ձեր մէջ։

—Ձեր անունը, հետաքրքրվեցինք մենք։

—Ուսումնասիրութեան ոգի։

Մենք չկրեմ ոչնչացնեցինք։

—Ես միայնակ չեմ, նկատեց նա։ Ինձ հետ գործում են իմ բազմաթիւ եղբայրները և քոյրերը։ Մեզնից իւրաքանչիւրը իր յատուկ կոչումը և գործն ունի ձը տեսութիւն։

Ոգին անհետացաւ։

—

Նրա մոխարէն առաջ եկաւ մի ուրիշը։

—Գնանք ինձ հետ, ասաց նոր ոգին։

Նա բռնեց մեր թևերից և մենք տեղափոխվեցինք դէպի մի մեծ նկարչական արհեստանոց, ուր աշխատում էին բազմաթիւ նկարիչներ։

—Ահա, ասաց նա, ձեր առաջ հրաշալի նկարների մի ժողովածու, որ օրէցօր աւելի ու աւելի հարստանում է։ Այստեղ չարունակվում է անընդհատ մի ոգևորված գործ և հանդէս են բերվում նորանոր ստեղծագործութիւններ։

Գործը եռում էր։

—Նայեցէք այս պատկերին, դիմեց մեզ ոգին։ Սա ներկայացնում է գաղափարի հաստատ ոգին վաճառերին։ Մէջտեղում գրված է խաչելութիւնը, նրա շուրջը գետեղված են հազարաւոր նահատակներ։ Այստեղ են Վանդեանները, այստեղ են Գալիլէյը, Բրունօն, Հուսը և շատ շատերը։

Գեղեցիկ էր պատկերը։

Նա գաղափարի յաղթութիւնն էր փառաբանում։

digitised by A.R.A.R.@

—Այս մեծ պատկերի վրա ներկայացված են երկու հակառակ տեսարաններ։ Ձախ կողմում նկարված են աղքատների, զրկեալների խմբեր, իսկ աջ կողմում նույն խմբերը գոհ, բավական և ուրախ։ Սա ժողովրդական բարօրության դաղափարն է։ Սա աւետեաց երկրի նշանակն է։

Պատկերը գրաւիչ էր և չափազանց արտայայտիչ։

—Նայեցէք և այս պատկերին։

Նայեցինք։

Պատկերի վրա նկարված էին զանազան դասակարգի մարդիկ թէ ճոխ և թէ հասարակ հագուստներով, միմեանց ձեռք բռնած, միմեանց գրկած։ Օտարները միմեանց ողջունում էին իշխանը համբուրվում էր չինականի հետ։

Պատկերի տակ նշանակված էին հատատարության, եղբայրության բառերը։

Ոգին ցոյց տուեց բազմաթիւ ուրիշ նկարներ։ Մէկը միւսից աւելի հրաշալի. մէկը միւսից աւելի տպաւորիչ. մէկը միւսից աւելի դիւթիչ։

—Ո՞վ էք դուք, հարցրինք մենք, ասացէք մեզ, ինչ դեր էք դուք կատարում։

—Ես իդէալների ոգին եմ, ես գաղափարների ոգին եմ, ասաց նա։ Այն բոլորը, ինչ որ գանվում է ներքնում, ապէտ է բարեվոխիվ, բավարարվիլ, նորոգվիլ, որպէս զի կատարեալ իրագործել այն իդէաները, որոնք նկարված են և նկարվում են մեր առջևում։

Մենք բաժանվեցինք։

Պատկերների պատճենները մեզ չեն մնացել

digitised by A.R.A.R.@

էր։ Մենք հաղորդում էինք միմեանց մեր զմայլումը և հիացումը։

Պէտք էր տակտն առաջ պնդել և միւս ոգիների հետ ծանօթանալ։

Մեր հանդէպ կանգնած էր մի հրաշագեղ կոյս, որի դէմքը անսահման քնքշութեան հետ արտայայտում էր և լրջութիւն ու մտախոհութիւն։ Մենք ողջունեցինք միմեանց։

—Ո՞վ էք դուք, չքնաղ ոգի, հարցրինք մենք։

—Ես կանանց իրաւունքի, կանանց աչխատանքի, կանանց երջանկութեան ոգին եմ։ Հետևեցէք ինձ։

Մենք հպատակվեցինք հրաւէրին։

—Նայեցէք, ասաց նա, այն խումբ օրիորդներին, որոնք ժպտվել են իրանց շուրջը մատնաւէններին և դատարկում են։ Նայեցէք միւս խմբին, որ պաչտպանում է անարգված ամուսնու և մօր պատիւը ու իրաւունքները։ Նայեցէք երրորդ խմբին, չորրորդին, հինգերորդին... ճիշդ է, դեռ դրանք շատ քիչ են թւով, դեռևս են կազմակերպվում. բայց շարժումը սկսված է և անկն օր ուժեղանում է։

—

Մի նոր ոգի դրաւեց մեր ուշադրութիւնը։

Նա ամեհի, հրեշտակային մի հայեացք ուներ, որ փոզաբչում էր մեր սրտերը անսահմանի պատանքով։

—Նայեցէք, ասաց նա, այն գիւղերին, որոնց երդիկներից ծուխ չէ բարձրանում։ Սնեսող կարծես կեանքը մարել է։ Սնեսող թշուառութիւնը խորտակել է նրան կեանքը։ Օգնութեան հասէք նրանց։

—Ինչով կարող ենք, հարցրինք մենք։

—Ամեն բանով, ասաց նա։ Տուէք հաց,

digitised by A.R.A.R.@

տուէք զգեստ, տուէք փող, տուէք դեղեր հիւանդներին, կազմակերպեցէք օգնութեան գործը։ Կատարէք սուրբ մաչել է խեղճերին։ Շտապեցէք։

—Ո՞վ էք դուք, դիմեցինք նրան։

—Ես կարեկցութեան, ես գթութեան ոգին եմ։ Ես էի, որ դրդեցի ձեզ օգնելու երկրաշարժից վնասածներին։ Ես էի, որ կօգնէի հաւաքելի հազարաւոր որբիկների համար։ Ես էի, որ սուի ճիրաններից ազատելի չատերին։ Ես էի, որ նպաստներ կորզեցի աղքատ ուսանողների, տնանկների, թշուառների համար։ Գնացէք և այս աղէտին օգնելու։

Մենք գնացինք։

—

Տխուր տեսարանը ճնշել էր մեզ։

Ոգին թէև անհետացել էր, բայց մեր ականջին հնչում էին նրա կոչը և հրաւէրը։

Մեր առաջ յայտնվեց մի ուրիշ ոգի։

—Այն, ինչ որ դուք տեսաք, ասաց նա, բաղդի և դէպքի չար բերմունքներն էին։ Բայց ինչ կասէք դուք այս աղէտներին։

Նա տարաւ մեզ մի չարք անանկացած և թշուառացած դիւղեր։

—Սրանց արիւնը ծծեցին վաշխառուները, հարստահարող տանուտէրը, կաշառակեր դատաւորը, կեղեքող իշխանութիւնը։

Ոգին պատմեց մի չարք գեղջուկների մասին, որոնք վերաբերում էին հասարակական գումարներին։

—Իսկ այստեղ, շարունակեց նա, տեսնում էք այն բարեպաշտ և վայելուչ պարոններին։ Դրանք իրապես մաչեցին և քամեցին ժողովրդի ոյժերը։ Դրանք փարիսեցիներ են, դիմակաւոր-

digitised by A.R.A.R.@

աեր։ Սակայն այն էլ պէտք է ասել, որ դրանք նկատել են փոքր ինչ դողալ և ընկճվել, այն օրից, երբ դրանց արարքները դրվեցին հրապարակի վրա։

—Սակայն ոմ էք դուք, հարցրինք մենք։

—Ես բողոքի և մերկացուցմանց ոգին եմ, պատասխանից նա։ Պէտք է մերկացնել և հարակել չար գործերը։ Նրանք չեն դիմանում գիտակցութեան և լոյսին։

Ոգին ցոյց տուեց մեզ փարիսեցիների և դիմակաւորների չատ զազիր գործեր։

Մեր առաջ անցաւ հոգևոր հայրերի մի անվերջ շղթայ, որոնց մէջ ես ճանաչեցի չատերին։ Սակայն տեղը չէ թոյլ տալիս նոյն իսկ նախուշի համար անուանել նրանցից բնորոշներին։

Մենք տեսանք բազմաթիւ գործողների, պաշտօնեաների, մանրապէտների, գրողների, ճառախօսների, ազգասէրների...

—

Մեզ գրաւեց մի ուրիշ ոգի, որ ձևոքին բռնած էր բահ, ուրագ, մի չանի գործիքներ և արագ-արագ մօտենում էր մեզ։

—Գնանք ինձ հետ, ասաց նա, ես ձեզ ծանօթացնեմ այս աշխարհի հետ։

Մենք հետևեցինք։

Մեր առաջ ձգված էր մի անապատ։ Ոգին, չորացած անապատ։

—Բայց նայեցէք այն արտերին և ծառերին, չարունակից ոգին։ Նրանք զարգացել են ճոխ կերպով։ Այնտեղ ես ամայի տեղ էր, ինչպէս և այս անապատը։ Սակայն ես այժմ գարձել է արդասաւոր և բարեբեր։

digitised by A.R.A.R.@

Կանգնեցինք և ծառայարկ օդակը, ընկած անապատի մեջ, շոյում էր մեր աչքերը։

—Այս բոլոր անապատը կարելի է կերպարանափոխել և դրախտ շինել, պետք է տակավին աշխատանք։

Ոգին մտածեց մի ուրիշ տեղ։

—Այստեղ, այս քարակույտի մեջ, ծածկված են թանկագին մետաղներ, որոնք սպասում են չահագործողների։

Նա ցոյց տուեց և ուրիշ տեղեր և թուեց մեր առաջ գտնվող երկրի հարստութիւնները։

—Տեսնում էք այս անանցանելի ձորերը և սարերը։ Այստեղ կեանք կը սկսվի, երբ ուղիներ կը բացվեն, երկաթուղիներ կանցնեն, լճերի և գետերի վրա նաւեր և շոգենաւեր կը շարժվեն։

Եւ նա ներկայացրեց մի շարք գործնական ծրագիրներ։

—Ահա մի տուար ազգաբնակութիւն, որ աշխատանք է որոնում և սպասում է, որ նրան տրվեցնեն արհեստներ։ Սպասում ենք։

—Ո՞վ ես դու, հարցրինք մենք։

—Ես երկրի արդիւնաբերութեան գործադրման ոգին եմ, որ մնացել եմ կատօտ մեծ գործունէութեան այս հարեւան, բայց դեռ թմրած երկրում։

—

Մեզ տօնեցրեց մի ուրիշ ոգի՝ Ջուռ բազուկներով, ուժեղ կազմուածքով։

Նա դիմեց մեզ բարեկամական խօսքով։

—Հօրիզոնը մեծ է և դուք այստեղ կը տեսնեք արդիւնաբերութեան սիմպիոններ, գեղատեսակ վարձեր, գիւղերի նշխարներ։ Բայց

digitised by A.R.A.R.@

այստեղ մի հիմնական հարց է առաջ գալիս, այն է՝ թէ ու՞մ համար է այդ բոլորը։

Ոգին փոքր ինչ կամաց առաւ։

—Եթէ այդ բոլորը միայն մի քանի ընտրեալների համար է, դա մատնաւոր և ահմատնական մի բան է։ Ես ժողովրդական մասսայի ոգին եմ։ Եթէ կարող էք՝ աշխատեցէք մասսայի, աշխատող տարրի համար ներքաշեցէք պետական տունը, արթնացրէք դասական կեանքը, պաշտպանեցէք ժողովրդական արդիւնաբերութիւնն և ապառողին, ընդարձակեցէք ինքնօգնութեան և ինքնապարծութեան սահմանները։

—

Այդ ժամանակ մօտեցաւ մեզ համարձակ դէմքով, արտայայտիչ աչքերով մի երիտասարդ և անմիջապէս խօսեց մեզ հետ։

—Ես անհատականութեան զաղափարի ոգին եմ։ Իմ բարեկամ ոգին ասաց, աշխատեցէք մասսայի համար։ Այդ լաւ է, բայց դա չէ նշանակում թէ անհատականութիւնը պէտք է ընկճուի և մեռնի։ Մասսան թող այնպէս զարգանայ, որ նրա մէջ անհատը չը զոհուի։ Անհատի քաղաքական անձնաւորութիւնը, նրա պատիւը պէտք է անձեռնմխելի լինեն։ Մարդու անհատական իրաւունքները սրբազան են։

—

Մենք մօտեցանք մի մեծ դահլիճի և ներս մտանք։

Մեզ դիմաւորեց ոգիների մի խումբ։

—Այս ինչ դահլիճ է, հարցրինք մենք։

—Այստեղ, պատասխանեցին նրանք, հանդէս

digitised by A.R.A.R.@

են բերված այն բոլոր միջոցները, որոնցով պէտք է ազդել մարդկանց վրա։

Մենք չրջապատեցինք։

Մի մեծ բաժին յատկացրած էր դպրոցներին։ Այդտեղ կային զանազան տիպերի վարժարաններ, արհեստանոցներ, որոնք վերջանում էին բարձրագոյն դպրոցներով և համալսարաններով։

Դահլիճի մի ուրիշ բաժին յատկացրած էր թատրոնին։ Դա գրաւիչ բաժին էր։ Այդտեղ բազմել էին Շեկսպիրը, Շիլլերը, Մոլիերը և ուրիշներ։

Դահլիճի մի չատ մեծ բաժինը գրաւել էր մամուլը։ Դա հազարգլխեան վիշապի նման մի ճիւղաւորված մեծ գործօն էր։

Մենք չը գնացինք բազմաթիւ մանր-մունր բաժիններըւ

Մամուլի բաժնի մէջ մենք կանգ առանք։ Այդտեղ ընդառաջ եկաւ մեզ հակոյակին մի ոդի հանդարտ քայլերով, խորաքննին հայեացքով, լայնատարած բազուկներով։

—Ողջոյն ձեզ, ասաց նա, մենք վաղուց ի ժամօթ ենք ձեզ հետ։

—Ո՞վ էք դուք։

—Ես նա եմ, ասաց նա, որ արթուն է պահում հասարակական գործունէութիւնը, որ անդադար խօսեցնում է հասարակական խղճմտանքը, որ հետևում է կեանքի մէջ գործողներին, որ գնահատում է նրանց արածները, որ քննութեան է ենթարկում ամեն կենսական երևոյթ, որ մշակում է աշխարհահայեացքներ և համախմբում է համախոհներին միասին։ Ես նա եմ, որ երեսուն տարի շարունակ գործում եմ ձեր մէջ։

digitised by A.R.A.R.@

Նրա ձայնը դարձաւ ահեղ և յաղթական.

—Ես հաւատարմակատն քեզնից պահեցի. թեան ոգին եմ, ես առաջադիմական մտածողութեան զեկավարն եմ.

Մենք չերթանք ողջունելու նրան.

—

Նա հրաւիրեց մեզ դէպի միւս դահլիճը.

Այդտեղ բացվեց մեր առաջ մի կախարդական հանդէս.

Ընդարձակ դահլիճը մէջտեղում դրված էր մի ահագին տօնածառ, որի վրա կախված էին բազմատեսակ լրեր, ելէկտրական կանթեղներ.

Մենք մօտեցանք.

Այդտեղ տեսանք բազմաթիւ ոգիներ, որոնց մէջ ճանաչեցինք մեր ծանօթներին. Նրանցից իւրաքանչիւրը դնում էր տօնածառի վրա իր դրօշակը.

Տօնածառի միջից յօտացին երկու զեղեցիկ աչքեր և մէկը խօսեց.

—Այս բոլոր ոգիները, ասաց նա, պատրաստ են ձեզ ծառայելու. Բայց նրանք կարող են գործել միայն ձեր, մարդիկների միջոցով, ձեր ոյժերով. Տուէք ձեր աշխատանքը, ձեր եռանդը, ձեր գործելու պատրաստակամութիւնը և ես ձեզ կը տամ իմ ոգիների լեգէօնները.

—Բոլորս պատրաստ ենք, դղրդացրին օդը բոլոր ոգիները.

—Իմ ոգիները, չարունակեց ձայնը, գործում են ամբողջ աշխարհում. Նրանք երբեմնապէս գործել են և ձեր մէջ, երբ դուք ցանկացել էք նրանց ընդունել. Սրտի գոհութեամբ յայտնում եմ, որ մեծ սիրով և հրճուանքով ես հե-

digitised by A.R.A.R.@

տեսած էի այն փորձերին, որ դուք անում էիք վերջին երեսուն տարվայ ընթացքում «Մշակի» դրօշակի տակ համախմբվածներդ։ Իմ ոգինները ձեզ գործակցում էին։

Տօնածառի կենտրօնում երևայ «Մշակը» լուսաճաճանչ՝ երեսունամեակի յօբելիանական պատկով...

—Մի քայլ առաջադիմութիւն, չարունակեց ձայնը, արդէն տեղի է ունեցել։ Դա դեռ չատ փոքր քայլ է։ Ձեզնից է կախված ապագան։ Դուք կարող էք յուսալ աւելի երջանիկ օրերի, լուսաւոր կեանքի։ Շնորհաւորում եմ ձեր գործունէութեան երեսունամեակը։

—

Տեսարանը անհետացաւ։

Ես արթնացայ, սթափվեցի։ Իմ առաջ դրված էին թուղթ, թանաք և գրիչ։ Ես թղթի վրա նշանակել էի «Մանրանկար» և կանգ էի առել։

Վճռեցի գաղտնիքները փոխանակ գրի անդիմայնել իմ տեսածը։

Ահա և նա։

---

digitised by A.R.A.R.@

LXXV

(20 *յունվ.* 1902 *թ.*, «*Մշակ*» № 13)

—Մի ինչ-որ թատրոնում, մի երիտասարդական աշխույժ եմ զգում այսօր այստեղ։

Այդպէս աւուր էր ինձ մի ծերունի յունվարի 12-ին, Թիֆլիսի կրուժօկուր։

Այդ չորը տրված էր մի երեկոյթ ուսանողներին օգնող ընկերութեան օգտին։

Կրուժօկի դահլիճները պրաւել էին այնպիսի բազմութիւն, որ չարժվել անկարելի էր այնտեղ։ Պարողների համար տեղ չը կար սկզբում։ Եւ միայն յետոյ, երբ բազմութեան մի մասը գնաց ընթրելու, փոքր ինչ տեղ բացվեց։

Երեկոյթի սկզբին ուսանողական խումբը երգեց ուսանողների համաշխարհային երգը։

Gaudeamus igitur…

Դահլիճը զրկվեց երիտասարդական ձայներից։

Հաստատութիւնը գնցվեց։ Աղմուկը և շուրջը յանկարծ դադարեցին։

Ծերունին պատասխանեց։

—Անցած օրեր, երիտասարդական երազներ, ընկեր նա իմ ականջին։

Ծերունին յիշեց իր ուսանողական կեանքը։

—Անցաւ մեր կեանքը, իսկ ոչինչ չիրագործվեց, դարձեալ ընկեր նա իմ ականջին։

Ուսանողական խումբը երգում էր ոչ երա-

digitised by A.R.A.R.@

ժշտական համաութեամբ և բաւարար ներդաշնակութեամբ, բայց նա գործում էր ուժեղ տպաւորութիւն։

Երգը վերջացաւ։

Դահլիճը դրդաց ծափահարութիւններից և բացականչութիւններից։

Սկավեցին կօնցերտի մէջ բաժիններըւ

Ծերունին բռնեց իմ ձեռքից և ամուր թօթուելով բացականչեց՝

Մենք դժբաղդ ենք, դժբաղդ մի հասարակութիւն։

—Ինչ էք կամենում ասել, դիմեցի ես նրան։

—Սհա տեսնում էք, թէ որքան ուսանողներ կան այստեղ. սակայն դրանք մի քանի չաբաթվայ հիւրեր են։ Տեսնում էք, թէ ինչ գգուանքով և դիւրաղգածութեամբ հասարակութիւնը վերաբերվեց ուսանողական դրամարկղ հիմնելու գաղափարին և չը տեսնված բազմութեամբ չտապեց այս երեկոյթին։

—Ճիշդ է։

—Մենք ունենք, չարունակեց նա, ուսանողներ, ունենք ուսանողական դրամարկղ, ունենք հասարակութիւն, որ համակրութեամբ և քնքշութեամբ է վերաբերվում դէպի ուսանողութիւնը, ունենք ուսանողների ծնողներ, եղբայրներ, քոյրեր, որոնք ապաւում են իրանց սիրելիների կրթութեան աւարտման և վերադարձին։ Բոլորը կայ մեզանում, բայց համալսարան չը կայ։

Նախկին ուսանողը փորը ինչ կանգ առաւ, լաց մանդօլինի վրա նուագածութիւնը և ապա չարունակեց.

—Մինչդեռ մենք համալսարան չունենանք, մինչև որ մեր հասարակութեան մէջ թարմայ-

digitised by A.R.A.R.@

նող տարրերը չը բազմանան, մինք չենք կարող կանօնաւոր առաջ գնալ։

Նուագածութիւնը և երգերը վերջացան Սկաւեցին պարերը։

Պատանեկական զուարթ տրամադրութեամբ մարդիկ պարում էին, կամ ուրիշների պարերին նայում։

Ես տեսնելով չատերի հետ Բոլորի վրա վայում էր երեկոյթի ելեկտրացնող, թարմացնող ժպիտը։

—Գարնանային մի տրամադրութիւն է տիրում այստեղ, ասաց ինձ մի տիկին, որի ուսանող որդին պարում էր դահլիճում։

—Ո՞րքան ուրախ է այսօր անցնում, ճառագեցին իմ ականջին ծանօթ օրիորդներ։

—

—Շատ լաւ է, չատ հաճելի, բացականչեց մի վաղեմի մեղուական, ողջունելով ինձ։

—Հաւանում էք, հարցրի ես։

—Շատ հաւանելի, թարմութեան հով է փըչում այս երեկոյթից, բացատրեց նա։

—Դուք էլ էք խօսում թարմութեան մասին, բացականչեցի ես։

—Ինչու չէ, տրամած պատասխանեց նա։ Ո՞նչպէս կարելի է մոռանալ ուսանողութեան անհոգ, ազնիւ, անկեղծ, ազատ կեանքը։

Նա ինձ հետաքրքրեց։

Մենք խօսակցելով անցանք դէպի բեմը և օգտվելով այն հանգամանքից, որ ազատվեցին երկու աթոռներ, նստեցինք և դրոյի բռնվելու։

Մեղուականը ոգևորված խօսում էր ուսանողութեան, դիտութեան, ազատ մտածողութեան մասին։ Նա յիշեցրեց այն շրջանը, երբ

digitised by A.R.A.R.@

բնագիտության և հասարակական գիտության նշանավոր գրողների ազդեցության տակ մի քանի և վճիռ հասանք առաջ եկաւ Ռուսաստանում

Ես չէի ուզում հաւատալ իմ ականջներին, բայց իրականութիւնը իմ առջևն էր.

Սակայն...

—

Սակայն չուտով տնտարանը փոխվեց, երբ մենք սկսեցինք խօսել մեր առօրեայ գործերի, հոգսերի և խնդիրների մասին

Քանի որ մենք խօսում էինք Եւրոպայի և Ռուսաստանի մայրաքաղաքների մասին, խօսակից ծայրահեղ ազատամիտ և նոյն-իսկ արմատական մի մարդ էր, իսկ երբ անցանք մեր գաւառական գործերին, մեր երկրի մէջ գոյութիւն ունեցող բազմաթիւ հարցերին, այդտեղ նա դարձեալ հանդէս եկաւ իր բնորոշ մեղուական գոյնով

—Ի՞նչպէս, բայականչեցի ես, այնտեղ դուք մտքի ազատութեան պաշտպան էք, իսկ այստեղ սանձահարող: Այնտեղ դուք կին ու ազատ կրթութեան և անհատական իրաւունքի ջատագով էք, իսկ մեզանում նրանց հակառակորդ: Այնտեղ ձեզ հիացնում է հասարակական գործողների պատասխանատուութիւնը, իսկ մեզանում հաշիւ պահանջելը համարվում է անխոհեմութիւն: Այնտեղ դուք հրճվում էք աշխարհական մտքի նուաճումներից, իսկ մեզանում դուք արդարացնում էք կղերականութիւնը և նոյն-իսկ նրան ուզում էք ժխտական ձևերով: Այնտեղ դուք հաւանում էք հասարակական քննադատութիւնը և մերկացումները,

digitised by A.R.A.R.@

Իսկ այսօր վրէժխնդիր էք ամէն մի բողոքից, ամէն մի հրապարակային յայտնութիւնից...

Խօսակից անհանգիստ շարժուձեւեր էր անում և ցանկանում էր ընդհատել ինձ. վերջապէս նա կարող էր իմ խօսքը.

—Այսօր ուրիշ բան է, այսօրուայ պայմանները ուրիշ են, սակայն նա ճնշված ձայնով

Մեր խօսակցութիւնը կորցրեց իր գրաւչութիւնը։ Մենք դարձեալ հին ծամծմած վէճերի մէջ ընկանք։

Իսկ պարոնները ուրախ և զուարթ թռչկոտում էին դահլիճում։ Երիտասարդների և օրիորդների ժպտացող դէմքերը նորից յիշեցրին մեզ, որ մենք ուսանողական երեկոյթի մէջն ենք։ Ես հրաժեշտ տուի իմ խօսակցին և բաժանուեցի նրանից։

Շուտով ընկայ մի համակրելի խմբի մէջ, որտեղ անց կացրի երեկոյթի մեծ մասը։

---

digitised by A.R.A.R.@

LXXVI

(27 *յունվ.* 1902 *թ.*, «*Մշակ*» № 19)

Անցկաց անգամ ես ներկայացրի մի քանի գծեր ուսանողական այն երեկոյթից, որ տրվեց Թեֆլեաուզի

Այն օրը, երբ լույս տեսավ իմ «Մանրանկարը» և ամեն ոևէնգոյ մի ուրիշ երեկոյթի ներկայ լինելու Դա Թեֆլեսի հայոց բարեգործական ընկերության երեկոյթն էր

—Դուք չը գիտեք արդեօք, թէ ինչ առանձին նորութիւններ պէտք է լինեն այս երեկոյթում, հարցրեց ինձ մի օրիորդ

—Չը գիտեմ

—Սաւսա՛ն են, չարունակեց նա, պէտք է լինեն ինչ-որ սխուպրիզներ, անսպասելի զուարճութիւններ

Այդ ժամանակ մօտեցաւ մեզ կարգադրիչներից մէկը Մենք դիմեցինք նրան նոյն հարցով

—Դա մեր գաղտնիքն է, խորհրդաւոր կերպով յայտնեց նա. կտաց կը տեսնէք

Կարգադրիչը գնաց ուրիշի մօտ ու անհետացաւ

—Մէ ինչ մեծ «ձէպօզ» էլ պիտի լի՛ր էսօր էսոր, սաւսա՛ն են, հարցրեց օրիորդի հայրը. ինչ պատ է, որ մէ անհատս պատ չէլի

Բարեգին «Թէէպաուզէ» Theebause-ի տասն էր իսում էր

digitised by A.R.A.R.@

—Ոչ, ոչ, հանգստացրի ընտանեկան բարոյականության արթուն պահապանին. դա շատ հաստատակամ բան է. պետք է նստել ու թեյ խմել, ասրիլ ոչինչ։

—Գոնե մի չայի համար ոմլ է խմացի, մեր յայտարարությունն տալին, էն էլ ֆրանզելվար խօսքերով, մեր մարդ վուչինչ էլ չը հասկանայ։

—Մեւս անգամ կխմանաք, նկատեցի ևս։

—Է էն վուխտան էլ ասրիլ բան կու մօգօնին, չէմ գիտի, վրա բերից քաղքցին խորամանկ ժպիտով։

Օրիորդը և նրա հայրը առաջ գնացին։ Ես գրադվեցի ասրիլ ծանօթներով։ Քաղքցուն նորից ես տեսայ Թէյախմության ժամանակ, երբ նա լուռ էր Միրաղեանի և Մանդինեանի կռւպլետները քաղքցիների մասին։ Քաղքցին հետաքրքրված էր։

—

Երևակայի ծրագիրը հետաքրքրաշարժ էր։ Այդտեղ կային և օրվայ չարիքի մասին կռւպլետներ, և քրդահայկական երգասացություն, և վրացերէն լեզուով երգ, և եւրոպական երգեցողություն, և հայերէն ու ֆրանսերէն տոաստներ, և զանազան տեսակ եւրոպական և ասիական պարեր։

Այդ բոլորը լաւ էր։

Ես ապագայում էլ կարելի է երեկոյթների այդ ծրագիրը պահպանել։

—Սակայն անհրաժեշտ է այս ասիական երգերի և կռւպլետների մէջ աւելի նրբութիւն և ճաշակ մտցնել, նկատեց ինձ մօտ նստած իմ ծանօթ փաստաբանը։

—Ինչպէս պէտք է այդ անէք, հարցրեց նրա

digitised by A.R.A.R.@

հարևանը. խոսք չէ կարելի ասիական երգը եւրոպականի պէս երգել։

—Դրանով մենք չենք ցանկանում, նկատել տալ վատատաղանը, ամենևին չեղյվել հարատարատեքենից, և փոխել քրդական կամ հայկական երգը, կամ ներկայացնել ասիացուն եւրոպական տարազով։ Ոչ։ Քրդականը թող մնայ քրդական, իր բնորոշ գծերով և առանձնայատկութիւններով։ Դա անհրաժեշտ է։ Սակայն նրանք էլ պէտք է լինեն լաւ մշակված և նկարագրական կերպով կազմված։

Մենք անցանք մեր սենեակը և այնտեղ շարունակեցինք մեր խոսակցութիւնը։

—Դուք լաւ գիտէք, որ մեր տիրացուները քթուն են երգում, չարունակեց փաստաբանը։

—Եւ մի շարք կլկլոցներով, աւելացրի ես։

—Ես ճանաչում եմ չաուերին, չարունակեց փաստաբանը, որոնք այնքան սովորել էին այդ քթով երգելուն, որ նրանց համար խորթ թուաց, երբ մեր եկեղեցական նորագոյն երգեցիկ խմբերը սկսեցին երգել բայց առոգանութեամբ, առանց քթային արձագանքների։

—Ո՞նչպէս կարելի է հայերէն երգել առանց քթային ձայնների, միջամտեց մեր խոսակիցը։ Եթէ չեմ սխալվում, մեր պրոֆէսորներից մէկը գրել է մի յատուկ յօդուած հայոց երգեցողութեան մասին։

—Դուք սխալվում էք. երեխ լսել էք հայոց լեզուի ներդաշնակութեան մասին, ասաց փաստաբանը։

—Իսկ ես, վրա բերեց մեր մեր խոսակիցը, չեմ կարողանում առանց ծիծաղի և զայրոյթի լսել, ինչպէս մեր տիրացու երգիչները երգում են «Տրօպարօրից» կամ մի ուրիշ օպերայից։

digitised by A.R.A.R.@

«Մարտա» օպերայի վարդին նուիրուած հրաշալի այն երկը, որ պարունակում է իր մէջ այնքան քնքշութիւն և փափաքոյր տրտութիւն, բոլորովին անճանաչելի է դառնում, երբ դուք լսում էք նրան սիրտաշուարիկ բերանից, և «վերջին վարդը» ներկայանում է ձեր առաջ իրեն մի պիւզական «Մարհուարդ խարին»։

Երաժշտութեան ձայնը յիշեցրեց մեզ, որ «Theepause»-ից յետոյ դահլիճը արդէն մաքրուել է թէյի անգաններից և սկսուած են պարեր։

Մենք գնացինք մեծ դահլիճը պարելու նայելու։

—

Մի քանի ժամանակից յետոյ յայտնուեցին և խոստացած սիրաքրիզները։

Ո՞նչ էք կարծում, ինչ սիրաքրիզներ էին։ Ծիմակաւորներ։ Դրանք էին սիրաքրիզները։ Ինձ համար դրանք իսկապէս սիրաքրիզներ էին, որովհետև դիմակները չատախ ինձ այցելում էին և ամեն տեսակ նիւթերի մասին խոսում։

Պէտք է նկատեմ, որ դիմակները շատ անմեղ և վայելուչ դիմակներ էին։ Նրանք խոսում էին անչափ քաղաքավարի, զգուշութեամբ և դժուարանում էին միայն և շատ համարձակ հանելուքներ անել։

—Իմ մասին, պ. Վրձին, գրիր, որ ես կորցրել եմ իմ ժիլետը, ուսից այն երիտասարդները, որոնք սիրահարուած էին ինձ վրա, այժմ նորից թող հագցուն տան իրանց՝ արդեօք սիրում են ինձ, թէ ոչ։

—Ո՛վ ես դու դիմակ, հարցրի ես։

—Ճանաչիր, եթէ կարող ես։

digitised by A.R.A.R.@

Դիմակը հեռացաւ ուրիշները զբաղեցրին նրան և զբաղվեցին նրանով։

Մի քանի ժամանակից յետոյ մօտեցաւ ինձ մի ուրիշ դիմակ։

—Ինձ ճանաչո՞ւմ ես, վ.բձին, հարցրեց նա։

—Ոչ, ոչ. պատասխանեցի ես։

—Չէ, ճանաչում ես, պնդեց նա։

—Գուցէ, պատասխանեցի ես. բայց դիմակդ թոյլ չէ տալիս։

—Իսկ այս պարոններին և տիկիններին ճանաչո՞ւմ ես։

Դիմակը մատով ցոյց տուեց դահլիճում եղած մի քանի ընտրուչ անձերի։

—Այո, ճանաչում եմ, ասացի ես։

—Եթէ նրանց ճանաչում ես, ուրեմն ինձ էլ ես ճանաչում. իսկ եթէ ինձ չես ճանաչում, ուրեմն նրանց էլ չես ճանաչում։

—Ի՞նչ ես ուզում ասել, դիմակ, հեռաքըրքրվեցի ես։

Դիմակը բռնեց թևիցս և տարաւ մարդկանց մէջ։

—Այս մարդիկը, ասաց նա, որոնց դու ճանաչում ես, աւելի խիտ և անթափանց դիմակ չունեն, քան ես Սրանք բոլորովին այն չեն, ինչ որ դու և ուրիշները կարծում էք։

—Հասկացայ, հասկացայ, ձիծաղեցի ես։

—Այս սիրալիր և հրեշտակային տիկինը, երբ դիմակը հանէ, կը տեսնէք, որ դժոխքի չար ատանաններից մէկն է, ամեն կերպ ինտրիգների և խարդախութիւնների ընդունակ։ Այս պարոնը, որ այնքան հպարտ և հեղնարար նայում է պարոններին, իր հարստութիւնը ձեռք է բերել այնպիսի միջոցներով, որ անկարելի է նոյն իսկ պատմել...

digitised by A.R.A.R.@

Դիմակը շատ մարդկանց բնորոշեց, բայց ես անկարող եմ նկարագրել։

Դիմակը ուժգին անդամից ձևերս և բաժանվելով ինձնից յայտնեց, որ մի ուրիշ անգամ կաշխատէ դարձեալ դիմակ հագած՝ անել ինձ համար մի շարք յայտնութիւններ։

Մեզ դիմակները աւելի զբաղված էին քաղցր ու անուշ կոմպլիմենտներով և չարաճճի նկատողութիւններով։

—

Ես արդէն պատրաստվում էի թողնել դահլիճը, երբ մի նոր դիմակ, հիանալի կանացի կազմուածքով, վերցրեց իմ թևը և տարաւ իր յետևից։

Դու խնդա ես մի քառորդ ժամ, ասայ նրա. ես խօսելիք ունեմ քեզ հետ։ Գնանք աւելի խուլ և ազատ տեղ։

Դիմակը խօսում էր մաքուր հայերէն, գրականի ոճով։

—Ո՞վ ես դու, հարցրի ես մեծ հետաքրքրութեամբ։

—Գնանք, հրամայեց դիմակը և առաջ ընթացաւ։

Ո՞վ պէտք է լինէր այս օրիորդը կամ տիկինը։ Վերջապէս մենք նստեցինք մի դահլիճակի վրա։

—Ինչու, վրձին, դու ոչինչ չես գրում օրիորդների և կանանց մասին։

Դիմակը դիտում էր իմ հայեացքը։

—Պատահել է, որ գրել եմ, պատասխանեցի ես։

—Շատ քիչ, ներողութիւն նրա. այնքան քիչ, որ համարեա հաշուի առնել չէ կարելի։

—Ճիշտ է, համաձայնվեցի ես Յոհաննես

եմ այսուհետև ուղղել իմ սխալը։ Բայց դուք, օրիորդներդ, քիչ էք հանդէս գալիս հասարակական ասպարէզում, այնպէս որ առիթներ քիչ են լինում ձեր մասին խօսելու։

Դիմակը ցոյց տուեց անթաւականութեան նշաններ։

—Իսկ տէրտէր, տիրացու, երէցփոխ, փոխանորդ, առաջնորդ, նկատեց նա, մի՞թէ հետաքրքրական են։

—Ես էլ, պատասխանեցի, չեմ չափազանցնում նրանց նշանակութիւնը և շատ բաներ լռութեան եմ տալիս։

—Ուրեմն միահարդուրդ ենք մենք երկուսս էլ, բացականչեց դիմակը։

—Տեսնում էք, որ այսօր ես ձեզնով եմ զբաղված, երեկոյթով, պարերով։

—Փարաջանները, շեշտեց նա, բոլորովին հետաքրքրական չեն հասարակական տեսակէտից։ Նրանց մոռացէք և մեզնով միշտ զբաղվեցէք։ Երբ որ մենք ձեզ հետ սկսենք գործել հրապարակում, այն ժամանակ կը սկսվի իսկական հասարակական գործ։

Դիմակը սկսեց ինձ հետաքրքրել։ Նա խօսում էր շատ կտրուկ, հեղինակօրէն։

Ո՞վ է սա, որ այսքան մաքուր խօսում է հայերէն։

Գուցէ տէրտէրի աղջիկ է, որ այսքան ազատ է հոգևորականներին, մտածում էի ես։

Բայց չէ. ինչպէս կարելի է։ Տէրտէրի աղջիկ և հայերէն մաքուր խօսակցութիւն՝ թիֆլիսում սա անկարելի է։

—Դիմակ՝ սա, ով ես դու, ես հետաքրքրված եմ քո անձնաւորութեամբ։

—Գուշակիր, ժպտաց նա։

digitised by A.R.A.R.@

—Ես հասանում եմ քո ձեռակերպութիւնները և ուրախութեամբ կը չարունակէի մեր խօսակցութիւնը ամբողջ ժամերով։

Իմ խօսքերը դուր եկան դիմակին, բայց նա ակսեց անհանգստանալ։

—Վտանգաւոր է ձեզ հետ չարունակել, նկատեց նա. ես կարող եմ ինձ մատնել ցնծութիւն։

Հազիւ կարողացայ բերան բանալ՝ դիմակը արդէն անյայտացել էր։

—

Ես գնայի դէպի դահլիճ։ Իմ ճանապարհը կտրեց մի նոր դիմակ։

Մի չատախօս, բայց հետաքրքրական դիմակ։

Նա այնպէս բաներ պատմեց, որ կարող է ձեզ էլ, ընթերցող, հետաքրքրել. իսկ դուր պատմածը իրականութիւն էր։

Ինչ էր ասում դիմակը։

Դիմակը ասում էր...

---

digitised by A.R.A.R.@

LXXVII

(3 փետր. 1902 թ., «Մշակ» № 25)

Դիմակը ասում էր.

—Ես ուզում եմ ապրել, զգալ, որ ապրում եմ։

—Եւ ապրիր, պատասխանեց եա, ոմ է քեզ խանգարում։

—Ո՞վ է ինձ խանգարում, կրկնեց իմ հարցը նա. մի՞թէ դու չը գիտես Ահա այս բոլոր մարդիկը։

Դիմակը ցոյց տուեց դահլիճում գտնվող բոլոր հանդիսականներին։

—Ի՞նչ ես ուզում ասել, հարցրի եա։

Դիմակը բռնեց իմ ձեռքից և մեզ ականջինք խօսել թայլելուվ։

—Ես կուզենայի, ասաց նա, ձեզ, տղամարդկանց վրա նայել իբրև ընկերների վրա. բայց ես չեմ կարող։

—Ինչո՞ւ։

—Որովհետև ձեզ հաւասար ես նշնելու մի աղջիկ եմ, որին պէտք է մարդու տալ երիտասարդներից մէկին։ Տես, նայիր այս բոլոր օրիորդներին։ Ոչ ոք չէ հետաքրքրվում այսօրվայ երեկոյթով, իբրև մի զուարճութեամբ, այլ նպատակ է դրել միայն աչքի ընկնելու, տպաւորութիւն գործելու, հաւանութիւն ձեռք բե-

digitised by A.R.A.R.@

բելու։ Ը՛ր կայ կեանք, այլ նրան փոխարինել է ընտանեկան մի ինչ որ քաղաքականութիւն։

—Հետաքրքրական է, նկատեցի ես. չարուհանակիր, դիմակ։

Դիմակը անզգաց ձեռքս և ոգևորվեց։

—Իսկ ես ապրել եմ ուզում, չարուհանակեց նա, ինչպէս որ իմ սիրտը թևևացրում է։ Այսօր հազար դիմակ, որ ասեմ ուզ և ցանկանամ իմ սրտի ուզածը։ Հինգ հոգու հետ խօսեցի, բայց բոլորն էլ մի մի դասարկ սրախօսութիւն արին ու հեռացան։ Այժմ փորձեցի քեզ հետ խօսել։

—Ներող եմ, դիմակ, պատասխանեցի ես, պատրաստ եմ խօսակցելու քեզ հետ, որքան ցանկանաս։

Մենք նստեցինք գահաւորակի վրա և սկսեցինք երկար բարակ զրոյցներ։

—

Մեր խօսակցութեան ժամանակ մեր մօտով անցնում էին զանազան մարդիկ։ Դիմակը ամենց քայլելու ընթացքում էր ներքին կուռ նրանց և պատմում բնորոշ նկարագրութիւններ։

Երբ մեր մօտով անցնում էր Անանեան զբոսոյլ հոգաբարձուներից մէկը, դիմակը շարժվեց տեղից։

—Իմ միտքս եկաւ, ասաց նա, մի զուարճալի դէպք, որ ես քեզ կը պատմեմ։ Դա մեր քաղի խօսակցութեան նիւթն էր մի քանի օր։

—Ո՞ւմ է վերաբերում, այս պարոնին, հարցրի ես։

—Եւ այո և ոչ, նկատեց նա։ Սրա ինչումն է բանը։ Դպրոցի հոգաբարձութիւնը իր նիստերից մէկում տեղեկանում է, որ մօտ քառա-

digitised by A.R.A.R.@

սուն աշակերտուհի անկարող են ուսման վճար տալ։ Ինչ անենա՝ մի քանիսը առաջարկում են չը պահանջել այդ վճարը։ Միւսները պնդում են, որ պէտք է ներել միայն այն դէպքում, եթէ արդարև ապացուցվի, որ այդ աշակերտուհիները աղքատ են։ Ասելը հեշտ է, բայց ինչպէս իմանան, թէ աշակերտուհին իսկապէս այնքան աղքատ է, որ անկարող է ուսման թոշակ տալ։

Դիմակը կանգ առաւ։

—Ո՞նչպէս վճռեցին, հարցրի ես հետաքրքրուած։

—Ի հարկէ, շարունակեց դիմակը, ամենից լաւն այն էր, որ նրանք հաւատային աշակերտուհիներին և երկար ու բարակ հարց ու փորձի մէջ չըմտնէին։ Ո՞նչը կը պահէր Ո՛ւմ համար է չինված դպրոցը։ Հոգաբարձութիւնը վճռում է հետազօտել, հետազօտել և հետազօտել։

—Եւ ում է յանձնվում այդ հետազօտութիւնը։

—Վարժուհիներից մէկը, շարունակեց դիմակը, եկել էր մեր թաղը։ Մտնում է աշակերտուհիներից մէկի տունը—Ո՛ւմն իք ուզում, ինչ բանի համա իք էկի, հարցնում են տանջինները—Ձեր աղջկայ մասին, պատասխանում է վարժուհին, իսկույն ասիմ—Մեր աղջկայ, պէտք է ասել, որ այն ընտանիքում երեք աղջիկ կայ։ Տնեցինները իսկոյն պլխի են ընկնում և ենթադրում են, որ եկել են աղջկաուռան, նշանելու աղջկայ մասին տեղեկութիւն ժողովելու—Շատ բարով իք էկի, համեցէք, համեցէք, մեր աչքի վրա տիղ ունիք։ Վարժուհին մըտնում է սենեակ։ Փոքր ինչ սպասելուց յետոյ

digitised by A.R.A.R.@

ներս են գալիս տանըցիները մաքուր հագնված, տան աղջիկներն էլ հետները—Ձեր աղջիկը կարդում է դպրոցում, ակսում է վարժուհին— Մեկը կարդում է ու հիմա էլ չկօլումն է, բացատրում են տանըցիները. սրանք էլ ժամանակին սովորել ին—Մենք կամենում էինք տեղեկանալ, յայտնում է վարժուհին, թէ ինչպէս են ձեր հանդամանքները, որքան ապահովված էք—Ինչի, ինչ է էլի, վրա են բերում արնեցիները, Աստու տուածից ունինք. մինք էլ մեր գօրայ ապրում ինք, Աստուն փառք տալու—Ուրեմն, կարող եմ ասել, որ ապահովված էք, հարցնում է վարժուհին—Արխային կացէք, յայտնում են արնեցինները, մեր հասկանալ կիտինք ամեն բանը։ Վարժուհին հետևում է տղաների ճչմարտախօսությունից. նա ախտում էր լսելու զանգատներ, աղաչանքներ, իսկ նրան հաստատում են, որ ձայրայեղ կարիք չունեն, իրանք իրանց ապրեցնել կարող են։ Վարժուհին վեր է կենում գնալու—Ինձ, երբ կու իմացվի բանը, հարցնում են նրանք։—Ես իմ լսած, տեսածը կը յայտնեմ, պատասխանում է վարժուհին. ինչ որոշում որ լինի՝ ձեզ կիմացնենք—Ապրիք, մեզ էլ անտեղեակ մի թողնէք. գաւակի տէր ինք, աղջկայ տէր ինք։ Դրուստ է, հարուստներից չինք, մանուֆակտուրի առուտուր չունինք. դէ, մինք էլ մեր կարգի մարդկանց մէջը մեր տիզն ունինք։ Վարժուհին վերադառնում է գարդ ու պատում իր տեսածը—Իմ կեանքում, ասում է նա, առաջին անգամն եմ տեսնում այդպիսի չքաւոր մարդկանց. փոխանակ գանգատվելու իրանք հրաժարվում են օգնութիւնից. Հոգատարձուները զարմացել են

digitised by A.R.A.R.@

ինչ որ մի հանելուկ կայ այստեղ վճռում են հոգաբարձուներից մէկին խնդրել նորից հետազօտելու եւ ահա այստեղ պարզվում է հանելուկը։ Դուբա է գալիս, որ վարժուհուն ընդունել են աղջկատեսի եկած բարերարուհու տեղ։

—

Դիմակը պատմեց մի շատ ընորոշ դէպք մի բժշկի, կամ ինչպէս ինքը մի առանձին շեշտով իրան անուանում է, բժշկապետի կեանքից. բայց ես կը հաղորդեմ դրա մասին մի ուրիշ ժամանակ, երբ յարմար ասիթ կը լինի։ Դէպքը թէև մանրատար է, պարունակում է իր մէջ հատարտկական տարրեր։

Մենք դարձեալ գնացինք շրջագայելու և մարդկանց դիտելու։

Դիմակը և ծիծաղում-ուրախանում էր, և տխրում-տրտնջում։ Նա չէր թագցնում իր տրամադրութեան փոփոխութիւնները, իր ընթացքի զգացմունքները։

—Ես խղճում եմ ձեզ, գրողներիդ, յանկարծ արտասանեց նա խորապէս զգայված։

—Ինչու՞, հարցրի ես։

—Որովհետև աննպատակ է ձեր գործը, նկատեց նա, որովհետև դուք մեռածների համար էք գրում։

—Ի՞նչ էք ուզում ասել, հետաքրքրվեցի ես։

—Տեսնում էք, հարցրեց նա, այս ծառերը և թփերը, որ գտնվում են այստեղ խեղդվածների մէջ։

—Տեսնում եմ, վրա բերեցի ես, ինչո՞։

—Մի թէ, չարունակեց նա, դուք կարող էք այս դահլիճը անուանել այգի, պարտէզ, կամ անուան ի հարկէ, ոչ։ Այդ բոլոր բուսակազմութիւնը արմատ չունի այստեղ։ Նա վաղը կան-

digitised by A.R.A.R.@

հետաքրքրությամբ, ինչ արտաքինությամբ որ բնորոշված է այսօրեղ խօսել այդպիսի պարտէզի մասին ծիծաղելի է։ Այնպէս էլ այն հաստատութիւնը, որի հետ դուք գործ ունէք։ Ո՞ւմ վրա է ձեր յոյսը։ Ահա տեսնում էք այս օրիորդներին և տիկիններին. սրանց հայրը գրականութեամբ էր պարապվում, հասարակական հարցերով էր հետաքրքրվում, իսկ զաւակները—եթէ չասաչէին, հրապարակօրէն նըրան կը ծաղրէին։ Տեսէք այս պարոններին. սրանք այժմ իրանց գլխաւոր, կեր ու խումով չքող կանգով են զբաղված և իրանց տանից հալածել են այն ամէնը, ինչ որ կարող է յիշեցնել ձեր, գրողների, մասին։

—Դու միակողմանի ես դատում, դիմակ, նկատեցի ես։

—Ոչ, խօսքս կտրեց ես։ Հարցնում եմ քեզ, արդեօք Ստեփանոս Նազարեանցի զաւակները հասկանում և գնահատում էին իրանց հօրը։

Արդեօք Ա. Բ. Գ... նոյն վիճակի մէջ չեն։

Դիմակը թուեց մի շարք անուններ և յոյս տուեց գահլիճում գտնվող մի քանի մարդկանց։

—Ձեր ընթերցողների որդիները այլ ես ձեր ընթերցողները չեն լինելու։ Դուք գրում էք միայն հայրերի համար, երբ այդ հայրերը կը մեռնեն, նրանց հետ կը մեռնեն և ձեր ընթերցողները։ Իմ հարևան երկու ընտանիքներում, ուր կարդում էին ձեր լրագիրը, հայրերի մեռնելուց յետոյ, զաղարեցրին լրագիրը առնելուց։

—Դու ճիշտ ես նկատել, պատասխանեցի ես, բայց վիճակը յուսահատական չէ։

—Աւելի քան յուսահատական, պնդում էր դիմակը։ Ես պատրաստ եմ գալ, որ թիֆլիսի

digitised by A.R.A.R.@

և Բագրատի ձեր բոլոր բաժանորդների որոնները այլ ևս ձեր ընթերցողները չեն լինելու։ Այդ ընտանիքները նոյնպիսի այդի, պարտէզ և անասուն են, ինչպէս այս բուսականութիւնը, որ այստեղ է։ Նրանք ձեզ համար գոյութիւն ունեն միայն քանի որ նրանք կենդանի են։ Նրանք ձեր վերաբերութեամբ ժառանգութիւն չունեն։

—Իսկ պատառը, հարցրի ես։ Այնտեղ կան արմատներ, այնտեղ կայ հող, որի վրա բնական սերմերը աճում, զարգանում են։ Մեր գոյքը այնտեղ է։

—

Դիմակի տակ խոժոռվեցութիւնը և արհամարհական նկատողութիւնները ինձ համար շատ անսպասելի էին և հրապուրիչ։

—Ո՛վ ես դու դիմակ, հարցրի ես մի քանի անգամ։

Ես էլ պատասխանեցի. Գուցէ դուք ճանաչէք

---

digitised by A.R.A.R.@

LXXVIII

(10 փետրվ. 1902 թ., «Մշակ» № 31)

Արքան ծանր էին այս վերջին տասն օրերը։ Հևոպիրները և թղթակցությունները առին օր պատմում էին նորանոր ահռելիներ երկրաշարժի բնույթի։

«Հազար մարդ վիրտուների տակ»։

Այդպես էր ասում մեր առաջին հևոպիրը։

—Մեծ դա ճիշդ է, հարցնում էինք մենք միմեանցից։

—Երևի չափազանցրած է, հաստատում էինք միմեանց։

Այժմ պիտանք, որ դժբախտաբար այդ թիվը ոչ միայն չափազանցրած չէ, այլ փոքր է իրականությունից։ Ամեն օր դիակներ են հանվում վիրտուների տակից, և ով գիտե, գուցե նախկին թիվը կրկնապատկվի։

Այդքան մարդկանց զոհեր Սարսափելի դըժբախտություն։

Ամբողջ Շամախի քաղաքից, որ ունէր մօտ 5000 տուն 22,000 բնակչով, հազիւ մնացել են մի քանի տներ անվնաս։ Բոլորը խորտակվել է և կրծանվել։

Նոյն տակաւի վիճակին են ենթարկվել շամախու շրջակայ գիւղերը։

Վիրտուների տակ մնացել են շատ անպաշտպան և մարդկանց բոլոր գոյքը։

digitised by A.R.A.R.@

Երկրաչարժից ազատվածները առակալի վիճակի մէջ են։

Առանց բնակարանների։

Առանց պատսպարանի։

Առանց հացի։

Առանց անկողնի։

Առանց հագուստի։

Բոլորը կորած, բոլորը դարձած աւերի բաժին։

Սարսափ, սուգ և սով։

—

—Գնացէք նրանց սփոփելու։ Գնացէք նրանց ներկայանալու և հագցնելու։ Գնացէք տկարներին պաշտպանելու։ Գնացէք հիւանդներին բժշկելու։

Ահա ինչ է հրամայում մեզ երկրաշարժի աղէտի ձայնը։

Գնանք այդ բոլորը անելու։

Իսկ ով մեզնից այդ չէ կարող անել՝ թող տայ իր նպաստը՝ փողով, հագուստով և կազմակերպելով օգնութեան գործը։

Ձեր բուբլիները և կօպէկները ձեզ չեն անհանգցնի, ձեր տուած հագուստեղէնը ձեզ մերկ չի թողնի. իսկ այդ մանր նուէրներից կը կազմվեն մեծ գումարներ, որոնք էական օգուտ կը տան երկրաշարժից վնասվածներին։

Մի՛թէ մեզ համար բարոյական մի մեծ ուրախութիւն, վերջապէս պարծանք և հպարտութիւն չէ այն բանը, որ մենք կարողացանք օգնել սխալքալաքցիներին և վերականգնել նրանց անտեսութիւնը։

Անկասկած։

Միմեանց օգնելու ընդունակութիւնն էլ մի

digitised by A.R.A.R.@

հարատեւթիւն է, որ պէտք է ձեռք բերէ մեր երկիրը։

—

Լաւ էք արդեօք, թէ ինչ անհեթեթ և վնասակար լուրեր են տարածվում Շամախուում և Բաքուում։

Գանվել են գուշակողներ, որոնք աստղաբաշխութիւններով ապրանք են տարածում ամբոխի մէջ։

—Այս ինչ օրը, այս ինչ ժամին լինելու է աստղակ շարժ, որ աւելի խիստ պէտք է լինի, քան մինչև այժմ եղածը։

Մէկը միւսին պատմում են այս տեսակ լուրեր և միմեանց վախեցնում։

—Ո՞րտեղից է տարածվել լուրը, հարցնում էք դուք։

—Ժողովրդի մէջ այդպէս է խօսվում, պատասխանում են Աստղներ կան։

Յուզմունքների և տարակոյսի մէջ գտնվող ամբոխը դիւրահաւատութեամբ լսում է այդ լուրերը և աւելի ևս յուզվում։

Եթէ չէք մոռացել, ընթերցող, այդպիսի գուշակութիւններ անվում էին և Ախալքալաքի երկրաշարժի առիթով։ Գուցէ տարբերվեայ այն խլրտումները, որոնք առաջացրին յունվարի 31-ի պէտը, դեռ

digitised by A.R.A.R.@

չեն վերջացրել իրանց չարժուձևները։ Բայց պա բոլորովին ուրիշ հարց է։

Ոչ ոք չէ կարող ոչինչ գուշակել այդ մասին։ Գուշակութիւնները սուտ են և ամեն բանից մարդ իր պարտաւորութիւնը պէտք է համարէ հանդստացնել ժողովրդի լարված ջղերը։ գրելով կասկածները և երկիւղները։

—

—Ի՞նչ էք կարծում, Շամախին արդեօք դարձեալ կը վերանորոգվի, թէ նա կը չնչվի ու միշտ քնակավայրերի շարքից։

Այդ հարցը ես լսեցի շատերից։

Ի՞նչ կարելի է պատասխանել։

Կարելի է կարծիք յայտնել։

—Ես կարծում եմ, ասացի ես, որ նա կը վերանորոգվի։

—Ինչպէս, բացագանչեցին խօսակիցներս այս տարօրինակ աւերմունքից յետոյ։

—Այո, այս բոլոր թշուառութիւններից յետոյ ի հարկէ, եթէ ազմինխատրացիան տեղափոխէ վարչական հիմնարկութիւնները ուրիշ տեղ, այն ժամանակ կը կազմվի կամաց-կամաց մի ուրիշ քաղաք, որ և կը գրաւէ մարդկանց ազատել բայց շամախեցիներից շատ շատերը չեն բաժանվի իրանց օջախից, իրանց հողային սեփականութիւններից և կը փորձեն դարձեալ բուն դնել հին տեղում։

—Անհաւատալի է պատմածդ ինձ։

—Անհաւատալի ոչինչ չը կայ, տարակոյսի նա Շամախին դարերի ընթացքում մի քանի անգամ է քանդվել և նորից վերականգնել։ Մեզ յայտնի է, որ 1668 թուին երկրաշարժը թաղել է վերանների տակ 6—8000 մարդ։ Քաղաքը

digitised by A.R.A.R.@

դարձնալ նորոգվելու եթե բնակիչներին մնայ նրանք նորից կը չէնացնեն նրան։

—Եթե այդպես է, նկատեցին իսառակիչները, այն ժամանակ պէտք է ալգեպել այնտեղ բնակութիւնը հաստատելը։

Այդ հարցը մենք չը քննեցինք։

Ինչ արդեօք մասին կարելի է մտածել։ Ջոկ բան է, եթե պարտադիր կանոններ մշակվեն տների շինութեան վերաբերութեամբ, օրինակ, դերքաղաքութիւն տրվի փայտեայ շինութիւններին, երկաթեայ կապերին։

—

Սակայն ինչպես է Շամախու դաղանիքը. ինչ է այն հրապոյրը, որ նա պահպանել է շամախեցիների համար։

Եղել էք արդեօք դուք Շամախում և Շամախու գաւառում։

Ես եղել եմ մի քանի անգամ և կարող եմ ձեզ ասել հետևեալը։

Շամախու չրջակայքը մի արդաւանդ և բարեբեր երկիր է։

Օդը բարեխառն և առողջարար։ Աղբիւրները վճիտ և համեղ։ Կենսական մթերքները էժան և առատ։

Սաղիանի, Մարդասայի, Գիւրջիվանի գինիները մեծ հռչակ են վայելում։ Մերիչ գիւղերում էլ սկսել են զարգացնել դինեգործութիւնը։ Կարող են ընդարձակ տարածութիւններ յատկացնել խաղողի վազերի համար։

—Զարմանալի աջող տեղ է այգեգործութեան համար, ասում էր երեսանեան նահանգից Շամախի եկած մի անձն։

—Ի՞նչ կողմից, հարցի ես։

—Այստեղ քիչ ձախքով և քիչ աշխատանքով,

digitised by A.R.A.R.@

բացատրեց նա, ստանում են այնպիսի արդիւնքներ, որոնց համար մենք մեր տեղերում գործ ենք ածում և շատ փող և շատ աշխատանք։ Այստեղ հողը չեն ջրում, վարդերը չեն թաղում և առհասարակ քիչ հոգս են տանում, իսկ դինն ստացվում է պատուական։

Գինեգործական կետնքի և տնտեսութեան համար հողը յարմար է և լաւ վարձատրում է երկրագործի աշխատանքը։

Բազմաթիւ գիւղերի համար անհրաժեշտ էր ունենալ ընդհանուր տեղական վաճառանոց և վարչական կենտրոն։

Շամախին այդ վաճառանոցն է և կենտրոնը։

Իսկ հին ժամանակներում նա կատարում էր և աւելի մեծ վաճառանոցի և աւելի մեծ կենտրոնի դեր։ Նա մի օղակ էր հանդիսանում հիւսիսի և հարաւի առևտրականների մէջ։ Ռուսաստանի և Պարսկաստանի առևտրականները Շամախու միջոցով ապրանքների փոխանակութիւն էին կատարում։

Շամախու և նրա գաւառի բնակիչների վրա ազդել են նրա պատմական կետնքի հետքերը։

Նա այժմ էլ պարունակում է իր մէջ բազմատեսակ տարրեր։

—Սա Դաղստան է, ասում էք դուք, տեսնելով այդտեղ Դաղստանի արհեստները և առևտրութիւնները։

—Սա Պարսկաստան է, ասում էք դուք, արձանագրելով մի շարք բնորոշ գծեր պարսկական կետնքից և բարքերից։

—Սա Վրաստան է, բացագանչում էք դուք,

digitised by A.R.A.R.@

այնելելով մի շարք գիւղեր, որտեղ ապրում են Ղարաբաղից եկած հայ գաղթականներ։

—Սա հին Աղուանից աշխարհն է, յայտնում էք դուք լսելով Մատրաասյի հայերի թաթերէն լեզուն։

—Սա արտասովոր իշխանութեան ժառանգութիւններից մէկն է, ասում էք դուք, տեսնելով արտաքնաների հետքերը մնացած գիւղերում և բազմաթիւ սիւնեն աղանդաւորներին։

Շամախու և նրա գաւառի հայերի մեծ մասը հաղնելում են թուրքերի տարազով։ Մեր երկրի բոլոր տեղերում հայ կինը պահպանել է իր հին ազգային զգեստը։ Իսկ այստեղ նա ընդունել է պարսկականը։

Մինչև այժմ էլ պարսկական բռնապետութիւնը, պարսկական երդամբյուռթիւնը, պարսկական մէյխանան դեռ պահպանել են իրանց դոյութիւնը այդտեղ։

Հետքեր։

Հին կեանքի հետքեր։

Հին կուլտուրայի հետքեր։

Հին ազդեցութիւնների հետքեր։

Այժմ կեանքը նոր չափեր է բացել։ Առաւտրական կենտրոնները փոխել են։ Կուլտուրայի պահանջները նոր հիմքեր են հանդէս բերել։ Ուղիները ուրիշ ուղղութիւն են վերցրել։ Եւ Շամախին, դուրս վանդվելով իր նախկին դիրքից, պահպանել է միայն տեղական նշանակութիւն, որ սակայն իր չրջակայքի համար կարևոր է։

—

—Ճիշտ է արդեօք, որ հրաբուղխներ են երեւացել Շամախու գաւառում, հարցնում էր ինձ Նարիման մի ծանօթ։

digitised by A.R.A.R.@

—Երևի ճիշտ է, պատասխանեցի ես։

—Ուրեմն մենք էլ կոնենանք վեղուձի նման հրաբուղխ, բացատրեցի ծանօթս։

—Ոչ, բացատրեցի ես։ Բազուկ նահանգի մի քանի տեղերում կան հրաբուղխներ, որոնք ժամանակ առ ժամանակ գործունէութիւն են ցոյց տալիս։ Նրանք բռնկվում են կարճ ժամանակ, արտաթորում են մի որոշ քանակութիւնամբ և դարձեալ հանգստանում։ Ես տեսել եմ այդպիսի հրաբուղխներ և նոյն-իսկ բարձրացել մինչև բերանը։

Ծանօթս յանկացաւ լսել մանրամասնութիւններ, որ և պատմեցի ներքոս։ Ես Ալարատեանի հրաբուղխային մի քանի տեղեր, պատմեցի նրան մի և ղամէյդանի մէջ գտնվող Ղօթուրնաւ լճակի մասին, որի ջուրը բժշկական յատկութիւններ ունի և որի մէջ լողացնում են անասին անասուններին բժշկելու նպատակով և այլն։

—Այժմ հրաբուղխային ժայթուածքներ երևոյթ են Մարսի և ղամէյդանի մօտերքը, բացատրեցի ես։

—Անկասկած այդ հրաբուղխների երևալը լաւ նշան է, նկատեց խօսակիցս, որովհետև աստղերկրեայ գաղերը և խառնուրդները ելք են գտնում դուրս թորվելու։

—Այդպես պէտք է ենթադրել, հաստատեցի ես։

—

Ես չօշափելի երկրաշարժ էի խնդրում հարուածներին ենթարկված աշխարհի մի քանի զըծերը։

Մեր առաջ տակոյն վերջ ի վերջոյ կանգնած

digitised by A.R.A.R.@

ևն իր բոլոր այժմյան արվեստից ընտանեաց տարատեսակ վիճակը և նրանց կարիքները

—Ո՞վ պէտք է օգնէ բազմաթիւ կարօտեալներին, կը հարցնէք դուք։

—Մենք բոլորս։

—Ո՞վ պէտք է հոգայ կարօտեալների բազմաթիւ ծախքերը։

—Դարձեալ մենք բոլորս։

—Հարիւր հազարներ են հարկաւոր, ոմն կարող է տալ այդ գումարը, կը հարցնէք դուք։

—Ժողովրդական կօպէկը։

---

digitised by A.R.A.R.@

LXXIX

(17 փետր. 1902 թ., «Մշակ» № 36)

—Ինչո՞ւ չէք հրատարակում մրցանակի համար ներկայացրած աշխատութիւնը։

Այս հարցով դիմեց ինձ մի տաղանդաւոր թիֆլիսի իմ ծանօթներից մէկը։

Ցոյս ունեմ՝ իմ ընթերցողը չէ մոռացել, որ ես յիշատակել էի հազար րուբլի մրցանակ։

Թեման որոշ էր։

Հազար րուբլի տանող ցանկացողը պէտք է ներկայացներ մի աշխատութիւն, որի մէջ ցոյց տուած լիներ, թէ արդեօք Գօգոլի տիպերը որևէ նմանութիւն ունեն մեր հասկանալի համ ընդհանուր կոմկատանան տիպերի հետ։ Աշխատութիւնը պէտք է պարզէր, թէ արդեօք Գօգոլը ունի որևէ հետաքրքրութիւն համ ուսանելի կողմեր մեզ համար։

Ահա իմ ծանօթի հարցմունքը վերաբերում էր այդ մրցանակին։

—Դեռ ոչ մի աշխատութիւն չեմ տեսել, պատասխանեցի ես։

—Մեծ, բայականչեց ծանօթս. անհատաւատալի է։ Ապա ինչո՞ւ այդ մասին չէք յայտարարում «ի գիտութիւն ընդհանրութեան»։ Ձեր պայմանաժամը մինչև վեսարկայի 1-ն էր։

—Ճիշդ է, տարակոյս ես, պայմանաժամը

digitised by A.R.A.R.@

փետրվարի մեկին էր, բայց ես չէի կամենում բծախնդիր լինել։ Անկասկած, ես կարող էի փետրվարի մեկից յետոյ էլ ես չընդունել ոչ մի աշխատութիւն։ Բայց ինձ հետաքրքրում էր դործը։ Թող լինի մի քանի օր ուշ, միայն թէ լինի ճետոյ մի իրաւաբանական թիւրիմացութիւնից էլ վախենում էի։

—Ի՞նչ իրաւաբանական թիւրիմացութիւն, հարցրեց Ծանօթս։

—Ո՞վ գիտէ հիմիկվայ մարդկանց, բացատրեցի ես։ Մէկը կարող էր իր աշխատութիւնը յանձնած լինել ալօսային մինչև փետրվարի մէկը, իսկ իմ ձեռքը կը հասնէր մի հինգ կամ տասն օրից յետոյ։ Լաւն այն է ապահովը։ Աւելորդ տեղը դատարան գնալուց ազատ կը լինենք։

Ծանօթս համաձայնեց։

Ապահովի մինչև այսօր կարծում բաւական է։ Ես յանկանում էի, որ այդ աշխատութիւնը լոյս տեսնէր Գօդօլի յօբելեանի օրը, փետրվարի 21-ին։

Միայն չորս օր է մնացել։ Իսկ ես մինչև այսօր, փետրվարի 17-ը, ոչ մի աշխատութիւն չեմ ստացել մրցանակի համար։

—

Բայց ես ստացայ մի քանի նամակներ մրցանակի վերաբերութեամբ։

Մի նամակագիր յայտնում էր, որ ես շատ նրբութ ունի պահանջված աշխատութիւնը կատարելու համար։ Սակայն ես անչափ է գրաւում նրա հրատարակութիւնը ներկայումս ես ուսումնասիրել է վարպետի եռանում կատարվող շատ երևոյթներ և սարսափում է այն տգեղ պատրութիւնից, որ կը գործեն նրա մերկացումները հասարակութեան վրա։

digitised by A.R.A.R.@

Միտքը առաջարկում էր, որ ես նրա հաղորդած բնաորոշ դէպքերից կազմեմ այն աշխատութիւնը, որի մասին յայտարարել եմ ու երբ նամուշներ նա ուղարկել էր երկու դէպքերի նկարագրութիւն և մի դօկումենտ։

Երրորդը խորհուրդ էր տալիս, որ ես ձեռք վերցնեմ այդ տեսակ ազդակներ մի գործից, ինչպէս կարելի է, պրոմ էր նա, յայտարարել օրը յերեկով, որ մեզանում գոյութիւն ունեն Գօգոլի տիպերի նման բացառական տիպեր։

Չորրորդը, հինգերորդը խորհուրդ էին տալիս, որ մրցանակը տամ մի ուրիշ գործադրութիւնի, որ փոխում թեման և որ վերջապէս դրամարկղի մի մասը տամ նախօրոք, ասելով։

Ինչ երկարացնեմ, նամակները ինձ չը գոհացրին, և իմ նշանակած մրցանակը գործադրութիւն չը ստացաւ։

Ես պարտաւոր էի այս մասին յայտնել իմ ընթերցողներին։

—

Երբ պատմեցի ծանօթս մրցանակի վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները, նա ժպտաց և խորամանկ հայեացքով նայեց ինձ վրայ։

—Ես ուրախ եմ, ասաց նա, որ այդպէս էլ եղել է։ Այդ մրցանակի չայտնվելը ինքն իսկ ինքնին մի հանդամանք է, որ յիշեցնում է Գօգոլի դարս բերած կեանքի երեւոյթները։

—Բայց ուրախանալու առիթներին ոչինչ չը կայ, պատասխանեցի ես ծրագրած աշխատութիւնը կարող էր շատ ուսանելի և հետաքրքրական լինել։

Մենք սկսեցինք պատմել և ներկայացնել միմեանց, թէ ինչ ձևով կատարել էին պատահարների

digitised by A.R.A.R.@

լինել Շատ կէտերում սակայն համաձայնվել չեղանք։

—Ի՞նչ տեղ կը տաք, օրինակ, հարցրեց նա, մի այս տեսակ դէպքում Մի քանի օր սրանից առաջ Թիֆլիսի քահանաները իմբուլլին լուծերով էին ներկայացրել կօնսիստօրիայի միջոցով, յայտնելով, որ Թիֆլիսում եղած քահանաների թիւը այնքան է, որ աւելի քան բաւական է Թիֆլիսի համար։

—Գիտեմ, գիտեմ, ասացի ես, Թիֆլիսում 73 քահանայ կայ։

—Ը նայելով այն հանգամանքին, որ քահանաների թիւը չափազանց է և մի քանիսը նոյնիսկ մնացել են անպաշտօն, զարձեալ ձգտում է կրճատ ուրիշ կողմից Թիֆլիս տեղափոխելու մի քանի նոր քահանաների... միջնորդների, աղանների բարեխօսութեամբ։

—Գիտեմ, այդ էլ գիտեմ, նկատեցի ես, ձեր ասելը ինչ է։

—Այդ դիտէք, շարունակեց նկատել ծանօթս, բայց այն էլ դիտէք, որ Կորիճն վարդապետը անցեալ օրը, կանչելով իր մօտ խնդիրք առաջարկող քահանաներից մէկին, նախատել է նրան և ապտռնացել։ Արդեօք դիտէք, որ մի ուրիշ քահանայ, տեսնելով, որ այդ հանդամանքը հաստատելն չէ գոհ, ուզում է գնալ և յայտնել, որ նա յետ է կենում իր առարկութիւնից։

—Ինչպէս թէ յետ է կենում, զարմացած հարցրի ես։

—«Ձեզած համարել», բացատրեց խօսակիցս և յիշեցի մի ուրիշ դէպք Ինձ տարի սրանից առաջ հանդիպեալ Արդիս եպիսկոպոս Տէր-Գասպարեանը վերցրել էր Սիմօի արձանա-

digitised by A.R.A.R.@

գրութիւններից մէկը և իր առաքելութիւնը կնչել։

—Թէ ինչ։

—«Ձեղած համարել», կրկնեց խոսակից։ Այժմ առայէք, բնորոշ երևոյթը որ գաւառներում մէջ գոյնք։

—

Ինձ չատ հետաքրքրին այն բարեկիրթ և բարեհոգի յարաբերութիւնները, որոնք առեղծվել են Թիֆլիսի թեմական փոխանորդի և քահանաների մէջ։

—Ձիշդ այնպէս, ինչպէս Գոգոլի «Հնաւանդ կալուածատէրեր» (Старосвѣтскіе Помѣщики) գրուածքում, նկատեց խոսակիցս։

—Թէկուզ այդպէս, պատասխանեցի ևս խոսակիցս ուսերը վեր քաշեց։

Ես պատմեցի, թէ ինչպէս Նոր-տարվայ օրը փոխանորդը հաճախել է իր շուրջը Թիֆլիսի քահանաներին, և խօսել զրուցել նրանց հետ ընտանեբար։

—Ոչ, այդպէս չէ, վրա բերեց ծանօթս։ Փոխանորդը ոչ մի ընտանեկան, ոչ մի բարեկամական զրոյցի մասին չէ էլ երազել նա հրաւիրել է քահանաներին ներկայանալ նրան Նոր-տարվայ օրը, և երբ նրանք ներկայանում են, նա սկսում է խրատներ կարդալ նրանց, յորդորներ անել և միայն վերջումը ուրախանում է նրանց իր երկու խօսքով։

—Ի՞նչ խօսքերով։

—«Այժմ գնացէք»—ահա այս երկու նշանաւոր խօսքով։ Դրանք մխիթարական էին և ազդու։ Քահանաները չտատանեին այդ երկու խօսքի համաձայն վարվել և մի անհետացան։

digitised by A.R.A.R.@

LXXX

(24 փետրվարի 1902 թ., «Մշակ» № 41)

—Գնանք այս երեկոյ ժողովի, ասայ ինձ բարեկամներիցս մէկը։

—Ի՞նչ կայ, հարցրի ես։

—Հետաքրքրաշարժ առարկաների մասին պէտք է զրուցենք, բացատրեց բարեկամս։ Երկրաշարժի տեղերում եղած մի ականատես պէտք է կարդայ զեկուցման նման մի բան։

—Շատ հետաքրքրական է, վրա բերեցի ես։

—Ցետոյ մի ուրիշ զեկուցում էլ ունենք վաշխառութեան ապրանքների մասին։ Զեկուցողը ինքը մի քանի դար է վարել վաչխառուների դէմ և հարցը ուսումնասիրել է հիմնաւոր կերպով։

—Ուսանելի է, համաձայնեցի ես։

—Ուրեմն կը գնանք։

—Ուրախութեամբ։

Այդ ժողովները ընտանեկան են, որոնք գումարւում են ժամանակ առ ժամանակ, երբ որ ուրիշների կարծիքները իմանալու են մի քանի անգամ ներկայ եմ եղել ժողովներին, բայց չեմ կարող ասել, որ նրանք հետաքրքրական են եղել ամեն անգամ։ Մի քանի սքօլաստիկներ և բառակներներ շատ էին զբաղեցնում մեզ քե-

digitised by A.R.A.R.@

բակատակաև և ճեմարանական հարցերուվ ներկայ երեկոև գրաւիչ էր Թեւսմ։

—

Հաւաքվել էին երիտասարդներ—տղամարդիկ և օրիորդներ, մօտ քսան հոգի։

Ընդհանուր հետաքրքրութեան առարկան կամ երեկոյվ հերոսը երկրաչարժի տեղից եկած պարոնն էր։ Բոլորը չէին պատկել էին նրան և հարց ու փորձեր էին անում։ Նա կցկտուր պատասխանում էր։

—Ես կը պատմեմ բոլոր իմ տեսածների մասին, յայտնում էր նա չատերին։ Ձեր տուած հարցի մասին ես մանրամասն պէտք է խօսեմ։

Վերջապէս բոլորս նստեցինք։ Ջեկուլյանողը հանեց ծոյից գրած մի տետրակ։ Նա չէր կարդում իր զեկուցումը, այլ միայն զեկավարվում էր իր գրածով։ Նա պատմում էր բերանացի, մեծ համառութեամբ և զգայմունքով։

Մենք բոլորս դարձել էինք մի ուշադիր լսարան։ Ջեկուլյանողը նկարագրում էր այնպիսի սրտաճմլիկ դէպքեր, որ մենք չէինք կարողանում առանց խորին յուզմունքի լսել։ Մի քանիսը արտասվում էին, միւսները հառաչում։

Մանաւանդ շատ ազդեց մեզ վրա գիւղներ դուրս բերելու նկարագրութիւնը։ Մայրերը գրկած իրանց զաւակներին. ծծկեր երեխան տաւած մօր ստինքի վրա. յուսահատ դէմքեր մարած՝ վլատակաների տակ—այդ բոլորը ներկայանում էր մեր առաջ և մեզ ցնցում։

Սրտաչարժ էին և այն նկարագրութիւնները, որոնք վերաբերում էին կենդանի մնացածների միմեանց հանդիպելուն։ Շատերը կարծում են եղել, թէ քնահիշների մեծ մասը մնացել է

վլատոմինների տակ և միանգամից տեսնելուց հաստատ չեն եղել իրանց աչքերին։

Ջևկուցումը թողել էր իր ազդեցությունը։ Մի քանի րոպե տերեց լռեցին։

Յետոյ խնդրեցինք զեկուցողից լրացուցիչ բացատրություններ կարիքի մեծությանը, ժամանակատար պատասխաններ չինելու, վերաբերմունքին խնամելու, օգնություն հատցնելու և ուրիշ հարցերի մասին։

Նա տուեց անհրաժեշտ բացատրությունները։

—Ծագ եմ խնդրում, յայտնեց բարձր ձայնով ժողովականներից մեկը, վարուհան ազգանունդ։

—Ի՞նչ պէտք է ասէ մեր քերականը, վրդովեցաւ միանգամից ականջին երիտասարդները։

Վարուհան նայեց իր շուրջը, օձիքը ուղղեց, մի փոքր հազաց և ծանր-ծանր սկսեց խօսել։

—Ձեր գրուածքը կարելի է բաժանել երկու մասի՝ նկարագրականի և դատողականի։ Ձեր նկարագրութիւնները անհամեմատելի են։ Դուք ոտանաւորներ էք կատարում մի դէպքից դէպի մեւսը և նրանց չէք չափակցում տրամաբանութիւն։ Դուք գործ էք ածում զանազան օձեր խառնելով գրական օձի հետ և չէք պահպանում միութիւնը մասերի մէջ։ Դատողական մասը չէ համակարգված և չէ համապատասխանում նկարագրական նիւթին...

Վարուհանի անտեղի և անմիտ նկատողութիւնները վրդովեցրին բոլորին։

—Բաւական է, գոռաց երիտասարդներից մեկը։ Դուք անտես էք անում ազէտը և ինչ-որ բառախաղութիւններով էք զբաղվել։

—Ես ընդունում եմ նկատել ղեկուցանողը, որ իմ այսօրվայ պատմածը գրական ոչ մի ար-

digitised by A.R.A.R.@

ժէք չունեի ես յատակնութիւն չեմ ունեցել մի լաւ մշակված զեկուցում ներկայացնելու։ Իմ նպատակն էր ծանօթացնել ձեզ իմ տեսածլսածի հետ և իմ խորհրդածութիւնների հետ։

Ժողովականները իրարով եղան ներանք զայրացած էին վարուանդի վրա։ Բայց վարուանդը չէր ընկճվում։

Սկսված վիճաբանութիւնը զարձաւ աղմկալի և վչացրեց բոլորի տրամադրութիւնը։ Վարուանդի ձևական վերաբերմունքը վիրաւորել էր շատերին։

Ժողովականները վերջապէս իրանց չերմ չնորհակալութիւնը յայտնեցին զեկուցանողին և մի կարճ ընդմիջումից յետոյ անցան հետևեալ զեկուցման։

—

Երկրորդ զեկուցումը, որ վերաբերում էր վաչխատութեան, սկզբում գրաւիչ չէր երևում։

Շատերը դեռ գանվում էին եղածի ազդեցութեան տակ։

Երկրաչարժի աղէտի նկարագրութիւնները, որոնք այնքան յուզել էին բոլորին, միացած այն անտեղի վիճաբանութեան, որ տեղի ունեցաւ յետոյ, բթացրել էին բոլորի չղերը։

Սակայն զեկուցանողը կամաց-կամաց գրաւեց մեր ուշադրութիւնը։ Նա ներկայացրեց վաչխատութեան գոհերի այնպիսի տեսարաններ, որ մենք ակամայից նորից մտաբերել երկրաչարժի արհաւիրքները։ Վաչխատութիւն էլ տներ է քանդում, ամբողջ տնտեսութիւններ է կործանում, գոհեր է վերցնում։

—Դա մի աղէտ է, որ տարածվել է ամբողջ գաւառների և նահանգների վրա, որ մաշում է ժողովրդի կեանքը, որ ձգում է ապագային-

digitised by A.R.A.R.@

կութեան կենսական ոյժերը, որ ապրում է ոչ թէ օրերով և ամիսներով, այլ տարիներով։

Մի շարք նկարագրութիւններ, դատաստական բնորոշ դէպքեր լուսաբանեցին գեկույցումը։

Մենք զգացինք չօշափած խնդրի մեծութիւնը և կարեւորութիւնը։

Մենք զգացինք, որ գաւառը մի ծանր տանջանքի մէջ է, որի մասին սակայն լուրջ կերպով ոչ ոք չէ մտածել։

—Պէտք է մի քանի անգամ ժողովել և խորհրդակցել այն միջոցների մասին, որոնք կարող են օգնել գաւառին մաքառելու սխալ եղեւոյթի դէմ։

Այդպէս էր ընդհանուրի կարծիքը։

Մի քանիսը կարևոր էին համարում գիւղական կրեդիտի կազմակերպութեան մասին մանրամասն ցուցումներ հաւաքելու։

Ծօսք խնդրեց և Վարուժանը։ Այս անգամ նա ոճի և մշակութեան մասին չէր խօսում, այլ ուրիշ բանի։

—Դա մասնագիտական մի հարց է, որ չէ կարող ընդհանուր հետաքրքրութիւն չարժել։ Կրեդիտը ֆինանսական հարց է, վաչխառութեան դէմ մաքառելը—լուսաբանական և վարչական հարց է։ Ինձ համար, օրինակ, գեկուցումը ոչ մի հետաքրքրութիւն չունի, որովհետև նա չէ կարող հարստացնել մեր գրականութիւնը։

Վարուժանի յայտարարութիւնը յարուցեց աղմկալի վէճ։ Նրան հակազդում էին, և կարելի էր կարծել, որ համոզեցին։

Բայց նա համոզվելու ցանկութիւն չունէր։

---

digitised by A.R.A.R.@

LXXXI

(3 մարտի 1902 թ., «Մշակ» № 47)

Փոքրուց ես հանդիպեցի քիւրդերի, որոնք առաջներն արած մի մեծ հօտ ոչխար, քշում էին պէտի ապրանքով։

Ճանկարծ ես յիշեցի առաւօտը և լեռները։

Անցեալ առաւօտ ես մի քանի օր լեռներում ճանապարհորդում էի։

Լեռնային արօտներում վրանններ էին զարկել քիւրդական զանազան ցեղեր և այնտեղ արածացնում էին իրանց խաշինքները։

Ինձ համար մեծ զժուարութիւններ էին առաջ գալիս, երբ քիւրդերի մի ցեղից ես պէտք է տեղափոխուէի միւս ցեղերի հոզերը։ Անելանելի էր լինում առաջնորդներ ճարել։

—Մենք չենք կարող բարեկիցներիդ մէջ գնալ, ասում էին ինձ միւնանցի քիւրդերը։

—Ինչու՞ հարցնում էի ես։

—Մեր մէջ թիւրիմացութիւն կայ, պատասխանում էին ինձ։

—Ինչու՞, ինչպէս։

—Անցեալ տարի, բայատրում էին նրանք, մեր տղերքից մէկը սպանել է նրանց կողմից. այժմ մենք միմեանց թշնամի ենք։

—Ո՞նչ պատճառով էին սպանել, հետաքրքրւում էի ես։

—Մեր չասէլա, պատասխանում էին ինձ, քշել էր ձե-

digitised by A.R.A.R.@

բանց ուր զոյգ եզը և ծախել քաղաքում Մհէն չատ ճարպիկն էր և անվախը։

—Յետոյ։

—Յետոյ նա գնացել էր նորից աւարի. բայց բազիկներըը հաւար են բարձրացնում երկու կողմից սկսվում է հրայանաձգութիւն, և Մհէն մնում է։ Այն օրից մենք թշնամացել ենք։ Մենք հետամուտ ենք նրանց մարդկանց սպանելու, իսկ նրանք մեր մարդկանց։

—Ինչու չէք հաշտվում, հարցրի ես։

—Դժուար է, արիւնի հարց կայ։ Մենք պէտք է նրանցից մէկին սպանենք, որ հանգստանանք։

—Ինչու, հարցրի ես։ Ինչու պէտք է դուք նրանցից մէկին սպանէք։ Ձեր Մհէն գողութիւն է արել, ձեր Մհէն յարձակում է գործել և ինքն էլ պատժվել է։ Մարդիկ դուրս են եկել իրանց ապրանքը պաշտպանելու, տեղի է ունեցել ընդհարում, որ այդպիսի վախճան է ստացել։

—Չէ, բացատրեց քիւրդը. չէ կարելի. մենք պէտք է վրէժխնդիր լինենք։

—Մեռածը ձեր ինչն էր, հարցրի ես։

—Մեր ցեղի տղերքից մէկը և ուրիշ ոչինչ, յայտնեց նա։ Բայց նրա արիւնի պատիւը մեր բոլորի վրա է։

Այդ և ուրիշ խօսակցութիւններից պարզվեց, որ քիւրդը դեռ դուրս չէ եկել ցեղային և նոյն իսկ տոհմային հասկացողութիւնների շրջանից, որ նա չէ կարող մի ուրիշ ցեղի քիւրդի հետ կապվել ընդհանուր բարոյական հասկացողութիւններով, համոզմունքով, որ նա դեռ չէ կարող յարգել մարդուն, իբրև մարդու, այլ նա

digitised by A.R.A.R.@

նայում է նրա վրա, իբրև այս կամ այն հա-
մայնքի անդամի վրա։

Դժբախտաբար մեր երկրի միւս ազգերի մէջ
էլ դեռ շատ ուժեղ են քրդական հայեացքները
և արտայայտւում են կամ նոյնութեամբ կամ
աւելի մեղմ ձևերով։

Արդեօք շատ կը գտնէք այնպիսի համախըմ-
բումներ, որտեղ դեր կատարում լինէր մարդ-
կանց համոզմունքը և որտեղ մարդիկ, իբրև
անհատներ, հանդէս գային իրանց ինքնուրոյն
հայեացքներով։

—

Այս օրերը մի քանի անգամ իմ միտքն է ե-
կել մի դասախօսութիւն, որը ես լսել եմ ան-
ցեալ տարի։

Կարդում էր երիտասարդ բնագէտ Վ. Լուն-
կեվիչ Թիֆլիսի Կրուժօկում։

Նա կարդում էր մեր երկրագնդի անցեալի և
նրա նախնական բոյսերի և կենդանիների մա-
սին. դասախօսութեան նիւթը լուսաբանված
էր մոդական լապտերի պատկերներով։

Մեր աչքի առաջ անցան մի չարք տեսարան-
ներ։ Սկսա նախնական միօրինակ, բայց խիտ և
ուժեղ բուսականութիւնը։ Սկսա և նախնական
չորքոտանիները։

Բայց ինչ օտարոտի կենդանիներ են դրանք։

Դուք տեսնում էք պոչեր, պոչեր և պոչեր։

Դուք չէք կարող երեակայել, թէ ինչ մեծ
տեղ է բռնում եղել պոչը կամ ապին այն ժա-
մանակվայ կենդանու կազմուածքում։

Դուք ծիծաղում էք։

Սակայն ես կատակ չեմ անում։

Պոչը կազմում էր այն ժամանակ մարմնի ա-
մենախոշոր և կարևոր մասերից մէկը։

digitised by A.R.A.R.@

Պոչը մարմնի գլխաւոր յենարանն էր։
Եթէ դուք չէք կարդացել մեր երկրագնդի պատմութիւնը, դուք շատ կը զարմանաք այդ բանի վրայ։
Կը զարմանաք մանաւանդ այն պատճառով, որ այժմ պոչը այնքան կարևոր դեր այլևս չէ կատարում, և մեր ժամանակի «կէնդաւրոն», որը իր հին նախահայրերի հետաւոր յիշատակն է, անհետանալու վրայ է։ Այժմ կենդանիների պոչերը շատ փոքրացել են և նոյն իսկ անհետացել են։ Այն ժամանակ ուրիշ բան էր։
Այն ժամանակ կենդանին իր պոչի և յետևի երկու ոտների վրայ յենված բարձրացնում էր իր համեմատաբար շատ փոքր գլուխը դէպի բարձրահասակ ծառերի ծայրերը և կրծում տերևները և ճիւղերը։
Պոչը անհրաժեշտութիւն էր, պոչը կեանքի պէտն էր, պոչը սկզբունք էր...
Գիտնականները գտել են այդ օտարոտի կենդանիների կմախքները, հետազօտել են և տրել նրանց անուններ։ Ահա այդ անուններից մի քանիսը—
Իխտիօզաւրը.
Ստեգոզաւրը.
Պլեզիօզաւրը։
Այդ կենդանիների պատկերները տպաւորվել են յիշողութեանս մէջ։
Եւ ես նրանց յաճախ յիշում էի զանազան դէպքերում։
Ինձ այնպէս էր թւում, որ հասարակական կեանքում, նրա նախնական շրջաններում, նրա առաջին սահմաններում, պոչերը նոյնպէս դեր են խաղացել և, որ յաւելին է, տեղ-տեղ դեռ պահպանել են իրանց նշանակութիւնը։

digitised by A.R.A.R.@

Երբ այդ իմ ենթադրութիւնը յայտնեցի իմ ծանօթներից մէկին, նա համաձայնեց ինձ հետ և սկսեց զարդացնել այդ միտքը։

—Նայեցէք, ովքեր են սրանք, բացականչեց նա։ Միայն պոչեր, պոչեր և պոչեր։

Նա ցոյց տուեց մի խումբ մարդկանց վրայ։

Ես լուռ էի նրան։

—Անա տեսանում էք այս պարոններին և տիկիններին, շարունակեց նա. սրանք իրրև անհատներ ոչնչութիւն են։ Սրանք իրանց բոլոր գործառնութիւնների մէջ ազգակցական դիտումներով են միայն առաջնորդվում։ Այդ պատճառով սրանք ներկայանում են իրրև պոչեր մէկը միւսից աւելի բնորոշ։

—Իսկ սրանց մասին ինչ կասէք։

—Դրանք էլ մէկը միւսի պոչ են դարձել այն պատճառով, որ մէկ փողոցի բնակիչներ են. միասին վէգ են խաղացել, միասին սիթուերա են թռել, միասին գնդախաղ են ունեցել, միասին մի նաւարանի վրա են նաւած եղել, միասին գինու բաժակներ են դատարկել, գարեջուր են խմել։

—Բայց չատ դժուար է, տարակեցի ես, ապրել մի հասարակութեան մէջ, որտեղ չէք կարող անհատների հետ չհաշտ ունենալ, նրանց հետ խօսակցել և որ և է գործ սկսել։

—Այո, պատասխանեց ծանօթս, նրանցից մէկի հետ գործ սկսելու ժամանակ պէտք է լաւ գիտենաք, որ նա ինքնուրոյն չէ, այլ նա գտնուում է պոչերի մի անվերջ շարքի մէջ։

—Ճաւալի է։

Բայց սարսափելին այն է, բացատրեց նա ինձ, որ մեզ էլ ձեզ էլ աշխատում են այդ պոչերի հասկացութիւնների մէջ մտցնել։ Քանի

digitised by A.R.A.R.@

*դուք այն չարքի մէջ տեղ չէք բռնել, դուք ա-
ւելորդ էք։*

Խօսակիցս մի առ մի համրեց քաղաքի մէջ կազմված հասմախմբութիւնները և բնորոշեց նրանց։

—Սա, ասաց նա, մեր առեղծօզաւերն է, իսկ սա մեր իխտիօզաւերը. ահա երբորդը, չորրորդը հինգերորդը և այլն։ Տեսէք ինչ լայնածաւալ և թաւ պոչեր ունեն նրանք։ Գլուխները սակայն չատ փոքր են և թոյլ եթէ որ և է կերպով դուք կտրեցիք պոչը, այն ժամանակ գլուխը և անդամ մարմինը ամբողջապէս կը մեռնեն։

—Սակայն, նկատելի եա, դրանց դերը սկըսում է անյայտ լինել։ Այժմ հանդէս են գալիս և մխիթարական երևոյթներ։ Այժմ մենք հանդիպում ենք և ինքնուրոյն անձնաւորութիւնների, որոնք ներկայանում են իբրև առանձին գործող և մտածող ուղեղներ։

—Անկասկած, վրա բերեց խօսակիցս, հասարակական իխտիօզաւերների օրերը հաշված են. բայց որովհետև նրանք դեռ գոյութիւն ունեն, պէտք է նրանց դէմ մաքառել։

—Այո, պէտք է «պոչերը կտրել»։

Արդեօք չարունակեմ։

---

digitised by A.R.A.R.@

LXXXII

(10 մարտի 1902 թ., «Մշակ» № 53)

Ձը գիտեմ, արդեօք դուք, ընթերցող, գաղափար ունէք այն քաղաքական և քաղաքագիտական նշանաւոր դէպքի մասին, որ տեղի ունեցաւ սրանից վեց տարի առաջ, 1896 թուին, Նիժնի-Նօվգօրօդ քաղաքում

Ես կը պատմեմ

Ով չը գիտէ՝ կիմանայ, իսկ ով գիտէ՝ նորից կը վերայիշէ նրան

Նիժնի-Նօվգօրօդում տեղի ունեցաւ մի դէպք, որ ցոյց տուեց, թէ Չինաստանը գիտէ իրան պահել կոչման բարձրութեան վրա և յաղթող հանդիսանալ

Դէպքը պատահել էր չինական նշանաւոր պետական գործիչ Լիխունչանի հետ

Լիխունչանը այն ժամանակ ճանապարհորդում էր Եւրօպայում, որ Նիժնի-Նօվգօրօդ քաղաքում բացված է համառուսական մի մեծ ցուցահանդէս, նա վճռում է այցելել այդ ցուցահանդէսը և այնտեղ միանգամից գաղափար կազմել ռուսաց արդիւնագործութեան մասին

Նա ուղևորւում է դէպի ցուցահանդէս

Այն ժամանակվայ նահանգապետ Բարանօվը ընդունում է Լիխունչանին ընդունված կարգով

digitised by A.R.A.R.@

Հետևեալ օրը նահանգապետը այցելութեան է գալիս Լիխաունչանին։

Նրան ընդունում են չինական ծխակատարութիւններով։

Գոհ է Բարանովը։

Բայց աւելի ևս գոհ է Լիխաունչանը։

Ընդունելութիւնը չինական ճաշակով կատարեալ էր։

Ժպտում է Բարանովը։

Աւելի ևս ժպտում է Լիխաունչանը։

Ժպտում են Լիխաունչանի չրջապատողները։

Վերջապէս հիւրը հեռանում է։ Նրան քաղաքավարի ճանապարհ են դյուրմ։

—Տեսա՛ք, դիմում է յաղթական հայեացքով Լիխաունչանը իր չրջապատողներին։

—Ինչպէս չէ, հրճվում են նրանք, տեսանք, տեսանք. մի՛թէ կարելի էր չը նկատել Դուք Չինաստանի և չինացու բարձր դիրքը լաւ պահելիքը։

—Այո, ժպտաց Լիխաունչանը, ես համազգեստս վրա մի գնդակ պակաս դնելով՝ ոչնչացրի նրան և նրա յաւակնութիւնները։

Դուրս եկաւ բանից, որ Լիխաունչանի վրա մի գնդակ պակաս է եղել։ Չինացիները այդ խլոյն նկատել են և հասկացել։

Քաղաքական մի այդպիսի մեծ աչդուքիւն ունենալուց յետոյ չինացիները հանգիստ սրտով ուղևորվում են դէպի յուգոհանդէս «Թամաչա» անելու։

Այդ դէպքը լաւ ապացոյց էր, որ Չինաստանը, ինչ էլ ասեն-չասեն, դեռ ուժեղ է և հեղինակաւոր։ Քանի որ գնդակների հաշիւը ուղիղ պահպանված է, ինչ փոյթ, էլ ինչ ցաւ

digitised by A.R.A.R.@

Մինչ կարող է Հինաստանը կորչել, Գևխաւորը պահպանված էր։

—Ո՞ւր է թէ մեզանում էլ հաստատվէր և զարգանար քաղաքակիտական այդպիսի իմաստութիւն։

Այդ խօսքերը լուրջ կերպով մրմնջում էր իբրև աղօթք, մեր մեղուականներից մէկը, որ կարդացել էր լրագրում Լիխունչանի դէպքը։

Նա դրեց իմ առաջ լրագիրը և մատով ցոյց տուեց, առաջարկելով, որ ես կարդամ։

Ես կարդացի և ծիծաղեցի։

—Մի ծիծաղէք, նկատեց նա, դա շատ կարևոր մի գիծ է չինացու մէջ և դա է, որ պահպանել է նրան հոյակապ կերպով դարերի ընթացքում մինչև մեր օրերը։

—Տօ, տնաչէն, միջամտեց մի ուրիշ անձն, էլ պահպանվել՝ որն է. ամենքը գլխին բամփում են ու դու ասում ես, թէ պահպանվել է։

—Այո, պնդեց մեղուականը, դուք չէք հասկանում նորը բաներ։

—

Ո՞րտեղից. կարելի է հասկանալ։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@